Ե. Հ. ՆԱՋԱՐՅԱՆ

ԼԻԲԱՆԱՆԸ XVIII ԴԱՐԻ ԿԵՍՏՋԻՆ ԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

ՍԱՍՈՒՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

Е. О. НАДЖАРЯН

ЛИВАН В КОНЦЕ XVIII И В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1985

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՖԳ
ԸՆԹԵՐՑԱՍՐՄ
9(569.3)

Ե. Հ. ՆԱԶԱՐՅԱՆ

ԼԻԲԱՆԱՆԸ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Ա 11/ԿՂ3Ն2

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՒՆԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1985

ԳՄԴ 63.3(0) 52
Ն 350

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ դոկտոր, պրոֆեսոր
Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմ. գիտութ. դոկտոր, պրոֆեսոր Հ. ԵԴԱՆՅԱՆԸ և պատմ. գիտությունների դոկտոր Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆԸ

Նաջարյան Ե. Հ.

Ն 350 *Լիբանանը XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին /Պատ. խմբ. Ե. Ղ. Սարգսյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985.—380 էջ:*

Վերնախորագր.՝ ՀՍՍՀ ԳԱ, Արևելագիտ. ին-տ.:

Մենագրությունը նվիրված է Լիբանանի նոր պատմության առաջին և առավել բուռն ժամանակաշրջանին: Գրքում լուսաբանվում են լիբանանյան ինքնուրույն ամիրայության համար բնութագրական սոցիալական, տնտեսական, համայնքային, իրավական և քաղաքական առանձնահատկություններին առնչվող կարևորագույն հարցերը: Արխիվային նյութերի, հրատարակված վավերագրերի և օտարալեզու սկզբնաղբյուրների հիման վրա հանգամանորեն քննարկված են երկրում՝ նշված ժամանակաշրջանում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական տեղաշարժերը, լիբանանյան ժողովրդի պայքարը թուրքական միջամտությունների և տեղական ֆեոդալների կամայականությունների դեմ, միջհամայնքային արյունալի հակամարտությունները և գյուղացիական ապստամբությունները, տերությունների միջամտությունը և Լիբանան լեռան ինքնավարության ստեղծման մշակումը:

Հասցեագրվում է արևելագետներին և ընթերցող լայն շրջաններին:

0506000000
Ն————————32—85 ԳՄԴ 63.3(0) 52
703 (02)—85

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1985

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ասիայի և Աֆրիկայի երկրների պատմության նոր շրջանը, որ բնութագրվում է՛ մի կողմից ֆեոդալական հասարակարգի ընդերքում կապիտալիստական արտադրահարաբերությունների կազմավորման հետաքրքիր երևույթով ու մյուս կողմից տնտեսական թե քաղաքական ստրկացման դաղութարարական փորձերի դեմ ազգային-ազատագրական ընդվզման հերոսական դրվագներով, մենագրական հետազոտությունների չենթարկված, հետևաբար իսպառ չպարզաբանված մի շարք պահեր ունի։ Այդ պահերից առավել անտեսվածների թվում են ոչ միայն ֆեոդալական հարաբերությունների քայքայման ժամանակի ու բնույթի, վաղ կապիտալիստական հարաբերությունների զարգացման աստիճանի, հետևաբար դրանց ծննդաբանության՝ վերջին հաշվով վիճահարույց հարցերը, այլև նույնիսկ հարաբերաբար հեշտ ընդհանուր հայտարարի բերման ենթակա պատմաքաղաքական անցուդարձեր և երևույթներ։

Այդ տեսակետից բացառություն չի կազմում նաև Լիբանանի նոր պատմությունը։

Չի կարելի ասել, անշուշտ, որ մեր աշխատության առարկան հանդիսացող ժամանակաշրջանը պատմագրական հետազոտությունների տեսակետից Լիբանանի պատմության ամբողջովին խոպան տեղամասերից է։ Եվ սակայն թվով մեկ տասնյակը հաղիվ անցնող այն տարալեզու մատյանները, որոնք ավելի քան կես դարի ընթացքում, հիմնականում հիսնական թվականներից հետո արտասահմանում դրվել են ընթերցողի սեղանին, իրենց ընդգրկումներով սպառիչ չեն բնավ։ Բայց ոչ միայն այդ։ Խնդրո առարկա մատյանների հեղինակները, հիմնականում օտարագիր լիբանանցիներ, թո՛ղ համարյա բոլորի համար ընդհանրական՝ բուրժուական առարկայականությունից բխող սահմանափակությունը, որպես կանոն ենթարկվել են համայնքային նախասիրությունների, հետևաբար և դեպի արևմտյան այս կամ այն երկրի քաղաքականության նկատմամբ իրենց համակրանքի կաշկանդումներին։ Ողջունելի բացառությունը Ֆուադ Ղազանն է, որ վերջին տասնամյակին դժվարին ջա-

նագրությամբ լիբանանյան պատմագրության մեջ խորացնում է իր իսկ կողմից բացված նոր՝ մարքս-լենինյան մեթոդոլոգիայից սնվող ակոսը (228—229)։

Առաջիններից մեկը, որ զբաղվել է պատմաաշխարհագրական Սիրիայի շրջանակներում Լիբանանի պատմության ուսումնասիրությամբ, Արևելքում գործած հիսուսյան միսիոնար, բելգիացի հայտնի արևելագետ-իսլամագետ Հանրի Լամմենզն է։ Նա իր «Սիրիա (պատմական ակնարկ)» խորագրված ֆրանսերեն աշխատության (128) երկրորդ հատորիկը գրեթե ամբողջությամբ նվիրել է Լիբանանի պատմության մեջ հետաքրքրող այն շրջանին, որ առավել փոթորկոտն է միջհամայնքային հակամարտությունների և Լեռնանի ներթափանցելու ֆրանսիական նկրտումների հողի վրա։ Եվ դա պատահական չէ, բնավ, քանի որ աշխատությունը շարադրվել է ֆրանսիական գերագույն կոմիսարիատի պատվերով, որպես վարչական ծառայության նշանակված գաղութային սպաների վերապատրաստման հատուկ դպրոցի դասընթաց։ Բնականաբար դրա հետևանքով է, որ հեղինակն ինչպես իր մյուս, առավել հմտալի գործերում, այնպես էլ այստեղ «Իսլամի նկատմամբ հանդես է բերել կրոնական ծայրահեղ անհանդուրժողականություն և բացահայտորեն դերագնահատել քրիստոնյա արաբների պատմական դերը»,—ինչպես ընդգծել է արաբագետ Եվ. Բելյաևը (13, էջ 28)։ Հ. Լամմենզի, Ֆերդինան Տաուտելի և Ռենե Մուտերդի (խմբի ղեկավար) «Սիրիայի և Լիբանանի համառոտ պատմություն» (127), ինչպես նաև Ռ. Մուտերդի «Ակնարկ Սիրիայի և Լիբանանի պատմության» (141) ֆրանսերեն գրքերը, կաթոլիկական-ֆրանսասիրական նպատակամղմամբ կրկնելով նախորդի հիմնական տվյալները, միաժամանակ և ավելի թուլիկ են։

Առանձնապես դրական տպավորություն չեն թողնում նաև երկար ժամանակ ԱՄՆ-ի և Անգլիայի համալսարաններում սեմական գրականություն և պատմություն դասախոսած Ֆիլիպ Հիթթիի «Պատմություն Սիրիայի (ներառյալ Լիբանանն ու Պաղեստինը)» (109) և սրա լիբանանյան մասերի առանձնացմամբ կազմված՝ «Լիբանանը պատմության մեջ հնագույն ժամանակներից մինչև այժմ» (110) անգլերեն գրքերը։ Առաջինը հնադարից մինչև մեր օրերն է հասնում բանաքաղված նյութերի կցմցմամբ, առանց պատմական որևէ հանգրվան ինքնուրույն ու մասնագիտորեն պատկերելու, մինչ երկրորդը, պատմաբան Ք. Սալիբիի բնութագրմամբ, նույնպես «կրում է մակերեսային բնույթ և ավելի շատ՝ շրջանի միջազգային հարաբերությունների շարահարումն է, քան թե բուն իսկ Լիբանանի պատմությունը» (37, էջ 302)։

Բեյրութի ամերիկյան համալսարանի պատմության դասախոս Քամալ Սուլեյման Սալիբիի «Լիբանանի նորագույն պատմություն»՝ իր խորագրով խաբուսիկ աշխատությունը (177), որն իրականում ընդգրկում է XVIII դարի վերջերից մինչև 1950-ական թվականները ձգվող ժամանակաշրջանը, պատմագրական ուրույն արժեք ձեռք է բերում հատկապես այն պահից, երբ իր տեսադաշտում բևեռացնում է Բեշիր II-ին։ Այդ պահից սկսած և ընդհուպ մինչև Մեծն Լիբանանի պետության ստեղծումը, հեղինակը բարեխղճորեն ընտրված մի շարք սկզբնաղբյուրների օգնությամբ և բավականաչափ ինքնուրույնությամբ պատկերել է այն ժամանակաշրջանը, որ իր հիմնական մասով զբաղեցրել է նաև մեզ։ Սալիբիի երկասիրության թերությունների հարցում ընդհանուր առմամբ համաձայնելով նրա ռուսերեն հրատարակության խմբագիր, արևելագետ Ն. Ս. Լուցկայայի կողմից տրված գնահատականին (37, էջ 11—13), անհրաժեշտ է հեռու մնալ լիբանանցի պատմաբանի մենագրությունը թերագնահատելու մտքից, քանի որ նա, թեկուզ անձնական թե համայնքային նախասիրություններից բխող երբեմն կողմնակալ գնահատականներով, մի շարք դեպքերում քայլել է իր երկրի պատմության դրենթ ամբողջությամբ խոպան տեղամասերով։

Լիբանանի նոր և նորագույն պատմության հանգուցային խնդիրներից մեկը՝ համայնքային հարցը պարզաբանելու, հատկապես 1830—1860-ական թթ. լիբանանյան իրականության մեջ «համայնքային քաղաքականության» (կոնֆեսիոնալիզմի) ներթափանցման ուղիները վերլուծելու փորձ է կատարել պաղեստինցի քաղաքատնտես Լեյլա Մեռն, «Լիբանան՝ անհավանական ազգ» մենագրության (139) էջերում։ Հեղինակը, սակայն, վրիպել է ամեն անգամ, երբ փորձել է իրադարձությունները յուրովի վերլուծել։ Թյուրիմացության արդյունք պետք է համարել, օրինակ, Բեշիր II-ի քաղաքականության հիմնական նպատակամղվածությունը միջհամայնքային երկպառակություն սերմանելու մեջ տեսնելը, մարոնական ստորադաս հոգևորականության հակաավատատիրական պայքարը փառասիրական դրդումից բխեցնելն ու մամլուքների օրոք սկզբնավորված այդ երևույթը 1841-ից հետո արձանագրված տեղաշարժերի շարքը դասելը, երկրից դրուզների արտագաղթը պատմագրության կողմից ընդհանուր առմամբ դրուզասեր հռչակված Կարապետ-Արթին փաշա Տաուլյանի կողմից քաջալերված ներկայացնելը և այլն։

Լիբանանցի պատմաբան Ադել Իսմայիլի «Պատմություն Լիբանանի XVII դարից մինչև մեր օրերը» աշխատության չորրորդ գիրքը՝ «Լիբանանյան ֆեոդալիզմի վերականգնումն ու անկումը (1840—1861)» (114),

հեղինակի պատմագիտական լուրջ վաստակի մեջ իր ուրույն կշիռն ունենալով հանդերձ, նրա փայլուն էջերից մեկը չէ, անկասկած։ Բանն այն է, որ սկզբից մինչև վերջ Ֆրանսիայի նկատմամբ հանդես բերելով մոլեռանդ համակրանք և հավանաբար այդ պատճառով էլ գրեթե բացառապես հենվելով ֆրանսիական արխիվային նյութերի, առաջին հերթին Բեյրութում Ֆրանսիայի հյուպատոս Պրոսպեր Բուրրեի հաղորդագրությունների վրա, մենագրությունն արժեք է ստանում հիմնականում Լևանտում առճակատող եվրոպական հսկաներից մեկի տեսակետն ու դիրքորոշումը բարյացակամության դիրքերից բյուրեղացնելու շնորհիվ, նաև այն հանգամանքի, որ հրապարակված տարաբնույթ ու բազմալեզու արխիվային փաստաթղթերի շարքում երկար ժամանակ պակասում էին հենց հեղինակի կողմից շրջանառության մեջ դրված ֆրանսիականները։

Իսմայիլին զբաղեցրած համարյա նույն ժամանակաշրջանին մոտավորապես միևնույն խորագրով՝ «Լիբանանը ֆեոդալիզմի վերջին տարիներին (1840—1868)» անդրադարձել է Մալկոլմ Քերրը (122), որ անցուդարձերի սոցիալ-տնտեսական ներքնածալքերը թափանցել կարողանալու համար թնպետ դիմել է սկզբնաղբյուրների (հատկապես Ա. Ակիկիի՝ իր իսկ կողմից թարգմանված ժամանակագրության) օգնության, սակայն իր բուրժուական հայացքների կաշկանդմամբ միշտ չէ, որ այդ ներքնածալքերին տվել է արդարացի գնահատական։

Տվյալ ժամանակահատվածին մի փոքր այլ՝ վարչաքաղաքական իրադրության պարզաբանման միտումով է անդրադարձել Ահմեդ Թարբինը, որը Դամասկոսի և Հելիոպոլսի համալսարաններում կարդացած դասախոսությունների շարքով կազմել է «Իշխանության տագնապը Լիբանանում 1840—1861 թթ.» և «Լիբանանը մութասարիֆության շրջանից մինչև մանդատ (1861—1920)» աշխատությունները (197—198)։ Ասենք, սակայն, որ հեղինակն ավելի շատ տարվել է տեղական-առօրեական իրադարձությունների շարահարմամբ և քիչ դեպքերում է փորձել վերլուծություններ և ընդհանրացումներ։ Միևնույն բնույթի են լիբանանցի պատմաբան Սելիմ Հասան Հիշիի մենագրությունները, որոնցից հարկ է հիշատակել հատկապես դրուզական համայնքի ծագումն ու պատմությունը, շեյխ Բեշիր Ջումբլատի կյանքն ու գործունեությունը և այլ ուշագրավ դրվագներ պատկերող երկերը (107—108, 239—240)։

Լիբանանի, որպես Օսմանյան կայսրության բաղադրամասի, պատմության, առանձնապես 1841—1861 թթ. թուրքական ուղղակի տիրապետության՝ բառիս բուն իմաստով մղձավանջային քսանամյակի հարցերին անդրադարձել են նաև թուրք պատմաբանները։ Այդ հարցերն ինչպես

կայսրության ընդհանուր պատմության միահյուսված ներկայացնող հեղինակները (Էնվեր Զիյա Կարալ, Ահմեդ Ալի Այնի, Յըլմազ Օզտունա և ուրիշներ), այնպես էլ մանավանդ «Լիբանան լեռը և դրուզները 1840—1861 թթ.» մենագրությունն ստորագրած Թ. Կյոգբիլգինը (101) բնականաբար չէին կարող հիմնական առաջադրանք չդարձնել թուրք կառավարողների՝ լիբանանյան ժողովրդին կործանման եզրը հասցրած քաղաքականության պարզաբանումը։ Ենթակայական այդ տարրը, զուգորդվելով այն փաստին, որ թուրք պատմաբաններից շարադրված իրադարձությունները, այդ թվում և սուլթանական իշխանությունների ձեռնարկումները, օրագրային մանրամասնություններով հայտնի են հրապարակված արխիվային (այդ թվում և օսմանյան) փաստաթղթերից, համարյա արժեքազուրկ են դարձնում թուրքալեզու գրականությունը։

Անհրաժեշտ է ընդգծել, որ հայկական ցարդ մեծավմասամբ աչքաթող արված նյութերի շրջանառության մեջ մտնելը վստահաբար նորանոր շողքեր կգցի լիբանանյան հարցի մթաստվեր մի շարք կողմերի վրա և փոխադարձաբար, լիբանանյան խնդիրների արծարծումն էլ, համեստ լրացումներ կբերի հայ ժողովրդի արևմտյան հատվածի պատմության, մանավանդ որ 1840-ական թթ.-ից սկսած լիբանանյան իրականությունն ունի ուշագրավ, այլ առ այսօր զարմանալիորեն թերագնահատված հայկական շատ գծեր, որոնք անխուսափելի էին երկրի վարչական ու մշակութային կյանքում հայազգի մեծաթիվ գործիչների առկայության պայմաններում։

Առկա բացը վերացնել հավակնող առաջին՝ լիբանանահայ մտավորական Ս. Վարժապետյանի «Հայերը Լիբանանի մեջ» աշխատության (9) իր ժամանակին գտած հաջողությունը գլխավորապես պայմանավորված էր այն բանով, որ հայության՝ Եղեռնից փրկված և Լիբանան ապաստանած բեկորը, ներառյալ նրա մտավորական խավը, արաբերեն լեզվի անիմացության հետևանքով մինչ այդ գրեթե ոչինչ չգիտեր երկրի անցյալ կյանքում վաստակ ներդրած և համապատասխան փառքի արժանացած իր ազգակիցների՝ Ի. Արգարիոսի, Ա. Իսհակի, Ռ. Հասունի և մյուսների մասին, թեկուզ այդ անունները, իրենց հայկական ծագմամբ հանդերձ, քաջածանոթ էին արաբ ամեն մի ուսումնասերի։ Ինչ վերաբերում է Հարվարդի համալսարանի դասախոս Ա. Սանջյանի «Հայկական համայնքները Սիրիայում օսմանյան տիրապետության ներքո» անգլերեն աշխատության (179), ապա այն արժեքավոր է առավելապես այն վրձնահարվածներով, որ հայկական մամուլի ու գրականության ճոխ նրանգապնակի օգտագործմամբ հեղինակը տվել է լիբանանյան պատ-

մության, հատկապես XIX դարի 40-ական թվականներից սկսած, հասկանալի է՝ լիբանանահայ համայնքի և Լիբանանին ծառայած առանձին երևելի հայ գործիչների կապակցությամբ։

Լիբանանյան նոր պատմության հետ առնչվող հայալեզու գրականության շրջանակները, ինչ խոսք, ավելի լայն են, շնորհիվ այն գրքերի ու հոդվածների, որոնք նվիրված են ինչպես Մայրիների երկրի հետ առնչված մերաղնյա անվանի քաղաքական ու մշակութային գործիչների, այնպես էլ հայկական տարաբնույթ կազմակերպությունների ու հիմնարկների և որոնք մեզ համար եղել են հաճախ անփոխարինելի տեղեկատվություններ։

Լիբանանի նոր պատմության մի շարք անկյունադարձային պահեր և երևույթներ որոշապես ուշ, վերջին տասնամյակում միայն, արժանացել են սովետական պատմաբանների բավական խոր հետաքրքրության։

Եվ իրոք, Ասիայի և Աֆրիկայի մյուս հիմնական երկրների նոր պատմության հետազոտման ծավալի ու խորության մակարդակի նոնապատատի վրա՝ արաբական երկրներինը երկար ժամանակ, ընդհուպ մինչև քառասնական թվականների վերջը, մնացել է չափազանց աննախանձելի վիճակում։ Իրավիճակի հեղաբեկումը անպայմանորեն պիտի առնչել մեզանում արաբական երկրների նոր և նորագույն պատմության հետազոտման գործի հիմնադիր Վ. Բ. Լուցկու անվան հետ։ Նրա «Արաբական երկրների նոր պատմություն» աշխատության (28) մեջ զգալի տեղ է հատկացված Լիբանանի պատմության մեզ հետաքրքրող համարյա բոլոր ուշագրավ իրադարձություններին՝ Բեշիր II-ի բարենորոգություններին, 1820-ի ապստամբության և դրուզական ազնվականության ճնշման, իշխանապետության վերացման, 1845-ի դրուզ-մարոնական արյունահեղ բախումներին, 1859—1860-ի Քեսրուանի գյուղացիության պայքարին, 1860—1861-ի ֆրանսիական զինարշավին, օրգանական ստատուտին և նրա։

Լիբանանի նոր պատմության շոշափելի մի ժամանակահատվածի սոցիալ-տնտեսական երևույթներին և որոշակիորեն սոցիալական զրոսպանակներից թելադրված մի շարք անցուդարձերին հատուկ մենագրություն է նվիրել արաբագետ Ի. Մ. Սմիլյանսկայան՝ «Գյուղացիական շարժումը Լիբանանում XIX դարի առաջին կեսին» խորագրով (43)։ Մարքսիստական մեթոդոլոգիայի և աղբյուրագիտական լայնանիստ հենարանի շնորհիվ հեղինակը հաջողապես գծել է զարգացման այն դժվարին ուղին, որով ժողովրդական պայքարը XVIII դարավերջի տարերային ու կարճակյաց բռնկումներից 1859—1860-ին հասել է մինչև իր գագաթնա-

կետը՝ Քեսրուանի դյուղացիական «Հանրապետության» ստեղծումը։ Մենագրության հիմնական առաջադրանքի իսկ թելադրանքով 1840—1860 քսանամյակի ուշադրավ բոլոր անցուդարձերը, առաջին հերթին 1841-ի, 1845-ի և 1860-ի դրուզ-մարոնական զոհաշատ բախումները, հասկանալիորեն հեղինակի տեսադաշտում բևեռացվել են իրենց սոցիալական ներքնածալքերով միայն։ Նույնիսկ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական ընդհանուր պատկերը, որին տրամադրվել է աշխատության ծավալի մեկ երրորդը, ըստ էության միտելով հակաֆեոդալական շարժման նախադրյալների բացահայտման և ընդգծման, իր խիստ հավաստիության հետ մեկտեղ ստացվել է որոշապես ուրվանկարային։ Ահա թե ինչու, մի շարք դեպքերում հարկադրվելով հանդերձ ուշադրություն դարձնել Սմիլյանսկայային՝ իր իսկ հարթած արահետի վրա, անխուսափելիորեն տարանջատվել ենք նրանից և համեմել անցուդարձերի պատմաքաղաքական ցարդ անհարթ թողնված արահետների վրա։

Մ. Տ. Պանչենկովայի «Ֆրանսիայի քաղաքականությունը Մերձավոր Արևելքում և 1860—1861 թթ. սիրիական դինարշավը» մենագրությունը (33) հիմնականում նվիրված է Ղրիմի պատերազմից հետո Ֆրանսիայի արևելյան քաղաքականության և սիրիական դինարշավի բազմակողմանի լուսաբանմանը։ Հեղինակը հասկանալիորեն ձեռնամուխ է եղել նաև այս կամ այն չափով լուսաբանելու մեզ ուղղակիորեն հետաքրքրող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ լիբանանյան տնտեսական իրադրությունը XIX դարի կեսերին և ժողովրդի պայքարը թուրքական լծի ու ավատապետական շահագործման դեմ, 1860-ի միջհամայնքային արյունահեղությունը, ֆրանսիական դինարշավախմբի գործունեությունը, Լիբանան լեռան վարչակառույցի շուրջ դիվանագիտական բանակցությունների ընթացքը և վերջապես օրգանական ստատուսի ընդունումը։ Աշխատությունը լիբանանյան նոր պատմության փոթորկոտ էջերից մի քանիսի՝ մարքսիստական պատմագրության դիրքերից և առավել հարուստ աղբյուրագիտական հենարանով գրեթե սպառիչ շարադրանքն է։ Ասում ենք «գրեթե» այն պատճառով, որ հեղինակը, ինչպես ինքն իսկ առաջաբանում նշում է, առաջադրելով շրջափակվել միջազգային հարաբերությունների բնագավառում, սիրիական ու լիբանանյան հարցերին անդրադարձել է հարևանցիորեն, սոսկ որպես այդ հարաբերությունների առարկա։

Լիբանանի նոր պատմության ամեն մի հետազոտող մեր օրերում չի կարող դժգոհել աղբյուրագիտական հենակետի ծավալային թե որակական թուլությունից։ Ընդհակառակն, առանձին ջանք է հարկավոր արա-

բական, հայկական և եվրոպական աղբյուրներից հորդող նյութերի զանգվածում կողմնորոշումը չկորցնելու համար։

Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի (АВПР) ընձեռած ստվարաքանակ, սակայն ցարդ խիստ ժլատորեն օգտագործված նյութերից բացի, պատմաբանի տրամադրության ներքո առկա են փաստաթղթերի մի շարք մեծածավալ ժողովածուներ՝ Ի. դը Տեստայի, Գ. Նոբատոնկյանի, Ջ. Յանկի, Է. Շարրիերի, Ա. Ռաբբատի ու Ֆ. Տուռնբրիզի բազմահատորյակները, օսմանյան «Դուստուրի» շարքը, եվրոպական տարբեր պետությունների պայմանագրերի հավաքածուները, Հաֆիզ Էֆենդիի, Ժ. Բերշեի, Ասադ Ռուստամի, Նաուբարյի և դամասկյան վավերագրերի հրատարակությունները։ Ժողովածուներից դուրս մնացած ֆրանսիական, անգլիական և արաբական (առաջին հերթին լիբանանյան) արխիվային փաստաթղթեր վերջին երկու տասնամյակներին գիտական շրջանառության մեջ են դրվել Ա. Իսմայիլի, Մ. Քերրի, Ա. Թարբինի մեզ ծանոթ, ինչպես նաև Դ. Շրվալիեի (76), Խ. Հ. Ֆարդի (199) և այլոց աշխատությունների շնորհիվ։ Ավելացնենք, որ Լիբանանի նոր պատմության համար կարևոր սկզբնաղբյուր են նաև անգլիական ու ֆրանսիական պետական պաշտոնական առանձին հրապարակված փաստաթղթերը։ Միջհամայնքային բախումների վերաբերյալ շոշափելի նյութ են պարունակում, օրինակ, «Բրիտանական և օտար պետական փաստաթղթեր», արտաքին քաղաքականության հարցերին նվիրված ու 1814-ից հրապարակվող «Կապույտ գրքեր» և այլ անգլիական, ինչպես նաև ֆրանսիական նույնարնույթ ժողովածուները։

Չափազանց կարևոր սկզբնաղբյուր են Լիբանանի նոր պատմության առանձին հատվածների հետ սերտորեն առնչված տեղացի գործիչների և մտավորականների, ռուս և արևմտաեվրոպական դիվանագետների ու հրապարակախոսների ժամանակագրությունները, հուշագրությունները և անցուդարձերը վերլուծության ենթարկելու փորձերը։ Լիբանանյան այդպիսի սկզբնաղբյուրներից ժամանակաշրջանի ծավալուն «Հանրագիտարաններ» են ամիր Հայդար Շիհաբի հատոր ու փաստաշատ «Պատմությունը» (218), Քեսրուանի գյուղացիական ապստամբության մասնակից Անթուն Դահիր ալ-Ակիկիի խրոնիկան, որ շարժման մասնակիցների կողմից մարոնական պատրիարքարան ուղարկված մի շարք նամակների հետ հրատարակել է պատմաբան Յուսուֆ Յազբեկը «Հեղափոխությունն ու խառնակությունը Լիբանանում» խորագրով (200), ջերմեռանդ մարոնական և դրուզատյաց, Բեշիր II-ի գործակից Թաննուս աշ-Շիդիակի՝ 1847-ին ամերիկյան միսիոնարների համար շարադրված «Լիբանան լե-

ման երևելիների վերաբերյալ վկայությունների գիրքը» (201), գիտնական և պատմագետ Միխայիլ Մեշակայի «Լիբանան լեռան անցուդարձերի մասին ականատեսի վկայությունը» (202), հոգևորական Մանսուր ալ-Խաթունիի՝ դարձյալ Յ. Յաղբեկի կողմից հրապարակված «Քնսրուանի նահանգի վերաբերյալ պատմական ակնարկ» խրոնիկան (203), Հ. Ա. Շաքրայի «Մութասարիֆության օրոր շարժումները Լիբանանում» գիրքը (204), ծագմամբ հայ գրող և մշակութային գործիչ Իսկենդեր Աբգարիոսի վավերագրական մատյանը, որ անգլերենի թարգմանելով հրատարակել է Ջ. Շելդեման՝ «Լիբանանը խառնաշփոթության մեջ. Սիրիան և մեծ պետությունները 1860 թ.» խորագրով (48) ևն։

Սկզբնաղբյուր հեղինակների թվում առանձնահատուկ տեղ ունի Կոնստանդին Միխայլովիչ Բաղիլին, որ 1839—1853-ին Բեյրութում «Սիրիայի և Պաղեստինի» ռուսական հյուպատոսի (նաև՝ ընդհանուր հյուպատոսի) պաշտոնն է զբաղեցրել և որ համաշխարհային արաբագիտության մեջ պատմաաշխարհագրական Սիրիայի նոր պատմության առաջին և առավել հայտնի հետազոտողներից մեկն է համարվում իր «Սիրիան և Պաղեստինը թուրքական տիրապետության ներքո՝ պատմական և քաղաքական տեսակետից» հռչակավոր մենագրությամբ (11)։ Ի. Կրաչկովսկին զարմանքով է հաստատել, որ «ակադեմիական արաբագիտության սահմաններից դուրս» կանգնած մի մարդ կարողացել է հեղինակել այդպիսի հմտալի մի աշխատություն, որ «տվյալ ժամանակաշրջանի համար դասական է» (25, 23)։ Ընդգծենք, այստեղ, որ ուրիշ և ոչ մի աշխատությունից, երբեմն նույնիսկ արխիվներից հնարավոր չէ XIX դարի 30—40-ական թթ. այս կամ այն խնդրի (հատկապես թուրք-եգիպտական պատերազմների և թուրքական տիրապետության վերահաստատման) շուրջ քաղհանել փաստական այնքան մեծածավալ նյութ, ինչքան «Սիրիան և Պաղեստինը» գրքի էջերից։

Լիբանանի նոր պատմության տարբեր անցուդարձերին մի շարք դեպքերում չափազանց գործուն մասնակցություն բերած, առնվազն ականատես եղած արևմտաեվրոպական, ռուսական և ամերիկյան այլ գործիչներից մեզ հասած հուշագրական, հրապարակախոսական և հետազոտական բնույթի ժառանգությունը ևս պետք է ընդգծվի որպես կարևոր սկզբնաղբյուր։ 1841-ից շուրջ երկու տասնամյակ Լիբանանում անգլիական հյուպատոսի, ապա, թշակի անցնելուց հետո, գլխավոր ռեզիդենտի պաշտոնն զբաղեցրած և Շիհաբ տոհմի փեսա դարձած գնդապետ Չարլզ Չերչիլլն, օրինակ, հեղինակել է «Դրուզները և մարոնականները թուրքական լծի ներքո 1840—1860 թթ.» և «Լիբանան լեռ՝ տասնամյա

ռեզիդենտություն 1842-ից մինչև 1852» փաստաշատ աշխատությունները (79—80)։ Հարցերը բրիտանական դիտանկյունից քննարկող երկերից կարող ենք հիշատակել նաև 1840-ական թթ. վերջին Լիբանան այցելած քաղաքական գործիչ, դիվանագետ և հրապարակախոս Դ. Ուրկուհարտի «Լիբանան (Սիրիա լեռ)—պատմություն և օրագիր» երկհատորյակը (186), ռազմական գործիչներ Ու. Պ. Հանթերի և Շ. Նեպիրի մատյանները (112 և 143), 1830-ական թթ. երկրորդ կեսին Սիրիա գործուղված գոկտոր Ջ. Բաուրինգի կողմից բրիտանական կառավարության ներկայացված առևտրատնտեսական (և ռազմական) վիճակագրական տվյալները (62) են։ Ֆրանսիական ճակատից մեզ են հասել Հոմս հաստատվելով արաբացած մի տոհմից սերած, Ֆրանսիայի՝ նախ Հալեպում, ապա և 1830-ական թթ. Բեյրութում հյուպատոս Հ. Գուիի երկարամյա դիտարկումների արդյունք հանդիսացող հատորների շարքը (102—106), 1860-ի ֆրանսիական զինարշավի հետ անմիջականորեն աղերսված պատմաբան-հրապարակախոսների՝ արաբագետ Բ. Բուժուլայի «Ճշմարտությունը Սիրիայի և ֆրանսիական զինարշավի վերաբերյալ» (157), Է. Լուսի «Սիրիական զինարշավ» (136) և Ֆ. Լընորմանի «1860-ի սիրիական կոտորածների պատմություն» ու «Սիրիայի վերջին դեպքերը» (132—133) աշխատությունները, պատմաբաններ՝ կղերամոլ Ա. Լորանի «1840-ից մինչև 1842 սիրիական հարցերի պատմության շարադրանք» (130) և Ա. Դենիի «Լիբանանի վերաբերյալ քաղաքական և դիվանագիտական հետազոտություններ» (87) գրքերը, դիվանագետ Է. Պուժատի «Լիբանանը և Սիրիան 1845—1860 թթ.» երկը (156), հրապարակախոս Լ. Բոդիկուրի «Ֆրանսիան Սիրիայում» պատմական ակնարկը (53), գեներալ Դյուկրոյի նամակները (131) են։ Ռուսական ճակատից հիշատակել է պետք հատկապես 1843 թ. Սինոդի և արտաքին գործերի մինիստրության կողմից տեսական գործուղմամբ Սիրիայում ապրած Պ. Ուսպենսկուն, որ միաժամանակ դիվանագետ Բազիլիի գլխավոր աջակիցն է եղել և որից մեզ են հասել որպես սկզբնաղբյուր բարձրարժեք օրագրեր ու հաղորդագրություններ (46—47)։ Ամերիկյան ճակատից առկա են միսիոնարներ Է. Ռոբինսոնի, Է. Սմիթի և այլոց օրագրերն (164) ու Հ. Ջեսուրի ավելի քան հինգամյա ժամանակաշրջան ընդգրկող հուշագրությունը (115)։

Անփոխարինելի, հաճախ արխիվային փաստաթղթերում անգամ անճարելի հաղորդագրումների և վկայությունների մի ամբողջ կույտ կարելի է ձեռք բերել XVIII դարավերջին և XIX դարի տարբեր ժամանակահատվածներում Լևանտ այցելած եվրոպական ճանապարհորդների՝ ուխտա-

վորների, հետախույզների, հայրենիքից վտարանդվածների, գործարարների, արկածախնդիրների և այլ, տարբեր նկատառումներով ու տարբեր ժամկետներով Արևելքում ապրած մարդկանց ուղեգրություններից, որոնց շարքում անառարկելիորեն դասականն է մնում ֆրանսիացի գիտնական Ս.—Ֆ. Վոլնեյի «Ճանապարհորդություն դեպի Եգիպտոս և Սիրիա» երկհատորյակը (192):

Մեր գրապահոցներում առկա հարուստ գրականությունից և արխիվներից քաղված նյութերի շնորհիվ Լիբանանի նոր պատմությանը նվիրված մեր աշխատությունը իր նախորդներից տարբերվում է ոչ միայն իր ընդգրկած հարցերի լայն շրջանակով, հետևաբար և ծավալով: Մեր ելակետը սկզբից մինչև վերջ եղել է մարքս-լենինյան մեթոդոլոգիան, որ անչափ օգնել է մեզ՝ ճիշտ կողմնորոշվելու ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական իրադրության խառնարանում: Այդ մեթոդոլոգիան մեզ թույլ է տվել հատկապես ցցուն դարձնել այն ճշմարտությունը, որ իմպերիալիզմի և սիոնիզմի ոտնձգությունների դեմ լիբանանյան ժողովրդի մերօրյա հերոսական պայքարն իր արմատներն ունի օսմանյան բռնատիրության և գաղութարարական մեքենայությունների դեմ անցյալի ոգորումներում և որ, ինչպես անցյալում, այդ պայքարի հաղթական ավարտին գլխավոր խոչընդոտը լիբանանյան աշխատավոր ժողովրդի ազգային և դասակարգային միասնությունը համայնքային-դավանական արյունալի երկփեղկումներով խորտակելու նենգ փորձերն են:

Սովետական ամբողջ ժողովրդի հետ արաբական պատմության մեր ամեն մի մասնագետ համոզված է, որ ծանր փորձությունների տևական բովով անցած լիբանանյան ժողովուրդը չի հաշտվի իր քաղաքական անկախությունն ու սոցիալ-տնտեսական առաջընթացը խափանելու փորձերի հետ: Ինչ խոսք, որ այդ փորձերի դեմ պայքարը հաղթանակով ավարտելու համար անչափ ուսանելի են մոտիկ անցյալի պատմության դասերը: Եվ սովետական արաբագիտությունը այդ նկատառումով է հատուկ ուշադրություն դարձնում արաբ ժողովուրդների այսօրվա հետ նաև երեկին:

Պարտք ենք համարում շեշտել նաև, որ սովետական արաբագիտության հայկական ջոկատի համար արաբ, այդ թվում լիբանանյան ժողովրդի պատմության հարցերին անդրադառնալը միաժամանակ երախտագիտության մի դրսևորում է, որ հայոց վերածնված հայրենիքից հասցեագրվում է մեր տարագիր բեկորների նկատմամբ ցուցաբերված խորը մարդկային վերաբերմունքին:

* * *

1943 թվականի նոյեմբերի 22-ին անկախ հռչակված Լիբանանի Հանրապետության հողատարածությունը, որ ճշտորոշվել էր 1920 թ. սեպտեմբերի 1-ին՝ ֆրանսիական գաղութային իշխանությունների կողմից Մեծն Լիբանանի պետության ստեղծման կապակցությամբ, մինչ այդ Օսմանյան կայսրության տարբեր նահանգների միջև մասնատված՝ վարչաքաղաքական որևէ կայուն միավորի ներսում չէր ամփոփվել բնավ, մոտավոր համախմբման կարճատև ժամանակաշրջաններում էլ առանց հաստատուն սահմանագծման միախառնվել էր Սիրիայի* հողատարածքի այլ հատվածների հետ, հետևաբար համընդհանուր որևէ անվանում չէր ունեցել երբևէ։

Մաան տոհմի իշխանապետների ժամանակաշրջանում, հիմնականում արդեն իսկ մեկ մականի ներքո, այլ սիրիական մի շարք հողակտորների համակցված երկրի ամիր ալ-քաբիրին (այն է՝ մեծ իշխանին) տեղում տրվող տիտղոսը դրուզների իշխան էր միայն (37, 27), քանի որ նրա տոհմական տիրույթը, ինչպես նաև վարչական ձեռնհասության առարկան դրուզաշատ Ջեբել աշ-Շուֆի կամ Ջեբել ադ-Դրուզի՝ Շուֆ կամ Դրուզների լեռան վրա էր տեղադրված և կազմում էր Բիլետ ադ-Դրուզի՝ Դրուզների երկրի հիմնական մասը։ Նույն տիտղոսն էին կրում նաև Մաաններին հաջորդելով նրանց ժառանգությունն ընդարձակած Շիհաբ իշխանապետները, հակառակ որ նրանց նախասկզբնական տոհմական տիրույթ Ուադի աթ-Թայմը ոչ թե Դրուզների լեռան վրա, այլ Ջեբել աշ-Շեյխի ստորոտում էր տեղադրված և որ նրանք դավանությամբ ոչ այնքան դրուզ, որքան սուննի էին, իսկ վերջին երեք աթոռակալները՝ նույնիսկ քրիստոնյա։ Յուսուֆ Շիհաբը, միայն, պարզապես իր ազդեցության լայն ոլորտի շնորհիվ, 1770-ին Այն Բարուկում դրուզ ավագանուց ստացել էր «ամիր քուլ՝ լիլ Ջեբել («Ամբողջ Լեռան իշխան») տիտղոսը, թեպետ պաշտոնական իր տիտղոսը սոսկ «Դրուզների իշխանն» էր մնում, ինչպես և իր հաջորդ համբավավոր Բեշիր II-ը, հակառակ որ XIX դարի սկզբներին մեծ վեզիրից ստացած նոր լիազորագրով սա կարդվում էր իշխան ոչ միայն Ջեբել ադ-Դրուզի, այլև Ուադի աթ-Թայմի, Բաալբեկի, Բիկայայի, Ջուբեյլի և պաղեստին-լիբանանյան սահմանային Բիլետ Բշարրիի կամ Մթուալլիների երկրի (127, 94։ 181, հտ. 2, 57։ 11, 73)։

---

* Սույն աշխատության մեջ Սիրիա անվան ներքո, որպես կանոն, նկատի ենք ունենալու պատմաաշխարհագրական Սիրիան, որ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը ընդգրկում էր մերօրյա Սիրիայի, Լիբանանի և Պաղեստինի տարածքը։

Բանն այդպես էր այն պատճառով, որ եթե զանց առնելու լինենք Օսմանյան կայսրության շրջանակներում 1861—1914 թթ. լեռնային հատվածի ինքնավարության շնորհիվ պաշտոնականացած Լիբանան լեռ անվանումը, ապա բուն Լիբանանը, որպես վարչաքաղաքական ուրույն միավոր, անգո էր մնալու մինչև 1920 թ., երբ, ի հակադրություն Լիբանան լեռան (այսպես ասած փոքր Լիբանանի), ստեղծվելու էր Մեծն Լիբանանը։

Լիբանան լեռ (Ջեբել Լուբնան) անվանումը ի սկզբանե անտի մատնանշում էր պարզապես մի հատվածը պատմաաշխարհագրական Սիրիայի հյուսիսարևմտյան ծովահայաց այն լեռնապարի, որ մեր օրերում արդեն ամբողջությամբ Լիբանանյան լեռնաշղթա դարձած, հյուսիսում Նահր ալ-Քեբիրից (Էլեյտերուզ գետից) մինչև հարավում Նահր ալ-Կասիմիյյա (վերին հոսանքում ծանոթ այլ՝ Նահր ալ-Լիթանի անվամբ) շուրջ 200 կմ-ի վրա գրավում է ժամանակակից Լիբանանի տարածքի զգալի մասը։ Իրոք, այդ անվանումը սկզբնապես վերաբերում էր հիշյալ լեռնաշղթայի Կառնատ աս-Սաուդա սարակատարից հիմնականում հարավարևմուտք փռվող էապես մարոնաբնակ այն լեռնային հատվածին, որ սահմանագծվում էր Ջիբբեթ Բշարրիի, Բիլեթ Բաթրունի և Բիլեթ Ջուբեյլի (նրա մեծ մասն ընդգրկող) շրջաններով*։ Այդ շրջանների ազգաբնակչության տեղաշարժերին զուգընթաց էլ Լիբանան անվանումը, երկար դարերի ընթացքում, հետզհետե սահելով հյուսիսից դեպի հարավ և աստիճանաբար նվաճելով լեռնաշղթայի մյուս լեռները՝ նախ Մունեյթրան և Քեսրուանը (մեր օրերի Սաննին լեռը), ապա Ջեբել աշ-Շուֆը (կամ մեր օրերի ալ-Բարուկը), ի վերջո անջնջելիորեն դրոշմվել է Մայրիների ամբողջ երկրի վրա։

Համենայն դեպս XVIII դարի մայրամուտին իսկ ուղեգրող Վոլնեյը Լիբանանյան տակավին մերօրյա ընդգրկումը չունեցող հողատարածության՝ Լիբանան լեռան վրա անգամ խստիվ տարբերակում էր երեք խոշոր միավորներ. Լիբանանի երկիր, Քեսրուանի երկիր և Դրուզների երկիր (192, հտ. 1, 303—305)։ Լիբանանի երկիր ասելով Վոլնեյը պարզորոշ նկատի ուներ նախասկզբնական Լիբանան լեռան երկիրը՝ Ջիբբեթ Բշարրին և Բիլեթ Բաթրունի վերին արևելյան հատվածը։ Քեսրուանի երկիրը,

---

* Լիբանան անունը (սեմական լ-բ-ն արմատից, որ նշանակում է սպիտակ) լեռնաշղթայի այդ հատվածին էր վերաբերում տակավին աստվածաշնչական ժամանակներում։ Նախասկզբնական Լիբանան լեռը, ինչքան էլ տարօրինակ թվա, ժամանակակից Լիբանանի ոչ թե Լիբանան լեռ (որին լիբանանահայերը նախընտրում են Լեռնալիբանան ձևը), այլ Հյուսիսային Լիբանան կուսակալության կազմում է ընդգրկված։

2—1028

ՀԱՍԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

որ «տարածվում է Նահր ալ-Քելբից Լիբանան լեռան լանջերով մինչև Տրիպոլի», Վոլնեյի պատկերացմամբ հարավում Մեթնը թողնում էր Դրուզների երկրին և փաստորեն ընդգրկում էր բուն Քեսրուանը, Ջիբբետ Մունեյթրան, Բիլետ Ջուբեյլը, Բիլետ Բաթրունի ստորին-արևմտյան հիմնական հատվածը և Քուբան։ Եվ վերջապես Դրուզների երկիրը Վոլնեյը բաժանում էր 7 կառաների կամ մանրահատված-շրջանների, թեկուզ առանց վերջինները ճշգրտիվ թվարկելու և տեղադրելու։

Այս բոլորը նշանակում է, որ Վոլնեյի ուղևորության օրերին իսկ նախասկզբնական Լիբանան լեռան ինքնուրույնության գաղափարը այնքան ներգործուն էր տակավին, որ ոչ միայն Շուֆի դրուզական, այլև Քեսրուանի քրիստոնեական լեռնագոտին անգամ ամբողջությամբ Լիբանան լեռան չէր խառնվել դեռ։ Հետաքրքրական կլինի նշել, որ այսպես լինելով հանդերձ, իր այցելության օրերի գահակալ ամիր Յուսուֆի դրուզների իշխան պաշտոնական տիտղոսն արձանագրելուց և ընդգծելուց հետո, որ նա միաժամանակ «ամբողջ Լեռան հրամանատարն է», Վոլնեյը գտնում էր, որ Լիբանան լեռ անունը «պետք է տարածել Քեսրուանի ամբողջ լեռնաշղթայի և Դրուզների երկրի վրա» (192, հտ. 1, 403 և 280)։

XVIII դարի վերջին տասնամյակներին դեռ տիրական ու տեղին այդ պատկերացումը XIX դարի կեսերին խախտվել էր արդեն և Լիբանան լեռ անվան ներքո համախմբվում էին նախասկզբնական Լիբանան լեռան սահմաններից դուրս ընկնող շատ հողատարածություններ, թեպետ տակավին միաբանություն չկար ճշտորոշ սահմանագծերի խնդրում։ Այսպես, օրինակ, 1848-ին շարադրված մի ուղեգրություն Լիբանան լեռը տարածում էր Տրիպոլիից մինչև Սայդա և ստորաբաժանում երկու հատվածների. Նահր ալ-Քելբից հյուսիս մինչև Տրիպոլի՝ քրիստոնեաբնակ գոտի, Նահր ալ-Քելբից հարավ մինչև Սայդա՝ խառը ազգաբնակչությամբ գոտի (118, հտ. 3, 326)։ 1852-ի մի ուղեգրություն, իր հերթին, Լիբանան լեռը գիտեր որպես «Լիբանանի լեռնաշղթա, որ ծածկում է մի ամբողջ երկիր» (54, 176)։ Եթե այստեղ «երկիրը» նույնիսկ մոտավորապես սահմանագծված չէր, ապա մի երրորդ ուղեգրող 1849-ին «Լեռ» հասկացության մեջ միախառնում էր երկու տարանջատ աշխարհագրական միավորներ՝ Լիբանանն ու Անդրլիբանանը (149, 330)։ Պատահում էր, որ որոշ ու նույնիսկ ավելի ուշ շրջանի հեղինակներ Լիբանան լեռը վերամփոփում էին իր նախասկզբնական սահմանների մեջ, առ առավելն այն տարածում երկրի քրիստոնեաբնակ ամբողջ հյուսիսի վրա։ Անանուն մի ուղեգրող, օրինակ, 1860-ին Լիբանան էր անվանում թուրքական իշխանությունների

կողմից երկաթված Լիբանան լեռան քրիստոնյա կայմակամության հողատարածությունը (Մեթնից հյուսիս), այս «մարոնական Լիբանանը» հակադրելով «թշնամի» շրջապատի՝ հարավի դրուզներին, հարավ-արևելքի մթուալլիներին, հյուսիսի նուսեյրիներին և ծովափնյա քաղաքներ Տրիպոլիի ու Բեյրութի սուննիներին (85, 87—91)։

Մինչև 1920 թվականը գրեթե համընդհանրորեն առկա այդ շփոթը հասկանալի կդառնա, եթե ի մտի ունենանք՝ մի կողմից Օսմանյան կայսրության շրջանակներում լիբանանյան հողատարածության մասնատվածությունը վարչական տարբեր միավորների կազմում, մյուս կողմից երբեմն միևնույն միավորի ներսում իսկ տարբեր հատվածների տարնմանությունը իրավական և հարկային դրության տեսակետից։ Մեծն Լիբանանի պետության ստեղծման շնորհիվ վերացած այդ շփոթը արաբ թե օտարազգի հեղինակների մոտ այնուհետև իր տեղը զիջեց մի այլ շփոթի, որ Լիբանան ու Լիբանան լեռ անվանումները առանց ժամանակային տարբերակման ու հողատարածության սահմանագծման միշտ և ամենուրեք որպես համարժեքներ օգտագործելու մեջ է։ Ք. Սալիբին առաջինն է, որ Լիբանան անվան առաջացաղը թուցիկ ուրվագծելիս, ակնարկել է անվանումները հատուկ տարբերակմամբ օգտագործելու անհրաժեշտության։ Խոսելով 1861-ին ստեղծված Լիբանան լեռան ինքնավար կուսակալության մասին, նա ընդգծել է, որ «նրա հողատարածությունը սովորաբար կոչվում է Լիբանան լեռ» և քանի որ «մինչ այդ պաշտոնապես Լիբանան կամ Լիբանան լեռ անվանվող քաղաքական միավոր գոյություն չուներ», «լավագույն է Մաանների և Շիհաբների կառավարած հողատարածությունն անվանել Լիբանանյան ամիրայություն» (37, 26—27)։

Սալիբին իրավացի է։ Լիբանան անունը պետք է օգտագործել միայն մերօրյա պետությունը նկատի ունենալիս և ուրեմն քաղաքական հշտորոշ այդ միավորի հողատարածքն ընդհանուր առմամբ և անցյալ ժամանակներում մասնանշելիս անհրաժեշտ է գործածել բացառապես լիբանանյան հողատարածություն դարձվածքը։ Լիբանանյան ամիրայությունը (1517—1841), որ իր ստեղծման օրից ընդհուպ մինչև XVIII դարի վերջը պաշտոնապես ճանաչվել է իր ինքնանվամբ՝ Դրուզական ամիրայություն, որպես վարչակառավարմամբ ուրույն այլ հողատարածությամբ անկայուն միավոր պետք է ըստ ժամանակաշրջանների տեղայնացնել երկրի որոշակի մասերի՝ տեսապես Դրուզների (կամ Շուֆ) լեռան, երկար ժամանակ Դրուզների երկրի, երբեմն Լիբանան լեռան ու կարճատև ժամանակաշրջաններում լիբանանյան մերօրյա հողատարածության շրջանակներում և ուրեմն երբեք չնույնացնել Լիբանանի հետ։

Վերջինից հատկապես պետք է տարբերակել 1861-ին ինքնավար հռչակված Լիբանան լեռը, քանի որ այն որպես վարչական ուրույն միավոր բևեռված է մնացել լիբանանյան հողատարածության մի որոշակի հատվածի վրա, որ ամիրայության ոչ թե փայլուն, այլ նույնիսկ միջակ օրերի սահմաններին նախանձելու պատճառ է ունեցել։

Նախասկզբնական Լիբանան լեռ անունը, որ հյուսիսից շարժվելով և Քեսրուանի ու Շուֆի լեռնագոտիների վրա տարածվելով ծնունդ տվեց ինքնավար կուսակալության անվան, արաբերեն (նաև օսմաներեն) է ջեբել Լուբնան, բառացի՝ լեռն Լիբանան։ Նույնն է նաև ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, թուրքերեն (тора Ливан կամ Ливанские горы, Mont Liban կամ Montagne Libanaise, Mount Lebanon, Lübnan dagi են)։

Այլալեղու այս ձևերի անփոփոխության պայմաններում, հայերեն Լեռնալիբանան և ռուսերեն Горный Ливан ձևերը, ժամանակով ու տարածությամբ իրր թե ճշտորոշ մի երկրամաս նշող, ետսամուտ այլ սխալ դարձվածքներ են, քանի որ նկատի ունեն միայն ու միայն ուշ շրջանի Լիբանան լեռը, որ չէր կարող՝ ի հակադրություն մի այլ, դաշտահովտային անգո Լիբանանի, դառնալ Լեռնալիբանան։ Ժամանակակից Լիբանանի հողատարածությունը քայլ առ քայլ չափած Կ. Մ. Բազիլին, օրինակ, իր աշխատության մեջ թե դիվանագիտական զեկուցագրերում մատնանշել է լոկ ջեբել Դրուզ կամ ջեբել Լուբնան, իսկ ռուսական ձևով՝ тора Ливан (11, 17, 23, 27 են)։ Լիբանան երկրին և նրա պատմությանը քաշածանոթ Ա. Ե. Կրիմսկին ևս մինչև 1861 թ. գործ է ածել Սիրիայում Լիբանանյան (կամ Լիբանան) լեռներ ձևը (26, 120—130)։ Վ. Բ. Լուցկին, որ առաջիններից մեկն է որդեգրել Горный Ливан-ը, բոլոր դեպքերում այն վերապահել է ինքնավար Լեռան (28, 120)։

Դժբախտաբար միևնույն բծախնդիր տարբերակումն ի սպառ բացակայում է լիբանանյան պատմության մերօրյա հետազոտողների մոտ։ Ի. Մ. Սմիլյանսկայան, օրինակ, հաճախ է համարժեք դարձնում Լիբանանն ու Լիբանան լեռը, նույնիսկ այն դեպքում, երբ արձանագրվող սոցիալ-տնտեսական երևույթը վերաբերում է բացառապես Լիբանան լեռան և ոչ երբեք Լիբանանին ամբողջությամբ (43, 7, 8, 16 են)։ Մ. Տ. Պանչենկովան ոչ միայն Լիբանանյան ամիրայությունն է նույնացնում Լիբանանի հետ ու տարբեր դարաշրջաններում իշխանապետության վճռած հարկագումարները համեմատելիս անգամ չի մտահոգվում, որ տրվյալ ժամանակ Լիբանանից ի՞նչ հողատարածք էր ամփոփված ամիրի մա-

կանի ներքո, այլև Լիբանան լեռը 1842-ի նոր վարչակառույցից թե 1861-ի ստատուսից հետո (33, 51, 82, 201 են)։

Մեր արաբագետների մոտ առկա է մի այլ շփոթ ևս. դա Անդրլիբանանը (Անտիլիվան) որպես Ուադի աթ-Թայմի հոմանիշ օգտագործելն է։ Այդպես է, օրինակ, Սմիլյանսկայայի մոտ, այդ թվում Բաղդիլիի աշխատության ծանոթագրություններում (43, 20, 49, 90, 109 են)։ Այդ շփոթի աղբյուրը Բաղդիլին է, որ, որպես կանոն, Ուադի աթ-Թայմին փակագծերի մեջ կցել է Անդրլիբանան, վերջինս ընկալելով որպես ոչ թե նույնանուն լեռը, այլ՝ մի կողմից Լիբանան ու մյուս կողմից Անդրլիբանան և Հերմոն լեռների միջև տարածված Բիկայայի ամբողջ սարահարթը, նեղագույն Ուադի աթ-Թայմը (11, 27, 33 և 145—146)։ Իրականում տարբեր են Անդրլիբանանն ու Ուադի աթ-Թայմը։ Լիբանանցիք Ջեբել աշ-Շարքի (Արևելյան լեռ), իսկ սիրիացիք Լուբնան աշ-Շարքիյյա (Արևելյան Լիբանան) են անվանում եվրոպական ձևով Անտիլիվան (Անդրլիբանան) լեռը, որ Բիկայայի դաշտավայրի արևելյան կողմում է բարձրանում։ Հարաբերաբար հարավում կա մի ուրիշ լեռ՝ Ջեբել աշ-Շեյխը (Շեյխ լեռը), որ եվրոպացիների Հերմոնն է, իսկ արաբների մոտ նաև՝ Ջեբել Հարամուն։ Եվ ահա եթե Լիբանան և Անդրլիբանան լեռների միջև փռված դաշտավայրը Բիկան է (ծայր հյուսիսում՝ Բաալբեկով, կենտրոնամասում՝ Ջահլեով և Քաբ Էլիասով, հարավում՝ Մեջդ ալ-Այնջարով և ալ-Կարուն լճակով), ապա հարավում, Լիբանան լեռից ժամանակին տարանջատ Դրուզների (Շուֆ) լեռան և Հերմոն լեռան միջև, վերջինիս փեշերին փռված սարահարթը Ուադի աթ-Թայմն է՝ Հասբայա և Ռաշայա բնակավայրերի շուրջ համանուն հատվածների բաժանված։

Մեր հնագետների մոտ լիբանանյան ոչ միայն աշխարհագրական պատկերացումներն են տարտամ։ Հաճախ անհաստատ են պատկերացումները նաև առանձին համայնքների տեղաբաշխման, վարչակառավարման դրվածքի ու առանձնահատկությունների և այլ էական հարցերում։ Այդ պատճառով է, որ Լիբանան անվան առաջխաղացքին ու երկրի կերպավորման հետևելու, նրա պատմաքաղաքական թե սոցիալ-տնտեսական առանձնահատկություններն իրենց ծննդյան ու զարգացման ընթացքի մեջ ընկալելու համար անհրաժեշտ է ներածական կարգով գեթ կարճատև համենայն Լիբանանի պատմության անցյալ սանդղահարթակներից մի քանիսի վրա, բացահայտելով հատկապես այն իրադրությունն ու պայմանները, որոնցում նրա հողատարածքի վրա հայտնվեցին լիբանանյան ժողովրդի բաղադրատարրերը։

Ժամանակակից Լիբանանի հողատարածությունը մարդկային մշակույթի օրրաններից և տարբեր քաղաքակրթությունների ժամադրավայրերից մեկն է եղել դեռ հնադարում։ Մինչ մեր թվարկությունը երրորդ հազարամյակում սեմական քանանացիները, որոնց հետնորդները հին հույների կողմից փյունիկեցի են անվանակոչվել, Միջերկրականի արևելյան ափին հիմնադրել են Բիբլոս, Ուգարիտ, Արատ, Տյուրոս, Սիդոն և այլ մեծահռչակ քաղաք-պետություններ։ Շնորհալի նավաշինարար և հմուտ ծովագնաց, նաև առաջին այբուբենի արարիչ, փյունիկեցիները ոչ միայն բաց ծովերում հաջողապես մրցակցել են հելլենների հետ, ստեղծել ծաղկուն գաղթօջախներ և քարավանային առևտրի ասպարեզում որպես միջնորդ իրար շաղկապել հին Արևելքի պետությունները, այլև բազմամբոխ ստրուկների դաժան շահագործմամբ իրենց պոլիսները հասցրել են բարգավաճման ուշագրավ մակարդակի։

Փյունիկյան քաղաք-պետությունները շատ վաղ են գրգռել ժամանակի մեծերի ախորժակները և հաճախ որպես կռվախնձոր ենթարկվել Արևելքի հակամարտ տիրակալների ոտնձգություններին։ Փարավոնների Եգիպտոսն ու փոքրասիական խեթերը, իսկ այնուհետև ասորեստանցիները, հին-պարսկական շահնշահերը, հունա-մակեդոնական զորավարները, հռոմեական կայսրերն ու նույնիսկ հայոց արքայից արքան բախվել են նաև փյունիկյան տիրույթի համար ու հերթագայությամբ ձեռք բերել այն։

Հռոմեական կայսրության անկմամբ (395) լիբանանյան հողատարածությունը ներգրավվեց Բյուզանդական կայսրության կազմում։ Եվ քանի որ այդ ժամանակ Մերձավոր Արևելքի երկրներում արձանագրվում էր ֆեոդալական հարաբերությունների առաջացման երևույթը, լիբանանյան դաշտային շրջանների տեղաբնիկ հողամշակ գյուղացիությունը, ծովափի քաղաքային տարասեռ ազգաբնակչության հետ միասին, ընկավ բյուզանդական ազնվականների և վերջիններիս կառավարության բարեհաճությունը վայելող հույն-օրթոդոքս բարձրաստիճան կղերի ծանր լծի ներքո։ Միայն լեռնային դժվարամատչելի վայրերում, որտեղ քրիստոնեության առաջ նահանջելով, ապաստան էին որոնել փյունիկյան հեթանոսության վերջին բեկորները, շարունակում էին գոյատևել նախնադարյան համայնական հարաբերություններն ու տոհմատիրական կարգերը։

Կիսակուսական ու սակավամարդ լեռնային շրջանների բնակչությունը V—VI դարերում, փախստական ստրուկների և կոլոնների ներհոսքի շնորհիվ, սկսեց շեշտակիորեն աճել։ Նույնքան շոշափելի էր նաև

քրիստոնեության պաշտոնապես ընդունված դավանանքից այս կամ այն առումով խոտորված հավատացյալների՝ սկզբում նեստորականների և հակոբիկյանների, այնուհետև հատկապես մարոնականների ներհոսքը Ասորիքի կենտրոնական և հյուսիսային գոտիներից։

Մեզ շատ հեռու կտաներ թեկուզ թռուցիկ շարադրանքով պատկերել այստեղ ստեղծաբանական այն նրբերանգները, որոնց հողի վրա կայսրության հարավարևելյան նահանգների ժողովրդական խավերը կարողանում էին արտայտել իրենց ազգային թե սոցիալական դժգոհությունը։ Անհրաժեշտ է ընդգծել, միայն, որ այդ նրբերանգների թելադրմամբ Քրիստոսի վարդապետության մոլեռանդ հետևորդների շրջանում չէին կարող չարձանագրվել երկպառակություններ և հետևաբար հավատի քարոզության տարբեր կենտրոնների, մանավանդ նրանց առաջատար դեմքերի միջև՝ բուռն հակամարտություններ։ Այդպիսի մի հակամարտության ու այսօր բավականին մթաստվեր մնացած մի պատմություն էլ մեզ գնում է լիբանանյան ժողովրդի կարևորագույն բաղադրատարրերից մեկի՝ մարոնական համայնքի կազմավորման նախահետքի վրա։

Մարոնական գրոց-բրոց լիբանանցիների համար ընդունելի մի ավանդություն պնդում է, որ Որոնտես (ալ-Ասի) գետի ափին, Հոմսի (Եմեսայի) շրջանում ապրած և V դարի սկզբներին վախճանած մի սուրբ այր է եղել, Մարոն (Մանուկ-տեր) անունով, որի անունի վրա էլ իր բազմահարյուր աշակերտներն ու հոծամբոխ հետևորդները, որոնց ազգային պատկանելիության հարցում պարզաբանում ձևոք բերելն այսօր անհուսալի գործ է արդեն, թեկուզ անհերքելի իրողություն լինեն նրանց ասորախոսությունն ու միաբնակությունը, Համայում հիմնադրել են վանք, սակայն շուտով բախվել են մի այլ սրբակրոն այրի՝ Հակոբ Բարատեուսի նույնպես միաբնակ հետևորդների, ազգությամբ մեծամասամբ ասորի հակոբիկյանների հետ։ Մարոնականները, շուրջ 350 սպանված թողնելով իրենց կիսակործան մայրավանքում, փախել և ապաստան են որոնել Լիբանան լեռան վրա (109, 521)։

Այն բանից հետո, երբ 451-ին Քաղկեդոնի հոգևոր 4-րդ տիեզերաժողովը, դատապարտելով երկու տարի առաջ Եփեսոսում հաղթանակած միաբնակությունը, պաշտոնապես հռչակեց երկաբնակության ուղղափառությունը, բյուզանդական կայսրերը քաղկեդոնականությունը պետական-պաշտոնական դավանանք դարձրեցին, մինչդեռ Հայաստանում, Պաղեստինում, Եգիպտոսում և Ասորիքում, հավանաբար նաև Լիբանան լեռան վրա, հավատացյալները, այդ թվում և առաջին ավանդական Մա-

ռոնի հետևորդները, կառչած մնացին որպես հերետիկոսություն հալածվող միաբնակությունից։

Հաշվի առնելով, որ դավանական երկպառակությունը կայսրության ռազմաքաղաքական միտումների ճանապարհին կարևոր խոչընդոտ էր դարձել, Հերակլես կայսրը (610—41) իր աստվածաբաններին խորհուրդ տվեց հղանալ միջին մի վարդապետություն, որ հաշտեցներ-համախառներ միաբնակությունն ու երկաբնակությունը։ Եվ ահա 638-ին կայսերական հրովարտակ-կոնդակով հրապարակ հանվեց միակամության (մոնոֆելիտ) ուսմունքը, ըստ որի Քրիստոսը պահպանում էր իր երկու՝ աստվածային ու մարդկային հավասարազոր բնությունները, սակայն դրանք բևեռվում էին մեկ ու միակ կամքի մեջ։ Ասորիքի կենտրոնամասում և Հյուսիսում, ինչպես և կայսրության այլ մասերում, միակամության ուսմունքը տարածում գտավ և ընդգրկեց նաև առաջին-ավանդական Մարոնի՝ Համայի շրջանում մնացած հոգեղավակներին, որոնք մյուս միակամների նման պաշտոնական հալածանքների թիրախ դարձան, երբ 680—681-ին Կոստանդնուպոլսի հոգևոր 6-րդ ժողովը նոր ուսմունքը հերետիկոսություն հայտարարեց։ Այդ հալածանքներից անմիջապես հետո է, ահա, VIII դարի սկզբներին, որ վկայվում են մայրիների լեռնագոտու սուրբ Մարոնի վաղուց գործող վանքն ապաստանած միակամ «հերետիկոսները»՝ մարոնականները, 715-ին Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռը գրաված Ջերմանոսի՝ հերձվածները ճաղկող մի մատյանում։

Հասկանալի է, որ միակամների մեծագունդ գաղթականությունն իր որդեգրած վարդապետությունն աստիճանաբար տարածել է իրեն հյուրընկալություն ընծայող միջավայրում։ Մյուս կողմից բնավեր, այլ իրադրության հրամանագրած համերաշխությամբ իրար սատարող նորեկները, ինչպես հասարակ մահկանացուները, այնպես էլ սքեմատորները, իրենց արմատներով կառչելով գոյամիջոցի անփոխարինելի աղբյուր լեռնային խոպան հողակտորներից, ոչ միայն նպաստել են Լեռան վրա երկրամշակության զարգացման, այլև սոցիալական ու տնտեսական մարզերում օրըստօրե ամրապնդելով իրենց դիրքերը, հետզհետե իրենց շուրջ են ձգել բնիկ փյունիկեցի լեռնականներին, Լիբանան լեռան լանջերին ցանցնելով առաջին այն տարասեռ, այլ ճակատագրով ու դավանությամբ շաղկապված հավաքականություններին, որոնց համաձուլվածքից աստիճանաբար կերպավորվելու էր մարոնական համայնքը։

Առաջին-ավանդական Մարոնի շուրջ հյուսված ավանդության մի այլ պատում, որ հույն-կաթոլիկ գրոց-բրոց լիբանանցիների միջավայրում է պահպանվել և Վոլնեյի ուղեգրությամբ հասցվել Եվրոպա, պնդում է այսպես։ Իբր վերոհիշյալ Մարոնը VI դարի վերջին է ապրել ու գործել և նրա անունի վրա հիմնադրված վանքում հակոբիկյանների ձեռքով ոչ մի արյունահեղություն էլ չի գործվել։ VII դարում գերագահության համար Կոստանդնուպոլսի պատրիարքի և Հռոմի պապի միջև սրվող վեճում այդ մենակյացներն ու նրանց հետևորդ աշխարհականներն իբր դիրքորոշվել են պապականների ճակատում և Անտիոքում պապի լատին գործակալն էլ, Լիբանան լեռան վրա քաղկեդոնականների հաջողությունները խափանելու նպատակով, այդ վանքի միաբան երկրորդ՝ պատմական Մարոնական Յուհաննային Բաթրունի և շրջակայքի եպիսկոպոս Ալոնադրելով, աջակիցներով հանդերձ դարավերջին գործուղել է Ջուբեյլ։ Հենց այնտեղ էլ պատրիարքի կողմնակիցները մարտ են տվել և պարտված Յուհաննային իր հետևորդների հետ հալածել մինչև Լիբանան լեռան դժվարամատչելի բարձունքները, որտեղ էլ ամրակայանաբար կազմավորվել է մարոնական համայնքը (192, հտ. 1, էջ 389)։

Ավանդության այս պատումն արժեքավոր է նրանով, որ մեզ դնում է լիբանանյան ժողովրդի քրիստոնյա մյուս կարևոր բաղադրատարրի՝ քաղկեդոնական մալքի (խաչակիրների կողմից հետագային գրիֆոն անվանված) համայնքի նախահետքի վրա։

Արևելահռոմեական կայսրությունում մալքի (կամ մալաքի, այն է՝ արքայական, արքայի կուսակից) էին կոչվում Մարկիանոս կայսեր նախաձեռնությամբ Քաղկեդոնում ընդունված որոշումների տարից բծախնդրորեն կառչած երկարնակները, որոնք մոլեռանդորեն դիրքորոշվելով միակամության դեմ, չէին կարող իրենք ևս հետապնդումների չենթարկվել։ Հալածական արքայականների այն բազմությունը, որ մի օրից մյուսը համախմբվեց լիբանանյան հողի հյուսիս-արևմտյան հատվածում, ի տարբերություն մարոնականների, իր հիմնական մասով արտանետված էր Սիրիայի ազգաբնակչության ոչ թե ասորական, այլ առավելաբար հունական շերտից։ Եվ պատահական չէր, բնավ, որ նորաբնակները ոչ միայն օջախ հաստատեցին Միջերկրականի ափամերձ մի շրջանում, որ ըստ երևույթին ի վաղուց անտի քաղկեդոնականների կենտրոններից մեկն էր և որտեղից հեշտ էր հաղորդակցվել ծովեզրյա քաղաքների հնամենի ազգաբնակչության առևտրաարհեստավորական առավել աշխույժ մասը կազմող իրենց ազգակից-դավանակիցների հետ, այլև երկար ժամանակ պահպանեցին բյուզանդական եկեղեցու հելլենաբան ծիսակատարությու-

նը, թեպետ արաբական տիրապետության հաստատումից հետո ավելի ու ավելի արաբախոս դարձան։

Լիբանանյան մալթի համայնքը, ի տարբերություն մարոնականի, մինչև մեր օրերը չի հասել որպես համաձույլ-միասնական դավանական խմբավորում, այլ XVII դարի վերջերին Սայդայի և Սուրի եպիսկոպոս Եֆիմոս Սայֆիի (1683—1723) նախաձեռնությամբ և հիսուսյանների ներգործությամբ երկպառակտվելով, 1724-ին ծնունդ է տվել հույն-կաթոլիկ համայնքին, մի փոքր ավելի ուշ հարկադրվելով վերցնել հույն-օրթոդոքս ինքնանվանումը։ Եվ իրոք, Դամասկոս կենտրոնով Անտիոքի մալթի պատրիարքության երկատվելուց հետո դեռ շուրջ մեկ դար մալթի անունը առնչվում էր օրթոդոքս արաբների և արաբախոս դառնալով որպես արաբ գիտակցվող տարասեր (զգալի մասամբ հունական ծագմամբ) տարրերի հետ և Պոլսի պատրիարքի փոխարեն Հռոմի պապի հովվապետության ենթարկված շրջանները միայն թույլ փորձեր էին անում հանդես գալու համայնքի նախկին անվանմամբ։ Այն բանից հետո, երբ Մաքսիմոս կաթոլիկ պատրիարքը 1848-ից սովորություն դարձրեց իր կոնդակներն ստորագրել որպես մալթիների պետ, հակառակ օրթոդոքսների բուռն բողոքներին, անունն ավելի ու ավելի խզվեց ուղղափառներից և բևեռվեց կաթոլիկների վրա։

Բոլոր դեպքերում արքայականների լիբանանյան համայնքը Ջուբեյլից հյուսիս և Տրիպոլիից հարավ՝ Քուրայի շրջանում, այլ խոսքով Լիբանան լեռան արևմտյան փեշերին համախմբվելու օրերին, ամենայն հավանականությամբ VII դարի վերջերին (քանի որ ժամանակագրություններում VIII դարասկզբին վկայված են մարոնական-մալթիական հակամարտության դեպքեր) գերազանցապես գյուղացիական էր։ Եվ ինչպես համայնքի բնակավայրի աշխարհագրականորեն հեշտությամբ մատչելի լինելը, այնպես էլ մալթիների ընդհանուր առմամբ բյուզանդական ժամանակաշրջանից տիրող տոցիալ-տնտեսական հարաբերություններից երբևէ չխզվելը անկասկածելի են դարձնում առաջին խսկ օրից նրանց շրջանում ավատատիրական արտադրաեղանակի տիրապետության փաստը։

Մահմեդականության տարածումից և արաբական խալիֆայության կազմավորումից հետո, մարոնական լեռնականները, որոշապես իրենց բնակավայրերի աշխարհագրական դիրքի առավելություններին, իրենց մարտունակության և իրենց առաջնորդների հմտության հենված, անպայման նաև անմիջական հարևան սիրիական մահմեդական արաբների (տեղարնիկների հետ նաև Թերակղզեցի եկվորների) հանդուրժողականու-

թյունից նպաստավորված, կարողացան իրենց հավատալիքների հետ պահպանել ու ավելի ևս ամրապնդել իրենց վարչաքաղաքական ինքնուրույն վիճակը։

Այս կապակցությամբ տեղն է նշելու, որ Օմայանների դեմ առավել եռանդուն մարտնչում էին ջարաջիմները կամ մաարադաները միայն, այլասեր, այդ թվում հայկական ծագմամբ քրիստոնյաներ, որոնք Փոքր Ասիայում, գլխավորապես Ամասիոսի և Տավրոսի լեռներում մատնակցում էին արաբական ներթափանցման դեմ բյուզանդական սահմանների պաշտպանության։ Նույնը 666-ին նրանց ջոկատները սողոսկեցին Լիբանան լեռան առավել դժվարամատչելի և սակավաբնակ շրջանները, այնտեղ հիմնավորվելով թե նետեցին լեռնաշղթայի մյուս հատվածները, իրենց շարքերը խտացրեցին մահմեդականների ներկայությունից դժգոհ տարբերով, այդ թվում մարոնականներով և օգտվելով Բյուզանդիայի նյութական ու զինական օժանդակությունից, սկսեցին ասպատակ տալ Սիրիայում։ Խալիֆաները, հատկապես Աբդուլ Մալիքը (685—705), հարկադրվեցին ոչ միայն հարկ վճարել Բյուզանդական կայսրության, որպեսզի սա հանձնառու լինի ջարաջիմներին թիկունք չտալու, այլև վերջիններիս ու մարոնականներին ոսկու գնով հրաժարեցնելու ասպատակությունից։ Ասենք, որ VIII դարի սկզբին ջարաջիմների մի մասը տեղափոխվեց Բյուզանդիա, սակայն մյուս մասը մնաց և շաղկապվեց ու ամրոցանաբար ձուլվեց լիբանանյան լեռնականների, առաջին հերթին մարոնականների հետ։

Թեպետ պատմականորեն հիմնազուրկ և լրջորեն քննադատված, մարոնական հեղինակների մոտ առ այսօր մոլեռանդորեն պաշտպանվում է մաարադաներին մարոնականների հետ նույնացնելու տեսակետը, որ իր ժամանակին ասպարեզ է նետել Դուեյհի պատրիարքը։ Ավելացնենք նաև, որ ջարաջիմներին հյուրընկալելով և աջակցելով խալիֆայության դեմ նրանց ելույթներին, Լիբանան լեռան բնակիչները, հատկապես մարոնականները, չէին թոթափում իրենց հակաբյուզանդական տրամադրությունները։ Ընդհակառակն։ Հենց ջարաջիմների հետ համագործակցության ժամանակաշրջանին է զուգադիպում գործունեությունը երկրորդ՝ պատմական Մարոնի, որ օգտվելով բարենպաստ հանգամանքներից, նախ Սամար Ջուրեյլի, ապա Քֆար-Հայայի իր աթոռանիստի* շուրջ

---

* Մարոնական եկեղեցու պետը, որ, ի դեպ, Դամասկոսի հույն-օրթոդոքս և հույն-կաթոլիկ եկեղեցապետերի նման կրում է Անտիոքի պատրիարք տիտղոսը, ավելի ուշ իրեն նստավայր էր դարձնելու մայրիների գոտու Քանուբին գյուղը, որ հետագայում

ստիճանաբար որպես համայնք կազմակերպել ու առաջնորդել է հետզհետե հոծացող խմբերով Ասորիքի կենտրոնամասից ու հյուսիսից փախչելով Լեռան վրա ապաստան որոնող իր միակամ դավանակիցներին։ Պատմական փաստ է այն, որ 694-ին նրա ղեկավարությամբ լեռնականները կատաղի դիմադրություն են ցույց տվել Հուստինիանոս II-ի պատժիչ ջոկատներին, որոնց առաջադրանք էր տրված քարուքանդ անել լիբանանյան հերետիկոսական ապաստանարանը և որոնք գլխովին ջախջախվեցին Ամիունի մերձակայքում։ Անհիմն չի լինի ենթադրել, որ Քուրայի շրջանում նոր-նոր համախմբվող ու հոծացող մալքիներն այդ զինաբախության ժամանակ դիրքորոշված լինեն նորից ուղղափառ-քաղկեդոնական դավանանքի դրոշակակիր դարձած բյուզանդական զորքերի կողքին, առաջին խոր ճեղքվածքն առաջացնելով հարևան մարոնականների հետ իրենց փոխհարաբերություններում։

Առաջին հայացքից ավելի պարզ, սակայն ըստ էության նույնքան մթին են սկզբնական այն պայմանները, որոնցում ժամանակակից Լիբանանի տարածքի տարբեր հատվածներում հայտնվել են լիբանանյան ժողովրդի կարևոր մյուս՝ մահմեդական բաղադրատարրերը, սունիի, շիի և դրուզ համայնքները։ Իրականում պարզ է միայն այն, որ Լիբանան երկրում, հատկապես ծովափնյա քաղաքներում, Բիկաայի հովտում և, ինչու՞ չէ, գուցե նաև լեռնային որոշ հատվածներում, տակավին Օմայան հարստության օրերին կարող էին հայտնված լինել ուղղափառ (սունիի) մահմեդականների կղզյակներ։ Սակայն պարզ է, նաև, որ Օմայան ժամանակաշրջանում Իսլամը դավանողների տոկոսային հարաբերությունը, ամբողջ Սիրիայում իսկ բավականին ցածր՝ շուրջ 5 տոկոս (չորս միլիոն բնակչից 200 հազար), լիբանանյան հողի վրա շատ ավելի աննշան պետք է լիներ (141, 52)։

Հարաբերաբար ուշ, արդեն Աբբասյան հարստության օրոք, VIII դարի վերջերից կամ IX դարի սկզբներից միայն, ամենամյա երևույթ դարձավ արաբ մահմեդական բաղուինների այլաքանակ խմբերի քոչը սիրիական-պաղեստինյան հարթավայրերից դեպի Լիբանան լեռան այս կամ այն հատվածը։ Բանու Տաննուխ ցեղի մի շարք տոհմեր, Բանու՝լ Համրաները, Բանու Աբի՝լ Ջայշերը և հատկապես Բանու Բոհտորները, որոնք Աբբասյան ալ-Մահդիի օրոք (775—85) Հալեպի շրջանում խլամացել էին արդեն, IX դարասկզբին, խալիֆայական կարգադրությամբ և

մնալով որպես ամառանոց, իր անդը դիջելու էր Բեյրութից 15 կմ հյուսիս-արևելք գտնվող Բքերքե գյուղին։

հավանաբար Ջիբբեռ Մունեյթրայի հողահարկի ենթարկված մարոնականների խլրտումները հակակշռելու առաջադրանքով, թափանցեցին Բեյրութից արևելք և զանգվածային բնակություն հաստատեցին հիմնականում Դրուզների լեռան արևմտյան գեղատեսիլ հատվածում՝ Ղարբում, որտեղ իրենց կանխել էր Բանու Լահմ ցեղի մարդկանց մի փոքր խումբ՝ առ այսօր գոյատևող Արսլան տոհմի նախնիները։ Սիրիական նույնպես մահմեդականացած հնաբնակ արաբներից Բանու Ջոջհամները և Բանու Ամիլները, նոր արոտավայրերի որոնման ճանապարհին, միևնույն դարում հյուսիսից Բիկաայի վրայով հանդիպանեցին լիբանանյան հարավում, մինչ Մաշղարայի հնաբնակ Բանու Թաղլիբները, ինչպես և թերակղզեցի նորաբնակների խոշոր խմբեր, հայտնվում և մշտական բնակության վրանն էին լարում Բիկաայի հովտում և կից Ուադի աթ-Թայմում (128, հտ. 2, 9)։

Այժմ արդեն անհնար է պարզել, թե սիրիական հարթավայրի բադաուիների կողմից որպես վերջնական բնակատեղի ընտրվող լիբանանյան այդ վայրերում ի՞նչ քանակի տեղաբնիկներ կային, էթնիկական ի՞նչ ծագում ունեին նրանք, ի՞նչ լեզու էին գործածում, ո՞ր աստվածը պաշտում և սոցիալ-տնտեսական հարաբերությունների ինչպիսի՞ աստիճանաշափի վրա էին գտնվում։ Նշենք, միայն, որ սկզբնաղբյուրներում մի փոքր ավելի ուշ Բանու Բոհտոր տոհմից տիրված Ղարբի բնակիչների համար վկայած աշիր (այն է՝ ցեղախումբ) և ջերելիյյա (այն է՝ լեռնական) անվանումներից մեր կարծիքով առաջինը պետք է ավելի շուտ առնչել եկվորների հետ, հետևաբար և ոչ միայն վերջիններիս կողմից տեղացիներին տրված անվանում ենթադրել լեռնականը, այլև վարկածել ջերելիյյաների շրջանում համայնական-տոհմատիրական հասարակարգի գոյությունը։

Ավելի հեշտ է հաստատել, որ եթե շատ շուտով Աբբասյանների սոցիալական, տնտեսական ու քաղաքական դաժան ճնշման դեմ սիրիական աղգաբնակչության արաբ-մահմեդական աստիճանաբար ստվարացած հատվածի հակազդեցություններից մեկն եղավ այն, որ Օմայանների և սուննայի երբեմնի միջնաբերդ Սիրիայում շիան՝ մահմեդականության կրոնաքաղաքական ընդդիմադրական ուղղությունն իր տարբեր հոսանքներով մի օրից մյուսը անհաշիվ հետևորդներ շահեց, ապա պատկերն առնվազն նույնությամբ փոխանցվեց լիբանանյան հողատարածքին, քանի որ վերջինս, իբրև ապաստանարան, հարմարագույն միջավայրն էր ընձեռում խստիվ հալածվող շիիներին (208, հտ. 2, էջ 237)։ Այս առումով էլ անիրավացի է, անշուշտ, պատմաբան Ք. Խայրալլան, որ

ընդդիմախոսելով իր դավանակիցների սիրիական-արաբական ծագումը փաստարկող լիբանանցի հեղինակ Ահմեդ Ռիդային, լիբանանյան շիիներին և առաջին հերթին նրանց շրջանում գերակշիռ մթուալլիներին Մուավիա I-ի կողմից որպես կայազոր Սիրիա ներմուծված պարսիկներից սերած է հայտարարում (123, էջ 9)։ Բոլոր դեպքերում Լիբանանի ժամանակակից հողատարածքում, բացի մարոնական նախասկզբնական Լիբանան լեռան հատվածներից, համարյա ամենուրեք՝ Բիկաայի ամբողջ հովտում (կից Ուադի աթ-Թայմով հանդերձ), Ջեբել Ամիլում, Շուֆում, Քեսրուանում, Տրիպոլիի շրջանում են, առնվազն մինչև XI—XII դարերը գերակշռողը շիան էր։

Լիբանանյան թվաշատ շիիները ջախջախիչ մեծամասնությամբ պատկանում էին շիայի դավանական թե սոցիալական հավատամքով չափավորական՝ տասներկուականների կենտրոնական ուղղության, որի համաձայն այս աշխարհում Ալիով հանդերձ մինչև IX դարի վերջը բացահայտ գործել են 12 իմամներ, որոնցից վերջինը 878-ին անհայտացել է ու վերադառնալու է որպես մահդի՝ մեսիա կամ փրկիչ։ Հետաքրքրությունից զուրկ չի լինի նշել, որ շիայի հետևորդների ալաուի (ալիական) անվանումը լիբանանյան, հատկապես Ջեբել Ամիլի (Բիլետ Բշարրիի) շիիների շրջանում վեր է ածվել մթուալլի ինքնանվանման։

XI դարի սկզբներից սունիի և շիի համայնքների կողքին ծնունդ առավ լիբանանյան մահմեդական երրորդ՝ դրուզական համայնքը, որ ըստ էության որպես աղանդ առնչվելով հանդերձ շիայի հետ, հիմքեր ունի ընկալվելու որպես կրոնադավանական ինքնուրույն ուղղություն։

Մաղրիբի ֆաթիմյան շիի խալիֆների կողմից Եգիպտոսից հետո նվաճված Սիրիայում իսմայիլականության պաշտոնական դավանանք հռչակվելու պայմաններում Հաքիմ խալիֆը (996—1021), իր անձը մարդացած աստված հայտարարելով, շիայի ծոցում ստեղծեց մի նոր՝ իր իսկ պաշտամունքի աղանդը։ Նրա մոլեռանդ երկրպագուներից Մուհամմեդ Բին Իսմայիլ ադ-Դարազին (ըստ որոշ աղբյուրների՝ սրա սան Համզա Բին Ահմեդը) լայն իրավասություններով և օգնականների խմբով գործուղվեց Սիրիա։ Այստեղ նա, հակառակ սունիների ու մասամբ նաև շիիների դիմադրության, կարողացավ գտնել այլազան համախոհներ՝ նախ Սայդայի ու Սուրի ծովափում և Ուադի աթ-Թայմում, ապա Հյուսիսում, մինչև Հալեպի շրջան ձգվող հարթավայրում, վերջապես լիբանանյան լեռնագոտու կենտրոնական ու հարավային հատվածներում։ Իր եռանդուն քարոզությամբ, որ հասկանալիորեն առավել արդասավոր եղավ ինչպես լիբանանյան տեղաբնիկ, այլ ճնշված ջեբելիյյանների, այնպես էլ

նորաբնակ բադաուիների առավել ընչաղուրկ ու տրորված խավերի շրջանում, նա նորահավատներին կազմակերպեց որպես ուրույն դավանության հավաքականություն։ Նրա հետևորդներից էլ, որոնք իրենց քարոզչի անունով կոչվեցին դրուզներ (դարազիականներ), ձևավորվեց Լիբանանի դրուզական համայնքը։ Սա ևս, մարոնականի նման, թեկուզ արաբական տարրի դերակշռմամբ, անհերքելիորեն տարասեր էր։

Բանն այն է, որ սուննի արաբ նորաբնակների՝ իրենց թիկունքին Աբբասյան խալիֆաների ռազմական հենարանն զգացող առաջնորդները լիբանանյան լեռներում առաջին իսկ օրից մշակության պիտանի հողերի առավելագույնն ու լավագույնը բռնի ուժով սեփականացրել էին իրենց տոհմական համայնքների համար, որոնց ներսում դասային շերտավորումներն այնքան խոր չէին տակավին և որոնք լավագույն դեպքում կարող էին անխնա շահագործել եկվորների ահից տրոհվելով չցրված տեղաբնիկ սակավանդամ համայնքների աշխատանքը միայն։ Հասկանալի է, որ դեռ մինչև երեկ քոչվոր կամ կիսաքոչվոր արաբների առօրյայում, նստակյացության անցնելուց և հողամշակության հետ առնչվելուց հետո, շատ արագ այլ որոշակի բեկմամբ անդրադարձ էին ունենալու Սիրիայի տարածության վրա մի քանի հարյուրամյակի վաղեմություն ունեցող ավատատիրական հարաբերությունները։ Տոհմապետական ավագանին, հատկապես ուժեղ տոհմերինը, օգտվելով մի կողմից յուրացվող շրջաններում տիրող սոցիալական կառույցի անիշխանականությունից ու մյուս կողմից կենտրոնական հեռավոր իշխանության թողտվությունից թե վերահսկող աչքի թույլ տեսողությունից, անկասկած հետզհետե սեփականատիրական իրավունք պիտի հաստատեր ընդարձակ, առավել բարերեր հողակտորների նկատմամբ։ Արաբական տոհմացեղային հասարակության շրջանակներում չափազանց ներգործուն ավանդույթի ուժին միացնելով ունեցվածքային հզորությունը, այդ ավագանին գործելու էր անհակակշիռ ընչաքաղցությամբ, ինչ որ կանխորոշելու էր ընչաղուրկ ու տրորված այլ առավել ըմբոստ ջերելիյյանների թե նորելուկ համայնական հողամշակների շրջանում դրուզական դավանության ծավալումը և աստիճանական արմատավորումը, նախ՝ Ղարբի ու Ջուրդի մանրահատվածներում, ապա և ապագա Դրուզների երկրում ամբողջությամբ։

Դրուզական դավանության ծավալման արագընթացության սոցիալական նախադրյալը վիճարկման ենթակա չէ, բնավ։ Վերջին հաշվով ադ-Դարազին թե իբն Ահմեդը, Սիրիա գործուղվելիս և օգնականներով քարոզության ձեռնարկելիս, ճիշտ է՝ կրոնադավանական հողի վրա մի նոր, 1021-ին ամենայն հավանականությամբ իր հարազատ քույր Սիթ ալ-

Մուլքի դավադրության զոհ գնալով անհայտացած Հաքիմի պաշտամունքի աղանդն էին ստեղծում, սակայն բոլոր դեպքերում մնում էին շիի-իսմայիլական։ Իսկ դա նշանակում էր ոչ միայն այն, որ նրանք սրտամոտ կարող էին լինել սունիի Աբբասյանների սոցիալ-տնտեսական թե քաղաքական բռնամիջոցների դեմ, որպես բողոք ու հակադարձություն շիա դավանանքին (հատկապես արդեն խսկ իսմայիլական աղանդին) հարած և լիբանանյան լեռնագոտում ապաստան որոնած սիրիացիներին, մանավանդ որ 1070-ական թթ. Սիրիայում հայտնված սելջուկյան Թուրքերն էլ, 1055-ին ալ-Կաիմ խալիֆայից Թողրուլ Բեկին շնորհված «Արևվելքի և Արևմուտքի սուլթան ու թագավոր» տիտղոսի շնորհիվ, փաստորեն հանդես էին գալիս որպես սունիի խալիֆաների «կամակատարներ»։ Դա հատկապես նշանակում էր, որ նոր քարոզիչները, որպես շիի-իսմայիլական, իրենց քարոզի կրոնադավանական բովանդակությունից բացի, նաև սոցիալական բովանդակությամբ, կարող էին սրտամոտ լինել լիբանանյան լեռնագոտու ճնշվածներին։ Չէ՞ որ իսմայիլականության բոլոր աղանդների համար համարյա հավասարապես բնութագրական էր սոցիալական հավասարության, ունեցվածքի (գույքի) ընդհանրության, բարիքների (սպառման միջոցների) արդարացի բաշխման քարոզը։

Հուշած եղանք, արդեն, որ այլ, յուրօրինակ իրավիճակ էր նախասահմանված դրությունների համար։ Եվ դա առաջին հերթին նրանց աղանդի դեմ սկզբում որքան կրոնադավանական, նույնքան և ավելի սոցիալական զսպանակներից բորբոքվող ու աշխուժացող ատելության ու հալածանքների թելադրանքով։

Դարազիի հետևորդները հարկադրվեցին անմիջապես կողմակերպվել որպես մարտունակ ու զինյալ հողամշակների մի տեսակ գաղտնի ու ներփակ եղբայրություն, թաքնանշաններով իրար ճանաչող «գիտուն» ձեռնադրյալ-նվիրյալների (ուքքալ կամ այավիդ) ընտրանիով, որ տեղերում իր ետևից տանում էր չձեռնադրված «անգետների» (ջուհհալ) բազմությունը և որ արտաքին տարբերանշաններից զուրկ ու մեկուսի և մահմեդական մզկիթի հետ ոչ մի նմանություն ու առնչություն չունեցող հատուկ օթյակներում կամ աղոթարաններում (խալուա) խորհրդի համատեղվելով, ոչ միայն կրոնական պաշտամունք էր կատարում, այլև քննարկում ու լուծում էր տեղական համայնքի սոցիալական, տնտեսական թե քաղաքական գործերը՝ դավանական ամբողջ համայնքի ատիճանաչափով կայացած ընդհանուր համաձայնության ոգով։ Տեղերում ինչպես ուքքալին, այնպես էլ ջուհհալին թարիայի օրենքով (այն է՝ թաքցնելու, ծածկելու, ձևանալու սովորությամբ) արտոնված էր անհրաժեշտության

դեպքում քողարկել իրենց հավատալիքները և կամ ձևականորեն ենթարկվել տիրապետողների կրոնին։ Ձեռնադրվածների բազմությունը, բոլոր դեպքերում, պարտավոր էր միշտ և ամենուրեք ոչ միայն միասնականություն հանդես բերել, այլև կույրզկուրայն ենթարկվել ձեռնադրողների խորհրդի կարգադրություններին։

Հալածանքների դաժանացման զուգընթաց դրուզները, իրենց ավելի ու ավելի հեռու գնալով Մուհամմեդի ուսմունքից և նրա սուննի թե շիի հետևորդներից, նորահավատների առաջ միայն նեղ սողանցքներ թողնելով իրենց դավանության դռներում, աստիճանաբար կազմակերպվեցին որպես լեռնական հողամշակների գինվորական համայնքներ, որոնց միջև տիրում էր գրեթե անթերի համաձայնություն և որոնք գործում էին համարյա անսայթաք կազմակերպվածությամբ։ Պարզ է, որ այդ պայմաններում դրուզական համայնքի վրա ևս ավատատիրական հարաբերությունները կարող էին անդրադառնալ միայն ծայրաստիճան բեկբեկված և ուրեմն անհնարին էր լինելու դրուզների յուրօրինակ սոցիալ-տընտեսական փոխհարաբերությունների ի սպառ համահարթումն էլ մահմեդական աշխարհում համարյա ամենուր ընդունված ավատապետական կառույցի կաղապարի մեջ։

Լիբանանյան համայնքներն ապրում էին միմյանց կատարելապես անհաղորդ և տեղերում ավատապետականացման ուղին բռնած տոհմապետերն իրենց շրջաններին տիրում էին ըստ ամենայնի ինքնիշխան, երբ Սիրիայում հայտնված խաչակիրները առանց մեծ ջանքերի 1100—1124-ին նվաճեցին Միջերկրականի արևելյան ափերը, իրենց ենթարկեցին հարակից տարածությունները և մեկը մյուսի ետևից ստեղծեցին իրենց ֆրանքյան իշխանապետությունները՝ Երուսաղեմի թագավորությունը, Եդեսիայի և Տրիպոլիի կոմսությունները, Անտիոքի իշխանությունը։

Խաչակիր զորապետները հասկանալիորեն բարյացակամ դիմավորում գտան, ըստ Վ. դը Տիրի, շուրջ 40 հազար թվաքանակ ներկայացնող խաչապաշտ մարոնականների մոտ և պայմանագիր կնքելով նրանց ավանդական առաջնորդ մոկադդամների հետ՝ ամրապնդեցին քրիստոնյա այդ համայնքի դիրքերը հյուսիսում, մանավանդ այն բանից հետո, երբ պահպանելով հանդերձ ազգային ասորաբառ ծեսերը, մարոնականները երես թնքեցին միակամությունից և ընդունեցին կաթոլիկական դավանությունը։

Մարոնական համայնքի ինչպես ծագման, այնպես էլ Հռոմի պապական աթոռի հետ միության (ունիա) հարցում պատմագրության մեջ

միասնական կարծիք գոյություն չունի։ Սովետական արարագետները գրեթե առանց բացառության, այդ թվում հատկապես Եվ. Բելյաևը (45, 20) և սակավաթիվ օտար հեղինակներ, այդ թվում Հիթթին (109, 184), հերքում են Հռոմի հետ վաղ՝ 1182-ին Երուսաղեմի Բոլդուին IV թագավորի և լատին պատրիարքի ջանքերով մարոնական պատրիարքի ու նրա առաջատար եպիսկոպոսների միության վարկածը, ունենան թվագրելով XVI—XVIII դարերի շրջագծում։ Արտասահմանյան արարագետների մի ստվար խումբ (37, 140), նրանց հետ նաև Կրիմսկին (26, 124), աչքի առաջ ունենալով XII դարի հեղինակներ Վիլհելմ դը Տիրի և Ժագ դը Վիտրիի հավաստի հաղորդումները, իրավամբ (առնվազն նախնական) միության սկիզբը 1182 են թվագրում, թեպետ մամլուքյան տիրապետության ժամանակաշրջանում թուլացած կապերի վերանորոգման և ամրապնդման հարցում տարանջատվում են։ Բոլոր դեպքերում փաստ է, որ խաչակիրների օրոք մարոնականներն սկսեցին համարձակորեն դուրս գալ իրենց դժվարամատչելի բնակավայրերից, որպես աստիճանավորներ և սուևտրականներ ու տնայնագործներ ազատ ասպարեզ գտան ծովափնյա քաղաքներում, առաջին հերթին Տրիպոլիի կոմսության լանկդոկցի և պրովանսցի ֆրանքների շրջանում, հնարավորություն ստանալով հատկապես իրենց որթատունկի և ձիթենու այգիների արտադրանքը, մետաքսաբուծությունն ու օճառը հյուսիսային բանուկ նավահանգստով արտահանելու դեպի անդրծովյան շուկաներ։

Խաչակիրներն առավել լուրջ վերիվայրումն առաջ բերեցին լիբանանյան ազգաբնակչության շիի հատվածի շրջանում։ Եվրոպական զինարշավի առաջին հարվածը բաժին ընկավ Տրիպոլիի շրջանի թվաշատ շիիներին, որոնք կառավարվում էին իրենց դավանակից Բանու Ամմար տոհմից։ Տրիպոլիից հետո ծովափնյա մնացած բոլոր քաղաքներից, այդ թվում Բեյրութից ու Սայդայից ևս շիիները հալածական դարձան։ Մյուս կողմից տվյալ ժամանակաշրջանում պատմական փաստ է դրուզների տեղաշարժը դեպի հյուսիս։ Իրոք, օգտվելով մերձբեյրության Ղարբի ճկուն դիվանագետ Բանու Բոհտորների և ֆրանքների ընդհանուր առմամբ սիրալիր հարաբերություններից ու հարավում Լիթանի գետն անցնելով Շեքիֆի շրջանում արմատակալած մթուալլիների պատվարին բախվելով, դրուզ վերաբնակների ստվար խմբեր հետդարձ կատարելով շարժվեցին դեպի հյուսիս՝ Մեթն (հարավային Քեսրուան), որտեղ կարողացան, շրջանի մեկուսի բնակավայրերի շիիներին իրենց միաձուլելով, էլ ավելի ստվարանալ և տարածականորեն մերձենալ մարոնականներին։

Խաչակիրների ջախջախմամբ և վտարմամբ էլ ավելի զգալի վայրիվերումներ արձանագրվեցին լիբանանյան հողատարածքի վրա։

Ֆրանքների հաջողության պայմաններում Տրիպոլիից մինչև Բեյրութ ու Սայդա ծովափով մեկ շիիներին փոխարինած մարոնականները մի օրից մյուսը աննկատելի դառնալու աստիճան նոսրացան։ Եվ իրոք, 1291-ին Աքայի անկումն ու խաչակիրների հապշտապ փախուստը աղդանշան հանդիսացան, որ Միջերկրականի ափի բերդաքաղաքներից մարոնականները, պաշարման օղակով կտրված լինելով լեռնային իրենց բնօրրանից, որտեղ իրենց դավանակիցները կատաղի դիմադրություն էին ցույց տալիս մամլուքներին, խոշոր խմբերով ապաստան որոնեն Լուսինյանների Կիպրոսում և ստեղծեն իրենց առաջին գաղթօջախները։ Ծովափի խոշոր բնակավայրերում ստեղծված ազատ տարածությունը փութացին լցնել սիրիացի, եգիպտացի ու նույնիսկ մաղրիբցի սուննի մեծաթիվ նորաբնակներ, հատկապես առևտրականներ ու արհեստավորներ, որոնց մամլուքյան կայազորների ներկայությունը ոչ միայն անվտանգություն, այլև աշխույժ գործարքներ էր երաշխավորում։

Հիմնականում Կիպրոս կղզում հանգրվանած խաչակիր ֆեոդալաղնվականների նավարշավների դեմ մամլուքները, սկզբում դիմելով այրված հողի տակտիկային և քանդելով Սայդայի բերդը, Բեյրութի «խիստ ամուր միջնաբերդը» և Սուրի նավահանգիստը (209, 46—48), այնուհետև ձեռք առան պաշտպանական լուրջ միջոցներ։ Դրանց թվում էր Տրիպոլիից մինչև Նահր ալ-Քելբ ծովափի անվտանգությունը երաշխավորելու և քրիստոնեաբնակ շրջանները վերահսկելու նպատակով Տրիպոլիի շրջանում (մինչև Աքքար ու Զանիյյա), ծովափի տարբեր կետերում և Քեսրուանում քրդական ու թուրքմենական մի շարք մարտունակ տոհմերի՝ էյուբյանների օրոք սկսված բնակեցման աշխուժացումը, տոհմեր, որոնք հետզհետե ձուլվեցին սուննի արաբների մեջ (37, 34)։ Ինչ վերաբերում է Բեյրութ-Սայդա ծովափին, ապա նրա պաշտպանությունը վստահվեց դրուզներին, առաջին հերթին Բանու Բոհտորներին, ինչ որ դեպի Սահել դրուզական ներհոսքին խթան հանդիսացավ։

Մամլուք զորահրամանատարները 1305-ին կատաղի գրոհներով հյուսիսում նվաճեցին Սայր ալ-Զանիյյան և Ջեբել Աքքարը, տեղի նուսեյրիների և այլ շիիների մի մասին թրատեցին, մյուս մասին բռնությամբ վերադարձրեցին սուննայի գիրկը և իրենց դավանակից նորաբնակներով սուննիների գերակշռությունն ապահովեցին հյուսիսային շրջաններում։ Պատահական չէ, բնավ, որ «ժամանակակից Լիբանան» տեղեկատուի տվյալներով (45, 25—26) սուննիները, շիիներից մի փոքր

թվաշատ, մեր օրերում 40 տոկոսով կենտրոնացած են ներկայիս հյուսիսային Լիբանանում (25 տոկոսը Բեյրութում և մերձակայքում, 10—12 տոկոսը՝ Լեռնալիբանանում և Բիկաայում, մնացյալը՝ հարավային Լիբանանում)։ Սալիբին Ուադի աթ-Թայմում, Բիկաայի կենտրոնական մասում և Շուֆի խառուբյան շրջանում հանդիպող սունիի գյուղերը համարում է հալածանքների պայմաններում թաքիայի օրենքով սունիի դարձած, ապա և իրենց սկզբնական դավանությունը մոռացած երբեմնի շիիների բնակավայրերը (37, 33—34)։ Մյուս շրջաններում՝ Քեսրուանում, Մեթնում և այլուր, շիիները կարողացան ամբողջ երեք տասնամյակ զեն ի ձեռին պաշտպանել իրենց կյանքն ու դավանանքը, սակայն հակառակորդի 50 հազարանոց գերակշիռ ուժերի առաջ ի վերջո տեղի տվեցին։ Նեղոսի ափերից հորդած թուրքալեղու ստրուկների և նրանց սիրիական սունիի դաշնակիցների կողմից «հերձվածող դավանանների» նկատմամբ գործադրված դաժանության մասին կարող է բավարար պատկերացում տալ այն, որ XIX դարի սկզբներին լիբանանյան լեռներից շիա դավանությունն ընդհանուր առմամբ արմատախիլ էր արված, իսկ մաղդաշատ ու բարեմշակ Քեսրուանը փաստորեն հիմնահատակ ավերված և ամայացած էր (209, 49—51)։ Սալիբին հավաստում է (37, 32), որ մամլուքների կոտորածներից հետո շիիական հաղիվ մի տասնյակ գյուղեր կարողացել են գոյատևել և մինչև մեր օրերը հասնել դրուզաշատ Ղարբում, մերձբեյրության Սահելում և Ջեզզինի շրջանում։ Ինչ վերաբերում է Ջուբելյի շրջանում նեղոկայումս հանդիպող շիիական կրոնական կերպարներին, ապա դրանք գոյատևած բեկորներն են XIV դարից հետո Բաալբեկից տեղափոխված նորաբնակների։ Ավելացնենք, որ «ժամանակակից Լիբանանի» տվյալներով (45, 26) մեր օրերում լիբանանյան շիիների միայն 10 տոկոսն է ապրում ներկայումս Լեռնալիբանանում (60 տոկոսը՝ հարավային Լիբանանում, 25 տոկոսը՝ Բիկաայում, 15 տոկոսը՝ Բեյրութում և հյուսիսային Լիբանանում)։

Այս բախտորոշ իրադարձությունների ժամանակ մարոնականները դժվարին երկընտրանքի առաջ էին կանգնած։ Բաալբեկի հարթավայրից բարձրացող մթուալլիներով, Աքքարից իջնող նուսեյրիներով և Քեսրուանում առաջ խաղալով Նահր ալ-Քելբը անցնել փորձող դրուզներով շրջապատված, մարոնականները, որոնք մալքի ու փոքրաթիվ հակոբիկյան հավատակիցների հետ մի կողմից ջանում էին խափանել հարեան այլահավատների ներթափանցումը ու մյուս կողմից իրենց կիսանկախությունը երաշխավորել մամլուքների ոտնձգությունների դեմ, համայնքի աստիճանաչափով կարծես թե նախընտրեցին չեզոքություն պահպանել,

թեպետ Քեսրուանի մարոնականները, իրենք ևս թիրախ մամլուքյան բռնամիջոցների, գյուղացիական պարտիզանական խոշոր խմբերով զինված օգնություն հասցրեցին իրենց շիի դրացիներին (173, 299)։ Ի դեպ, համմենը ճիշտ է կռահել գրելով, որ նուսեյրիներին դրեթե ի սպառ վերացնելով և մթուալլիների, մասամբ նաև դրուզների բազմացումն ու տարածումը խափանելով, մամլուքյան վարչակարգը անգիտակցաբար ապահովում էր քրիստոնյա տարրի հետագա գերակշռությունը Լիբանան լեռան վրա (128, հտ. 2, 17)։

Եվ իրոք, մարոնական գյուղացիությունն իր այլակրոն հարևանների ջախջախումից հետո Բշարրիի և Բաթրունի շրջաններից սկսեց անցնել Նահր Իբրահիմը և քայլ առ քայլ շարժվել դեպի Ֆութուհ՝ Քեսրուանի ամայացած հյուսիսային գոտին, որն այնուհետև գիտակցվելու էր որպես Լիբանան լեռան անբաժանելի մի հատվածը։ Մամլուք ղորահրամանատարները, XIV դարի կեսից ավելի եռանդուն դարձած և XV դարում մինչև Ջունի ձգտող դեպի հարավ մարոնական այդ առաջխաղացի նկատմամբ իրենց բարյացակամությունը սակարկեցին հյուսիսի արդեն ըստ Լուիյան որպես ավատատերեր հանդես եկող ընչաքաղց մոկադդամների հետ, որոնք, ի հակադրություն դրուզ առաջնորդների, տեղերում խիստ մեկուսացած էին իրարից ու միայն դավանակցության կապով և Բշարրիի մոկադդամի որոշ գերագահության ճանաչումով առնչվում էին իրար հետ։ Տրիպոլիի սիրիական մամլաքայի նահիրը (այն է՝ փոխարքան) պետք է ճանաչվեր որպես իշխանապետ և ուրեմն նրա գանձատանը հոգահարկ և գլխահարկ հասցվեր, ինչպես Քեսրուանի նոր յուրացվող հատվածից, այնպես էլ Բշարրիի, Բաթրունի, Ջուբեյլի և Մունեյթրայի (գուցե նաև Ֆութուհի) շրջաններից։ Իբր փոխվարձատրություն, նահիրը տեղերում մոկադդամներին ոչ միայն լիազորում էր որպես կենտրոնական իշխանության ներկայացուցիչների և հարկային կապալառուների, այլև ճանաչում էր նրանց ժառանգական սեփականատիրական իրավունքները լայնատարած հողերի վրա։

Ի դեպ, ուղեղրող Ռոխրիխտի վկայությամբ Կահիրեի սուլթանի «քմահաճույքով ամեն տարի, ամեն ամիս» Դամասկոսում փոխվող մամլուքյան գերագահ նահիրներից միայն ամիր Թինգիզն է (1312—40), որ հոգ է տարել Բեյրութի և լիբանանյան ամբողջ ծովափի բարեկարգման և գյուղատնտեսության զարգացման համար։ Մնացած բոլորն անիրատիր, բնականաբար նաև նրանց ստորադրվող մյուս, հատկապես Տրիպոլիի նահիրները, իրենց տիրույթներին նայում էին որպես կթան կովերի։ Հասկանալի է, որ այդ տարրերի հետ գործարքի մեջ մտնելը մարոնական

գյուղական համայնքների երբեմնի համեստ, սրտացավ ու խիղախ առաջնորդների՝ Աբբասյանների օրոք սկսած և խաչակիրների քաջալերությամբ շնչտված այլասերման ավարտակետն էր դառնալու։ Պարզ է, նաև, որ այդ գործարքի ներգործությամբ զգալի վերիվայրումներ էին արձանագրվելու մարոնական համայնքի կյանքում։

Առավել ուշագրավ վերիվայրումը գյուղական համայնքների և նրանց աշխարհիկ առաջնորդների միջև այնուհետև անփարատելի խզումն էր լինելու։ Գյուղացիական շարքաշ ու աղատապաշտ զանգվածը, մի օրից մյուսն ընկնելով մամլուքների յաթաղանին հենված դավանակից ավատատերերի դաժան լծի ներքո և խճճվելով կրկնակի հարկերի ու տուրքերի սարդոստայնում, մահացու ատելություն էր տածելու իր մոկադամների և նրանց կամակից ու շահակից, նաև նրանց արարքները աստծու անունից սրբագործող եկեղեցու ոչ-մեծաթիվ իշխանների նկատմամբ։ Եվ ի տարբերություն դրուզական համայնքի, որի ներսում չքավոր լեռնական ուքքալներն ընդհանուր առմամբ դարձել էին ավատատերերի հլու օժանդակները, մարոնական համայնքի ներսում աղքատ գյուղացիության ծոցից դուրս եկած թվաշատ քահանայական դասը, հասարակ ծագմամբ այլ իրենց հատուկ արժանիքների շնորհիվ հոգևոր բարձր աստիճան նվաճած վարդապետների և եպիսկոպոսների (բացառիկ դեպքերում նաև Քաննուբինի գահը ձեռք բերող պատրիարքների) հետ ուսընդուս, դիրքորոշվելու և անհաշտ պայքար էր մղելու օտար լծի օժանդակ և հարազատ ժողովրդի կեղեքիչ ավատատեր ազնվականության դեմ։

/Ավելացնենք, այստեղ, որ մամլուքյան տիրապետության մայրամուտին արարերեն լեզուն, որ լիբանանյան հողատարածքի զգալի մասում տիրապետող լեզու էր դարձել վաղուց, մարոնաբնակ շրջաններում ևս, եկեղեցու պատերից դուրս անշուշտ, հիմնականում հաղթահարել էր ասորերենի դիմադրությունը, ու թեպետ ասորախոս կղզյակներ հյուսիսում այստեղ ու այնտեղ համառում էին անձնատուր չլինել, ժողովուրդը մեծամասնությամբ արդեն իսկ խոսում էր (ճիշտ է բարբառախառը), իսկ գրագետները (թեկուզ դեռ կառչելով արամեական այբուբենից ու խախտելով Ղուրանի լեզվաոճական նրբագեղությունը) իրենց մտքերը շարադրում էին արարերեն (128, հտ. 2, 39)։

Մամլուքյան զորաբանակի դեմ 1516-ի օգոստոսի 24-ին Հալեպի մերձակայքում՝ Մարջ Դաբիկում Թուրքերի հաղթանակով Սիրիան թեպետ անցել էր օսմանյան տիրապետության ներքո, սակայն սուլթան Սելիմ Յավուզը փաստորեն հարկադրվել էր լիբանանյան ֆեոդալ-ազնվականների անմիջական կառավարման ներքո թողնել իրենց լեռնային կիսան-

կախ տիրույթները՝ էմարեթները, իսկ Շուֆի ամիր Ֆախրուդ-Դին I Մաանին շնորհել էր «առաջնություն սիրիական բոլոր իշխանների մեջ», այլ խոսքով նրան անվանապես տեղական իր վասալների վրա իշխանապետ էր կարգել (109, 665)։ Ամենայն հավանականությամբ հենց այդ ժամանակ է, որ Ֆախրուդ-Դինը պաշտոնականացրել է Դրուզների իշխանի իր տիտղոսը, որ նրա՝ ոչ թե հավասարների շրջանում դնրագահի, այլ դրուզների համախմբված-ձևավորված երկրի տարբեր մասերահատվածների նկատմամբ նվիրապետական բացարձակ գերակայության գլխավոր հայտարարն էր։

Լիբանանյան պատմությունն այնուհետև փաստորեն վերածվեց երկրի համախմբման և օսմանյան ոտնձգությունների ու բռնությունների դեմ պայքարի պատմության։ Բավական է ասել, որ և՛ Ֆախրուդ-Դին I-ը 1555-ին, և՛ նրա որդին՝ Կորկմազ I-ը 1555-ին, և՛ թոռը՝ Ֆախրուդ-Դին II-ը 1635-ին, և՛ վերջինիս եղբոր թոռը՝ Կորկմազ II-ը 1662-ին իրենց գործունեությունն ավարտեցին կառափնարանի առջև։ Եվ սակայն այդ գործունեությունը վերսկսվեց Մաան տոհմից, իսկ 1697-ին նրա շիջումից հետո՝ հաջորդած Շիհաբ տոհմից ամեն մի իշխանապետի հետ։ Այդ գործունեության բարձրակետը, ինչ խոսք, նվաճվեց երկրորդ Ֆախրուդ-Դինի իշխանապետության օրոք և թեկուզ որոշ տեղատվություններով, պահպանվեց մինչև մեզ զբաղեցնող ժամանակաշրջանի սկիզբը։

Օսմանյան լծի առնվազն թուլացմամբ շահագրգռված ֆեոդալ-ազնվական շրջանների և առևտրականության վրա հենվելով, Ֆախրուդ-Դին II-ը սանձահարեց վերնախավի ներքին երկպառակությունները։ Երկրի բարեկեցության և վերելքին հոգածու, նա կալվածատերերին հարկադրեց հատուկ խնամք տանել գյուղատնտեսության զարգացման գործին։ Վկայվել է, որ նա հականե ու հանվանե ճանաչում էր իր բոլոր երևելի հպատակներին, գիտեր, թե ով ինչքա՞ն հողամաս ու հարստություն ունի և չէր ներում ամենափոքր հողամասն իսկ խոպան թողնելը։ Նրա նախաձեռնությամբ է, որ դրուզական շրջաններում զարկ տրվեց հատկապես թթենու և ձիթենու, նաև բամբակի ու բրնձի մշակության, արտահանության համար մետաքսահումքի և օճառի արտադրության (127, 87)։ Այդ նպատակով հյուսիսային շրջաններից նա հարավում վերաբնակեցրեց մեծ թվով ձեռներեց մարոնականներ, որոնց ուղեկցում էին նաև մալքիների սակավամարդ խմբեր։ Այսպես է, որ դրուզ ավատատերերի տիրույթներում մեկը մյուսի ետևից հայտնվեցին քրիստոնեական բնակավայրեր, որոնք եթե մի կողմից ծաղկեցնելու էին տեղա-

կան կալվածատիրական տնտեսությունները, ապա մյուս կողմից իշխանապետի հենարանն էին դառնալու իր դավանակից անհանդիստ ամիրների ու շեյխերի հետ հաշիվ մաքրելու գործում։

Եվրոպա տեսած, եվրոպական մշակույթի ու քաղաքակրթության առաջ իր երկրի դռները լայն բացող գործիչ, Ֆախրուդ-Դինը իրեն արժանավոր գործակիցներ ու պաշտոնակատարներ ընտրելու գործում շրջանցեց կրոնադավանական պատվարները։ Մանկությունը մարոնական միջավայրում անցկացրած, նա իր քրիստոնյա հպատակներին մահմեդական Արևելքում սրբապղծության համազոր իրավունք շնորհեց ցանկացած գույնի զգեստ, նաև զենք կրելու ու ձի նստելու, մեծացրեց կապիտուլյացիաներով օսմանցիների կողմից արևմուտքցիներին ընձեռված առանձնաշնորհների առանց այդ էլ ոչ-արհամարհելի սահմանները, եվրոպացի վաճառականների հետ քաջալերեց նաև կաթոլիկ միսիոնարների ներթափանցումը և աչք փակելով նրանց մարդասիրական ձեռնարկումների նկատմամբ, հովանավորեց նրանց մշակութային ու լուսավորական գործունեությունը (160, հտ. 2, 464)։ Նա ճգմեց Լևանտի լեռներում և Միջերկրականի արևելյան ջրերում վխտացող ավազակներին ու ծովահեններին՝ անվտանգ երթևեկության համար պայմաններ ստեղծելու և ներքին ու արտաքին առևտրին աշխուժություն հաղորդելու նպատակով (55, 163)։

Ֆախրուդ-Դինի կեսդարյա իշխանապետության ժամանակաշրջանում ու նրա հաջորդների օրոք թեպետ ուժեղացավ և երկրով մեկ տարածվեց դրուզ ազնվականության քաղաքական ազդեցությունը, սակայն մյուս կողմից թվականորեն խիստ աճեց և նորանոր շրջաններում գերակշռություն ձեռք բերել սկսեց քրիստոնյա ազգաբնակչությունը։ Վոլնեյը մեկ դար անց հաստատելու էր, որ այդ ժամանակից սկսած «յուրաքանչյուր օր քրիստոնյա ընտանիքների բազմությունը, լքելով թուրքական նահանգները, գալիս է հաստատվելու Լիբանանում», որտեղ «ի տարբերություն թուրքական երկրի, յուրաքանչյուրն անվտանգության պայմաններում վայելում է իր ունեցվածքն ու կյանքը» և որտեղ միայն մարոնականները, զենք կրելու տակ 35 հազար տղամարդով, թվով շուրջ 105 հազար էին, իսկ քահանաների, վանականների ու միանձնուհիների, ինչպես նաև ծովափնյա քաղաքների դավանակիցների հետ՝ 115 հազար (192, հտ. 1, 439 և 397)։

Տեղնուտեղն ընդգծենք, որ եկվորների մեջ փոքր տոկոս չէին կազմում հատկապես թուրքական բռնությունների հետևանքով պանդխտող կիլիկեցի հայերը։ Բղոմմառի վանքի ձեռագրերից մեկի հավաստմամբ,

1680-ական թթ. Կիլիկիայից հայերի մի բազմամարդ խումբ, «քահանայք, կրոնավորք և ժողովուրդք», ըստ ոմանց 1000, իսկ այլոց 10.000 հոգի, «փախուցեալ ի Սսոյ» եկել են հաստատվելու Ջիբբետ Բշարրիում, սկզբնական շրջանում նույնիսկ հյուրընկալ օթևան դտել մարոնականների Քաննուբինի պատրիարքարանում, որտեղ արդեն ապրելիս է եղել մի հայ եպիսկոպոս՝ Հակոբ Մարաշցին (9, 260)։ Ըստ երևույթին հենց Սաաննների օրոք էլ հայերի ստվար այլ խմբեր հայտնվել են Ջիբբետ Բշարրիի մյուս բնակավայրերում, հիմնադրել ավելի քան մեկ տասնյակ վանքեր, այդ թվում Զղորթայում և մանավանդ Հասրունում, ապա և Քեսրուանի գյուղերում, մինչև իսկ Շուֆում, առաջին հերթին Դեյր ալ-Կամարում։ Հետաքրքրական մի պարագա. հայ ժողովրդի աղատաբաղձ ոգորումներին շեշտ և ուղղություն տվող ղեկավարները Լիբանան լեռը մատնանշել են որպես իրենց ճնշված հայրենակիցների ապահովագուն ապաստանարան։ XVIII դարի քերթող Պետրոս Ղափանցին, օրինակ, իր «Գրքույկ կոչեցյալ երգարանի» (Պոլիս, 1772) տաղերից մեկում կոչ անելով քնից զարթնել, ոտքի ելնել և զորագնդեր կազմելով պայքարի նախապատրաստվել, խորհուրդ է տվել իր «հոգու անսպառ գանձ և բյուր բարի» հայերին՝ պատվար դարձնել նաև Լիբանան լեռն ու այնտեղ օթևանել մինչև հասնի պայքարի իսկական ժամը. «Քեզ Կարմելոս ու Լիբանան այլև Սանիր, սահման կալյալ, բանակ արկյալ՝ օթևանիր, մինչև անցցե ձյուն ու ձմեռն այդրեն խնամիր, զքեզ ծանի՛ր, փույթ մի՛ բանիր»։

Առավել ուշագրավ երևույթ պիտի համարել մարոնական տարրի տարածումն ու ամրապնդումը նորանոր շրջաններում, հատկապես Քեսրուանի մի ծայրից մյուսը։ Բանն այն է, որ Բշարրիի, Բաթրունի և Ջուբելյի մարոնական, ինչպես նաև Քուրայի մալքիական շրջանները, Տրիպոլիի Թուրք փաշայի Թողտվությամբ, XVIII դարի կեսերին ամբողջությամբ ընկել էին Բաալբեկից տեղաշարժված մթուալլիների ֆեոդալ-աղնվական Համադե տոհմի իշխանության ներքո։ Դրա հետևանքով մարոնական հոծ խմբեր, Հոբեյշ տոհմի շեյխերի առաջնորդությամբ, ներհոսել էին Քեսրուանի լեռնագոտի և ծովափնյա քաղաքներ։ Քաջալերելով այդ ներհոսքը, շրջանի խազին ֆեոդալ-աղնվականական տոհմը ջանաց հայ նորաբնակների ևս հրապուրել դեպի իր տիրույթը, ժամանակակիցների վկայությամբ շղլանալով ո՛չ հող և ո՛չ էլ փող (161, էջ 34 և 88)։ Եվ պատահական չէ, բնավ, որ հատկապես XVIII դարի սկզբներից Ղազիրը, Ջուբ Միքայելը, Բզոմմառը և քեսրուանյան այլ բնակավայրեր դառնալու էին ինչպես մարոնականների, այնպես էլ Թուրք-քրդական

բռնություններից փախչող հայերի նախապատվությանն արժանացող ապաստարաններ։

Խաղինների նախաձեռնության շնորհիվ է, որ XVII դարավերջին, Քեսրուանի հյուսիսային շրջանները՝ Ցուքուհն ու ներքին Քեսրուանն արդեն իսկ լրիվ քրիստոնեաբնակ էին դարձել, իսկ հարավային Քեսրուանի՝ Մեթնի գրուզների միջավայրում էլ հաստատվել էին մեծ թվով մարոնականներ և մալքիներ, Քեսրուանն իր ամբողջությամբ գոնե տեղի բնակչության գիտակցել տալով որպես Լիբանան լեռան անբաժանելի շարունակությունը։

XVIII դարում տասնամյակից տասնամյակ է՛լ ավելի էին սերտանալու հիմնականում լիբանանյան լեռների վրա կազմավորված և արմատակալած մարոնական և դրուզ համայնքների փոխհարաբերությունները, աստիճանաբար իրենց ոլորտը ներքաշելով նաև քրիստոնեական թե մահմեդական մյուս համայնքներին։ Փոխհարաբերությունների այդպիսի սերտացման շնորհիվ է, որ դարի վերջին քառորդին Լիբանանի, Քեսրուանի և Շուֆի լեռնային «երկրների» համաձուլմամբ ոչ միայն իրեն որպես աշխարհագրական ու վարչաքաղաքական միասնություն պարտադրելու էր Լիբանան լեռը, այլև ավելի ու ավելի իր գոյատևումն էր հուշելու Լիբանան երկիրը։

Սույն գիրքը ժամանակագրականորեն ընդգրկել է Լիբանանի նոր պատմության առաջին և առավել ուշագրավ հատվածը՝ Լիբանան լեռան մի անկյունում կազմավորված դրուզական կիսանկախ ամիրայության համարյա համալիբանանյան դառնալուց մինչև Լիբանան լեռան ինքնավար մութասարիֆության ստեղծումը, այլ խոսքով XVIII դարի վերջին տասնամյակներից մինչև 1860-ական թվականները։

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

«ԱՄԲՈՂՋ ԼԵՌԱՆ ԱՄԻՐԱՅՈՒԹՅԱՆ» ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՆԵՐՔԱՇՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՐՑԻ ՈՒՂՈՒՏԸ

Օսմանյան կայսրության տնտեսական ու քաղաքական տագնապի խորացումը շարունակվում էր XVIII դարի ամբողջ ընթացքում։ Կյանքի բոլոր բնագավառներում եվրոպական երկրներից մի քանի դարով ետ մնացած Թուրքիան ոչ միայն կորցրել էր ռազմական երբեմնի հզորությունը, այլև ուժեղացել էր նրա քաղաքական և տնտեսական կախվածությունը արևմտաեվրոպական մայրաքաղաքներից, հատկապես Լոնդոնից և Փարիզից։ Դրան որոշակիորեն նպաստում էր այն, որ սուլթանը XVII դարավերջից, Պետրոս Մեծի օրերից, հանձին Ռուսաստանի տեսնում էր իր պետության գլխավոր հակառակորդին, հետևաբար և նրա դեմ ամեն գնով որոնում էր Անգլիայի ու Ֆրանսիայի զինակցությունը։ Վերջիններս 1740-ական թթ. Բ. Դռան կապիտուլյացիաներով արդեն պարտադրում էին իրենց հպատակների, հիմնականում առևտրականների օգտին տեղական արդյունաբերության, արհեստների ու առևտրի համար կործանարար բաղմարնույթ այն առանձնաշնորհները, որոնք մի ժամանակ սուլթաններից սոսկ որպես բացառիկ շնորհ էին տրվում։

Դարի երկրորդ կեսին, օսմանցիների կողմից ստրկացված ժողովուրդների՝ ազատության և անկախության ի խնդիր պայքարի պայմաններում, կայսրության բաղադրամասերի, առնվազն գերակշիռ ազդեցության համար մեծ տերությունների, առաջին հերթին Ֆրանսիայի և Անգլիայի միջև հակասությունների խորացմամբ և գզվռտոցի ծավալմամբ՝ ծնունդ առավ Արևելյան հարցը։ Այդ հարցին խսկական սրություն հաղորդվեց 1768—74-ի ռուս-թուրքական պատերազմով։ Օսմանյան կայսրության թուլացմամբ շահագրգիռ ցարական դիվանագիտությունը բնականաբար թիկունք պիտի տար ինչպես բալկանյան և անդրկովկասյան, այնպես էլ արաբական երկրներում ծավալվող ազատագրական շարժումներին, որոնք, իրենց հերթին, նոր լիցք էին ստանալու ռուսական

ղենքի հաջողություններից։ Ինչ վերաբերում է բուն իսկ արաբական աշխարհին, ապա թերակղզում առանց այդ էլ եռացող Վահհաբական շարժումից հետո մի օրից մյուսը բացահայտ ու վճռական էին դառնալու Եգիպտոսում շեյխ ալ-բելեդ (ամիր կամ աղիղ ալ-Մըսր) Ալի բեյի, իսկ Լևանտում շեյխ Զահիր ալ-Օմարի հակատուրքական ձեռնարկումները։

Պատմաաշխարհագրական Սիրիայի, այդ թվում հատկապես Լիբանանի նոր պատմության հարցերին անդրադարձած բուրժուական հեղինակները, համարյա առանց բացառության, ռուս-թուրքական պատերազմի պայմաններում աշխարհամասում ռուսական զինված ուժերի հայտնվելը մեկնաբանել են դժվար քողարկված շարությամբ, իսկ ցարական հրամանատարության ռազմական օգնությանն ապավինած տեղաբնիկ գործիչներին ընդհանուր առմամբ բնութագրել՝ որպես «արկածախնդիրների»։ Լամմենզն, օրինակ, այլ հանգամանքներում որպես դրական կերպար ներկայացված Զահիրին «բախտախնդիր», իսկ արևվնլյան Միջերկրականում ռուսական նավատորմի գործողությունները «ծովահենային» հայտարարելով, օսմանցիների տիրապետությունից Բեյրութի ժամանակավոր ազատագրման գործին ռուսների մասնակցությունը, Վոլնեյին վկայակոչելով, գիտել է որպես 600 քսակ փողի համար լևանտական ծովափ շտապած վարձկանների գործողություն (128, հտ. 2, 102 և 112)։ Սալիբին, իր հերթին, օսմանյան տիրապետության դեմ Եգիպտոսում և Սիրիայում ղենք բարձրացրած բեյին ու շեյխին ոչ միայն ամենայն հանդգնությամբ նույնպես «արկածախնդիր» է հայտարարել, այլև, անտեսելով Լևանտի ժողովուրդների հակաթուրքական պայքարի էապես տեղական դրդապատճառները, այն գիտել է որպես ռուս-թուրքական «պատերազմական գործողությունների ճակատից թուրքերի ուշադրությունը շեղելու» նպատակով Ռուսաստանի կողմից «Սիրիայում հրահրված հուզումներ» (37, 63)։

Ճիշտ է, ռուս-թուրքական պատերազմների շուրջ մեկ դար առաջ ծայր առած շարքը հետևանք էր ինչպես օսմանյան կայսրության և նրա գրիմյան վասալների նախահարձակումներին հակահարված տալու Ռուսաստանի մտադրության, այնպես էլ ռուսական տիրապետող դասակարգերի՝ Սև ծովում և հարակից շրջաններում մենատիրություն հաստատելով տնտեսական շահեր նվիրագործելու ձգտման։ Սակայն նույնքան ճիշտ է, որ 1768—74-ի պատերազմի ընթացքում Դարդանելի նեղուցը շրջափակելու նպատակով Բալթիկ ծովից Միջերկրական ուղարկված ռուսական նավատորմի առաջ նաև խնդիր էր դրված աջակցել ոչ միայն բալկանյան ժողովուրդների, առաջին հերթին հույների ազատագրական

պոռթկալու պատրաստ շարժման, այլև հնարավորության սահմաններում կտրել Մերձավոր Արևելքի և հյուսիսային Աֆրիկայի իրենց տիրույթների հետ թուրքերի կապն ու հաղորդակցությունը։ Հասկանալի է, որ այդ պայմաններում ռուսական ծովակալությունը չէր կարող աչքաթող անել Սիրիայում և Եգիպտոսում տեղական նախաձրյալների հողի վրա սկզբնավորված հակաօսմանյան շարժումները։

Օսմանցիների տիրապետության պայմաններում իր ուժը չկորցրած և ընդհակառակը 1711-ից կիսանկախություն նվաճած եգիպտական մամլուքյան կազմակերպությունը 1763-ից ղեկավարող ծագումով աբխազ Ալի բեյ ալ-Քեբիրը, որ երկար ժամանակ համակրում էր Ռուսաստանին և մի կերպ քողարկում օսմանյան տիրապետությունը թոթափելու իր մտադրությունը (28, 29), ռուս-թուրքական պատերազմի սկսելուն պես իրեն ենթարկելով Հիջազը՝ Մեքքա սրբազան քաղաքով հանդերձ, Կահիրեից վտարեց միջնաբերդում իր ենիչերիներով նստած թուրք Համզի փաշային և փաստորեն ոտնատակ տվեց սուլթանի գերիշխանության խորհրդանիշն իսկ։ Այնուհետև, ընդգծելով իր ինքնիշխանությունը, Մեքքայի շերիֆի օգնությամբ իրեն հռչակեց «Եգիպտոսի սուլթան և երկու ծովերի խաքան», հատեց սեփական փող և ուրբաթօրյա խութբայի ժամանակ սկսեց մզկիթներում իր անվան բարեմաղթություն կատարել տալ։

Բեյին ոչ թե հարմար առիթ, այլ պարզապես հենարան էր անհրաժեշտ՝ Սիրիան իրեն ենթարկելու, եգիպտական իր տիրույթը տարածականորեն սուլթանի հասողությունից անջրպետելու և իր իշխանության մարդկային թե տնտեսական հիմքերը ամրապնդելու համար։ Այդպիսի հենարան էր լինելու, ահա, պաղեստինյան բադաուիների շեյխ Զահիրը, որի Զայադինա (Բանու Զեյդան) անվանյալ տոհմը XVIII դարասկզբից Շիհաբ ամիրների թողտվությամբ տիրում էր սկզբնաղբյուրներում Մութաավվալա կոչված «երկրին»՝ Սայդայից հարավ-արևելք տարածվող և Բիլետ Բշարրին (Գալիլիան) էլ ընդգրկող մթուալլիաբնակ Ջերել Ամիլին։

Զահիրը, որ ուղեգրող Պոկոկի վկայությամբ դեռ Սաֆատի իր ամրոցում իշխանատենչ հարազատների թե Դամասկոսի փաշաների պաշարման օղակները փշրելու քիչ փորձ ձեռք չէր բերել, Աքա (Սեն Ժան դ'Աքր) բերդաքաղաքի վերակառուցմամբ ապահովվելով ռազմաստրատեգիական անառիկ հենակետով և պատերազմական գործողությունների դեպքում իր շուրջ մինչև 60—70 հազարանոց զորաբանակ համախմբելու համար պայմաններ ստեղծելով, ձեռնարկեց իր երկրամասի տնտեսական զարգացումը խթանելու և նյութական հզոր հենակետով ևս ապահովելու գործին։ Նրա առաջին հոգսը եղավ շրջանում կարգուկանոնն

ու անվտանգությունը երաշխավորելով զարկ տալ գյուղատնտեսության և դրանով իսկ նպաստել գյուղացիության կենսապայմանների բարելավման, աշխուժացնել արհեստներն ու առևտուրը, այդ թվում, Աքայի նավահանգստի բարեկարգմամբ, հատկապես արտաքին առևտուրը։ Հավատի հարցում նրա ազատամտությունը ժամանակակիցների վկայությամբ հասնում էր մինչև քրիստոնյաների նկատմամբ բացահայտ «կողմնապահության» (221, 91) և դեպի իր տիրույթն էր ձգում ինչպես Լիբանան լեռան, այնպես էլ հյուսիսային Սիրիայի ու նույնիսկ Կիպրոսի քրիստոնյա հողամշակների ու արհեստավորների խոշոր խմբերի։ Վերջիններիս ջանքերով էլ երկրամասում աննախընթաց վերելք էր ապրելու արտահանության վերապահված բամբակի և մետաքսահումքի եկամտաբեր մշակությունը։ Ռուս ռազմական գործիչ և հատուկ առաքելությամբ Լևանտում ծառայող Պլեշչևի հավաստմամբ, շեյխը տարեկան 1250 հազար ռուբլու եկամուտ ուներ (35, 164)։

Ինչպես Լևանտում անցյալի փորձը, հատկապես լիբանանյան իշխանապետ Ֆախրուդ-Դին II-ի պարագան, այնպես էլ Զահիրի տնտեսական թե ռազմական ձեռնարկումների աստիճանաչափերը, նաև Մալթայից խաչադրոշ առագաստանավերի հաճախակի ու կասկածելի խարսխավորումն Աքայում՝ օսմանյան Բարձրագույն Դռան հուշում էին շեյխի հեռահար նպատակների իսկությունը։ Եվ ահա ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին սուլթանական հրովարտակով երեք նոր փաշաներ կարգվեցին հարավային սիրիական էյալեթների գլխին։ Այդ նշանակումները, կայսրության առօրյայում պաշտոնադման երևույթի սովորականության պայմաններում, կարող էին աննշմար անցնել, առ առավելն համարվել սիրիական արաբ ալ-Ազմ տոհմի՝ Դամասկոսի և Սայդայի փաշայությունները վարելու՝ տասնամյակներ գոյատևած և տեղաբնիկ տարրերին խիստ նպաստավորած մենաշնորհը վերացնելով Սիրիայում բարձրագույն իշխանությունը վերստին լրիվ թուրքացնելու որոշման արդյունքը, եթե չլիներ մի ուշագրավ հանգամանք. նոր փաշաները հարազատներ էին, Օսման-Սադիկը՝ Դամասկոսում, իսկ որդիները՝ Սայդայում և Տրիպոլիում։ Զահիրի համար բացահայտ էր, որ իր տիրույթը վերցվում էր հեղձուցիչ աքցանի մեջ և իրեն վերջնականապես զրկում էին անցյալում համանման իրադրություններում տեղական ֆեոդալ-աղնվականության օգտագործած հաղթաթղթից՝ փաշաների միջև հակասություններ սրելով նրանց միմյանց դեմ դիրքորոշելու, առնվազն նրանցից ուժեղագույնին գնելով մյուսներին անգործության դատապարտելու հնարից։ Դրա համար էլ շեյխը ժամանակ չտալով, որ Օս-

ման-Սադիկն ու որդիները համակարգեն իրենց գործողությունները, նախահարձակման անցավ։ Հապշտապ հաշտվելով որդիների հետ, որոնք իր կենդանությանն էին հավակնում իր իշխանության և իրար հետ հակամարտելուց բացի սուր էին ճոճում նաև իր դեմ, շեյխը ավագ որդուն՝ Ալիին հեծելագնդով ուղարկեց Նաբլուսի մոտ բանակած փաշայի դեմ, որ ջախջախվելով փախավ Դամասկոս։

Սուլթանի գերիշխանության ձեռնոց նետելուց անմիջապես հետո Զահիրը դիմեց Ալի բեյին ու նրան առաջարկեց գալ և իր օժանդակությամբ նվաճել Սիրիան։ Ի պատասխան այդ հրավերի, մամլուք զորահրամանատարներից Իսմայիլի 10 հազարանոց զորքը, համարյա առանց մարտի տիրելով Կազային և Ռամալլային, Սամարիայի ծովափով 1770-ին ժամանեց Աքա։ Աջլունի շրջան հարկահավաքի դուրս եկած փաշան, որին հանձնարարված էր Ռուսաստանի հետ պատերազմի պայմաններում ամեն գնով խուսափել Լևանտում իրադրության բարդացումից, Դամասկոս շտապելով անցավ Մեքքա ուխտագնացության մեկնող քարավանի գլուխ և իբր շրջապատի անցուդարձերի նկատմամբ անտարբեր, շարժվեց դեպի հարավ։ Հորդանան գետից այն կողմ նրա ճանապարհը հատեցին Զահիրի և Իսմայիլի զորքերը։ Մոլեռանդ մահմեդական մամլուքները, սակայն, մերժեցին հարձակվել հաջիի թափորին ուղեկցող փաշայի ենիչերիների վրա, իսկ Իսմայիլը հրաժարվեց անպաշտպան թողնված Դամասկոսը գրավելու առաջարկությունն ընդունել (11, 49)։

Գլխի ընկնելով, որ մամլուք հրամանատարի ընթացքը թելադրվում է ոչ այնքան կրոնական և ասպետական նկատառումներից, որքան՝ մամլուքների շրջանում արմատացած արաբատյացությունից, առնը-վազն՝ իր և իր սննի թե շիի հետևորդներին բաժին հանվող արհամարհանքից, Զահիրը գանգատագիր ուղարկեց Կահիրե։ 1771-ի սկզբներին Ալի բեյը 40 հազարանոց բանակով Սիրիա հասցրեց իր փեսային՝ Մուհամմեդ Աբու Զահաբին։ Մամլուքյան զորաբանակն ու Զահիրի գունդերը համագործակցաբար Դամասկոսի մերձակայքում ջախջախեցին Օսման-Սադիկի և նրա որդիների զորքերը և գրավեցին Դամասկոսը։

Հաղթանակի հենց վաղորդայնին, սակայն, եգիպտական զորահրամանատարների շրջանում գլուխ բարձրացրեց սուլթանասիրությունը։ Մամլուք ավագանին սկսեց բացահայտ դատողություն կատարել այն մասին, որ «խալիֆի դեմ պատերազմելն Իսլամի համար հերետիկոսություն է և սուլթանի ցասումը վաղ թե ուշ կհարվածի ապստամբներին» և որ «ճիշտ է, սուլթանն այժմ զբաղված է ռուսների դեմ պատերազմելով, սակայն, հենց որ պատերազմն ավարտվի, Ալի բեյի պատիժն ան-

խուսափելի է, մանավանդ, որ նա մեղադրվում է Ռուսաստանի հետ դաշնակցելու հանցանքով» (11, 49)։ Այս դատողությունները պատճառ դարձան, որ մի դիշերում եգիպտական զորաբանակը նույն 1771 թ. արշավասույր հեռանա Սիրիայից, օսմանյան գերակշիռ ուժերի դեմ մենակ թողնելով Զահիրին։

Հասկանալի է, որ բուն իսկ Լևանտում, իր անմիջական հարևան Շիհաբների ամիրայությունը Զահիրի հաշվարկներում կենսականորեն անհրաժեշտ առաջին դաշնակիցն էր։ Նեյխը չէր կասկածում լիբանանյան լեռնականների խանդավառ համագործակցության։ Ինչպես նկատել են ժամանակակիցները, «լիբանանյան համայնքները, որոնք իրենց ներքին գործերին փաշաների միջամտության հնարավոր բոլոր չարիքներին էին ենթարկվում, համակրում էին խիզախ շեյխին և պատրաստ էին նրա հետ համատեղ գործողությունների դիմելու։ Դա բավական կլիներ, որպեսզի ամբողջ Սիրիան հենց այդ ժամանակ թոթափեր թուրքական լուծը» (11, 48)։

Եվ սակայն իր քաղաքական ազդեցության մայրամուտն ապրող դրուզ ազնվականությունը, Ջումբլաթի և Յազբեկի խմբավորումների արյունալի հակամարտությամբ երկփեղկված, հակաօսմանյան շարժման հարցում միասնական դիրքորոշում որդեգրելու ի վիճակի չէր։ Ավելին, 1770-ին իշխանապետ դարձած ամիր Յուսուֆ Շիհաբը հակադահիրյան կողմնորոշում ուներ։ Այս կապակցությամբ ավելի քան անհրաժեշտ է մի փոքր համենալ լիբանանյան լեռնաշղթայի հարավային հատվածում կազմավորված ամիրայության ներքին իրադրության վրա։

* * *

Ինչպես Օսմանյան խայտաբղետ ամբողջ կայսրության, այնպես էլ Սիրիայի շրջանակներում Դրուզների երկրի յուրօրինակ գոյավիճակի խորհրդանիշը ավատապետական վարչակառույցի բարձրակետում կանգնած մեծ ամիրը կամ իշխանապետն էր։

Ե՛վ Մաաների, և՛ Շիհաբների օրոք մեծ ամիրն ընտրվում էր Դրուզների երկրի մանրահատվածների դրուզական ազնվականության ժողովում, որ սովորաբար գումարվում էր Դեյր ալ-Կամարի և Մուխթարայի միջև գտնվող Սոմկանիյա բնակավայրում։ Ազնվականները՝ ամիրներն ու շեյխերը, որոշակի տոհմերի չափահաս բոլոր տղամարդիկ, երկար բանակցություններից հետո սովորաբար միաձայնությամբ էին նշանակում աթոռակալին և ապա, եթե նա ներկաների թվում չէր, բանադնաց ուղարկում ընտրյալին հրավիրելու ու նրան հանձնելու իշխանապետական մատանին, սպասելով, որ Սայդայի փաշայի միջոցով սուլթանը

նրան առաքի հատուկ լիազորագիր և օսմանյան գահի հպատակների մի մասին կառավարելու արտաքին նշանը՝ քաֆրան-խալաթը (192, հտ. 1, 424)։

Ամիրի հիմնական պարտականություններն էին՝ գերագույն կառավարողը լինել հողի մասնավոր սեփականության, երաշխավորել հանրային կարգն ու կանոնը, խափանել ազնվականական կամ ժողովրդական խմբավորումների բախումները, արգելել երկրի մանրահատվածների ղեկավարների և ընդհանրապես խոշոր հողատեր ազնվականության մերկապարանոց կամայականությունները, ղեկավարել քրեական ծանր (մինչև անդամահատման կամ մահվան պատիժ ենթադրող) գործերը և երկրից հավաքած հողահարկի հաշվին Սայդայում (հետագայում Աքայում) նստող փաշայի միջոցով Բ. Դուռ ուղարկել ճշտորոշված հարկադումարը։ Իշխանապետության վարչաքաղաքական թե տնտեսական-հարկային առօրյայի կարևորագույն հանգամանքներում, հատկապես հողահարկի բարձրացման, պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն կնքելու դեպքում, ամիրը պարտավոր էր Սոմկանիյյայում հրավիրել համաժողովրդական հավաքներ, որոնց ձայնի իրավունքով մասնակցում էին ոչ միայն բոլոր ֆեոդալ-ազնվականներն անխտիր, այլև գյուղական հասարակ շեյխերը՝ գեղջկապետերը և «ամեն մի գյուղացի, որ իր խելքով ու քաջությամբ քիչ թե շատ վարկ ունի» (192, հտ. 1, 434)։ Այդ հավաքներում որոշումներն ընդունվում էին մեծամասնության հավանությանն արժանանալու դեպքում միայն։ Ի դեպ, եթե մեծ իշխանները հարկային դրույքները ինքնագլուխ կերպով բարձրացնեին, ապա կալվածատեր ազնվականներն ու միջակ և մանր հողատեր գյուղացիությունը տարբերյալորեն էին գումարվում համաժողովրդական հավաքի (201, 495)։

Իշխանապետը չուներ վարչակառավարման հատուկ ապարատ։ Ամիրի գործերի կառավարիչը՝ քեխիան, կենտրոնից տալիս էր անհրաժեշտ ցուցումները, որոնք տեղերում իրականացվում էին մանրահատվածների ղեկավար մուկատաաճիների կամ ամիրի մյուս վասալների կողմից։ Նա, զանց առած իր պահակագունդը, չուներ նաև մշտական բանակ։ Անհրաժեշտության դեպքում նա հավաքում էր աշխարհազոր, որ կազմավորվում էր երկրի մանրահատվածների առաջնորդներից ղեկավարվող հիմնականում դրուզ և մարոնական գյուղացիներից, որոնց թիվը կարող էր հասնել մինչև 40 հազարի (192, հտ. 1, 438)։

Նվիրապետության բարձրակետը հասկանալիորեն պատկանում էր իշխանապետ մեծ ամիրին, հետևաբար Ուադի աթ-Թայմից Դրուզների լեռ տեղափոխված նրա տոհմն էլ ամիրայության աստիճանակարգում

ամիրական առաջին տոհմն էր դարձել։ Եվ սակայն, ինչքան էլ տարօրինակ թվա, տոհմի անդամներից ոչ մեկը մանրիշխանական իրավունք ձեռք չէր բերել Դրուզների երկրի պատմականորեն ձևավորված շրջաններից և ոչ մեկի վրա։ Ավելին. սկզբնաղբյուրների տվյալները թույլ չեն տալիս հաստատելու մեծ ամիրին թե նրա տոհմակիցներին պատկանող մասնավոր սեփականատիրական բակալիկ թե մուլք հողերի քիչ թե շատ երևելի տարածքի առկայությունը, այլ խոսքով Շիհաբ ամիրները Դրուզների երկրում անպայմանական հողատիրական կատեգորիայի տիրող ֆեոդալ-աղնվականների շարքում ակնառու տեղ չունեին։ Մեծ ամիրը, միայն, Մեթնի գավառում Այն Դարան որպես պատմական ճակատամարտի վայր, Մանասիֆի գավառում Դեյր ալ-Կամարը որպես իշխանապետության կենտրոն, նաև մի շարք գյուղակներ, այդ թվում Թաբլունը, Նիհան և Այն Մադուրը, վերցրել էր որպես իշխանապետական խասսա, այլ խոսքով ինչպես հարկային, այնպես էլ վարչադատական հարցերում անմիջնորդաբար անձամբ իրեն ենթարկվող բնակավայրեր (96, 103)։

Ամիրական երկրորդ տոհմը սկզբնապես դրուզ, հետագայում քրիստոնեության հարած Աբու՝լ Լամաններինն էր, հետևաբար և սրանց տոհմապետին էր պատկանում բարձրակարգման մեջ մեծ ամիրից հետո երկրորդ տեղը։

Ծովափնյա շերտում Անթիլիասից մինչև Նահր Բեյրութ (մայրաքաղաքի երբեմնի սահմանագիծ Բեյրութ գետը) և Ջուրդի լեռնալանջերը ձգվող ու շուրջ 80 բնակավայր (Բեյթ Մերի, Բրումմանա, Ռումի, Այն Սաադե, Համմանա, Ֆալուղա. ևն) հաշվող Մեթնի (նույնանուն շրջկենտրոնով) գավառի երբեմնի մոկադդամներ, Աբու՝լ Լամանները 1711-ին Այն Դարայի ճակատամարտում իր հաղթանակին բերած վճռական նպաստի համար Հայդար Շիհաբից ամիրական տիտղոս էին ստացել և ի լրումն իրենց տիրույթի, մանրիշխանական իրավունք ձեռք բերել Քեսրուանին հարող և ծովափին Նահր ալ-Քալբից մինչև Անթիլիաս ձգվող ալ-Քաթայի (շրջկենտրոնը՝ Բեյթ Շեբեբ, երբեմն Բիկֆայա), ինչպես նաև Բիկայայից արևելք մինչև Անդրլիբանանի արևմտակողմը տարածվող ու Զահլեն որպես կենտրոն ունեցող աշ-Շուֆ ալ-Բայադիի գավառակների վրա։ Ավելացնենք, որ Մեթնն ուներ ավելի քան 20000 բնակիչ (6700 քրիստոնյա, 2150 դրուզ և 100 մահմեդական հարկատու այր), ալ-Քաթան՝ շուրջ 10000 բնակիչ (4200 քրիստոնյա հարկատու), իսկ աշ-Շուֆ ալ-Բայադին՝ ավելի քան 25000 բնակիչ (11500 քրիստոնյա և 1000 մահմեդական հարկատու)։ Արխիվային փաստաթղթերից (4, գ. 780, թ. 6) բխող այդ տվյալները մոտավորապես համընկնում են ֆրանսիական աղբյուրներում (165)

Աբու՝լ Լամանների մանրիշխանական տիրույթների բնակչության համար առաջադրվող 53430 թվաքանակին (30000 մարոնական, 10000 հույն-օրթոդոքս, 8000 հույն-կաթոլիկ, 5000 դրուզ, 300 սուննի և 130 մթուալլի)։

Ամիրական երրորդ տոհմը անցյալում գերհզոր դրուզ Արսլաններինն էր, որոնք պատմական վերիվայրումներից, հատկապես Այն Դարայում հակաշիհաբյան իրենց ելույթից կարողացել էին փրկել իրենց երբեմնի լայնատարած տիրույթի մի մասը՝ Ներքին (Հյուսիսային) Ղարբը միայն։ Շրջկենտրոն Շուեյֆաթից մինչև Դեյր ալ-Կամարի նախկին ուղին հասնող այդ գավառակն ուներ մեծ ու փոքր 70 բնակավայր (Բշամուն, Արամուն, Այնաբ ևն) և շուրջ 6000 բնակիչ (1450 քրիստոնյա, հիմնականում մարոնական ու հույն-օրթոդոքս և 1100 դրուզ, նաև մի քանի տասնյակ հույն-կաթոլիկ ու մթուալլի հարկատու)։

Լիբանանյան իշխանապետության պատմության հետ բավականին սերտորեն առնչված ամիրական մահմեդական միակ՝ Հարֆուշ տոհմը Լեռան վրա, առավել ևս դրուզական լեռնահատվածում ու նրան անմիջականորեն հարող հողատարածքում մանրիշխանական ավանդական որևէ տիրույթ չի ունեցել։ Շուրջ 19000 (7500 սուննի, ավելի քան 4000 մարոնական, 3000 հույն-օրթոդոքս, 2000 հույն-կաթոլիկ, 2000 մթուալլի և 500 դրուզ) բնակչությամբ Բիկաայի շրջանն է միայն, որ պարբերաբար, այլ խոսքով ոչ-հարատևորեն ենթարկվել է տոհմի վարչա-հարկային լիազորությանն։

Լիբանանյան իրականության մեջ պատվո իրենց տիտղոսով ամիրներից մի աստիճան ցածր էին կանգնած մոկադդամները, մարոնական թե դրուզ դավանության հարևանային մեկ կամ մի քանի համայնքի երբեմնի ռազմաքաղաքական առաջնորդները, որոնք իրենց հանգամանքին հետևելով տոհմական-ժառանգական բնույթ էին տվել։ Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, սակայն, այդ տոհմերը համեմատաբար աշխույժ էին ամիրայության հետ լոկ վասալական, ավելի շուտ խորհրդանշական կապերով առնչված մարոնական լեռնագոտում (Բանու Անհուրիները Ջիբբետ Բշարրիում, Բանու Սաուաֆները Մեթնի Շրանիայում, Բանու ալ-Շայեները Ջիբբետ Բշարրիում, նաև Ջուբեյլում և Բաթրունում են), մինչ դրուզական միջավայրում արդեն իսկ զրկվել էին իրենց գործուն դերից, ինչպես Ջեզզինի Բանու Ալի ալ-Սաղիրները։ Մոկադդամական դրուզ տոհմերից միակ հարատևողը Բանու Մուզհիր (որոշ աղբյուրներում՝ Բանու Մեղհեր) տոհմն էր, որին, ըստ երևույթին որպես դիայի տիպի, այլ լոկ հարկատնտեսական և ոչ երբեք վարչաքաղաքական տիրույթ թողնվել էր Աբու՝լ Լամանների Մեթնում կղզիացած Համմանա

գյուղը, գավառի շրջկենտրոնը։ Դա նշանակում էր, որ դրուզական միջավայրում մոկադդամական ինստիտուտը անխուսափելի մահվան էր դատապարտված։

Երրորդ (թեպետ ավելի գործնական կլինի դանց առնել մոկադդամականն ու ասել երկրորդ) սանդղահարթակը Շիհաբների օրոք մեծ շեյխերինն էր (ալ-մաշայիխ ալ-քիբար), որոնք պատմական իրադարձությունների թոհուբոհում իրենց ձեռք բերած հողատիրական (պայմանական հետ նաև անպայմանական) հզորությամբ թե խաղացած քաղաքական աշխույժ դերով ավելի ու ավելի էին ստվերելու բարձրադաս ամիրներին անգամ։ Դրուզ այն տոհմերը, որոնց բոլոր այրերի պարզ շեյխական տիտղոս կրելու պայմաններում տոհմապետերը պատվվում էին մեծ շեյխ տիտղոսով, անցյալում երկուսն էին եղել՝ Քֆար Նաբրահի Իմադները և Արեյհի Աբու Նակիտները։ Սրանց Հայդար Շիհաբը ավելացրել էր նախկինում պարզ շեյխական ևս երեք տոհմերի՝ Մուխթարայի Ջումբլաթներին, Ալեյի Թալհուքներին և Բեթարի Աբդ ալ-Մալիքներին, այսպիսով ստեղծելով դրուզ «մեծ շեյխերի հնգյակը»։ Որոշ հետազոտություններում, այդ թվում դրուզ պատմաբան Սելիմ Հասան Հիշիի մոտ (107), անկասկած թյուրիմացությամբ, մեծ շեյխական են համարվել դրուզ երկու տոհմեր ևս՝ Բաակլինի Իյդերը և Այն Դարայի Աթալլաները։ Իրականում դրուզական «մեծ շեյխական հնգյակին» համաստիճանությամբ հարում էին դրուզների իշխանապետության կազմը ներքաշված Ջեսրուան լեռան տարբեր մասերահատվածները ղեկավարող մարոնական երեք տոհմեր՝ Բալումայից Խազինները, Ղազիրից Հոբեյշները և բնիկ Ջիբբետ Բշարրիից Դահդահները, որոնց ավագների մեծ շեյխական տիտղոսը նույնպես Հայդար Շիհաբից էր շնորհվել։

Մեծ շեյխերի ներքին բարձրակարգման մեջ առաջին տեղը պատկանում էր Ջումբլաթներին։

Դեռ XVI դարում եվրոպական ուղեգրողների մոտ, լեհ իշխան Ռաձիվիլից և իտալացի աբբա Մարիտիից սկսելով, տարածում էր գտել այն սխալ կարծիքը, որ դրուզները համարյա քրիստոնյաներ, խաչակիրների լեռանտում մնացած ու տարասերած հետնորդներն են, ըստ որում դրուզ անունն էլ բխեցվում էր Դրյոքս կոմսի անունից։ Ավելի ուշ ի հայտ եկավ նույնքան սխալ մի այլ կարծիք, որը, մոռացության տալով տեղաբնիկ ջեբելիյյանների առկայությունը և շարքային դրուզների հիմնական զանգվածի ծագումը բևեռացնելով բացառապես արաբական միջավայրում, դրուզ ֆեոդալ-ազնվականական տոհմերի, առաջին հերթին Կայսի արաբներից սերող Մաան իշխանապետական տոհմի արմատներն

սկսեց որոնել քրդական շրջաններում։ Այստեղից էլ, ելնելով նաև շիայի իսմայիլական աղանդների վրա հնդ-իրանական ուսմունքների ազդեցության փաստից, քուրդ հետազոտող Ժ. Ռոժբեյանին «Տը Քուրդիստան ժուռնալ» հանդեսում (հտ. 5, № 3, 16—17) դրուզներին ամբողջությամբ «քրդական Միհրական կրոնը երկար դարեր պահպանելուց հետո շիա ուսմունքից ազդված» քրդական համայնք հռչակեց...

Քրդացման «պատմագիտական» առավել մեծ եռանդի է ենթարկվել հատկապես Ջումբլաթ տոհմը։ Դրուզ պատմաբան Հիշին, արաբական, օսմանական և քրդական սկզբնաղբյուրների խառնակ տվյալների բծախնդիր համադրությամբ Ջումբլաթների տոհմածառի արմատները համոզիչ կերպով բևեռացրեց արաբական միջավայրում, թեկուզ և հաստատելով, որ օսմանյան Թուրքերի պետականության ամրապնդման շրջանում արաբ զորական այդ տոհմը սկսել էր ավելի ու ավելի մերվել մերթ ինքնակամ, մերթ էլ թրի ուժով իրեն ենթարկվող քրդական միջավայրին (107, 18—36)։

Արաբական երկրների վրա օսմանյան տիրապետության հաստատման առաջին իսկ օրից, Քիլիսի շրջանի ֆեոդալ իշխանավոր Ջումբլաթները, որոնք արդեն իսկ միախառնվել էին Թուրք ռազմաֆեոդալական ավագանուն, բարվոք հարաբերություններ ունեին դրուզական ամիրայության հետ, որ դեպի հյուսիսային լեռնագոտի իր առաջխաղացքով բնական դաշնակից էր դեպի հարավ՝ դեպի Հալեպ ու Համա իրենց գերիշխանությունը տարածելու իրենց իսկ փորձերին։ Ինչպես Մաանների, այնպես էլ Ջումբլաթների հակաօսմանյան միտումը վիճարկելի չէ, բնավ։ Պատահական չէ, որ Ալի Ջումբլաթը XVII դարասկզբին պաշտոնապես հարելով Ֆախրուդ-Դին II-ի և Տոսկանայի մեծ դքսի հակասուլթանական դաշնակցության, ի վերջո պարտություն կրելով մահապատժի ենթարկվեց և նրա տոհմն էլ ապաստան որոնեց դրուզական ամիրայությունում։ Այստեղ, առաջին իսկ օրից պարզ շեյխական տիտղոս ստանալով ու հետզհետե դրուզանալով, Ջումբլաթները որպես ֆեոդալ շատ արագ ամրապնդվեցին Շուֆում։ Մի դար անց, Մաան տոհմի շիջումից հետո, նրանց տոհմապետը՝ Աբու Քաուք անվանյալ երկրորդ Ալին Հայդար Շիհաբի կողմից մեծ շեյխ հռչակվեց և հայտարարվեց դավառակի մանրիշխան։ Նշենք, որ Բեյթ ադ-Դինի հովտից մինչև Մրիստե լեռան կատարը ձգվող Շուֆն իր երկու գոտիներում (Շուֆ ալ-Հիթի և Շուֆ ալ-Սվայջենի) ուներ մի շարք հայտնի բնակավայրեր (Մուխթարա շրջկենտրոնը, Բաղհարան, Մաղրաթ աշ-Շուֆը, Ամաթուրը, Այն Քինան, Քահլունիան ևն) և շուրջ 12000 բնակիչ, այդ թվում 8500 (3500 հար-

կատու) դրուզ և 2000 հույն-կաթոլիկ ու 1500 մարոնական (1300 քրիստոնյա հարկատու)։

Հենց ամիր Հայդարի օրոք էլ Ջումբլաթների տոհմապետը փողի ուժով ձեռք բերեց նաև իշխանապետի աքսորի ընկեր և իր իսկ անձնհայր շեյխ Կաբլան ալ-Կադիի մանրիշխանությունը՝ Շուֆին հարակից գավառակ Ջեզզինը, ըստ որում այդ գործում ստանալով Խազին և Աբու Նակիտ տոհմերի ոչ միայն բարոյական, այլև նյութական կարևոր օժանդակությունը։ Նույնանուն շրջկենտրոնի շուրջ խմբված Ռում, Սայդուն, Արեմթա, Բքազին և այլ անշուք բնակավայրերով (11, 40) այդ գավառակն ուներ շուրջ 8000 բնակիչ (3300 քրիստոնյա, մեծամասամբ մարոնական ու մասամբ հույն-կաթոլիկ և 100 դրուզ ու փոքրաթիվ մթուալի հարկատու)։

Ջումբլաթները հետագային տարբեր ճանապարհներով իրենց մանրիշխանական իրավունքը տարածեցին նաև Խառռուբի, Թուֆֆահի և Ջեբել առ-Ռեյհանի վրա։ Շուֆից արևմուտք, Դամուր գետից մինչև ալ-Աուալի տարածվող ու Շիհիմը որպես շրջկենտրոն ունեցող Խառռուբը հաշվում էր ավելի քան 5000 բնակիչ (1500 քրիստոնյա, 800 մահմեդական և 200 դրուզ հարկատու), մինչ Սայդայի մերձակա դաշտավայրն ընդգրկող և Բրամիյյան ու Սալիհիյյան որպես կենտրոն ունեցող Թուֆֆահը՝ ավելի քան 4000 բնակիչ (1800 քրիստոնյա և 30 դրուզ հարկատու)։ Նշենք, որ ֆրանսիական որոշ աղբյուրներ (165), գուցե թե ոչ-առանց որոշակի միտումի, Ջումբլաթների տվյալ երկու գավառակների աղգաբնակչությունը միախառնելով ցույց են տվել ավելի քան կրկնապատկված՝ 22200, ըստ որում 6500 հույն-կաթոլիկների ու 6000 մարոնականների կողքին մատնանշելով 5500 սունիի ու 4200 մթուալլի։ Ինչ վերաբերում է նույնանուն լեռան լանջին փռված Ջեբել առ-Ռեյհանի գավառակին (շրջկենտրոնը Ռեյհան), ապա այն անշուք ու սակավամարդ (ընդամենը շուրջ 2000 մթուալլի և 1000 մարոնական ու հույն-կաթոլիկ գյուղացիներով) բնակավայրեր ուներ (Մլիհ, Քֆար Հունա, Թամրա, Աղուր ևն)։

Բոլոր դեպքերում Ջումբլաթները, XIX դարասկզբին վերահսկելով ավելի քան 30000 բնակչությամբ շուրջ 200 բնակավայրեր, վեր էին ածվել Դրուզների երկրի առավել մեծազդեցիկ ֆեոդալ-աղնվականական տոհմի։

Դրուզ մեծ շեյխական Աբու Նակիտ տոհմը տիրում էր երկու գավառակների (5, գ. 780, թ. 60)։ Դրանցից առաջինը Մանասիֆն էր, Դեյր ալ-Կամար շրջկենտրոնով և Բեյթ ադ-Դին, Քֆար Հայմ, Դեյր Բաբա, Դեյր Քուշա և այլ գյուղերով, որոնք միասնաբար ունեին շուրջ 12000

բնակիչ (3900 քրիստոնյա, 1150 դրուզ և 10 մահմեդական հարկատու)։ Երկրորդը աշ-Շահհարն էր, Աբեյհ շրջկենտրոնով և Քֆար Մաթա, ալ-Բիներ, Այն Քուսուր, Բիվիրթա և այլ գյուղերով, որոնց աղգաբնակչության թվաքանակը շուրջ 6000 էր (1600 քրիստոնյա և 1000 մահմեդական հարկատու)։ Որոշ աղբյուրներ (165) Աբու Նակիտների երկու գավառների բնակչության թվաքանակը ցույց են տվել ավելի նվազ՝ մոտ 15000, որից 10000-ը քրիստոնյա (8500 մարոնական, 1100 հույն-կաթոլիկ և 400 հույն-օրթոդոքս), 4600-ը դրուզ, 300-ը հրեա և 50-ը սուննի։

Դրուզ մեծ շեյխական Իմադ տոհմի մանրիշխանության ենթակա էր Մանասիֆի արևելքից մինչև Ջեբել ալ-Բարուկի գագաթը և Վադի ալ-Սիթթից մինչև Շուֆ տարածվող Արքուբի (Ուրքուբի) գավառակը, որը բաժանվում էր երկու՝ Այն Ջհալթա շրջկենտրոնով Վերին և Քֆար Նաբրահ շրջկենտրոնով Ներքին գոտիների, որոնցից առաջինն ավելի ուշ անցնելու էր բաակլինցի Իյդ պարզ շեյխական տոհմին։ Արքուբն իր շրջկենտրոններում և Բարուկ, Ֆրեյտիս, Բրիհ, Քֆար Նիս ու մյուս գյուղերում ուներ շուրջ 7000 բնակիչ (1300 քրիստոնյա և 1150 դրուզ հարկատու), որից 3300-ը մարոնական, 2500-ը դրուզ, 600-ը հույն-կաթոլիկ և 450-ը հույն-օրթոդոքս։

Հայդար Շիհաբի կողմից մասնակիորեն շնորհազրկված Արսլան ամիրների երբեմնի վասալ Թալհուք դրուզ տոհմը մեծ շեյխական տիտղոսի հետ ստացել էր նաև Վերին (Հարավային) Ղարբը, որ Ալեյ շրջկենտրոնում և Սուք ալ-Ղարբ, Քահալե, Այթիթ ու մյուս գյուղերում ուներ շուրջ 6000 բնակիչ (1560 քրիստոնյա, հիմնականում մարոնական և հույն-օրթոդոքս, 770 դրուզ և 100 մահմեդական հարկատու)։

Աբդ ալ-Մալիք դրուզ մեծ շեյխական տոհմի մանրիշխանությանն էր ենթակա Ջուրդի գավառակը, որի հյուսիսային հատվածի շրջկենտրոնը Բեթեթարն էր, իսկ հարավայինը՝ Ռաշմայան։ Այդ հատվածներն ըստ երևույթին նախկինում որոշակի ինքնուրույնություն էին ունեցել, քանի որ Ռաշմայան ոչ թե Ղաբունի, Հումալի, Բեղղանի, Իմիտի ու մյուսների տիպի սովորական բնակավայր էր, այլ՝ անցյալում մեծ շեյխության հավակնած քրիստոնյա Խուրի-Սալեհ տոհմի կենտրոնավայրը (107, 62)։ Նշենք, որ Ջուրդն ուներ ավելի քան 6000 (որոշ աղբյուրներում 8350) բնակիչ (2000 քրիստոնյա, հիմնականում մարոնական ու հույն-օրթոդոքս և 900 դրուզ հարկատու)։

Մարոնական մեծ շեյխական երեք տոհմերի մանրիշխանությունը տարածվում էր շուրջ 25000 համարյա բացառապես քրիստոնյա աղգաբնակչությամբ (12100 հարկատուներով) Քեսրուանի վրա, որ իր դժվա-

բամատչելիության պատճառով կոչվել է նաև ալ-Ասիա (Ասիատամբ)։ Ծովափնյա հատվածում Նահր Իբրահիմից մինչև Նահր ալ-Քելբ, իսկ լեռներում մինչև Քենիսայի լանջերը ձգվող այս գավառի հիմնական-կենտրոնական մասը վաղ շրջանից խաղին տոհմի տիրույթն էր։ Գավառի՝ որոշապես ինքնուրույն համարվող հյուսիսային, Ֆութուհ անվանյալ հատվածը, որ ծովափնյա շերտում Նահր Իբրահիմից մինչև Վադի Մամմելիեյն էր հասնում, Դահդահ տոհմին էր անցել դեռ XVI դարի վերջերին, ինչպես հարավային կամ Ղազիրի հատվածը՝ Հոբեյշ տոհմին։ Քեսրուանյան աղնվականության մասին մարոնական միջավայրում տարածված ասացվածքի համաձայն «խաղինները առատաձեռն, Հոբեյշները խիզախ, իսկ Դահդահները գրասեր և իմաստուն» էին (157, 58)։ Ավելացնենք, որ գավառի բնակավայրերից հայտնիներն էին Ղազիրը, Ջունին, Ջուբ Միքայիլը, Ղուստան, Թաբարջան, Դլիպտան ևն։

Դրուզական ամիրայության բնօրրան Դրուզների երկրի ու սրան կապակցված հողատարածքի 14 մանրահատվածների աղգաբնակչությունն, ուրեմն, XIX դարի սկզբներին շուրջ 130000 էր, որից քրիստոնյա հարկատուները 43000 էին, դրուզները՝ 11000, իսկ մահմեդականները՝ 4000։ Այն բանից հետո, երբ Քեսրուանը ներգրավվեց իշխանապետության կազմում, միայն քրիստոնյա աղգաբնակչության թվաքանակն է, որ ավելացավ, այն էլ միանգամից 25000-ով (քրիստոնյա հարկատուներինը՝ 12000-ով)։

Եվ սակայն ամիրայության ներքին իրադրության պատկերն ավելի ամբողջական դարձնելու համար հարկ է խոսել, նաև, ամիրներից, մոկադդամներից թե պարզ շեյխերից ղեկավարվող պատմականորեն լիբանանյան այն մանրահատվածների մասին, որոնք առավել կամ նվազ ամուր վասալական կապերով առնչված էին իշխանապետության հետ։

Այդ մանրահատվածներից առաջին հերթին հարկ է հիշատակել իշխանապետական տոհմի բնօրրան Ուադի աթ-Թայմը, որի հասարակական և ռազմական դոտիները ղեկավարող Շիհաբ ամիրները սուննային հավատարիմ էին մնացել։ Շրջանը XIX դարակեսին ուներ ավելի քան 25000 բնակիչ (շուրջ 12500-ը դրուզ, 8500-ը հույն-օրթոդոքս, 3500-ը սուննի և 1500-ը մարոնական)։ Հասկանալի, է, որ սուննի Շիհաբները աշխուժորեն առնչվելու էին թեկուզ քրիստոնեացած, այլ իրենցից մի դլխով վերև բարձրացած ու մի ամբողջ լեռնագոտի կառավարող իրենց աղգականների հետ։ Ավելին. նրանք ջանալու էին ինչպես Բաալբեկի ու Հերմելի, այնպես էլ հարավային Բիլետ Բշարրիի, Մերջ Այունի և Շեքիֆի շրջաններն իրենց իսկ ճանապարհով այս կամ այն կերպ առնչել իշ-

խանապետության հետ ամեն անգամ, երբ մեծ ամիրի հեղինակությունը հանգամանքների բերումով կորցնում էր իր ներգործությունը։ Արձանագրենք, որ XIX դարում պարբերաբար դրուզ ալ-Արիան և սունիի Բանու ալ-Մաաթարա շեյխերին ենթարկվող Բաալբեկն ու Անդրլիբանանը ունեին մոտ 20000 (7500 մթուալլի, 5500 մարոնական, 3500 հույն-կաթոլիկ, 2000 հույն-օրթոդոքս և ավելի քան 1000 սունիի) բնակիչ։ Ինչ վերաբերում է շուրջ 40000 (մոտ 25000 մթուալլի, 4000 մարոնական, 3000 սունիի, 2000 հույն-օրթոդոքս, 2000 հույն-կաթոլիկ և 2000 դրուզ) բնակչությամբ հարավային շրջաններին, ապա դրանք հիմնականում ենթարկվում էին շիի մանրիշխան շեյխական տոհմերի՝ Նասսարներին, Սաարներին, Մունքիրներին ու մյուսներին։

Ուադի աթ-Թայմի նման խորհրդանշական, այլ նույնքան և ավելի ջերմ կապերով ամիրայության հետ հետզհետե շաղկապվում էր Նահր Բեյրութից մինչև Նահր ալ-Ղատիր ձգվող Սահել Բեյրութը՝ Բեյրութի դաշտավայրն իր Հադեթ շրջկենտրոնով և ալ-Բուրջ, Վադի Շահրուր, Քֆար Շիմա և այլ բնակավայրերով, նաև՝ ծովափում Նահր ալ-Մադֆունից մինչև Նահր ալ-Ֆիդար, իսկ լեռներում մինչև Մունեյթրայի լանջերը տարածվող Բիլեստ Ջուբեյլն իր շրջկենտրոն Ջուբեյլ և Ամշիդ, Բշալա ու մյուս բնակավայրերով։ Ավելի քան 8000 (3000 քրիստոնյա, հիմնականում մարոնական, փոքրաթիվ հույն-օրթոդոքս և հույն-կաթոլիկ, 1000 դրուզ ու մահմեդական հարկատու) բնակչությամբ Սահել Բեյրութը, որ վաղուց գտնվում էր մշտապես դեպի Սայդա ու Բեյրութ նկրտող դրուզ մեծ ամիրների ազդեցության ոլորտում, XVIII դարավերջին արդեն համաձուլված էր դրուզական լեռնագոտուն և որպես մանրիշխանություն հանձնված էր իշխանապետի քրիստոնյա տոհմակիցներին։ Ինչ վերաբերում է ավելի քան 15000 (5000 քրիստոնյա, հիմնականում մարոնական ու փոքր ինչ հույն-օրթոդոքս և 1000 մահմեդական հարկատու) հաշվող Ջուբեյլի գավառակին, որ նախկինում հերթով եղել էր Բանու Ասաֆ սունիի, Համադե շիի և Դահդահ մարոնական շեյխերի մանրիշխանության ներքո, ապա այն XVIII դարից վերջնականապես վերածվելով գահից կամովին հրաժարած կամ բռնությամբ հալածված Շիհաբ իշխանապետերի ապաստանտիրույթի՝ XIX դարից ավելի ու ավելի էր գործնականացնելու իր ազերսներն ամիրայության հետ։

Ավելի խորդուբորդ ու կեռմաններով հարուստ է եղել Ջուբեյլի և Քեսրուանի մանրահատվածներից հյուսիս ընկած շրջանները ամիրայության կապակցող ուղին։ Այդ ուղուն սալաքար են եղել մերթ զինարշավները, երբեմն՝ սիրաշահված օսմանյան փաշաների ներգործությունը,

հաճախ էլ՝ հարկային կապալները։ Խնդրո առարկա մանրահատվածները թվով 8 են.

— Համադե շիի շեյխերի տիրույթ Ջիբբեթ Մունեյթրան՝ ծովափում Նահր ալ-Ֆիդարից մինչև Նահր Իբրահիմ, իսկ լեռներում մինչև Մունեյթրայի սարալանջերը հասնող գավառակն իր Ահմաջ շրջկենտրոնով և Քարթաբա, Ֆեթրի, Հալաթ և այլ բնակավայրերով ու ավելի քան 10000 (շուրջ 2500 մարոնական և 2200 մթուալլի հարկատու) բնակչությամբ։

— Մարոնական Բանու ալ-Շայեր մոկադդամական տոհմի տիրույթ Բիլեթ Բաթրունը՝ Նահր Ջաուզից մինչև Նահր ալ-Մադֆուն և ծովից մինչև Թանուրինի լեռնալանջերը փռված շրջանը նույնանուն կենտրոնով և ավելի քան 15000 (6800 քրիստոնյա, հիմնականում մարոնական ու մասամբ հույն-օրթոդոքս, շուրջ 200 էլ մահմեդական հարկատու) բնակչությամբ։

— Մայրիների լեռնագոտուց մինչև Կատիշայի հոսանքը տարածվող Ջիբբեթ Բշարրին, Բշարրի շրջկենտրոնով և Իհդին, Հաուշիթ, Հադեթ ալ-Ջիբբեթ և այլ՝ ավելի քան 20000 քրիստոնյա (շուրջ 10000 մարոնական հարկատու) բնակիչ հաշվող գյուղերով գավառակը, որ մեզ դրաղեցնող ժամանակաշրջանի սկզբնակետում թոթափելու էր Համադե շիի շեյխերի լուծը և ենթարկվելու էր մարոնական Դահդահ մեծ շեյխերին և վերաշխուժացած Բանու Անհուրի մոկադդամներին։

— Մարոնական ազ-Զահիր պարզ շեյխերի տիրույթ ազ-Զաուիան՝ ծայր հյուսիսում մինչև Կատիշա գետը հասնող և Զղորթա ու Արջաս շրջկենտրոնների, Միղյարա, Ռաշին, Ալմա ու այլ գյուղերի ավելի քան 4000 (1750 մարոնական, 100 հույն-օրթոդոքս և 60 սուննի հարկատու) բնակչով։

— Մալքի Ազար պարզ շեյխերի մանրիշխանություն Քուբան՝ Տրիպոլիից հարավ ու Կատիշայից մինչև Նահր ալ-Ասֆուր տարածվող և Ամիուն շրջկենտրոնի, Բիշմազզին, Անֆա, Բթարրումին ու այլ ավանների 5000 (1500 հույն-օրթոդոքս, 900 մարոնական և 125 մթուալլի հարկատու) բնակչությամբ։

— Մարոնական Աբու Սաաբ պարզ շեյխերին ենթակա Վաջահ ալ-Հաջար շրջկենտրոնով ալ-Քուեյթիի (ալ-Մարթուի) գավառակը՝ ծովափում Նահր ալ-Ասֆարից մինչև Նահր ալ-Ջաուլ փռված հողատարածքը դեպի լեռնագոտի իր վերելքով և շուրջ 3000 (ավելի քան 1000 հույն-օրթոդոքս, 350 մարոնական և 250 սուննի հարկատու) բնակչով։

— Տրիպոլիից հյուսիս Աքքարի շրջանը, որի երեք քառորդով մարոնական ու հույն-օրթոդոքս և մեկ քառորդով սուննի 10000 աղդաբնակչությունը կառավարվում էր սուննի Բանու Մերհեբ շեյխերի կողմից։

— Աքքարին սահմանակից Ջանիյյայի գավառակը, որի երեք քառորդով սուննի և մեկ քառորդով մարոնական ու հույն-օրթոդոքս բնակչությունը ենթարկվում էր Բանու Ռաադ սուննի պարզ շեյխերին։

Ի տարբերություն ամիրայության բնօրրան հանդիսացած կամ նրա հետ սերտորեն շաղկապված մանրահատվածների ղեկավարների՝ ամիր, մոկադդամ թե մեծ շեյխ տիտղոսը կրող և վարչադատական ու հարկային-ֆինանսական իրավասություններով ու պարտավորություններով մուկատաաճիության ինստիտուտը կազմող ֆեոդալ-աղնվականների, հետագային այս կամ այն ճանապարհով իշխանապետության աղերսված մանրահատվածների ֆեոդալ-աղնվականները, ըստ իրենց անպայմանական հողասեփականատիրության կշռի թե իրենց տիտղոսի համապատասխան պատիվ գտնելով հանդերձ՝ ամիրայության նվիրապետական աստիճանակարգում իրենց կայուն-սահմանված տեղերից, հետևաբար վարչաքաղաքական կյանքում ակնառու դեր խաղալու հնարավորությունից զուրկ էին, եթե պայմանական հողատիրության, հետևաբար մուկատաաճիի կոչման չէին արժանացել։ Այդ աստիճանակարգի չորրորդ (իսկ դրուզ մոկադդամական մարմրոզ ինստիտուտը դանց առնելու դեպքում երրորդ) սանդղահարթակը պատկանում էր ամիրայության դրուզ թե մարոնական մեծ շեյխական տոհմերի բոլոր շարքային, իսկ պարզ շեյխական տոհմերից միայն դրուզականների անխտիր բոլոր անդամներին։ Պարզ շեյխական դրուզ տոհմերից կարելի է հիշատակել Այն Դարայի Ամբալլաններին, Սոմկանիյյայի Ուքեյլիներին և Աբու Հարմուշներին, Բաակլինի Թաքի ադ-Դիններին, Բարուկի Աբու Ալուաններին, Աբեյհի Ամին ադ-Դիններին, նաև Աբու Մուալիհներին, Աբու Համազաներին, Նասր ադ-Դիններին, աշ-Շանիֆներին, Խաթիֆներին, Ալիներին, Շամսերին են։ Ինչ վերաբերում է Դրուզների երկրի պարզ շեյխական մարոնական (Սաադ, Բաղ, Խուրի-Սալեհ, Նաֆաա, Հաշիմ և այլ) տոհմերին, առավել ևս այդ երկրի շրջանակներից դուրս ընկնող վայրերի պարզ շեյխական շիի (Հերմելի Բանու ալ-Մասթարա, Շաքրայի Բանու ալ-Ամին, Ջուայայի Բանու Խաթուն, Ջեբել Ամիլի Սաաբ և Մունքիր), սուննի (Աքքարի Բանու Մերհեբ, Ջանիյյայի Բանու Ռաադ) թե մարոնական (Իհդին-Ջզորթայի Դուեյհի, Հասբոնի Սուադ, Քֆար Սիաբի Խատիֆան, Թաննուրինի Թիրբեյ, Բհուրսուֆի Բլեյբել, Ջզորթայի Քարամ, Բիկֆայայի Ջմայել, Քֆարշիմայի Յաղիջի, Բաթրունի Բայթար, Ահմաջի

Խուրի, Բշարրիի Քեյրուզ, Համմանայի Աբու Հաթիմ, նաև Ռահմե, Ջաղջաղ ու մյուս) տոհմերին, ապա նրանց միայն աստիճանավոր-պաշտոնատար տոհմապետերը կարող էին ամիրայությունում համապատասխան պատիվ և ունկնդրություն ակնկալել։

Դժվար չէ նկատել, որ Դրուզական ամիրայության ֆեոդալական իրականությունը բավականին բարդ պատկեր ուներ։ Ավելի բարդը, անշուշտ, ամիրայության պատմական հողատարածքի թե նրան պատմականորեն աղերսված շրջանների ֆեոդալ-ազնվականության ներսում ընդհանուր առմամբ թեկուզև կայուն, այլ մեկ-մեկ հանկարծորեն ծայր աստիճանի խառնակվող-խճճվող ուժերի դասավորությունն ու փոխհարաբերություններն էին, որոնք երկրամասի պատմական ճակատագրին, թե ազգաբնակչության անդորրին ու բարեկեցության սպառնացող չարիք էին դառնում։

Չարիքի արմատները երևութապես գնում-հասնում էին արաբական տիրապետության առաջին իսկ շրջանից մինչև Այն Դարայի ճակատամարտի եզրահանգումը ձգձգված հնամենի կայսի-յեմենի հակամարտությունը։ Եվ սակայն վերջինիս կողքին երևութապես առկա էր նաև հարաբերաբար ուշ շրջանի արյունալի մի հակամարտություն, որ հաճախ էր բորբոքուն դառնում և միմյանց դեմ կանգնեցնում ֆեոդալ-ազնվականական երկու խմբավորումների։

Օսմանյան բանակների պատժիչ օղակի սեղմվելուց առաջ 1613-ին Ֆլորենցիա փախչելիս Ֆախրուդ-Դին II Մաանը իր գլխավոր ամրությունը Շեքիֆ Առնունի կառավարիչ էր կարգել մահապատժված Ալի Ջումբլաթի իր մոտ ապաստանած հարազատին՝ Ջումբլաթ Ջումբլաթին, նրան որպես դինական սչակից թողնելով մարոնական Աբու Նաֆեր Խազինին և որպես քարտուղար տալով Իմադ դրուզ տոհմից մեծ շեյխ Բեն Աբդ ալ-Աֆիֆին։ Վերջինիս նվիրյալ օսմանասիրությունն շնորհիվ Իմադները ստուգիանից ստացել էին Յազբեկի տիտղոսը, որ միայն ու միայն փադիշահի ամենից հլու ու հավատարիմ սպասարկուներին էր տրվում։ Ջումբլաթը, որ իր տոհմի ավագների արյան վրեժին հետամուտ՝ չէր դադարում հակաստանբուլյանական ծրագրեր մշակելուց, խորշում էր Իմադների յաղբեկիությունից, մանավանդ որ իր տոհմի դիրքերի ամրապնդման ճանապարհին մեծագույն արգելքը հենց նրանց էր համարում։ Դրուզների երկիրը հրի ու սրի մատնելու եկած, Հաֆեզ փաշայի հետ Իմադ մեծ շեյխի գաղտնի կապերին հաղորդված, Ջումբլաթը չվարանեց Խազինների օժանդակությամբ սպանել նրա անմիջական օգնական ու ժառանգորդ զարմիկին (քանի որ դրուզական սովորությամբ տոհմապետ

մեծ շեյխին նույնիսկ դավաճանության համար մահապատժել չէր կարելի)։ Փաստորեն այդ օրվանից էլ սկզբնավորվեց ավելի քան երկու դար տևելիք մահացու թշնամությունը Ջումբլաթ և Իմադ տոհմերի ու սրանց շուրջ համախմբված Ջումբլաթի և Յազբեկի հակամարտ խմբավորումների միջև (107, 56—57)։

Եվ սակայն այդ հակամարտությունն ուներ նաև այլ և ավելի առարկայական խթաններ։ Եվ իրոք, Ուադի աթ-Թայմից Լիբանան լեռ տեղափոխված իշխանապետական Շիհաբ տունի տոհմի դեմ տեղաբնիկ դրուզ աղնվականների որոշ խավերի հակառակամտությունը, ամբողջությամբ վերցրած դրուզ ֆեոդալ-աղնվականական վերնախավի ընդերքում պայմանական թե անպայմանական հողատիրության և վարչաքաղաքական ազդեցության ոլորտների համար մրցակցությունն էին, որ սնում էին ջումբլաթիների և յազբեկիների մահացու թշնամությունը։ Բանն այն է, որ Ջումբլաթ մեծ շեյխերն իրենց լայնատարած կալվածքների ու հարստության, դրուզ հետևորդների ու քրիստոնյա հպատակների թվաշատության, ինչպես նաև Արսլան ամիրների ու խազին մեծ շեյխերի զինակցության վրա հենվող հզորությամբ սկսել էին մրցել Շիհաբների հետ։ Պետք չէ մոռանալ մեծ ամիրի թե նրա տոհմակից ամիրների՝ լիբանանյան անպայմանական հողատեր ֆեոդալների համակարգում շափաղանց վտիտ դիրքը, նաև ամիրայության բաղադրամասերի կառավարման՝ պայմանական ավատատիրման սիստեմում իշխանապետական տոհմի անդամների համարյա իսպառ բացակայությունը։ Այդ պայմաններում օսմանաբրդական միջավայրից դրուզական համայնք ներթափանցած և իրենց հիմնավոր խրոխտանքով դրուզ հնամենի շեյխական տոհմերին ավելի ու ավելի ստվերող նորեկների՝ Ջումբլաթների դեմ անխուսափելիորեն ճակատ պիտի հարդարեին և Յազբեկի Իմադների շուրջ համախմբվեին Թալհուք և Աբդ ալ-Մալիք մեծ շեյխերը, նաև սրանց դինակից մարոնական Հոբեյշ և Դահդահ մեծ շեյխերը, տասնյակ պարզ շեյխական տոհմեր (37, 59)։ Միայն Աբու Նակիտ մեծ շեյխական տոհմն էր, որ փաստորեն հեռու էր մնում մեկ կամ մյուս կողմի հետ գործուն աղերս ունենալուց և իր դիրքորոշումը ճշտում էր լոկ իշխանապետության ճակատագրին վերաբերող, ավելի շուտ և ավելի հաճախ անմիջականորեն իր շահերը շոշափող վեճերի կապակցությամբ (128, հտ. 2, 102։ 60, 141—142)։

Դրուզ աղնվականության ջումբլաթի-յազբեկի այդ երկփեղկումն է, ահա, որ Լիբանան լեռան ղեկավար շրջաններին 1770-ական թթ. սկզբին

թույլ չտվեց միասնական դիրքորոշում հանդես բերել Լևանտում ծայր առած հակաօսմանյան զինված պայքարի հարցում։

* * *

Համոզված, որ լիբանանյան լեռներում ուժերի փոխհարաբերությունը վերջնականապես խախտվել է ի վնաս դրուզների, որոնք, մարոնականներից առանց այդ էլ անհամեմատ սակավաթիվ, փոքրամասնություն էին դարձել իրենց բնօրրան բոլոր մանրահատվածներում անգամ (բացի Շուֆից), ամիր Յուսուֆը 1760-ական թթ. թեպետ պաշտոնապես քրիստոնյա էր մկրտվել, սակայն արտակարգորեն ճոխ ընծաների օգնությամբ կարողացել էր օսմանցիներից ձեռք բերել Ջուբեյլի կառավարչությունը (128, հտ. 2, 21)։ Քաջ գիտենալով, որ տեղի ազգաբնակչությունը խոր ատելությամբ է լցված շրջանի վրա բռնացող Համադե տոհմի նկատմամբ, նա առաջին իսկ օրից ձեռնարկել էր քրիստոնեական աշխարհազոր ստեղծելու և նրա օգնությամբ շիի շեյխերի սանձարձակությունները հետզհետե խափանելու գործին։ Դրանով նա ոչ միայն տեղում ամրապնդել էր մանրիշխանի իր դիրքերը, այլև քրիստոնեաբնակ մյուս շրջանների բացահայտ համակրանքը շահելով՝ փաստորեն հաղթահարել էր դեպի իշխանապետական աթոռ իր վերելքի գլխավոր սանդղահարթակը։ Բանն այն է, որ Դրուզների երկրի իշխանապետ ամիր Մանսուրի ամենազոր հենարան Ալի Ջումբլաթը, որի մանրիշխանական շրջանների թե ֆեոդալական կալվածքների գյուղացիության հիմնական մասը քրիստոնյաներ էին, վերջիններիս մոտ Ջուբեյլի կառավարչի հարաճող հեղինակությունը չնկատել և հանձին Յուսուֆի՝ Շիհաբ տոհմի բարձրացող աստղին չտեսնել չէր կարող։ Պատահական չէ, ուրեմն, որ ամիր Մանսուրը, 1770-ին հրաժարական տալով, իր դստեր ձեռքն ու իշխանապետության ղեկավարումն առաջարկեց Յուսուֆին։

Վերջինս, սակայն, դրուզ ազնվականության Այն Բարուկի համաժողովին անակնկալ էր վերապահել։ Օգտվելով ստեղծված բարենպաստ իրադրությունից, նա Շուֆում հայտնվելուց առաջ իր աշխարհազորով գնաց վճռական հարված հասցնելու Համադեներին, որոնք մինչ այդ Տրիպոլիի փաշայի թողտվությամբ խաղին մեծ շեյխի և տեղական ազգաբնակչության ջանքերով արդեն իսկ դուրս էին մղված Ջուբեյլի և Մունեյթրայի մի շարք հատվածներից։ Ամիունի ճակատամարտում ջախջախելով և վերջնականապես ճնշելով հյուսիսային լեռնագոտու վրա բռնացող մթուալլի շեյխերին, Յուսուֆը զարդարվում էր Լիբանան լեռան քրիստոնեաբնակ մասերի ազատարարի և անմրցակից տիրակալի դափնեպսակով։ Իսկ դա նշանակում էր, որ քրիստոնեական ամբողջ

հյուսիսն ուղղակիորեն և անխախտելիորեն կապակցվում էր Շիհաբների՝ առանց այդ էլ դարաշրջանների քաղաքական գերակշռությունը կորցնելու վրա եղող, իսկ ազգաբնակչության կրոնագավանական խմբավորումների քանակական կշռի տեսակետից դրուզական առաջնությունից արդեն իսկ մերկացած ամիրայության։

Հասկանալի է, որ կերպավորված նոր իշխանությունն այլևս դրուզական լինել չէր կարող և իշխանապետն էլ իրավունք չուներ մնալու սոսկ դրուզների իշխան։ Եվ Այն Բարուկի ժողովում, որտեղ ավանդության ուժով վճռական խոսքը թեկուզ դեռ պատկանում էր դրուզ ազնվականներին, առաջին անգամ լինելով խախտվեց ընդունված ավելի քան երկդարյա կարգը. հրաժարվելով Դրուզների իշխանի նվիրագործված տիտղոսից, ժողովականները քրիստոնյա Յուսուֆին հռչակեցին Ամբողջ լեռան իշխան—Ամիր քուլ լիլ Ջեբել (141, 110)։ Լեռը (Ջեբելը) տակավին Լիբանան լեռը (Ջեբել Լուբնանը) չէր, անշուշտ, քանի որ Լիբանան անունը, XVIII դարի երրորդ քառորդի վերջին այդ տարիներին, հարավային Քեսրուանի՝ Մեթնի գարձումներում երկար տեղաշրջանելուց հետո, նոր-նոր էր փորձում թափանցել Դրուզական կամ Շուֆ լեռ, սակայն նախասկզբնական Լիբանան լեռից ձգվելով մինչև հարավ հասնող ամբողջ լեռնապարի որպես մեկ ու միասնական լեռ (Ամբողջ լեռ) գիտակցումը մարդկանց մտքերում այնպիսի մի հեղաբեկում էր առաջացնելու, որ Լիբանան անունն այնուհետև կարող էր թավալգլոր և անարգել հասնել մինչև Նահր ալ-Կասիմիյայի ափերը։

Ամբողջ լեռան առաջին իշխանը, սակայն, իր պաշտոնավարման առաջին իսկ օրից ընկնելու էր միջազգային դիվանագիտության արևելյան Միջերկրականում հարուցած ջրապտույտի մեջ և չկարողանալով ղեկաբեկել իր կողմնորոշումը, ակամայից ժխտական դրոշմ էր թողնելու ինչպես աշխարհամասի իրադարձությունների, այնպես էլ համարյա համալիբանանյան դարձած ամիրայության ճակատագրի վրա։

Բանն այն է, որ իշխանապետական աթոռ հասնելու երկրորդ սանդղահարթակի հաղթահարման բանալին ամիր Յուսուֆը համարել էր շեյխ Զահիրի և օսմանյան իշխանությունների միջև հարաճող ձգտվածության հարցում ճիշտ կողմնորոշումը։ Համոզված, որ շեյխի հակաթուրքական ձեռնարկումը կարող է միայն ժամանակավոր հաջողության արձանագրել և որ Լևանտում սուլթանի գերիշխանությունը, այս կամ այն ժամկետով թեկուզ թուլանալով, իսպառ չի թոթափվի բնավ, Յուսուֆն իր մարոնական խորհրդատու, Ռաշմայայի (Ջուրտ) շեյխ Սաադ ալ-Խուրիի թելադրությամբ հաստատապես կողմնորոշվել էր դեպի թուր-

քական իշխանությունները, խուսափելով, սակայն, իր ջուբեյլական աշխարհազորը միախառնել Թուրք փաշաների բանակներին (192, հտ. I, 422)։

Բոլոր դեպքերում, Թեկուզ մամլուքներից Թողլված և ամիր Յուսուֆից մերժված, Զահիր ալ-Օմարը, հենվելով գյուղացիության, բաղաքների և քաղաքային ազդարնակչության վրա, շարունակում էր պայքարը Լևանտում Թուրքական տիրապետության դեմ։ Հուլե լճի մոտ անակնկալ հարձակում գործելով Օսման-Սադիկի ռազմական ճամբարի վրա, նրա հեծելազունդը ջախջախեց փաշայի քրդական գվարդիայի հիմնական մասին, իսկ մնացածին դեպի ճահճուտը քշելով՝ խպառ ոչնչացրեց։ Փաշային փրկեցին երկու սևամորթ թիկնապահներ, որոնք լող տալով նրան հասցրեցին լճի հանդիպակաց ափը (11, 51)։ Օսմանի որդին՝ Սայդայի Դերվիշ փաշան, Սուրի շրջանի մթուալլիների առաջնորդ շեյխ Նասիֆ Նասսարի աշխարհազորի շրջափակումից խուսափելով, փախավ Դրուզների երկիր և ապաստան խնդրեց Յուսուֆից։ Վերջինս բախտորոշ այդ օրերին իր մեջ ուժ և համողմունք չգտավ վանելու փաշային, դիրքորոշվելու ռուսական հաջողակ զենքի հովանավորության հետամտող Ալի բեյի և շեյխ Զահիրի ճամբարում ու դրանով իսկ փութացնելու Սիրիայում օսմանյան լծի խորտակումը։ Ընդհակառակը, նա Ալի Զոմբլաթի հրամանատարության ներքո դրուզական զորք ուղարկեց Սայդան պաշտպանելու և ապա, հակառակ Զահիրի բանադնաց Ալի որդու առաջարկության, որ հրաժարի օսմանցիների կողքին դիրքորոշվելուց և անձամբ ղեկավարի հակաթուրքական դաշնակցությունը, իր 20 հազարանոց աշխարհազորով ավերիչ ռազմարշավի դուրս եկավ մթուալլիների դեմ։ Վերջիններս Նաբաթիայի մոտ դարանակալեցին ամիրին, որի դրուզամարտական աշխարհազորայինները, չկամությամբ շարժվելով իրենց ապստամբ հարևանների դեմ, առաջին իսկ զինաբախման ժամանակ շուրջ 1500 զոհ տալով փախուստի դիմեցին։ Ամոթահար Դեյր ալ-Կամար վերադարձող ամիրին,— ընդգծել է արաբական մի ժամանակագրություն,—դիմավորեց «ադռավների երամ» հիշեցնող այրիների անիծախառն ողբն ու կականը (11, 52)։ Ամիրի պարտության լուրն ստանալով, Զոմբլաթի ջոկատներն իրենց հերթին լքեցին Սայդան, որը Զահիրն շտապեց գրավել ու հանձնել իր ալժիրցի սպաներից Դենգիզլիի վարչակառավարման։

Յուսուֆն իր նախաքայլի լուրջ ձախողանքից հետո էլ չկարողացավ ճիշտ կողմնորոշվել իր ամիրայության շուրջ դասավորվող միջազգային բարդ սարդոստայնում։

Հայտնի է, որ ծովակալ Ս. Գ. Օրլովի հրամանատարության ներքո 1770-ի հունիսի 26-ին Չեսմեի նավամարտում տարած հաղթանակի շնորհիվ ցարական նավատորմն ամբողջությամբ վերահսկում էր Միջերկրականի արևելյան հատվածը և բնական է, որ անհրաժեշտության դեպքում աջակցելու էր նաև Լևանտի հակաթուրքական շարժումներին։

Ալի բեյի մերձավորներից հայազգի Լուսինյանի հաղորդման համաձայն, մամլուքների ղեկավարը տակավին 1771-ի սկզբներին իր բանագնացի՝ արաբացած Յաղուբ (Աղուր) տոհմից Հակոբ Հայի (Յաղուբ ալ-Արմանի, Յակով Արմիանին) միջոցով Օրլովին ուղարկված նամակով պատրաստակամություն էր հայտնել Եկատերինա II կայսրուհու հետ կնքելու Թուրքիայի դեմ համատեղ պայքարի դաշինք և օսմանցիներին Բիկունքից միասնաբար հարվածելու նպատակով՝ առաջարկել էր ցամաքահանում կատարել լիբանանյան ծովափում, խոստանալով հայթայթել անհրաժեշտ պարենն ու ֆինանսական միջոցները։ Օրլովն իր պատասխանում քաջալերել էր Ալի բեյի մտադրությունները և խոստացել՝ ի հարկին զինական օգնություն հասցնել (24, 268։ Նաև՝ 137)։

Եվ ահա 1772-ի ապրիլին իր սուլթանասեր զորահրամանատարների դավադրության հետևանքով Զահիրի մոտ ապաստանած Ալի բեյը նույն հայի միջոցով պաշտպանություն խնդրեց ծովակալ Օրլովից և գեներալ-լեյտենանտ Ռիզոյի հրամանատարության ներքո 10 ռազմանավերի մի խումբ հայտնվեց պաղեստինյան ծովափում, որպեսզի օժանդակի բեյի հավատարիմ 700 մամլուքների և հյուսիսային աֆրիկացի 1000 լեգեոնականների ու Զահիրի և Նասսարի շուրջ ուժ հաղարանոց հեծելազնդի գործողություններին (11, 51)։

Անակնկալ մահացած Օսման-Սադիկին փոխարինած նույնանուն մի այլ Օսման փաշայի Բ. Դռնից հանձնարարություն էր տրված ամեն գնով փութացնել Լևանտի խաղաղեցումը։ Դամասկոսի նոր մուշիրն իր զորքն ու հրետանին տրամադրեց իր մոտ շտապած ամիր Յուսուֆին, որպեսզի վերջինս գրավի Սայդան։ Ռիզոյի նավախումբն, իր հերթին, 1772-ի մայիսի 22-ին գնաց Սայդայի «ծովաբերդի մատույցներից վտարելու (օսմանյան) 11 ռազմանավերին՝ ցամաքահանմամբ ու հրետանիով և ապակրակի տակ առնելու թուրքական ճամբարը»։ Օսմանյան ռազմանավերի փախուստից հետո ռուսական նավախումբը ծովից, իսկ Զահիրի զորքերը ցամաքից սեղմեցին մեջ առան ամիրի աշխարհազորն ու թուրքական բանակը, որոնք մայիսի 27-ին ծանր կորուստներ կրելով նահանջեցին, առաջինը դեպի Դրուզների երկիր, երկրորդը՝ դեպի Դամասկոս։ Ի դեպ, ինչպես վկայել է ժամանակագիրը, դրուզները նահանջելիս և

5—1028

հետագայում չվարանեցին «թալանել իրենց դաշնակից թուրքական հետևակն ու հեծելազորը» (11, 52)։

Սայդայի պաշտպանությունն ապահովելուց հետո ռուսական նավախումբը հունիսի 6-ին գնաց ռմբակոծելու Բեյրութը, որտեղ ամիր Յուսուֆը, օսմանյան հրամանատարության հետ համախորհուրդ, վճռական գործողությունների էր նախապատրաստվում։ Ռիզոյի հրետանին հունիսի 7—12 քարուքանդ արեց ոչ միայն ծովաբերդը, այլև բնակելի թաղամասերը։ 3000 բնակչից 800-ը սպանվեց, մնացածներն ապաստան որոնեցին հարևան լեռնագոտում։ Ափ դուրս եկած գրոհայինները, քաղաքի 1200-անոց կայազորի անձնատվությունից հետո, ռազմատուգանք վերցրեցին և «իրենց նավերի վրա բարձեցին ամեն ինչ, որ քաշով թեթև, այլ գնով թանկարժեք էր» (27, 65—69, 22)։

Բեյրութի գրավումը իշխանապետ Յուսուֆի սթափման սկիզբն եղավ։ Մանսուր Շիհաբի միջնորդությամբ ու հորդորներով նա հարկադրվեց անձամբ ներկայանալ Հաղեթի ռուսական ռազմական ճամբարը և հանձն առավ ոչ միայն ռազմատուգանք վճարել, այլև հրաժարվել օսմանյան գանձատուն հարկ ուղարկելուց, հանձնառություն, որ նա այնուհետև սիրով կատարելու էր ուղիղ երեք տարի։

Լիբանանյան իշխանապետը լրիվ սթափվեց մի փոքր ավելի ուշ, երբ իր իսկ անխոհեմության հետևանքով Զահիրի ուշադրության չարժանացած և հուլիսի 17-ին ռուսական նավախմբի հեռանալուց հետո թուրքերից վերագրավված Բեյրութում, հակառակ ամիր Մանսուրի և դրուզ ազնվականության հորդորներին, օսմանյան կայազորի պետ կարգվեց իր արյունռուշտ դաժանության պատճառով Ջազզար, այն է՝ Մարդասպանի մսագործ մականունն ստացած բոսնիացի Ահմեդը (218, 812)։

Այս Ահմեդը, որպես քրեական հանցագործ փախչելով ծննդավայրից և Պոլսում ծառայության անցնելով մեծ վեզիր Հաքիմ-Օղլի Ալի փաշայի մոտ, հետագայում որպես ալ-Բուխայրա նահանգի կառավարիչ ուղարկվել էր Եգիպտոս և այնտեղ էլ, բաղաուիների հակամամլուքյան-հակաթուրքական խլրտումները արյան մեջ խեղդելու պատճառով, արժանացել էր իր մականվան։ Միաժամանակ իր դաշույնը ծառայեցնելով Ալի բեյի հակառակորդներին առանց ավելորդ ազմուկի ասպարեզից վերացնելու գործին, Ահմեդը մի օր էլ բախվել էր շեյխ ալ-Բելեդի հետ և դահճի տապարից գլուխն ազատել՝ ապավինելով ամիր Յուսուֆի պաշտպանությանը։ Ջազզարին շղթայակապ Կահիրե ուղարկելու և 100 հազար թալեր պարգևագին ստանալու առաջարկը կտրականապես մերժվել էր լիբանանյան իշխանապետի կողմից (11, 54)։ Եվ ահա, Բեյրութում կայա-

զորի պետ դառնալուց հետո, Զաղղարը, անլուր երախտամոռությամբ, Վոլնեյի խոսքերով՝ «իսկապես թուրքավարի» (192, հտ. 1, 427), մի օրից մյուսը լկտիացավ, գրավեց դրուզ ազնվականների ունեցվածքը, քանդեց նրանց ապարանքներն ու իջևանատները՝ շինանյութը միջնաբերդի վերամրապնդման համար օգտագործելու նպատակով, մինչև իսկ լեռնականներին արգելեց թեկուզ առևտրական գործարքների համար քաղաք ոտք դնել և հաճախ իր ավազակաբարո մարդկանց ուղարկեց ասպատակելու դրուզական թե մարոնական բնակավայրերը։

Դառնացած Յուսուֆը շտապեց հաշտվել Զահիրի հետ, մի բան, որ «դրուզները վաղուց էին ցանկանում»,— ինչպես ժամանակագրության հաղորդման հիմամբ կրկնել է Բազիլին (11, 55)։ Սուրի մերձակա Ռաս ալ-Այն բնակավայրում ամիրն ու շեյխը փաշաների ոտնձգությունների դեմ կնքեցին փոխօգնության դաշինք, ստորագրելով նաև հատուկ մի պայմանագիր, որի հիմամբ Բեյրութը ռուսների օժանդակությամբ ազատագրվելուց հետո հանձնվելու էր լիբանանյան իշխանապետի տնօրինության։

Յուսուֆ Շիհաբին հակաօսմանյան ճակատին հարելու մղող ազդակների շարքում իր դերն ուներ և մի այլ հանգամանք։

Տակավին Մուսթաֆա III-ի մահից և Աբդուլ Համիդ I-ի սուլթան հռչակվելուց (1773) անմիջապես հետո, ռուս-թուրքական վերսկսած պատերազմի պայմաններում, Դամասկոսի և Սայդայի փաշաներին հրահանգվել էր բանակցությունների միջոցով բավարարել Զահիրին և Լևանտը խաղաղեցնել։ Բ. Դոան բանագնացների կողմից բերված սուլթանական ֆերմանով Պաղեստինի վարչակառավարումը ժառանգական իրավունքով և հարկային առանձնաշնորհներով վստահվում էր շեյխի տոհմին, պայմանով, որ Երուսաղեմ քաղաքը մնար Դամասկոսի փաշայի ենթակայության ներքո և հարգվեին Սայդայի էյալեթի սահմանները։ Աբդեն շուրջ 90-ամյա և զինված պայքարից որոշապես հոգնաբեկ, Զահիրը մի պահ հրապուրվել էր թուրքական առաջարկություններից, սակայն որդիների ճնշման ներքո ի վերջո հրաժարել հաշտություն կնքելուց և 1772-ից Աքայում թողնված ու ցարական ծովակալության անունից գործող գվարդիական պորուչիկ Բաումգարտենի հետ կնքել էր «Մեծն Ռուսաստանի հետ բարեկամական սիրո դաշնադրություն» (11, 55 և 57)։ Ամիր Յուսուֆը չէր կասկածում, որ ռուսների զինական ներկայությունն այնուհետև ավելի զգալի էր դառնալու, մանավանդ որ Ալի բեյն էլ 1773-ի ապրիլի սկզբներին Օրլովին փոխարինած ծովակալ Սպիրիդովից նոր օժանդակություն էր խնդրել և լեյտենանտ Պլեշչևի միսիայի

միջոցով մեծ քանակությամբ ռուսական զենք ու զինամթերք էր հասցվել Լևանտ։

Բնականաբար շեյխ Զահիրը, Ալի բեյի անակնկալ եգիպտոս վերադարձից և 1773 մայիսի 8-ին նենգությամբ սպանվելուց հետո մենակ մնացած, ուրախությամբ էր ընդունելու իշխանապետի դիմափոխությունն ու դաշնակցությունը և հատուկ առաքելությամբ Սայդա ժամանած սրամիտ-մայոր դուքս Վոյնովիչից խնդրելու էր օգնել ամիրայության աշխարհազորին՝ ազատագրելու Բեյրութը։ Մի կողմից ռուսական հրամանատարության ու մյուս կողմից Զահիրի ներկայացուցիչ Դենգիզլիի և ամիր Յուսուֆի միջև ստորագրվեց համատեղ գործողությունների պայմանագիր, որով ռուսական զինական օգնության ի հատուցումն շեյխն ու ամիրը ընդունում էին Ռուսաստանի հովանավորությունը և պարտավորվում Թուրքիայի դեմ պատերազմել այնքան ժամանակ, քանի դեռ ռուս-թուրքական զինաբախումը չի ավարտվել (35, 207)։

Լիբանանյան ամիրայության պաշտոնապես հակաօսմանյան ճակատին հարելը չէր կարող Լևան վրա չհրավիրել Դամասկոսի շրջանում վերախմբավորված թուրքական բանակի հրամանատարության պայքարը։ Ամիրի աշխարհազորի Սահել Բեյրութում գտնվելը հարմարագույն առիթն էր պաշտպանությունից մերկացած նրա տիրույթին վճռական հարված հասցնելու։ Օսմանյան բանակն շտապեց Բիկաա, իբր ամիրի եղբոր՝ դեպի Բաալբեկ թալանարար զինաշրջմները կանխարգելելու նպատակով։ Թուրքերի մտադրության իսկությունը, սակայն, բացահայտ էր և Զահիրի Ալի որդին, արագորեն կտրելով Ուադի աթ-Թայմը, Լևան հենց մատույցներում՝ Քաբ Իլիասում անակնկալ հարձակմամբ ջախջախեց Դամասկոսի փաշայի զորքերին (201, 620)։

Բիկաայում տարած հաղթանակից անմիջապես հետո, հունիսի 25-ից Բեյրութը շրջափակված Վոյնովիչի երկու և օգնության փութացած կապիտան-լեյտենանտ Կոժուխովի մի քանի ռազմանավերի ու Զահիրի թեթև մարտանավերի հրետանու կրակի ներքո քաղաքի մերձակայքում ռուսական ցամաքահանում կատարվեց։ Ափ իջան Բաումգարտենի գնդի 787 ռուս, հիմնականում թնդանոթաձիգ նավաստիներ, ինչպես նաև մայոր Դուսիի և Վոյնովիչի գլխավորած անկանոն գնդերը, որոնք կազմված էին սլավոններից, ալբանացիներից և հույներից։ Հակառակ այն բանին, որ միջնաբերդի պարիսպները մի քանի տեղում փուլ էին եկել արկերի պայթյուններից և որ ռուսական դեսանտը պատրաստ էր առաջինը գրոհի գնալ, Յուսուֆը հրաժարեց իր աշխարհազորը քաղաքի վրա նետել (35, 244)։ Այդ պայմաններում ռուսական հրամանատարությունը նախընտ-

րեց զորքը վերստին նավերի վրա հանել և սպասել Զահիրի գնդերի ժամանման, քանի որ իշխանապետը պնդում էր քաղաքը պաշարման օղակի մեջ պահելու և սովամահության սպառնալիքով անձնատվության մղելու տակտիկայի ճշտության վրա, ինչ որ հասկանալիորեն շտապող ռուսական զորքի սրտով չէր։ Ի դեպ, Բաղիլին, որ Յուսուֆին համակրողների թվին չի կարող դասվել, ակամայից արդարացրել է նրա տակտիկան, ընդգծելով ոչ միայն «Զազզարի ավազակախմբի կատաղի դիմադրությունը», այլև այն, որ «քաղաքը գրոհով գրավել հնարավոր չէր» (11, 56)։

Զազզարին Բեյրութում սեղմված պահելով, Յուսուֆը Զահիրի գնդերի հետ ջախջախեց Հալեպից օգնության շտապող օսմանյան զորքերին։ Օգոստոսի 18—24 ռուսական գնդերը նորից ափ դուրս եկան և վերսկսեցին պատերազմական գործողությունները։ Նռամսյա դիմադրությունից հյուծված և անելանելի դրության մատնված, Զազզարը սեպտեմբերի 22-ին հարկադրվեց անձնատվության պայմանների շուրջ բանակցություններ սկսել։ Սեպտեմբերի 29-ին կնքված համաձայնագրով Զազզարն ու նրա մարդիկ նույն օրն իսկ ռուսական նավերով տեղափոխվելու էին Սայդա՝ Զահիրի տրամադրության տակ անցնելու համար, իսկ ռուսական զորքը քաղաք մտնելով, այն հաջորդ օր հանձնելու էր Յուսուֆի վերահսկողության։ Նշենք, որ լիբանանյան իշխանապետի և Գենդիլիի հետ կնքված նախնական համաձայնագրով ռուսական զորքը Բեյրութից ոչ մի ռազմավար չպետք է վերցներ (11, 55) և փաստորեն մի ամբողջ օր քաղաքին տիրելը պայմանավորվածության խախտումն էր։ Հակառակ դրան, իշխանապետը, որ Բեյրութ շտապելով սուննիներին զինաթափեց և քաղաքի վրա պարզեց «խաչազարդ դրոշ», որ այնուհետև ամիրայության դրոշն էր դառնալու (218, 825), ռուսներին որպես պարգև ռազմավարից 300 հազար զուրուշ տվեց (192, հտ. 1, 454)։

Ռուսական նավատորմը սիրիական ծովափում մնաց մինչև 1774-ի սկիզբները, իսկ Բեյրութում տեղավորվեց մի փոքր կայազոր, որի հրամանատարն էր «ժողովրդական ավանդությամբ Ստեփան անունը կրող և բարի հիշատակ թողած» մի սպա (11, 56), հավանաբար Բաումգարտենը, որին ծովակալությունը հանձնարարել էր կարգավորել լիբանանյան ամիրայության հետ կապված բոլոր հարցերը։ Միջանկյալ նշենք, որ Բեյրութում, մալթի մի մետրոպոլիտի խոսքերով, «ազատություն և անդորրություն էր տիրում», ի հակապատկեր Տրիպոլիի, «որտեղ թուրքական կառավարման անկարգությունն է տիրում» (27, 88)։ Հենց այդ օրերին է, 1773-ի հոկտեմբերին, որ ամիր Յուսուֆը նույնիսկ «խնդրեց

իր ամբողջ ժողովրդի հետ իրեն ընդունել Ռուսաստանի հպատակ» (11, 55) և ժամանակակից Լիբանանի հողատարածքի վրա հաստատել ռուսական պրոտեկտորատ, խնդրանք, որ հասկանալիորեն մերժվեց Քյուչուք Կայնարջիում 1774-ի հուլիսի 21-ին կնքված հաշտության պայմանագրից հետո։

Ի դեպ, այդ պայմանագրից անմիջապես հետո շրջանում նոր իրավիճակ ստեղծվեց։

Եգիպտոսի շեյխ ալ-Բելեդ հռչակված Աբու Զահաբը 1775-ի մարտին սուլթանի անունից Զահիրին «հայրենիքի և կրոնի դավաճան» հայտարարելով 60 հազարանոց զորքով ներխուժեց Սիրիա (160, հտ. 1, 622)։ Թաքնվելով սուլթանի հավատարիմ վասալի քողի ներքո, մամլուքյան կազմակերպության պարագլուխն անկասկած մտադրվել էր գլուխ բերել այն, ինչ իր իսկ դավաճանության հետևանքով չէր հաջողվել իր հանդուցյալ տիրոջ. Սիրիան միավորել Եգիպտոսին և թոթափել օսմանյան դերիշխանությունը։ Դրա համար անհրաժեշտ էր առաջին հերթին ոչնչացնել իր ալեհեր ախոյանին, ապա նոր հաշվեհարդար տեսնել փաշաների հետ։

Երկամսյա պաշարումից հետո Աբու Զահաբը գրավեց Յաֆան և շարժվեց Աքայի վրա։ Զահիրը նահանջեց Սայդա, որտեղ հույս ուներ դինական օգնություն ստանալ Սուրի շրջանի մթուալլիներից և ամիր Յուսուֆից։ Խիստ հաշվենկատ, լիբանանյան իշխանապետը հրաժարվեց նույնիսկ սովորական հանդիպում ունենալուց։ Շեյխի նկատմամբ երբեմնի ջերմությունը չկար նաև ծովափի շիիների շրջանում, որոնք վերջին տարիներին սկսել էին հեծել նրա դանձապետ Իբրահիմ Սաբբաղի հարկային նորամուծությունների ներքո (11, 57)։ Զահիրին այլընտրանք չէր մնում. միառժամանակ ապավինել Սաֆատի իր ամրություններին և ապա ապաստան որոնել Հաուրանի իր դաշնակիցների մոտ։

Լիբանանյան ամիրայության վերնախավից թե մթուալլի շեյխերից հպատակության ու հավատարմության հավաստիք ստացած և Զահիրի տիրույթը արյան մեջ խրած Աբու Զահաբը երկար չվայելեց իր հաջողության պտուղները. 1775-ի հունիսին նա հանկարծամահ եղավ, իսկ մամլուքյան զորաբանակը շտապեց հեռանալ Սիրիայից։

Աքա վերադարձած և կարճագույն ժամանակում վերստին դրության տեր դարձած Զահիրի մոտ վերստին հաշտության առաջարկությամբ, այլ վեց տարվա հետևյալ հարկերի պահանջով հայտնվեցին սուլթանի բանագնացները, որոնց գլխավորում էր նավատորմով ժամանած առաջին ծովակալ Հասան փաշան։ Շեյխը հակված էր այս անգամ օսմանցիների

պահանջը բավարարելով պատերազմական գործողություններից խուսափելու տեսակետին։ «Թեպետ ծեր եմ,— իր մարդկանց բացատրում էր շեյխը,— սակայն սիրում եմ մտածել և ապագայի մասին։ Այս օրը մերն է, սակայն թե ո՞մն է լինելու վաղվա օրը՝ ոչ ոք չի կարող կանխատեսել։ Ավելի լավ է վճարել պահանջվածը և խնայել մեր գլուխները, քանի ճակատագիրը թույլ է տալիս»։ Ներունու պարտվողականության հետ համաձայն չէին իր մարդկանցից շատերը։ «Իսկ ո՞վ է երաշխավորում, որ մեզ հանգիստ են թողնելու պահանջված ամբողջ գումարն ստանալուց հետո,— հարց էին տալիս նրանք։—Բ. Դուռն անկասկած մեր կործանումն է ցանկանում։ Նա պատիվ ու խիղճ չգիտի։ Նրա բանագնացն այստեղ էր դեռ ու մեզ մեկնաբանում էր օսմաներենով գրված ֆերմանները, երբ ներխուժեցին մամլուքները, անշուշտ թուրքերի իսկ հրամանով։ Ո՛չ, թող ասված Արաբիայի որդիներին պաշտպանի թուրքական այդ բոլոր խոստումներից ու շողոմ խոսքերից, ֆերմաններից ու ամաններից։ Եվ հետո, եթե չենք կարող այստեղ դիմադիր լինել նավատորմին, ապա ավելի լավ է վերադառնալ Սաֆատի մեր լեռները և թող փաշաները պատիվ անեն այնտեղ գալու»։ Ռազմաժողովում Դենգիզլին, պատճառաբանելով, որ «երկար դիմադրել չենք կարող... ու չենք կարող ոտքի հանել ժողովրդին» և որ «սուլթանի թուրը երկար է ու մեզ կհասնի նույնիսկ լեռներում», խորհուրդ էր տալիս զիջել, պատրաստակամություն հայտնելով «100 հազար թալերով կապուտան-փաշայի հետ հարցը կարգավորել»։ Եվ սակայն օսմանցիների հետ բանակցելու և հաշտություն կնքելու հակառակորդները հաղթանակ տարան, երբ նրանց միացավ Սաբբաղը։ Վերջինս թուրք բանագնացին ասաց. «Մենք փող չունենք։ Ասա փաշային, որ շեյխը միայն հրաղեն ու հատու թուր ունի» (11, 58)։

Պատերազմական գործողությունների սկսելուց հետո Դենգիզլին դավաճանեց օսմանցիներին հաջողապես դիմադրող Զահիրին։ Նա իր ալժիրցի թնդանոթաձիգներին կարգադրեց խցանել ծովահայաց աշտարակների հրանոթները և այդ մասին իմաց տվեց թուրքական նավատորմի հրամանատարության։ 1775-ի օգոստոսին միջնաբերդն առնվեց ուժեղ կրակի տակ։ Անհավասար մարտը խիղճխաբար վարող շեյխը դավաճանների կողմից թիկունքից հասցված կրակոցով զոհվեց։ Լեանտը կորցրեց հակաթուրքական ազատագրական պայքարի իր երևելի գործիչներից մեկին։ «Ֆախրուդ-Դին II-ի հանճարեղ ճիգերն ու Զահիրի խիզախ ծրագրերը Սիրիայի ճակատագրում փայլատակած երկու ասուպներ էին»— արձանագրելու էր ժամանակագիրը (11, 60)։

Աքան գրավվեց և թալանվեց։ Զահիրի գլուխն ի ցույց ուղարկվեց Պոլիս։ Սաբբաղը տանջամահ արվեց, սակայն չհայտնեց իր տիրոջ գանձավայրը։ Բոլոր դեպքերում թուրքերի ձեռքն ընկավ 40 միլիոն ղուրուշի հարստություն (11, 58—59), ըստ երևույթին շեյխի ունեցվածքի այն մասը, որ ի պահ էր դրված ֆրանցիսկյանների վանքում և որ վանականները ինքնակամ հանձնեցին Բ. Դռան ներկայացուցիչներին (160, հտ. 1, էջ 624)։

Դավաճան Դենգիզլիին թուրքերն իրենք թունավորեցին։ Զահիրի որդիները ապաստան գտան մթուալլիների մոտ։ Հասան փաշան, նրանց ներում ու պաշտոններ խոստանալով, խաբեությամբ գերեց նրանցից երեքին և մեկին մահապատժելով, երկուսին ուղարկեց Պոլիս։ Ավագը՝ Ալին, մնաց Սիրիայում և շարունակեց հակաօսմանյան պայքարը։

Թուրքական իշխանությունները փորձեցին ասպարեզից դուրս մղել նաև շեյխին դաշնակցած լիբանանյան ամիրին, յազբեկիներին դրդելով հերթական ապստամբության։ Իր դեմ ուղղված շարժումը ճնշելով, Յուսուֆը 1775-ի աշնանը ճոխ ընծաներով համարձակվեց ներկայանալ Հասան փաշայի զորակենտրոն, հնազանդության երդմամբ սիրաշահեց ծովակալին և ապա, նրան տրքայավայել հյուրընկալելով Դեյր ալ-Կամարում, ամիրայության համար մի քանի տարով ձեռք բերեց հարկադրման իրավունք (27, 43—44 և 58)։ Փաշային ուղեկցող Ջազզարը, որ մի քանի ամիս անց, 1775-ի վերջերին Սայդայի փաշա, հետևաբար իշխանապետության պաշտոնական վերահսկիչ էր կարգվելու, իր պաշտոնավարության ֆերմանն ու օսմանյան նավատորմի հեռացմանն էր սպասելու՝ ամիր Յուսուֆի հետ իր հաշիվները մաքրելու համար։

Այս կապակցությամբ անհրաժեշտ է այստեղ, թեկուզ թռուցիկ, անդրադառնալ օսմանյան փաշաների և լիբանանյան ամիրայության փոխհարաբերությունների խնդրին։

* * *

1520-ական թթ. մասամբ ձևականորեն, մասամբ էլ գործնականում օսմանյան գերիշխանության ենթարկված լիբանանյան հողատարածությունը պաշտոնապես բաժանվել էր սիրիական նորաստեղծ երեք՝ Հալեպի, Դամասկոսի և Տրիպոլիի էյալեթներից (փաշայություններից) վերջին երկուսի միջև, որոնցից առաջինն ստացել էր հարավային հատվածը՝ որպես Բեյրութի ու Սայդայի սանջաքներ, նաև Բիկան, իսկ մյուսը՝ հյուսիսային հատվածը, որպես Տրիպոլիի սանջաք։ 1660-ին օսմանցիները հետին մտքով ստեղծել էին Սայդայի էյալեթը, որի փաշայի հիմնական առաջադրանքն էր վերահսկողություն սահմանել լիբանան-

յան կիսանկախ ամիրայության վրա և խափանել նրա առաջընթացը։ Այդ փաշայության ստորադրված էին, ի շարս այլոց, Դրուզների երկիրն ու լիբանանյան ծովափը Սուրից մինչև Նահր ալ-Քելբ, նաև Ուադի աթ-Թայմի ու Բիկայայի մի շերտը։ Լիբանանյան իշխանապետը, սակայն, ձևականորեն փաշայի առաջ Դրուզների երկրի հարկի (թեկուզ միակ և պաշտոնապես անփոփոխելի) պատասխանատուն լինելով հանդերձ, որպես ըստ էության սուլթանի ուղղակի և կիսանկախ վասալը ստանում էր կառավարման հատուկ լիազորագիր և իշխանապետական քաֆթան (խալաթ), այլ խոսքով զորանում էր իր տիրույթի ներսում գրեթե կատարելապես ինքնիշխան մնալու իրավասությամբ։

Սայդայի փաշան XVIII դարավերջին իր էյալեթից Բ. Դուռ էր ուղարկում տարեկան 750 քսակ հարկագումար ու մոտ այդքան էլ ծախսում էր հարկադրաբար Մնքքայի ուխտագնացների քարավանին մինչև Դամասկոսի փաշայի տիրույթը աջակից-ուղեկից լինելու գծով (192, հտ. 2, 72)։ Շուրջ 1500 քսակ այդ գումարի մի մասը (մինչև XVIII դարավերջ) կամ ավելին (հետագայում) նա անմիջականորեն ետ էր ստանում որպես Դրուզների երկրի հարկագումար։ Այդ հարկագումարի վերաբերյալ պաշտոնական տվյալներ չկան այն պարզ պատճառով, որ ինչպես ամիրայության աշխարհագրական, այնպես էլ ամիրի քաղաքական իշխանության սահմաններն ու երկրի անունից նրա հանձն առած տարեկան հարկագումարի չափը փաստորեն միշտ էլ որոշվել են իշխանապետի ու Սայդայի փաշայի, նաև սրան աջակից Տրիպոլիի ու Դամասկոսի փաշաների փոխհարաբերությունների բնույթով և ուժերի հարաբերակցությամբ։ Եվ իրոք, համաձայն տարբեր սկզբնաղբյուրների, հարկագումարը XVIII դարի սկզբին, երբ Շիհաբները նոր-նոր էին փորձում գահի վրա ամրապնդվել, 160 քսակ էր, որ համապատասխանում էր 80 հազար ղուրուշի (մեկ քսակը 500 ակչե կամ ղուրուշ, իսկ մեկ ղուրուշը՝ շուրջ 24 գրամ արծաթ)։ Դարակեսին, ամիր Մոլհամի ջանքերի շնորհիվ, այն նվազել էր մինչև 60 քսակի։ 1770-ական թթ. հարկագումարը 300 քսակ էր, իսկ դարավերջին՝ արդեն 1200 քսակ և ավելի։ 1810-ական թթ. հարկագումարը հասնելու էր մինչև 3000 քսակի, իսկ 1820-ական թթ.՝ 5000 քսակի, որ կազմում էր շուրջ 60 տոննա արծաթ և ժամանակի կուրսով համապատասխանում էր ֆրանսիական 5 միլիոն ֆրանկի (43, 42)։

Եվ սակայն իշխանապետի հայթայթած քսակները փաշայի փոդացավին լուրջ դրման լինել չէին կարող։ Իսկ դա ոչ միայն այն պատճառով, որ քսակագումարի աճը խարուսիկ էր, քանի որ, եթե հաշվի առնելու լիներ ղուրուշի կուրսի անկումը, ապա XVIII դարի երկրորդ կեսից

մինչև շուրջ 1830 հարկագումարը փաստորեն աճած կլինի 1,5 անգամ միայն (98, 149)։ Ուրեմն և դժվար չէ պատկերացնել, որ ծովափի մաքսատների հասույթով, յուրացրած տարածությունների մշակության և առևտրի որոշ ճյուղերի մենաշնորհի արդյունքով հանդերձ փաշան մի կերպ ապահովում էր Պոլիս ուղարկվելիք ոսկիները, իսկ իր անկասկածելի ընչաքաղցությունը բավարարելու համար (մոռանալով տակավին տիտղոսն ու պաշտոնը ձեռք բերելիս մեծ վեզիրին կանխիկ վճարած կլոր գումարի հատուցումը) եռանդով ձեռնարկում էր շարաշահումների և յոթ կաշի էր քերթում իր ուղղակի հպատակներից։

Վերջիններս, գլխավորաբար Նահր ալ-Քելբից ու Բեյրութից մինչև Սուր ծովափնյա շերտի հողամշակները հատկապես, մասամբ նաև Բեյրութի, Սայդայի ու Սուրի առևտրականներն ու արհեստավորները, հասկանալիորեն երանի էին տալիս փաշային միայն միջնորդաբար ու ձևականորեն հպատակ Դրուզների երկրի բնակիչներին։ Երանին, անշուշտ, ավելի սրտաբուխ էին տալիս փաշայության ուղղակի հպատակ քրիստոնյաները, որոնք, գոնե մինչև 1770-ական թթ., ի տարբերություն Դրուզների երկրի իրենց հավատակիցների, հողահարկից բացի պարտավոր էին վճարել նաև գլխահարկ։ Այս պայմաններում Դրուզների երկրում պարփակված լիբանանյան իշխանապետությունը, տեղարնիկ դրուզների և հյուսիսից վերաբնակված քրիստոնյաների գուրգուրանքին ու պաշտպանության առարկա, մագնիսի նման իրեն էր ձգում փաշայության մյուս հատվածների բնակիչներին, առաջին հերթին քրիստոնյաներին։ Եվ քանի որ հողահարկն ու գլխահարկը ի վաղուց անտի հողաչափի ու մարդահամարի տվյալներով ըստ բնակավայրերի ճշտիվ սահմանված գումարներ էին կազմում, իսկ հատուկ մատյաններում գրանցված այդ գումարները պաշտոնապես անփոփոխելի էին, ապա ամեն մի արտագաղթող ծանրացնում էր մնացողների վիճակը (յուրաքանչյուրի վճարը ժամանակի ընթացքում տեղ-տեղ քառապատկվել էր) և նորանոր ընտանիքների մղում կողմնորոշվելու դեպի ամիրայության լեռնագոտին (192, հտ. 2, 147)։

Մոտավորապես միևնույնն էր պատկերը նաև Տրիպոլիի փաշայության, որի կազմում ներգրավված էր լիբանանյան հողատարածությունից զգալի մի հատված՝ ծովափում Նահր ալ-Քելբից հյուսիս մինչև Աքքարի ծոցը, լեռներում Մեթնից այն կողմ մինչև Ջիբբեթ Բշարրի, Սայր աղ-Ջանիյյա և Աքքար։ Այս փաշան ևս XVIII դարավերջին տարեկան 750 քսակ հարկ էր ուղարկում Բ. Դուռ և նույնքան էլ ծախսում էր Մեքքայի ուխտավորներին մինչև Սայդա հասցնելու համար, այդ գումարի ան-

նշան մի մասը միայն ետ ստանալով մարոնական ու մալքիական շրջանների հողահարկերի կապալառու մոկադդամներից ու շեյխերից, ինչպես նաև նուսեյրիների առաջնորդներից։ Եվ քանի որ նավահանգստային մաքսատուրքերն ու ծովափնյա շերտի ուղղակի հպատակների կեղեքումը քիչ բան էին տալիս փաշայի ընչաքաղցության բավարարման, ապա գավառի ամենազոր պետը կանոնավորաբար փորձեր էր կատարում ուղղակի իրեն ենթարկելու կիսանկախավար, այլ դրուզների նման պաշտոնապես նվիրագործված սնփական կենտրոնական իշխանություն չունեցող նուսեյրիներին, մարոնականներին և մալքիներին, սակայն, «այդ ժողովուրդները միշտ էլ զենքի ուժով դիմադրում էին իրենց երկիր թուրքերի մուտքին և ուրեմն փաշան հարկադրվում էր հարկերի հավաքումը դիջել ժողովրդին հաճելի կապալառուներին» (192, հտ. 2, 62)։

Տեղն է նշելու, որ լիբանանյան հողատարածության ամբողջ հյուսիսային հատվածը ժամանակի ընթացքում ամիրայության հետ իր առընչակցումը ապահովել և ամրապնդել էր հենց հարկերի կապալի ճանապարհով։ Իշխանապետերը, հատկապես ամիր Յուսուֆը, փաստորեն ընդառաջելով աղգարնակչության ձգտման և փաշային իրենց կամքը, իսկ շեյխերին և մոկադդամներին իրենց ուժեղ բռունցքը պարտադրելով՝ ամեն տարի կանոնավորաբար աճուրդներում կարողանալու էին վերանորոգել կապալի պայմանագրերը, դժգոհանք առաջացնելով մարոնական և մալքի աղնվականության կապալի հավակնորդ խավի մոտ, որ իշխանապետի հետ իր մրցակցությունից պարտված դուրս գալով՝ ղայրույթը հասկանալիորեն ուղղելու էր ժողովրդական եռանդուն խավերի դեմ ու դրանով իսկ խորացնելու քրիստոնեական հյուսիսի ներքին հակասությունները։

Դամասկոսի փաշան, որի ենթակայության ներքո էր Բաալբեկի, Բիկաայի և Ուադի աթ-Թայմի հիմնական մասը, XVIII դարավերջին տարեկան Բ. Դուռ ուղարկվող 45 քսակ հարկով երևութապես առանձնաշնորհյալ վիճակում էր Սայդայի և Տրիպոլիի իր պաշտոնակիցների հետ համեմատած, սակայն, որպես ամիր ալ-հաջ, Մեքքայի ուխտագնացության քարավանի ուղեկցման առավել դժվարին տեղամասի պատասխանատվությունը և վերադարձող ուխտավորներին մթերքով (ջիրդե) ապահովելու պարտականությունը կրելով, իրականում հարկադրվում էր խոշոր գումարներ բաց թողնել իր գանձարկղից։ Բոլոր դեպքերում փաշան միայն Ուադի աթ-Թայմի Շիհաբներից, որոնք, բացի իրենց տոհմական տիրույթից, գերիշխում էին նաև սարահարթի մյուս հատված-

ների վրա, որպես հարկային կապալի գումար ստանում էր 60 քսակ, այլ խոսքով ավելին՝ քան Բ. Դուռ ուղարկած իր հնչուն փողը։

Ավելացնենք, այստեղ, որ Սայդայի, Դամասկոսի և Տրիպոլիի փաշաներին անմիջականորեն ենթակա հատվածների պատմությունը թեպետ դրուզների ամիրայության պատմությանն սկսել է անքակտելիորեն միահյուսվել միայն XVIII դարի վերջին քառորդից սկսած, Լեռնտում քաղաքական անցուդարձերի բորբոքման պայմաններում, դրանով իսկ սկզբնավորելով համալիբանանյան նոր պատմությունը, սակայն մերօրյա Լիբանանի հողատարածքի վրա, Լեռան դրուզական հատվածներում ստեղծված իշխանապետությունն ունենալով որպես կորիզ, օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում սկզբնավորվել և դարից դար խորացել էր «լիբանանյան» մի ընդհանրություն։ Եվ իրոք լեռնաշղթայի քրիստոնեական հատվածն ու ծայր-հյուսիսի մահմեդական (Աքքարի և Զանիյայի) գոտին, ինչպես և Բիկայայի հովտի կենտրոնամասը, տեղից բխող մղմամբ վասալական կապերով միշտ էլ աղերսված լինելով ամիրայության հետ, հարկերի կապալադնման ճանապարհով աստիճանաբար օրինականացրել էին իրենց ներգրավումը իշխանապետության կազմում։ Բաալբեկի շրջանի շիիները, որոնք հարաբերաբար ուշ Ուադի աթ-Թայմի և ոչ երբեք Լիբանան լեռան Շիհաբների գերագահությունն էին ճանաչել, նրանց ճանապարհով էլ ներգրավվել էին իշխանապետության ազդեցության ոլորտում։ Աքքարից մինչև Թուֆֆահ ձգվող լեռնագոտին տեսակես ծովի վրա ելք էր ունեցել Ջունի-Ջուբեյլ-Բաթրուն շրջանում։ Լեռան և ծովի միջև սեղմված ծովափնյա դաշտային մյուս գոտիները՝ Տրիպոլի, Բեյրութ, Սայդա և Սուր քաղաքներն ունենալով որպես կենտրոններ, իշխանապետի ազդեցության ներքո գտնվելով հանդերձ, միշտ չէ, որ ընդգրկված են եղել նրա տիրույթի կազմում։ Տրիպոլին և Սայդան, Մաաների օրոք միաժամանակ ամիրների կառավարման ներքո գտնվելուց հետո, նրանցից օտարվել էին որպես էյալեթների փաշաների նստավայր։ Ինչ վերաբերում է Սուր քաղաքին և հարավային մթուալիական դաշտավայրին, ապա դրանք միշտ առնչված են եղել Լեռան հետ և հակառակ պարբերական վերիվայրումների, հպատակվել են ամիրին։ Եվ վերջապես Բեյրութը իր շուրջ մեկդարյա տեր Շիհաբների ամիրայությունից խլվելու ու նրանից կտրված էլ մնալու էր հենց մեզ զբաղեցնող ժամանակաշրջանում, Ջազզարի օրերին։

* * *

Ջազզարը, որի բռնատիրությունը շարունակվեց շուրջ երեք տասնամյակ (1775—1804), անխտիր բոլոր, այդ թվում և մահմեդական տա-

ռեգրությունններում ներկայացված է որպես նենգ ու դաժան, արյան ծարավի մի անձնավորություն։ Բավական է ասել, որ սկզբնաղբյուրների միաձայն վկայությամբ նա «զվարճանալու» համար իր հրեա բանկիր Հայիմին վերածել էր խեղկատակի՝ փորել էր ավել մի աչքը, կտրել քիթն ու մի ականջը (67, 22—24)։

Իշխանության տիրանալուց անմիջապես հետո նրա առաջին գործն եղավ իրեն մշտական նստավայր դարձնել և ազգաբնակչության շաբաթական եռօրյա տարապարհակ աշխատանքով էլ ավելի ամրացնել Աքան, որի պատճառով էլ Սայդայի էյալեթն այնուհետև ավելի շուտ գիտակցվելու էր որպես Աքայի փաշայություն։ Իր նման թափառաշրջիկ արկածախնդիրների հավաքագրելով և ստեղծելով սեփական զորք, որի թվաքանակը շուտով հասավ 15 հազարի, նա առանց հապաղելու սկսեց բավարարել իր հիմնական՝ հարկերով ու բռնամիջոցներով լիբանանյան ամիրայությունը ստորացնելու և հնարավորության դեպքում ոչնչացնելու հոգսը (201, 416)։

Եվ իրոք, փաշա նշանակված տարին իսկ բոսնիացին Շիհաբներին վերջնականապես դուրս մղեց Բեյրութից, որ այնուհետև օսմանյան տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում երբեք չներգրավվեց լիբանանյան որևէ իշխանության կազմում և բռնեց անկման ուղին։ Քաղաքում հաստատված դաժան վարչակարգի պայմաններում բռնագրավվեցին դրուզներին պատկանող կայքն ու ինչքը, իսկ մարոնականների համար դասավորվեցին խիստ անբարենպաստ պայմաններ։ Այնուհետև, թեկուզ կարճատև ժամանակով մի քանի անգամ ձեռք բերելով Դամասկոսի փաշայությունը ևս, Ջազզարը 1786-ին ամիրայությունից բռնախլեց Լեռան հացի հիմնական աղբյուրներից մեկը՝ Բիկայայի դաշտավայրը, Բաալբեկի շրջանով հանդերձ, այն որպես սիբահիլիք շնորհելու համար իր հեծելազորի առաջնորդներին (11, 62)։

Իր ներկայությամբ ծովակալ Հասան փաշայից Դրուզների երկրին շնորհված և հետագայում ամեն մի պաշտոնագրում շեշտված հարկադերծումը մի տարի էլ չհարգելով, նա միաժամանակ տարբեր պատրվակներով սկսեց մեծագումար տուգանք պահանջել ամիրայությունից։ 1777-ին, օրինակ, որպես պատրվակ կառչելով Սայդայի շրջանում իր մարդկանց և դրուզների միջև տեղի ունեցած ինչ-որ զինաբախումից, նա ամիր Յուսուֆին պարտադրեց 100 հազար զուրուշի վնասուց հատուցում, իսկ գումարն ստանալու համար Դեյր ալ-Կամար ուղևորված քուրդ Մուսթաֆա աղան վերադարձի ճանապարհին իր 400 ավազակներով ասպատակեց Շուֆի, Մեթնի և Քեսրուանի մի շարք գյուղեր։ Ի դեպ, բոսնիա-

ցին, ինչպես վկայել է Վոլնեյը, հինգ տարում (1776—80) Յուսուֆից միայն որպես հարկագումար կորզեց չորս միլիոն ֆրանկ (192, հտ. 1, 427)։

Սնանկացող իշխանապետը բնականաբար ստիպվում էր նորանոր հարկադրումների ենթարկել իր հպատակներին, հասկանալիորեն բոնամիջոցների օգնությամբ մի կերպ գլուխ բերելով մինչև այդ համարյա որպես կանոն առանց միջադեպերի կատարված հարկահավաքը։ Անհրաժեշտ է նշել, որ ամիրի գործերի կառավարիչ Սաադ ալ-Խուրին, դանայան տակառ դարձած գանձատունը լցնելու նպատակով, ժողովրդից փող քամելու նորանոր հնարքներ էր որոնում։ Ավանդական հողահարկին՝ ամիրայական փողին նա 1775-ին ավելացրեց ջիզիան (192, հտ. 1, էջ 427), որ լիբանանյան լեռնագոտու քրիստոնյաները, ի տարբերություն Օսմանյան կայսրության իրենց կրոնակիցների, մինչ այդ չգիտեին, քանի որ ձևականորեն ոչ թե սուլթանի թրով էին հպատակեցված, այլ ինքնակամորեն էին նրան ենթարկվել՝ պահպանելով իրենց առանձնահատուկ իրավունքները։ Եթե գլխահարկը վերաբերում էր իշխանապետության լոկ քրիստոնյա հպատակներին, որոնք համենայն դեպս առանց հատուկ հուզմունքի ենթարկվեցին այդ նորամուծության, ապա ալ-Խուրիից հղացված մյուս հարկերը՝ անասնահարկը, բոժոժահարկը, ջաղացքահարկը, փաթթոցահարկը և այլն (11, 63), որոնց մի մասը այդպես էլ հնարավոր չեղավ կիրառել, վերաբերում էին բոլոր լեռնականներին անխտիր, հետևաբար և անխուսափելիորեն բախվելու էին բավականին կազմակերպված դիմադրության։

Խուսափելով ամիրայության սոցիալական իրադրությունն իդեալականացնելուց և համաձայնելով Վոլնեյի այն դիտողության հետ, որ Լեռան գյուղացիությունը վերջին հաշվով «ավելի բարեկեցիկ չէր, քան այլուր» (192, հտ. 1, 460), պետք է ասել, որ մինչ այդ ժողովրդական զանգվածների սոցիալական դժգոհանքը ավելի շուտ միախառնվում էր վերնախավային քաղաքական ու տնտեսական հակամարտություններին։ Այդ երևույթը իր օբյեկտիվ պատճառն ուներ հանձին լիբանանյան ագրարային հարաբերությունների առանձնահատկությունների, որոնց վերաբերյալ անհրաժեշտ է այստեղ մի քանի խոսք ասել։

Լիբանանյան ազգաբնակչության հիմնական զանգվածի՝ «աշխատասեր և համբերատար» գյուղացիության ձեռներեցությունն ու շարքաշությունը, թեկուզ չոր հացի ի խնդիր բնության դեմ ամենօրյա պայքարը անխտիր բոլոր ուղեգրողների զարմանքն ու հիացմունքն են առաջացրել։ «Լեռնալանջերին աստիճանաձև հարկավորված «դաշտերը», ուրիշ

տեղերից փոխադրված և պատերի վրա հենվող մի ափ հող իրականում, իրոք որ թշնամական բնությունից են նվաճված,— գրել է մի ճանապարհորդ և շարունակել.— Ջրերը, ժայռերը, փլուզումները, փոթորիկները մշտապես սպառնում են (գյուղացիների) աշխատանքի պտուղին։ Նրանք ամեն րոպե կարող են ականատես լինել բերքի հետ միասին իրենց հողակտորի անդունդ գլորվելուն։ Նրանք քաջաբար մարտնչում են, ճարպիկորեն հաղթահարում կուտակված արգելքները, ուղղություն տալիս հեղեղներին և դրանք բաժան-բաժան անելով վերածում են ջրի բարերար հոսանքների։ Նրանց վերջապես հաջողվում է կյանք տալ և արգասավորել ի բնե ամուլին, այսպիսով իրականացնելով գյուղատնտեսության հրաշքներ, որոնք այս փոքր այլ պարկեշտ ու ճարտար ժողովրդին ապահովում են հպարտ այն անկախությունը, որի սերը պահում է նրան իր լեռներում» (95, 412)։ «Լիբանան մտնելիս մարդ զարմանում է ի տես այն մշակության, որ ամեն կողմ տարվում է քարքարոտ հողերի վրա։ Չկա վարելի և արգասաբեր դարձված ոչ մի թիզ քարքարոտ հող, որ չհերկվի լեռնականների խոփով»,— ընդգծել են Միշոն և Պուժուլան (140, հտ. 6, 138)։ Նրանց համարյա բառացի կրկնել է մի այլ ուղեգրող. «Չկա հողի մի կտոր, որ այս աշխատասեր ու գործունյա լեռնականները օգտագործած չլինեն, եթե կարողացել են այն խլել Լիբանանը կազմող լեռնաժայռերից» (149, 412)։

Լեռներից խլված և նրանց կանաչազարդ աստիճանների տեսք տվող հողահարթակներում հիմնականում մշակում էին որթատունկ, ձիթենի և թթենի, ծառերի ներքո՝ ցորեն և եգիպտացորեն։ Ցորենը ցանում էին նաև ոչ մի կերպ աստիճանավորման չենթարկվող ժայռերի միջև։ Հողի նվաճումը գյուղացու տաժանքի կեսն էր միայն։ Առավել տաժանելին և հատուկ ունակություն պահանջողը հողահարթակի մշակումն էր։ «Հիասքանչ է տեսնել արորի պտույտները նեղ հողահարթակում, ձիթենիների ու թթենիների արանքում,— վկայել է մի ականատես։— Այդ հողահարթակների ամենալայնը առավելագույնը 6, իսկ սովորականը 5 ոտնաչափ են։ Հողահարթակի ծայրը, այնտեղ, որտեղ եզդարձ է կատարվում, շատ հազվադեպորեն 4 ոտնաչափից ավելի է, հաճախ լոկ 3 ոտնաչափ։ Եվ ահա եզները (իրականում գաճաճ եզներ), արորը, մարդը, այդ բոլորը դուրս է գալիս։ Մարդը տանում է արորը, եզները քնքշորեն իրենց եղջյուրները անց են կացնում ծառերի միջով, նրանց չորս ոտները փոխարինում են մեկը մյուսին և շրջադարձը կատարված է» (118, 82)։

Ուղեգրողների շարադրանքից իսկ հեշտ է եզրակացնել, որ Լիբանան լեռան վրա անխուսափելիորեն մեծ տարածում էր ունենալու հողի գյու-

դացիական մանր սեփականատիրությունը։ Թեկուզ մի փոքր ավելի ուշ՝ մեզ զբաղեցնող ժամանակաշրջանի վերջին, երբ «մեծ տոհմերի կործանման շնորհիվ (որոնք հարկադրվում էին վաճառել իրենց ունեցվածքը) փոքր սեփականատերերի թիվը յուրաքանչյուր օր ավելանում էր» (85, 82), ռուսական հյուպատոսի վկայությամբ գյուղացիական ընտանիքների շուրջ 90 տոկոսն արդեն ուներ սեփական (հաճախ համասեփականության հիմունքով) ոչ մեծ հողակտորներ (34, 152)։ Սակայն դրանց առկայությունը ոչ մի դեպքում գյուղացիության քիչ թե շատ բարոր դրության վկայականը չէր, քանի որ հիմնականում ընտանիքի անդամների միջև բաժանման-վերաբաժանման ընթացքում (225, 121) հողակտորներն այնքան էին մանրացել, որ այլևս ի վիճակի չէին մի ընտանիքի տարրական կարիքներն անգամ բավարարելու։

Ուղեգրողների վկայությունից դժվար չէ նաև կռահել, որ «բնությունն ու մշակվող կուլտուրայի բնույթն էին նպաստավորում», առաջին հերթին, հողի կիրառումը մանր սեփականատիրական պատառների։ Եվ իրոք, «թեք լեռնալանջերի վրա հողահարթակներով պահվող հողը բնականից կտրատված է տարանջատ անհամար հողակտորների, որոնց վրա մշակվում են մի ընտանիքի կողմից հեշտությամբ տրվող ամենօրյա խնամքի՝ աշխատանքի ու ոռոգման կարիք ունեցող կուլտուրաներ, հատկապես խաղող, թթենի և ձիթենի» (85, 82)։

Հողահարթակային թե ոչ, մանր սեփականատիրության տարածման աղբյուրներից մեկը,— ինչպես նկատել է Սմիլյանսկայան (43, 33),— եղել է մուղասարա տիպի հողավարձակալումը, որի էությունը հետևյալում էր. հողատերն անմշակ հողամաս էր տրամադրում գյուղացուն, որ այդի էր տնկում և պտղաբերությունից հետո դառնում էր հողակտորի մի մասի (կեսի, քառորդի) և բնակության համար կառուցած տան սեփականատերը, սակայն հենց այդ սեփականատիրության և բերքի սպասելիս ըստ ծառատեսակի 3—12 տարվա ընթացքում կատարած պարտքերի հետևանքով կախման մեջ էր ընկնում ու կապվում ֆեոդալին։ Հողավարձակալման այս տիպը առավել տարածված էր Լեռան կենտրոնական և հարավ-արևմտյան հատվածներում, հատկապես իշխանապետական և Ջումբլաթ տոհմերի կալվածքներում, քանի որ Շիհաբ ամիրներն ու Ջումբլաթ մեծ շեյխերը ջանում էին տնտեսությամբ ու բարեկեցությամբ իրենցից կախյալ գյուղացիության թվաքանակը մեծացնել, հողավարձակալներին հաճախ նպաստավոր պայմաններ ընձեռելով՝ իրենց նվիրյալ գյուղացիական միջին և վերին շերտ ստեղծել։ Ուղեգրող Բուրխարտը որոշ չափազանցությամբ վկայել է, օրինակ, որ

«Նուֆի ամբողջ նահանգը գտնվում է (շեյխ Բեշիր Ջումբլաթի) իշխանության ներքո և նա համասեփականատեր է այն բոլոր դրուզների հետ, որոնք այստեղ հողային սեփականություն ունեն» (64, 196)։ Ուրկուհարտն իր հերթին, չափը տեղը բերելով, նշել է. «Այստեղ չկա մի գյուղ, որտեղ (շեյխ Բեշիրի որդի) Սաիդ բեյը չունենա որոշ սեփականություն», ըստ որում հաճախ՝ գյուղացիների նույնիսկ խղճուկ տնտեսությունների որպես համասեփականատեր (186, հտ. 1, 252)։

Ուղևորներից մեկը, փորձելով բացատրել, թե ինչո՞ւ լիբանանյան լեռներում «օրավարձու (հողամշակ) բանվորները հաղվադեպ են», գիտուկ է նկատել. «Արդարև մարոնական (և ոչ միայն մարոնական, Ե. Ն.) գյուղացին սիրում է աշխատել իր հաշվին. նա նախընտրում է մի քիչ նեղ ապրել իր սեփական հողի վրա, քան թե ավելի շահել ուրիշի համար աշխատելով։ Դա նրա նկարագրի ցայտուն գիծն է... Այստեղից էլ հողի կտրատումը բոլոր ժառանգների միջև։ Հավասարության ցանկությունը այդ կտրատումը ավելի հեռուն է մղում, քան մեզ մոտ, Ֆրանսիայում, որովհետև, ինչպես ասացին ինձ, ամեն մի սեփական արտ, նույնիսկ վարձակալված հողակտոր, բաժանվում է այնքան մասերի, ինչքան որ ժառանգորդներ կան...» (85, 81)։

Հասկանալի է, որ Ֆախրուդ-Դին II-ի օրերից Դրուզների երկիր տեղաշարժվող մարոնականները հիմնականում հրապուրվելու էին մուղասարա տիպի հողավարձակալման հնարավորությունից, որը եթե դրուզ ֆեոդալների համար հողի ձեռներից աշխատողների նոր զանգված ձեռք բերելու (և հեռանկարում նաև դավանակից գյուղացիության սոցիալական խռովքը հակակշռող տարր ունենալու) հարմարագույն, սպա նորաբնակների համար միակ միջոցն էր սեփականատիրական նկրտումները բավարարելու, քանի որ քրիստոնեական շրջաններում, օրինակ՝ Քեսրուանում, «որ բաղաքական տեսակետից ընդհանուր առմամբ նվազ առաջադիմած է, վանքերն այնքան բազմաթիվ են, որ գրեթե ամբողջ հողը նրանց է պատկանում, իսկ մնացածը մինչև անցյալ տարի (1859, Ե. Ն.) շեյխերի ձեռքին էր» (85, 81)։ Դ. Շրվալիեն իրավացի է, անշուշտ, ընդգծելով, որ հյուսիսային լեռնագոտում մուղասարան հաղվադեպ երևույթ էր և այդ իսկ պատճառով ֆեոդալների և հողազուրկ գյուղացիության միջև՝ հակամարտությունն ավելի բուռն (76, 55)։ Վերջին հաշվով մուղասարան հողազուրկների համար գոյապահպանման առավել ձեռնտու միջոցն էր, հետևաբար, որոշ չափով օգնում էր բթացնելու սոցիալական հակասությունները, հատկապես երբ ավատապետերը, հրաժարվելով ընչաքաղցությունից, չէին փորձում օրինական (հիմնա-

կանում գնման) թե անօրինական ճանապարհով արդեն իսկ բերքատու հողամասերից համասեփականատեր գյուղացուն վտարել (186, հտ. 1, 240) և կամ պարտքի դիմաց նրա բաժինը տոկոսայնորեն փոքրացնել։

Գյուղացիության սեփական հողակտորների (երբեմն նաև համասեփականատիրական բաժնի) մանրության, հետևաբար և դրանց բերքի անբավարարության իսկ հետևանքով ամիրայությունում հողօգտագործման առավել տարածված ձևը սովորական հողավարձակալումն էր, որ ավելի ձեռնտու էր ֆեոդալներին, քանի որ հողավարձակալ շուրականները (ընկերակիցները) ոչ միայն բերքի մեկ երրորդից մինչև կեսն էին տալիս հողատիրոջ (186, հտ. 1, 211), այլև մեծամասնությամբ աստիճանաբար վերածվում ահել սամիյայի կամ անվանակից մարդկանց (200, 45 և 51)։ Վոլնեյի վկայությամբ «գյուղացիները մի տեղի բռնադատված չլինելով» (192, հտ. 2, 251), այլ խոսքով ճորտատիրական իրավունքի անգոյության պայմաններում, օգտվելով այն փաստից, որ ավելի հաճախ «վարձակալումը հորից փոխանցվում էր որդիներին, որոնք սերնդից սերունդ մնում էին ֆեոդալի մոտ», վերջինս «ջանում էր սովորության ուժով նրանց ամրապնդել իր հողին» (85, 81), վերածել իրեն անվանակից, այլ խոսքով իր անունով ճանաչվող մարդկանց, որոնց ինքնակամ տեղափոխման դեպքում նույնիսկ միջֆեոդալական արյունալի բախումներ էին առաջանում (4, գ. 736, թ. 229)։ Անվանակից դարձած հողավարձակալ ընկերակիցները պարտավոր էին տոն օրերին մթերք հայթայթել ֆեոդալին, ուղեկցել նրան ճանապարհորդությունների ընթացքում, շինարարության դեպքում կատարել տարապարհակ աշխատանք, այդ թվում հայթայթել քար, գերան ևն, փոխարենը միայն ընթրիք ստանալով (80, հտ. 2, 285)։

Ամիրայության ազգաբնակչության առավել թշվառ խավն, անկասկած, հողազուրկ և հողավարձակալման որևէ հնարից էլ զրկվածներն էին, որոնք ավելի թվաշատ էին հյուսիսային լեռնահատվածում։ Այնտեղ, Կատիշա գետի աջ ափին, օրինակ, ակադեմիկ Միշոն տեսնելու էր «բազմաթիվ քարայրներ, որոնք բնակված էին աղքատ ընտանիքներից»։ «Ամուսինը, կինը, երեխաները և այծերը նույն քարայրում են ապրում»,— հաստատելու էր ուղեգրողը (140, հտ. 6, 400)։

Ազգաբնակչության հիմնական զանգվածով գերազանցապես գյուղացիական երկրամաս, ժամանակակից Լիբանանի հողատարածությունը իր ֆիզիկական-աշխարհագրական իրավիճակով չէր կարող լինել և երբևէ էլ չի եղել գերազանցապես գյուղատնտեսական։ Պարադոքսային այդ հանգամանքն, անշուշտ, զուգորդվելով օսմանյան իշխանություն-

ների նկատմամբ վարչաքաղաքական որոշակի ինքնուրույնություն թե հարկային նկատելիորեն առանձնահատուկ վիճակ վայելող ամիրայության կենսունակության փաստին, նաև դրուզական միջավայրից սկսելով համալիբանանյան դառնալու միտող ավատատիրական առանձնահատկություններին, տարբական բարօրության հողի վրա որոշակի առավելություններ էր տալիս լիբանանցիներին՝ Սիրիայի մյուս հատվածների աշխատավորության հետ համեմատած։ Ամիրայության ներքին թե արտաքին յուրահատուկ պայմաններից նպաստավորվող տնտեսական բավականին ծաղկուն վիճակը չէր կարող որոշապես պարտական չլինել արտադրողական ուժերի զարգացման աստիճանաչափի և արտադրական հարաբերությունների բնույթի մեջ արձանագրված փոփոխությունների ակնբախության, որոնք էլ Լիբանան լեռան ֆեոդալական հասարակության սոցիալական կառուցվածքի մեջ նկատելի տեղաշարժերը անխուսափելի էին դարձնում։

Լիբանան լեռն ամբողջությամբ, նաև հարակից ծովափնյա շերտը, ի վաղուց անտի հայտնի էին որպես այգեգործության և տեխնիկական կուլտուրաների մշակության կենտրոններ։ Եթե զանց առնենք հացահատիկներին (ցորեն ու գարի), լոբազգիներին (հատկապես բակլա և սիսեռ) և բանջարեղենին տրամադրվող ոչ-մեծ հողակտորները, ապա կարող ենք պնդել, որ մշակելի հողերը հիմնականում վերապահված էին ձիթենուն, որթատունկին, թթենուն, ծխախոտին ու քնջութին։ Ձիթապտուղ, խաղող, թութ ու թուզ, նաև բանջարեղեն, մի քիչ էլ հացահատիկ և ընդեղեն. ահա մոտավոր ցուցակն այն մթերքների, որ լիբանանցին քրտնաջան աշխատանքով կարող էր քամել իր ժլատ հողից, չհաշվելով խոզկաղինն ու շոճու կոնը, բնության ինքնակամորեն տված այդ «պարգևները», որոնցից առաջինը երաշտի ու սովի ժամանակաշրջանում միայն ծառայում էր որպես սննդի հիմնական աղբյուր, իսկ երկրորդը ավելին լինել չէր կարող, քան տոնական ճաշատեսակների համար «զարդարանք» (192, հտ. 2, 256)։ Այլ խոսքով հացահատիկների (այդ թվում բրնձի և եգիպտացորենի), մսամթերքների, շաքարեղենի, ընդեղենի ու կենսական այլ բաների հիմնական մասը, զանց առնելով Բիկայայի դաշտավայրից ու Մթուալլիների երկրից մատակարարվող բաժինը, ներմուծվում էր, այն էլ՝ որքան ներքին Սիրիայից, նույնքան Եգիպտոսից (տե՛ս 39 և 40)։ Բնականաբար խոշոր չափերի ներմուծումը բնատնտեսական հիմունքով գլուխ գալ չէր կարող, հետևաբար ապրանքափոխային հարաբերություններն անխուսափելիորեն հարաբերաբար վաղ բնութագրական էին դառնալու լիբանանյան տնտեսության համար։

Ժլատ լեռնալանջերից քամվող մթերքների ցուցակը, թեկուզ և վտիտ, վկայությունն է այն մասին, որ գյուղատնտեսության ասպարեզում անպայմանորեն զարգացում պետք է ապրած լիներին շերամապահությունը, գինեգործությունը, ծխախոտագործությունը, ձեթի ու թահինի արդյունահանումը, օճառագործությունը են, որոնք ոչ միայն առանձին գյուղացիների տնտեսության, այլ հաճախ բավականին խոշոր չափերի, հետևվարար որոշապես մասնագիտացած (ճիշտ է, ավելի շուտ ֆեոդալական և վանական) տնտեսությունների շրջանակներում էին կենտրոնացած։ Եվ քանի որ սրանց արտադրանքը, բացահայտորեն գերազանցելով տեղական՝ բուն արտադրողների ու ներքին բնատնտեսական շուկայի պահանջարկը, որպես ապրանք բնականաբար պիտի արտահանվեր երկրի սահմաններից դուրս, ապա ապրանքափոդային հարաբերությունները լրացուցիչ խթան էին ստանալու։ Հենց այդ հարաբերություններն էլ անխուսափելի էին դարձնելու XVII—XVIII դդ. սահմանագլխին արդեն Լիբանան լեռան մասնագիտացումը մետաքսահումքի արտադրության ասպարեզում, մանավանդ որ թթենին, լիբանանյան բնական կլիմայական պայմաններին հարմարված ծառատեսակ, Չինաստանից վերադարձած բյուզանդական վանականների շնորհիվ դեռ վաղ միջնադարից հայտնի էր որպես մետաքսահումքի ձեռքբերման հիմնական աղբյուր։ «Լեռան գլխավոր արտադրանքը մետաքսն է»,—ընդգծում էր մի ուղեղրող (152, 378)։

Լիբանանյան լեռնային շրջանների մետաքսահումքի շուրջ կեսը, բնականաբար վատորակը (118, հտ. 3, 309), մշակվում էր տեղում, տնայնագործ գյուղացիների կողմից, իսկ մյուս կեսն արտահանվում էր Հալեպի, Դամասկոսի և Կահիրեի, մասամբ նաև Ֆրանսիայի (առաջին հերթին Լիոնի) մետաքսի արհեստագործարանների համար (4, գ. 718, թ. 114)։ Սահել Բեյրութում, որտեղ գերակշռողը խոշոր հողատիրական տնտեսություններն էին ու մյուս կողմից գյուղատնտեսական աշխատանքներն էլ ավելի քիչ ժամանակ էին թողնում տնայնագործության, արտադրվող մետաքսահումքի արտահանվող բաժինը ավելի մեծ էր, անշուշտ (104, հտ. 1, էջ 55)։ Ապրանքայնացող մետաքսահումքն էլ, որպես կենսականորեն անհրաժեշտ մթերքների և իրերի գնման առաջին աղբյուր, չէր կարող չդառնալ լիբանանյան գյուղատնտեսության գլխավոր արտադրանքը։

Սակայն հիմնականում բնատնտեսական մնացող լիբանանյան գյուղում, որի բնակիչներին, հարկերից բացի, հաճախ հնչուն փող էր անհրաժեշտ նաև առաջնայնորեն պիտանի շատ բաների համար, ապրան-

քայնացող մետաքսահումքը ինքնաբավություն տալ չէր կարող, հետևաբար, առանց այդ էլ ֆեոդալական արտադրահարաբերությունների ոստայնում խճճված, լեռնականները XVIII դարավերջից, հարկային լծի ծանրացման զուգընթաց, ավելի ու ավելի էին ընկնելու բուրժուականացող տարրերի վաշխառուական գործարքների ցանցի մեջ։

Եվ փաստորեն Ջաղզարի հարկատուգանային կամայականությունների պայմաններում ամիր Յուսուֆ Շիհաբի կողմից հարկադրաբար անցկացվել սկսած հարկային նորամուծություններն էին, որ լիբանանյան լեռների դրուզական հատվածի սոցիալական առօրյային 1780-ական թթ. դաջեցին մինչ այդ որոշակիորեն դարազիական համայնքի առանձնահատկություններից արգելակվող մի նոր երևույթ՝ գյուղացիական շարժումները։

1780-ին Լեռան վրա սկսեցին գյուղացիական հուզումներ, որոնցից փորձեցին օգտվել ամիրի հակառակորդները, սակայն պարտություն կրեցին։ Սկզբնաղբյուրներում սոսկ որպես փաստ, առանց որևէ մանրամասնության արձանագրված այդ հուզումներից հետո, սակայն, իրադրությունը շարունակեց սրվել։ Աշ-Շիդիակի հաղորդմամբ, իշխանապետը 1782-ին «առաջին անգամ լինելով հաստատեց թթենու հարկը, օգտագործվող յուրաքանչյուր ուկկիա շերամասերմից պահանջելով հինգ ղրուշ»։ Յուսուֆի իշխանատենչ եղբայրները առիթից օգտվելով, ոտի հանեցին ջումբլաթիներին, որոնք իրենց մեծաթիվ հետևորդներով աշխարհաժողովի հավաքվեցին Սոմկանիյյայում և որոշեցին չենթարկվել նորամուծության։ «Ապա,— ըստ ժամանակագրի,— նրանք շարժվեցին Դեյր ալ-Կամարի վրա՝ մտադրած լինելով պաշտոնազրկել ամիրին և սպանել նրա քեխիա շեյխ Սաադին։ Նրանք սկսեցին աղմկել, կրակել, գոռալ ու գոչել։ Ամիրը մարդ ուղարկեց նրանց հաղորդելու հարկի վերացման մասին։ Այդ ժամանակ նրանց հուզումը հանդարտվեց, զայրույթն իջավ և յուրաքանչյուրը գնաց իր բնակավայրը»։ Երկու տարի անց իշխանապետը փորձեց պարտադրել շաշիայի կամ փաթթոցի հարկը, յուրաքանչյուր տղամարդուց պահանջելով 2 ղուրուշ։ Դարձյալ աշ-Շիդիակի հաղորդմամբ, «նա ամիր Մուրադ Մանսուրին հարկահավաքի հանեց։ Մարդիկ հրաժարվեցին և Խան ալ-Հասինում հավաքվելով միաբանեցին չվճարել։ Նրանք Շուեյֆաթից հալածեցին ամիր Մանսուրին և ստորացրեցին նրա ծառաներին» (201, 409—410)։

Ջաղզարի նվաստացումներից ազատվելու, նրա հարկային սանձարձակ պահանջներին վերջ տալու ու դրանով իսկ սեփական իշխանապետության ներքին իրադրությունը բարելավելու միակ միջոցը լիբանան-

յան աշխարհազորի ամուր բռունցքը գործի լծելն էր։ Բռունցքը ցուցադրելու անակնկալ դաշնակից էլ էր հայտնվել՝ հանձին հոր եղերական վախճանից հետո Սիրիայում մնացած Ալի բին Ջահիրի։ Վերջինս, որ իր խիզախ գործողությունների շնորհիվ շուրջն էր համախմբել Ջազզարի բռունությունից դժգոհ բոլոր տարրերին, հատկապես Նաբլուսի շրջանի լեռնականներին և Սայդայի գոտու մթուալլիներին, հաջողապես շարունակում էր հակաթուրքական պայքարը։ Նա առաջին իսկ օրից ամիրին առաջարկել էր վերանորոգել հոր հետ կնքված նախկին դաշինքը և միասնական ուժերով երկրամասից վերացնել բոսնիացուն։ Յուսուֆը, սակայն, հարազատ եղբայրների մնքենայությունների ու աշխուժացող գյուղացիական ելույթների դեմ իր պայքարով տարված, նույնիսկ չէր էլ արձագանքել առաջարկին, իսկ մենակ մնացած շեյխ Ալին էլ նենգությամբ սպանվել էր Դամասկոսի փաշայից ուղարկված դավադիրների ձեռքով։

Պետք է ասել, որ իշխանապետության իրավիճակն ու անձամբ Յուսուֆի իշխանությունն անկայուն պահելու հարցում Ջազզարը տաղանդավոր սադրող դերս եկավ՝ աննախընթաց խորությամբ երկպառակելով Շիհաբների իշխանապետական ճյուղը և ամիրի դեմ ցցելով իր հարազատների, հատկապես եղբայրների՝ Սաադ ադ-Դինի և էֆենդիի ապրստամբության խրտվիլակը։ Վերջիններս, տակավին 1777-ին, առիթ քաղելով իշխանապետությունից պահանջվող տուգանքը հարկատուների վզին փաթաթելու ձգտող իրենց եղբոր դեմ ժողովրդական դժգոհությունից, առաջին լուրջ դավադրությունը նյութեցին, սակայն իշխանապետին հաջողվեց գահը պահպանել՝ իր իսկ ձեռքով դլխատելով հարազատներից մեկին (11, 63)։ Բոսնիացին Լեռան իշխանապետական տոհմի երկպառակությունները միահյուսեց նաև Ուադի աթ-Թայմի Շիհաբների առանց այդ էլ բուռն գզվռտոցը։ Նա մթուալլիական Մերջ Այունն, օրինակ, շնորհեց Հասբայայի ամիր Իսմայիլին, իսկ կարճ ժամանակ անց Յուսուֆին կարգադրեց շրջանը վերցնել իր իշխանության ներքո։ Այդ առթիվ իշխանապետի եղբայրը միացավ ամիր Իսմայիլին և, անշուշտ, ոչ առանց Ջազզարի հրահրման, շարժվեց Դեյր ալ-Կամարի վրա։ Յուսուֆը փախավ Քեսրուան, իսկ գահը մնաց հակառակորդներին։ Հակառակ այն իրողության, որ վերջիններս կես միլիոն զուրուշ էին խոստանում գահընկեց ամիրի գլխի համար, Յուսուֆը կրկնակին վճարելով, Աքայի փաշայի մաղրիբական ջոկատներով եկավ վերստանձնելու իր աթոռը և արյունալի հաշվեհարդար տեսնելու իր մրցակից հարազատների հետ (11, 63)։

Ջազզարը չմոռացավ նաև Զահիրի գլխավոր աջակից մթուալլիներին։ 1785-ին նա իր 15 հազարանոց զորքը նետեց Սայդայից մինչև Աքա ձգվող երկրամասի դեմ։ Մթուալլիների կատաղի դիմադրությունը դաժանորեն ճնշվեց Նասիֆ Նասսարի զոհվելուց հետո միայն։ Կենդանի մնացած շեյխերն ապաստան որոնեցին Դրուզների երկրում, որտեղ, կարճ ժամանակ անց, Յուսուֆի կողմից գերվելով հանձնվեցին Աքայի տիրոջ։ Հերթը հասավ նաև Բաալբեկի շրջանի մթուալլիներին, որոնք, Դամասկոսի Դերվիշ փաշայի կողմից Բանու Հարֆուշ ամիրների հալածումից հետո, առանց այդ էլ ենթարկվել էին ջազզարյան հեծելազորի բռնություններին։ Այստեղ, նշենք, որ ամիր Յուսուֆից Բանու Համադեներին հասցված հարվածից հետո Նասիֆ Նասսարի և Բանու Հարֆուշների մանրիշխանության վերացումը լիբանանյան հողատարածքում մթուալլիների աննախընթաց ետընթացի պատճառը հանդիսացավ։

1788-ին Ջազզարը Յուսուֆից պահանջեց 300 հազար զուրուշի հետևյալ մի պարտք, որի համար մինչ այդ Աքա պատանդ էր տարել Սաադ ալ-Խուրիին։ Աքայի միջնաբերդում խորհրդավոր պայմաններում մահացած հոր փոխարեն քեխիա կարգված Ղանդուր ալ-Խուրիի խորհրդով, իշխանապետը փորձեց օգտվել իրենց տիրոջ դեմ բոսնիացու մամլուքների բարձրացրած խռովությունից և իր տիրույթին վերստին անդորրություն ու ամբողջականություն ապահովելու համար զենքի դիմեց։ Ժամանակը, սակայն, պատեհ չէր նման քայլի համար։ Արտաքին դաշնակիցներից զրկված և ներքին երկպառակություններից հյուծված, Յուսուֆը նախ Քաբ-Իլիասի, ապա Մերջ Այունի ճակատամարտերում պարտություն կրեց։ Ջազզարի զորքերը ներխուժեցին լիբանանյան լեռնագոտի։ Իշխանապետությունը, դեպի անխուսափելի կործանում իր սահանքից փրկվելու համար, կարիքն ուներ ուժեղ մի նոր գործչի։ Այդպիսին էր լինելու Յուսուֆի զարմիկի որդին՝ քսանամյա Բեշիր II Շիհաբը, որին, 1788-ի խառնակ այդ օրերին, Ջումբլաթների գլխավորությամբ ապստամբած և Յուսուֆին հրաժարեցրած ազնվականությունը, ժողովրդային աշխարհազորի համամտությամբ, ընտրեց իշխանապետ։

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՎԱՐՏԸ

Բեշիր II-ը, եթե նրան դիտելու լինենք առարկայական պատմագրողի դիրքերից, լիբանանյան անցյալի ամենապարզ ու ամենից հեշտ ընկալվող դեմքերից մեկն է։ Պատմության թատերաբեմ նրա ներխուժումը, կարճատև միջնարարներով նրա ավելի քան կեսդարյա փոթորկոտ գերակատարումը և ամիրայության վրա օսմանյան մթաստվեր վարագույրի իջնելու նախօրյակին նրա թավալգլոր հեռացումը՝ համարյա օրագրային հստակությամբ մատչելի են ամեն մի հետազոտողի։ Մյուս կողմից, սակայն, նրա մարդկային թե իշխանապետական դիմագծի արտակարգորեն բարդ նրբերանգները կարող են ապակողմնորոշել ամենից քաջատեղյակ լինել հավակնող ուսումնասիրողին անգամ։ Արևելյան-արաբական բնածին պարզությունից ու պարզամտությունից մինչև օսմանյան-թուրքական սստիճանավոր վերնաշերտից վարպետորեն յուրացված պերճապաշտության ու նենգության, մանկավայել բարությունից ու ներողամտությունից մինչև ըստ պարագայի արյունարբու դաժանության ու անհանգչելի քինախնդրության, իշխանապետական մեծահոգությունից և իշխանական առատաձեռնությունից մինչև հանգամանքների բերմամբ բռնատիրական անտեղիտալիության և վաշխառուական գծությունի միջև վերիվայրող և այլ բազմաբնույթ ու միշտ տրամագծորեն հակոտնյա այդ նրբերանգները պատճառ են դարձել, որ Բեշիր II-ը ինչպես ժամանակակիցների, այնպես էլ ժամանակով մերձավորների թե հեռավորների կողմից արժանանա իրարամերժ գնահատականների։

Ավելի քան կես դար տևեց նրա իշխանապետությունը, սակայն այդ ընթացքում նա բազմիցս հարկադրվեց այս կամ այն ժամանակով լքել իր աթոռը՝ կա՛մ արկածախնդիր Ջազզարից համառորեն հալածված, կա՛մ օսմանյան կառավարությունից իր ինքնագլխության համար խարանված, կա՛մ հավակնորդ փառամոլ հարազատների դավադրությամբ տեղահանված, կամ էլ իր հպատակների՝ ծանր հարկերի դեմ ընդվզու-

մից հետապնդված։ Ամեն անգամ էլ, սակայն, նա կարողացավ վերադառնալ իր նստավայրը և քայլ առ քայլ ամրապնդել իշխանապետությունը՝ արտաքին բարդ իրադրության պայմաններում վարելով բավականին ճկուն դիվանագիտություն, ամրողջացնելով լիբանանյան հողատարածության վերախմբավորումը և ավարտին հասցնելով ամիրայության կազմավորման ընթացքը։ Այդ ճանապարհին, իբր թե ի միջի այլոց, այլ իրականում հեռուն սևեռված հայացքով, նա ըստ կամս խորացրեց համայնքների փոխներթափանցման ընթացքը (թեկուզ և հարկադրաբար տուրք տալով մարոնականների դիրքերի ամրապնդման), ջախջախեց ավատապետական կենտրոնախույս խմբավորումները (թեկուզ գոնե ձևական-պաշտոնականորեն իր՝ դրուզական համայնքի երդվյալ ու ատելի թշնամու տհաճ դրության մատնվելով) և իր միանձնյա իշխանության պայմաններում սահմանափակեց ֆեոդալ աղնվականության կամայականությունները (թեկուզ, որպես գերագույն ավատապետը լիբանանյան լեռներում, չկարողանալով կողմնորոշվել և դրականորեն ընկալել նոր, կապիտալիստական արտադրահարաբերությունների՝ իր համար չափազանց բարդ հանգուցակապերի օդտավետությունը)։

Հորը վաղ կորցրած տպագա իշխանապետն իր ավագ եղբոր՝ Հասանի հետ, թշվառ մանկությունից հետո (117, 151—152), պատանեկությունն անց էր կացրել Դեյր ալ-Կամարում, ամիր Յուսուֆի ծառայության մեջ, ամուսնանալու համար նրա հասբայացի քեռու հարուստ այրու՝ Շամսի հետ, որից էլ ծնվելու էին իր երեք որդիները՝ Կասեմը, Ամինն ու Խալիլը։ Ի բնե խիստ ընդունակ ու վճռական, նաև խորամանկ ու դաժան, Բեշիրը պալատում հանգուցվող աղնվականական մեքենայությունների իր եռանդուն մասնակցությամբ շուտով գրավել էր իշխանապետի հակառակորդների, առաջին հերթին Ջումբլաթների ուշադրությունը և դրա համար էլ մեծ իշխանի գահին իր՝ քսանամյա երիտասարդի թեկնածությունը հակառակամտող չէր գտել։ Չէ՞ որ Քֆար Նաբրահում դաղտնի մի ժողովի ընթացքում դրուզների շեյխ ալ-ուքքալ Հուսեյն Մադին, Բեյթ ադ-Դինի խալվայի պետ (սեյիս) շեյխ Հասան Ուարդը և շեյխ Կասեմ Ջումբլաթն ու նրա Բեշիր որդին արդեն իսկ իրենց օրհնությունն էին տվել նրան (77, 37—38)։

Ջազզարի համաձայնությամբ 1788-ին ընտրված Բեշիր II-ը իշխանապետական պաշտոնին հաստատվելու արարողության ժամանակ Աքայի տիրակալից առնաուղական-մաղրիբյան երկու հաղարանոց մի գունդ և կարգադրություն ստացավ ամիր Յուսուֆին ձերբակալելով փաշային ուղարկելու, առնվազն նրան դրուզական լեռներից հալածելու (11, 65)։

Երկու ախոյանների Անուտի (Շուֆ) զինաբախումը 1789-ին վճռվեց հօգուտ Բեշիրի և Յուսուֆը, փախչելով Հաուրանի դավանակիցների մոտ, հաջորդ տարի անակնկալ կերպով հայտնվեց Աքայում և Ջազզարին առաջարկեց 600 հազար ղուրուշի տարեկան կանխիկ հարկագումար, պայմանով, որ աթոռն իրեն վերադարձվի։ Բոսնիացին սիրահոժար համաձայնեց, սակայն իր լրտեսների միջոցով իրադարձություններին իրազեկ պահված Բեշիրն ինքն էլ շտապեց Աքա և տարեկան հարկագումարի դրույքը մեկ միլիոն երկու հարյուր հազարի բարձրացրեց։ Իսկ ահուրդում հաղթականը բնականաբար միշտ էլ առավելագույնը վճարողն է եղել։ Բազիլին, որ դեպքերից շուրջ կես դար անց Յուսուֆի՝ Բեշիրի կողմից կուրացված կրտսեր որդի Սալմանի հաղորդումներն է լսել, պնդում է, որ Բեշիրը 1791-ի ապրիլին պահանջել է մահապատժի ենթարկել նախկին իշխանապետին ու նրա գործերի կառավարչին, իսկ ապա, հանգստացած, Աքայի բերդից դուրս է եկել իր ազգականի դիակը տրորելով (11, 73 և 65։ 75, 214։ 229, 227)։

Ինչպես վկայել է ժամանակագիրը, նորընտիր իշխանապետի դաժանությունը ցնցեց Դրուզների երկիրը (11, 85)։ Յաղբեկիների գլխավորած ժողովրդական ապստամբության պայմաններում ջումբլաթիներից ու նույնիսկ իր թիկնապահ գնդից լքված, Բեշիրը հարկադրվեց ապաստան որոնել Սայդայի օսմանյան կայազորի մոտ, իսկ աթոռակից իշխանապետեր ընտրվեցին Հայդար և Կաադան Շիհաբները։ Բացառված չէ, անշուշտ, որ հակաբեշիրյան պոռթկման գործում դեր ունեցած լինի նաև սոցիալական դժգոհությունը, քանի որ, ինչպես վկայել է աշ-Շիդիակը, նախորդ՝ 1790 թվականին, իշխանապետի կողմից ջազզարյան օժանդակ ջոկատների ուղեկցությամբ առաքված հարկահավաքներին դիմված դիմադրություն է ցույց տրվել. «Մեթնի ազգաբնակչությունը միաբանեց երկրի մնացած ժողովրդի հետ, որպեսզի դիմադրություն ցույց տան Ջազզարի զինվորներին» (201, 429)։

Բեշիրը չորս-հինգ տարի հետու մնաց իշխանապետությունից։ Ճիշտ է, 1791-ին բոսնիացին նրան զորք տրամադրեց, սակայն լեռնականների կատաղի դիմադրությունը ընկճել հնարավոր չեղավ։ Զօգնեց նույնիսկ այն, որ 1793 երաշտ տարում Ջազզարը տնտեսական շրջափակման ենթարկեց Լեռը և խափանեց հացահատիկով բեռնավորված նավերի առաջխաղացքը դեպի Բեյրութ։ Դրուզները նախընտրեցին ամբողջ դյուղերով սովամահ լինել, քան թե հաշտվել Բեշիրի վերադարձի հետ։ Հյուսիսային լեռնագոտու նուսեյրիների մոտ հատատված ամիրը, սակայն, ձեռնածալ չնստեց։ Իր գործակալների եռանդի շնորհիվ նա վերջ-

տին սիրաշահեց ջումբլաթիներին, նրանց արյունահեղ մարտի հանեց յազբեկիների դեմ և օգտվելով Լեռան խռովահույզ իրավիճակից, Աքայի մաքլուքների օգնությամբ 1795-ի հունիսին գահը վերագրավեց։

Համոզված, որ ավատապետական կենտրոնախույս տարրերի առկայության և ֆեոդալ-ազնվականության երկպառակությունների պայմաններում իշխանապետական իր աթոռը չի կարող հաստատուն լինել, շուրջ երկու տարի դիրքերն ամրապնդելով և ապահովվելով ջումբլաթիների նվիրվածությամբ, Բեշիրը 1797-ի փետրվարին առաջին հարվածը նրանց իսկ ձեռքով հասցրեց Աբու Նակիտ մեծ շեյխական տոհմին, որ Յուսուֆի որդիների հետ դավադրում էր իր դեմ։ Բազիլին թյուրիմացությամբ առաջին հարվածն ուղղված է տեսել յազբեկիների դեմ ընդհանրապես (11, 66)։ Նույնքան անհավանական պիտի համարել Սալիբիի այն պնդումը (37, 26), որ Աբու Նակիտների հաշվեհարդարը իբր տեղի է ունեցել ջումբլաթիների և յազբեկիների համատեղ գործունեությամբ։ Իրականությունն այն է, որ ֆեոդալական երկու հակամարտ խմբավորումների գինարբաբումներում համարյա որպես կանոն չեղոք մնացող Աբու Նակիտ տոհմը հեշտագույն թիրախը դարձավ դրուզ երևելիներին ասպարեզից դուրս մղելու Բեշիրի գործողությունների սկզբնակետում. հինգ չափահաս եղբայրներն ու նրանց արու զավակները (բացի երկուսից, որոնք իրենց մոր կողմից փախցվեցին նախ Դամասկոս, ապա Աքա) թրատվեցին (230, հտ. 6, 158—163), Դեյր ալ-Կամարում նրանց ապարանքը քարուքանդ արվեց և ոչ միայն վերացվեց տոհմի մանրիշխանական իրավունքն իր տիրույթի վրա, այլև սեփական կալվածքներն էլ բռնադրավվեցին ու շնչին գներով վաճառվեցին Ջումբլաթ և Ուքեյլի տոհմերին՝ իբր յոթ տարվա հետևյալ հարկագումարը գանձատուն հասցնելու բծախնդրությամբ (30, հտ. 3, 150—151)։

Իր վասալների՝ դրուզ ֆեոդալ-ազնվականության դեմ ամիր Բեշիրի այս և հետագա արյունալի միջոցառումների էությունը ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ է, որ այստեղ մի փոքր կանգ առնենք լիբանանյան ամիրայությունում հողային, հատկապես դրուզական ֆեոդալական հարաբերությունների յուրահատկությունների վրա։

Օսմանյան կայսրության շրջանակներում լիբանանյան ամիրայության յուրօրինակ գոյավիճակի, հետևաբար և Դրուզների երկրի մեծ իշխանի առանձնահատկության գլխավոր հայտարարը լիբանանյան լեռներում առկա՝ ամբողջ հողի մասնավոր սեփականատիրությունն էր։ Սիրիայում,— դիտել է Վոլնեյը,— ազգաբնակչությունը հողատիրական իրավունք չունի։ «Ենթահարկային երկրներում»,—շարունակել է ուղե-

գրողը, հիշատակելով սոսկ գրուղաբնակ և մարոնաբնակ շրջանները,— «գոյություն ունի իրական սեփականատիրություն, հիմնված՝ սովորությունների վրա, որոնք փոքր իշխանները չեն համարձակում ոտնահարել։ Բնակիչներն այնքան կապված են իրենց ունեցվածքին, որ հողի վաճառք գրեթե չես տեսնի» (192, հտ. 2, 248)։ Շուրջ ութ տասնամյակ անց, մեզ զբաղեցնող ժամանակաշրջանի վերջում, հակառակ փոքրաքանակ վերիվայրումներին, որոնք հանգեցրել էին ամիրայության վերացման և Լիբանան լեռան վրա օսմանյան ուղղակի տիրապետության հաստատման, լիբանանյան առանձնահատկության այդ հայտարարը անխաթար էր մնացել։ «Լիբանանյան քաղաքացիական և քաղաքական կազմակերպության հիմքը՝ (հողի մասնավոր) սեփականությունը... բարեբախտաբար հիմնված է Օսմանյան կայսրության մնացած բոլոր մասերից տարբեր մի սկզբունքի վրա։ Մինչդեռ մյուս բոլոր երկրամասերում սուլթանը համարվում է հողի միակ օրինական տերը, բնակիչները լինելով պարզ հողօգտագործողներ, ֆիկցիա, որ հաճախ փոխակերպվում է շատ իրական չարաշահությունների, այստեղ ընդհակառակը, Սելիմի կապիտուլյացիաները յուրաքանչյուրին երաշխավորում են իր հողի ազատ և բացարձակ սեփականատիրությունը։ Այս բանը, զուգորդվելով այն անվտանգության ու հարաբերական անկախության հետ, որ վայելել է Լիբանանը, թույլ է տվել սեփականության ավելի ամրորեն հաստատվել, քան Սիրիայի մնացած մասում»,—1860-ին ընդգծել է ֆրանսիացի մի ուղեգրող (85, 80—81)։

Եվ իրոք, լիբանանյան լեռներում և դրանց մշտապես աղերսված հողատարածքում (առաջին հերթին Ուադի աթ-Թայմում) մշակելի բոլոր հողերն անմիջական սեփականատերեր ունեին։ Մեծամասնությունը պատկանում էր մուլք իրավական կատեգորիային, այլ խոսքով ազատորեն օտարելի մասնավոր սեփականություն էր։ Նույնպիսին էին նաև բակալիկ (բելլիկ) հողերը՝ կառավարող իշխանապետին պատկանողները։ Վակուֆ հողերը եկեղեցուն, հոգևոր և բարեգործական հիմնարկություններին նվիրաբերված մուլքեր էին։ Մառաթ, այն է՝ մեռյալ հողերը վերածվում էին մշակողների մուլքի։ Մուշա համայնական հողերը միայն արոտավայրեր ու անտառներ էին և ոչ երբեք մշակելի հողեր (բացի Բիկաայից)։ Միրի կամ պետական հողեր լիբանանյան իրականության մեջ գոյություն չունեին (տես 43, 50 և 224)։

Բնականաբար հողատիրության իրավական այդ կատեգորիաներն իրենց անվանումներով հիմնականում կրկնում էին օսմանյան հանրահայտ կատեգորիաները, սակայն ամիրայությունում իրական բովանդա-

կության տեսակետից դրանց առանձնահատկությունը նրանում էր, որ իշխանապետը առ ոչինչ համարելով ամբողջ կայսրության հողերի նկատմամբ սուլթանի գերագույն անվանական սեփականատիրությունը, ըստ էության իր իսկ գերագույն սեփականատիրական իրավունքն էր պարտադրում, ինչպես սրատեսորեն նկատել է Ամիլյանսկայան (43, 23)։ Անհրաժեշտ է, սակայն, ընդգծել, որ իշխանապետը ավելի շուտ հանդես էր գալիս հողի մասնավոր սեփականատիրության նվիրագործված ինստիտուտի գերագույն վերահսկիչի ու կարգավորողի դերով, եթե կարելի է այսպես ասել՝ հենց այդ ինստիտուտի անխախտելիությունը երաշխավորողն էր։ Եվ այն փաստն էլ, որ ամիրը քաղաքական հանցագործությամբ խարանված ամեն մի մասնավոր սեփականատիրոջ կարող էր ունեզրկել և ունեզրկում էլ էր, ոչ թե հերքումը, այլ հաստատումն էր այդ իրողության, քանի որ ունեզրկումը որպես կանոն կրում էր ժամանակավոր բնույթ և ավարտվում էր նախկին սեփականատիրական իրավունքի վերականգնմամբ։

Սրբագործված այդ կանոնի առաջին լուրջ խախտումը կատարվեց 1711-ի Այն Դարայի ճակատամարտից անմիջապես հետո, երբ հաղթական Հայդար Շիհաբը, իր տոհմին Մաաններից փոխանցված իշխանապետական աթոռը խարխլելու հետագա փորձերը կանխարգելելու նպատակով, Դրուզների երկրի (ու նրան հարած նոր շրջանների) վարչակառավարումը վերաձևավորելու գործին ձեռնարկելիս՝ կործանված կամ հալածական դարձած իր հակառակորդ աղնվականների մասնավոր սեփականությունը հանդիսացող ընդարձակ հողեր որպես մուլք նվիրաբերեց իր աջակիցներին։ Այդ խախտումը, սակայն, պիտի ոչ իսկ բացառություն համարել այն պարզ պատճառով, որ իշխանապետության կյանքում փաստորեն տեղի էր ունեցել խոշորագույն շրջադարձերից մեկը՝ արյունոտ հեղաշրջում, որի օգնությամբ իշխանապետական աթոռին հայտնվել էր նոր դինաստիա, որն էլ բացառիկ իրադրության մեջ դիմում էր բացառիկ, այլ կենսականորեն անհրաժեշտ միջոցառման։ Պետք է նաև ընդգծել, որ հենց Հայդար Շիհաբով էլ առաջին անգամ լինելով դե-ֆակտո հերքվում էր ամիրայության ամբողջ հողի նկատմամբ սուլթանի գերագույն սեփականատիրական իրավունքը և լռելյայն հայտարարվում այդ իրավունքի բևեռացումը իշխանապետի անձի շուրջ, իսկ դա՝ շնորհիվ այն փաստի, որ հողի մասնավոր սեփականատիրական լրացուցիչ իրավունքով պարգևատրված իր կողմնակիցների տնտեսական թե վարչական հիմքերն ամրապնդելու նպատակով, առաջին Շիհաբ ամիրը ձեռնարկում էր նաև իշխանապետության վարչակառավարումը

վերաձևավորելու գործին, Լեռան մանրահատվածների վրա վարչատնտեսական իրավունքի վերաբաշխման, համարձակելով ոչ միայն ոտնահարել Դրուզների երկրի բազմադարյան նվիրագործված կարգերը, այլև փաստորեն հանդես գալ որպես բացարձակորեն ինքնիշխան վեհապետ։

Իրականում, անկախ այն հանգամանքից, թե ֆեոդալ-աղնվականական գոյատևող այս կամ այն տոհմը ի՞նչ չափսերի կալվածքների վրա (որոնք անվանվում էին մուլք, աքար կամ ռիզք) սեփականատիրական իրավունք էր ձեռք բերել հնում կամ ստացել իրենից, Հայդար Շիհաբը, երկրի պատմականորեն ձևավորված մանրահատվածները սահմանելով որպես վարչահարկային ուրույն շրջաններ, ժառանգական իրավունքով (և ցանկության դեպքում շնորհազրկելու իրավասությամբ) հանձնեց մուկատաաճի կամ սահիբ (ռաբբ) ալ-մուկատաա (մուկատաայի տիրակալ) տիտղոսը կրող մեծավմասամբ հնամենի, երբեմն էլ նորակոչ ֆեոդալ-աղնվականական տոհմերի ավագների կառավարման։ Նշենք, որ այդ տոհմապետերը արաբական սկզբնաղբյուրներում անվանված են նաև իկտայատերեր (ալ-իկտաիյյին), իսկ նրանց տիրույթները՝ իկտաներ (ալ-իկտաաթ)։

Դրուզների երկրի պատմականորեն ձևավորված և որոշակի ինքնուրույնություն ունեցող, քիչ դեպքերում մեծ ամիրներից ըստ կամս վերաձևավորված վարչահարկային շրջանները (ինչպես նաև XVIII դարից դրուզական ամիրայության ոլորտը ներքաշվելով իշխանապետությունը համարյա համալիբանանյան դարձրած նույնատիպ մյուս՝ քրիստոնեաբնակ շրջանները), արաբական սկզբնաղբյուրների անճշտորոշ հուշարարմամբ, անշուշտ, օտարալեզու պատմագրության էջերում կա՛մ արաբական ձևով որպես մուկատաա են ներկայացված, կամ էլ, բառի թարգմանվելու դեպքում, թեպետ ճշտիվ ընկալվել են իբրև շրջան (ռայոն, օկրուգ), սակայն վերջինիս տրվել է որպես ֆեոդալական տիրույթ շնորհված կալվածքի (ֆեոդի) բովանդակություն։ Այդ թյուրիմացությունը հետևանք է ոչ միայն նույն ինքն մուկատաա مقاطعة բառի, որ բառարանային սահմանմամբ իրոք էլ նշանակում է, ի շարս այլոց, ինչպես գավառ կամ նահանգ, այնպես էլ ֆեոդալական խոշոր կալվածք (բոլոր դեպքերում լատիֆունդիա, ո՛չ ֆեոդ), այլև մանավանդ լիբանանյան հողատիրության սիստեմի և նրա առանձնահատկությունների ուսումնասիրության անբավարար վիճակի։ Լիբանանի պատմության հարցերով զբաղվող սովետական արևելագետները և առաջին հերթին Սմիլյանսկայան, օրինակ, մուկատաային ընդհուպ XVIII—XIX դդ. որպես առաջնային-

հիմնական բովանդակություն տվել են ֆեոդի՝ պայմանական հողատիրության սահմանում (43, 24) և միայն այնուհետև, հատկապես 1860-ական թվականներից սկսելով, բառի մեջ տեսել են (11, 309) պարզապես ու միայն վարչատերիտորիալ միավորի իմաստ (որպես հոմանիշը իկլիմի)։

Ինչքան էլ զարմանալի թվա, մուկատաայի մի այլ՝ տարեկան կայուն վճարագումարի իմաստը ոչ միայն դուրս է մնացել երկլեզվյան բոլոր բառարաններից, այլև իր ուշագրավ բովանդակությամբ չի արժանացել լիբանանագետ պատմաբանների ուշադրության, թեկուզ այն, ճիշտ է՝ հպանցիկ, շոշափվել է արևելագիտական գրականության էջերում։ Համմենդը, օրինակ, խուսափելով, մուկատաա տերմինից, օգտագործել է «վեռան ընդհանուր հարկագումարի մաս-բաժինը» (quote-part) դարձվածքը (128, հտ. 2, 96)։ Հենց այդ իմաստն էլ այստեղ կովան ենք դարձնելու, ճշգրտելու համար, թե ի՞նչ բան էր լիբանանյան մուկատաան և ովքե՞ր էին մուկատաաճիները։

Հայտնի է, որ Իսլամի կողմից նվաճված երկրներում հողային ամբողջ ֆոնդը ստորաբաժանվում էր հողատիրական իրավական երկու հիմնական կատեգորիաների. մուլք, գլխավորապես քաղաքամիջի կառուցապատված մասնավոր սեփականատիրական հողերը և ամիրիա կամ միրի՝ իրավականորեն պետության սեփականությունը հանդիսացող համարյա ամբողջ մշակելի հողը։ Ամիրիա հողերն, անշուշտ, թասարրուֆի՝ հողօգտագործման իրավունքով թողնվում էին իրենց նախկին (կամ՝ նրանց բացակայության դեպքում՝ նոր) տերերին, սակայն պետությունը պահպանում էր ռաքաբան՝ հողի գերագույն սեփականատիրական իրավունքը, որի համար էլ պահանջում էր ռենտա-հարկ՝ խառաջ, հանրահայտ հողահարկը, որ ամբողջությամբ և ուղղակիորեն պետք է մուտքագրվեր գանձատուն (բեյթ ալ-մալ)։ Հենց ռաքաբայից էլ օգտվելով պետությունը կարող էր խառաջի ենթակա հողերից ցանկացած տարածություն վերածել դայայի կամ կատիյայի (որից էլ՝ իկտա) և նրա հողատիրական իրավունքը նվիրաբերել առանձին մեծատոհմիկների։ Սրանք, իրենց պահելով խառաջի հիմնական մասը, պարտավոր էին գանձատուն մուտքագրել հողահարկի հասույթի տասանորդը (ուշր)։ Դայայի (կատիյայի) ինստիտուտը հետագա վերափոխություն ապրեց այն իմաստով, որ ավելի ուշ առանձին շրջանների տեղական իշխանապետերը ևս սկսեցին ստանալ իրենց հպատակներից հարկերն ու տուրքերը գանձելու-սեփականացնելու իրավունքը, պայմանով որ տասանորդի փոխարեն ուղղակի

կենտրոնական գանձատուն հանձնեին որոշակի ու կայուն մի վճարագումար՝ մուկատաա։

Հենց այս մուկատաան է, որ մենք որոնելու ենք Դրուզների երկրում։ Եվ քանի որ խոսքը հիմնականում գնալու է օսմանյան տիրապետության ժամանակաշրջանի մասին, ապա տեսնենք, թե մուկատաան տարեկան կայուն վճարագումարի իմաստով գործածության մեջ մնու՞մ էր արդյոք օսմանյան ավատապետական առօրյայում։

XVI դարի թուրք պետական գործիչ Ֆերիդուն բեյի համախմբած «Սուլթանների գրությունները», XVII դարի թուրք աշխարհագիր Քյեթիբ Չելեբիի «Ջիհան Նումա» և այլ հեղինակների աշխատություններում մի շարք հաղորդումներ կան այն մասին, որ մուկատաան ոչ այլ ինչ էր, եթե ոչ մուկատաալի, այն է՝ մուկատաա ապահովող հողակտորներից, հատկապես Յանկագին մետաղների հանքավայրերից տարեկան շահարկման դիմաց մուկատաաճիի, այն է՝ մուկատաան հանձն առնող կապալառուի կողմից սուլթանի գանձարկղ մուտքագրված տարեկան միանվագ վճարագումարը։ Ֆերիդուն բեյի մոտ մուկատաան նույնիսկ հարկերի թվում է և գրավել է առաջին՝ խառաջի տեղը, սուլթանի գանձատան տարեկան եկամուտների շարահարման ընթացքում, իր ետին թողնելով ջիզիան, ավելի ջիզիան, ավարիզը և իշանի (օթնանի) տուրքը։ Ի դեպ, մուկատաայի տարեկան կայուն վարձագին-վճարագումար մատնանշելը նույնքան պարզորոշ կարելի է դիտել նաև վակուֆային մուկատաայի՝ իշարե ի զեմինի օրինակում (195, հտ. 6, 115)։ Նշենք, որ օսմանագիտական գրականության մեջ մուկատաայի ճշտորոշման հարցում թեկուզ որոշ շփոթություններ ու տարակարծություններ առկա են, սակայն գերակշռող տեսակետն այն է, որ մուկատաան «որևէ հողից կամ կալվածից տասանորդի (աշարի) փոխարեն գանձվող նախապես որոշված միանվագ գումարն» է, հետևաբար «միանվագ վճարով տրվող հողը, կալվածը» երբեմն նույնպես կարող էր գիտակցվել որպես մուկատաա։ Այս տեսակետին է եղել նաև աղբյուրագետ Ա. Սաֆրաստյանը «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» աշխատությունում (հտ. 2, Երևան, 1964, էջ 261։ Նաև՝ 44, 67, 249 և 294)։

Օսմանականից վերադառնալով լիբանանյան-արաբական միջավայր, տեսնենք, թե մուկատաան արաբերեն լեզվում գալաա (նահանգ) և ավատապետական խոշոր կալվածք նշանակությունից բացի՝ չունի՞ արդյոք տարեկան որոշակի վճարագումարի իմաստ, ինչ որ օգնելու է մեզ մեր հետագա տեսակետը հիմնավորելու.

Արաբերեն լեզվում կա մի դարձվածք՝ قطيعة, որ «Մունջիդում» (Բեյրութ, 1965, էջ 675) մեջ է բերված այսպիսի օրինակով. قطع قطيعة السيد على عبده: Այս օրինակում վերոհիշյալ դարձվածքից դուրս մնացած բառերը նշանակում են. «Տերը իր ստրուկի (ծառայի) վրա...», իսկ قطع قطيعة դժվարամատչելի դարձվածքը հասանելի է դարձված այսպիսի բացատրությամբ. ضرب عليه ضريبة يؤديها, որ թարգմանի. «(Տերը) դրեց նրա (ստրուկի, ծառայի) վրա հարկ, որ պետք է վճարի»: Այլ խոսքով դժվարամատչելի դարձվածքը կնշանակի՝ «կտրեց (դրեց) հարկ» և ուրեմն մեզ անմիջականորեն հետաքրքրող قطيعة բառը «Մունջիդի» տվյալ օրինակում պարզաբանված կլինի որպես «հարկ»: Սակայն, ինչ որ ավելի ուշագրավ է, «Մունջիդը» գիտի նաև, որ قطيعة ոչ թե պարզապես (ու սովորական) հարկ է, այլ՝ وما يقطع من ارض الخراج, ուրիշ խոսքով՝ «այն, ինչ կտրվում է (վայր է դրվում, պահվում է) հողի խառաջից (հողահարկից)»: Նշանակում է, որ արաբերեն մուկատաա տերմինը, որ օսմանյան իրականության մեջ ստացել է տարեկան կայուն վճարագումար (վարձագումար) իմաստը, ունի իր հետ անմիջականորեն աղերսվող մի այլ տերմին՝ կատիյա قطيعة, որ մատնանշում է հողահարկի ինչ-որ տեսակից կտրվող, վայր դրվող, պահվող մաս: Հողահարկի այդ տեսակը համընդհանրորեն ծանոթ խառաջը լինել չի կարող այն պարզ պատճառով, որ կատիյան հուշում է իր արմատի հետ նույնական արմատով ինչ-որ հողահարկ: Մեր կարծիքով այդ յուրօրինակ հողահարկը, ավելի շուտ վարչատերիտորիալ որոշակի մի միավորի համար սահմանված նրա տարեկան վճարագումարն է մատնանշել լիբանանյան իրականության մեջ հանդիպող մուկատաան իր ծագման ժամանակներում, մանավանդ որ մուկատաան որպես ֆեոդ ընկալող բոլոր հետազոտողների կողմից անառարկելիորեն ընդունվում է կատիյայի լիբանանյան ֆեոդալական իրականության մեջ գոյությունը՝ մուկատաաճիին թողնվող 8 տոկոսը հավաքված հողահարկի (43, 24—29):

Մուկատաայի այստեղ ընդգծվող նախասկզբնական ու հիմնական իմաստի օգտին է խոսում նաև անուղղակի այնպիսի մի փաստ, ինչպիսին է բակալիկի կողքին հողատիրական խաս (խասսա) կատեգորիայի առկայությունը լիբանանյան իրականության մեջ: Սմիլյանսկայան (43, 23), բակալիկը ճշգրտորեն բացատրելով որպես «կառավարող ամիրին կատկանող հողեր», խասի օսմանական բովանդակությունը ևս («սպեռական բարձր աստիճանավորներին տրված հողատիրություն») ճիշտ տա-

լուց հետո (43, 217), տարտամում է լիբանանյան բովանդակության հարցում, այն որոշ առումով նույնացնելով բակալիկի բովանդակության հետ և նույնպես սահմանելով որպես «կառավարող ամիրին պատկանող հողեր» (43, 24 և 217)։ Մեզ հետաքրքրողն, այստեղ, շփոթությունն է, որ կայանում է հետևյալում. բակալիկի, որպես մասնավոր սեփականության (ամիրապատկան մուլքի) կամ անպայմանական հողատիրական կատեգորիայի ամբողջ հասույթը, այլ խոսքով ֆեոդալական ամբողջ ռենտան չէր կարող գնալ ամիրին այն պարզ պատճառով, որ գտնվելով որևէ մուկատաա-շրջանի սահմաններում, այն ենթակա էր հողահարկի, հետևաբար ռենտայի մի մասը, որպես ռենտա-հարկ, պիտի մտներ տրվյալ մանրահատվածի մուկատաա-հարկագումարի մեջ և անխուսափելիորեն 8 տոկոսով նվազելով էր հասնելու ամիրի գանձատուն։ Մինչդեռ խասը, որ նույն իր՝ Սմիլյանսկայայի բառերով իրոք էլ «պետք է առընչել պայմանական հողատիրության հետ» (43, 24), հենց ռենտա-հարկը անձեռնմխելի ամբողջությամբ իշխանապետի գանձատունն ուղղակի տալու, այլ խոսքով մուկատաաճին թողնվող կատիյայից ղերծվելու իր բնույթի իսկ պատճառով դադարում էր մուկատաա-շրջանի մաս լինելուց ու դառնում խաս, հետևաբար հողահարկի վճարագումարն էլ այստեղ մնում էր զուտ ամիրական փող և չէր կարող վերածվել մուկատաայի։ Այս իմաստով էլ չի կարելի համաձայնել Սմիլյանսկայայի այն պնդման հետ, որ մեկ-երկու գյուղեր, իբր չկազմելով մուկատաա-շրջան, կարող էին վերածվել մուկատաա-ֆեոդի (43, 24)։ Դրուզ մոկադդամական միակ՝ Մուզհիր տոհմի տիրույթ Համմանա գյուղը, իշխանապետական ուշ շրջանի տիրույթ Դեյր ալ-Կամարի, Այն Դարայի ու մյուսների, հավանական է՝ խասի (ավելի շուտ դայայի) տիպի մի կզզյակ էր Աբու՝լ Լամա տոհմի մանրահատված Մեթնի շրջանակներում, այլ խոսքով այնտեղ ամիրական փողը բաշխված էր (գուցե տասանորդը վճարելու պայմանով) միակ սակավահող դրուզ ազնվականական տոհմին։

Դժվար չէ ու անհիմն էլ չի լինի ենթադրել, որ Դրուզների երկրի՝ մուկատաայի (տարեկան հարկագումարի) ենթարկված մանրահատվածների իկլիմի փոխարեն ավելի հաճախ մուկատաա անվանվելն օբյեկտիվ պատճառներից մեկն է դարձել այն բանի, որ բառի նախասկզբնական ու հիմնական իմաստը տարտամանա ու դուրս մղվի։ Մեր ժամանակներում այդ իմաստի դժվարընկալելի մնալու օբյեկտիվ հիմքերից մեկն էլ այն է, որ ինչպես Դրուզների երկրի ֆեոդալական հարաբերություններն իրենց առանձնահատկություններով, այնպես էլ մանրահատվածներն իրենց պատմականորեն կայունացած սահմաններով, վերջնականապես ձևավոր-

վել էին մամլուքների տիրապետության վերջին հանգրվանում՝ XIV—XV դարերում, մինչդեռ լիբանանյան հիմնական այն սկզբնաղբյուրները, որոնց ընձեռած նյութի վրա են հենվում արևելագետ պատմաբանները, շարադրվել են XVIII դարի վերջերին և XIX դարի առաջին կեսին, երբ ֆեոդալական հարաբերություններն իրենց առանձնահատկություններով, այդ թվում մուկատաա-մուկատաաճի ինստիտուտով, թավալգլոր գնում էին դեպի վերջնական քայքայում, իսկ երկրի մանրահատվածներն էլ որոշապես կորցրել էին իրենց երբեմնի ինքնուրույն դեմքը։

Մուկատաայի նախասկզբնական հիմնական իմաստի վերականգնումը և նրա բովանդակության բացահայտումը կարևոր է ոչ միայն Դրուզների երկրի (իսկ հետագա շրջանում նաև ամբողջ Լիբանան լեռան) ֆեոդալական հարաբերությունների առանձնահատկություններին մատչելու տեսակետից, այլև այն իմաստով, որ բանալի է տալիս մեզ՝ ըմբռնելու դրուզների կողմից ստեղծված և հետագային համալիբանանյան դարձած ամիրայության՝ Օսմանյան կայսրության շրջանակներում վայելած առանձնահատուկ ստատուսի հիմունքներից մեկին, մուկատաաճիության ինստիտուտին։

Օսմանյան իրականության մեջ մուկատաաճին այն աստիճանավորն է, որ տարեկան միանվագ գումարով (մուկատաայով) գնում էր կայսերապատկան հանքավայրերի շահագործման և կամ աղատ մնալով ժամանակավորապես փոդիշահական խասերին կցված թիմար և զեամեթ հողակտորներից հողահարկը հավաքելու իրավունքը։ Լիբանանյան ամիրայությունում մուկատաաճին երկրի պատմականորեն ձևավորված մանրահատվածներից մեկն ու մեկի ֆեոդալ-աղնվական կառավարիչն էր։ Մուկատաաճի ամիրներն ու շեյխերը,— գրել է Բազիլին, հնարավոր համարելով այդ «տիտղոսները բազմաթիվ տեսակետներով համեմատել միջնադարյան եվրոպական բարոն և դուքս» տիտղոսների հետ (11, 27), պատկանում էին այն տոհմերին, որոնք «ֆեոդալական իրավունքով ժառանգաբար կառավարում էին օկրուգները» (11, 29)։ Ի դեպ, ռուս գիտնական-դիվանագետը որպես կանոն խուսափել է երկրի շրջանները մուկատաա անվանելուց։ Մուկատաաճիության առաջին հերթին ժառանգական վարչակառավարման իշխանավորություն լինելու հանգամանքն ընդգծել է նաև Թանուս աշ-Շիդիակը (201, 90)։ Այդ հանգամանքը անառարկելիորեն ընդունված է ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան արաբագետների կողմից։

Հիմնականում տվյալ մանրահատվածի ավանդական առաջնորդը և որպես կանոն հողի խոշորագույն մասնավոր սեփականատերը հանդիսա-

ցող տոհմերի ավագ մուկատաաճիները, իրենց պաշտոնը կտակելով որդիներից երեցին, չէին կարող իրենց վստահված տիրույթը փոխանցել մի այլ տոհմի և կամ մասնատել թեկուզ հենց հարազատ զավակների միջև։ Այդ իրավունքը իշխանապետի անձեռնմխելի առանձնաշնորհն էր և հիմքեր չկան, ինչպես դա արել է Սմիլյանսկայան (43, 25), պնդելու, որ մուկատաաճին կարող էր (թեկուզ խիստ հազվադեպորեն) ըստ կամս մասնատման ձեռնարկել։ Աշ-Շիդիակի մոտ (201, 87) հայտնաբերված միակ դեպքը՝ Քեսրուանի մասնատումը 5 շրջանների կամ ուխդաների (տոհմապետ Աբու Նոֆալի չորս ավագ որդիներին մեկական և չորս կրտսեր որդիներին մեկ մասի հատկացմամբ), եղել է լոկ ժամանակավոր միջոցառում և հետո վերաբերում է 1667-ին, այլ խոսքով վերջին Մասն Ահմեդի իշխանապետության ժամանակաշրջանին, երբ Խաղինների քրիստոնեաբնակ Քեսրուանը, թո՞ղ, որ իր պատմականորեն ձևավորված ներքին ստորաբաժանումներն ունենալով, դեռ ըստ էության չէր միաշաղկապվել հիմնականում դրուզական մնացող իշխանապետության հետ։

Որպես կանոն մուկատաաճիի վարչական գերիշխանությանն ու մանրբռնական (սովորութենական իրավունքով տուգանքի, գանահարության կամ բանտարկության ենթակա) զանցանքներում դատական իրավասության ենթարկվում էր ոչ միայն մանրահատվածի ամբողջ հասարակ ազգաբնակչությունը, այլև աղնվականությունը, այդ թվում և իր տոհմակիցները, անկախ այն բանից, թե հողի խոշոր սեփականատերե՞ր, թե բարեկեցիկ գյուղացիների մակարդակին էին նրանք։

Մուկատաաճիները, որոնց տոհմապետերը մեծավմասամբ անցյալում տվյալ մանրահատվածում վարչաքաղաքական գերակայություն ձեռք էին բերել ռազմական առաջնորդի հանգամանքով, որոշ իմաստով իշխանապետի մոտ ռազմական ծառայության մեջ էին և նրա առաջին խոկ հրավերով պարտավոր էին շրջանի աշխարհազորով ներկայանալ նշանակված ճամբարը։ Պետք է ընդգծել, սակայն, որ այդ ծառայությունը ոչ այնքան վարչական ու դատական իրավասությունների դիմաց պարտականություն, որքան պարտք էր, քանի որ համարյա որպես կանոն իշխանապետի ռազմական գործողությունները կրում էին օսմանյան փաշաների ոտնձգությունների դեմ ինքնապաշտպանական, հետևաբար հայրենասիրական բնույթ։

Մուկատաաճիների «քաղաքական», այն է՝ վարչական, դատական թե ռազմական «իրավունքները որպես վրադիր (պարգև—Ե. Ն.) էին ծառայում՝ (նրանց) հարկահավաքի իրավունքն ապահովելու համար»,—դիտել է տվել Բազիլին (11, 29)։ Եվ իրոք, իրենց վարչադատական թե ռազմա-

կան առանձնաշնորհների ու լիազորությունների դիմաց մուկատաաճիների հիմնական փոխհատուցում-պարտականությունն էր իրենց մանրահատվածի իշխանական փողը՝ ալ-մալ ալ-ամիրին (կամ պարզապես մալը, միրին) հարկատուներից հավաքել, կազմել տարեկան վճարագումար-մուկատաան և այն ուղարկել իշխանապետական գանձատուն, իրենց ծառայության որպես հնչուն վարձ վայր դնելով կատիյան՝ գումարի 8 տոկոսը։

Ճիշտ է, որ մուկատաաճիները ուղիներ գտնում էին իրենց հասնող կատիյան 8 տոկոսից ավելի դուրս բերելու (4, գ. 817, թթ. 114—115), սակայն նրանց հիմնական եկամուտը, ինչպես և մյուս անպայմանական մուլքատեր ֆեոդալ-ազնվականներինը, կազմվում էր իրենց տարբեր վայրերում ցրված հողակտորները կամ էլ միակտուր մեծ հողամասի այս կամ այն հատվածը վարձակալած գյուղացիներից վճարվող ֆեոդալական renտայից։ Մուկատաաճիության իրավունքը, սակայն, խնդրո առարկա տոհմապետերին անկասկած ապահովում էր իրենց մանրահատվածներում, թո՛ղ բացառիկ դեպքերում հաջողվող բռնախլումները, քայքայվող գյուղացիների մասնավոր սեփականատիրական հողերին որպես առաջին հերթի գնորդ հավակնելու իրավունքով, ըստ որում հողահարկը հավաքելու և մուկատաան հանրագումարելու պարտավորությունը կարող էր նրանց օգնել ոչ-վճարունակ գյուղացիներին բարձր տոկոսով վարկավորելու և պարտքերը ժամանակին չմարելու դեպքում գյուղացիական հողերին տիրելու գործում։ Բուրխարտն, օրինակ, իր ուղեգրության էջերում վկայել է. «Ջեզզինի գավառի մեծ մասը (Ջումբլաթների տոհմապետի) սեփականությունն է և նա ոչ ոքի թույլ չի տալիս հողակտորներ ձեռք բերել այդ շրջանում, այն դեպքում, երբ ինքը տարվե տարի մեծացնում է իր կալվածքները և այդ ձևով էլ շարունակ զորացնում իր իշխանությունը» (64, 197)։ Վոլնեյն իր հերթին հաղորդել է, որ դարավերջին Դրուզների Էրկրի մշակելի հողերի 10 տոկոսը մասնավոր սեփականությունն էր մեծ շեյխական 5 տոհմերի (192, հտ. 2, էջ 190)։

Բոլոր դեպքերում, սակայն, Երկրի մանրահատվածների մուկատաայի միակ աղբյուրը կազմող ամիրական փողը, որ սկզբնաղբյուրներում հազվադեպ է խառաջ անվանվել, ոչ միայն հարթավայրային Սիրիայի հողահարկից զգալիորեն ցածր էր, այլև խիստ կայուն ու կարգավորված։ Մինչդեռ «Սիրիայում ժողովուրդը բառիս բուն իմաստով կապալով էր տրված» և «հարկ հավաքում էին այնքան, ինչքան կարողանում էին, իսկ այդ հարցում անհույս բան էր բողոքել փաշային կամ փաշայի դեմ Բ. Դոան» (11, 29), լիբանանյան ամիրայությունում հարկը որոշակի դրույթներով մերդատու ծառերից ու տունկերից գանձվում էր հնչուն փողով, իսկ հացա-

բույսերի, ընդեղենի և բամբակի ցանքատարածություններից՝ բնամթերքով։

Ինչպես Վոլնեյը (192, հտ. 2, 192), այնպես էլ նրանից կես դար անց Բուրխարտը (64, էջ 29) նշել են, որ հարյուր որթատունկի համար նշանակված էր տարեկան մեկ զուրուշի հարկ։ Հարցը մի փոքր բարդ էր թթենու դեպքում։ Համադրելով Վոլնեյի և Բուրխարտի հաղորդումներն ու Շրվալիեի հաշվումները (76, 50) կարելի է ասել, որ XIX դարասկզբին շուրջ 100—400 թթենու հարկը, որ առանձին անվանում էլ է ունեցել (բազրիյա), կազմել է 2—9 զուրուշ։ Հացահատիկային բույսերի ցանքատարածությունների հարկը որոշելու համար որպես միավոր վերցվել է դիրհամը (կամ դրահմը), որը մեկ մուտ (19 կգ) սերմացուին համապատասխանող հողամասն էր։ 7—20 դիրհամ հողամասից, նայած որակին ու բերրիության, գանձվել է մեկ զուրուշ (135, 151։ 104, հտ. 2, 141)։ Նշենք, որ ամեն մի մուլքատիրոջ հողահարկի ընդհանուր չափը արձանագրված էր լինում գյուղական հարկային մատյաններում (դաֆտարներում), որոնք պարբերաբար վերանորոգվում էին նոր վերահաշվում-վերաչափումների հիմամբ։ Դաֆտարներում հարկագրույքներն արձանագրվում էին հնամենի-նախասկզբնական դրույքներով, իսկ իրականում վճարումը կատարվում էր փողի ռեալ արժեքի վերահաշվումն և այլ գործոնների հիմամբ ընդհանրորեն ընդունված նոր դրույքներով, որոնք հնամենի-նախասկզբնականի ճշգրտված բազմապատիկն էին կազմում։ Բազիլին իր զեկուցագրերից մեկում ընդգծել է, որ «Լիբանանի հին սովորությամբ հարկը ճշտորոշվում է որպես այսքան պատիկը նախասկզբնական միրիի, որ սիստեմի հիմքն է կազմում» (5, գ. 780, թ. 164)։ Հ. Գուին, մոտավորապես նույն ժամանակների վերաբերյալ, նշել է, որ նախասկզբնական միրիի ութնապատիկը, իսկ դժվարին շրջաններում մինչև 16 սնդամն էր գանձվում (104, հտ. 2, 141)։ Բուրխարտի հաղորդմամբ դրանցից մի քանի տասնամյակ առաջ Ջահլեում գանձվել է նախասկզբնականի կրկնապատիկը, իսկ Բաալբեկում՝ եռապատիկը (64, 161)։ Բոլոր դեպքերում միրին, ըստ տարբեր հեղինակների հաղորդումների, գյուղացու բերքի 15—25 տոկոսը, իսկ երբեմն էլ մինչև 50 տոկոսն էր խլում (64, 169։ 104, հտ. 2, 143)։

Հարկագումարը մատյանների համաձայն գանձելով մուկատաաճիին հանձնողները վերջինից նշանակված գյուղապետերը կամ գեղջկավագներն էին, որոնք կոչվում էին շեյխ։ Այս շեյխությունը ոչ մի կապ չուներ ազնվականական միևնույն տիտղոսի հետ, քանի որ գյուղապետական պաշտոնը, ինչքան էլ որ մուկատաաճիի տոհմի բարյացակամությունը

տեսականորեն վայելող ընտանիքների մենաշնորհը մնար, որպես կանոն հանձնարարվում էր հասարակ ծագմամբ մարդկանց (154, 59)։ XIX դարի երկրորդ կեսի սկզբներին ուղեգրողներից մեկը նշել է, որ գյուղական շեյխերի բնակարանը «հաճախ այնքան համեստ է, որքան վերջին գյուղացունը, սակայն երբեմն էլ, ընդհակառակը, ավատապետական մի իսկական ղղյակ է» (85, 67)։

Վերջացնելու համար ընդգծենք, որ մուկատաայի՝ դաֆտարների հարկագումարների հանրագումարը լինելու պատճառով, մուկատաաճիներն ըստ էության հարկային անօրինականությունների հնարավորություններից համարյա զրկվում էին, մանավանդ, որ, ինչպես կարելի է կռահել Վոլնեյի մի հաղորդումից (192, հտ. 1, 434), դաֆտարների կրկնօրինակները պահվում էին Դեյր ալ-Կամարում, իշխանապետական դիվանում, ինչ որ բնական անհրաժեշտություն էր։ Իսկ Վոլնեյի, գյուղացիներն իրավունք ունեին գնալու և անձամբ գանձատուն վճարելու իշխանապետական փողը, թեպետ պարզ չէ, թե այդ դեպքում ինչպե՞ս էր լուծվում կատիյայի հարցը։ Բոլոր դեպքերում աղնվական ամիրներն ու շեյխերը, այդ թվում և անձամբ մուկատաաճիները, հողահարկի հարցում առանձնաշնորհյալ չէին, ինչպես տարբեր առիթներով շեշտել է Վոլնեյը։ Նա գրել է. «Ամիրների և շեյխերի աղնվականությունը նրանց չի ձեռբազատում իրենց եկամուտներին համապատասխան հարկ վճարելուց և անշարժ ունեցվածք թե պաշտոններ ձեռք բերելու հարցում որևէ առանձնաշնորհ չի տալիս։ Երկրում... յուրաքանչյուրը, միրին վճարելուց հետո... իր տանը տեր է» (192, հտ. 1, 444)։

Մուկատաայի նախնական հիմնական իմաստի վերականգնումից և նրա բովանդակության բացահայտումից հետո մուկատաաճիության ինստիտուտի բնույթի պարզաբանումը կօգնի մեզ օբյեկտիվորեն գնահատելու բնույթն այն միջոցառումների, որոնք ավելի ու ավելի վճռականորեն ձեռնարկվելու էին Բեշիր II-ի կողմից՝ դրուզ ֆեոդալ-աղնվականության դեմ։

* * *

Բեշիր II-ի իշխանապետության փոթորկահույզ առաջին տասնամյակը նոր էր բոլորել, երբ Բոնապարտի արևելյան զինարշավով լիբանանյան ամիրայությունը վերջնականապես ու անդառնալիորեն թաթախվեց Արևելյան հարցի պղտոր ջրերի մեջ։

Հայտնի է, որ Եգիպտոսում իր դեմ բորբոքված ժողովրդական ազատագրական կռվի պայմաններում հուսաբեկվելով տեղում ժողովրդական-սոցիալական հենարան գտնելու մտքից, Նապոլեոնը որոշեց շարժ-

վել Հյուսիս՝ դեպի Լևանտ ու Փոքր Ասիա։ Նրա 13 հազարանոց զորաբանակը 1799-ի մարտի 18-ին հասավ Աքայի առաջ, փաստորեն լիբանանյան լեռների նախաշեմին, որտեղ Ջազզարը, անգլիական ծովակալ Սիդնեյ Սմիթի օգնությամբ, կազմակերպել էր ամուր պաշտպանություն։ Հակառակ այն իրողության, որ շրջանի բադաուիներն ու մթուալլիները, որոնց ղեկավարում էր Ջահիրի թոռ շեյխ Սալեհը, Ջազզարի նկատմամբ ատելությունից, հակված էին դեպի ֆրանսիացիները ու նույնիսկ Բոնապարտին օգնեցին Թափոր լեռան ստորոտին ջախջախելու մամլուքյան բանակը (208, հտ. 2, 330։ 182, 47), Աքան չընկճվեց և սիրիական զինարշավը ձախողվեց։

Հարկ է նշել, որ պաշարված Ջազզարը օգնության կանչեց իր հովանավորյալ Բեշիրին, սակայն վերջինս չշտապեց, պատճառաբանելով, որ Լեռան վրա իր դիրքերն ամրապնդված չեն դեռ և Յուսուֆի դավադիր որդիների դրդմամբ ժողովուրդը ոչ միայն մերժում է հարկ վճարել, այլև լսել անգամ չի ուզում աշխարհազոր կազմելու մասին (11, 68)։ Նա բավարարվեց Աքայի տիրոջն ու նրան օգնության փութացած օսմանյան փաշաներին առատ պաշար և անասնակեր մատակարարելով։ Ամիրին հրապուրելու փորձ արեց նաև Բոնապարտը, Աքայի առաջ հասնելուց երկու օր անց նրան գրելով. «(Իմ տարած) բոլոր հաղթանակները ոչնչացնում են բռնակալությունը վայրագ մի մարդու (Ջազզարի—Ե. Ն.), որ այնքան չարիք է հասցրել ինչպես քաջարի դրուզ ազգին, այնպես էլ մարդկության։ Իմ նպատակն է դրուզական ազգը անկախ դարձնել, թեթևացնել նրա վճարած հարկը և իրեն վերադարձնել Բեյրութի նավահանգիստն ու մյուս քաղաքները, որոնք անհրաժեշտ են իրեն՝ իր առևտրի շուկաների համար» (181, հտ. 1, 576)։ Բոնապարտը նույնիսկ իր համհարզ դը Սեբաստիանիի ձեռամբ հուշագենք և այլ նվերներ ուղարկեց իշխանապետին, բայց իզուր. խոստանալով Աքայի գրավումից հետո միայն ֆրանսիացիներին միանալ (117, 160), Բեշիրը բավարարվեց համակրալիր իր պատգամին միացնելով մի քանի տակառ գինի և քաջալերելով իր հպատակների՝ ֆրանսիացիներին էժան գնով պարեն ու խմիչք մատակարարելու եռանդը։ Իշխանապետը պարզապես զինաթախման ելքին էր սպասել՝ հաղթականի կողքին որպես շնորհավորող կուսակից հայտնվելու և իր ծառայություններն առաջարկելու համար։ Դա ճիշտ են նկատել ինչպես իր ժամանակին Բազիլին (11, 68), այնպես էլ մեր օրերում Սալիբին (37, 71)։ Որպես ապացույց կարելի է հիշատակել այն, որ ֆրանսիական զինարշավի սկսելուց անմիջապես հետո Բեշիրը, Ջազզարից և օսմանցիներից թաքուն, եգիպտոս էր ուղարկել իր պալատի քերթող և

իր զավակների դաստիարակ՝ ծագմամբ հայ Նիկոլա աթ-Թուրքին (1763—1828), որպեսզի հետևի իրադարձությունների ընթացքին և մանրամասն զեկուցագրի ուժերի փոխհարաբերության մասին*։

Հարկ է ընդգծել, որ իշխանապետի սպասողականությունը, Համմենդի բառերով՝ «առեղծվածային չեզոքությունը» (128, հտ. 2, 123) իր հիմքերն ուներ։ Բազիլին, հակախոսելով Բեշիրին «երկերեսանիության և անվճռականության» մեջ մեղադրողներին, այդ հիմքերը բևեռացրել է լիբանանյան համայնքների անմիասնական դիրքորոշման վրա։ Իրոք էլ, եթե մի կողմից դրուզները իրենց քաղաքական մրցակից մարոնականների հավանական հովանավոր ու աջակից ֆրանսիացիների նկատմամբ ատելավառ (11, 69), առնվազն երկյուղաշատ (37, 71։ 128, հտ. 2, 122) տրամադրություններ ունեին, ապա մյուս կողմից մարոնական համայնքը երկփեղկված էր։ Բանն այն է, որ ֆրանսիական մեծ հեղափոխության բոցավառած գաղափարները, նաև Նապոլեոնի վերաբերմունքը Հռոմի պապի ու Մալթայի թե այլ քրիստոնյա օրդենների նկատմամբ՝ չէին կարող Եվրոպայից փոխչելով Լևանտում, հատկապես Բեյրութում թե լիբանանյան լեռներում գործող և մարոնականների վրա զգալի ներգործություն ունեցող կաթոլիկ քարոզիչների մոտ չառաջացնել կատաղի հակակրանք և այդ հակակրանքով էլ չվարակել հյուսիսային լեռնագոտու աղգաբնակչության որոշակի խավերի՝ բարձրաստիճան կղերին, ֆեոդալանվականության, միջին և ցածր խավերից կրոնամոլ շրջաններին։ Հենց այդ պատճառով էլ Սալիբին և Համմենդը, հիմքեր ունենալով պնդելու, որ Ֆրանսիային համակրող մարոնականները անհամբեր սպասում էին

---

* Հետախուզական այդ առաքելության (1798—1804) արդյունքն է եղել Ն. աթ-Թուրքի «Ֆրանսիական գրավման պատմությունը», որ արաբների շրջանում ծանոթ է որպես «Թարիխ Նապուլյուն» («Նապոլեոնի պատմություն»)։ Այդ երկի մինչև ֆրանսիական զինարշավի վախճանն ընդգրկող մասը ձեռագրից ֆրանսերենի թարգմանելով Ա. Կարտենը հրատարակել է որպես աշ-Ջաբարթիի «Մուղհիր» օրագրական երկի հավելված՝ «Précis de l'occupation Francaise» խորագրով (տե՛ս Journal d'Abdurrahman Gabarti pendant l'occupation Francaise d'Egypte, traduit par A. Cardin, Paris, 1838), իսկ այնուհետև Դեկրանժ ավագն ու Վիետը՝ ամբողջական բնագրով և թարգմանությամբ (տե՛ս Histoire de l'Expédition des Francais en Egypte par Nikoula el-Turk, publieè et traduite par Mr. Des-Granges aine, Paris, 1839, Nicolas Turc, Chronique d'Egypte 1798-1804, éd et trd. G. Wiet, Cairo, 1950)։ Աթ-Թուրքը շարադրել է նաև «Թարիխ Ահմեդ Պաշա՝լ Ջազզար» («Ահմեդ փաշա Ջազզարի պատմություն») երկը։ Լ. Շեյխոն և Ջ. Ջեյդանը Ն. աթ-Թուրքին են վերագրում նաև ամիր Հայդար Շիհաբիի «Պատմության» երկրորդ՝ Շիհաբ տոհմի մինչև Բեշիր II-ի գահակալման առաջին տարիներն ընդգրկող դիրքը։

Բոնապարտին (37, 71։ 128, հտ. 2, 122), պետք է բացեին չակերտներն ու նշեին, որ մարոնականներ ընդհանուր անվանման ներքո ավելի շուտ պիտի հասկանալ մարոնական գյուղացիության հիմնական զանգվածին, որ իր սոցիալական ու տնտեսական բարօրության հույսերը կարող էր առնչել Նապոլեոնի կոչերում շեշտվող սոցիալական արդարության և հավասարության սկզբունքների հետ (182, 47)։

Այնուամենայնիվ իշխանապետության քաղաքական կողմնորոշման հարցում վճռական խոսքը դեռ պատկանում էր դրուզական համայնքին, հետևաբար վերջինիս հակաֆրանսիական դիրքորոշումը չէր կարող անտես առնվել Բեշիրի կողմից։ Իսկ դրուզ շեյխերը, ինչպես վկայել է ժամանակագիր Հայդար Շիհաբին, «առանց հաշվի առնելու ամիրին, առանց նույնիսկ նրա կարծիքը հարցնելու, արդեն իսկ միաբանել էին, թե ում կողմն են կանգնելու» (218, 887)։ Եվ իրոք, ինչպես հաղորդել է քաջատեղյակ Աբու Շաքրան, Աբեյհի սրբավայրում շեյխ Բեշիր Ջումբլաթի նախագահության ներքո գումարված դրուզական գաղտնի ժողովում որոշում էր ընդունվել զինված դիմադրություն ցույց տալ ֆրանսիացիներին, նաև ամիրին, եթե վերջինս սկսեր գործակցել նրանց հետ (204, 72—73)։ Այդ ժողովում, հանդիմանելով Հաուրան կամ Հալեպի շրջան տեղափոխվել առաջարկողներին (231, 10), կրոնապետ Շարաֆ ադ-Դին ալ-Կադին հայտարարել էր. «Քաջարի դրուզների համար մեծագույն անպատվություն է նահանջել վտանգի ու մահվան առաջ» (229, 15)։ Այս կապակցությամբ Բազիլին իր հերթին ընդգծել է մի հետաքրքիր պահ. մահմեդականությունից դեռ պաշտոնապես չհրաժարած իշխանապետը «պատրաստ էր դաշինք կնքելու նույնիսկ կրակապաշտների և սատանայապաշտ եզիդիների հետ, միայն թե ձերբազատվեր Ջազզարից» (11, 68)։ Ջազզարից ձերբազատվելու միակ ուղին, անշուշտ, կարող էր բացվել ֆրանսիական զինարշավի հաջողությամբ։ Եվ ուրեմն մի՞թե ավելի շուտ դրուզական համայնքի դիրքորոշման հարցում իշխանապետական մտավախությունները չէ, որ մատնանշել է Բազիլին, գտնելով, որ Բեշիրի ֆրանսիասիրական դիրքորոշման դեպքում Յուսուֆ Շիհաբի «որդիները ամիրի դեմ անկասկած ոտքի կկանգնեին ժողովրդական զանգվածներին և երկպառակտչական նոր պատերազմն էլ հավանաբար կավարտվեր իշխանապետի ջախջախմամբ» (11, 69)։

Այս բոլորից հետո, եթե պարզապես պատմագիտական հախուռնություն են այն պնդումները (110, 414—415։ 107, 73), որոնց համաձայն ամիր Բեշիրն իբր լրիվ սիրաշահվել էր անգլիական դատին և եթե սոսկ անհիմն կռահումներ են Սմիթի հետ տեսակցելու համար իշխանապետի

դեպի Կիպրոս ուղևորության և 1000 ոսկեդրամ պարգև ստանալու վերաբերյալ գրույցները (107, 73), ապա անհերքելի ճշմարտություն է հետևյալը.—անգլիական դիվանագիտությունը ոչ միայն Լոնդոնի, այլև օսմանյան, ռուսական և պապական մայրաքաղաքների անունից քիչ ճնշում չէր գործադրում ամիրի վրա։ Ծովակալ Սմիթը նամակ նամակի հետևից էր հասցնում իշխանապետական պալատ՝ խորհուրդ տալով հեռու մնալ Բոնապարտի ճակատից։ Եվ քանի որ շեյխ Հասան Ուարդը ամիրայության շեզոքությունն ապահովելու հարցով դրուզական համայնքի անունից բանակցություններ էր վարում Բ. Դոան, Սմիթի, Ջազզարի, Ջումբլաթների և իր հետ (220, հտ. 7, 434—435), ապա Բեշիր II-ը ջանում էր օսմանցիներից թե նրանց փաշայից անգլիացիների միջոցով երաշխիք կորզել իշխանապետության իրավական դրության թե իր աթոռի անձեռնմխելիության վերաբերյալ։

Բոնապարտի սիրիական զինարշավի ձախողանքից հետո Ջազզարն առաջին հերթին դաժան հաշվեհարդար տեսավ իր մշտական թշնամիների՝ հարավի մթուալլիների հետ։ Վերջիններիս առաջնորդները, շեյխ Սալեհի գլխավորությամբ, ապաստան որոնեցին իրենց զինակից Բեշիր II-ի մոտ, սակայն վերջինս, իր իսկ գլխին կուտակված ամպեր ունենալով, ի վիճակի չէր օգնելու։ Մթուալլիների դեմ խստամիջոցների արձագանքը, լիբանանյան ամիրի դեմ պատժամիջոցների հավանականությունն ու Ջազզարի ներգործությունը պիտի տեսնել այն բանում, որ Աքայի պաշարման վերացումից անմիջապես հետո Ջումբլաթ տոհմն ու նրա կուսակցությունը երես էին թեքել իշխանապետից՝ անչափ թուլացնելով նրա ներքին հենարանները (37, 72)։

Բեշիրին մնում էր Ջազզարից փրկության իր հույսերը կապել միայն ու միայն Բ. Դոան հետ։ Իսկ այդ հույսերը, մի օրից մյուսը, արմատ գցելու անակնկալ հող ստացան։ Աքայի փաստական փրկիչ Սմիթը 1799-ի հուլիսին Այն Անուբում այցելեց իշխանապետին, բրիտանական ռեզիդենտ լեյդի Էսթեր Ստենհոպի մասնակցությամբ տեղի ունեցած սիրալիր հանդիպման ժամանակ ընծաներ փոխանակվեցին և անգլիացու՝ պատերազմական գործողությունների ընթացքում վիրավորված մի «ազգականը», լեյտենանտ Վրայտը, ապաքինման համար 100 պարկ բրնձով ուղարկվեց Դրուզական լեռ (11, 72)։ Հետագա իրադարձությունները կասկած չեն թողնում, որ այդ «ազգականը» Բեշիրին կցվում էր որպես Անգլիայի հսկիչ-ռեզիդենտը։ Բանն այն է, որ ծովակալը գուցե և իրոք «առիթ էր ունեցել լսելու Բեշիրի, նրա ընդունակությունների և պատերազմի ընթացքում նրա անգործունության պատճառների մասին»,—ինչ-

պես վկայել է ժամանակագիրը, առաջին հերթին անշուշտ լսելու և համոզվելու Ջազզարի նկատմամբ նրա ատելության հիմնավորության մասին, հետևաբար և գուցե անձամբ համակրում էր նրան։ Սակայն չի կարելի աչքաթող անել այն հանգամանքը, որ Բեշիրին սիրաշահելու ավելի լուրջ պատճառներ ուներ բուն իսկ անգլիական դիվանագիտությունը։ Սիրիայում ֆրանսիական ազդեցության և վանտ ներխուժելու Ֆրանսիայի հետագա փորձերի դեմ Անգլիային տեղաբնիկ ուժեղ դաշնակիցներ էին անհրաժեշտ և լիբանանյան լեռներում Ջազզարի դեմ մենակ մնալով փափուկ կացության մատնված և այդ կացությունը չթաքցնելով բրիտանական կառավարության աջակցության բացեիբաց և ինքնակամ ապավինող ամիրն, անշուշտ, հարմարագույն թեկնածուներից մեկն էր սիրիական դաշնակիցների շարքում (75, 211—212)։

Այն Անուբի հանդիպումից անմիջապես հետո Սմիթն շտապեց Աքա՝ առաջին հերթին Ջազզարի մոտ միջնորդելու և Բեշիրի հետ նրա հարաբերությունները տեղում կարգավորելու հույսով, սակայն բոսնիացին անդրդվելի մնաց «դավաճանի» հետ հաշվեհարդար տեսնելու իր մտադրության մեջ։ Սմիթը, վիրավորված, գանգատագիր ուղարկեց Պոլսի անգլիական դեսպանին, որ այդ մասին հաղորդեց Բ. Դոան։ Հարցին իրազեկ պահվեց անձամբ սուլթանը և նրա կարգադրությամբ գանգատագիրը։ Համապատասխան ցուցմունքներով, շտապ փոխանցվեց 100 հազարանոց բանակով Սիրիայում գտնվող մեծ վեզիր Հաջի Յուսուֆ Դիա փաշային։ Վերջինս ունկնդիր լինելով Բեշիրի բացատրություններին, նրան մի նոր խալաթ նվիրեց և սուլթանական կարգադրության հիմամբ նրան վերահաստատեց իշխանապետ, այն էլ ոչ միայն Դրուզների երկրի, այլև Ուադի աթ-Թայմի, Բաալբեկի, Բիկաայի, Ջուբեյլի և Բիլետ Բշարրիի, ըստ որում ընդգծվեց ոչ միայն ամիրի իշխանության ժառանգականությունը, այլև որոշ առումով թարմացվեց Մաաների՝ մինչև Սայդայի փաշայության ստեղծումը վայելած իրավիճակը. լիբանանյան իշխանապետն ուղղակի կախման մեջ էր դրվում Բ. Դոնից, իսկ փաշան, տվյալ դեպքում Ջազզարը, բավարարվելով տարեկան որոշակի հարկագումարը իշխանապետից ստանալու և Պոլիս փոխանցելու դերով, զրկվում էր Լեռան ներքին գործերին որևէ միջամտություն ունենալու իրավունքից (11, 73)։ Դժվար չէ կռահել, որ սուլթանական կառավարությունը Բեշիրի նկատմամբ նմանօրինակ մեծահոգություն և առատաձեռնություն էր ցուցաբերում ոչ միայն անգլիական կառավարության՝ տվյալ պահին իրեն կենսականորեն անհրաժեշտ դաշնակցին ընդառաջելով, այլև ցանկանալով Լե-

վանտում Ջազզարի հարաճող հզորությունը եթե ոչ լրիվ հակակշռող, առնվազն սահմանափակող հավատարիմ մի վասալ ունենալ։

Ջազզարն, անկասկած, կանխազգում էր վերջին հանգամանքը և դրա համար էլ պիտի ջանար մեռյալ տառի վերածել մեծ վեզիրի կարգադրությունները։ Վերջին հաշվով Յուսուֆ Դիան իր ահագին բանակով պարզապես ժամանակավոր հյուր էր շրջանում, իսկ ինքը՝ շրջանի հզորագույն տերը։ Աքայի տիրոջ համբերության բաժակը հորդեց այն ժամանակ, երբ մեծ վեզիրին առ ի շնորհակալություն ցեղական ձիեր ու նրա զորքին պարեն ու անասնակեր հայթայթելիս, Բեշիրը իշխանապետության տարեկան հարկագումարը ևս, հապշտապ հավաքելով ժողովրդից, անձամբ նրան ուղարկեց։ Յուսուֆ Դիան դեռ Կաղայում էր և պատրաստվում էր Եգիպտոս ներխուժել, իսկ Ջազզարն արդեն որպես նոր իշխանապետ Դեյր ալ-Կամար էր ուղարկում Յուսուֆի երկու որդիներին՝ Սաադ ադ-Դինին և Հուսեյնին, առ ի զգուշություն իր մոտ պահելով նրանց կրտսեր եղբորը՝ Սալմանին (220, հտ. 7, 434), ըստ որում ջարդելով Բեշիրին օգնության փութացած ենիչերիական գունդը։ Աթոռակից երկու ամիրներին հանձնարարվում էր իշխանապետից առաջին հերթին վրեժ լուծել իրենց հոր սպանության համար։

Իշխանապետության ազգաբնակչությունը խնդությամբ ընդունեց նոր գլխավոր ամիրներին։ Ժողովրդական զգացմունքները հրամանագրվում էին ոչ միայն Բեշիրի հակառակորդների քարոզությունից և ամենազոր ու ահազդու Ջազզարին չվրդովելու մտահոգությունից, այլև այն փաստից, որ կփրկվեն մեծ վեզիրին հաճոյանալու համար ֆինանսական խոշոր միջոցների կարիքն զգալով լրացուցիչ հարկեր հավաքող իրենց իշխանավորից։ Ջազզարի ամբարտավանությունից և ենիչերիական գնդի կոտորածից դաղաղած Յուսուֆ Դիան օգնական նոր ուժեր ուղարկեց իշխանապետին և լեռնականներին կարգադրեց հնազանդ մնալ իրենց առաջնորդին։ Բեշիրն իր հերթին ժողովրդին կոչ արեց աշխարհազոր հավաքել և դուրս գալ Ջազզարի գնդի դեմ։ Սակայն իշխանապետի կոչին արձագանքեցին միայն Բեշիր Ջումբլաթը, Այն Դարայի Աթալլաներն ու Քֆար Նաբրահի Իմադներն իրենց փոքրաթիվ աշխարհազորով, մինչ Լեռը հիմնականում, ինչպես և Ուադի աթ-Թայմը, դիրքորոշվեցին Բեշիրի դեմ (107, 75)։

Իշխանապետն առաջին իսկ զինաբախման ժամանակ պարտություն կրեց Ջազզարի դրածոներից և Ջումբլաթի հետ փախավ Ջուբեյլ։ Սաադ ադ-Դին և Հուսեյն Շիհաբները, բավարարելու համար Ջազզարի ընչաքաղցությունը, ձեռնամուխ եղան երկրորդ անգամ հարկահավաք կա-

տարելու գործին և Բեշիրին համակրելու մեջ կասկածվող գյուղերը ենթարկեցին հատուկ ռազմատուգանքի, մինչ փաշայի ասպատակներն գրաղված էին թալանով ու բռնություններով։ Ինչպես դիտել է տվել ժամանակագիրը, ժողովուրդը զզջացել էր, սակայն ուշ էր (11, 73)։

Մովսակալ Սմիթը հյուսիսային լեռնագոտում ջումբլաթական իր գնդով թափառող ամիրի ետևից հատուկ նավով եկավ Տրիպոլի և նրան առաջարկեց գնալ Կաղա, մեծ վեզիրի մոտ։ Ընտանիքն ագ-Զանիյյայի և Հոսնի տեր Բանու Ռաադ մահմեդական շեյխերին, իսկ իր փոքրաթիվ գունդը Դամասկոսի փաշայի հովանավորության վստահելով, Բեշիրը 1799-ի դեկտեմբերին անգլիական նավով նախ Կիպրոս և ապա ալ-Արիշ ուղևորվեց։ Մեծ վեզիրն առաջարկեց օսմանյան 10 հազար զորքով գնալ ու վերագրավել իր գահը։ Գահընկեց իշխանապետը բավարարվելով Եգիպտոսի հարցի լուծումից հետո Ջազզարի հետ հաշիվ տեսնելու խոստմամբ, նախընտրեց հրաժարվել նրա առաջարկից, քաջ իմանալով, որ «անհնար կլինի իշխանության գլուխ մնալ 10 հազար թալանչիներով» (11, 74)։

Իշխանապետության հարցը յուրովի լուծած, Ջազզարը ձեռնարկեց Դամասկոսի և Տրիպոլիի փաշայություններն էլ թուլացնելով իրեն ենթարկելու գործին։ 1780-ին և 1790-ին, թեկուզ կարճատև, նա վայելել էր Դամասկոսի մուշիրի տիտղոսը և այժմ Ուադի աթ-Թայմի ամիրներին դրդում էր խռովություն բարձրացնելու, ներխուժում էր Նաբլուսի շրջան և Սաննուրի բերդն ապաստանած շեյխերին նեղելով՝ հարկ էր հավաքում ժողովրդից։ Տրիպոլիի փաշայությունն իր նման նախկին ավազակ Մուսթաֆա Բերբերին ապահովելու նկրտմամբ, նա քաղաքի մահմեդականներին բորբոքում էր փաշայի դեմ։

Ամիր Բեշիրը, անգլիական միջամտության, սուլթանական ֆիրմանների և մեծ վեզիրի խոստումների նկատմամբ հավատքն ի վերջո կորցրած, որոշեց անձամբ լուծել իր հարցը՝ հենվելով իշխանապետության ներսում ժողովրդական դժգոհանքի վրա։ Ամիրներ Սաադ ագ-Դինն ու Հուսեյնը, բավարարելու համար Ջազզարի ախորժակները, բառիս բուն իմաստով դրաղված էին ժողովրդին թալանելով. «Սկսեցին գանձել ամսական հարկ, ըստ որում յուրաքանչյուր հարկահավաք ուղեկցվում էր փաշայից ամիրներին որպես օգնական ուժ տրված զորքերի ավերիչ դինարշավներով»,— արձանագրել է ժամանակագիրը (11, 75)։ Նրանց գործերի կառավարիչ մարոնական Ջուրջոս Բազի հարկային նորամուծությունը համբերությունից հանել էր լեռնականներին, որոնք ոչ միայն պահանջում էին վերադարձնել նախկին իշխանապետին, այլև պատվի-

ղակությունն իսկ ուղարկեցին Տրիպոլիում ապ դուրս գալով հյուսիսային լեռնագոտում հաստատված Բեշիրի մոտ՝ «խնդրելով վերստանձնել իշխանապետությունը և երդումով խոստանալով, որ լեռնականները չեն Հանաչի որևէ այլ իշխանավորի և պատրաստ են ամիրին պաշտպանելու Ջազզարի բոլոր հետապնդումներից» (11, 75)։

1800-ին Բեշիր II-ը լեռնականների կողմից համաժողովրդական շքերթով առաջնորդվեց Շուֆ։ Նեյխերը մեկը մյուսի ետևից անցան նրա կողմ։ Սաադ ադ-Դին և Հուսեյն Շիհաբներն ու Ջուրջոս Բազը, որոնք նահր ալ-Համամում կրած առաջին պարտությունից հետո (232, 10—11) 2000 ալբանացիներով ամրացել էին Դեյր ալ-Կամարում, շրջափակման մեջ չընկնելու համար փախան Սահել Բեյրութ և այնտեղ իրենց վարձկանների թիվը 6000-ի հասցնելով՝ երկու տարի շարունակեցին զինված պայքար մղել իշխանապետի դեմ։ Վերջինս, ոչ-միշտ իր տրամադրության ներքո խոստացված աշխարհազորն ունենալով, իր հրամանատար շեյխ Ջահջահ Իմադի զոհվելուց հետո իր փոքրաթիվ մարդկանցով անձամբ մարտ էր տալիս և ամուր փակած պահում լեռնանցքները։ Քեխիա Բազն, ի վերջո, հաջողության ամեն հույս կորցրած, բանակցության մեջ մտավ և Ջուբելի շրջանը որպես ինքնուրույն մանրիշխանություն իր տերերի համար ձեռք բերելով՝ զինակցություն կնքեց Բեշիրի հետ (11, 76։ 218, 211)։ Կատաղած Ջազզարը շուրջ մի տարի ևս շարունակեց դավեր նյութել ամիրի դեմ՝ հովանավորելով նրա ազգական այլ մրցակից Սուլեյման և Աբբաս Շիհաբներին, սակայն ի վերջո, Դամասկոսի փաշայությունը ձեռք բերելուց հետո համոզվելով, որ պայքարը հսկայական ծախսեր է պարտադրում, իր բանկիր հրեա Հայիմի խորհրդով ու միջնորդությամբ 1803-ին համաձայնեց հաշտվել Բեշիրի իշխանապետության հետ, պայմանով, որ անցած տարիների համար 400 հազար ղուրուշի խորհրդանշական, իսկ առաջիկայում Բ. Դռան տարեկան կես միլիոն ղուրուշի հարկը վճարվի իր միջոցով։

Իշխանապետությունը շունչ առավ, սակայն նրա իրավասության շրջանակներից դուրս մնացած լիբանանյան կենտրոնական և հարավային ծովափնյա շրջանները շարունակեցին մնալ ծանր դրության մեջ։ Հայիմի խորհրդով և գործակցությամբ Ջազզարը ոչ միայն բոլոր սննդամթերքների վաճառքի, այլև մինչև իսկ վարչակառավարման գործի մոնոպոլիաներ էր հաստատել։ Կապալով տրվում էին քաղաքային խորհուրդներ ստեղծելու իրավունքը, ըստ որում կապալառուն որոշակի գներով, խորհրդի անդամի պաշտոններից բացի, վաճառում էր նաև քարտուղարական պաշտոնները։ Կապալով կարելի էր ձեռք բերել նաև տարին մեկ

կամ երկու անգամ քաղաքաբնակներից բռնահարկ գանձելու «առանձնաշնորհը», ըստ որում կապալառուն իրավունք ուներ չվճարողներին բանտարկել ու խոշտանգել։ «Բեյրութում դեռ հիշում են,— վկայել է ականջալուր հեղինակը,— թե ինչպես ամբողջ ընտանիքներ ծոմն էին նետվում՝ իրենց չարչարողներից ազատվելու համար» (11, 77)։ Իսկ այդ չարչարողներին՝ Ջազզարի ներկայացուցիչներին ժամանակագիրներից մեկը կարճ ու հատու բնութագրել է այսպես. «Նրանք դժնետեսիլ էին և խիստ չարաբարո» (27, 89)։

1804-ի ապրիլին Ջազզարի անակնկալ մահն անգամ անմիջական փրկություն չեղավ իշխանապետության թե ամիրի համար։ Աքայի դանձատանը հայտնաբերվեցին լիբանանյան տարբեր իշխանապետերի կամ հավակնորդների պարտամուրհակներ, որոնց մարումը պարտադրվեց Բեշիրին։ Վերջինս առարկեց, որ բոսնիացին սովորություն ուներ պարտքերն ստանալուց հետո չվերադարձնել մուրհակները, սակայն գործը հարթելու նպատակով հանձն առավ վճարել պահանջված գումարի անանշան մի մասը (128, հտ. 2, 133։ 11, 79)։

Նոր պայմաններում Բեշիրի առաջին գործն եղավ իշխանապետության հողատարածքին վերակցել Յուսուֆի որդիներին ղիջված և առանձին մանրիշխանությունն վերածված Ջուբեյլի շրջանը։ Ճիշտ է, որ Ջուրջոս Բազը, իր նախկին տերերի մոտ որպես գործերի կառավարիչ կրտսեր եղբորը՝ Դոմինիկ անվանյալ Աբդ ալ-Ահադին թողնելով, տեղափոխվել էր Դեյր ալ-Կամար և իր խելքով ու ի հարկին նաև թրով օգնում էր իշխանապետին, սակայն վերջինս Բազերի ու նրանց ճանապարհով Յուսուֆի քրիստոնյա որդիների նկատմամբ մարոնականների նվիրվածության մեջ վտանգ էր տեսնում։ Դրա համար էլ իր եղբոր՝ Հասանի օգնությամբ 1807-ին դրուզ շեյխերին լարեց ավագ Բազի դեմ, ապա Դամասկոսի փաշայի օգնությամբ գրավեց Ջուբեյլն ու միացրեց իշխանապետության, իշխանազրկեց ու բանտարկելով կուրացրեց Յուսուֆի երեք որդիներին, շրջանի կառավարիչ նշանակեց իր որդի Կասեմին և վերջապես խեղդամահ անել տվեց հայր և որդի Բազերին (11, 79), սրանց համակրող ջուբեյլցի բանաստեղծներ Արաբ աշ-Շալֆունին և Էլիաս Էդդեին, դեյր ալ-կամարցի մտավորականներ Յուսուֆ աթ-Թուրքին և Յուսուֆ բին Նասիֆ Աղային, մի շարք ազնվականների (75, 230—232։ 80, հտ. 4, 307—308։ 204, 10—11)։

Բեշիրն այնուհետև առիթներ ու հնարավորություն ունեցավ ամրապնդելու իշխանապետության և անձամբ իր հեղինակությունը կենտրոնական իշխանությունների թե Լևանտում նրանց դրածոների շրջանում։

1809-ին Դամասկոսի Գենջ Յուսուֆը, Բ. Դոան կարգադրությամբ, իշխանապետի կողմից որպես աջակից ուղարկված Բեշիր Ջումբլաթի աշխարհազորի օգնությամբ միայն կարողացավ ժամանակավորապես Տրիպոլին գրավել Բերբեր աղայից։ 1810-ին Արաբական թերակղզուց Վահհաբականների Սիրիա ներխուժման կապակցությամբ Բեշիր II-ը Աքայի նոր փաշա Սուլեյմանի հետ և Բեշիր Ջումբլաթի գլխավորած 15 հազար լեռնականներին ունենալով իր կողքին՝ օգնության փութաց Դամասկոսի վալիին։ Վահհաբականների վտարումից հետո Բ. Դոան դեմ ապստամբության դրոշ պարզած Յուսուֆ փաշայի իշխանությունը ևս փոխանցված լինելով Սուլեյմանին՝ Բեշիրն իր աշխարհազորով հաղթական մտավ Դամասկոս ու փախուստի մատնեց ապստամբին։

Շրջապատում տիրող անիշխանության պայմաններում կենտրոնացված պետականություն ստեղծելու և իր անձնական իշխանությունն ամրապնդելու մտահոգությամբ, Բեշիրն այնուհետև համառ հարատևությամբ և առանց միջոցների մեջ խտրություն դնելու ձեռնարկեց իր վասալ ֆեոդալ-աղնվականներին ստիպաբար թուլացնելու, հնազանդեցնելու և ի վերջո ջախջախելու գործին, մի բան, որ չէր կարող դրական ներգործություն չունենալ ազգաբնակչության հիմնական զանգվածի իրավիճակի բարելավման տեսակետից (11, 81; 214, 72)։

Կենսագործելի առաջնայնորեն անհրաժեշտ միջոցառումը իր կենտրոնացման քաղաքականության գաղտնորեն կամ բացահայտորեն դիմադրող ֆեոդալ-աղնվականական տոհմերի՝ ասպարեզից վերացված Աբու Նակիտներից հետո նաև Թալհուքների, Աբդ ալ-Մելիքների ու մյուսների ընկճումն էր։ Շոյելով Ջումբլաթ տոհմի փառասիրական նկրտումը՝ դառնալ Շիհաբ տոհմից հետո երկրորդ և դրուզ մեծ շեյխական միակ (և ինչո՞ւ չէ, հանգամանքների բարեբաստիկ դասավորության դեպքում դրուզ Մաաններից սուննի Շիհաբներին փոխանցված աթոռի հավակնորդ) տոհմը ու հենվելով նրա զինական հզորության վրա, Բեշիրը մաներրիշխանական իրավասություններից ու առանձնաշնորհներից զրկեց դրուզ ֆեոդալ-աղնվական գլխավոր տոհմերին, մերկացրեց նրանց նույնիսկ ֆեոդալ-սեփականատիրական իրավունքից, քանդեց նրանց տոհմական ամրությունները, սպանել տվեց դիմադրողներին և հաշմեց-կուրացրեց ու երկրից հալածեց ձևականորեն հնազանդածներին։ Իշխանազրկված մուկատաաճիների պայմանական տիրույթներն ու անպայմանական սեփականությունը նա հանձնեց իր հլու-հնազանդ ազգականների և կամակատար դրածոների՝ տեղերում ավելի շատ կենտրոնական իշխանության ներկայացուցիչ-աստիճանավորի հանգամանք ստացող

S—1028

մարդկանց տնօրինության։ Մուկատաաճիների հիմնական մասի վարչաքաղաքական իշխանությունն իր բռի մեջ անմիջականորեն թե միջնորդաբար կենտրոնացնելով, նրանց դատական իրավասությունների մի մասը փոխանցեց տեղերում իր կողմից նշանակված, հետևաբար իրենից անմիջականորեն կախյալ կադիների՝ կարևորագույն հարցերի վրճռումը պահելով իրեն։

Ազգաբնակչության հիմնական զանգվածի՝ գյուղացիության հարկային դրույքների կանոնավորմամբ իր իշխանությունն ավելի ու ավելի հրապուրիչ դարձնելուց բացի, ամիր Բեշիրը ջանաց նաև, օգտվելով բարենպաստ իրադրությունից, բազմացնել իր քրիստոնյա թե դրուզ հպատակների թվաքանակը։ Վահհաբական ներխուժման ընթացքում մոլեռանդ թերակղեցիներին, իսկ այնուհետև նրանց կուսակիցներին ողոքելու ձգտող օսմանցիների կողմից հատկապես Հալեպի փաշայությունում քրիստոնյաների, առաջին հերթին կաթոլիկ մալքիների և աղանդավոր մահմեդականների դեմ սկսած հալածանքների պայմաններում նա հոգ տարավ դեպի Լիբանան լեռ ու Բեյրութ հրապուրելու հնարավորին չափ մեծագույն ներգաղթողներ, համընդհանուր ճանաչում տալով ամբողջ Սիրիայի աստիճանաչափով քրիստոնյաների և դրուզների հովանավորի իր հանգամանքին։ Միայն Հալեպի շրջանից նա շուրջ 400 դրուզ ընտանիքների իր և Բեշիր Ջումբլաթի ծախսով տեղափոխեց Շուֆ և Մնթն (218, 918)։ Հարավի դրուզ իշխանազրկված ֆեոդալների տիրույթներում ու կալվածքներում բնակեցրեց ոչ միայն հյուսիսից տեղաշարժված, այլև ներքին Սիրիայից հոսող քրիստոնյա գյուղացիների, որոնք ոչ-մեծ հողավարձ վճարելով իշխանապետին, մշակում էին թթենի և պահում մետաքսաբուծություն։ Այդ հողավարձակալներից ոմանք աստիճանաբար հարստացան ու նույնիսկ հողեր գնեցին իշխանապետից։ Բեյրութում քրիստոնյա տարրի բազմացումը հենց Բեշիրի ձեռնարկման արդյունքն եղավ։ Արձանագրենք այստեղ նաև այն, որ իշխանապետն առանձին ուշադրությամբ շարունակեց իր նախորդների՝ օսմանաքրդական լծի ներքո հեծող հայերին դեպի լիբանանյան լեռնագոտի հրապուրելու և հովանավորելու քաղաքականությունը։ Շրջանցելով մարոնական մեծազդեցիկ սքեմավորներին, նա չվարանեց իր պալատի խոստովանահայր կարգել զմմառյան Հակոբ արքեպիսկոպոս Հոլասյանին, իսկ հայազգի Նիկոլա աթ-Թուրքին հայտարարեց «իշխանապետի քերթողը և քերթողների իշխանապետը»։

Դրուզ ազնվականության բազմադարյան հզորությունը սահմանափակելով, ամիր Բեշիրը փաստորեն ոչ միայն ամրապնդում էր իր

միանձնյա և ամենազոր իշխանապետի դիրքերը, այլև հիմքից խախտում Դարազիի հետևորդների քաղաքական ազդեցության վերջին սյունները՝ երկրում վերջնականապես դերակշիռ դարձնելով քրիստոնյաներին, առաջին հերթին մարոնականներին։ Սակայն ո՛չ մարոնական ֆեոդալ-ազնվականներին, քանի որ այս հանգրվանում նա սահմանափակելու էր նաև առնվազն Քեսրուանի ֆեոդալների կամայականությունները։ Մարոնականները, կղերով թե ֆեոդալ-ազնվականությամբ, օդի ու ջրի նման անհրաժեշտ էին Բեշիրին և որոշ առումով էլ այդ անհրաժեշտության հետ պիտի առնչել իշխանապետի գլխավորությամբ Շիհաբների (գոնե նրանց Լիբանան լեռան ճյուղի հիմնական մասի, քանի որ, Ուադի աթ-Թայմի Շիհաբները, սերտ աղերսներ պահպանելով իրենց հավատուրաց ազգականների հետ, շարունակելու էին մնալ սուննի) և նրանց հետևողությամբ էլ ամիրական մյուս՝ Արուլ Լամա տոհմի հրապարակայնորեն քրիստոնեությունն ընդունելը։

Ժամանակագիրները դժվարացել են պատասխանել այն հարցին, թե համոզմունքի՞ հետևանք էր այդ, թե՝ քաղաքական հաշվենկատության։ Լուցկին իրավամբ ընդգծել է (28, 61), որ քրիստոնեությունն ընդունելու մղող քաղաքական գլխավոր դրդապատճառը մեծ իշխանի ձգտումն էր՝ օգտագործել մարոնական հոգևորականության ազդեցությունը և ամբողջ Լիբանան լեռը վերջնականապես միավորել Շիհաբ տոհմի իշխանապետության ներքո։ Նշենք, որ ինչպես վկայել են ժամանակակիցները, Բեշիրն անձնական կյանքում խիստ անտարբեր էր կրոնի հարցերում, Լամարթինի բառերով ասած՝ մահմեդականի հետ մահմեդական, դրուզի հետ դրուզ և քրիստոնյայի հետ քրիստոնյա էր։ Քաղաքական ոչ-սակավ ներգործուն մի այլ դրդիչ եղել է այն, որ դրուզ ֆեոդալ-ազնվականության անջատողականության, առնվազն կենտրոնախուսության դեմ պայքարում իշխանապետը կարիքն է ունեցել մարոնական ֆեոդալ-ազնվականության և բարձրաստիճան կղերի, ընդհանրապես քրիստոնյա համայնքների աջակցության (43, 52)։

Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում աչքաթող չանել քրիստոնյա հոգևորականության, առաջին հերթին վանականության առանձնահատուկ դրությունը, մանավանդ որ նոր ժամանակներում այն ներքաղաքական անցուդարձերի վրա ներգործող կարևոր ազդակներից մեկն էր լինելու։

Ամիրայությունում հողի առավել խոշոր ֆեոդալ սեփականատերերի թվում էին քրիստոնեական վանքերը, ինչպես զուտ քրիստոնեական շրջաններում՝ Քեսրուանից սկսելով դեպի հյուսիս, այնպես էլ խառը

ազգաբնակչությամբ շրջաններում՝ Մեթնից սկսելով դեպի հարավ։ Վանական հողատիրությունը, գրավելով հանդերձ շատ կարևոր տեղ, ուներ առանձնահատուկ գծեր, որոնք որպես կանոն վրիպել են սովետական հետազոտողների ուշադրությունից։ Սմիլյանսկայան, օրինակ, բավարարվել է մատնանշելով, որ «XIX դարի սկզբներին մարոնական եկեղեցին վերածվել էր ֆեոդալական խոշոր հողասեփականատիրոջ», սակայն «հոգևորականությունն ինքը հաճախ կախման մեջ էր մուկատաայի տիրոջից» (43, 52), մինչ Պանչենկովան գոհացել է ընդգծելով, որ «Լիբանանի մշակելի բոլոր հողերի 1/6-ը պատկանում էր մարոնական եկեղեցուն» (33, 50)։ Դա ճիշտ է, անշուշտ։ Երկրի կենտրոնական և հյուսիսային շրջաններում Վոլնեյը XVIII դարի 80-ական թթ. միայն սուրբ Անտոնի ուխտի արանց և կանանց ավելի քան 200՝ մարոնական վանք էր հաշվում (192, հտ. 1, 397 և 405)։ Սուրի արքեպիսկոպոսի հավաստմամբ, ամենայն հավանականությամբ միայն Աքայի և Դամասկոսի փաշաների ենթակա շրջաններում, կաթոլիկական վանքերի թիվը XIX դարի 20-ական թթ. 70 էր՝ 1500 կրոնավոր-կրոնավորուհիներով (138, 232)։ «Հողերի մեծագույն մասը առաջին հերթին վանքերի ձեռքին է»,— մարոնաբնակ շրջաններին ակնարկելով XIX դարի կեսերին գրում էր մի ճանապարհորդ, ավելացնելով, որ Քեսրուանում «վանքերն այնքան բազմաթիվ են, որ դրեթե ամբողջ հողը նրանց է պատկանում» (85, 81 և 101)։

Կաթոլիկական, հիմնականում մարոնական հոգևորականության ներսում, սակայն, փաստորեն առկա էին «երկու դասակարգեր, որոնք մեկը մյուսին չեն ճանաչում և որոնցից մեկը անօգուտ հարստություն է կիտել, իսկ մյուսն աղքատ է» (85, 74)։ Առաջին խավը գլխավորապես կազմված էր բարձրաստիճան կղերից, որի շարքերը մեծամասամբ համալրվում էին ֆեոդալ-աղնվականական տոհմերից սերած կրոնավորներով, որոնք «երկրի տերերն էին»։ Այդ խավն էր, որ «կլանում էր եկեղեցու ամբողջ ունեցվածքը, որ շատ մեծ է աղքատ այս երկրում» (85, 78)։ «Մարոնական եկեղեցու վերնախավի չարաշահությունները վանքերի և եկեղեցու ունեցվածքի նկատմամբ՝ աղաղակող են»,— իր զեկուցագրերից մեկում գրում էր ռուսական հյուպատոսը (4, գ. 799, թ. 234)։ Հոգևորականության մյուս խավը կազմված էր ստորադաս վանականներից և գյուղական քահանաներից, որոնց թիվը հաղարներով էր հաշվվում։

Վանական տնտեսությունը որոշ իմաստով ավատապետական ներփակ մի տնտեսություն էր, որտեղ առաջին հերթին շահագործվում էին

հազարավոր շարքային մենակյացներ։ Նրանց մասին Վոլնեյը գրել է. «Վանականների զգեստը կոշտ բրդից է, իսկ սնունդը՝ գյուղացիական» (192, հտ. 1, 405)։ Ամեն մի վանք անհրաժեշտ թվով վանականների մասնագիտացնում էր միաբանությանը պիտանի արհեստների գծով (կոշկակարություն, դերձակություն, ջուլհակություն, հացագործություն, կազմարարություն ևն)։ Ստորադաս վանականների հիմնական զանգվածը, սակայն, զբաղված էր վարձու բատրակների հետ միասին վանքապատկան հողերի մշակության գործում։ Սուրի արքեպիսկոպոս Կիրիլ Դիբսը հաղորդում էր, որ վանքերից «կախում ունեցող հողերը մշակվում էին վանականների իսկ կողմից» (138, 232)։ Աղոթքներից ազատ ժամանակ,— վկայում էր Վոլնեյը,— վանականները հողն են մշակում և կամ ժայռերը ջարդում՝ յուրացվող նոր հողահարթակների պատերը բարձրացնելու համար (192, հտ. 1, 405)։ Բազիլին իր հերթին արձանագրում էր. «Մարոնական եկեղեցին հարուստ է, սակայն հոգևորականության զանգվածը չքավորության մեջ է և սեփական ձեռքերով վարելով վանական տնտեսությունը, հաղիվ իր համար շոր հաց է ապահովում» (11, 281)։ Ռուս դիվանագետն իր զեկուցագրերից մեկում էլ ընդգծում էր. «Մարոնական վանականները աշխատավորներ են, քրտնքի մեջ կորած խաղողի այգիներ են տնկում, աճեցնում թթենի և ձիթենի։ Նրանք սեփական ձեռքերով նախկինում խոպան հողակտորներից բերք են քամում։ Նվիրատվությունները ավելացնում են եկեղեցու հարստությունները։ Սակայն այդ հարստությունները խժռում են ոչ-մեծ թվով եպիսկոպոսներ և վանահայրեր, իսկ ստորադաս հոգևորականությունը, որ հողն է մշակում, հագնում է կոշտ զգեստներ ու սնվում միայն գարեհացով։ Մարոնական հոգևորականության զանգվածը թշվառության մեջ է այն դեպքում, երբ մարոնական եկեղեցին առանց չափազանցության Սիրիայում քրիստոնեական առավել հարուստ եկեղեցին է» (4, գ. 799, թ. 234)։

Էլ ավելի մեծ զանգված էին կազմում գյուղական քահանաները։ Ուղեգրող կոմս դ՝Էստրումելի հաղորդմամբ Իհդինում և Բշարրիում յուրաքանչյուր 25—30 ընտանիքին մեկ քահանա էր հասնում (91, 269—272)։ Արևելքում, իրավամբ նշում էր եվրոպացի մի ճանապարհորդ, սիրում են պատվվել և ուրեմն լավ է քահանա դառնալ, «սակայն այստեղ ավելի մասնավոր մի պարագա նպաստում է քահանաների թվի մեծանալուն. սքեմ հագնելով գյուղացին իր ստրք հանգամանքով պաշտպանված էր դառնում շեյխերի բռնությունների և շարաշահումների դեմ»։ Այդ նույն ուղեգիրը հաղորդում էր, որ «կարելի է տեսնել գյուղական

քահանաների, որոնք իրենց արտն են վարում, կամ բոժոժից մետաքսաթել են հանում ու նույնիսկ ասողներ կան, որ որոշ քահանաներ ջորեպան են, այլ խոսքով շարունակում են իրենց նախկին արհեստը՝ իրենց հացը շահելու համար» (85, 77—78)։ Լազարիստների միաբանության պետն իր հերթին դ՝ Էստրումելին մարոնական քահանայության մասին ասում էր. «Նրանք մեծաթիվ են, սակայն դժբախտաբար քանակը որակ չի կազմում... Նրանք մի ամբողջ երամ երեխաներ ունեն և ընտանիքը պահելու համար քահանա-հայրը շատ դեպքերում հարկադրվում է ձեռքի աշխատանք կատարել, հետևաբար աստվածաբանությունը խիստ անտեսվում է» (91, 241)։

XVIII դարի կեսերին արդեն հողի խոշոր սեփականատեր էր դարձել նաև հայ-կաթողիկե Անտոնյան միաբանությունը, որին Քեսրուանում պատկանում էր ոչ միայն Բզոմմառի բլուրը (1749-ին այնտեղ հիմնադրված համանուն վանքով), այլև խոշոր կալվածքներ Ջունի-Ջուբեյլ շրջանում (այդ թվում Քրեյմի վանքն իր տնտեսությամբ), նաև Հյուսիսում, հատկապես Բշարրի-Զղորթա-Իհդինի շրջանում։ Ուղեգրողների վկայությամբ XIX դարի առաջին տասնամյակներին պատրիարքի շուրջ մի քանի եպիսկոպոսներ, երկու-երեք տասնյակ վանականներ և մի խումբ ճեմարանականներ ունեցող Բզոմմառի վանքը, որ «ամենաշքեղն ու ամենահարուստ վանքն էր Քեսրուանում» (64, 186։ 161, հտ. 1, 45), պահում էր նաև «մեծաթիվ ծառաներ», որոնք բնականաբար ոչ միայն միաբանության սպասարկողներ էին, այլև նրա կալվածքների մշակներ։ Իսկ այդ կալվածքները, ըստ Բուրխարտի, «խոշոր» էին և «խոշոր» էլ եկամուտներ էին բերում (64, 186), մի բան, որ հաստատում է նաև Ռորինսոնը, ավելացնելով Քրեյմի վանքի շուրջ համախմբված և անկասկած նրա տնտեսության մեջ զբաղված «մեծ թվով հավատացյալների» առկայության փաստը (164, հտ. 1, 45—48)։ Բոլոր դեպքերում հայ-կաթողիկե կղերը, հանգամանքների բերմամբ թեկուզ սակավաթիվ, հետևաբար և մարոնականի նման չշերտավորված, ինչպես բուն քրիստոնեական շրջաններում, առաջին հերթին Քեսրուանում, այնպես էլ Դրուզների երկրում, այդ թվում իշխանապետական Դեյր ալ-Կամարում, մեծ հեղինակություն և քաղաքական ազդեցություն ունեցող մի ջոկատ էր, որ որոշակիորեն առնչվելու էր XIX դարի սկզբներից լիբանանյան լեռներում տեղի ունեցող փոթորկոտ իրադարձություններին։

Հիմնականում Քուրայում, նաև Բիկայում և այլուր հողի խոշոր սեփականատերեր էին հույն-օրթոդոքս վանքերը, որոնք իրենց տնտեսությունների հարստությամբ կարող էին մրցել մարոնականների հետ։

Հալեպից Տրիպոլի հասնող ճանապարհի ավարտակետի շրջանում գտնվող Մար-Ջիրիոս վանքն, օրինակ, Ուսպենսկու վկայությամբ, ուներ վարելահող, որթատունկի և թթենու այգիներ, 7—800 ոչխար, նույնքան էլ այծ, 25 կով, 10 ղուլդ եղ, 10 ջորի և 3 ձի։ Այն միաժամանակ ծառայում էր որպես առևտրականների օթևան, երբեմն հյուրընկալելով մի ամբողջ քարավան։ Այդ պայմաններում շուրջ երկու տասնյակ վանականները վերահսկողությունից դուրս հաղիվ թե ի վիճակի լինեին որևէ գործ կատարելու, հետևաբար հարկադրվելու էին պահել ոչ միայն վանքում սնվող և աշխատավարձ ստացող 40 հոգիանոց սպասարկող անձնակազմ, այլև ավելի քան 80 հողամշակ բատրակներ (46, հտ. 1, 184)։ Վանքը, բացի վարելահողից ու արոտավայրից, ունեցել է պտղատու ծառերի, թթենու և ձիթենու այգիներ, ծխախոտի տնկարան և 4 ջրաղաց։ Նման վանքերը բնականաբար հողամշակության հետ չառնչվող ժամանակավոր աշխատանքների համար կարիք էին ունենալու լրացուցիչ մարդկանց, երբեմն մինչև մի քանի հարյուր հոգու (46, հտ. 1, 310)։

Սակայն Բարսեղի ուխտի հույն-կաթոլիկ վանքերը, հիմնականում Լեռան կենտրոնական ու հարավային հատվածներում և Բիկայում, մարոնականներից տարբերվում էին ոչ միայն իրենց աշխարհագրական տեղադրմամբ։ Հիմնադրված լինելով հարաբերաբար ուշ, մեծ մասամբ դրուզական շրջաններում քրիստոնյա նորաբնակների հաստատվելուց հետո, նրանք ընդհանուր առմամբ իրենց ձեռք բերած հողերի ոչ թե սեփականատերը, այլ վարձակալն էին։ Այսպես, օրինակ, XVIII դարում հիմնադրված մեկ տասնյակից ավելի վանական խոշոր տնտեսություններից Շուեյրի Մար Հաննայի վանքը տարեկան 400 ղուրուշով «մի բավական մեծ խոպան հողատարածություն» վարձակալել էր երկու դրուզ ամիրներից։ Հասկանալի է, որ այդ վանքերը մարոնականներին շատ էին զիջելու ոչ միայն վանականների թվով, այլև իրենց հարստությամբ, հետևաբար հույն-կաթոլիկ հոգևորականությունն էլ հարկադրաբար վարելու էր ավելի ժուժկալ կենցաղ և նույնքան ակնբախ չէր ընդգծվելու բարձրաստիճան կղերի և շարքային վանականների դասային տարբերությունը։ Բոլոր վանականներն անխտիր, վկայում էր Վոլնեյը, բացի վանահորից, նրա տեղակալից և ծախսարարից, մարոնականների նման տիրապետում էին մի որևէ արհեստի և կամ զբաղվում էին հողամշակությամբ, հատկապես քարքարոտ խոպանը յուրացնելու տաժանելի գործով (192, հտ. 3, 89)։ Վանքերում տիրում էր կենցաղավարման խիստ կարգ. զարթնում էին առավոտյան ժամը 4-ին և քնում երեկոյան ժամը 9-ին, այդ ընթացքում 7—8 ժամ աղոթում էին և առնվազն նույնքան էլ

աշխատում։ Վանականները ճաշում էին օրը երկու անգամ՝ ժամը 9-ին և 17-ին։ Միս տալիս էին միայն հիվանդներին, իսկ հիմնական սնունդը կազմում էին սիսեռի կամ ոլոռնի ձիթապուրը, բրնձով փլավը, մածունը, ձիթապտուղը և աղած ձուկը։ Հացը թխվում էր շաբաթը մեկ անգամ և երկրորդ օրն արդեն կոշտացած էր լինում (192, հտ. 2, 91)։

Հույն-կաթոլիկ հարաբերաբար սակավաթիվ վանականությունը, ի վիճակի չլինելով անձամբ մշակելու սեփական թե վարձակալած, բոլոր դեպքերում իր իսկ կողմից մշակելի դարձված հողը, այն տրամադրելու էր դավանակից կիսարար գյուղացիների, որոնք ստացված սպիտակ կամ դեղին մետաքսահումքի, հացահատիկի ու խաղողի (կամ գինու) կեսը հանձնում էին վանքերին։ Վերոհիշյալ Մար Հաննայի վանականները մինչև XIX դարի սկիզբները գյուղացիներից ստացված բնամթերային ռենտահումքից իրենք իսկ գործում էին իրենց զգեստների համար անհրաժեշտ մետաքսյա և բամբակյա կտորները։ 1840-ական թթ. նրանք արդեն իսկ նախընտրելու էին ամերիկյան և այլ ներմուծված բարձրորակ բամբակեղենը, հետևաբար իրենց կիսարարներից պահանջելու էին փողային ռենտա։ «Գյուղացիները,— գրում էր Ուրկուհարտը,— շատ երջանիկ պիտի լինեին բամբակ կամ մետաքս հանձնելով, սակայն վանականները նախընտրում էին զուրուշները» (186, հտ. 3, 7)։

Ի դեպ, ինչպես հույն-կաթոլիկ, այնպես էլ մյուս դավանությունների լիբանանյան այն վանքերը, որոնք գտնվում էին ամիրայության սահմաններից դուրս, հասկանալիորեն ավելի անբարենպաստ պայմաններ ունեին։ «Հարկերը, որ մեր եղբայրներն են վճարում, չափազանց մեծ են և Դամասկոսի ու Աքայի փաշաների հաճախակի շարաշահությունները ծանր են ճնշում նաև մեր քահանաների վրա»,— 1820-ին վկայում էր Սուրի արքեպիսկոպոսը (138, 232)։

XIX դարասկզբին ահա, արդեն իսկ ֆեոդալական խոշոր հողասեփականատեր դարձած մարոնական եկեղեցին, էլ ավելի էր ամրապնդել իր ազդեցությունը Լիբանան լեռան վրա թվական բացարձակ գերակշռություն ձեռք բերած իր համայնքի, ընդհանրապես կաթոլիկների շրջանում։ Սակայն բուն իսկ իշխանապետության քաղաքական կյանքում նրա դերը շարունակում էր մնալ չափազանց անակնառու։ Ընդհանրապես մարոնական եկեղեցուն վրդովող այդ իրավիճակի կողքին առկա էր նրա բարձրաստիճան կղերին վրդովող մի այլ անբնականոնություն. բացի ֆեոդալաղնվականական ծագմամբ մատի վրա հաշվվող եպիսկոպոսներից, հոգևոր մյուս բարձրաստիճան գործիչները, չխոսելով դեռ ցածրաստիճան հոծամբոխ քահանայական դասի մասին, հասարակ ծագում ունեին և

իրենք իսկ ընդհանուր առմամբ ստորացուցիչ կախման մեջ էին ֆեոդալ-աղնվականների կամայականություններից ու քմայքներից։ Հասկանալի է, որ մուկատաաճիներին Բեշիր II-ից հացված ամեն մի հարված լոկ համակիր արձագանք կարող էր գտնել նրանց շրջանում, իսկ այդ արձագանքն իր խորությամբ պարզապես կբազմապատկվեր իշխանապետի՝ քրիստոնեությունն ընդունելու փաստով։ Մյուս կողմից մարոնական հոգևորականության ոչ-արհամարհելի մի զանգված, կուսակրոնության նվիրված լինելով, համախմբված էր վանքերում, իսկ վանական տնտեսություններն էլ որպես կանոն ֆեոդալական կալվածքներից շատ ավելի սերտ աղերս ունենալով շուկայի հետ և առավել անմիջականորեն շահագրգռված լինելով այդ շուկայի զարգացմամբ, ծափողջունում էին երկրի վարչական կենտրոնացումը, ինչ որ առևտրի անարգել զարգացման անհրաժեշտ նախապայմաններից մեկն էր։

Եթե այս բոլորին զուգակցենք նաև Արևմտյան Եվրոպայի հետ լիբանանյան հարաճող տնտեսական ու քաղաքական կապերը, ապա դժվար չի լինի համոզվել, թե ինչպիսի հաշվարկներ էին թաքնված իշխանապետի՝ քրիստոնեությունն ընդունելու որոշման ետին։

Առարկայական լինելու համար պարտավոր ենք հենց այստեղ էլ ընդգծել, որ քրիստոնեության հարելով և Լիբանան լեռան խաչապաշտ համայնքներին առանձնաշնորհներ շնորհելով, Բեշիր II-ը ոչ միայն խորացնում էր դրուզներին իրենից ավելի ու ավելի անջատող անջրպետը, այլև անխուսափելիորեն դրուզական համայնքի շրջանում դառնությունից բխող ակներև լարվածություն էր առաջ բերում մարոնական համայնքի նկատմամբ, և, ինչ որ ավելի կարևոր է, սուր պայքար էր արծարծելու դրուզական և քրիստոնյա ֆեոդալական խմբավորումների միջև (43, 52)։

1804—1819 տասնհինգամյակում Բեշիր II-ը եռանդով ձեռնամուխ եղավ նաև շինարարական լայն գործունեության։ XIX դարասկզբին Բեյթ ադ-Դին գյուղը գնելով շեյխ Աբու Ալի Բինեդդինից (199, 17), այն Դեյր ալ-Կամարի փոխարեն նստավայր դարձրեց և բարեկարգ ճանապարհով միացրեց Դրուզների երկրի մայրուղուն։ Նախկին, լավագույն դեպքում ջորիների քարավանների երթերին պիտանի արահետատիպ ճանապարհները բարեկարգել տվեց, բացել տվեց նորերը և զարգացրեց ներքին հաղորդակցությունների կանոնավորությունը, հոգալով նաև կամուրջների և իջևանատների շինարարությունը։ Եվ, ինչ որ առավել ուշագրավն է, ֆեոդալական անիշխանությունից հետո երկաթյա թաթով հարված հասցնելով նաև անկարգության ու ավազակության, ճանապարհների վրա պա-

հակակետերի օգնությամբ կատարյալ ապահովություն ու անվտանգություն ապահովելով, նա լրջորեն նպաստեց առևտրի զարգացման, թեթևացրեց Լիբանան լեռան ու ծովափի բուրժուականացող տարրերի՝ առևտրականների, վաշխառուների և արհեստանոցների տերերի զարգացումն ու ամրապնդումը (28, 61; 43, 51)։

Բեշիր II-ի շինարարության ծաղիկն, անկասկած, եղավ Բեյթ ադ-Դինի իշխանապետական պալատը, որ նրա իշխանության հզորության ու փայլի խորհրդանիշը հանդիսացավ։ 1810-ական թթ. սկզբներին ձեռնարկելով պալատի շինարարության, մինչև 1830-ին աշխատանքների ավարտը Բեշիրը չխնայեց ո՛չ գանձատան միջոցները, ո՛չ էլ իր հպատակների տարապարհակ քրտինքը։ Անառարկելիորեն լիբանանյան ճարտարապետության գլուխգործոցը համարվող պալատում Բեշիրը ստեղծեց իսկական արքունական մթնոլորտ՝ իշխանապետական շքախումբ, հովանավորյալ մտավորականների և արվեստագետների՝ ժամանակի լավագույն քերթողների, ասմունքողների, ժամանակագիրների, երաժիշտների կանոնավոր հավաքներ, պերճ ու շքեղ ընդունելություններ։

* * *

1818-ին Աքայի Սուլեյման փաշայի մահվան պատճառով Բեշիր II-ի իշխանապետությունը թևակոխեց իր երրորդ, առաջինից ոչ սակավ փոթորկահույզ, այլ իր վերջնական արդյունքով երկրորդից ոչ պակաս ուշագրավ հանգրվանը, որ ձգվելու էր մինչև Սիրիայի վրա եգիպտական տիրապետության հաստատումը։

Մայդայի փաշայությունը փոխանցվեց Սուլեյմանի 26-ամյա սիրելի մամլուք, բանաստեղծական իր հակումներով և իր հոյակապ դրությամբ համբավված Աբդալլային (67, 24—25)։ Սա, խիստ փառասեր, իրեն որպես իդեալ Ջազզարին ուներ և բոսնիացուց էլ առաջին հերթին ժառանգել էր Լիբանան լեռան վրա ուժեղ իշխանապետ չտեսնելու ցանկությունը (37, 75)։

Ըստ նվիրագործված կարգի, Բեշիրը հարուստ ընծաներով շնորհավորելով նորընտիր փաշային, նրանից իշխանապետի պաշտոնում իր վերահաստատումը, այլ խոսքով նրանից նոր քաֆթան խնդրեց։ Աբդալլան էլ, ոչ առանց բանկիր Հայիմի խորհրդի, պահանջեց անմիջականորեն իր գանձատուն հասցնել ոչ միայն 1819-ի հարկը, այլև 2000 քսակի մի պարգևագումար (75, 266—267; 117, 158; 233, հտ. 3, 628)։ Այնուհետև տեսնելով, որ իշխանապետը հնչուն փողի փոխարեն սոսկ բողոքալիր տրտունջ է հասցնում Աքա, պնդելով, որ Սուլեյմանը խնդրո առարկա տարվա համար օրինական հարկագումարն ստացել է արդեն, կարգադրեց

Լեռը զինված շրջափակման ենթարկել, ապա և ձերբակալելով որպես պատանդ բանտարկել առևտրական գործարքներով Սայդա ու Բեյրութ իջած շուրջ 170 լեռնականների։ Բեշիրը հարկադրվեց զիջել, իր դանձատենից կանխիկ մուծել պահանջվող գումարը և այն հատուցելու նպատակով 1820-ին հարկահավաքներ ուղարկել Մեթն և դեպի հյուսիս ձգվող քրիստոնեական շրջանները, ըստ Լուիյան անօրինական հարկադրումից զերծ պահելով դրուզական շրջանները։

Մեթնի գյուղացիությունը, մերժելով երկրորդ անգամ վճարել ամիրական փողը, Քեսրուանի ամբողջ աղգաբնակչության կոչ արեց հետևել իր օրինակին և չթույլատրել ջաղդարյան ժամանակաշրջանի պրակտիկայի վերահաստատումը։ Յուսուֆ Շիհաբի որդիներ Հասանի և Սալմանի դրդմամբ հարկահավաքներին նույնիսկ զինյալ դիմադրություն ցույց տրվեց։ Փաստորեն սկսվեց գյուղացիական ապստամբություն։

Մեթնի, Քեսրուանի և հարակից քրիստոնեական շրջանների գյուղացիներն իրենց գործողությունները համակարգելու նպատակով որոշեցին համաժողովրդական հավաք գումարել։ Լեռան կենտրոնական և հյուսիսային հատվածների տարբեր գյուղերի բնակիչների վնքիլները՝ հատկապես ընտրված ներկայացուցիչները, թվով շուրջ 6000 մարդ, Անթիլիասի Մար Իլիաս եկեղեցում հավաքվելով երդմամբ որոշեցին սովորական գլխահարկն ու հողահարկը տարին մեկ անգամից ավելի չվճարել և Աբդալլա փաշայի անունով կազմեցին մի ուղերձ, որում ժողովրդական խորհրդության որպես միակ պատճառ իշխանապետի հարկային անօրինականությունը մատնանշելով, խնդրեցին Լիբանան լեռան քրիստոնյաներին ազատել ամիրի բռնություններից (43, 55։ 201, 169—170)։

Ինչպես ամիրներ Հասանի և Սալմանի նախաձեռնող դերը, այնպես էլ Անթիլիասի ժողովրդական հավաքի ղեկավարումը Յուսուֆ Խատիֆան արքեպիսկոպոսի և Քեսրուանի ֆեոդալ-աղնվականական մեծագույն խաղին տոհմի ներկայացուցիչ շեյխ Ֆադլ ալ-Բաղդադիի կողմից (117. 158—159), վերջապես Շիհաբ տոհմից ամիրների մի նոր խմբի (Ալի, Սաիդ, Ահմեդ, Ֆարես և այլք) հարումը շարժման (233, հտ. 3, 660—661) և Աբդալլա փաշային հասցեագրված ուղերձի ոգին կասկած չեն թողնում, որ սոցիալական դժգոհության հողի վրա բռնկված ժողովրդական շարժումը առաջին իսկ օրից սկսեց շեղվել իր պարզ հունից և ընկավ Շիհաբ տոհմի ներսում ամիր Բեշիրի բաղմամյա հակառակորդների և իշխանապետի կողմից իրենց կամայականությունների հարցում փոքր ինչ սանձահարված քեսրուանյան ֆեոդալների բացած պղտոր հունի մեջ։ Այդ հունը հաճելի էր նաև Աբդալլային, որ իր հայտնի կար-

գաղրությամբ ընչաքաղցությունից բացի հետապնդում էր իր նախորդի օրոք ոտների վրա խիստ ամուր կանգնած իշխանապետին տեղահան անելու, նրան առնվազն իր առաջ ճկելու նպատակ և որ օսմանական նենգամտությամբ փաստորեն ժողովրդական զայրույթն էլ ավելի բորբոքեց՝ Անթիլիասի հավաքին պատասխանելով, որ ինքն իբր ոչ մի լրացուցիչ հարկագումար չի պահանջում...։

Փաշայի երկակի խաղի էությունը, հետևաբար Աբայից որևէ օժանդակություն ակնկալելուն անմտությունը ըմբռնած, գրուզական ֆեոդալազնվականության զգալի մասից հետո նաև մարոնական վերնախավից լքված, Բեշիրը նախընտրեց կամովին թողնել իր աթոռը և հեռանալ Դրուզների երկրից։ Իշխանապետ կարգվեցին Հասանն ու Սալմանը, որոնց փաշան, որպես իր գործակալի, կցեց մահմեդական մի շեյխի և որոնցից պահանջեց ամիրի վճարածի չափով հարկադումարն ու պարդեսագումարը։

Աբդալլայի պատասխանից և Բեշիրի հրաժարումից բավարարվելով, Անթիլիասից իրենց գյուղերը վերադարձած լեռնականները վրդովվելով վերստին ոտքի կանգնեցին՝ հենց որ նոր իշխանապետերը Ջուբեյլ և Քեսրուան հարկահավաքներ ուղարկեցին։ Երդվյալ հակաբեշիրյանների ճամբարում դիրքորոշված մարոնական վերնախավին չհաջողվեց հանդրստացնել ժողովրդական բորբոքված զանգվածին։ Դրուզների երկրում ևս մթնոլորտը էլեկտրականացած էր. Դամասկոսի Մոհամմեդ Դերվիշ փաշան, որ 1820-ին Բիկաային վերստին տիրելու իր հերթական փորձի ժամանակ ծանր դաս էր ստացել Բեշիր II-ի աշխարհաղորից, երկրի ներքին խառնակությունից օգտվելով շտապել էր իրականացնել իր մտադրությունը։ Աբդալլա փաշան ինքը ևս շտապով զրչաց հզոր իշխանապետի փոխարեն երկու թույլ դրածոներ տեղադրելուն, քանի որ Դամասկոսի էյալեթի հարցում որոշակի հաշիվներ ուներ և դրանց իրագործման համար կարիքն էր զգում Լիբանան լեռան ոչ միայն անդորրության, այլև աջակցության։

Այս պայմաններում զարմանալի չէ, որ ընդհանուր համաձայնությամբ 1821-ին Սոմկանիյյայի ժողովում որոշում ընդունվեց իշխանապետական աթոռին վերահրավիրել Բեշիրին, որի առաջին գործն եղավ դաս տալ Մեթնի, Քեսրուանի և Ջուբեյլի շրջանի գյուղացիներին։ Զինված ջոկատների ուղեկցությամբ հարկահավաքներ ուղարկվեցին ամենուր։ Ջուբեյլի վինարշավը ղեկավարում էր իշխանապետի որդին՝ Կասեմը, որը Լիհֆադ գյուղում լեռնականների վինյալ հարձակման ենթարկվելով, սուրհանդակ հանեց հորը հաղորդելու, որ «ռայան անհնա-

գանգուրյուն է ցուցաբերում» (201, 511) և որ իրեն օգնական ուժեր են հարկավոր։ Իշխանապետն իր հավատարիմ Բեշիր Ջումբլաթին հանձնարարելով աշխարհազոր կազմել և փութով հասնել իր ետևից, թիկնապահ գնդով շտապեց որդուն օգնության։ Դյուղացիական զինված ջոկատներին չհաջողվեց կասեցնել ամիրի երթը և վերջինս Լիհֆադ հասավ ճգնաժամային պահի. Քեսրուանի, Բաթրունի և Ջիբբետ Բշարրիի զինված ջոկատները, միանալով ջուբելյցիներին, 6000-անոց ժողովրդական բանակ էին կազմել և պաշարման օղակի մեջ առել Կասեմին։ Ապստամբներն իրենց զենքը շուտ տվեցին իշխանապետի թիկնապահ գնդի կողմը և օդոստոսի 5-ին ծանր կորուստներ պատճառեցին նրան (11, 87)։ Ամիրը, սպասելով որ ջումբլաթիական աշխարհազորը տեղ հասնի, դիմեց խորամանկության. նա պատրաստակամություն հայտնեց քննարկելու գյուղացիության գլխավոր՝ տարին միայն մեկ անգամ հողահարկ և գլխահարկ վճարելու պահանջը և իշխանապետական հիմնականում դրուզական 3000-անոց աշխարհազորի տեղ հասնելուն պես սեպտեմբերի 1-ին անակնկալ հարձակման անցավ գյուղացիական վատ զինված բանակի դեմ, ջախջախիչ հարված հասցրեց և այնուհետև շարունակեց հետապնդումը մինչև Լիբանան լեռան հյուսիսային բարձունքները, անխնա մահապատժի ենթարկելով ոչ միայն շարժման ղեկավարներին, այդ թվում Նուհրա Աբու Ջաուդե քահանային, այլ նաև բոլոր նրանց, ովքեր իրենց հարստությամբ թե ազդեցությամբ հետագային կարող էին հավանական ընդդիմադիր լինել իր իշխանության (11, 88։ 128, հտ. 2, 143)։ Շեյխ Բեշիր Ջումբլաթի զորքը ավերեց Դեյր ալ-Լուայլիա հռչակավոր վանքը, Ջուբ Միսբահը, Ջուբ Միքայիլը և տասնյակ այլ բնակավայրեր։

1820—1821 թվականների գյուղացիական ապստամբության հետարյունալի հաշվեհարդարի օգնությամբ Լիբանան լեռան քրիստոնեաբնակ ամբողջ հյուսիսային հատվածն իր իշխանության ենթարկելուց և վերջնականապես ամիրայության կապակցելուց հետո, Բեշիր II-ը հայացքը դարձրեց իշխանապետությունից խլված Բիկաայի դաշտավայրի կողմը։ Դամասկոսի Դերվիշ փաշայից վրեժ լուծելու առիթը շուշացավ։ Սայդայի Աբդալլան, որ ալը էր դրել հարևան էյալեթի վրա, հրապարակ նետելով իր իսկ կողմից գրչագրված սուլթանական մի կեղծ ֆերման, որ իբր Շամ աշ-Շերիֆի փաշայությունը ևս ընծայում էր իրեն, 1821-ի դարնան լիբանանյան իշխանապետին կարգադրեց աշխարհազորով շարժվել Դերվիշի դեմ (214, 96)։ Ամիրը համոզված, որ վերջինիս ջախջախմամբ հնարավոր կլինի լիբանանապատկան Բիկաայի ներգրավումն իր իշխանապետության կազմում, միաժամանակ սուլթանական ստույգ թե

կեղծ Ֆերմանի առկայությունից անկախաբար Աքայի նորաբույս կառավարչից վախվորելու լուրջ հիմքեր ունենալով, առաջ խաղաց դեպի Դամասկոս։ Դերվիշ փաշան, ուժեղ գրոհ ակնկալելով և վախենալով, որ միջնաբերդում գերի կընկնի, բանակել էր Մեղզեյում, որտեղ մայիսի 26-ին մարոնա-դրուզական 10 հազարանոց աշխարհազորից չախչախիշ պարտություն կրեց։ Բեշիրն իր կյանքում երկրորդ անգամ լինելով հաղթական մտավ Դամասկոս (11, 90)։ Եթե, սակայն, առաջին մուտքն արժանացել էր վեհապետական շնորհապարտության, ապա այս անգամվանն իր դեմ պիտի բորբոքեր սուլթան Մահմուդի կատաղությունը։

Բանն այն չէր, որ ինքնակոչ-ապստամբ մի փաշա ձեռնոց էր նետել հնազանդ-օրինապահ մի այլ փաշայի։ Այդ երևույթը կայսրության առօրյայում անսովոր չէր բնավ։ Բանն այն էր, որ Աբդալլան փաստորեն ձեռնոց էր նետել սուլթանի գանձապետ բանկիրներին՝ հրեա Հայիմ տոհմից Սուլեյման և Ռաֆայել Ֆարիհի եղբայրներին, խեղդամահ անելով նրանց զարմիկին ու գործընկերոջ՝ դեռ Ջազզար ու Սուլեյման փաշաների օրոք Սայդայի, նաև Դամասկոսի էյալեթը իր ֆինանսական գործարքների մեջ խճճած իր բանկիր-գանձապետ Հայիմ Շեհադե Ֆարիհիին։ Ինչ խոսք, որ դերվիշական մոլեռանդ օրդենի անդամ Աբդալլան մինչ այդ էլ հրեշտակ չէր եղել, սակայն հպատակների, առանձնապես ռայայի նկատմամբ նրա հարկաֆինանսական քաղաքականությունը դիվական բնույթ էր ստանում Հայիմի անմարդկային ընչաքաղցության հետևանքով։ «Հայրերն իրենց զավակներին էին վաճառում (Հայիմից) պահանջվող գումարները վճարելու համար»,—վկայում էին ժամանակագիրները, ավելացնելով, որ սովորական երևույթ էր դարձել հնամենի վանքերն ու եկեղեցիները քարուքանդ կործանել տալը՝ ենթադրաբար հիմքում թաքցրված գանձեր հայտնաբերելու մոլուցքով (66, 22—27)։ Եվ ահա Աբդալլան բանկիր-գանձապետ էր նշանակել լևանտացի իր ստնտուի որդուն՝ քրիստոնյա Կատաֆագոյին (Ռուսաստանի, Ավստրիայի և Ֆրանսիայի հյուպատոսական ապագա գործակալին)։ Պոլսում նոր բանկիրի, անշուշտ նաև եվրոպացի վտարանդի հյուրերի ազդեցությանն էին վերագրում Աբդալլայի այլափոխությունը՝ «մահմեդական մոլեռանդությունից կտրուկ անցումը եվրոպական քաղաքակրթության նկատմամբ ջերմեռանդությանն». կադիների, իմամների, շեյխերի և դերվիշների ընկերակցությունը լքած՝ փաշան մխրճվել էր «գյաուրների» միջավայրը, երբեմնի սուրճից իսկ խորշողը այժմ շամպայն-գինիների համար հոգի էր տալիս, գունավոր մուճակ հագնող հպատակին կախաղան հանողն ինքը եվրոպավարի էր զգեստավորվում և, ինչ որ անըմբռնելի էր, յոթ տարի

առաջ բռնագանձված հարկերի համար զղջալով հարյուրհազարներով փող էր վերադարձնում քաղաքացիներին (66, 27—29)։ Եվ ահա այդ «խելագարը» Սայդայից Կատաֆագոյի ուղեկցությամբ առաջ էր շարժվում և ամիր Բեշիրի օգնականությամբ նվաճում էր նաև Դամասկոսի էյալեթը։

Հասկանալիորեն Պոլսի Հայիմները չէին կարող հաշտվել այդ անօրինակ իրադրության հետ և ուրեմն առանց դժվարության սուլթանին պիտի զորաշարժեին Աբդալլայի և Բեշիր Շիհաբի դեմ։

Դամասկոսից բացի նաև Սայդան ձեռք բերած Մուհամմեդ Դերվիշը, Հալեպի և Ադանայի փաշաների ուղեկցությամբ և 50 հազարանոց զորքով շարժվեց ապստամբների դեմ։ Աբդալլան փախավ և փակվեց ամուր Աքայում։ Հրահրիչ փաշայից թողքված, Բեշիրը միառժամանակ Լեռան ապավինելով և տեսնելով, որ սուլթանական կանոնավոր զորաբանակը հրով ու սրով գալիս է խարդախ վալիի հետ խրատ տալու նաև իրեն, իր հպատակներին օսմանցիների ներխուժումից ապահովագրելու միտումով 1822-ի հուլիսին սուրաց Եգիպտոս՝ ապաստան խնդրելու Մուհամմեդ Ալիից։

Իշխանապետական գահը, Ջումբլաթ տոհմի առաջարկությամբ և Դերվիշի համամտությամբ, վստահվեց հալածական իշխանապետի ազգականներից Աբբաս Շիհաբին (37, 76)։ Իշխանությունը փաստորեն անցավ Ջումբլաթների ձեռքը, քանի որ առանց այդ էլ անկամ, նոր իշխանապետը նրանց հլու կամակատարն էր լոկ։ Ելնելով այն փաստից, որ լիբանանյան լեռներում դրուզական (և ոչ միայն դրուզական) ֆեոդալ-ազնվականության ինքնակամությունը Ջումբլաթների թողտվությամբ ազատորեն վերականգնվեց, կարելի է ենթադրել, որ Բեշիր Ջումբլաթը գուցե թե հեռուն գնացող, վերստին ազատ շունչ առած շեյխերի համաձայնությամբ հարմար առիթով իշխանապետական գահին անձամբ բազմելու երազանքն ուներ։ Բոլոր դեպքերում այդ երազանքը չէր կարող մարմին առնել, քանի որ ամբողջ Սիրիայի, այդ թվում և Լիբանան լեռան ճակատագիրն այդ օրերին վճռվում էր Կահիրեում։

Մ. Ալին, օգտվելով հունական ազատագրական շարժումը ճնշելու գործում իր ծառայությունների նկատմամբ սուլթանի երախտապարտությունից, միջնորդեց Աբդալլայի և Բեշիրի համար ու նրանց ներումն ապահովեց։ Եգիպտոսի փոխարքան նույնիսկ իր գանձարկղից վճարեց Բ. Դռան կողմից առաջինից պահանջվող հետևյալ գումարները (67, 34։ 167, հտ. 1, վավերագրեր 112—118։ 104, 124)։

Հասկանալի է, որ անշահախնդիր չէր Մ. Ալիի միջնորդությունը։

Եգիպտոսի փոխարքան ցանկանում էր ամեն գնով ստեղծել արաբական հզոր մի պետականություն, որ առանց Սիրիայի գլուխ գալ չէր կարող։ Երկրամասը ձեռք բերելու իր մտադրությունը գործադրության դնելիս նրան խիստ անհրաժեշտ էին լինելու ինչպես Աքայի փաշան, այնպես էլ հատկապես լիբանանյան իշխանապետը։ Դեռ իր ժամանակին դը Գաղալվենն ու Բարրոն նկատել էին Մ. Ալիի այն հաստատ համոզմունքը, որ սիրիական գինարշավի հաջողությունը շատ բանով կախված է «Լեռան իշխանի համագործակցությունից կամ չեզոքությունից» (67, էջ 45)։ Ռուսական հյուպատոսն իր հերթին պնդում էր, որ «Մ. Ալին կարողացավ գնահատել Բեշիր II-ի ընդունակությունները, լիբանանյան լեռներում նրա ազդեցությունը և կանխատեսեց, որ ժամանակի ընթացքում ամիրն իր խելքով, իսկ Արդալլան իր խելառությամբ կկարողանան օժանդակել Սիրիայի նկատմամբ իր ծրագրերի իրականացման» (11, 91)։

Եթե ռուս դիտորդի կարծիքով «կարող է պատահել», որ Կահիրեում Մ. Ալիի և Բեշիրի միջև «ծրագրվեց դավ, որը ևս տասը տարի հասունացավ՝ հանգամանքներից նպաստավորվելով» (11, 91), ապա այսօր արդեն գաղտնիք չէ, որ Եգիպտոսի փոխարքայի և լիբանանյան իշխանապետի միջև իրոք էլ դաշինք կնքվեց այն մասին, որ եգիպտական զորքերի՝ Սիրիա ներխուժման օրն իսկ 10 հազարանոց մարոնա-դրուզական աշխարհազոր (37, 77) փութալու էր փոխարքայի Իբրահիմ զորահրամանատար որդուն օգնության, իսկ եգիպտական տիրապետության հաստատումից հետո իշխանապետությունը, պահպանելով իր ինքնուրույն գոյավիճակը, առանձնաշնորհյալ էր դառնալու։

1823-ին հաղթական Դեյր ալ-Կամար վերադառնալով, Բեշիր II-ն իր հիմնական հոգսը դարձրեց դրուզական ֆեոդալ-աղնվականական վերջին մեծազդեցիկ Ջումբլաթ տոհմի հետ հաշվեհարդար տեսնելը։ Իսկ տոհմապետ Բեշիրը իշխանապետին այդ քայլին դիմելու հիմքերն ինքն իսկ էր տվել։

Սկզբնաղբյուրները, Միխայիլ ադ-Դիմաշկին, օրինակ, (214, 28), Բեշիր Ջումբլաթին իշխանապետի «եղբայրն» են անվանել։ «Շեյխն իրավունք ուներ ամիրից շնորհակալություն ակնկալելու իր ազդեցության շնորհիվ Լեռան վրա տիրած խաղաղության համար»,—գրել է ռուսական հյուպատոսը և ընդգծել. «Բեշիր Ջումբլաթը, հայրենասիրությունից դրդված, ցանկանալով Լեռն ապահովել փաշաների զինված միջամտությունից և կանխարգելելու համար դրա պատրվակը՝ իշխանապետական աթոռի հավակնորդների գզվռտոցը, իր ամբողջ հնդինակությամբ թիկունք էր տվել ամիր Աբբասի թեկնածության, նրա համար բարեխո-

սելով թուրքական իշխանությունների մոտ և որպես պատանդ իր իսկ որդուն առաջարկելով» (11, 91)։

Իրականության ավելի մոտ պետք է համարել մեր ենթադրությունը՝ Ջումբլաթ տոհմի փառասիրական նկրտումների վերաբերյալ։ Բանն այն է, որ Բեշիր Ջումբլաթը, որպես դեռ դարասկզբին Ջազզարի դեմ անհավասար պայքար մղող Բեշիր II-ի միակ աջակիցը, իրավունք չուներ մոռանալու (եթե հալածական իշխանապետի հավատարիմ աջակիցն էր մնացել), որ Աբբասն իր եղբոր՝ Սուլեյմանի հետ բոսնիացու ձեռքին գործիք դարձած, իր դավադրություններով ինչպիսի տհաճություններ էր պատճառել իր ազգականին։ Եվ հետո, եթե ընդունենք անդամ Աբբասին իշխանապետ կարգելու հարցում հայրենասիրական դրդման վարկածը, ապա ինչո՞վ բացատրել այն փաստը, որ Բեշիր Ջումբլաթը, Բեշիր II-ի երկիր վերադարձը խափանելու մտոք, դավադրակից էր եղել Աբբասին, դավադրություն, որին ամենայն մանրամասնությամբ իրազեկ էր պահվել վտարանդի իշխանապետը (37, 78)։

Կարելի է, անշուշտ, վարկածել մի դրդիչ ևս. դա դրուզական էթնարխիայի հարցում երկու Բեշիրների քաղաքականության դեմբնթացությունն էր։ Եվ իրոք, հատկապես Հալեպի շրջանի դրուզների ամիրայության սահմանները տեղափոխվելուց հետո շեյխ Բեշիրը հետապնդում էր դրուզական ամբողջ համայնքը ներանկախ մի շրջանում՝ «Դրուզների ապագա հայրենիքում» համախմբելու ծրագիրը (234, 20—21)։ Այդ նպատակով նա բանագնացներ էր ուղարկում Հերմոն և ալ-Ալա լեռների, Անտիոքի և Մարաշի շրջանների, Սաֆատի, Կարմելի և այլ վայրերի դրուզական համայնքների մոտ՝ առաջարկելով ներդաղթել դեպի իր մանրիշխանությունը (117, 156—157)։ Այդ քաղաքականությունը հասկանալիորեն վրդովում էր ոչ միայն Ֆախրուդ-Դին II-ի և Ալի փաշա Ջումբլաթի նախընթացից խրատված օսմանյան իշխանություններին, այլև մահմեդական մոլեռանդ ուղղափառներին, որոնց միջավայրում մինչև իսկ Մահմուդ II սուլթանից լիբանանյան լեռների վրա դրուզական անկախ էթնարխիայի ստեղծման խափանումը պահանջող հանրագրություն կազմվեց (235, 275—276)։ Բ. Դուռը Աքայի փաշային կարգադրեց մահապատժել Ջումբլաթ մեծ շեյխին։ Վերջինս, իր հակաբեշիրյան նոր (հետևաբար և հակաաբդալլայական) դիրքորոշման թե հարուստ ընծաների ներգործությամբ քաղցրացած բանկիր-գանձապետ Եղեկիել Ֆարիհիի միջնորդությամբ միայն իր գլուխը փրկեց դահճի պարանից և շտապեց, օսմանցիներին հաճոյանալու նպատակով, ոչ միայն Մուխթարայում մզկիթ կառուցել տալ (75, 236—237։ 236, 407—408), այլև դրուզ երևելիների

դրդել «ճշմարիտ հավատին» վերադառնալու։ Այդ քաղաքականությունը, սակայն, ինչպես և այն քողածածկելու միտումով սուննայի նկատմամբ Ջումբլաթների տոհմապետի հարգալիր խոնարհումները, դեմընթաց էին ամիր Բեշիրի նկատառումներին և հաշվարկներին։

Բեշիր Ջումբլաթին ասպարեզից դուրս մղելու ենթակայական այս գործոնների կողքին առկա էր նաև առարկայական առաջնայնորեն կարևոր մի գործոն. Մ. Ալիի ոխերանքը կրկնելու՝ իր երկրի բացարձակ իշխանավորը դառնալու համար անհրաժեշտ էր վերացնել ու նույնիսկ որպես դաշնակից հրապարակի վրա չունենալ իր բացակայությանն էլ ավելի հզորացած և օսմանյան իշխանավորների մոտ առավել հեղինակություն ձեռք բերած Ջումբլաթ տոհմին։ Ինչպես արձանագրվել է սկզբնաղբյուրներում, ամենուր դրկնում էին, որ Լեռը երկու Բեշիրների համար շատ է նեղ (107, 111)։

Բեշիր II-ը, Ջումբլաթների տոհմապետին նվաստացնելու մտոք, վերադարձի առաջին իսկ օրվանից իրեն մերձեցրեց նրա հակառակորդներին՝ իր իսկ կողմից թուլացված յազբեկի շեյխերին (204, 83), սրանց ձեռքով մի քանի անգամ մահափորձ կազմակերպեց նրա կյանքի դեմ (237, հտ. 2, 52—53), ապա և Բեշիր Ջումբլաթից պահանջեց 1000—1500 քսակով մասնակցել Բ. Դուան Աբդալլա փաշայի հետևյալ և Մ. Ալիի կողմից վճարված պարտքերի գծով ամիրայության բաժնի հատուցման, առնվազն նույնքան էլ վճարել մայրաքաղաք ուղարկելու համար (11, 91։ 210, 26։ 204, 18—20)։ Կռահելով իշխանապետի մտադրությունների իսկությունը, Ջումբլաթների տոհմապետը առ ի զգուշություն փախավ Աքքար, իր մահմեդական զինակիցների մոտ, ապա Ուադի աթ-Թայմ ու Հաուրան և լուրջ նախապատրաստությունից հետո 1825-ի հունվարի 7-ին զինված պայքարի դուրս եկավ՝ ոտքի հանելով ոչ միայն իր դրուզ կուսակիցներին, այլև իր տիրույթի, հատկապես սեփական կալվածքների քրիստոնյա գյուղացիությանը (233, հտ. 3, 756։ 230, 156)։

Ջումբլաթ մեծ շեյխի ճակատում զեն ի ձեռին կանգնած էին դրուզ ազնվականներից Արսլանները, Իմադները, Աբդ ալ-Մալիքները, Աբու Շաքրաները (շեյխ ալ-աբլ Յուսիֆի և Բաակլինի, Արադիյայի և Սոմկանիյայի կրոնապետերի մասնակցությամբ), Թալհուքները և Ջումբլաթները, սուննի Շիհաբներից բազմաթիվ ամիրներ, մարոնականներից Խազինները, Հոբեյշները և Դահդահները, անգլիական ռեզիդենտ Ստենհոպի կամավորները, ընդհանուր առմամբ տաս հազար հետևակ և երկու հազար ասպազեն։

Ամիր Բեշիրի ճամբարում էին մի շարք քրիստոնյա և Թաշայի

սունների Շիհաբ ամիրներ, Աբու՛լ Համա, Թալհուք, Աբդ ալ-Մալիք, Համադե և այլ տոհմերի ազնվականներ, Դեյր ալ-Կամարի, Ջահլեի և Աբու Սամրա Ղանեմի ջեզզին-բաակլինյան քրիստոնյա աշխարհազորերը, ինչպես նաև Աքայի փաշայի տաս հազար ենիչերիներ և Տրիպոլիի կայազորը (107, 116—120)։

Ավելի քան մի շաբաթ տևած և Բեյթ ադ-Դինի, Սոմկանիյյայի, Բաակլինի, Բակաատայի և Ջեզզեյի ռազմաբեմերում մղվող ճակատամարտն ավարտվեց ջումբլաթիների ջախջախմամբ և Մուխթարայի ամրոցի թալանմամբ ու ավերմամբ (104, հտ. 2, 125—126։ 160, հտ. 2, 115—116)։ Հասկանալի է, որ վճռական նշանակություն ունեցավ Աքայի հրետանային ուժերի բուռն մասնակցությունը։ Բեշիր Ջումբլաթը, Հաուրանի իր կուսակիցների մոտ փախչելիս, ձերբակալվեց Դամասկոսի փաշայի կողմից և ուղարկվեց Աքա, որտեղ Բեշիր II-ի և Մ. Ալիի պահանջով խեղդամահ արվեց (157, էջ 345—346)։ Մեծ շեյխի որդիները հալածական դարձան։ Մահապատժվեցին կամ վտարանդվեցին մեծ թվով այլ ֆեոդալ-ազնվականներ, հատկապես Արսլան ամիրական տոհմի ներկայացուցիչներ։

Դրուզ մեծ շեյխական ամենահզոր՝ Ջումբլաթ տոհմը փաստորեն ոչ միայն իշխանազրկվեց, այլև նրա սեփական կալվածքներն էլ բռնագրավվեցին և նվիրարերվեցին կամ աճուրդով վաճառվեցին իշխանապետի կողմնակիցներին (204, 15—16)։ Աշ-Շուֆ ալ-Սվայջենին անցավ Շահին աղա Ռիզկի, աշ-Շուֆ ալ-Հիթին՝ Ղանթուս ալ-Կահվաջիի, Խառուբը՝ Համադենների, Թուֆֆահը՝ Մուբեյդ տոհմի, Ջեբել առ-Ռեյհանը՝ ամիր Բեշիրի Խալիլ որդու, Ջեզզինը՝ Նասիֆների, Բիկաան՝ իշխանապետի երեք որդիների տնօրինության։

Բեշիր Ջումբլաթի ջախջախումը և նրա հզոր տոհմի ու կուսակցության ասպարեզից հեռացումը ոչ միայն Բեշիր II-ի իշխանության, այլև իշխանապետության կյանքում խոշոր իրադարձություն էր։ Ամիրայության պատմության մեջ առաջին անգամ լինելով, նրա կորիզ Դրուզների երկրի ֆեոդալական մանրիշխանությունների համարյա խստառ ոչընչացմամբ, վերջնականապես վերացվում էր դրուզական համայնքի քաղաքական տիրապետությունը և դադարում էր դրուզ ազնվականության նույնիսկ ձևական մասնակցությունը երկրի վարչակառավարման գործին։ Իշխանապետը դառնում էր ամիրայության անվիճելիորեն միանձնյա ղեկավարը (214, 606) և թեկուզ, որպես նորահավատ մարոնական-քրիստոնյա, կամա թե ակամա նպաստավորելով իր համայնքի քաղաքական կշիռը, նրան ոչ թե քաղաքական տիրապետության էր հասց-

նում, այլ պարզապես ավարտին էր հանգեցնում երեք հարյուրամյակ տևած մի պրոցես. մարոնականներին ու նրանց հետ նաև քրիստոնյա մյուս համայնքներին իշխանապետությանն անդառնալիորեն առնչելով՝ Լիբանան լեռան մեկ միասնական վարչաքաղաքական միավորի վերածման պրոցեսը։

Լիբանան լեռան շրջանակներում կենտրոնացված միասնական իշխանապետության կազմավորման պրոցեսի ավարտն, անկասկած, պիտի նպաստավորեր սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական (նաև մտավոր-մշակութային) զգալի տեղաշարժեր, որոնց անդրադառնալու ենք դեռ։ Այստեղ ի միջի այլոց նշենք, միայն, որ շատ բանով Բեշիր II-ի բարենորոգչական գործունեության հետ աղերսվող այդ տեղաշարժերի շնորհիվ Լիբանան լեռն իրեն հարող ծովափնյա շերտով արաբական աշխարհում հետզհետե գրավելու էր իր տարածական անշան կշռին խիստ անհամապատասխան ուշագրավ տեղ։ Լուցկին, հոգ չէ, թե հակիրճ, դիպուկ է բնութագրել ժամանակակիցներ դը Գադալվենի և Բարրոյի կողմից «հեղափոխական և դեսպոտիկ երկու մեծ դեմքերի»՝ սուլթան Մահմուդի և Մ. Ալիի հետ հավասարեցված (67, 43) Բեշիրի դերը. «Թեկուզ նա ո՛չ կանոնավոր բանակ, ոչ էլ նոր ֆաբրիկաներ ու դպրոցներ ստեղծեց, նրա գործունեությունը կրեց առաջադիմական բնույթ և օբյեկտիվորեն նպաստեց երկրի տնտեսական զարգացման» (28, 60)։

Իսկ այդ գործունեության առավել փայլուն ու բաղմարդյուն շրջանը վերաբերում է արդեն եգիպտական տիրապետության ժամանակաշրջանին։

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐՆ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Արևելյան Միջերկրականում գլխավոր տիրակալը դառնալու և առաջին իսկ հնարավորության դեպքում Բ. Դուան իր ստորադասությունը թոթափելու Մ. Ալիի հույսերը 1827-ի հոկտեմբերին Նավարինի նավամարտում ջուրն ընկան։ Եվ սակայն Եգիպտոսի ալբանացի եռանդաշատ փոխարքան իր տոհմի գլխավորությամբ արաբական խոշոր պետականություն ստեղծելու ծրագրերը չթաղեց, մանավանդ որ 1828—29-ի ռուս-թուրքական պատերազմին հետաքրքրորեն առնչված չլինելով, Ադրիանապոլսի պայմանագրից հետո սուլթանին իր իսկ կողմից հարված հասցնելու գործում եվրոպական մեծ պետությունների, առնվազն Ռուսաստանի և Ֆրանսիայի բարյացակամությունը նա անկասկածելի էր համարում։

Սիրիա ներխուժելու և հեշտ հաջողության հասնելու ներքին նախադրյալներն էլ հասուն էին. 1820-ական թթ. երկրորդ կեսից սուլթանի բարենորոգչական փորձերը, ռազմական անհաջողությունները և հատկապես կայսրության տնտեսական դրության վատթարացումը՝ Դամասկոսում, Երուսաղեմում, Նաբլուսում և այլ քաղաքներում իրար ետևից բռնկեցնում էին հակաթուրքական ապստամբություններ, որոնք հոգ էին հարթել եգիպտական հաղթական զորքերի որպես ազատարար դիմավորման համար։ «1828—1829-ի անհաջող պատերազմի հետևանքով,— գրել է Կ. Մարքսը,— Բ. Դուան իր հեղինակությունը կորցրեց սեփական հպատակների աչքում։ Եվ այն ժամանակ,— ինչպես դա սովորաբար լինում է արևելյան կայսրություններում, երբ գերագույն իշխանությունը թուլանում է,— պայթեցին փաշաների հաջող ապստամբություններ։ Արդեն 1831-ի հոկտեմբերին կոնֆլիկտ ծագեց սուլթանի և եգիպտական

Մուհամմեդ Ալի փաշայի միջև, որ Բ. Դռան աջակցել էր հունական ապըստամբության ժամանակ» (3, հտ. 9, 388)։

Մ. Ալին «կոնֆլիկտ» հրահրելու և Սիրիա մտնելու պատրվակ էլ ուներ. Աքայի Աբդալլա փաշան ոչ միայն հապաղում էր մարել տասնամեկ հազար քսակի իր պարտքը, այլև չէր վերադարձնում բազմահազար եգիպտացի այն ֆելլահներին, որոնք, աշ-Ջաբարթիի վկայությամբ, «փախել և հայրենիքից հեռացել էին անտանելի կամայականությունների և սարսափելի ճնշման հետևանքով» (227, հտ. 4, 109)։ 1810-ական թթ. «Սիրիան և Թուրքիան լցրած» այդ ֆելլահներին հաջորդ տասնամյակում միացել էին զորագրումից փախչելով Աբդալլայի տիրույթում ապաստան գտած հազարավոր երիտասարդներ (167, էջ. 281—291 և 311—318)։ Աքայի փաշան մերժում էր փախստականներին հանձնել, Բ. Դռան խորհրդով պատճառաբանելով, որ նրանք, որպես սուլթանի հպատակներ, իրավունք ունեին Օսմանյան կայսրության շրջանակներում ապրել այնտեղ, որտեղ կցանկանային (67, 47—48)։ 1831-ի նոյեմբերի 14-ին Կահիրեից զորքն իր որդու՝ Իբրահիմի հրամանատարությամբ ճանապարհելիս, Մ. Ալին ձևացնում էր, որ իբր իր «կոնֆլիկտը» Բ. Դռան հետ չէ, որ ինքը մնում է սուլթանի հավատարիմ հպատակը և պարզապես Աքայի տիրոջն է պատերազմ հայտարարում՝ նրա հետ ներքին հարցեր լուծելու (204, 19—20։ 171, 332—338)։

Սիրիական զինարշավի հենց սկզբում, երբ Իբրահիմի զորքերը, օսմանյան կայազորների դիմադրության համարյա անգոյության պայմաններում, հանդիսավոր զբոսապտույտով նվաճում էին Պաղեստինը, Լևանտում լուրջ դիմադրության նախապատրաստվողը միայն ու միայն Աբդալլան էր։ Ճիշտ է, որ դրուզ ազնվականության հակաբեշիրյան շարժումները, ամբողջ Լևան շեյխ հռչակված Նաասան Ջումբլաթի գլխավորությամբ (107, 154) և Արու Նակիտների մասնակցությամբ Դեյր ալ-Կամարում, Մեթնում և Բիկաայում Բեշիր II-ի դեմ դնված խռովություն բարձրացրեցին այն ժամանակ, երբ Իբրահիմը դեռ չէր հասել Աքայի ծովաբերդի առաջ, սակայն լուրջ հիմքեր չկան խռովարարներին վերագրելու ամիրի դաշնակից եգիպտական զորահրամանատարի առաջխաղացքը խանգարելու նպատակ, ինչպես դա արել է պատմաբան Սալիբին (37, 79)։ Իշխանապետի հիմնակսնում մարոնական կուսակիցներից հեշտությամբ ճնշված այդ խռովությունը, որին մասնակցություն բերած վերջին դրուզ շեյխերը փախչելով գնացին միանալու հյուսիսում ձևնածալ նստած օսմանյան բանակին, իրականում ավելի շատ դուստ ներլիբանանյան իրադարձություն էր, եգիպտացիների ժամանումից հետո

անկասկած անխախտելի դառնալիք Բեշիրի հետ հաշվեհարդար տեսնելու մի վերջին հուսահատ փորձ։

1831-ի նոյեմբերի 26-ին եգիպտական զորքերը Աքայի մատույցներում էին և Իբրահիմ փաշան, հատուկ նամակով հիշեցնելով հոր հետ Կահիրեում կնքված համաձայնությունը, Բեշիր II-ին հրավիրեց լիբանանյան աշխարհազորով միանալ իրեն։ Եվ սակայն Շիհաբների խորամանկ ու բազմափորձ տոհմապետը դեռ պատրաստ չէր փակ աչքերով նետվելու Մ. Ալիի հակասուլթանական ձեռնարկման ճամբարից ներս (67, 84)։ Լեռան բարձունքից ուշի-ուշով հետևելով իրադարձություններին, նա ցանկանում էր ամեն գնով ժամանակ շահել, մանավանդ որ գիտեր, թե Արդալլան օգնության խնդրանքով սուրհանդակ էր ուղարկել Պոլիս։ Եվ ուրեմն պատրվակելով հենց նոր ճնշված խռովությունն ու քաղաքացիական պատերազմի վերսկսման հավանականությունը, նա հապաղեց ընդառաջել եգիպտական հրավերին։ Իբրահիմը, որ անկասկած լավ էր սերտել ֆրանսիացիների սիրիական զինարշավի դրվագները, երկրորդ սպառնալի նամակով «հոր արևով երդվում էր» Աքան պաշարված թողնելով ներխուժել Լիբանան լեռ և «կործանել իր իշխանապետությունը՝ եթե առանց հետագա տատանումների չներկայանա իր ճամբարը» (11, 97)։

Բեշիր II-ի դիրքորոշումը փութացնելու հարցում սպառնալիքն իր դերն ունեցավ, մանավանդ, որ Իբրահիմը, ի տարբերություն Բոնապարտի, Աքան ամուր շրջափակելով (իսկ այդ շրջափակումը տևելու էր ուղիղ 6 ամիս, մինչև 1832-ի մայիսի 27), չորս հազարանոց մի զորագունդ ծովափով արձակեց դեպի Լիբանան լեռան ծովափնյա մատույցները, մի քայլ, որ թեկուզ և անմիջականորեն լոկ ռազմավարություն էր, այնուամենայնիվ անուրանալի ներգործություն ունեցավ։ Իր ներգործությունն ունեցավ և այն, որ իշխանապետի մարդիկ Բեյրութի մերձակայքում ձերբակալեցին Աբդալլայի Պոլսից վերադարձող սուրհանդակին ու նրանից էլ իմացան, որ օսմանյան մայրաքաղաքը անմիջականորեն մի հրացանի օգնություն իսկ չի կարող հասցնել պաշարված Աքային (11, 96)։

Իշխանապետի դիրքորոշման վրա անկասկած որոշակի ներգործություն ունեցավ նաև իր դրուզ թե մարոնական լեռնականների շրջանում եգիպտական ձեռնարկման հաջողության հարցում տնտեսական ազդակներից թելադրվող համակրանքը։ Բանն այն է, որ ի տարբերություն սիրիական թուրք փաշաների, եգիպտոսի փոխարքան ավելի գործնական վերաբերմունք ուներ ամիրայության հպատակների ունակությունների

նկատմամբ և իր տնտեսական վերափոխությունների ծրագրերն իրականացնելիս մինչ այդ հաճախ էր դիմել նրանց ծառայություններին ու դրանք վարձատրել իշխանավայել առատաձեռնությամբ (227, հտ. 4, 256, 281, 326, 355)։

Իշխանապետը միաժամանակ չէր կարող աչքաթող անել հատկապես քրիստոնյա համայնքների շրջանում եգիպտական ձեռնարկման նկատմամբ հարաճող համակրանքը, որը, թո՛ղ հակաթուրքական մշտագոտրամադրությունների ավիշը, խթանվել էր նաև Երուսաղեմի գրավումից անմիջապես հետո ինչպես ռազմական ու քաղաքական, այնպես էլ հոգևոր իշխանությունների անունից Իբրահիմի հրապարակած հրամանագրից, որով Սայդայի էյալեթի, Երուսաղեմի և Նաբլուսի սանջակների բոլոր մութասելլիմներին հրամայվում էր քրիստոնյաներից և հրեաներից գանձվող պաշտամունքային բոլոր՝ օրինականացված թե ապօրինի հարկերի ու տուրքերի վերացման մասին։ Դա չէր կարող ցնցող տպավորություն չթողնել լիբանանյան լեռներում, մանավանդ որ, ինչպես ընդգծել է ժամանակագիրը, հենց հրամանագրի նպատակներից մեկն էր «իրեն (Մ. Ալիին—Ե. Ն.) կապակցել Լիբանան լեռան մեծաթիվ քրիստոնյա ազգաբնակչությունը, հանձին որի նա հույս ուներ ձեռք բերել իր փառասիրական նկրտումների համար հուսալի հենարան» (11, 89, 99)։

Բեշիրն իր աշխարհազորի ուղեկցությամբ հայտնվելով Աքայի առաջ բանակած Իբրահիմի ճամբարում, լեռնականների հավատարմության ու համագործակցության որպես երաշխիք առաջին շաբաթներին պատանդ պահվեց, մինչ Խալիլ (ըստ որոշ աղբյուրների՝ Սեյֆ ադ-Դին մականվանյալ Ամին) որդին ուղարկվեց լիբանանյան ծովափի քաղաքները թուրքական կայազորներից մաքրագործելու։ Հիմնականում լիբանանյան լեռնականներն են, որ գրավեցին Սուրը, Սայդան ու Բեյրութը, մինչ Տրիպոլիի դիմադրությունն ընկճվեց այն բանից հետո, երբ օգնության հասավ Իբրահիմն ինքը։

1832-ի գարնան Մ. Ալիի հավատուրաց հայտարարվելը մի փոքր աշխուժացրեց Սիրիայի մահմեդական մոլեռանդ շրջաններին, այդ թվում և Բեշիր II-ի դրուզ հակառակորդներին։ Տրիպոլիում եգիպտա-լիբանանյան կայազորի և Դեյր ալ-Կամարի շրջանում ամիրի իշխանության դեմ խռովություն բարձրացվեց։ Իբրահիմն իր չորս հազարանոց թիկնապահ գնդով անձամբ շտապեց Լիբանան լեռ և ջախջախեց իշխանապետի հակառակորդներին (11, 102; 67, 125—126)։ Բեշիրն իր և իր իշխանապետության ճակատագիրը առնչել էր այլևս եգիպտական ճակատի հետ,

հետևաբար և չվարանեց Ուադի աթ-Թայմի Շիհաբների ուղեկցությամբ Իբրահիմի հետ շարժվելու Դամասկոսի դեմ, տեղի փաշային պարտության մատնելուց հետո արշավելու Հյուսիս, մինչև Հոմս, որտեղ, հուլիսի 9-ին, հիմնականում լիբանանյան աշխարհազորն է, որ վճռական հաղթանակ տարավ և օսմանցիները, 3000 սպանված և 2000 ռազմագերի տալով, Սիրիան լքեցին եգիպտական զորահրամանատարի ողորմածության։ Եգիպտական զորքերի 1833-ի փետրվարի 2-ին Քյոթահիա հասնելուց հետո Հարությունամիրա Պեզճյանի խորհրդով և սերասկյար Խուսրև Մեհմեդ փաշայի համաձայնությամբ Մահմուդ II-ը Նիկոլայ I-ի օգնության դիմեց։ Նրա խնդրանքով ռուսական զորքերի ցամաքահանումը Կոստանդնուպոլիս՝ խուճապի մատնեց Անգլիային, Ֆրանսիային ու Պրուսիային, որոնք շտապեցին միջամտել և կողմերին պարտադրել մայիսի 4-ի «հաշտությունը». սուլթանը ճանաչում էր Մ. Ալիի ժառանգական իշխանությունը Եգիպտոսի, Արաբիայի, Սուդանի և Կրետեի վրա ու ժամանակավորապես նրան վստահում պատմաաշխարհագրական Սիրիայի (Աբայի, Դամասկոսի, Տրիպոլիի և Հալեպի էյալեթների, Կազայի և Նաբլուսի սանջաքների) վարչակառավարումը, մինչ Կիլիկիան (Ադանայի էյալեթը) որպես մուխասսիլիք շնորհվում էր Իբրահիմին*։ Փաստորեն ամբողջ Սիրիան, այդ թվում և լիբանանյան ամիրայությունն ու նրա կազմից դուրս գտնվող լիբանանյան հողատարածությունները, օսմանականից անցնում էին եգիպտական տիրապետության։

Եգիպտական տիրապետության հաստատումը ինչպես ամբողջ Սիրիային, այնպես էլ լիբանանյան ամիրայության բերեց մի շարք ուշագրավ առավելություններ։

Նոր իշխանության բերած գլխավոր առավելությունն այն էր, որ, թո՛ղ լիբանանյան ինքնուրույն գոյատևող ամիրայությունը, ամբողջ Սիրիան ղերծվում էր հաճախ հակամարտող փաշաների միջև իր մասնատվածությունից և խալիֆայության սկզբնական շրջանից հետո առաջին անգամ լինելով համախմբվում էր մեկ միասնական կենտրոնի՝ Դամաս-

---

* Հայկական միջավայրում պահպանված մի ավանդության համաձայն, Իբրահիմն իր զինարշավի ընթացքում բարյացակամություն է դրսևորել հայերի նկատմամբ ու պաշտպանել նրանց, ճանաչել է Զեյթունի ինքնավար գոյավիճակը և Սիսի մայրավանքում այցելելով Կիրակոս կաթողիկոսի գերեզմանին ու ակնարկելով հայերի անկախության ի խնդիր նրա ոգորումներին, ասել է. «Ո՛վ Անատոլուի առյուծ, քո թողած հիշատակներդ կհասկնամ, որ միտքդ ուր կնայեր։ Դուն իմ՝ Արաբիո առյուծիս որովայնք է ապրեիր և իրարու հանդիպեինք» (տե՛ս Ա. Ն. Նազար, Արաբներու դերը Մերձավոր Արևելքի մեջ և վարմունքը հայոց նկատմամբ, «Եփրատ», 6—9—1947)։

կոսի շուրջ և օժտվում զինվորական թե քաղաքացիական, հատկապես դատական, հարկային և ֆինանսատնտեսական կանոնավոր վարչությամբ։

Դամասկոսում ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հարցերում գերագույն լիազորը բնականաբար Իբրահիմ փաշան էր, սակայն քաղաքացիական կենտրոնական վարչության բուն պետը Շերիֆ փաշան, իսկ ֆինանսական կենտրոնական վարչության բուն ղեկավարն էլ Հաննա Բահրի բեյն էին։ Անմիջականորեն Շերիֆին էին ենթարկվում քաղաքների ու շրջանների՝ կենտրոնից նշանակվող մութասելլիմները, որոնց նախագահության ներքո էլ գործում էին տեղական բավականին իրավատու մեջլիսները։ Մութասելլիմները պարտավոր էին քրիստոնյա կալվածատերերից, առևտրականներից և հոգևորականներից բաղկացած այդ մեջլիսների հետ համաձայնեցնել վարչակառավարման հետ առընչվող բոլոր, հատկապես ֆինանսատնտեսական հարցերը, իսկ մի փոքր ուշ՝ նաև նրանց դատավարման հանձնել առևտրական և այլ վեճերի լուծումը։ Հաննա Բահրիի գլխավորած վարչությունը ամբողջ երկրամասի և՛ հարկերի ու տուրքերի, և՛ բոլոր մեջլիսների ֆինանսատնտեսական գործողությունների լիազոր վերահսկիչն էր։ Բացառիկ նշանակություն ուներ և այն, որ ուղղակի գանձատուն մուտք գործող բոլոր հարկերն ու տուրքերը, նաև տուգանքները, բռնագանձումներն ու մանավանդ կաշառքը վերացվելով, իրենց տեղը զիջել էին բացի հոգևորականներից, ռոճկավորված պետական ծառայողներից և հյուպատոսներին սպասարկողներից՝ առանց դավանանքի խտրության չափահաս (16—60 տարեկան) բոլոր տղամարդկանցից ըստ ունեցվածքի (եկամտի երկոտասանորդ մասի չափով) գանձվող միասնական եկամտահարկով՝ ֆիրդեով (11, 126։ 167, հտ. 2, 69)։

Հասկանալի է, որ ֆեոդալների դասակարգը կորցրեց երկրամասի վարչակառավարման գործում իր երբեմնի մենիշխան ու ներգործուն աղդեցությունը և նրա տիրույթներն էլ ենթարկվեցին համասիրիական տընտեսական, առաջին հերթին հարկային նոր իրավիճակին։ Այն փաստը, որ իր զինական ուժից զրկված այդ դասակարգը եգիպտական զորախմբի աջալուրջ ներկայության պայմաններում հարկադրված էր խոնարհ լինել ու համակերպվել նորահաստատ կարգ ու կանոնին, անխուսափելի էր դարձնում ֆեոդալական անհակակշիռ կամայականությունների ոչընչացումը ու դրանով իսկ՝ ոչ միայն գյուղացիական զանգվածի դրության որոշակի բարելավումը, այլև ավատատերերի, հետևաբար և ավատատիրական կարգերի թուլացումը։ Մյուս կողմից բադաուիներին հետզհետե

նստակյացությունն հարկադրելու, խոպան հողամասերի յուրացման, նրանց ինքնամյա հարկադրման և այլ միջոցառումներով նոր իշխանությունների բացառիկ հոգածությունը գյուղատնտեսության զարգացման և նրա համարյա ամբողջ արտադրանքի ապրանքայնացման նկատմամբ, ինչպես նաև հարկերի ու մաքսերի կարգավորման-կայունացման, անձի և ունեցվածքի անվտանգության երաշխավորման և այլ ճանապարհներով առևտրի ու արդյունաբերության առաջընթացի հարցում գործուն շահագրգռվածությունը՝ խթանելու էին կապիտալիստական հարաբերությունների բողբոջումը (28, 95—96)։ Եթե հիշատակելու լինենք նաև դատական գործերի կարգավորման, թղթատարական և կարանտինային սպասարկությունների կազմակերպման, մշակութային առաջընթացի հովանավորման ու նմանաբնույթ մյուս փաստերը, ապա դժվար չի լինի պատկերացնել, որ սիրիական ամբողջ ազգաբնակչությունը հին կարգն ափսոսալու հիմքեր չուներ։

Քրիստոնյաների, այդ թվում հայերի համար բնականաբար առավել հրապուրիչը կրոնի հարցում նոր իշխանությունների ազատամտությունն էր։ Հատկապես առևտրավաշխառուական վերնախավն էր գոհ, քանի որ ոչ միայն հարկերի թե իլթիզամի (պետական կապալների) և առևտրատնտեսական այլ հարցերում խտրականության ենթակա չէր այլևս, այլև երբեմն նույնիսկ հովանավորվում ու նպաստավորվում էր, մանավանդ որ Ֆիրդեն, ռայայի հետ համահավասարեցվող մահմեդականներին անկասկած վրդովելով, իրեն ձերբազատում էր դրամագլուխները ընչաքաղց աստիճանավորներից քողարկվելով շահարկման ազատ ասպարեզ ունենալու հարկադրանքից (11, 128)։ Ինչ վերաբերում է բուն իսկ հայերին, ապա բնութագրական են մոլեռանդ մահմեդական, հետևաբար և հայատյաց ժամանակագիր աշ-Ջաբարթիի հետևյալ մտորումները. «Հայերն ու նմանները ներկայումս Մ. Ալիի մերձավորներն ու խորհրդականներն են։ Նրանք նրա ընկերակիցներն են առևտրի բոլոր ճյուղերում և հանդիսանում են հեղինակավոր անձինք ու հրամայողներ» (227, հտ. 4, 270)։

Եգիպտական տիրապետության ժամանակաշրջանը առավել բարենպաստ անդրադարձ ունեցավ լիբանանյան ամիրայության վրա, իսկ Բեշիր II-ի համար եղավ ոսկե տարիների շրջան։ Ճիշտ է, որ այն իրավականորեն չէր հեղաշրջում ամիրայության իրավիճակը, պաշտոնագրային որևէ խարսխով չէր օժտում նրա ինքնավարությունը (11, 146; 195, հտ. 1, 113)։ Սակայն հենց այն փաստը, որ Սիրիայի էյալեթների վերացմամբ երկրամասի համախմբման և մեկ միասնական վարչակառա-

վարմամբ գոտու վերածվելու պայմաններում միայն ու միայն Լիբանան լեռն էր, որ չէր միաձուլվում-համահարթվում այդ միավորի ներսում և Ճանաչվում էր որպես ինքնուրույն միավոր, ավելին էր, քան սոսկ փաստական ճանաչումը նրա ինքնավարության։ Ինչ վերաբերում է Բեշիր II-ին, ապա նա, որպես Մ. Ալիի երկարամյա հովանավորյալն ու նաև զորեղ աջակիցը ինչպես բուն իսկ Լեռան սահմաններում, այնպես էլ հարևան սիրիական հողատարածքում, եգիպտական իշխանություններին պարտադրում էր իր հպատակների հետ կատարյալ ինքնակամությամբ վարվելու լիազորությունը։

Մյուս կողմից ամիրի գերիշխանությունը եգիպտացիների օրոք ոչ թե կծկված էր մնում օսմանցիների կողմից կամայականորեն իրեն պարտադրված սահմաններում, այլ տարածականորեն ծավալվում էր։ Առաջին հերթին Ուադի աթ-Թայմը, Դամասկոսի էյալեթի վերացմամբ, ամիրայության հետ իր խորհրդանշական կապը դարձնում էր փաստական, մինչ 1786-ից իշխանապետությունից բաղմիցս բռնախլված և որպես սիրահիլիք Դամասկոսի փաշայի հեծելազորային դնդերի առաջնորդներին շնորհված Բիկաայի հովիտը, Բաալբեկի շրջանով հանդերձ, վերադառնում էր ամիրայության կազմի մեջ։ Լիբանան լեռան հացահատիկի բնական ու շռայլ այդ շտեմարանը իր շուրջ 70 բնակավայրերով ոչ միայն մեծացնում էր Բեշիր II-ի «սեփական» հողատարածությունն ու հպատակների թվաքանակը, այլև նրան հնարավորություն ընձեռում ամրապնդելու իր ֆեոդալ-ազնվական նոր հենարանը՝ ինչպես իր հարազատներին, այնպես էլ լեռնական այլ երևելի ընտանիքների կալվածատիրական իրավունքի շնորհմամբ (11, 146)։ Այնուհետև ոչ-պակաս կարևոր ձեռքբերում էր նաև Տրիպոլիի էյալեթին բաշխված ու նրա վերացմամբ Լեռան ընդմիշտ վերադարձվող Ջուբեյլի շրջանը, որ ամիրայությունը, թեկուզ և կարճ տարածքով՝ Ջունիի ծոցից մինչև Բաթրուն, անմիջականորեն վերակապակցում էր ծովի հետ։

Բեշիրն անձամբ իր և իր իշխանապետության համար բավարարության այլ հիմքեր էլ ուներ։ Ամիրը, թեկուզ մինչև ուղն ու ծուծը ֆեոդալ, իր ներքին ամբողջ քաղաքականությամբ ֆեոդալական հարաբերությունների լիբանանյան կառույցում օբյեկտիվորեն մինչ այդ քիչ ճեղքեր չէր առաջացրել։ Այժմ, երբ Մ. Ալին, ավանդական հողահարկի և նորադիր ֆիրդեի հանրագումարմամբ ամիրից տարեկան 6500 քսակի մի վճարագումար պահանջելով՝ նրան ներքին-տնտեսական հարցերում բացարձակ ինքնիշխանություն էր տվել, իշխանապետի համար դժվար չէր լինելու փորձել ավարտին հասցնելու՝ պատմականորեն ձևավորված մանր-

իշխանությունները բաժնեկալվածքային վերածելու և ամբողջ հողի նկատմամբ իր իսկ ինքնակալական գերագույն սեփականատիրական անառարկելի իրավունքը հաստատելու պրոցեսը։ Իսկ դա, ըստ էության վկայություն լինելով Լիբանան լեռան շրջանակներում ֆեոդալական հարաբերությունների հետագա զարգացման ու կարգավորման, հետևաբար նաև ֆեոդալ-ազնվականության անջատողական նկրտումների ու կամայականությունների վերջնական սանձահարման հարցում, միաժամանակ նշանակում էր գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական հարաբերությունները դնել արագընթաց վայրէջքի ուղու վրա և անչափ նպաստավորել նոր՝ կապիտալիստական հարաբերությունների բողբոջումը։

Իսկ այդ հարաբերությունների զարգացման ընձյուղները, որոնք մինչ այդ էլ, թեկուզ դեռ վտիտ, առկա էին ապրանքափողային հարաբերությունների ծավալման և առևտրական ու վաշխառուական կապիտալների հզորացման հողի վրա, տվյալ ժամանակաշրջանում ավելի ակներև էին դառնալու ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ մասամբ արդյունաբերության բնագավառում։ «Լեռներում կատարյալ անվտանգություն էր տիրում և (եգիպտական տիրապետության) ժամանակաշրջանը նշանավոր է հազվագեպ բարգավաճությամբ և առևտրի ու արդյունաբերության զարգացմամբ,— ընդգծել է ռուս դիտորդը ու շարունակել.—նախկին փաշաների արգելիչ սիստեմներից և կամայական մոնոպոլիաներից հետո եգիպտական իշխանությունների կողմից առևտրին ընձեռված ազատությունը ծովափնյա քաղաքներին նոր կյանք պարգևեց։ Սայդան, Բեյրութը և Տրիպոլին լեռնականների համար ազատ շուկաներ դարձան. լեռնականներն այնտեղ փոխանակում էին իրենց մետաքսն ու ձեթը հացի ու եվրոպական արդյունաբերական ապրանքների հետ։ Արտադրողականությունը առնվազն մեկ երրորդով աճեց Լիբանանի վրա, իսկ անդրծովյան արտադրանքների սպառումը կրկնապատկվեց» (11, 146)։

Եգիպտական տիրապետության պայմաններում ներքին Սիրիայի և Եգիպտոսի (նաև Մ. Ալիի հետ սերտ ու բարվոք հարաբերություններ պահպանող Ֆրանսիայի), լիբանանյան մետաքսահումքի գլխավոր այդ սպառողների ու անհրաժեշտ մթերքների մատակարարողների հետ առևտրատնտեսական կապերը հասկանալիորեն աշխուժանալու էին։ Արտաքին կապերի աշխուժացումը բնականաբար ներգործելու էր առանց այդ էլ Բեշիրի միջոցառումներից խթանվող ներքին առևտրի աշխուժացման, արհեստագործական արտադրության ավելի ու ավելի ապրանքայնացման, Զահլե-Դեյր ալ-Կամար-Բեյրութ առանցքի շուրջ բացի ամիրա-

յությունից նաև նրան բնականորեն աղերսված հողատարածքն ընդգրկող «լիբանանյան» շուկայի աստիճանական ձևավորման ուղղությամբ։

Եգիպտական տիրապետության օրոք, ամիրայության կազմը վերադարձած Բիկաայի հովտում տնտեսական կյանքի աշխույժ կենտրոն և արձանագրվող տեղաշարժերի հայելի էր դառնալու Զահլեն, որը, մինչև XVIII դարի վերջերը շուրջ 200 տներով փոքրիկ մի բնակավայր, 1810-ին արդեն ուներ շուրջ 5000 բնակչություն (64, 5)։ Այդ թվաքանակը 1830-ական թթ. սկզբին հասնելու էր 12000-ի, երբեմնի լոկ թուրքական ոսկեդրամի հաջող կեղծմամբ հռչակված գյուղը վերածելով առևտրաշահ քաղաքի (140, հտ. 6, 254)։ Զահլեն միաժամանակ արհեստագործության, հիմնականում գինեգործության, կաշեմշակության, բամբակագործության, մետաքսամշակության, ներկարարության և տարաղագործության կարևոր կենտրոն էր։ Բնականաբար Բիկաայի ամբողջ հովտի գլխավոր կենտրոնի մենաշնորհը Բաալբեկից խլած Զահլեն վերջին հաշվով մնալու էր Բեշիր II-ի հետ բարվոք հարաբերություններ պահպանող Աբու՝լ Լամա ամիրների մանրիշխանական իրավասության ենթարկված, այլ խոսքով Լեռան վրա իր հոգեվարքն ապրող մանրիշխանական սիստեմի վերջին օղակներից մեկի ոլորտում, սակայն հենց ավելի ու ավելի բուրժուականանալու շնորհիվ անխուսափելիորեն պիտի վերածվեր ֆեոդալական հարաբերությունների ջրերում բարձրացած որոշապես տարասեր մի կղզյակի, որ չէր վարանելու (ճիշտ է շուրջ քառորդ դար անց) բացահայտ նիզակ ճոճելու իր հզոր տերերի դեմ և հռչակվելու «աստվածապետական հանրապետություն», որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ առևտրավաշխառուական օլիգարխիայի գերակայության հասած լինելու դրսևորումը։

Առանց անտեսելու այն հանգամանքը, որ ինչպես ամբողջ Բիկաայի լեռնահովտում, այնպես էլ մանավանդ Զահլեում աղգաբնակչության շուրջ երեք քառորդը կազմող քրիստոնյաների շրջանում գերակշռողը հույն-կաթոլիկներն էին, որոնք հույն-օրթոդոքսների հետ, որպես «տեղաբնիկներ», անխուսափելիորեն հակամարտելու էին Լիբանան լեռան հյուսիսային հատվածից «եկվոր» մարոնականների հետ և փոխադարձ ատելությունն էլ,—ինչպես դիտել է տվել ուղեգրող դը Պարտյոն,—հարմար առիթներով դրսևորվելու էր «հրացանի պայթյուններով» (149, 368), հենց այդ հակամարտության մեջ անկասկածելի պիտի համարել Աբու՝լ Լամա տոհմի մանրիշխանությամբ խորհրդանշվող ֆեոդալական հարաբերությունների դեմ նոր՝ բուրժուական հարաբերությունների դրոշակակիր, քաղաքային բյուրգերության ծոցից բարձրացած առևտրա-

վաշխառուական դասի՝ Մարքսի և Էնգելսի բնութագրմամբ «բուրժուազիայի առաջին տարրերի» (1, 33) պայքարի բաժինը, քանի որ դարավոր արմատներ ունեցող համայնքայնության պայմաններում մարոնականները չէին կարող հիմնական զանգվածով չդիրքորոշվել դավանակից տգնվականների կողքին։

Տվյալ ժամանակաշրջանում, անշուշտ, որպես ամիրայության բուն կորիզը՝ լեռնային հատվածը Բեյրութի հետ ապրանքափոխային հարաբերությունների բովում էլ ավելի թրծող երկրորդ հնոցը, Զահլեն մի օրից մյուսը չէր կարող ֆինանսական հզորությամբ ինքնաբավ ու ինքնագլուխ դառնալ, հետևաբար շատ բնականորեն Բեյրութից, հիմնականում հույն-կաթոլիկ թե հույն-օրթոդոքս շրջաններից հոսող վարկերին էր հենվելու՝ Դամասկոսից մինչև Հալեպ ձգվող իր խոշոր գործառնությունների համար։ Քաղաքին հետագային ևս քիչ թե շատ կենսական մնալիք այդ հենարանի առկայությունն անգամ այնպիսի մի երկրամասում, որ նույնիսկ XIX դարակեսին շարունակելու էր ներկայացվել որպես «շատ մեծ թվով փոքր հարստություններ» կենտրոն, այլ «կապիտալ ու վարկ չիմացող» (85, 83), ըստ ինքյան վկայում է ամիրայության շրջանակներում կապիտալիստական հարաբերությունների աշխուժացման փորձերի և վերջիններիս վրա Բեյրութի անկասկածելի ներգործության մասին։

Դեռ հնադարում և այնուհետև, բյուզանդական թե խալիֆայական տիրապետության ժամանակաշրջանում, առևտրի վրա խարսխված իր հարստությամբ ու շքեղությամբ հռչակված Բեյրութը, որ մամլուքների օրերից սկսած շնչասպառությունը ծանրացել էր օսմանցիների տիրապետության ներքո, եգիպտական վարչակառավարման շնորհիվ բառիս բուն իմաստով վերաշնչավորվելու և վերստին Բեյրութ էր դառնալու։ XVIII դարավերջին բարձրանալով մինչև 6000-ի (192, հտ. 2, 82) և հետագա վերիվայրումներով հանդերձ եգիպտական վարչակառավարման հաստատման օրերին տատանվելով 8—10 հազարի միջև, ազգաբնակչության թվաքանակը Բեյրութին շատ-շատ խոշոր մի ավանի բնույթ էր տալու, ինչպես ընդգծելու էին (ֆրանսիական և ավստրիական դեսպանների հաղորդումների վրա հենվելով) մարշալ Մարմոնը, այնուհետև Միշոն և Պուժուլան (29, հտ. 2, 242։ 140, հտ. 6, 122)։ Ավելին, 1831-ի մայիսին օսմանյան իշխանությունները Բեյրութն ամիրայությունից այնպես էին պատվարել, որ «Լիբանանի իշխանները,— ինչպես վկայում էին Միշոն և Պուժուլան,— երբեմն այդ քաղաքը այցելություն տալու համար կանխօրոք պետք է հատուկ թույլտվություն ստանային» (140, հտ. 6, 122)։

Եգիպտական տիրապետության հաստատմամբ Բեյրութը վերստանում էր ոչ միայն բացի ներքին Սիրիայից (և նրանից ավելի) նաև Լիբանան լեռան հետ անմիջականորեն և ազատորեն հաղորդակցվելու հնարավորությունը, այլև Ալեքսանդրետից մինչև պաղեստինյան Յաֆա ծովափի բոլոր քաղաքների նկատմամբ իր գերագահությունը, իսկ դա՝ շնորհիվ այն բանի, որ դառնում էր մի ամբողջ երկրամաս՝ պատմա-աշխարհագրական Սիրիան (և Կիլիկիան) կառավարող Իբրահիմ փաշայի սպայակույտի պետի նստավայրը, այլ խոսքով Մ. Ալիի նոր տիրույթի ռազմաստրատեգիական կարևորագույն հենակետը։

Առաջին ակնառու տեղաշարժն արձանագրվեց ազգաբնակչության թվաքանակում, որ շուրջ մի հնգամյակում կրկնապատկվելով 1838-ին արդեն 15 հազար էր, իսկ 1840-ական թթ. երկրորդ կեսին՝ շուրջ 28 հազար (36, 427)։ Քաղաքի աճին զուգընթաց սկսեց փոխվել նրա սոցիալ-մշակութային դեմքը։ Մինչև եգիպտական տիրապետության հաստատումը,— անցյալը վերհիշելով մոտ երեք տասնամյակ անց ընդգծելու էր գրող Բ. ալ-Բուսթանին,— Բեյրութում կարելի էր մի ամբողջ փողոց անցնել՝ առանց իր ստորագրությունը դնել իմացող մի մարդու հանդիպելու (97, 168)։ «Այդ ժամանակ,— վկայում էր մի ժամանակակից,— կրթությունը վտանգավոր էր համարվում և այն ստանալը խիստ դժվար էր, նույնիսկ եթե սովորելու ցանկությունը շատ մեծ էր» (121, 7)։ Արտառոց փաստի մասին է վկայել ռուս դիվանագետը.—Մահմեդական ազգաբնակչության պահանջով Անգլիան հարկադրվել էր տեղափոխել իր հյուպատոսարանը, քանի որ բրիտանական խաչանշան դրոշի ստվերը, երեկոյան ընկնելով մերձակա մզկիթի վրա, իբր խրտնեցնում էր գմբեթի շուրջ պտտվող հրեշտակներին (11, 131)։ Այստեղ, առանց բուն իսկ սոցիալ-մշակութային արագ վերընթացին անդրադառնալու, նշենք միայն, որ 1830-ական թթ. Բեյրութում ոչ միայն շեշտակիորեն ավելանալու էր եվրոպացիների թվաքանակը, հետևաբար քաղաքում «ամեն տեղ խոսում են ֆրանսերեն կամ իտալերեն» (149, 327), այլև թվականորեն ավելի ու ավելի գերակայության էին միտելու քրիստոնյա համայնքներին պատկանողները, առաջին հերթին մարոնականները։

Արևմտյան Եվրոպայի երկրների (հատկապես Ֆրանսիայի) և Ռուսաստանի հետ աշխույժ գործարքներ ունեցող Բեյրութի առևտրավաշխառուական վերնախավի կորիզը կազմող քրիստոնյա, մասամբ միայն մահմեդական Թրատ, Բուստրոս, Սուրսոք, Թաբետ, Նաուֆալ, Մդաուար, Բեյհում, Թուեյնի, Ֆրեյժ, Ասֆար, Շհադե, Ռբեյզ, Մուբրան, Գարգուզի և այլ, այդ թվում հայազգի Ղուկաս (Հաննա որդի Ջիբրայիլի, Նաում

որդի Բութրուսի) և ուրիշ առևտրավաշխառուական մեծատուն տոհմեր, որոնցից խոշորագույնները, ռուսական հյուպատոսի վկայությամբ, տարեկան մինչև մի քանի տասնյակ միլիոն ղուրուշի առևտրական գործառնություններ էին կատարում (4, գ. 718, թ. 16)։ Այդ վերնախավը, որի տոհմական հարստությունների հիմքում անկասկած ընկած է եղել օսմանյան իշխանավորների և Լեռան բուրժուական կենցաղի հակվող ֆեոդալ-աղնվականության և մյուս տարրերի, անգամ անձամբ իշխանապետի հետ սերտ կապը, նաև շոշափելի տոկոսներով ավանդապահ ֆեոդալների վարկավորումը, հեշտությամբ ձեռք բերվող հարկային ու մաքսային կապալները, գյուղում վաշխառուական գործարքները են, բնականաբար չէր կարող նվաճել կապիտալների այն բարձունքը, որին հասել էր, եթե դեռ XIX դարասկզբից շամրապնդեր իր կապերը Եվրոպայի հետ։ Դեպի Լիբանան լեռ, ապա Բիկաա և վերջապես ներքին Սիրիա ձգվող այդ կապերի առաջ, ահա, եգիպտական տիրապետությամբ բացվում էր հարթ մի մայրուղի, որի հետ Լիբանան լեռը կապակցող կետը Դեյր ալ-Կամարն էր դառնալու։

1783—85-ին Վոլնեյը, Դեյր ալ-Կամարում հաշվելով 1500—1800 բնակիչ՝ հույն-կաթոլիկ, հույն-օրթոդոքս, մարոնական և դրուզ, գրում էր. «Իշխանապետի մայրաքաղաքն ու նստավայրը, վատ կառուցված ու խիստ կեղտոտ մի ավան է լեռան լանջին... Իշխանապետի պալատը խոշոր և մի վատ շենք է, որ քանդվելու վրա է» (192, հտ. 2, 78)։ Երբեմնի մռայլ այդ բնակավայրում 1830 (և 1840)-ական թթ. արձանագրված տեղաշարժերի մասին կարող են հուշել նրա թեկուզ արտաքին պատյանի մասին ուղեգրողներից մեկի հետևյալ ժլատ տողերը. «Քաղաքը կառուցված է սրբատաշ քարով... Քարե պատշգամբները լիքն են ծաղիկներով... Հրապարակներն աշխույժ են» (118, հտ. 3, 307)։ Բնականաբար Դեյր ալ-Կամարի կերպարանափոխությունը ամիրայության վարչաքաղաքական կենտրոնի նրա հանգամանքի հետ քիչ առնչություն ուներ, քանի որ այդ ժամանակ արդեն ամիր Բեշիրն ավարտել էր պերճաշքեղ Բեյթ ադ-Դինի շինարարությունը։ Արտաքին պճնանքից անկախաբար, Դեյր ալ-Կամարի ազգաբնակչության թվաքանակն էլ ցատկ էր կատարել և 1840-ական թթ. արդեն հասել 8—10 հազարի (80, 104։ 36, 446)։ Ինչպես կերպարանափոխության, այնպես էլ մարդաշատացման պատճառը պետք է որոնել այն ուշագրավ իրողության մեջ, որ քաղաք դարձած Դեյր ալ-Կամարն արդեն վերածվել էր Լիբանան լեռան առևտրատնտեսական մայրաքաղաքի և արհեստագործական, հիմնականում մետաքսագործական գլխավոր կենտրոնի, որտեղ ֆրանսիացի վաճառական Բլոնտելը

1838—39-ին «հյուսվածեղենի բաղմաթիվ արհեստանոցներ» էր նկատելու (57, 87) և որտեղ երբեմնի գյուղական միջակ խանութպաններից ու մանր վաշխառուներից շատերը վերածվել էին ներմուծում-արտամուծումներով զբաղվող, մետաքսագործության զարգացմամբ շահագրգռված, հետևաբար հողամասեր գնելով դրանք վարձակալման տվող, մետաքսահումք արտադրող, մշակող, գործող ու արտահանող և այդ հանապարհին վաշխառուական խոշոր գործարքներից էլ չխորշող առևտրականների, որոնցից ոմանք ունեին ամբողջ ամիրայության տարեկան հարկադումարին մոտավորապես համահավասար անձնական կապիտալ (138, 75)։ Այլ խոսքով Լեռան շրջանակներում ևս երևան էր եկել էկոնոմիկայի մի նոր ու կարևոր գործոն՝ դրամական խոշոր տնտեսությունը, դրամական գերաճած շրջանառության հիմքի վրա՝ դրամական կապիտալը, խոսուն վկայությունն այն բանի, որ նախկին մանր վաշխառուները, պատմական նոր պայմաններում պարարտանալով, մերվել էին առևտրական ու արտադրական կյանքին ու վերջինիս համար, ինչպես այլուր՝ պատմատնտեսական համանման ստադիայում, կատարում էին որոշակի, այդ թվում անկասկած բանկային կապիտալի ֆունկցիաներ։

Լիբանան լեռան ավելի ու ավելի ձևավորվող ու հզորացող սեփական առևտրավաշխառուական վերնախավը, որ ամիրայության դրուզական հատվածի սրտում՝ Դեյր ալ-Կամարում էր խարսխել, նույնպես գերակշռաբար քրիստոնյաներից, հիմնականում հույն-կաթոլիկներից և մարոնականներից էր բաղկացած։ Բեշիր II-ի միջոցառումների շնորհիվ ամիրայությունում թեկուզ և իր ավարտին էր մոտեցել մարոնական համայնքի (ասել է թե կաթոլիկների) վարչաքաղաքական (որոշ առումով մենիշխանության հասնող) գերակայություն ձեռք բերելու պրոցեսը, հետևաբար և այդ վերնախավը կարող էր չկասկածել իր անհագուրդ ախորժակները բավարարող ձեռնարկումների նկատմամբ իշխանության վերին ոլորտում հասկացողության հանդիպելու հարցում, բոլոր դեպքերում օսմանյան տիրապետության փոխարինումը եգիպտականով՝ նրա համար անփոխարինելի գրավականն էր լինելու իր հետագա ապահովության ու ծաղկման։ Բանն այն է, որ եթե Շերիֆ փաշայի և Հաննա Բահրի բեյի անմիջական ղեկավարման ենթարկված Սիրիայի գյուղական վայրերում վաշխառուական գործարքների վրա չափ ու սահման էր դրվել և նույնիսկ ամենազոր Իբրահիմ փաշան հրամանագրել էր գյուղացիներին անհատույց ազատել բարդ տոկոսների օգնությամբ սկզբնական դումարը բազմապատիկ գերազանցող բոլոր պարտքերից (4, գ. 718, թ. 112), ապա ամիրայությունում, որ փաստորեն թողնվել էր իր ճակա-

տագրին և իշխանապետի կամքին, նմանօրինակ հրամանագրերը հրաման չէին բնավ։

Ներքին, առավել ևս հարկային հարցերում ինքնուրույն Լիբանան լեռան շրջանակներում բուրժուականանալու միտող տարրերի առանձնաշնորհներն ակնառու էին յուրաքանչյուր քայլում։ Ավանդական մուկատաաճիներին հասցված հարվածներից հետո պահպանված կամ հետզհետե բարձրացող ֆեոդալական այն խավը, որ ավելի ու ավելի ինքնակալ դարձող Բեշիրի հետ իր տոհմական կապերի թե բարվոք հարաբերությունների շնորհիվ ամիրայության պատմության մեջ առաջին անգամ լինելով հողահարկից կարող էր զերծվել (91, 272) և շրջանի մուկատասայի բեռը հիմնականում թողնել սակավահող կամ հողավարձակալ գյուղացիության ուսին, բնականաբար առաջին առանձնաշնորհյալն էր դառնում։ Սակայն դժգոհելու պատճառ չէին կարող ունենալ և մյուս ունևոր խավերը, որոնք անգամ այնպիսի ճշգրտիվ սահմանված հարկի հարցում, ինչպիսին ֆիրդեն էր, բարյացակամություն էին վայելում։ Բանն այն է, որ թեկուզ եկամուտի երկոտասաներորդ մասի չափով ճշտորոշված, հաշվապահական բարդ գործողություններ պահանջող այդ հարկը ինչպես ամբողջ Սիրիայում, այնպես էլ ամիրայությունում պարզացվել էր ու վերածվել դրույքների. չքավոր գյուղացիներից՝ նվազագույնը 15 (ըստ Բազիլիի) կամ 25 (ըստ Լորանի), ունևորներից՝ առավելագույնը 400 (ըստ Լորանի) կամ 500 (ըստ Բազիլիի) ղուրուշ (11, 127։ 130, հտ. 1, 9)։ Բեշիր II-ը և նրա գործերի կառավարիչը ֆիրդեն գանձում էին ոչ միայն խստիվ 16-ի փոխարեն հաճախ 12—15 տարեկանից սկսած (151, 99), այլև ըստ կամս և զգալիորեն բարձրացված դրույքներով։ Իսկ «վրագիրով» ֆիրդեն եթե չքավորների դեպքում դառնում էր 40 ղուրուշ, այլ խոսքով մեծանում էր 60—160 տոկոսով, ապա ունևորների դեպքում դառնալով 500 ղուրուշ՝ Լորանի հաշվումներով մեծանում էր 25 տոկոսով, իսկ Բազիլիի հաշվումներով ոչ մի հավելման չէր ենթարկվում։

Թեկուզ սկզբնաղբյուրներում տվյալները պակասում են, սակայն ֆիրդեի օրինակից կարելի է ենթադրել, որ եգիպտական իշխանությունների կողմից սիրիական բոլոր տեսակի հարկերի համախառնմամբ ամիրայությունից պահանջվող տարեկան 6500 քսակի ընդհանուր հարկագումարը կազմելիս դիմելով աճպարարության՝ առանձին-առանձին հավաքելով հնամենի հողահարկը, ամիր Յուսուֆի նորամուծած գլխահարկը և եգիպտական ֆիրդեն, Բեշիր II-ի վարչությունը անուղղակի եկամուտներով 25 հազար քսակ (11, 145) ձեռք բերելիս նույնպես ծան-

րության կենտրոնը բևեռում էր ոչ թե ունևոր, այլ չքավոր խավերի վրա։

Ի դեպ առևտրավաշխառուական վերնախավը եգիպտական տիրապետության հենց սկզբում ամենաղոր մի հովանավոր էր ձեռք բերել՝ հանձին ամիրի գործերի կառավարիչ Բութրոս Քարամեի։ Ժամանակակիցները վկայել են, որ Սիրիայի ֆինանսատնտեսական գործերի ամենաղոր պետ Հաննա Բահրին, հոմսեցի կաթոլիկ, ըստ եգիպտական սպայակույտի պետի համհարզ Ֆերդինան Պերրիեի՝ ծագումով հայ (151, 54), առանձին թուլություն ուներ իր համաքաղաքացի-դավանակիցների նկատմամբ։ Այդ թուլությունը առանձնապես կարող էր դրսևորվել 1811-ին Ն. աթ-Թուրքի կողմից ամիր Բեշիրին ներկայացված և 1826-ին ծագումով հայ գործչի մահից հետո իշխանապետի պալատում նրա գործը շարունակող՝ ամիրի որդիների «մուալլիմ» և թուրքագիտությամբ ու արաբագիտությամբ հռչակված Քարամեի նկատմամբ, որ հոմսեցի կաթոլիկ լինելուց բացի, նաև պերճաբառ քերթող էր, իսկ Բահրիներն իրենք նույնպես հպարտանում էին իրենց բանաստեղծական տաղանդով...։ Խորամանկ Բեշիրը, քաջատեղյակ այդ թուլության, եգիպտական տիրապետության հենց սկզբին իր պալատի խոստովանահայր, հայ-կաթողիկե ապագա կաթողիկոս Հոլասյանի խորհրդով և անշուշտ ոչառանց հետին մտքի, Քարամեին իշխանապետության քեխիա կարգեց։ Վերջինս էլ սկսեց արտակարգ բծախնդրությամբ հոգ տանել իր տիրոջ անձնական թե իշխանապետական շահերին, առաջին հերթին մեղ ծանոթ 25 հազար քսակը ժողովրդից քամելու գործին, շմոռանալով, իհարկե, անձամբ հարստանալու մասին, ըստ որում այդ ճանապարհին կանգ չառնելով ոչ մի միջոցի առաջ։

Ամիրայության ֆեոդալական մնացող առօրյայում Լեռան առևտրավաշխառու տարրերը, որոնց համար միակ սրբազան նպատակակետը կապիտալի կուտակումն էր, իրենց ձեռնարկումների հաջողության նպաստող հզոր կարթաձող էին դարձնելու քեխիային։ Այդ ձեռնարկումներն արդեն չէին կարող սահմանափակվել տեղերում գյուղատնտեսական հումքի, հիմնականում մետաքսաբուժոժի գնման և կենսական սնունդամթերքների մատակարարման շրջանակներում, թեպետ այդ ասպարեզներում էլ Բեյրութի (և մասամբ Ջահլեի) առևտրավաշխառուական վերնախավը ուղղակի կամ միջնորդաբար անարգել մրցակցում էր և իր ֆինանսական հզորության ու փոխկապակցվածության շնորհիվ հաջողության ավելի շատ երաշխիքներ ուներ։ Մնում էր ավանդական վաշխառությունը, որ ֆեոդալական շահագործման ծանրության և հարկերի դրամայնության պայմաններում, հատկապես անբերրիության տարինե-

ին, չքավոր գյուղացիության (եթե հաշվի առնենք այլ հանգամանքներ ևս՝ ֆեոդալների ճոխ կյանքով ապրելու ձգտումը, արհեստավորների որոշ, հատկապես կանխիկ փողով մեծաքանակ հումք գնելու կարիքները ևն, ուրեմն ոչ միայն գյուղացիության) հիմնական ապավենն էր բերդից բերք ծայրը ծայրին բերելու հարցում։ Իսկ վաշխը, եթե ըստ Վոլնեյի XVIII դարավերջին Մերձավոր Արևելքում, այդ թվում Լիբանան լեռան վրա սովորաբար տարեկան 12—15 տոկոս էր, թեկուզ առավել տարածված վաշխաչափն իրականում 20, իսկ հաճախ էլ մինչև 30 տոկոս էր, ապա XIX դարի առաջին տասնամյակներում այն արդեն խաղում էր 35—60 տոկոսի միջև (192, հտ. 2, 132 և 255։ Նաև՝ 4, գ. 718, թ. 112)։ Անգլիական դիվանագետ Գեմպելը 1834-ին վկայում էր, որ մինչև եգիպտական տիրապետության հաստատումը Սիրիայում «հարկերը վճարելու համար ազգաբնակչությունը հարկադրվում էր փոխառություն կնքել 14 ամսվա համար 50 տոկոս վճարելով և այդ իրավիճակը կանխելու համար է, որ (եգիպտական) կառավարությունը սարաֆներ հաստատեց (Հալեպում, Ադանայում, Դամասկոսում), թեպետ նրա պահանջած տոկոսն էլ շատ բարձր է, տարեկան 20 տոկոս» (171, 351)։ Ի դեպ, ինչպես իր ժամանակին Մարքսը, այնպես էլ Լենինը ընդգծել են, որ առևտրական-վաճառականական հետ վաշխառուական կապիտալը պատմականորեն միշտ էլ նախորդել է արդյունաբերականին, սակայն տրամաբանորեն նրա գոյացման անհրաժեշտ նախապայմանն է։

Ժամանակակիցներից Ա. Լորանի հաղորդման համաձայն, վարկատուները, եթե կորցնում էին գյուղացի պարտապանից իրենց փոխատվությունը տոկոսներով հանդերձ, այլ խոսքով սկզբնական վարկի բաղմապատիկը ստանալու հույսը, դիմում էին Քարամեին։ Քեխիան, վարկատուից կանխիկ ստանալով խնդրո առարկա գումարի կեսը, պարտապանին հարկադրում էր, թեկուզ կործանվելու գնով, ամենակարճ ժամկետում վճարել իր պարտքը։ Այս և այլ փաստերը նկատի ունենալով է, որ Լորանը Բեշիր II-ին և Քարամեին հորջորջել է «լիբանանյան ժողովրդին կպած տզրուկներ» (130, հտ. 1, 10 և 39)։

Այս ամենը, ինչ խոսք, վկայում է Լեռան վրա վաշխառուական կապիտալի հզորացման մասին։ Այն անխուսափելիորեն հարաճուն վերահսկողություն սահմանելով առևտրի վրա, որի հետևհետև մեծացող գործարքներն ավելի ու ավելի խոշոր կապիտալների ու վարկերի կարիք էին զգում, արդեն ոտք էր դրել արտադրությունն իրեն ենթարկելու ստադիային։ Տարբեր մեթենայություններով, երբեմն էլ առանց մեթենայության՝ պարզապես վաշխառության սովորական ընթացքով գրավ դրված

(հիմնականում անշարժ) գույքի սեփականատեր դառնալով, հաճախ առևտրականի «անմեղ» դիմակով հանդես եկող վաշխառուներն արդեն փորձում էին իրենց ձեռքը վերցնել սկզբում այս կամ այն հանգուցային դարձած (գյուղատնտեսական լինի թե արհեստագործական) արտադրությունը, ապա և ամբողջ արտադրությունը։ Դրա համար անհրաժեշտ էր, որ ֆեոդալական հասարակարգի նախնական՝ բնական տնտեսությունից, դեպի երկրորդ աստիճանի՝ պարզ ապրանքային տնտեսությանն անցած անմիջական արտադրողները սեփականազրկվեին, անջատվեին իրենց արտադրության միջոցներից՝ հողից ու աշխատանքային գործիքներից։ «Ժողովրդական մասսայի այդ զարհուրելի ու դժվարին սեփականազրկումը կապիտալի պատմության նախաբանն է կազմում»,— գրել է Մարքսը «Կապիտալ»-ում, (2, հտ. 3, մ. 1, 795), այլուր ընդգծելով, որ «արտադրության կապիտալիստական եղանակի ոչ թե հետևանքը, այլ ելակետը հանդիսացող՝ կապիտալի «այսպես կոչված նախասկզբնական կուտակումը ոչ այլ ինչ է, եթե ոչ արտադրողին արտադրության միջոցներից անջատելու պատմական պրոցես» (2, հտ. 3, մ. 1, 746—747)։

Լիբանան լեռան վրա և հարակից հողատարածքում, ահա, ֆեոդալականից կապիտալիստական արտադրաեղանակին անցնելու անհրաժեշտ այդ նախադրյալը՝ «կապիտալի նախասկզբնական կուտակումը» XIX դարի երկրորդ քառորդում աշխուժացող երևույթ էր արդեն։ Սակայն «կապիտալի պատմության նախաբանը» տվյալ ժամանակաշրջանում չվերաճեց իսկական պատմության, այլ խոսքով նախադրյալը չվերաճեց կապիտալիստական արտադրաեղանակի, քանի որ, վերջինս, չլինելով «ձևի հասարակ հաջորդափոխում», ենթադրում էր «անմիջական արտադրողների սեփականազրկում, այսինքն սեփական աշխատանքի վրա հիմնված մասնավոր սեփականության քայքայում»։ Այդ պրոցեսն իրեն սպասեցնել էր տալու ընդհուպ մինչև մեզ դրաղեցնող ժամանակաշրջանի վախճանը։

* * *

Քաղաքական թե սոցիալ-տնտեսական առօրյայով որքան էլ ինքնուրույն, ամիրայությունն այնուամենայնիվ, թեկուզ եգիպտական գերիշխանության իրողությամբ, հատկապես Թուրք-եգիպտական զինաբախման վերսկսման հավանականության պայմաններում, չէր կարող մեկուսի մնալ ամբողջ Սիրիայի աստիճանաչափով արձանագրվող իրադարձություններից, որոնցից իշխանապետության համար բացառապես աննախընթացն ու հուզահարողը զորահավաքն էր։

Մ. Ալին, հնարտեսորեն նախապատրաստվելով սուլթանի ու նրան հավանական աջակիցների դեմ վճռական մարտի, բնականաբար իր զինված ուժերը թվաշատացնելու համար պիտի ձեռնարկեր սիրիացի մահմեդականների զորակոչման, նրանց մասամբ տեղում, մասամբ էլ իր զինական ուժերից նկատելիորեն մերկացած Եգիպտոսում օգտագործելու նպատակով։ Սիրիացի արաբները, որոնք օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում միայն կամավորական հիմունքներով էին այս կամ այն փաշայի դրոշի ներքո ծառայագրվում, հասկանալիորեն պիտի դիմադրեին եգիպտական նորամուծության։ Եվ իրոք, Իբրահիմ փաշան 1833—38-ին կարողացավ երկրամասի 900 հազար երկսեռ բնակիչներից միայն 35 հազար մարդ ընդգրկել իր զորաբանակում (11, 136), իսկ 100 հազար զորակոչիկներ հարկադրվեցին փախչել (32, 197)։ Եթե արձանագրենք նաև այն փաստը, որ ռազմական շինությունները գլուխ բերելու համար եգիպտական իշխանությունները բռնի հավաքագրում էին մեծ թվով արհեստավորների՝ տարապարհակ թե չափազանց ցածր վարձատրվող աշխատանքների տանելու համար (4, գ. 701, թթ. 46—47), ապա պատկերն ավելի ամրողջական կդառնա։ Այդ բոլորի անխուսափելի հետևանքն այն եղավ, որ երկրագործությունն ու արհեստները սկսեցին անկում ապրել և ժողովրդի տնտեսական դրությունն էլ շեշտակիորեն վատացավ։ Հետևաբար բնավ էլ պատահական չէր, որ 1834-ին բռնկվեցին բազմաթիվ տարբերային ապստամբություններ, որոնք բոլորն էլ արյան մեջ խեղդվեցին։

Զորահավաքն ու ռազմական շինությունների իրագործման մասնակցելու բռնադատումը առավել անսովոր ու զայրացուցիչ էին լիբանանյան հողատարածության բնակչության համար, քանի որ մարոնականներն ու մալքիները որպես քրիստոնյա, իսկ դրուզները որպես աղանդավոր մահմեդական երբևէ պաշտոնական զինծառայության չէին կանչվել և ի վաղուց անտի, սոսկ որպես աշխարհազորայիններ, այն էլ իրենց ավանդական առաջնորդների հրամանատարության ներքո, դուրս էին եկել հիմնականում ինքնապաշտպանական մարտերի։ Եվ բնականաբար պաշտոնապես չզորակոչվելու հաստատ համոզմունքով էր, որ լիբանանյան լեռնականները, Բեշիր II-ի որդիներ Խալիլի և Ամինի ղեկավարությամբ մասնակցություն բերեցին Լիբանան լեռան հյուսիսարևելյան հատվածների, այդ թվում Աքքարի մթուալլիների և նուսեյրների, ապա և հարավում Բիլետ Բշարրիի, Հեպրոնի, Հոսնի և Սաֆատի շիիների և բաղաուիների հակաեգիպտական շարժումների ճնշմանն ու դրան հաջորդող բռնի զինահավաքին (11, 136; 128, հտ. 2, 156)։

Սակայն Մ. Ալին չէր կարող հրաժարվել մարտունակ մարոնականներին և դրուզներին իր դրոշի ներքո անպայման ունենալու հրապուրիչ ծրագրից։ Եվ ահա 1834-ի սկզբներին Բեշիրից պահանջվեց 15 տարով զինվորական ծառայության ուղարկել 1600 դրուզ և 1500 մարոնական երիտասարդների։ Այդ պահանջը բառիս բուն իմաստով ալեկոծեց Լեռը։ Համաժողովրդական վրդովմունքին արձագանքելով, իշխանապետը համառ դիմադրություն ցույց տվեց եգիպտացիներին, կառչելով հատկապես մարոնական եկեղեցու պետի այն հայտարարությունից, որ Կահիրեի դեմ ի հարկին կդիմի Ֆրանսիայի դիվանագիտական թե ռազմական միջամտության։ Այդ պայմաններում, Բեյրութի եվրոպական հյուպատոսների ճնշման առաջ տեղի տալով, Իբրահիմ փաշան ի վերջո ձեռք քաշեց քրիստոնյա լիբանանցիներին զորագրելու մտքից (37, 83), սակայն իր ուշադրությունը բևեռեց դրուզների վրա։ Նրա համոզմունքով, որից չէր կարող մասամբ չվարակվել դարազիականների զորացրման հարցում հյուպատոսներին իր կողքին չունեցող Բեշիր II-ը, գոնե դրուզ երիտասարդների հավաքագրմամբ Լեռը վերջին հաշվով փոքր ինչ կուժաթափվեր և հակաեգիպտական թե հակաբեշիրյան զինված որևէ խռովության հավանականությունն էլ կնվազեր։ Բոլոր դեպքերում եգիպտական իշխանությունները թեպետ իրենց նշանակած 1600 թիվը իշխանապետի խնդրանքով իջեցրին մինչև 800-ի, սակայն դարազիական համայնքը հրաժարվեց թեկուզ մեկ լրացուցիչ զինվոր տալ, քանի որ 1833-ի վերջերին, առաջին զորահավաքի ժամանակ, խաբեությամբ թե բռնությամբ բանակ էին տարվել մի խումբ երիտասարդներ, որոնց թիվը սկզբնաղբյուրներից մեկում հասցվել է 2000-ի (11, 133)։ Եվ սակայն այս անգամ էլ Մ. Ալիի հրամանն ի վերջո իրագործվեց և 800-ի փոխարեն շուրջ 1000 դրուզ երիտասարդներ ևս բանակ տարվեցին, թեպետ, Լեռան ուքբալների պահանջով ու իշխանապետի միջնորդությամբ, նրանցից կազմվեց առանձին զորագունդ (37, 83)։

Դրուզները, որոնք առանց այդ էլ հիմքեր ունեին ամիր Բեշիրին համարելու իրենց աշխարհիկ ու միաժամանակ հոգևոր երևելիների երդվյալ, հետևաբար իրենց ամբողջ համայնքի այս կամ այն աստիճանի հակառակորդը, անիրավամբ ամիրի թշնամական ձեռքը տեսան միայն իրենցից զորակոչիկ վերցնելու որոշման մեջ և ուրեմն էլ ավելի լարվեցին իշխանապետի դեմ։ Վերջինս, ահաբեկված և հավանական հուզումները կանխելու մտահոգությամբ, Շուֆի լեռնագոտու դռները լայն բացեց Իբրահիմի զորախմբի առաջ, որ 1835-ի աշնան ձեռնարկեց դրուզների զգալի չափով զինաթափման։

Զորահավաքը Լեռան շրջանակներում և հարակից հողատարածքում 1838-ին առաջ բերեց բավականին խոր մի նոր ցնցում։

1833-ի զորահավաքի ժամանակ 5 տարով տարկետում ստացած Հաուրանի դարաղիական փոքրաթիվ համայնքից 1837-ին 72 զինակոչիկ պահանջվեց։ Նոր տարկետման խնդրանքով Դամասկոս գնացած շեյխ Անթեշը ոչ միայն մերժում, այլև Հաննա Բահրի բեյի մեջբով ծանր վիրավորանք ստացավ (11, 133)։ Զայրացած, դրուզները ոչնչացրեցին իրենց շրջանի եգիպտական կայազորի 400 զինվորներին և ապաստանեցին Լեջայի լեռնանապատային անմատչելի շրջանը, որտեղ, իրենց մարդկանցով, նրանց միացան Անդրլիբանանի դրուզների երիտասարդ շեյխ Շիբլի Արիանը և բաղաուի շեյխ Յայա Համդանը։ Շուրջ 2500 ապստամբներ ավելի քան մի տարի կատաղի դիմադրություն ցույց տվեցին տեղանքին անծանոթ և պարտիզանական պայքարին անսովոր եգիպտացիներին, որոնք կորցրեցին ավելի քան 1500 մարդ, այդ թվում՝ մեկ փաշա, չորս գեներալ, զումարտակի 16 հրամանատար։

Լեջայի ապստամբների հաջողությունից խանդավառված, դրուզները հակաեգիպտական զինված շարժում սկսեցին նաև Ուադի աթ-Թայմում, նույնիսկ ոգալի օժանդակություն ստացան Դրուզների երկրից՝ հանձին Նասիր ադ-Դին Իմադի, Հասան Ջումբլաթի և մի քանի այլ շեյխերի զբաղերի։ Պատմագրության մեջ ենթադրվել է, որ վերջիններս հավանաբար քաջալերվում էին ամիր Բեշիրի գործակալների կողմից։ Իշխանապետն իրոք էլ կարող էր շահագրգռված լինել իր հակառակորդ դրուզ շեյխերի ոչ միայն երկրից հեռացմամբ, այլև եգիպտական իշխանությունների հետ նրանց հարաբերությունների խսպառ վատթարացմամբ։ Բոլոր դեպքերում փաստ է, որ հենց այս կապակցությամբ եգիպտացիներից 15 հազար հրացան ստանալով, ամիրն իր որդի Խալիլի հրամանատարությամբ և տեղանքին քաջածանոթ քրիստոնյա Ջիրիոս ադ-Դիբսի առաջնորդությամբ 4 հազարանոց մարոնական աշխարհազոր ուղարկեց Լեջա՝ ապստամբներին հետապնդելու և ճնշելու գործում եգիպտացիներին օժանդակելու։ Հանուն արդարության պիտի շեշտել, սակայն, որ Բեշիրը ոչ միայն որդուն խորհուրդ տվեց ավելորդ եռանդ հանդես չբերել, այլև ադ-Դիբսին կարգադրեց հնարավորության սահմաններում եգիպտացիներին նպատակակետից շեղել և ի հարկին դրուզներին ոգուշացնել Իբրահիմի գործողություններից (37, 87—88)։

Չկարողանալով ջախջախել ապստամբներին, Իբրահիմը 1838-ի ամռան կարգադրեց թունավորել Լեջայի ջրի առանց այն էլ սակավ պաշարները։ Շեյխ Արիանը հարկադրվեց շուրջ 1000 դրուզներով դուրս գալ իր

ապաստանից, անցնել Անդրլիբանան և այնտեղ էլ շարունակել զինված պայքարը։ Եգիպտական զորքը, ամիրայության աշխարհազորի և պալեստինյան բաղաուիների գնդերի հետ շարժվեց Ուադի աբ-Թայմի վրա, որտեղ դարազիականները, միաժամանակ կատաղի դիմադրություն ցույց տալուց հետո, հակառակորդի գերակշիռ ուժերի առաջ տեղի տվեցին ու նահանջեցին դեպի Շեյխ լեռը և Շաաբա բնակավայրում պաշարվելով ի վերջո անձնատուր եղան։ Ինչ վերաբերում է անորսալի Շիբլի Արիանին, ապա Իբրահիմը նրան ներում ու պատիվներ խոստացավ։ Դրուզ շեյխն էլ, պարտիզանական կռիվներից հոգնաբեկ, զենքը վայր դրեց ու նշանակվեց դրուզ-մթուալլիական անկանոն հեծելագնդի հրամանատար (11, 132—136)։

Բոլոր դեպքերում Բեշիր II-ի կողմից դրուզների շարժման դեմ մարոնական աշխարհազոր դուրս բերելն առաջին խոշոր ճեղքվածքն առաջացրեց ամիրայության գլխավոր երկու համայնքների փոխհարաբերություններում։ Իշխանապետի գործելակերպը, ինչպես իրավամբ շեշտել է Սալիբին, հակասում էր լիբանանյան բաղաբական դարավոր ավանդույթներին, որոնք թելադրում էին ամեն գնով խուսափել միջհամայնքային գինաբախումներից (37, 88)։ Մյուս կողմից ամիրն ինքն իրեն դրեց բավականին ծանր դրության մեջ, քանի որ դրուզ ֆեոդալ-ազնվականությունից հետո խսպառ իր դեմ լարեց դարազիական ամբողջ համայնքին և նրա բացահայտ թշնամու համբավ ձեռք բերեց։ Իսկ դա չէր կարող վճռական նշանակություն չունենալ իշխանապետության ճակատագրի համար, մանավանդ, որ աշխարհամասում փոթորկալի օրեր էին սպասվում։

Բանն այն է, որ թուրք-եգիպտական Քյոթահիայի հաշտությունը վերջնական հանգուցալուծում չէր կարող լինել և՛ սուլթանի համար, որ ձգտելու էր վերախլել կորցրածը, և՛ Մ. Ալիի համար, որ ջանալու էր ձեռքբերումը խորացնել ու փաստականից հետո նաև իրավական անկախություն նվաճել։ Թուրք-եգիպտական նոր զինաբախման առավել եռանդուն ջատագովը Անգլիան էր, քանի որ Քյոթահիայի համաձայնությունը վերջին հաշվով ոչ միայն ընդարձակում էր Ֆրանսիայի ազդեցության ոլորտը, այլև ծանր հարված էր հասցնում իր իսկ տնտեսական շահերին այն պատճառով, որ հատկապես ցորենի ու մետաքսահումքի դնման պետական մենաշնորհը վերացնող 1838-ի թուրք-անգլիական առևտրական պայմանագրի գործողության շրջանակներից Եգիպտոսից հետո դուրս էր թողնում նաև Սիրիան ու Կիլիկիան (33, 79)։ Լոնդոնում ենթադրում էին (և իրենց ենթադրությունը որպես հավատք ներշնչում Բ. Դուան), որ օսմանյան բանակների զորաշարժի դեպքում Սիրիայում տեղական ազդարնակ-

չության աջակցությամբ հնարավոր կլինի խորտակել 1837—38-ի ապրստամբական շարժումներից թուլացած եգիպտական դիրքերը։

Նոր զինաբախումը, սակայն, ակնկալված վախճանը չունեցավ։ 1839-ի հունիսի 24-ին Նիզիբի ճակատամարտում թուրքերը գլխովին ջախջախվեցին։ Վեց օր անց, աղետից անտեղյակ, մահացավ հարբեցող և ընկնավոր Մահմուդ II-ը։ Դահ բարձրացավ 17-ամյա խելապակաս մի պատանի՝ Աբդուլ Մեջիդը, որի խորհրդականները փութացին Մ. Ալիի հետ հաշտության ուղիներ որոնել, պատրաստակամություն հայտնելով բավարարելու փոխարքայի հիմնական պահանջն իսկ՝ Սիրիայի կառավարությունը ընդմիշտ ժառանգական իրավունքով հանձնել իր տոհմին։

Հասկանալի է, որ Անգլիան, Ռուսաստանը, Պրուսիան և Ավստրիան, այդ զիջումը դիտելով որպես Օսմանյան կայսրության փաստական անդամահատումը հօգուտ Ֆրանսիայի, չէին կարող անտարբեր հանդիսատես մնալ։ Անհրաժեշտ էր, ուրեմն, թուրք-եգիպտական խորացած վեճին մի այլ լուծում դտնել։ Եվրոպական արքունիքների շահերն ու հայացքները ընդհանուր հայտարարի բերելու համար ժամանակ էր անհրաժեշտ։ Այդ իսկ պատճառով մրցակից հինգ հզորները, այդ թվում Ֆրանսիան, հարկադրվեցին անմիջականորեն համերաշխվել և 1839-ի հուլիսի 27-ին Բ. Դոան հանձնված հավաքական մի հուշագրով պահանջեցին, իրենց որոշմանն սպասելով, ձեռնպահ մնալ Կահիրեի հետ խաղաղության բանակցություններից։

Սուլթանը, այդ հուշագրից սոսկ բարին ակնկալելով, հաճույքով ենթարկվեց դեսպանների կարգադրության։ Մ. Ալին, ընդհակառակը, Ֆրանսիայի անակնկալ դիրքորոշումից շփոթության մատնված և ակամա սպասողական դիրքի դատապարտված, գալիք ամպրոպը դիմագրավելու համար սկսեց եռանդագին պատրաստվել վճռական ճակատամարտի։

Լարված այդ դադարի տասներորդ ամսին՝ 1840-ի մայիսի վերջերին Շուֆի լեռնագոտում եգիպտական իշխանությունների դեմ անսպասելիորեն շղթայազերծվեց պինված մի շարժում, որ վերջին հաշվով մի կողմից փութացնելու էր Սիրիայում եգիպտական տիրապետության փլուզումն ու Բեշիր II-ի գահընկեցությունը, մյուս կողմից Շիհաբ տոհմի իշխանապետության վերացմամբ ուղի էր հարթելու Լիբանան լեռան վրա թուրքական ուղղակի տիրապետության հաստատման ու լիբանանյան ներքին հարցերին եվրոպական դիվանագիտության միջամտության աշխուժացման։

1840-ի մայիս-հուլիսյան անցուդարձերի ժամանակագրական ընթացքը, որ սկզբնաղբյուրներում չափազանց խառնափնթոր է, որոշ չա-

փով ճշգրտվել է Սմիլյանսկայայի ջանքերով։ Մեր կողմից լրացված ճշգրտմամբ հանդերձ այդ ընթացքը, որ պատկերվելու է ստորև, այնուամենայնիվ պետք է համարել միայն մոտավորապես ճիշտ, քանի որ անհնարին է վերացնել օրացուցային մի շարք հակասություններ, որոնք առկա են ժամանակագրություններում և որոնք, բոլոր դեպքերում, ծանրակշիռ նշանակություն չունեն։

Մայիսի 24-ին, կենտրոնական իշխանությունների զինաթափման հրամանին հակադրվելու իրենց կոչին դրուզների համերաշխությունից քաջալերված, քրիստոնյա գեյր ալ-կամարցիները նախ հարյուր հոգիանոց մի ջոկատ ուղարկեցին Մանասիֆի և Շահհարի շրջանները՝ խափանելու տեղի ազգաբնակչության արդեն իսկ սկսված զինահավաքն ու պատժելու եգիպտացիներին օգնող գյուղական շեյխերին, ապա և երկու հարյուր հոգիանոց մի այլ ջոկատ՝ փակելու Սուլեյման փաշայի կողմից ճանապարհ հանված գնդի Սայդայից դեպի Լեռ թափանցելու հնարավորություն տվող միակ կիրճը։ Ճիշտ է, երկրորդ ջոկատի հայտնվելուց սրբատաշնդված Մոաղլոսկաթ ադ-Դամուրի բնակիչները, Ջիսր ալ-Ուլյայի բարվանսարայի տիրոջ ղեկավարությամբ, հարձակվեցին խանում տեղադրված եգիպտական կայազորի վրա ու պատճառ դարձան, որ հաջորդ առավոտ եգիպտական երկու հազարանոց մի գունդ առաջ խաղա և քարուքանդ անի բարվանսարայը, սակայն Դեյր ալ-Կամարի ջոկատը հանգիստ դիտորդի կնցվածք պահպանեց, իսկ եգիպտացիները վերադարձան Սայդա (201, 164)։

Հենց այն փաստը, որ առաջինն ապստամբության դրոշ բարձրացրած գեյր ալ-կամարցիները, նույնիսկ այն բանից հետո, երբ մայիսի 27-ին դրուզների խալուսայում միջհամայնքային ժողով գումարելով որոշեցին համատեղ դիրքորոշվել կենտրոնական իշխանության միջոցառումների դեմ (37, 92), մինչև Բեյրութի դաշտավայրի գեպքերը բացահայտորեն խուսափում էին եգիպտական զորքի հետ բախվելուց, ընդհանուր առմամբ որևէ արյունահեղությունից (154, 200), կարող է ըստ ինքյան նշան լինել Լեռան գլխավոր կենտրոնի ղեկավար շրջանների զսպվածության և սպասողականության։ Այդ փաստը, սակայն, միաժամանակ թույլ է տալիս ապստամբների զսպվածության և սպասողականության ետին անպայման ընդունմարել ամիր Բեշիրի հեղինակավոր ձեռքը։

Հարաբերաբար խաղաղ հնգօրյակից հետո Լեռան շրջանակներից դուրս Սահել Բեյրութում ապստամբական երկրորդ օջախի առաջացումը ևս որոշ իմաստով աղերսվում է իշխանապետի անվան հետ, նրա ձեռնասուներից Աբու Սամրա Ղանեմի միջոցով։ Քարտաշի որդի, առևտրով

հարստանալով Շիհաբ իշխանապետական տոհմի կալվածքների կառավարիչ դարձած մարոնական Աբու Սամրան, նրան որպես լիբանանյան հերոս կենսագրող Խալիլ Հումամ Ֆաիզի պնդմամբ՝ իբր միայն դեյր ալ-կամարցիների համարձակ ընթացքից քաջալերված, մայիսի վերջերին սկսել է շրջել Բեյրութի դաշտավայրի գյուղերում և մարդկանց կոչ է արել միանալու ապստամբական շարժման (199, 44)։ Նրա ու նրա հետագա գործակիցներ մթուալլի Ահմեդ Դաղերի և շեյխ Ֆրանսիս Խազինի շուրջ շատ շուտով համախմբվել է խայտաբղետ մի աշխարհազոր, հիմնականում շրջանի խոշորագույն ավատատեր Շիհաբների կալվածքների ինչպես տեղաբնիկ ու մշտական, այնպես էլ Մեթնից և այլ շրջաններից եկվոր օրավարձու աշխատողներից կազմված։

Պետք է ասել, որ հենց Աբու Սամրայի աշխարհազորի գործողություններն էին, որ հարաբերաբար կազմակերպված ապստամբության բնույթ էին կրում և խիստ արագորեն շիկացնելով մթնոլորտը, Լեռան վրա սկսված համարյա խորհրդանշական-ցուցադրական շարժման տվեցին սուր կերպով ընդգծված և հարաբերաբար ծավալուն հակաեգիպտական շարժման բնույթ։

Դամասկոսում ժանտախտի համաճարակ հայտնաբերված լինելով, Բեյրութի կառավարիչ Մահմուդ բեյը մայիսի 29-ին քաղաքն առավ «սանիտարական շրջափակման մեջ» (4, գ. 701, թ. 32)։ Կարող է պատահել, որ այդ միջոցառումը միաժամանակ հետապնդում էր խլրտացող լեռնականներին մի շարք պարենամթերքների, առաջին հերթին հացի աղբյուրից կտրելու նպատակ։ Բոլոր դեպքերում Սահելի ու մերձակա գյուղերի բնակիչները «սանիտարական» ոչինչ չտեսան բեյի կարգադրության մեջ և, ինչպես վկայել են ժամանակակից դիտորդները, հունիսի սկզբին, այն բանից հետո, երբ հացամթերքների դեպի Լեռ տեղափոխումը իրոք էլ պաշտոնական կարգադրությամբ խափանվել էր, մի քանի (առավելագույնը հինգ) հազար հոգով, աղամարդկանց հետ նաև կանայք, ոմանք հրացաններով, ուրիշները կացիններով, բիրերով, բահերով ու եղաններով զինված, Աբու Սամրայի գլխավորությամբ գրոհեցին Մահմուդ բեյի զորքերի վրա (114, հտ. 4, 59), սպանեցին որոշ թվով զինվորների, զինաթափեցին ուրիշներին և փաստորեն տիրացան ամբողջ Բեյրութին, բացի ծովափնյա դժվարամատչելի Կարանտինայից, որտեղ գտնվում էին զինապահեստները և որտեղ ալբանացիները շարունակում էին դիմադրել։ Ապստամբները թալանեցին պետական պաշտոնատները, հատկապես թղթատարական կենտրոնը, սակայն, ականատեսների իսկ վկայությամբ, ոչ մի վնաս չհասցրեցին ո՛չ տեղի ազգաբնակչության,

ոչ էլ մանավանդ ստարերկրացիներին (181, հտ. 3, Ա. մաս, 76—78), «հատուկ հարգանք ցուցաբերելով հյուպատոսների պահանջների նկատմամբ, հուսալով մեծ պետությունների համակրանքն ապահովել» (11, 191)։ Ճիշտ է, մի քանի օր անց, եգիպտական օժանդակ ուժերի ժամանումից առաջ ապստամբները քաղաքից հեռացան, սակայն զորակենտրոն ընտրելով Թուլուն գյուղը, շարունակեցին բախվել քաղաքապահ զորքերի հետ, բռնագրավել նրանց հասցեագրվող պարենը և խափանել Նահր ալ-Քելբ և Նահր Իբրահիմ գետերի վրա կառուցված և բանակին ալյուր հայթայթող ջաղացքների գործունեությունը (43, 65)։

Բեյրութի դեպքերից մի քանի օր անց Սայդայից շտապ ժամանեց Սուլեյման փաշան, իր հետ բերելով «Իբրահիմի ահեղ կարգադրություններն ամիր Բեշիրին, սակայն վերջինս հանդիսատեսի անգործունեություն պահպանեց, մինչ նրա գաղտնի գործակալները, նույնիսկ որդիները, լեռնականների մոտ միջնորդության պատրվակով, կրակն էին բորբոքում»։ Այդ պայմաններում եգիպտական իշխանություններն սկսեցին Լեռն աքցանի մեջ վերցնել։ Հալեպից Բաալբեկ փութացվեց ութ հազարանոց մի զորաբանակ, որ շուտով գրավեց խռովահույզ Զահլեն և ձեռնարկեց բնակչության զինաթափման։ Դամասկոսի էյալեթից երեք հազար ալբանացիներ ծովով բերվեցին Բեյրութ, որտեղ ժամանեցին նաև Ալեքսանդրիայից ճանապարհված 22 եգիպտական և եգիպտացիների կողմն անցած օսմանյան ռազմանավեր ու ցամաքահանում կատարելով վերադարձան իրենց կառանատեղին։ Փաստորեն եգիպտական դրոշի ներքո գործող երեսուն հազարանոց եգիպտա-թուրքական զորքը շրջափակել էր Լեռը և պատրաստ էր առաջին իսկ հրամանին շարժվել ամիրայության սահմաններից ներս (11, 190—191)։ Նրանց օժանդակելու էր փութացել Նաբլուսցի հինգ հազար լեռնականների անկանոն մի բանակ, որ եռում էր Լեռան հետ իր հնամենի հաշիվները ժամ առաջ փակելու եռանդից։

Ուրվագծվող սպառնալիքի առաջ Բեյրութի դաշտավայրի ապստամբական աշխարհազորային ճամբարը հարկադրվեց ամիրների և շեյխերի հրամանատարության ներքո ստորաբաժանվել ու ցրվել՝ տարբեր կետերից դեպի Լեռ թափանցելու ուղիները փակելու առաջադիմությամբ։

Եգիպտական զորքերի ռազմական գործողությունների մոտալուտությունը նոր ծավալ տվեց հակաեգիպտական տրամադրություններին։ Թեկուզ և փոքրաթիվ ու վատ զինված, ապստամբական դրոշ պարզած մարդիկ որոշեցին տեղի չտալ։ Տարբեր բնակավայրերում գումարվում էին տարբերային հավաքներ և լեռնականներն ամենուր որոշում էին դեն ի ձեռին զիմադրել զենքերը հանձնելու կարգադրության, պահանջում էին

հրաժարվել զորագրման ծրագրից, վերացնել արտակարգ հարկերի և տարապարհակ աշխատանքների պրակտիկան (114, հտ. 4, 56)։ Հունիսի 4-ին (ըստ Խալիլ Հումամ Ֆաիզի՝ հունիսի 7-ին) Անթիլիասի Մար Իլիաս եկեղեցում նույնիսկ գումարվեց տարբեր համայնքների ղեկավար գործիչների առաջին հավաքը, իշխանապետի դիտորդ Աբու՝ լամա ամիրների մասնակցությամբ, իրադրությունը հանգամանորեն քննարկելու և հետագա գործողությունների համաձայնեցված ծրագիր մշակելու նպատակով։

Ապստամբական հավաքներին ի պատասխան, Իբրահիմ փաշան հունիսի 6-ին հատուկ կոչով դիմեց ժողովրդին, կրկնելով «ժամանակավորապես իրենց ձեռքում թողնված» զենքերը հանձնելու և ապստամբությունից ետ կանգնելու իր պահանջը։ Սալիբին պնդում է, որ փաշան իբր «հրաժարել է որևէ դիջում կատարելուց» (37, 95)։ Իրականում Իբրահիմը, ֆրանսիական հյուպատոսի վկայությամբ, թեկուզ շրջանցելով տարապարհակ աշխատանքների ու արտակարգ հարկերի հարցը և անշուշտ ելնելով այն բանից, որ ապստամբության հիմնական շարժառիթը գինաթափման իր փորձը որպես առաջիկա զորագրման նախաքայլ մեկնաբանելն էր եղել, երդմամբ հավաստիք էր տալիս, որ ընդհանրապես Սիրիայից և մասնավորաբար Լիբանան լեռնից զորահավաք չի կատարվելու (181, հտ. 3, Ա մաս, 73—74)։ Ռուսական հյուպատոսն իր հերթին հաղորդել է, որ իրոք «Իբրահիմն իր հոր գլխով երդվեց, որ զորակոչիկ պահանջելու մտադրություն չունի» (11, 191)։

Իբրահիմի կոչից կառչելով կարելի է պնդել, որ Բեշիր II-ը և նրա համախոհ ավատապետական ավագանին գինաթափման և զորագրման հրամանի նկատմամբ իրենց դիմադիր վերաբերմունքը եգիպտական իշխանությունների մոտ վարպետորեն սքողել էին իրենց անզորությամբ և ազգաբնակչության զայրույթի խորությամբ։ Դրանում դժվար չի լինի համոզվել ընթերցելով եգիպտական կոչի այն տողերը, որոնք խորհուրդ էին տալիս «լավ մտածել ու մտորել և հնազանդ լինել ձեր իշխանին (Բեշիր II-ին—Ե. Ն.), որպեսզի վերջինս նախագուշացնի (եգիպտական) բանակի ղեկավարներին ու (նրանց) ետ պահի առաջխաղացքից, դրանով իսկ ձեզ վերծելով վտանգներից» (181, հտ. 3, Ա մաս, 73—74)։

Եգիպտական զորահրամանատարն իր կոչում մյուս կողմից դիմում էր խորամանկ մի ոգմավարության. մարոնականների և դրուզների միջև պայ խրելու նպատակով նա բանն այնպես էր ներկայացնում, որ իբր նույնիսկ մտադիր չէ ընդհանուր գինաթափում անցկացնել, այլ լոկ «ժամանակավորապես իրենց ձեռքում թողնված», այլ խոսքով մարոնականներին բաժանված յոթ (կամ իշխանապետի կողմից պահեստավորվածների

հետ տասնեհինգ) հազար հրացաններին է հետամտում։ Այդ երաշխիքի և ուղղմավարության կողքն իսկ, սակայն, Իբրահիմը կատարում էր ուժի անտեղի մի ցուցադրություն. եթե,— ասված էր նրա կոչում,— ժողովուրդը զորահավաքից երկյուղած է հրաժարվում զենքերը հանձնելուց, ապա նրա վախերն անհիմն են, իսկ եթե «ինքնարուխ և անհիմն դավաճանություն» է թաքնված ապստամբության ետին, ապա, «բացի հեծելազորից և հրետանուց», արդեն իսկ ուղարկված «15 գունդ հետևակ գալիս է ոչընչացնելու ձեզ և կործանելու ձեր բնակավայրերը» (184, հտ. 3, Ա մաս, 74)։

Ուժի այդ ցուցադրությունը ժողովրդի համար փաշայի մտադրությունների ավելի ճշմարտացի հայտարարը լինելով, հասկանալիորեն ապստամբության դրոշ պարզած լեռնականներին պիտի մղեր իրենց հերթին դիմելու գործնական քայլերի։ Հունիսի 8-ին մարոնական, դրուզ, հույն-օրթոդոքս, հույն-կաթոլիկ, մթուալլի և սունիի ժողովրդական պատվիրակները, դարձյալ մի շարք ավատապետների մասնակցությամբ ժողովի հավաքվելով Անթիլիասում, երդվեցին միասնաբար ու մինչև վերջ պայքարել եգիպտական իշխանությունների դեմ ու բոլոր լիբանանցիներին կոչ արեցին զենքի դիմել՝ «անկախություն կամ մահ» նշանաբանով (181, հտ. 3, Ա մաս, 74—76)։ Ապստամբական այս բազմահազարանոց ժողովում է, որ առաջին անգամ լինելով արծարծվում էր երկրի բոլոր մանրահատվածներում ամիյյաներ, այն է՝ ապստամբական կազմակերպություններ ստեղծելու, վուջուխ ալ-ամիյյաներ՝ տեղական կազմակերպությունների ղեկավարություն ընտրելու և վերջիններից ապստամբության ղեկագույն խորհուրդ կազմելու առաջարկը։

Անթիլիասի կոչում ընդգծվում էր. «Քանի որ մահը հարվածում է ոչ միայն նրանց, ովքեր ապստամբում են և ցանկանում են թոթափել ճնշիչ լուծը, այլև նրանց, ովքեր վատաբար տանը նստած սպասում են իրեն, առանց վարանքի և սիրահոժար միավորվենք և աներկյուղ ապստամբենք։ Մի՞թե ակնհայտ չէ, որ մեր կյանքին սպառնացող բռնապետությունը սպառնում է և մեր հայրենիքի գոյության։ ...Եթե երկպառակվենք կամ մի բոպե իսկ վարանենք համատեղ ճիգերով մեր ազատությունը վերստին ձեռք բերելու, ապա ուշացած ղղջումը չի փրկի մեզ»։

«Հանդիսավոր իրադրության պահանջած արժանապատվությամբ ու զորությամբ գործելու և որոշումներն ազատ ժողովրդի իմաստությամբ ու շրջահայեցությամբ ընդունելու համար»,— շարունակում էր Խոչը, ամեն մի կազմակերպություն իր շարքերից պետք է առանձնացնի ամենից ակնառու և լուսամիտ մարդկանցից կազմված մի ղեկավարություն։ Հինգ

հոգուց բաղկացած ղեկավար այդ մարմինը պետք է ընտրվի յուրաքանչյուր կազմակերպության մեծամասնության ձայնով (181, հտ. 3, Ա մաս, 75)։ Ա. Իսմայիլի օգտագործած արխիվային մի հաղորդումից երևում է, որ ամեն մի կազմակերպություն ղեկավարության կազմում ընտրում էր ոչ թե խստիվ միայն հինգ, այլ մինչև տասներկու (գուցե և ավելի) մարդ, անկախ նրանց սոցիալական ծագումից, դիրքից ու դավանանքից (114, հտ. 4, 56—57)։ Ղեկավարությունն էր հավաքագրելու կամավորներին, ամեն մի ընտանիքից ապստամբական դանձարկղի համար հանգանակելու էր 20 փարայից մինչև 3 ղուրուշ, ձեռք էր բերելու վառոդ ու կապար և որոշելու մետաքսագործարանների սարքավորումների կապարյա անիվները հալեցնելով օգտագործելու հարցը։ Անթիլիասի կոչով նաև ճշտորոշվում էր, որ տարբեր կազմակերպությունների ղեկավար մարմինները, ըստ հանգամանքների լրիվ կամ մասնակի կազմով համապատասխան մի վայրում հաճախ համատեղ ժողովի հավաքվելով՝ ինքնաբերաբար կազմելու էին ապստամբության գերագույն խորհուրդը։ Վերջինս ղեկավարելու էր տասը հազարանոց աշխարհազորային բանակը, որ կազմվելու էր տեղական ղեկավար մարմինների կողմից հավաքագրվելիք կամավորներով, ինչպես նաև ժողովրդից դանձելու և ըստ շրջանների վերաբաժանելու էր նախկինում կենտրոնական կառավարության տրվող հարկերն ու մաքսատուրքերը՝ աշխարհազորայիններին զենքով, զինամթերքով ու պարենով ապահովելու համար։ Միաժամանակ գերագույն խորհրդի պարտականությունն էր լինելու «աշալրջորեն կազմակերպել վտանգված հայրենակիցների պաշտպանությունը», ժողովրդին զերծ պահել «նվաստացումից և անարդարությունից» և «վիժեցնել գարշելի իշխանության երկպառակտիչ նենգությունները» (181, հտ. 3, Ա մաս, 76)։

Անհրաժեշտ է նշել, որ իրադարձությունների դահավեժ ընթացքը ժամանակ ու հնարավորություն չէր թողնելու գերագույն խորհրդի կազմավորման ու գործունեության, այլ խոսքով ապստամբական շարժման քանակական թե որակական նոր աստիճանաչափի հասնելուն։ Ի դեպ, հունիսի 11-ին, երբ Անթիլիասի ժողովից 3 օր անց, ռուսական հյուպատոսը զեկուցագրում էր, որ «առ այսօր ապստամբության ղեկավար չկա և բոլոր որոշումներն ընդունվում են ընդհանուր և հրապարակային ժողովներում» (181, հտ. 3, Ա մաս, 77)։

Անթիլիասի աշխարհաժողովի որոշումների կենսագործումը խափանելու նպատակով եգիպտական իշխանությունները Բաալբեկ, Բեյրութ և ծովափնյա մյուս քաղաքներն ուղարկված զորքերին կարգադրեցին խստիվ խափանել դեպի Լեռ հացի ու հացահատիկի փոխադրումը և սակայն փոքր

ինչ ուշ էր արդեն և ապստամբներին տնտեսական շրջափակման ենթարկելու ծրագիրը չէր կարող ակնկալված արդյունավետություն ունենալ. ամիր Խանջար Հարֆուշը ոտքի էր հանել Բաալբեկի շրջանի մթնաբնակներին, շեյխ Խրդրը Զանիյայի շրջանի նուսեյրի լեռնականներով պաշարել էր Տրիպոլին, Սուլեյման փաշան ինքն իսկ շրջափակվել էր Սայդայում և քաղաք պարենամթերք հասցնելու համար ուղարկված բոլոր վաշտերը ջախջախվում էին մեկը մյուսի ետևից։

Ուրվագծվող փոթորկի ահագնացումը կանխելը Եգիպտոսի փոխարքայի համար դարձավ առաջնային գործ։ Հունիսի 11-ին Պոլսի ռուսական դեսպանին հասցեագրված մի հաղորդում նշում էր, որ նախօրյակին Աղեքսանդրիայից Սայդա եկած մի շոգենավով Սուլեյման փաշային և ամիր Բեշիրին նամակներ են բերվել Մ. Ալիից։ Վերջինի կարգադրության համաձայն, որ իշխանապետական պալատ էր հասցվում ոչ թե սովորական սուրհանդակի, այլ անձամբ Սուլեյմանի կողմից, Բեշիրի որդի ամիր Ամինը նույն օրն իսկ բանագնաց էր գնում Սին ալ-Ֆիլ՝ ապստամբության ղեկավարների մոտ, որոնց հետ արդեն շուրջ մեկ շաբաթ է, ինչ խորհրդակցության էին նստած իշխանապետի ազգական մի քանի Շիհաբ, ինչպես նաև Աբու՝լ Լամա ամիրներ։ Իշխան Ամինը, սակայն, ձևականորեն առաջարկելով վերացնել Բեյրութի շրջափակումը և ցրվել իրենց բնակավայրերը, փաստորեն քաջալերում էր ապստամբական շարժումը՝ զինաթափման և զորացրման հարցերում եգիպտացիների մտադրությունները չհերքելով (4, գ. 701, թթ. 35 և 48։ 11, 191։ 181, հտ. 3, Ա մաս, 77)։

Հունիսի 12-ին Լիբանան լեռան ամբողջ ազգաբնակչության անունից գրավոր պատասխան էր հանձնվում Ամին Շիհաբին, պահանջելով, որ Անգլիայի և Ֆրանսիայի հյուպատոսների երաշխավորությամբ եգիպտական իշխանությունները հանձն առնեն հրաժարվել զինաթափման և զորացրման մտադրություններից, տարապարհակ աշխատանքների և այլ անօրինականությունների անցկացումից, միրի հարկից դուրս մնացած բոլոր հարկերից (այդ թվում հատկապես ֆիրդեից), հարկային հարցում համապարտ երաշխավորության սիստեմը կիրառելուց, մետաքսի բերքից առաջ հարկը պահանջելու սովորությունից, հարկահավաքման ուղարկված մուխասսիլներին ժողովրդի հաշվին պահելուց (181, հտ. 3, Ա մաս, 80)։ Սոցիալական այս պահանջներից անկախաբար, ապստամբները, ըստ աշ-Շիդիակի, Բեշիր II-ից պահանջում էին իր վարչակառավարման գլխավորից հեռացնել Քարամեին և նրա փոխարեն ամեն մի համայնքից ընդգրկել երկուական ներկայացուցիչների (201, 561)։ Այդ դեպքում միայն, իրենց պատասխանը եզրափակում էին ապստամբները, Լիբանան

լեռը կհամաձայնի վերաճանաչել Մ. Ալիի գերիշխանությունը։ Նամակի եզրափակիչ մասը ձևակերպված էր այսպես. «Արդ, եթե իշխանությունները շուտ դան դեպի արդարություն և վերացնեն բռնությունը... ինչպես ցանկանում ենք մենք և ուրեմն խնդրում նորին բարձրապատվություն փոխարքայից, ապա պատրաստ ենք ենթարկվելու և հնազանդելու իրենց հրամաններին, քանի որ մեր ապստամբությունը (ինքնուրույն) իշխանություն ստեղծելու նպատակ չի հետապնդում» (181, հտ. 3, Ա մաս, 80)։

Սկզբնաղբյուրները լռում են այն մասին, թե հունիսի 12-ից մինչև հուլիսի 10-ը շուրջ մեկամսյա ժամանակահատվածում ի՞նչ իրադարձություններ տեղի ունեցան Լեռան վրա ու նրա շուրջ։ Կարելի է ենթադրել, որ եգիպտական իշխանություններն ու ապստամբական ճամբարը մնում էին իրենց դիրքերի վրա, ավելի շուտ խաղաղ ու սպասողական դրության մեջ, որում հավանական միակ գործարարը ախոյաններին միմյանց հաղորդակցող իշխանապետական պալատն էր։

Իրավիճակի խաղաղությունը, սակայն, անխուսափելիորեն պիտի վտանգվեր այն հանգամանքից, որ Պոլսի, Բեյրութի և Մալթայի միջև ընկած ծովային ուղիներում աշխուժացել էր բրիտանական ռազմանավերի երթևեկը, Նեպիրի հրամանատարության ներքո անգլիական մի ֆրեգատ, մինչև պառնկները զորքով լցված, հայտնվել ու ցուցադրաբար մեխվել էր Բեյրութի բացերում (11, 194), քաղաքի ապստամբական կազմակերպության կենտրոնում ավելի ու ավելի հաճախ հայտնվում էին Լոնդոնից ուղարկված պատվիրակներ և գաղտնորեն ավելի ու ավելի դինամիզմ էր մատակարարվում լեռնականներին։ Այդ ամենը չէր կարող ոչինչ չհուշել եգիպտական իշխանություններին։ Եվ ահա մի օրից մյուսը ապստամբության ճնշումը Մ. Ալիի համար դադարեց սոսկ հեղինակության հարց լինելուց և վերածվեց ռազմաքաղաքական կենսական խնդրի։

Եգիպտոսի փոխարքան, որ ժամանակակիցների վկայությամբ քաջ իմանալով, որ իր որդի Իբրահիմը ծայրահեղության կդիմի, մինչ այդ շրջափակման ենթարկված լեռնականների հետ բանակցություններ վարելու համար լիազորել էր Սև-Սուլեյմանին ու սրա խոզքին էլ, որպես խորհրդատու, նշանակել իր զուսպ ու չափավորական թոռան՝ Աբբասին (11, 194), հուլիսի 10-ին զորքերին կարգադրեց շարժման անցնել և անխնա լինել։ Առաջին հերթին Բեյրութում դաժանորեն ճնշվեցին հատկապես քրիստոնյա այն շրջանները, որոնք կասկածվում էին ապստամբական շարժման այս կամ այն չափով համակրելու կամ աջակցելու մեջ։ Այնուհետև Բիկայից և ծովափից պատժիչ գումարտակները ներխուժեցին Լեռ։ Առաջինը ջախջախվեցին ավելի մատչելի Սահել Բեյրութի և

Մեթնի ապստամբական ջոկատները, որոնք, հարյուրավոր զոհեր տալով, իրենց դիրքերը զիջեցին և ցաքուցրիվ եղան։ Մյուս շրջաններում դիմադրությունը հարաբերաբար ավելի կատաղի բնույթ կրեց, սակայն և այնպես ճնշվեց։ Մ. Ալին հուլիսի 16-ին արտաքին գործերի մինիստր Պողոս բեյին նամակով հաղորդում էր, որ ամիր Բեշիրի ուղարկած զեկուցագրի համաձայն եգիպտական զորահրամանատարներից Օսման փաշան ամսի 10-ին շարժվել է դեպի Լեռ, փախուստի մատնել և շուրջ 10 կմ հետապնդել ապստամբներին, ապա զորակենտրոն ընտրել Բեվարիշ (Բաուշրիա՞) գյուղը, որտեղ ներկայացել են Մեթնի ապստամբները՝ հնազանդություն հայտնելու և զենքերը հանձնելու։ Ամիրը հաղորդել է նաև, որ Դեյր ալ-Կամարի և Սայդայի շրջանների ապստամբները նույնպես հնազանդված են և որ «խռովությունները կարող են ամբողջովին վերացած համարվել» (181, հտ. 3, Ա մաս, 80)։

Բեշիր II-ը, որ եգիպտական զորքերի դասավորությունից ու տեղաշարժերից և Նաբլուսից բերված աշխարհազորի ու Մ. Ալիի կողմն անցած թուրք զինվորների աշխուժացումից մինչ այդ կռահել էր Սուլեյման փաշային տրված կարգադրությունների տարողությունը, եգիպտական զորահրամանատարության պլանների լրջությունն ու ահարկու հարվածների ուղղությունները, արդեն չէր կասկածում, որ ապստամբությունը շուտով անխուսափելիորեն ճնշվելու է։ Հետևաբար նա շտապեց որդիներին ուղարկել Սուլեյմանի ճամբարն ու իր ծառայություններն առաջարկել։ Եգիպտական զեկավարությունը, հավատալ է ռուսական հյուպատոսը, «լավ ըմբռնելով ծեր ամիրի նենգ քաղաքականությունը, սակայն (նրա հետ) հաշվեհարդարը ավելի բարենպաստ հանգամանքների հետաձգելով, սիրահոժար կապվեց նրա հետ, որպեսզի մեկ հարվածով անվիճելիորեն ճնշի լեռնականներին» (11, 194)։ Իշխանապետը մինչև վերջ խաղաց իր ստանձնած եգիպտահաճո դերը. նրան հաջողվեց երկպառակտել ապստամբական առանց այդ էլ թուլացած ճամբարի զեկավարությունը, շարժման հարած ժողովրդական զանգվածին կասկած ներշնչել իր առաջնորդների նկատմամբ և արհեստականորեն առաջ բերել այնպիսի տագնապ ու խուճապ, որ պատժիչները, իշխանապետի թիկնապահ գնդի աջակցությամբ, առանց մեծ դժվարությունների կարողացան խաղաղեցնել ու փաստորեն նաև զինաթափել ամբողջ Լեռը։ Ճիշտ է, որ ժամանակագիրների վկայությամբ «գյուղեր, եկեղեցիներ ու վանքեր թալանվեցին ու հրկիզվեցին», սակայն նույնքան ճիշտ է, նաև, որ «եգիպտական զորքերը ժողովրդի հետ անհամեմատ մարդասիրաբար վարվեցին, քան՝ թուրքերը»։ Բոլոր դեպքերում, ինչպես այլ հանգամանքներում, Բեշիրը «իր քա-

դաբական կանոնի համաձայն կարողացավ նոր օգուտներ քաղել» նաև մայիս-հուլիսյան լիբանանյան տագնապից. «Նոր ապստամբություններ կանխելու և հանցապարտներին պատժելու նպատակով նա ձերբակալեց բոլոր նրանց, ում ազդեցությունը չէր համապատասխանում իր տեսակետներին» (11, 195)։

Նեպիրը, որ իր գործակալների միջոցով սարեր էր խոստացել ապստամբներին, անտարբեր հանդիսատեսն եղավ ճնշման գործողություններին և ապա հեռացավ սիրիական ծովափից։ Անգլիական կառավարությունն էլ ժամանակավորապես ձևացրեց, որ հավատ է ընծայում Գիզոյի կողմից օգոստոսի 24-ին Պալմերստոնին ներկայացված հուշագրի այն հավաստիքին, որ «Լիբանանի ազգաբնակչության որոշ տարրերի կողմից» պարզապես ինչ-որ «ապստամբություն» է պայթել անձամբ Իբրահիմ փաշայի դեմ (43, 71)։ Մինչ այդ, սակայն, մի քանի արկի զինամթերքի փոխարեն ծովակալը կարողացել էր ապստամբական կազմակերպությունից ձեռք բերել եվրոպական արքունիքների և Բ. Դռան միջամտությունը խնդրող աղերսագրեր։ Դրանք, ինչպես իրավամբ նկատել է Սմիլյանսկայան (43, 72), յուրօրինակ դիվանագիտական նախապատրաստություններ էին Սիրիայում անգլո-թուրքական ռազմական մոտալուտ միջամտության և օսմանյան ուղղակի տիրապետության վերահաստատման։

Մայիս-հուլիսյան զինված անցուդարձերի աշխարհագրական տարածքի ու մասնակիցների և ղեկավարների սոցիալական դեմքի պարզաբանման խնդրով հանգամանորեն զբաղված մեր միակ նախորդի՝ Սմիլյանսկայայի վրիպումը, մեր կարծիքով, դեպքերի բնույթին է վերաբերվում։ Արդարև, նա գրել է. «Լիբանանյան ապստամբությունը կարևոր նշանակություն ունեցավ Լիբանանի և սիրիական բոլոր վիլայեթների պատմական զարգացման համար։ Դա ամբողջ երկիրն ընդգրկած առաջին ապստամբությունն էր։ Իր սոցիալական կազմով այն գերակշռաբար գյուղացիական էր» (43, 72)։

Իրականում աշխարհագրական ի՞նչ տարածք ընդգրկեցին արդյոք զինված ելույթները։ Ավելի հեշտ է թվարկել իշխանապետության կենտրոնական ու հարավային այն շրջանները, ավելի շուտ՝ բնակավայրերը, որոնք այս կամ այն աստիճանի գործուն և սակայն ոչ-երբեք համընդհանրական դիրքորոշում ունեցան ապստամբական ճակատում, քան այն բնակավայրերը, առավել ևս շրջանները, որոնք չեզոքություն պահպանեցին, առանձին կամավորներ կամ կամավորների փոքր խմբեր միայն տրամադրելով շարժման։ Բնութագրական է, որ ինչպես Բեշիր II-ի իշխանապետական, այնպես էլ նրա տոհմի ավատապետական հեղինակությունն

ու ներգործությունն ավելի անմիջական էին բուն իսկ խռովահույզ կենտրոնական ու հարավային շրջանների վրա, պարագա, որ չի կարող լրացուցիչ հիշեցում չլինել իրադարձությունների հետ ամիրի ունեցած սերտ աղերսի կապակցությամբ։ Սմիլյանսկայան ինքն իսկ, ֆրանսիական հյուպատոս Բուրբեի տվյալների վրա հենվող Իսմայիլի թվարկած, աշ-Շիդիակի հաղորդումներով հաստատվող և ավելի քան 10 մանրիշխանական շրջաններ (Շուֆ, Վերին և Ստորին Ղաբբ, Սահել Բեյրութ, Ջուրդ, Շահհար, Մանասիֆ, Ջեզզին, Մերն, Քեսրուան են) ընդգրկող ապստամբական հինգ գլխավոր կենտրոնները (Դեյր ալ-Կամար, Մուալլակաթ ադ-Դամուր, Բեյրութ, Բաալբեկ, Զահլե և Տրիպոլի) ոչ-լիարժեք համարելով, մատնանշել է միայն ու միայն երեք հիմնական կենտրոններ՝ Դեյր ալ-Կամարում, Բաաբդայի մերձակայքում և Սահել Բեյրութի Թույուն գյուղում (43, 64—65։ 114, հտ. 4, 60—61)։ Ուշագրավ է, որ Սալիբին ըմբռնացած հիմնական մանրիշխանությունները երկու՝ Շուֆն ու Քեսրուանը համարելով, ապստամբական նույնպես երեք կենտրոն է թվարկել՝ Բաաբդան փոխարինելով Ջեզզինով (37, 96)։

Աշխարհագրական տարածքի սահմանափակությունից էլ պետք է բխեր ապստամբական ճամբարի քանակական կազմի անխուսափելի սահմանափակությունը։ Արձանագրելով հանդերձ հյուպատոսներ Բաալբեկի և Բուրբեի, ինչպես և ժամանակագիր աշ-Շիդիակի տվյալները, ըստ որոնց զինական շարժման առ-առավելն 2—5 հազար մարդ է մասնակցություն բերել, Սմիլյանսկայան ինքն իսկ, գրելով, որ «ապստամբների ռազմական գործողություններին մասնակցեց շուրջ 5—7 հազար մարդ», եզրակացրել է. «Հետևաբար ապստամբությամբ բռնկված էին առնվազն 15—20 հազար բնակչություն հաշվող շրջաններ» (43, 72)։ Եթե չմոռանանք, որ առանց ծովափնյա և անդրլիբանանյան խոշոր բնակավայրերի (Բեյրութ, Տրիպոլի, Սայդա, Բաալբեկ են) լեռնական հարկատու տղամարդկանց թիվը, ըստ սկզբնաղբյուրների (165, 201, 107) ավելի քան հարյուր, նույնիսկ հարյուր հիսուն հազար էր, ապա էլ ավելի հասկանալի կդառնա այն փաստը, որ 1840-ի մայիս-հուլիսյան շարժումները համալիբանանյան լինել չէին կարող, այլ խոսքով ազգաբնակչության հիմնական զանգվածի փաստական իրավիճակից բխող և այդ զանգվածը հուզող ու համաձուլող սոցիալական թե քաղաքական նախադրյալներ չունեին։

Ի դեպ, բնավ էլ պատահական չպիտի համարել այն փաստը, որ սկսած Դեյր ալ-Կամարի մայիսի 17-ի երդման արարողությունից և վերջացրած Անթիլիասի հունիսյան բաղմամբոխ հավաքույթներով, ապրստամբական բոլոր միջոցառումներին առնտրականների, արդյունագոր-

ծողների, արհեստավորների և գյուղացիների կողքին մասնակցել են նաև ֆեոդալ-ազնվականական տոհմերից շատերի ներկայացուցիչները (181, հտ. 3, Ա. մաս, 77), որ Շիհաբ և Աբու՝լ Լամա ամիրները, Աբու Նակիտ, Խուրի, Իմադ, Խազին և այլ շեյխեր, իրենց կալվածքներից աշխարհազոր են հավաքել և մասնակցություն բերել շարժման (201, 593)։ Վերջին հաշվով մայիսի 27-ի պլատֆորմի հիմնական հարցերը՝ հրամանագրված դինահավաքն ու դրան որպես հետևանք ակնկալվող ընդհանուր զորահավաքը չէին կարող չհուզել ավատատերերին ևս, որոնց տնտեսությունները, զրկվելով աշխատող ձեռքերից, բնականաբար կքայքայվեին։ Պատահական չէր, վերջապես, որ շարժման ճնշումից հետո ձերբակալված և հարավային Եգիպտոս աքսորված ապստամբական ղեկավարներից 12-ը ամիրներ ու շեյխեր էին, իսկ մնացած 45-ը, հենց իր՝ Սմիլյանսկայայի խոսքով, «բուրժուական տարրեր» (43, 74)։

* * *

Լիբանանյան լեռնականների ղեկավարած շարժման հետ կապված իր ակնկալությունների ապարդյունությունը չթեաբեկեց բրիտանական դիվանագիտությանը, քանի որ դեռ հուլիսի 15-ին Անգլիայի, Ռուսաստանի, Ավստրիայի, Պրուսիայի և Թուրքիայի ներկայացուցիչները Լոնդոնում ստորագրել էին մի կոնվենցիա, որը, ի շարս այլոց և պատերազմի սպառնալիքով, Մ. Ալիից պահանջում էր Սիրիան վերադարձնել սուլթանի գերիշխանության։

Կոնվենցիան դեռ պաշտոնապես Մ. Ալիին ներկայացված իսկ չէր, երբ օգոստոսի 14-ին Բեյրութի բացերում Նեպիրի հրամանատարությամբ երևացին Անգլիայի, Ավստրիայի և Թուրքիայի միացյալ նավատորմի առաջապահ ռազմանավերը։ Եգիպտական իշխանություններին տրված վերջնագրի մասին հաղորդող թռուցիկը «ցնցեց երկիրը»,—վկայել է աշ-Շիդիակը (201, 602)։ Լիբանան լեռան բնակիչներին ուղղված այդ թռուցիկը կոչ էր անում «ոտքի ելնել և վերջապես թոթափել ձեր վրա հաստատված լուծը» (117, 227)։ Եգիպտական դրոշի ներքո զինվորագրված սիրիացի և թուրք բանակային-ներին թելադրվում էր անհապաղ դասալիք լինել։ Եվ վերջապես բեյրութցիներին հասցեագրված կոչում Նեպիրը խոստանում էր անձնատվության դեպքում քաղաքի նկատմամբ գթասրտություն ու ողորմածություն հանդես բերել (11, 197)։

Մ. Ալին, որ Ֆրանսիայի դիվանագիտական թե ռազմական օժանդակության հետ լուրջ հույսեր էր կապում, հասկանալիորեն մերժեց ենթարկվել դեսպանաժողովի վերջնագրին։ Անհավանական չէ, որ Փարիզում էլ ձեռնպահ չէին մնում Մ. Ալիի մոտ պատրանքներն ուժեղացնող

հավաստիացումներից, քանի որ Բեշիր II-ին ուղարկված մի նամակում փոխարքան վստահորեն հաղորդում էր, որ Ֆրանսիան շուտով երկու հարյուր հազարանոց զորք, 24 գծանավ և նյութական մեծ օգնություն է հասցնելու իրեն (11, 205)։

Օգոստոսի 26-ին, այն բանից հետո, երբ Նեպիրի նավախումբն արդեն շրջափակել էր սիրիական ծովափը, եգիպտական իշխանությունները Սիրիայում պատերազմական վիճակ հայտարարեցին։ Սպայակույտի պետ Սև-Սուլեյմանը նույն օրն իսկ ստորագրեց մի հրաման, որով մահապատիժ էր սահմանվում «անհնազանդություն հրահրող» թուրքիկներ տարածողների և թշնամուց զենք ստացողների համար (4, գ. 761, թ. 62։ 114, հտ. 4, 72)։ Իր հերթին, ճիշտ է՝ ավելի քան մի շաբաթ անց, սեպտեմբերի 3-ին, նույնատիպ կոչով Լեռան բնակիչներին դիմում էր ամիր Բեշիրը. «Անգլիացիների՝ Բեյրութի բացերում հայտնվելն այլ նպատակ չունի, քան հրապուրել ձեզ և մղել ճակատագրական սխալի։ Հետևաբար, ով որ նրանցից հեղափոխական գրություններ ստանա, պարտավոր է դրանք հանձնել իմ իշխանազուն որդիներին, հակառակ դեպքում մահվամբ է պատժվելու։ Ով որ առանց իմ կառավարության թույլտվության նրանցից զենք, զինամթերք ու պարեն կստանա, մահվամբ է պատժվելու։ Ով որ լավ ընդունելություն է վերապահելու հեղափոխություն դրդելու եկող լրտեսներին, նույնպես մահվամբ է պատժվելու» (181, հտ. 3, Ա մաս, 82)։ Ամիրը միաժամանակ իշխանապետության կենտրոնական և հյուսիսային ծովափնյա շրջաններ զորք էր ուղարկում՝ Նեպիրի նավախմբի հետ իր հպատակների կապը խափանելու, կասկածելի տարրերից զենքերն ու անասունները բռնագրավելու և անհնազանդներին խստիվ պատժելու հրամանով։

Սուլեյման փաշան Բեյրութում նախապատրաստվում էր պատերազմական մոտալուտ գործողությունների։ Եգիպտոս ուղարկելով տվյալ իրադրության մեջ անվստահելի, նաև ժողովրդի համար ատելի թուրքական գնդերը, նա ջանում էր, ինչպես հաղորդել է ժամանակակիցը, «լեռնականների ապստամբության և անգլիացիների լկտիության պատճառով քրիստոնյաների դեմ զայրացած իր զորքն ու մահմեդական ամբոխը հանգստացնել և ետ պահել եգիպտական իշխանությունների համար անկասկած վարկաբեկիչ բռնամիջոցներից» (11, 197)։ Օգոստոսի վերջերին Իբրահիմ փաշան, իր 75 հազարանոց զորաբանակի հիմնական մասը Բաալբեկում կենտրոնացնելով, ռազմական խորհրդակցության հրավիրեց ամիր Բեշիրին և իր մյուս աջակիցներին։ Գտնելով, որ ստրատեգիական տեսակետից հնարավոր չէ սիրիական ծովափն ամուր փակել ցամաքա-

Հանման փորձերի դեմ, որոշվեց հնարավորության դեպքում արագորեն կործանիչ հարված հասցնել հակառակորդի ափ դուրս եկող ուժերին, իսկ եթե դա հնարավոր չլինի՝ ապա պատերազմական գործողությունները վարել հիմնականում երկրի խորքում, այնտեղ ներքաշելով անգլո-ավստրիական փոքրաթիվ զորքը, ըստ որում Լիբանան լեռան վրա և հարակից շրջաններում հարվածային ուժը լեռնականների աշխարհազորը պետք է հանդիսանար։ Ի դեպ, իրադարձությունների ականատես ու մասնակից Բաղդիին հետագային իրավամբ ընդգծելու էր, որ եգիպտական զորահրամանատարության գլխավոր սխալը ոչ թե մշակված ստրատեգիական պլանն եղավ, այլ այն, որ «չափազանց հույսեր կապեց լիբանանյան համայնքների շրջանում ամիր Բեշիրի ազդեցության հետ» (11, 198)։ Իսկ այդ ազդեցությունը, որ անցած տասնամյակներում բազում փորձությունների բովում որոշապես թուլանալուց հետո մայիս-հուլիսյան իրադարձություններից ծանր հարված էր ստացել, անխուսափելիորեն ավելի ու ավելի էր խախտվելու, մանավանդ որ սեպտեմբերի 3-ին սուլթանական ֆերմանով Բեշիր II-ը իշխանազրկված դավաճան էր հայտարարված, իսկ իշխանապետ էր կարգված անգլո-ավստրիական ու թուրքական զորքերի հետ համագործակցելու վաղուց պատրաստ նրա հորեղբորորդին՝ ամիր Բեշիր Բին Կասեմը (114, հտ. 4, 105)։ Հետաքրքրությունից զուրկ չի լինի նշել, որ Բ. Դուան իր համապատասխան հրովարտակում Բեշիր II-ի գահընկեցությունը հիմնավորելով «Մ. Ալիի հետ նրա դաշնակցությամբ» և «դրուզների ամիր» կարգելով «նրա ազգականներից ամիր Բեշիր Բին Կասեմին», վերջինիս հանձնարարում էր «պաշտպանել դրուզ ցեղերին ու նրանց հեռու պահել ապստամբությունից և Մ. Ալիի հետ միանակցելուց» (181, հտ. 3, Ա մաս, 83—85)։

Սեպտեմբերի 10-ին Բեյրութի բացերում հայտնվեցին անգլիական ծովակալ Ստապֆորտի ու նրա օգնական, ավստրիական փոխ-ծովակալ Բանդիերի հիմնական ուժերը. բրիտանական դրոշով՝ 11 գծանավ (շուրջ 200 թնդանոթ), 6 ֆրեգատ (շուրջ 150 թնդանոթ), 5 բրիգ (70 թնդանոթ) և 5 փոխադրանավ (25 թնդանոթ), ավստրիական դրոշով՝ երկու ֆրեգատ և երեք կորվետ, թուրքական դրոշով՝ մի քանի փոխադրանավ, օսմանցիների մոտ ծառայության անցած անգլիացի Վոկերի հրամանատարությամբ (11, 199)։

Պատկառազդու այս նավատորմը, սակայն, իրականում ցամաքային գործողությունների համար աննշան ուժ էր ներկայացնում. 5400 թուրք ասկյար՝ բրիգադային գեներալ Սելիմ փաշայի հրամանատարությամբ, որի կողքին շուտով հայտնվելու էր Սայդայի փաշա և սիրիական բանակի

սերասկյար նշանակված Իզզեթ Մեհմեդը, 2000 անգլիական և 500 ավստրիական դեսանտայիններ՝ ընդամենը երկու հրետանային մարտկոցներով։ Եգիպտական 75 հազարանոց զորաբանակի և Բեշիր II-ի աշխարհազորի դեմ հանդիման և Սիրիայի լայնարձակ տարածքում, անշուշտ, այդ ուժը Լոնդոնի դեսպանաժողովի աղդու վերջնագիրը գործողության մեջ դնելու ի վիճակի չէր։ Այդպիսի համոզմունքի էին հատկապես Փարիզում, որտեղից Թիերը դեռ սեպտեմբերի 8-ին Գիզոյին հավաստիացնում էր. «Սիրիան (եգիպտացիների դեմ) չի շարժվում։ Ամիր Բեշիրը հավատարիմ է մնում Մ. Ալիին։ Իբրահիմ փաշան իր բոլոր ուժերով վերադառնում է չախչախելու նրանց, ովքեր կփորձեն ցամաքահանում կատարել» (181, հտ. 3, 574)։ Եվ սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, Անգլիայում գործողությունների ինչպես տակտիկական, այնպես էլ հոգեբանական հաշվարկները շատ ճիշտ էին կատարված։ Այդ հաշվարկների էությունը հետևյալն էր. զգալի մասամբ նոր ջրարկված ռազմանավերի հզոր հրանոթների օգնությամբ գրավել ծովափնյա քաղաքները, դրանք որպես հենակետ օգտագործելով հետզհետե սիրաշահել Իբրահիմի և Բեշիրի հուլիսյան բռնամիջոցներից դառնացած լիբանանյան լեռնականներին և վերջիններիս վերածել եգիպտացիներին հարվածող գլխավոր բռունցքի։

Այդ նկատառումներով է, որ Բեյրութը ուժեղ ռմբակոծության ենթարկելուց և Մասուդ Շիհաբի հրամանատարությամբ քաղաքից հյուսիս ծովափնյա շերտը պաշտպանող ալբանական գունդը փախուստի մատնելուց հետո, սեպտեմբերի 11-ի առավոտյան Ջունիում ցամաքահանում կատարվեց և արագորեն ստեղծվեց ռազմական ամուր ճամբար (4, գ. 701, թ. 70)։ Հաշվի առնելով, որ Բեյրութ-Ջունի խճուղու Նահր ալ-Քելբի շրջանի նեղ հատվածը ոչ միայն ռմբակոծությունից խիստ տուժել էր, այլև չափազանց մատչելի թիրախ էր հակառակորդի հրանոթների համար, Իբրահիմ փաշան իր զորաբանակի մի մասով Բաալբեկից շտապեց Լիբանան լեռ, որպեսզի հայտնվի Ջունիի վրա իշխող բարձունքների շրջանում։ Սակայն հակառակորդը հեռատեսորեն կանխեց նրան. անգլիական մի գունդ գիշերով գրոհեց Զուք, իսկ հաջորդ առավոտ՝ Այն Թուրա և տեղի կաթոլիկ միսիոնարների ամուր վանքը վերածվեց Ջունին լեռնային թիկունքից պաշտպանող ռազմական հուսալի հենակետի (11, 208)։ Իբրահիմը հարկադրվեց բավարարվել Բզոմմառի հայ-կաթողիկե վանքի ու շրջակայքի ամրացմամբ՝ անգլիական գնդերի դեպի Քեսրուան հետագա առաջխաղացքն ու նրանց հետ լեռնականների հաղորդակցությունը խափանելու նպատակով։

Վերջին հարցում եգիպտական զորապետի հաշվարկները, սակայն, նույնպես անհիմն դուրս եկան։ Ջունիի ճամբարում պահեստավորված քսան հազար հրացանների հավակնորդ լիբանանցիների առաջին խմբերը շատ շուտ հայտնվեցին։ Նրանք մայիս-հունիսյան իրադարձություններից հետո Կիպրոս ապաստանած և այժմ թուրքական առագաստանավերով վերադարձող ապստամբներն էին, որոնք, մինչև ատամները զինվելով, թափանցեցին Քեսրուան, տարբեր գյուղերում գտան եգիպտական իշխանությունների դեմ կռիվը վերսկսելու պատրաստ համախոհներ ու մինչև իսկ անակնկալ գրոհ ձեռնարկելով Բզոմմարի դեմ՝ վերադարձան շուրջ 600 եգիպտացի ռազմագերիներով (11, 208)։

Ջունիի ճամբարում անհատապես թե խմբերով հայտնվելով զենք ստացող լեռնականների թիվը սկսեց օրըստօրև աճել և սեպտեմբերին բազիլին արդեն իսկ հաղորդում էր. «Առ այսօր ավելի քան 5 հազար լեռնականներ ճամբար եկան զենք ստանալու, սակայն այդ մարդիկ վեհերոտ են եգիպտական զորքի ներկայության պատճառով» (4, գ. 701, թ. 64)։ Ի միջի այլոց, շուշացան ճամբարում հայտնվել և ամիր Բեշիր Բին Կասեմի շուրջ համախմբվել նաև Բեշիր II-ից ու եգիպտական իշխանություններից դժգոհ ֆեոդալ ազնվականներ, այդ թվում և իշխանապետական տոհմի մի շարք ներկայացուցիչներ, որոնց շուտով հետևեց Աբու Սամրան և չորս հազար հրացան ստացավ՝ խոստանալով սեփական աշխարհազոր կազմել (201, 604)։ Նշենք, որ այդ ժամանակ Իբրահիմի՝ Լիբանան լեռան վրա հիմնականում նրա կենտրոնական հատվածում բաշխված տասներկու հազարանոց զորքը, Բեշիր II-ի գնդերի հետ համագործակցաբար, իր գլխավոր հոգսն էր դարձրել խռովահույզ բնակավայրերի խաղաղեցումը՝ սրի ու հրի մատնելով անգլո-ավստրիական ճամբարի հետ որևէ կերպ առնչված, առավել ևս զենք ստացած գյուղերը, որոնց առաջիններից մեկն եղավ Բեյթ Շեբերը (11, 209)։

Ծովակալ Ստապֆորտի ռազմանավերի համար առանձին դժվարություն ներկայացրեց ծովափնյա մի շարք կարևոր բնակավայրերի գրավումը։ Ճիշտ է, Տրիպոլիի ամուր բերդը անձնատուր չեղավ, սակայն անգլո-ավստրիական հրանոթների որոտը քաջալերեց հյուսիսային լեռնագոտու առանց այն էլ անհանգիստ լեռնականներին, որոնք խռովություն բարձրացնելով եգիպտական և շիհաբյան իշխանությունների դեմ՝ ծովափ իջնելով անգլիական ռազմանավերի օգնությամբ տիրացան Բաթրունին։ Շուտով մթուալլիների աջակցությամբ գրավվեց նաև Ջուբեյլը։ Բեյրութի հին ամրոցը թեպետ հիմնահատակ ավերվեց, սակայն քաղաքն անձնատուր չեղավ։ Բուռն պաշտպանությունից հետո սեպտեմբերի 14-ին

Սայդայի միջնաբերդը, ապա և մի քանի ժամում Սուրը, անցան անգլո-ավստրիացիների ձեռքը (11, 209—210)։

Բեշիր II-ը, որին պաշտոնական հայտարարելուց հետո էլ օսմանյան իշխանությունները շարունակում էին հրապուրել փորձել, ծովակալ Ստապֆորտի և մեծ վեզիր Սարիմի ստորագրությամբ «սուլթանի իշխանության ենթարկվելու» վերանորոգվող ժամկետներ և իր հարստությունը, Լիբանան լեռան իշխանապետի իր պաշտոնը և իր առանձնաշնորհը երաշխավորող խոստումներ տալով (181, հտ. 3, Ա մաս, 32), Մ. Ալիի ճամբարին իր անհողդողդ հավատարմությամբ եգիպտական իշխանությունների համար տվյալ պահին ավելի շուտ խորհրդանշական, քան թե գործնական աջակից էր։ Որպես իշխանապետ նրա հեղինակության պատվանդանը, հատկապես հուլիսյան հակաապստամբական դաժանություններից հետո, Իբրահիմի ահաղդու ներկայությունն ու դրուզ ֆեոդալաընվական որոշակի ուժ ներկայացնող փոքր տոհմերի եգիպտական զորահրամանատարության նվիրյալ համագործակցությունն էին։ Առավել հեղինակավոր ու պատկառազդու դրուզ շեյխերի՝ իշխանապետի նկատմամբ չթողարկված թշնամանքի պայմաններում, դարաղիական համայնքի հիմնական դանգվածը պարզապես ավանդույթի ուժով էր հանդուրժում նրա ներկայությունը, թեպետ անդլիական գործակալների քարոզությունն ավելի ու ավելի էր թուլացնում այդ ուժի ներգործությունը։ Ինչ վերաբերում է քրիստոնեական համայնքներին, առաջին հերթին մարոնականներին, ապա նրանք զարմանալիորեն պատրաստ էին իշխանապետի դիակի վրայով իսկ քայլել եգիպտական իշխանությունների դեմ։

Բոլոր դեպքերում փաստ է, որ հավատարիմ մնալով իրենց տակտիկային և ի դերև հանելով եգիպտական հրամանատարության հույսերը՝ անգլո-ավստրիական ուժերը չփորձեցին թափանցել Լերկրի խորքերը և բավարարվեցին լեռնականներին զենք մատակարարելով ու նրանց հակաեգիպտական ապստամբության մղելով։ Իսկ ապստամբության կայծը բռնկվեց մարոնական Քեսրուանում, որտեղ գյուղացիությունն սկզբում փախուստի մատնեց իշխանապետի ջոկատներին, իսկ սեպտեմբերի 28-ին, Թուրքական զորքի օժանդակությամբ, նաև Իբրահիմին, որ իր զորակենտրոնը տեղափոխեց Մեթն։ Ի դեպ, քեսրուանցիները, սերասկյարի հրամանով, իրենց «խիզախության և եռանդի համար» երեք տարով հարկազերծ հայտարարվեցին (201, 603 և 605), առանձնաշնորհ, որ կարող էր քաջալերել Լեռան մյուս մանրահատվածների հակաեգիպտական պոռթկումը։

Անգլո-ավստրիական և Թուրքական զորքերը, որոնք մինչ այդ Հադեթում ստեղծել էին երկրորդ զորակենտրոնը, ծովակալ Նեպիրի և Սելիմ

փաշայի հրամանատարությամբ դրոհեցին Իբրահիմի Բիկֆայայի զորակենտրոնի վրա, որին Թիկունքից հարվածում էին Բեշիր Բին Կասեմի աշխարհազորայիններն ու մարոնական ազատ հրաձիգները։ Եգիպտական ճամբարից առաջինը նահանջեցին Բեշիր II-ի գնդերը, որոնց հետևեց նաև զորահրամանատարը (11, 210)։ Ապստամբ լեռնականների անակնկալ հարձակումների թիրախ, պարենի և դիզենտերիայի համաճարակի պայմաններում դեղորայքի պակասությունից տառապող եգիպտական զորաբանակը, որի շարքերը նոսրանում էին նաև հաճախակի դասալքություններից, Իբրահիմի գլխավորությամբ քաշվեց Բաալբեկ։ Հոկտեմբերի 6-ին Տրիպոլիի կայազորը հրաման ստացավ քաղաքը լքել և անցնել Բիկաա (11, 213)։ Հոկտեմբերի 9-ին Նեպիրի դեսանտայիններն ու ապրստամբ լեռնականները գրավեցին նաև Բեյրութը, որտեղից եգիպտական կայազորը խուճապահար հեռացավ ծանր կորուստների գնով։ Ռազմական ճամբարի Ջունիից Բեյրութ տեղափոխությունը հնարավորություն տվեց, որ ամիրայության կենտրոնական և հարավային շրջանների ազգաբնակչությունը ևս զենք ստանա ու ամրապնդի Բեշիր Բին Կասեմի աշխարհազորը։ Հոկտեմբերի կեսերին, երբ Լիբանան լեռան վրա ու հարակից ծովափնյա շերտում եգիպտական ոչ մի զինվոր չէր մնացել, զինված աշխարհազորայինների թիվն անցնում էր երեսուն հազարից (117, 233)։

Բեյրութի անկման նախօրեին, հոկտեմբերի 8-ին, Սիրիայում Եգիպտոսի գերիշխանության վախճանական երգն էր երգվում Փարիզում. վարչապետ Թիերը, թեպետ Եգիպտոսի հետ դաշնակցության ջատագով և վճռական քայլերի կողմնակից, Լուի-Ֆիլիպի և ֆրանսիական խոշոր բուրժուազիայի ճնշման ներքո Անգլիային և նրա դաշնակիցներին ուղարկում էր մի հուշագիր, որում, ճիշտ է, նախազգուշացնում էր, որ Ֆրանսիան թույլ չի տա կործանել Մ. Ալիին, սակայն նաև հարկադրաբար ընդգծում էր, որ իր կառավարությունը սիրիական հարցը պատերազմի պատճառ դարձնելու տրամադրություն չունի։

Եվրոպական մայրաքաղաքների միջև փոխանակվող հուշագրերում, թեկուզ և փոքրատառերով, Բեշիր II-ի մասին խոսք անգամ չկար և չէր էլ լինելու։ Իբրահիմի պարտությունից հետո նաև Ֆրանսիայի դիրքորոշումից հուսաբեկ, լիբանանյան իշխանապետը հասկացավ, որ իր բեմից հեռանալու ղողանջը հնչել է արդեն։ Նա ընտանիքով ու գանձերով և պատկառազգու շքախմբի ուղեկցությամբ հոկտեմբերի 14-ին իջավ Սայդա և անձնատուր եղավ անգլիական զորահրամանատարության, որ, Բ. Դոան հետ համախորհուրդ, նրան աքսորեց Մալթա, մերժելով նախ Ֆրանսիա-

յում, ապա և թեկուզ Անգլիայում բնակություն հաստատելու նրա ցանկությունը (181, հտ. 3, Ա մաս, 215)։

Այն բանից հետո, երբ հոկտեմբերի 29-ին Փարիզում թիերը հարկադրվեց աթոռը զիջել մարշալ Սուլթին, որի արտաքին գործերի մինիստր կարգվեց Անգլիայի հետ դաշնակցության ջատագով Գիզոն, Լևանտում դեպքերը ավելի գահավեժ ընթացք ստացան։ Նոյեմբերի 3-ին անձնատուր եղավ ծովից ուժգնորեն ռմբակոծված Աքան։ Պաղեստինում, ապա և Բիկաայում ու Անդրլիբանանում բռնկվեց հակաեգիպտական ապստամբություն։ Իբրահիմ փաշան Բաալբեկից նահանջեց Դամասկոս, որտեղ շտապեցին նրան միանալ հյուսիս-սիրիական կայազորները։

Նեպիրի ռազմանավերը նոյեմբերի 27-ին անարգել հայտնվեցին Աղեքսանդրիայի առաջ և հրանոթների սպառնալիքների ներքո փոխարքային ու Պողոս բեյին հարկադրեցին ընդունել Լոնդոնի դեսպանաժողովի վերջնագիրը։ Նշանակում է՝ ուրիշ բան չէր մնում անել, եթե ոչ Իբրահիմին կարգադրել իր զորաբանակի մնացորդներով անհապաղ վերադառնալու Եգիպտոս։

1841-ի հունվարի վերջին Սիրիայում եգիպտական տիրապետությունը փուլ էր եկել, և թուրքական բանակը վերադառնում էր՝ սուլթանի գերիշխանությունը վերահաստատելու։

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐՅՈՒՆԱԼԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ԵՎ ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ԱՄԻՐԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Նոր իշխանապետ Բեշիր III Շիհաբը պատերազմական գործողությունների ավարտը դիմավորեց Յաֆայի շրջանում՝ 1841-ի սկզբներին։ Ըստ հրահանգի այնտեղ էլ լուծարքի ենթարկելով իր հոծ աշխարհազորը, նա վերադարձավ Լիբանան լեռ, ժամանակավոր նստավայր ընտրեց Բաաբդան և սկսեց բացառիկ ճիգ գործադրել ամիրայությունում ստեղծված բարդ իրավիճակի տերը դառնալու համար։

Թեկուզև իր հարազատ զարմիկի ու եգիպտացիների դեմ օսմանցիների ու անգլիացիների հետ համագործակցության գնով իշխանապետական աթոռը նվաճած Բեշիր III-ն, անշուշտ, ոչ միայն փառասիրական իր տենչերին հագուրդ տալու նպատակով, պիտի ջանար Լիբանան լեռը դուրս բերել հոգեվարքի այն վիճակից, որին մատնվել էր վերջին տարիներին։

Առաջին ու կենսականորեն անհրաժեշտ միջոցառումը, որին հարկ էր ձեռնարկել, 1841-ի խստաշունչ ձմռան պայմաններում իր մահացու թևերը ավելի ու ավելի տարածող սովը սահմանափակել-վերացնելն էր (11, 262)։ Այդ գործը բարդանում էր նրանով, որ Լեռան հացահատիկի հիմնական աղբյուրներից մեկի՝ Եգիպտոսի դռներն առայժմ փակ էին, իսկ Սիրիայի ներքին հատվածների գյուղատնտեսությունը, թեպետ լիբանանյանից փոքր ինչ սակավ քայքայված, երբեմնի շռայլությունը հանդես բերել չէր կարող։ Անելանելի թվացող պայմաններում իշխանապետը ալյուր ներմուծելու և վաճառքի հանելու այնպիսի եռանդ դրսևորեց, որ շուտով սրամիտ ժողովրդից ստացավ Աբու Թհին (Ալյուրի հայր) մակդիրը։ Ի դեպ, Լեռան որոշ հատվածներում սովն այնքան սպառնալից բնույթ էր ստացել, որ գյուղացիներն սկսել էին համակերպվել նաբլուսցիների ամենածանր պայմաններին իսկ՝ հացը փոխանակել

այդ խառը ժամանակներում իրենց համար այնքան կենսական զենքի ու զինամթերքի հետ (11, 266)։

Երկրորդ և արդեն իշխանապետության ճակատագրի տեսակետից էլենսականորեն անհրաժեշտ միջոցառումը Բեշիր II-ի օրոք արձանագրված դրական տեղաշարժերի առնվազն պահպանման, հնարավորության դեպքում նաև խորացման գործն էր։ Եվ հենց այդ գործի շրջանակներում է, դժբախտաբար, որ ի հայտ էին գալու, անշուշտ ոչ պատմագրության էջերում (37, 99) ներկայացված թանձրագունությամբ, իշխանապետի՝ ժամանակակիցների (11, 259։ 181, հտ. 3, Ա մաս, 107) կողմից մատնանշված մարդկային թերությունները, որոնք, ներքին թե արտաքին հաշվենկատ, հաճախ շարամիտ զսպանակներից գործարկվող ժխտական ազդակների պայմաններում, կամա թե ակամա իրենց ներն էին ունենալու ամիրայության հոգեվարքը իր ավարտապահին հասցնելու հարցում։ Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Բեշիր III-ի ձախողանքի գլխավոր պատճառը ազգաբնակչությունը համախմբելու նրա անընդունակությունն էր լինելու, որ նրան պարզապես պակասելու էր Բեշիր II-ի՝ անհրաժեշտության դեպքում իր շուրջ ու պատեհ առիթով նաև իր դեմ համայնքները առանց դասային ու դասակարգային խտրության միասնականացնելու հատկությունը, ըստ որում նոր իշխանապետի օրոք նման համախմբման անհնարինության պայմաններում սոցիալական ու միջհամայնքային տարաձայնություններն ու երկպառակությունները այնպիսի խորության էին հասնելու, որ ամիրայության վախճանը անխուսափելի էր դառնալու։

Բեշիր III-ի դրությունը փափկացնող առաջին ազդակը իշխանապետության կիսանկախության հետ հաշվեհարդար տեսնելու օսմանցիների անկասկածելի մտադրությունն էր, հնամյա ու հարատև մտադրություն, որ նոր լիցք էր ստացել Բ. Դոան ետ-դյուլհանեական կենտրոնացման քաղաքականությունից։ Ալեհեր իշխանապետը, որ, առանց այդ էլ աշխարհաղորից ու նյութական միջոցներից զուրկ, թուրքերին ձեռնոց նետելու մտադրություն չուներ բնավ, ջանում էր նախ և առաջ սուլթանի ներկայացուցիչների իր նկատմամբ անբարյացակամությունը, հատկապես սերասկյար Մուհամմեդ-Սելիմի կողմից իր դեմ հարուցված դավաճանության մեղադրանքը փարատել։ Բանն այն է, որ ժամանակագրի վկայությամբ «անշնորհ ու անդրագետ, չար ու բթամիտ» փաշան պընդում էր, որ Բիկֆայայում շրջապատման մեջ ընկած Իբրահիմն իր ստույգ գերեվարումից խուսափելու հնարավորություն էր ստացել միայն ու միայն այն պատճառով, որ իր թիկունքում դիրքավորված բեշիրյան

աշխարհազորը չէր շտապել գրավելու համապատասխան լեռնանցքը և փակելու հակառակորդի նահանջի միակ ուղին (11, 262)։ Զևականորեն ռազմաստրատեգիական տեսակետից միայն քննարկման ենթակա այդ մեղադրանքի ետին իրավացիորեն տեսնելով հեռուն գնացող՝ իր հետ ու դրանով իսկ շուտով ամիրայության հետ հաշվեհարդար տեսնելու նպատակ, նորանշան իշխանապետը ոգի ի բռին պիտի աշխատեր ապահովվել օսմանյան մայրաքաղաքի բարյացակամությամբ։

Բեշիր III-ի գործը բարդացնող երկրորդ աղդակը դրուզ աղնվականական տոհմերի՝ իրենց ֆեոդալ-մանրիշխանական իրավունքներին ու առանձնաշնորհներին վերստին տիրելու և սոցիալ-հասարակական նախկին կարգերը ամեն գնով վերահաստատելու նկրտումներն էին։ Եվ իրոք, Բեշիր II-ի պաշտոնանկումից հետո դրուզ հալածական ամիրներն ու շեյխերը սկսել էին երկիր վերադառնալ։ Նրանց թվում էին Նաաման և Սաիդ Ջումբլաթները, Ամին Արսլանը, Հուսեյն Թալհուքը, Աբու Նակիտ, Իմադ և այլ տոհմերի ներկայացուցիչները, որոնք ոչ միայն իրենց ծնողների արյան և իրենց իսկ կրած բաղում նվաստացումների վրեժին էին հետամտելու, այլև հասկանալիորեն պահանջելու էին իրենց երբեմնի մանրիշխանությունները ու սեփական կալվածքները, ըստ որում ոմանք, հատկապես Ջումբլաթները, իրենց ձևորին սուլթանական համապատասխան շնորհագրեր էլ ունեին (11, 260)։

Նրանց նկրտումների իրականացումը, սակայն, ակներևորեն հղի էր ինչպես սոցիալական, այնպես էլ հատկապես միջհամայնքային պայթյունով, քանի որ, ինչպես ընդգծում էր հյուպատոս Բուրրեն, «դժվար թե գտնվի որևէ սեփականություն, որի համար քրիստոնյան ու դրուզը վեճի մեջ չմտնեն» (114, հտ. 4, 48)։ Իրավիճակն առաջ էր եկել այն բանի հետևանքով, որ Բեշիր II-ը հաշվեհարդարի ենթարկված դրուզ ֆեոդալ-աղնվականական տոհմերի բռնագրավված կալվածքների մի մասը տրամադրել էր հարավային լեռնահատվածի սակավահող վանքերին, մի այլ մաս վաճառել առևտրավաշխառուներին կամ գյուղական վերնախավին։ Հարցը բարդանում էր նրանով, որ ինչպես նկատել ու ընդգծել է հյուպատոս Բաղիլին, նոր իշխանապետը համոզված էր «իր նախորդի կամայականությունների սիստեմը շարունակելու անհնարինության» հարցում, նույնիսկ ցանկանում էր ցրել հարկահավաքման թե պատժական գործողությունների համար գյուղերն ուղարկվող ոստիկանական հեծյալ ջոկատները (4, գ. 718, թ. 63)։

Հենց այն հանգամանքը, որ վերադարձող դրուզ ամիրների և շեյխերի առանձնաշնորհների, նաև կալվածքների մի մասի նորելուկ տի-

12—1028

բակալները հիմնականում քրիստոնյա և առավելաբար մարոնական էին, անկասկած, որ դրուզ-մարոնական որոշակի ձգտվածություն էր առաջացնելու։ Մինոլորտի լիցքաթափման ուղին, անշուշտ, դրուզ համայնքի վերնաշերտին բավարարություն տալը չէր, բնավ, քանի որ այդ դեպքում լարվածության աղբյուրը պահպանվելով, պարզապես փոխանցվելու էր մարոնական միջավայրին։ Ավելին, եթե դրուզ գյուղացիական զանգվածը, բեշիրյան թե եգիպտական կարգերի ներքո իր կրած «տառապանքը վերագրելով նրանց բացակայության» ու նրանց վերադարձի հետ կապելով գոնե հարավային լեռնահատվածում իր երբեմնի առանձնաշնորհյալ դիրքի ու բարեկեցության վերականգնման հույսերը (11, 260։ 201, 614), խնդությամբ էր ողջունելու տուն դարձող իր աղնվականներին ու համախմբվելով հարելու էր նրանց հավակնությունների բավարարման կողմնակիցների ճամբարին, ապա Լեռան հարավային շրջաններում Բեշիր II-ի քաջալերությամբ խիստ բաղմացած և դրուզ ավատատերերի բացակայությամբ բարենպաստ օրի հասած քրիստոնյա, հատկապես մարոնական ազգաբնակչությունը, աշխարհիկ ու հոգևոր վերնաշերտով, թե ստորին խավերով, դիրքորոշվելու էր հակառակորդ ճամբարում։ Թվաշատ գյուղացիությունը, մանավանդ, «դժգոհանքով մերժում էր իր նախկին տիրակալների ֆեոդալական հավակնությունները», վկայել է ժամանակագիրը (11, 260)։ Առավել բուռն էր լինելու Դեյր ալ-Կամարի՝ Մանասիֆի ավելի ու ավելի բուրժուականացող այդ կենտրոնի հակադեցությունը Աբու Նակիտ շեյխերի ֆեոդալ-մանր-իշխանական հավակնություններին։ «Դեյր ալ-Կամարի ժողովուրդը բարձրից էր նայում իր շեյխերին ...և հրաժարվում էր ենթարկվել նրանց հրամաններին»,— հաղորդել է մի այլ ժամանակագիր (201, 604)։

Անհերքելի պիտի համարել այն, որ եթե 1841-ին Լիբանան լեռան հարավային, խառը ազգաբնակչությամբ և ոչ թե մյուս մանրահատվածներում էր սոցիալական ակնթարթ հուզմունք նկատվում, ապա դրա պատճառը պետք է որոնել այն պարզ ճշմարտության մեջ, որ տվյալ գոտում սոցիալականին համերաշխորեն միահյուսվում էր կրոնական տարրը, որ գյուղացիության թե բուրժուականացող շրջանների հակաֆեոդալական պայքարը ոչ թե խափանվում էր տիրող հասարակարգի գոյությունն օրհնելու եկեղեցու կողմից, այլ այս կամ այն նկատառումներով և այս կամ այն եղանակով քաջալերվում նրա ներկայացուցիչներից։

Ի դեպ, օսմանյան իշխանությունները, որոշակի հույսեր կապելով դրուզ ֆեոդալ-աղնվականության անխարդախ համագործակցության

հետ և անշուշտ ոչ-առանց Բեշիր III-ի դիրքերը թուլացնելու և հնարավորության դեպքում իշխանապետությունը սիրիական վիլայեթների շրջանակներում ի վերջո համահարթելու միտման, կարգադրել էին պայմաններ ստեղծել, որպեսզի դրուզ ավագանու գոնե հողատիրական անպայմանական իրավունքները վերականգնվեն: Մյուս կողմից, ինչպես նկատել էին ժամանակակիցները, «Եգիպտացիներից մնացած և գրոշներով վաճառվող զենքով ու զինամթերքով դրուզները դինապահեստներ էին կազմում» (11, 264), այլ խոսքով նախապատրաստվում էին ի հարկին բռնի ուժով հասնելու իրենց հավակնությունների իրականացման:

Վճռական գործողությունների նախապատրաստվելիս, հանձին օսմանյան իշխանությունների առաջնայնորեն անհրաժեշտ հավանական դաշնակցին տեսնելով, դրուզ ֆեոդալ-ազնվականներն իրենց հերթին նոանդ չէին խնայում սիրաշահելու թուրք աստիճանավորներին: Նույնիսկ եթե ընդունենք, որ հեքիաթի գերակշռող տարր ունի Շիբլի Աբիանի հապաղած վկայությունն այն մասին, որ քրիստոնյաների դեմ զինական բայլերի դրդվող դարազիականները բոլոր դեպքերում Բ. Դուան պոլսական թե տեղական ներկայացուցիչներին, այդ թվում մեծ վեզիրին իրենց դատին սիրաշահելու համար 1841-ի ամռանը շուրջ 33 միլիոն ղուրուշ են ծախսել (80, 72—73), ապա չենք կարող նաև հաստատապես չպնդել, որ դրուզական համայնքն էլ իր կողմից բազմապիսի նկատառումներով ամենահավանական աջակիցն էր համարվում Լիբանան լեռան շրջանակներում օսմանյան ծրագրերի իրականացման հարցում:

Մտավախ, որ դրուզական հավակնություններն իրոք էլ օսմանցիների կարգադրությամբ ի վերջո իրեն կպարտադրվեն, նոր իշխանապետը դիմեց իր հեռահար «գաղտնի քայլին». իբր հետամտելով կոմպրոմիսային լուծման, նա Անգլիայի լիազոր ռեզիդենտ Վուդի հետ համախորհուրդ ու նրա աջակցությամբ Բ. Դանից թույլտվություն ստացավ ստեղծելու դատավարման և հարկաբաշխման լիազորություններ ունեցող մի մարմին, որի տասներկու անդամները պետք է ներկայացնեին լիբանանյան տարբեր համայնքներին: Այդ խորհուրդն ըստ ինքյան ոչ միայն միջակ ու մանր հողատերերի սրտով պետք է լիներ, այլև գյուղացիական զանգվածի նկատմամբ մանրիշխանների կամայականությունների առաջ փակեր հիմնական դռները, քանի որ մուկատաաճիական գլխավոր պարտականություն-իրավունքն ու առանձնաշնորհը գերեղմանելու էր պարզապես: Այլ խոսքով մարոնական շեյխ Բեշիր ալ-Խուրիի ղեկավարությամբ գործելիք այդ խորհուրդը (117, 257) դրուզ ֆեոդալ-ազնվական-

ներին, եթե նույնիսկ նրանց հաջողվեր իրականացնել իրենց հավակնությունները, դարձնելու էր պարզապես խորհրդանշական տիրակալներ, պատվո տիտղոսի հասարակ կրողներ։

Դրուզ վերնախավը, գլխի ընկնելով, որ «դիվանը սնփական ռայաների նկատմամբ իր քաղաքականության աղատությունը կկաշկանդի» (201, 619), կտրականապես մերժեց մասնակցել խորհրդին և ենթարկվել նրա որոշումներին ու կարգադրություններին։ Դա էլ Բեշիր III-ին հնարավորություն տվեց, որպես կենտրոնական թե տեղական իշխանությունների նկատմամբ անհնազանդների (չէ՞ որ խորհուրդը վերջին հաշվով բխում էր օսմանյան Թանզիմաթի ոգուց ու տառից), հարձակման անցնել դրուզ ամիրների և շեյխերի դեմ. ժամանակագրի վկայությամբ նա չբավարարվեց հայհոյելով ու հայտարարելով, որ «աստծու օգնությամբ (ինշալլահ) երբևէ կկտրեմ ձեր տաք գլուխները» (11, 260), այլև ձերբակալեց մի շարք շեյխերի, կալանք դրեց նրանց կալվածքների վրա և սպառնաց վերացնել դրուզների ամեն մի մանրիշխանական իրավունք։

Ամիրայության սոցիալ-հասարակական առաջընթացի շահերից ելնելով և իր պաշտոնի բերմամբ դառնալով դրուզ ֆեոդալ-աղնվականության հավակնությունների համոզված հակառակորդների պարագլուխը, Բեշիր III-ը փաստորեն ծանր ու դժվարին մի պայքարի էր ձեռնարկում, առանց, սակայն, սոցիալական, իսկ լիբանանյան պայմաններում առավել ևս անհրաժեշտ համայնքային համապատասխան հենարան ունենալու։ Եվ իրոք, երբեմնի հզոր և դեռ որոշակի ուժ պահպանած դրուզ գազազած վերնախավի դեմ համարձակորեն նիզակ ճոճող Բեշիրը ո՛չ ժամանակ, ոչ էլ հնարավորություն էր ունեցել իր վրա կենտրոնացնելու ժողովրդական զանգվածի համապատասխան համակրանքը, ձեռք բերելու անհրաժեշտ հեղինակություն և իր անձի ու գործի շուրջ հավաքելու լիբանանյան ազգաբնակչության որոշակի մի զանգված, տվյալ դեպքում գոնե ու հատկապես մարոնականներին, որոնք դարաշրջանի վերնախավի ու նրա շուրջ միասնականացած համայնքի նկրտումների դեմ իր պայքարում անհրաժեշտ միակ հենարանը կարող էին դառնալ։ Թո՛ղ հարավը, կենտրոնական և հատկապես հյուսիսային լեռնահատվածի մարոնականներն իսկ համայնքի աստիճանաչափով ոչ միայն իշխանապետի հետ չէին, այլև նույնիսկ բացահայտորեն դեմ էին նրան։

Ճիշտ է, որ նոր իշխանապետը «մոլեռանդ քրիստոնյա էր և իր նախորդի նման չէր թաքցնում» այդ հանգամանքը (11, 259), սակայն մարոնականների համար տվյալ պահին դա առանձնապես նշանակություն չուներ, քանի որ թեկուզ և իրենց իսկ գործուն օժանդակությամբ ստեղծ-

ված նոր իրավիճակը, որից շատ շուտ հուսախաբություն ապրեցին, նրանց աչքին առաջին հերթին խորհրդանշվում էր Բեշիր III-ի անձով։ Հյուսիսում, վկայել է ռուսական հյուպատոսը, «հենց որ եգիպտացիներից ազատագրման առաջին հրճվանքն անցավ... և Իբրահիմի դեմ զինարշավին մասնակցած լեռնականները մոտիկից նայեցին թուրք փաշաներին, ապա հպատակ-քաղաքացու և սուլթանին շնորհապարտության զգացմունքի փոխարեն անբավականություն դրսևորվեց ժողովրդի հոգում» (11, 260)։ Իսկ այդ անբավականությունը չէր կարող զգալի մասամբ չկենտրոնանալ օսմանյան տիրապետության վերահաստատման խորհրդանշանի՝ նոր իշխանապետի անձի վրա։

Հարցը նրբանում էր նրանով, որ մայիս-հուլիսյան զինված շարժման ձախողանքն ընդհանուր առմամբ իրենց ձեռնպահության և ընդհակառակն Իբրահիմի դեմ աշնանային արագ հաղթանակն իրենց եռանդուն մասնակցության վերագրելով, մարոնականներն «ամեն տեսակ առանձնաշնորհներ ու հատուցումներ էին պահանջում» (11, 260)։ Ժամանակակից դիտորդը նույնիսկ հնարավոր է համարում պնդելու, որ մարոնական կղերը տենչում էր աշխարհիկ բոլոր իշխանությունների ավերակների վրա Լիբանան լեռան գոնե որոշակի շրջանակներում հաստատել աստվածապետական վարչակառավարում (11, էջ 261), մանավանդ որ ֆեոդալ-ազնվականական, առաջին հերթին մանրիշխանական Հոբեյշ և Խազին տոհմերը, Բեշիրի որոշապես անսիրալիր վերաբերմունքին առարկա, պատրաստ էին պատրիարքարանի ղեկավարների փառատենչ հակումներին օժանդակելու։ Ի դեպ, վերջիններիս քիչ չէր ոգեշնչում այն հանգամանքը, որ ամիրի դեմ բորբոքած դրուզ վերնախավը փորձում էր իրենց սիրաշահել՝ առաջարկելով համատեղ ճիգերով պաշտոնանկել իշխանապետին և մանրիշխանական առանձնաշնորհներն ըստ կամս ընդարձակել (201, 616)։

Այդ բոլորը նշանակում էր, որ մարոնական համայնքի համար իշխանապետական գահն ու մականը դադարել էին կախարդական խորհրդանիշներ լինելուց և նոր իշխանապետն էլ ոչ այլ ոք էր, եթե ոչ հանգամանքների բարեբաստիկ դասավորությամբ մեծ ամիրի խալաթ հագած շարքային մի ֆեոդալ-ազնվական, որ պարզապես իր անվանակից նախորդին անհիմն ու անհաջող կերպով նմանակում էր, փորձում՝ Մեծն Բեշիրի դեր խաղալ։

Մարոնականներին նոր իշխանապետից հեռացնելու ու նրա դեմ դարձնելու գործում կարևոր լումա էին ներդնում նաև Բեշիր II-ի «մեծաթիվ կողմնակիցները», որոնք նախկին ամիրի վերադարձի օգտին աշ-

խույժ քարոզություններով «ամենուր և բոլոր միջոցներով գրգռում էին ժողովրդի կրքերը» (11, 26), քրիստոնյա լեռնականներին ավելի ու ավելի հակում դեպի այն միտքը, որ չարյաց գլխավոր աղբյուրը Բեշիր III-ն է, որ նա է խափանում երկրի օրինավոր ու մեծազդեցիկ կառավարչի Մալթայի աքսորավայրից վերադարձի ուղին և իր փրկարար առաքելությունը գլուխ բերելու հնարավորությունը։ Ի միջի այլոց Հոբեյշ պատրիարքը և բարձրաստիճան հոգևորականության մի մասը նույնպես ցանկանում էին Բեշիր II-ին վերադարձած և իր աթոռը վերագրաված տեսնել, ինչ որ հավելյալ լիցք էր տալիս գահընկեց ամիրի կուսակիցների շարժման։

Բեշիր III-ի համար առավել ծանր իրավիճակ ստեղծվում էր նաև «անգլիացիների մարդը» լինելու իր համբավով։ Լեռան վրա Լոնդոնի գործակալների և նրանց աջակից բողոքական միսիոներների բազմացման և եռանդաշատացման ճանապարհով բրիտանական ազդեցության արագ վերելքի պայմաններում այդ համբավն անխուսափելիորեն իր դեմ ոչիտի դիրքորոշեր ֆրանսիական մեքենայությունների առանց այդ էլ կատարյալ սարքը, որին լրացուցիչ թափ էր հաղորդում բողոքականության տարածումից կատաղած կաթոլիկ կղերը։ Անգլիական ազդեցության ուժեղացումից մտավախ լինելու լուրջ պատճառ ունեին նույնիսկ օսմանցիներն իրենք։ Ոչ առանց հիմքի այդ ուժեղացումը սուլթանական կերիշխանության թուլացման հավասար համեմատականը համարելով, նրանք ֆրանսիացիների նման և անշուշտ ուրիշ և թաքուն եղանակներով պիտի քաջալերեին ֆեոդալ-ազնվականության դիմադրությունը Բաբդայի իշխանապետական նստավայրին, Բեշիր III-ի հեղինակազրկումը համարելով անգլիական ազդեցության թուլացման անհրաժեշտ նախապայմանը։ Ի դեպ, վստահ լինելով, որ իրենց ազդեցության պահպանման երաշխիքը իշխանապետի անձնավորությունը չէ բնավ և որ ընդհակառակը Բեշիրի անձնական վարկաբեկումը վերջին հաշվով կարող է վարկաբեկել նաև իրենց, անգլիացիներն իրենք էլ դեմ չէին իշխանապետի փոփոխության։ Չկարողանալով, սակայն, այդ հարցում նախաձեռնարկ լինել, նրանք ուշի-ուշով հետևում էին իրենց և իշխանապետի հակառակորդների գործունեության, վերջիններիս կողմից առաջադրվելիք և իրենց համար թեկուզ նվազագույն հարմարությունը ներկայացնող թեկնածության հավանություն տալու պատրաստակամությամբ, ինչպես դա տեղի էր ունենալու Հայդար Աբու'լ Լամայի դեպքում (37, 101)։

Սխալ կլիներ ենթադրել, անշուշտ, որ իր նստավայրում և առաջին հերթին իր շուրջ տիրող մթնոլորտը մեծ ամիրի սրտովն էր։ Առավել ևս

սխալ, նաև անարդարացի կլիներ պնդել, ինչպես ֆրանսիական կողմնակալ զեկուցագրերին հավատք ընծայելով այդ արել է Իսմայիլը, որ Բեյրութի բրիտանական հյուպատոսարանի թարգման Միսկան Բաբդայի պալատում ցանկալի հյուր էր և «ամիրը որևէ որոշում չէր ընդունում առանց նախօրոք... նոր խորհրդատուին դիմելու» (114, հտ. 4, 108)։ Իրականությունն այլ էր։ Իշխանապետը, հակառակ պնդերես բոլոր հուշարարությունների, բավականին ժամանակ որպես գլխավոր խորհրդատուի վստահել և ապավինել էր մարոնական Ռուշեյդ Դահդահին, Ֆուքուհի մանրիշխանական և այժմ միակ անվերապահորեն իր կողքին կանգնած ֆեոդալ-աղնվականական տոհմի ներկայացուցչին։ Բեշիր III-ը Դահդահի ծառայություններից ակամա հրաժարել էր այն բանի հետևանքով միայն, որ անգլիացիների ու տվյալ հարցում նրանց հարկագրաբար աջակցող թուրքերի կոպիտ ճնշմամբ նշանակված Միսկայի և անշուշտ ոչ առանց հիմքի ֆրանսիասեր համարվող Ռուշեյդի համատեղ ներկայությունը պալատում և համագործակցությունն անհնարին էին դուրս եկել (157, 58)։

Անգլիական ազդեցության ուժեղացումը սահմանափակելու առաջադրությամբ Փարիզի գործակալներն ու մարոնական բարձրաստիճան կղերը նաև սկսեցին լեռնականների շրջանում տարածել զրույցներ, որոնց համաձայն ֆրանսիական նավատորմն իբր շուտով հայտնվելու և ազատագրելու էր Լիբանան լեռը (11, 264)։ Հարկ է ընդգծել և մի այլ հանգամանք։ Այնքան բուռն էր մարոնական հոգևորականության՝ ֆրանսիական գործակալներից հրահրվող հակաբրիտանական տրամադրությունը, որ Փարիզի դիվանագիտական ներկայացուցչի պահանջով մինչև իսկ սինոդի քննարկման առարկա դարձավ այն հարցը, թե «մեղք չէ՞, արդյոք, կաթոլիկ ժողովրդի համար՝ զենք ստանալ հերետիկոսների ձեռքից» (11, 261)։

Բրիտանական ազդեցության թուլացման նախապայմաններից մեկը «անգլիասեր» Բեշիրի ասպարեզից հեռացումը համարելով, ֆրանսիական գործակալները մինչև իսկ փորձեցին իրենց նվիրյալ մարոնական ֆեոդալ-աղնվականների միջոցով ներգործել իրենց իսկ կողմից վանված դարազիական վերնախավի վրա ու նրան համաձայնեցնել իշխանապետի աթոռը նախկին իշխանապետ Յուսուֆի որդուն՝ ամիր Սալմանին տալու մտքի հետ։ Սալմանը թեպետ Շիհաբ տոհմի սունիի դավանության հավատարիմ մնացած սակավաթիվ ներկայացուցիչներից էր, սակայն դրուզների շրջանում բավականին ժողովրդականություն էր վայելում։ Սակայն նա, որպես ուղղափառ մահմեդական, առանց այլ պատ-

ճառների էլ պատրիարքի համար ընդունելի, հետևաբար հաջողության որևէ հույս ունեցող թեկնածու չէր բնավ։ Ֆրանսիական շրջաններն այդ ժամանակ որպես այլընտրանք առաջարկեցին ամիր Հայդար Աբու՝ Լամային, պատրիարքարանի հետ նրա սերտ կապերի հետ առնչելով հաջողության հավանականությունը։ Պատրիարքը կտրականապես առարկեց նաև այդ թեկնածության դեմ, պատճառաբանելով, որ Հայդարը, պատկանելով սկզբնապես մոկադդամական և միայն ուշ շրջանում ամիրական հայտարարված տոհմի, ի վիճակի չի լինի համախմբել և իր գերադասությունը պարտադրել շեյխական տոհմերին, առավել ևս, որ նա, 1840-ի զինված դեպքերի ընթացքում վճռական դիրքորոշում ունեցած լինելով, տվյալ պահին պատշաճող իշխանապետը երբեք էլ լինել չի կարող (37, 101)։

Այս կապակցությամբ հավանական պիտի համարել Սալիբիի ենթադրությունը պատրիարքի հաշվարկների վերաբերյալ. «Լավ հասկանալով Բեշիր III-ի անընդունակությունը երկիրը կառավարելու հարցում, պատրիարքը հույս ուներ, որ եթե ամիրը երկար ժամանակ երկիրը վատ կառավարի, ապա շատ լիբանանցիներ կմոռանան Բեշիր II-ից իրենց նախկին դժգոհանքը և երկրի իրավիճակն էլ օսմանցիներին կհարկադրի վերջինիս վերադարձնել իշխանության գլուխ» (37, 101)։

Ամենայն հավանականությամբ հենց այդ հաշվարկներով, դարաղիական վերնախավի և Բեշիր III-ի միջև անդունդը խորացած և այդ խորացման համաչափ էլ իշխանապետի շուրջ անիշխանություն առաջացած տեսնելու ցանկությամբ է պատրիարքը իր օրհնությունը տվել վարչադատական և հարկաբաշխման լիազորություններով խորհրդի կազմության ծրագրին։ Նա մինչև իսկ իր և մարոնական երևելի մի շարք անձնավորությունների ստորագրությունը կրող շրջաբերականով դիմել է դրուզական մանրահատվածների իր հոտին, նրանց հորդորելով «կրոնի պահանջների համաձայն քայլել սիրո ու հնազանդության ուղիով», «հնազանդ լինել սուլթանին ու նրան, ով նշանակվելու է իր վրա», հոգ տանել «ընդհանուրի շահերին ու միասնության», «հարգել յուրաքանչյուրի դիրքն ըստ իր աստիճանի» և «գործողություններում լինել արդար ու խելամիտ»։ Եկեղեցապետն ու իր կուսակից երևելիներն իրենց շրջաբերականում հատկապես թելադրում էին չճանաչել խորհրդի կազմության չհամակերպող ֆեոդալ-աղնվականության դատական թե մյուս իրավունքներն ու առանձնաշնորհները և դրանց իրականացումը վստահել ամեն մի մանրահատվածում իրենց կողմից ընտրվելիք ու լիազորվելիք վեքիլների (201, 617)։

Ինչպես ճիշտ կերպով նկատել են իր ժամանակին անգլիական ռեզիդենտ Չերչիլը, իսկ մեր օրերում պատմաբան Սալիբին (80, 38։ 37, 103), այդ շրջաբերականը չէր կարող որպես մարտահրավեր, որպես դրուզ մանրիշխաններին խսպառ իշխանազրկելու պատրիարքի հավակնության դրսևորում չդիտվել դարավոր ֆեոդալ-աղնվականության կողմից, հետևաբար անխուսափելիորեն չարել մարոնական-դրուզ առանց այն էլ աստիճան առ աստիճան բարձրացող ձգտվածությունը։ Այդ շրջաբերականը, միաժամանակ, մեր կարծիքով եղավ այն վճռորոշ ազդակը, որ իր հավակնություններ ուղիները Դեյր ալ-Կամարում, Պոլսում ու Փարիզում արգելափակոցված տեսնող դարավոր վերնախավին մղեց անձնվիրորեն նեռվելու Վուդի կողմից տարիներ շարունակ հարդարվող բրիտանական ցանցամահճի մեջ։ Վերջին տարիներին հրապարակված անգլիական փաստաթղթերը վկայում են, որ Բեյրութի անգլիական գլխավոր հյուպատոս Ռոուզը ինչպիսի՞ եռանդ և արտաքին գործերի պետական քարտուղար Պալմերստոնն էլ պատրաստակամություն են ցուցաբերել առևտրատնտեսական, մշակութային և այլ միջոցների ներգործությամբ դրուզական համայնքն անխզելիորեն իրենց առնչելու։ Մինչև աշուն շարունակված բանակցությունների պսակումն էր լինելու Սայդայում խարսխած բրիտանական ռազմանավի վրա սեպտեմբերի 24-ին մի կողմից անգլիական լիազորների, մյուս կողմից դրուզ ազնվականության ներկայացուցիչներ Նասման ու Սաիդ Ջումբլաթ, ալ-Կադի շեյխերի և Հայդար Արսլան ամիրի միջև կնքված գաղտնի համաձայնագիրը։ Սայդայի ֆրանսիական հյուպատոսի ձեռք բերած տեղեկությունների համաձայն, պայմանագրով Անգլիան պարտավորվում էր հովանավորել դրուզներին, իսկ վերջիններս փոխադարձաբար հանձն էին առնում աջակցել բրիտանական ազդեցության տարածման. միաժամանակ ստանալով նաև զգալի քանակությամբ զենք ու զինամթերք (114, հտ. 4, 163)։

Ի դեպ, այդ զենքերը շատ շուտով հակամարոնական արյունահեղության գլխավոր գործիքն էին դառնալու և պայմանագրից ուղիղ մի ամիս անց, հոկտեմբերի 24-ին, գնդապետ Ռոուզը Մուհամմեդ-Սելիմ փաշային հանձնված մի հուշագրում ամոթխածորեն հերքելով «դրուզներն այն մասին, որ Սիրիայում նորին վեհափառության ծառաները վառոդ և զինամթերք են տվել դրուզ ազգին», գրելու էր. «Մի այլ իրադրության մեջ նրանց կողմից այդպիսի ընթացքը ամենածանր ոճիրն էր լինելու։ Սակայն իրերի այժմյան դրության մեջ... դժվար է հավատալ, որ կա պատվին ու մարդկության... ավելի հակառակ մի գործելակերպ», քան զինել դրուզներին (181, հտ. 3, Ա մաս, 96)։

Եվ սակայն հարկերի ու մաքսային սակերի հարցերն էին, որ լիբանանյան հասարակությունն ալեկոծող գայթակղության քարն էին լինելու և Բեշիր III-ի կարճատև իշխանակալությունը լրացուցիչ ցնցումներով էին սարսելու։

1840-ին օսմանյան անմիջական տիրապետության հաստատումից հետո լիբանանյան ժամանակակից հողատարածքը հիմնականում համախմբվեց մեկ՝ Սայդայի էյալեթի մեջ, որ Բեյրութ կենտրոնով ներդրավեց նաև Տրիպոլիի փաշայությունը։ Այդ հողատարածքի ամիրայության կազմից դուրս ընկած շրջանները, ամբողջ Սիրիայի հետ, ըստ էության ենթակա մնացին հարկային նախկին սիստեմին. հողահարկից բացի վճարել նաև գյուղատնտեսական արտադրանքի տասանորդ, շհաշված քրիստոնյաների գլխահարկը և անխտիր բոլորից պահանջվող եգիպտական ֆիրդեն, որ անվանափոխվելով վերգի էր դարձել, թեպետ մեկ երրորդով ցածր դրույքի էր։

Բանը բոլորովին այլ էր ամիրայության հողատարածքի համար։ 1841-ի ապրիլի վերջերին Բեյրութ հրավիրելով Բեշիր III-ին, ֆեոդալազնվականներին և մարոնական պատրիարքի ներկայացուցիչներին, Սայդայի փաշան կադիի և անգլիական հյուպատոսի ներկայության «կարդաց կարգը, անդորրը և բոլորի իրավահավասարությունը երաշխավորող ֆերմանը»՝ Գյուլհանեի Հաթթ-ի շերիֆը (201, 616) և պահանջեց ձեռնարկել հարկահավաքի, ըստ որում թուրքական իշխանությունները ոչ թե «ցանկացան Լիբանանը ենթարկել կայսրության համար ընդհանուր հարկային սիստեմին»,— ինչպես պնդել է Սմիլյանսկայան «խիստ այլասական վկայությունների» պայմաններում (43, 100), այլ ընդհակառակը։ Ռուսական հյուպատոսը հստակորեն հաղորդել է. «Գարնանն եկավ Բ. Դոան հրամանը, որպեսզի լիբանանցիներից հարկը գանձվի ոչ թե վերջերս ամբողջ կայսրության համար հաստատված ֆինանսական սիստեմի հիմամբ, այլ հին սովորությամբ մշտական մի վճարագումարով, ինչպես որ ցանկանում էին լեռնականները»։ Ավելին. «եգիպտական տիրապետության օրոք լեռնականների վճարածի հետ համեմատած Բ. Դոան պահանջածը խիստ չափավոր էր. տարեկան 4000 քսակ։ Այդ գումարի երկու երրորդը թողնվում էր ամիրի վարչակառավարման համար և միայն մեկ երրորդը պետք է գանձաուն ուղարկվեր» (11, 262—263)։

Հակառակ այս աստիճանի առանձնաշնորհյալ իր վիճակին, Լիբանան լեռն այնուամենայնիվ սրերով ընդունեց հարկադրումն ընդհանրապես և հարկահավաքի ձեռնարկելու որոշումը մասնավորապես։ Ժողովրդական կայրությունը մի շարք հիմքեր ուներ. լեռնականների որոշ մա-

ին 1840-ի աշնան տրված ժամանակավոր հարկադրման խոստումը, որ այժմ Թուրքական իշխանությունները դրժում էին, քրիստոնյաների և առաջին հերթին մարոնականների գլխահարկից ամեն գնով ազատվելու ցանկությունը և վերջապես այն գրույցը, որ տարեկան վճարագրումից անկախաբար լեռնականներից ուղղակի կենտրոնական կառավարության օգտին տասանորդ է պահանջվելու։

Լեռան տղգաբնակչությանը չափազանց վրդովող մի այլ կարևոր հանգամանք էլ կար. դա 1838-ին Օսմանյան կայսրության կողմից Անգլիայի, ապա և եվրոպական այլ երկրների հետ կնքված առևտրամաքսային պայմանագիրն էր, որ իր ժամանակին Մ. Ալին չէր ճանաչել ու չէր տարածել իր տիրույթների, այդ թվում Սիրիայի վրա և որ արտաքին առևտրի ներմուծման ու արտածման մաքսերը 3-ից բարձրանում էր 10—12 տոկոսի։ Հենց որ 1841-ի ապրիլին օսմանյան իշխանությունների կարգադրությամբ Սիրիան ներգրավվեց այդ պայմանագրի գործողության ոլորտում, առևտրականները բնականորեն 12 տոկոսով իջեցրեցին արտածման ենթակա տեղական ապրանքների ու մթերքների գնման գները և համապատասխանաբար 10 տոկոսով բարձրացրեցին ներմուծվող ապրանքների ու մթերքների վաճառքի գները։ Դա նշանակում էր, որ հիմնականում մետաքսահումքի արտածման և հացահատիկի ներմուծման հետ առնչվող լեռնականների եկամտի աղբյուրները միանգամից 22 տոկոսով նվազում էին (11, 243—245)։

Ժողովրդին վրդովող հարկերի ու նոր մաքսասակերի հարցի շուրջ Թուրքական իշխանությունների հետ իշխանապետի և լիբանանյան ֆեոդալ-աղնվականության ներկայացուցիչների երկշաբաթյա բանակցությունները ապարդյուն անցան։ Լեռնականների, հատկապես մարոնականների շրջանում արագորեն աճում էին ընդդիմադրական տրամադրությունները, որոնց հայելին պիտի համարել Հորեյշ պատրիարքի ելույթը. «Ինչո՞ւ էինք հարկ վճարում Իբրահիմ փաշային։ Սկզբում նրա համար, որ փաշան մեզանից ուժեղ էր ու մեզ հարկադրում էր։ Այնուհետև նրա համար, որ մենք գիտեինք, որ երկիրը գոնե կառավարվում է, որ մեր ճանապարհների վրա անվտանգությունը պահպանվում է և որ եթե հարկ լինի մեզ պաշտպանել, ապա փաշայի բանակը բավականին ուժեղ է ու մեզ կպաշտպանի։ Իսկ ինչո՞ւ ենք հարկ մուծելու Բ. Դռան։ Գուցե այդ փողերը ծառայելու են մեր շրջապատում միայն անկարգություն հաստատելու։ Ի դեպ, սուլթանը չի էլ կարող մեզ պաշտպանել։ Նա բավականին թույլ է։ Մենք ցանկանում ենք վճարել միայն այն, ինչ արդար է» (114, հտ. 4, 17)։

Հունիսին բանակցությունները վերսկսեցին Այն Անուբ գյուղում։ Իշխանապետի նախագահությամբ և Սայդայի փաշայի կողքին ժողովին ներկա էին «բոլոր գավառներից պատվիրակներ» (11, 263)։ «Անիշխանական տարրերը, որոնք լեռները խռովում էին եգիպտացիների վտարումից ի վեր, այդ ժողովում իրար դատան»,—հաղորդել է Բաղիլին և հիշատակելով պատրիարքի ներկայացուցիչ Թորիա Աուն եպիսկոպոսի անունը, հուշել այն մասին, որ մարոնական պատվիրակների մեծամասնությունը վճռականորեն դիրքորոշվել է հարկային վճարագումարը մինչև 1200 քսակի իջեցնելու, հարկավճարը հետաձգելու և նոր մաքսասակերը վերացնելու հարցում։ Առավել բուռն է եղել ելույթը «անիշխանական» Թորիայի, որ «առաջարկել է ոչ միայն հրաժարվել հարկ վճարելուց, այլև կառավարությունից պարգև ու հատուցում պահանջել Իբրահիմի դեմ պատերազմում լեռնականների մատուցած ծառայությունների և կրած բոլոր վնասների համար», պնդել նաև նոր մաքսասակերի անպայման վերացման վրա։ Եթե,— շարունակել է նա,—Բ. Դուռը հրաժարի ընդառաջել, ապա անհրաժեշտ կլինի դիմել կաթոլիկ պետությունների՝ Ֆրանսիայի ու Ավստրիայի միջամտության (11, 263)։

Այն Անուբում, սակայն, լիբանանյան համայնքների միջև երկպառակման առաջին և բնկուղ դեռ ոչ-բացահայտ նշաններն սկսեցին ի հայտ գալ։ Ժամանակագիրը վկայել է, որ «ամիրին չհարգող ու չենթարկվող» և «Բեշիր II-ի կողմից վերացված իր նախկին անիշխանական ազդեցությունը վերականգնելու ձգտող» մարոնական ազնվականության դեմ դուրս են եկել դրուզ և հույն-օրթոդոքս համայնքների ներկայացուցիչները։ Վերջինները, «հույն խելամիտ կղերի ազդեցության ներքո հեշտությամբ ընկալելով (մարոնականների) վտանգավոր այդ գործարքների դաղտնի զսպանակներն ու նպատակները», կողմնակից էին Բուրքական իշխանությունների հետ կոմպրոմիսի գաղափարին։ Իրականում բարձրաստիճան հոգևորականության «խելամտությունից» ավելի օսմանյան իշխանությունների հետ բարվոք հարաբերություններ պահպանելով կաթոլիկության դեմ հաջողապես վահանավորելու և ծովափնյա վաճառաշահ քաղաքների, առաջին հերթին Բեյրութի և Տրիպոլիի հույն-օրթոդոքս առևտրականության նոր մաքսասակերից նպաստավորվելու հաշվարկներն էին պայմանավորում ուղղափառ պատվիրակների դիրքորոշումը։ Ինչ վերաբերում է դարազիական վերնախավին, որ իր իրավունքներին ու առանձնաշնորհներին վերատիրանալու համար իզուր փորձում էր սիրաշահել իշխանապետին՝ «նրան առաջարկելով իր օժանդակությունը, պայմանով, որ ենթարկվի Ջումբլաթներից մեկի հովա-

նուն», ապա նա երկակի խաղ էր խաղում. ըստ էության հարկադրույթների համոզված հակառակորդ լինելով և նույնպես հակվելով դեպի կոմպրոմիսը, իրականում «հրահրում էր իր դյուրահավատ հակառակորդներին, գաղտնորեն նրանց հույս ներշնչելով իր համագործակցության վերաբերյալ», այլ խոսքով ջանում էր սրել կենտրոնական իշխանությունների և մարոնական համայնքի փոխհարաբերությունները (11, 263)։

Բոլոր դեպքերում և միջհամայնքային հակասություններից անկախաբար, Այն Անուրի խորհրդակցությունում Թուրքական իշխանությունների ներկայացուցիչների հետ համաձայնություն չկայացավ և ժողովականների անունից խնդրագիր ուղարկվեց սուլթանին։

Բողոքելով նորամուծվող հարկերի դեմ, նախ՝ «ամենածանրն ու գլխավորը» հանդիսացող մաքսասակի (թարիֆ), որ «մեր բարիքի մեկ հինգերորդը խլում է մեզանից», ապա տասանորդի (յուրուք), որի երրեմնի համազորը՝ ֆիրդեն «եգիպտական կառավարության դեմ մեր ապստամբության հիմնական» պատճառներից մեկը եղավ, վերջապես գլխահարկի (ջիզիա), որ ըստ էության ապօրինի է, քանի որ «մենք երբեք Բ. Դռան կառավարության չենք անհանգստացրել մեր կյանքի, պատվի և ինչքի պաշտպանության հարցով», խնդրագրի հեղինակները կատարում էին չքողարկված մի նախազգուշացում. «Եթե մեր շարադրածը նկատի չառնվի և համառեն մեզ այսպես հարկադրել, ինչ որ մեզ համար բացարձակապես անհանդուրժելի է, ապա մի քանի տարում այդ սիստեմը ավերելու է մեզ, հետևաբար և թող ոչ ոք մեզ բացարձակապես չմեղադրի՝ եթե իրավամբ հիշեցնենք վերջին կառավարությունը»։ Վերջում արձանագրելով, որ թուրքական և անգլիական պատասխանատուները «բանավոր ու գրավոր» երաշխիք են տվել Լիբանան լեռը «մի քանի տարով ամեն մի ֆինանսական հարկադրումից ազատելու ու մի որոշ ժամանակ անց միայն միրի պահանջելու», ստորագիրները հակաեգիպտական ապստամբության թե հետագային, օսմանյան տիրապետության հաստատումից հետո իրենց կրած վնասների համար 400 հազար թալերի հատուցում պահանջելով, եզրակացնում էին. «Կարծում ենք, որ թագավորների սովորության հակառակ է չհատուցել իրենց հպատակներին այն վնասների համար, որ նրանք կրել են պատերազմի ժամանակ՝ իրենց իսկ հրամանով» (181, հտ. 3, Ա մաս, 110—113։ 11, 263)։

Սայդայի փաշան, ծանոթանալով խնդրագրի բովանդակության հետ, մերժեց այն ընդունել։ Այնուամենայնիվ լեռնականները հատուկ պատվիրակության ձեռքով կարողացան դիմումը հասցնել Բ. Դուռ։ Վերջինս

փաշային կարգադրեց շարունակել բանակցությունները և «հարցը քաղաքությամբ լուծել» (11, 267)։

Խնդրագրից ակնկալած արդյունքը՝ մարոնականների նկատմամբ թուրքական իշխանությունների ցասումը, «առանց պետության դժգոհանքը հրավիրելու փոթորիկ հրահրելով» (11, 263) ֆեոդալ-մանրիշխանական իր իրավունքների և առանձնաշնորհների վերականգնումը և Բեշիր III-ի շնորհազրկումը ձեռք չբերելով, դարագլխական վերնախավը հունիսի վերջերին Բ. Դռան ներկայացրեց առանձին մի խնդրագիր։ Դրանում հաղորդելով, որ պատրաստ են «մեր ունեցվածքի և հարստության համաձայն դանձվելիք հարկի վերաբերյալ Գյուլհանեի Հաթթ-ի շերիֆով հռչակված բոլոր նոր սկզբունքներին ենթարկվելու», դրուզները հարկային հարցում իրենց դիրքափոխությունը պայմանավորում էին մի կարևոր՝ սեփական դրուզ կառավարիչ ունենալու պահանջով. «Մենք աղաչում ենք... մեզ համար, ինչպես որ անցյալում շեյխ Բեշիր Ջումբլաթի օրոք էր, ընտրել մի ղեկավար և նորին մեծության գերիշխան կամքով բարեհաճել նրան պաշտոն տալու՝ ղեկավարելու մեր վարչական գործերը, շնորհելով պայծառափայլ մի ֆերման, որով նա մեր երկրի պատվի ու արժանապատվության համար պաշտոնավարի»։ Խնդրագրի վերջում և անշուշտ օսմանյան իշխանություններին հաճոյանալու նպատակով, դրուզները շեշտում էին. «Ճիշտ է, քրիստոնյաները մեզանից մեծաթիվ են, սակայն մենք մշտապես հաղթական ենք դուրս գալու տեղի ունենալիք բոլոր մարտերից» (181, հտ. 3, Ա. մաս, 86—88)։

Ի դեպ, եթե վերջին տողերը միջհամայնքային արյունալի դիմաբախումների հավանականությունը հուշող վավերագրային առաջին վկայությունն էին, ապա ժամանակակից դիտորդների կարծիքով մթնոլորտի բռնկունությունը անկասկածելի էր և շատերն էին տեսնում «ահավոր կոնֆլիկտի», «քաղաքացիական պատերազմի» նախանշանները, եղբայրասպան կռիվների սկիզբը համարում մոտալուտ (4, գ. 718, թ. 158։ 114, հտ. 4, 118)։

Ճշմարտությունից հեռանալ կնշանակի պնդել, որ օսմանյան իշխանությունները, թեկուզև բարեհաճ ընդունելով դրուզների խնդրագիրը, «նրանց հարկային զիջումներ արեցին» (43, 197), քանի որ, ինչպես գրում էին Պոլսից, դեռ մինչև այդ խնդրագիրը դրուզները, բոլոր լեռնականների հետ միասին, «ֆիրդևից և վիրավորական մյուս հարկերից ազատվել էին արդեն» (181, հտ. 3, Ա. մաս, 83)։ Իրականությունն այն էր, որ խնդրագիրը ներկայացնելիս դրուզներն իրենք եռամյա հարկադրված էին խնդրել։ Իր հերթին անգլիական դեսպանը հատուկ հուշա-

գրով հիշեցրել էր Բ. Դոան անկատար մնացած խոստումը՝ «վարձատրելու սիրիացի մի շարք հավատարիմ հպատակների, որոնք փութացին օգտակար ծառայություններ մատուցել» և «վնասուց հատուցում տալու Զունիի ռազմական ճամբարի շինության կապակցությամբ կտրված թթենիների տերերին»։ Մուհամմեդ-Սելիմ փաշան, մյուս կողմից, «Բեյրութի մերձակայքի մեկ կամ երկու գյուղերի բնակիչներին սուլթանի անունից ինչ-որ դիջումներ» էր խոստացել։ Եվ ահա մեծ վեզիրը հուլիսի 29-ին երկրամասի դեֆտերդար էդհեմ բեյին հատուկ նամակով հիշեցնելով նախարարաց խորհրդի հանձնարարականը՝ «վարձատրել հավատարիմներին ու հատուցել մյուսներին ըստ ցուցակի» և հանդիմանելով նրան այն բանի համար, որ Բեյրութում ձևացրել է, թե «իբր իրեն ոչ մի կարգադրություն էլ արված չէ», հրամայում էր «անհապաղ հատուցումները կատարել ու պարգևները և շքանշանները հանձնել», առանց սակայն ակնարկ անգամ անելու դրուզների խնդրագրին ընդառաջելու խնդրին (181, հտ 3, Ա մաս, 88—89)։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ եգիպտական փոխարքայի հետ վեճերն ու պատերազմական գործողությունները անցած տասնամյակում օսմանյան իշխանություններին վերջնականապես հանգեցրել էին Սիրիան անպայման միահարթ ու համակենտրոնացված երկրամասի վերածելու մտքին և ամիրայությունը վերացնելու ձգտման պայմաններում էլ Բ. Դուռը չէր կարող մտորել դրուզական ինչ-որ ուրույն մանրամասնավոր ստեղծելու մասին. միավոր, որի յուրահատկության փաստական ճանաչումը կլիներ Լեռան շրջանակներում նրան հարկային որևէ առանձնաշնորհի արժանացնելը։ Եվ հետո տվյալ պահին օսմանյան իշխանությունները դրուզներից ավելի ամբողջ Սիրիայի քրիստոնյաներին սիրաշահելու միտող քայլեր էին որոնում։ Այդպիսի քայլ էր, օրինակ, 1841-ի հունիսի վերջերին Բ. Դոան կողմից Կաղայի և Երուսաղեմի կառավարիչ Թայյար փաշային ուղարկված ֆերմանը, որում, հիշեցնելով «Սիրիայի և շրջակայքի» քրիստոնյաներին՝ «հույներին, հայերին և կաթոլիկներին», այդ թվում մարոնականներին հրապուրելու համար հրապարակված Հաթթ-ի շերիֆները, խորհուրդ էր տրվում ամեն տեսակի պատիվներ և դյուրություններ ընծայել եկեղեցուն ու նրա սպասավորներին (141, հտ. 2, 339—340)։

Դոյավիճակը ժամանակավորապես պահպանելու և իրադրության ղեկը չկորցնելու ցանկությամբ, «հարցը քաղցրությամբ լուծելու» հրահանգ ստացած Մուհամմեդ-Սելիմ փաշան օգոստոսին Բեյրութ հրավիրեց տարբեր համայնքների «խաղաղասիրորեն տրամադրված և պետության հավատարիմ մարդկանց», նրանց փողով ու պատվո զգեստ-

ներով վարձատրեց՝ իբր եգիպտական զորաբանակի դեմ պատերազմում մատուցած ծառայությունների համար և Բ. Դոան անունից պաշտոնապես հայտարարեց, որ հարկի տարեկան վճարագումարը 4000-ից իջեցված է 3500 քսակի, որից 1200 քսակն է միայն գանձատուն ուղարկվելու, իսկ մնացածը թողնվելու է ամիրայության վարչակառավարման և այլ ծախսերի համար (11, 267)։ Իր հերթին Բեշիր III-ը իր նստավայրում ֆեոդալ-ազնվականական ժողով հրավիրեց, իշխանության համար նախատեսված 2300 քսակի ըստ պատկանելվույն բաժանման հարցը որոշելու նպատակով։

Մարոնական վերնախավը, որ հիմնականում ձեռնպահ էր մնացել փաշայի հանդիսավոր նիստին մասնակցելուց, մերժեց ներկա լինել նաև իշխանապետի ժողովին։ Բեշիր III-ը փաստորեն մենակ մնաց դրուզ ազնվականության սրվող հավակնությունների դեմ։ Հարկերի տարեկան վճարագումարից երկրին թողնվող քսակներից մուկատաաճիները փորձում էին առյուծի բաժինն իրենց մաս հանել, իսկ ֆեոդալները ջանում էին իրենց սեփական կալվածքները գյուղացիական մանր տնտեսությունների հաշվին ընդհանրապես հարկազերծել։ Ամիրը չերկնչեց դուրս գալ այդ հավակնությունների դեմ և ռուսական հյուպատոսի վկայությամբ պահանջեց վերջ տալ այն գործելակերպին, որի հիմամբ «ամիրների և շեյխերի կալվածքները լրիվ արտոնություններից օգտվում են, իսկ (հարկերի) ամբողջ ծանրությունն ընկնում է գյուղացիական փոքր սեփականությունների վրա, այն էլ այն դեպքում, երբ աշխատավորները միաժամանակ հարկադրվում են համարյա անվճար մշակել նաև տերունական հողերը» (4, գ. 718, թ. 156)։ Ի դեպ, աշխատավոր գյուղացիության շահերի վճռական պաշտպանությունն այն վերջին հաղթաթուղթն էր, որ ավյալ պահին իշխանապետը կարող էր սեղանի վրա նետել՝ ժողովրդական հենարանով ապահովվելու և ֆեոդալ, նախ և առաջ դրուզ ազնվականության բաց մարտ տալու համար (11, 264)։

Փոթորկոտ ժողովի ապարդյունությունից դրդված, նշանակված հարկագումարը օր առաջ կազմված տեսնելու ձգտող թուրքական իշխանությունները, դուցե թե իշխանապետի խորհրդով, արգելեցին Լիբանան լեռ հացահատիկի ամեն մի առաքում և ամիրայության մատույցներում զորաշարժ սկսեցին։ Տնտեսական ու ռազմական ճնշումը ներգործեց. 1841-ի սեպտեմբերի 3-ին Բեյրութում հավաքված ամիրների ու շեյխերի ղեկավարի մասն ստորագրեց մի պարտավորագիր, որ պատմագրության էջերում «ռեգլամենտ» է մկրտվել և որում ասված էր. «Լիբանան լեռ հանձն է առնում Բ. Դոան ցանկության համապատասխան տարեկան վճարել

1750 000 դուրուշ։ Այս գումարից պիտի հանվի ամիր Բեշիր Բին Կասեմի, նրա կողմից նշանակվելիք խորհրդի անդամների և մուկատաաճիների, Լեռան վարչական ծառայության մեջ աշխատելիք պաշտոնյաների, հեծելազորի ու հետևակի ռոճկագումարը և մնացածը Աքայի գանձատուն պիտի վճարվի տարեկան 3 հերթով»։ Ի դեպ, հարկային տարվա սկիզբը ընդունելով 1841-ի մարտի 13-ը, պաշտոնապես որոշվում էր, որ «հարկագումարը բնակիչների վրա ամիր Բեշիրի և խորհրդի անդամների կողմից բաշխվի հավասարությամբ» (181, հտ. 3, Ա մաս, 89—90)։

1841-ի ռեգլամենտի ամենից ուշագրավ նորամուծությունն այն էր, որ ոչ միայն առաջին անգամ լինելով ստեղծվում էր համայնքայնությունը նվիրագործող ընտրովի մի խորհուրդ, այլև մուկատաաճիության ինստիտուտը փաստորեն վերանում էր, քանի որ ամեն մի մանրաշրջանի հարկագումարի պատասխանատու աղնվականը, պահպանելով մուկատաաճի տիտղոսը, դառնում էր իշխանապետից նշանակվող և 8 տոկոսանոց կատիայից զրկվելով ռոճկավորվող վարչական պաշտոնյա։

Սեպտեմբերի 5-ին Մուհամմեդ-Սելիմ փաշան ստորագրում էր մի հրաման, որում հիշեցնելուց հետո «ժողովրդի երջանկության և կատարյալ անդորրության ի խնդիր» սուլթանի հրամանը՝ ամբողջ կայսրությունում «հաստատել խորհուրդներ և օրենքների հիմամբ վճռել վեճերն ու տարակարծությունները, որպեսզի ոչ ոք անհարմարությունների կամ վնասների չենթարկվի», կարգադրում էր Լիբանանի վրա ևս Բեշիր III-ի նախագահությամբ անհապաղ ստեղծել 12 հոգուց բաղկացած մի խորհուրդ։ Խորհրդին անդամակցելու էին իշխանապետի կողմից նշանակվելիք տեղական, մարոնական ու դրուզ համայնքներից երեքական, իսկ հույն-օրթոդոքս, հույն-կաթոլիկ, սուննի և մթուալլի համայնքներից մեկական ռոճկավորված ներկայացուցիչներ, որոնք «պետք է ընտրվեն և նշանակվեն ժողովրդի կողմից» (181, հտ. 3, Ա մաս, 90)։

Եվ սակայն «լեռնականները ոչ մի մտադրություն չունեին վճարելու» (11, 267), քանի որ, ինչպես տեղեկագրում էր ժամանակագիրը, «ժողովրդի կրքերը բորբոքողներն անպակաս էին (11, 264)։ Եվ սեպտեմբերի 16-ին իշխանապետը արդեն իսկ հարկադրվում էր հատուկ նամակով փաշային ահազանգելու, որ Բեյրութի ժողովում ամիրների և շեյխերի կողմից ստորագրված պարտավորագիրը «դուր չի գալիս լեռնականներին և նրանք հայտարարում են, որ այն ոչ մի դեպքում չեն ընդունի, քանի որ պարտավորված են մնում Թարիֆ (նոր մաքսասակ. Ն.) վճարել»։ Ամիրը ավելացնում էր, որ «բաղմաթիվ հավաքներ են տեղի ունեցել քրիստոնյաների և դրուզների միջև ու մենք անմիջապես

հրամաններ ուղարկեցինք մեր բարեկամ առաջնորդների, որպեսզի դրուցներին կարևորություն չտան և խոսք հասկացնեն ժողովրդին»։ Բեշիր III-ը ժողովրդական հուզումը վերագրում էր «երկպառակություն սերմանող և ժողովրդին Բ. Դռան առաջարկներն ու հրամանները մերժելու դրդող մի քանի շեյխերի» գործունեության։ Նա չէր թաքցնում, որ ժողովրդի «նպատակն է նվազեցնել մետաքսի մաքսասակը և հասցնել նախկին մաքսասակին» և որ Բեյրութի պարտավորագիրն ստորագրողներից «շատերը միավորվել են և համաձայն են դժգոհների հետ, վախենալով, որ լեռնականների մնացած մասի կողմից կհանդիմանվեն»։ Իր նամակի վերջում իշխանապետը առաջարկում էր Աքայի շրջանից հեծելազորը ցուցադրաբար տեղափոխել Բեյրութի և Սայդայի շրջան։ «Այդ ձևով կկանխվի ներկայումս Լիբանան լեռան վրա տիրող երկպառակությունը, այն ժամանակ գործերն էլ ավելի կանոնավոր ընթացք կստանան և կկարողանանք այդ զորքերը ետ ուղարկել»,—եզրափակում էր նամակը (181, հտ. 3, Ա մաս, 92)։ Բուսական հյուպատոսն իր հերթին վկայել է, որ «ամպրոպը նախատեսելով ամիրը փաշայից մեկ կամ երկու գումարտակ կանոնավոր զորք խնդրեց, սակայն դա նրան մերժվեց այն հանդիմանությամբ, որ անընդունակ է ու երկչոտ»։ Սեպտեմբերի վերջերին ամիրը վճռեց հարկահավաքն այնուամենայնիվ սկսել, ըստ որում սկզբում դրուզական մանրահատվածներում, որպեսզի նրանց «հրաժարելու-դիմադրելու դեպքում դրուզների դլխին թափի կառավարության ցասումը» (11, 267)։

Եվ սակայն հարկահավաքը շուտով մոռացվելու էր։ Լիբանան լեռը թաթախվելու էր դրուզ-մարոնական առաջին եղբայրասպան կռիվների արյան ճապաղիքի մեջ։

* * *

1841-ի օգոստոսին դեյր ալ-կամարցի քրիստոնյա մի որսորդ Բաակլին գյուղի մերձակայքում սպանեց մի վայրի աղավնի։ Բաակլինցի դրուզը, որի հողամասում էր տեղի ունեցել որսը, վեճի բռնվեց դեյր ալ-կամարցու հետ։ Վերջինս, խոշտանգված, մի կերպ հասավ տուն։ Երեկոյան նրա զինված համաքաղաքացիներն արշավեցին դեպի Բաակլին և սկսվեց մի զինաբախում, որում կողմերը 60-ից ավելի սպանված ու վիրավոր տվեցին (11, 265)։ Դրուզների կորուստները՝ 17 զոհ, ավելի մեծ էին, հետևաբար և նրանք, ինչպես հաղորդել է աշ-Շիդիակը, «սկսեցին հարմար առիթ որոնել վրեժ լուծելու համար... և իրենց դրության մասին բողոքեցին իրենց ղեկավարներին ու վերջիններս էլ հավանություն տվեցին նրանց ձգտման» (201, 622)։ Պետք է ասել, որ միջադեպի

մասին իմանալով, պատրիարքը շտապեց Խազին և Հոբեյշ շեյխերի գրլխավորությամբ ցավակցական մի պատվիրակություն ուղարկել Ջումբլաթ և Աբու Նակիտ շեյխերի մոտ (37, 104)։ Ձեկանորեն միջադեպը հարթվեց և հաշտություն գոյացավ, սակայն արյունալի փոթորիկը հեռու չէր։

Սեպտեմբերի 3-ի հարկային պարտավորագրի կիրառման ձեռնարկելու համար Բեշիր III-ն առաջին հերթին պետք է հրավիրեր խորհրդի նիստ և ազգաբնակչության վրա հարկերի բաժանում կատարեր։ Դրուզ ֆեոդալ-ազնվականները, իրենց դեմ գրոհն ավելի ու ավելի ուժեղացնող (201, 620) ամիրի և ավելի ու ավելի «գողողացող» դեյր ալ-կամարցիների զգոնությունը բթացնելու և նրանց հետ հաշվեհարդարի ձեռնտու պայմաններ ունենալու նպատակով, իշխանապետին հայտնեցին այդ խորհրդին անդամակցելու հարցով բանակցությունների սեղանի շուրջ նստելու իրենց պատրաստակամության մասին։ «Մի քանի շեյխեր եկան ինձ մոտ խնդրելու, որ իմ հրամաններն ուղարկեմ մյուս շեյխերին՝ հավաքվելու և քննարկելու (Բեյրութի պարտավորագիրը գործադրության դնելու) հարցը»,—Դեյր ալ-Կամարի բախումների դադարումից անմիջապես հետո, հոկտեմբերի 18-ին գրում էր իշխանապետը Վուդին ուղարկված նամակում (181, հտ. 3, Ա մաս, 93)։ Առանց կասկածելու, որ դրուզ ֆեոդալներին պարզապես անհրաժեշտ էր որպես բանագնաց, իրենց մարդկանց ուղեկցությամբ պաշտոնապես և անարգել քաղաք թափանցել, անակնկալ հարձակմամբ թույլ չտալ իրենց իսկ մանրահատվածների քրիստոնյաներից հավաքագրվող աշխարհազորի (80, 47) համախմբումը և արագորեն գլուխ բերել իրենց ծրագիրը, իշխանապետը հաճույքով ընդառաջեց նրանց ցանկության, «դրուզ երևելիներին գրելով, որ նրանք Դեյր ալ-Կամար գան» (201, 622)։

Աբու Նակիտ շեյխերը դավադրական իրենց մտադրությունները մինչ այդ կիսել էին ոչ միայն Լիբանան լեռան մյուս շրջանների, այլև Անդրլիբանանի, Ուադի ատ-Թայմի և Հաուրանի իրենց դավանակիցների հետ ու նրանցից օժանդակ ուժ խնդրել, ըստ որում հետաքրքիրն այն է, որ Բիկաայում ճամբարած և Ռաշայայի դրուզական կենտրոնում Շիրլի Աբրահամի մարդկանց կասկածելի տեղաշարժերին հետևող Աբու Սամրային հաջողվել էր իմանալ «ամիր Բեշիրին պաշտոնանկ անելու և Դեյր ալ-Կամարի դեմ պատերազմելու» գաղտնի համաձայնության մասին (199, 103)։

Աբու Նակիտների համար դեյր ալ-կամարցիների հետ հաշվեհարդարը անհետաձգելի գործ էր։ Իրենց նախկին շեյխերի նկատմամբ «գո-

ոզացող» քաղաքաբնակների բացահայտ ըմբոստացումը արագորեն վարակում էր նաև գյուղաբնակ մարոնականներին, որոնք, զգալի մասամբ թեպետ հողավարձակալ, մինչև իսկ խիզախում էին ֆիզիկական հաշվեհարդար տեսնել ֆեոդալական ռենտան հավաքելու համար ներկայացող լիազորված մարդկանց հետ (80, 46։ 154, 218)։ Դեյր ալ-կամարցիները նույնիսկ դրուզ վերնախավի թե շարքային գյուղացիության համար ըստ էության չափազանց վիրավորական տոնահանդես էին կազմակերպել այն բանից հետո, երբ ստացել էին մարոնական պատրիարքի ծանոթ շրջաբերականը։ Նրանք «երգերով, հրաձգությամբ և դրոշակարգմամբ» փողոց էին իջել, մինչ «դրուզ շեյխերն իրենց ապարանքների լուսամուտներից ապշահար զիտել էին ցույցը, որի նպատակն էր հաղորդել իրենց, որ իրենց իշխանությունը վերջ է գտել (80, 39)։

Իրենց բոլոր դավանակիցների աջակցությունն ապահովելու հետ միաժամանակ, շեյխերը նաև հոգ էին տարել, որ դավադրությունը ժամացույցի ճշգրտությամբ նախապատրաստվի։ Բազիլիի վկայությամբ դեպքերի նախընթաց օրերին, իսկ Սալիբիի կարծիքով՝ նույնիսկ շաբաթներին (11, 267։ 37, 104) զինված դրուզներ, առանձին կամ փոքր խմբերով, իբր թե առօրյա գործերով, հայտնվել էին Դեյր ալ-Կամարի փողոցներում և անհայտացել տեղացի դավանակիցների տներում, քաղաքին ներսից հարված հասցնելու համար սպասելով պայմանական ազդանշանի։ Մյուս կողմից զինված ջոկատներ դեպքերի նախօրյակին քաղաք տանող բոլոր ճանապարհներն ու արահետները վերցրել էին իրենց վերահսկողության ներքո։

Հոկտեմբերի 13-ի առավոտյան, Դեյր ալ-Կամարի պարիսպների առաջ Աբու Նակիտների գլխավորությամբ երևացին դրուզ մի շարք մանրիշխաններ, ուղեկցությամբ զինավառ մեծամբոխ հետևորդների, որոնց մեջ աննշան չէր Ուադի աթ-Թայմից և Հաուրանից ուղարկված ասպատենների թիվը։ Եվ քանի որ լիբանանյան ազնվականությունն ի վաղուց անտի սովորություն ուներ իր երթևեկը տպավորիչ դարձնել պատկառելի շքախմբի առկայությամբ, ապա և իշխանապետական իր ապարանքից անցուդարձին հետևող Բեշիրը կասկածելի ոչինչ չնկատեց։ Քաղաքացիների հայացքը, սակայն, ավելի սրատես էր։ Եվ, ինչպես մի քանի օր անց ամիրը գրելու էր Վուդին, «առավոտյան... տեղեկություն հասավ, որ դրուզական զորքերը հավաքված են ու նախապատրաստված» և «Դեյր ալ-Կամարի բնակիչները եկան ինձի պարզելու, որ անպատեհ է այդ մարդկանց ընդունել քաղաքում և որ իրենք նախատեսում են դրանից

բխելիք լուրջ հետևանքները, քանի որ վերոհիշյալ շեյխերը թշնամական տրամադրություններ ունեին» (181, հտ. 3, Ա մաս, 94)։

Իր հերթին տագնապահարվելով, իշխանապետը որոշեց խորհրդի նիստն ու դրուզ ֆեոդալ-ազնվականների հետ հանդիպումը տեղափոխել քաղաքից քայլքով կես ժամվա հեռավորության վրա գտնվող Այն աս-Սուք գյուղը։ Դարաղիական ավագանին, իբր ապշած ամիրի կարգադրությունից, պնդեց խորհրդակցությունն անպայման անցկացնել քաղաքում և փորձ արեց առաջ շարժվելու։ Բեշիր III-ը հարկադրվեց ամիր Մահմուդի գլխավորությամբ 150 քրիստոնյա մարտիկների մի ջոկատ ուղարկել՝ փակելու համար դեպի քաղաք շարժվող դրուզների ճանապարհը և հաղորդելու նրանց, որ ընդհանրապես հրաժարվում է ամեն մի նիստից ու հանդիպումից և որ քաղաքում դրուզ առաջնորդների ներկայությունը պարզապես անցանկալի է։

Մինչ պարիսպներից դուրս տեղի ունեցող իրադարձություններն ընդհանուրի ուշադրությունն էին գրավել, քաղաքում դարանակալած դավադիրները անակնկալորեն հայտնվեցին կենտրոնական հրապարակում և կից առևտրաարհեստավորական փողոցներում, սկսեցին կրակել հանդիպող քրիստոնյաների վրա, հրկիզել ու թալանել խանութները, արհեստանոցներն ու պահեստները։ Առաջացած խուճապից օգտվելով, պարիսպներից դուրս համախմբված դրուզները, ավագ Արու Նակիբի ղեկավարությամբ նույնպես խուժեցին քաղաք և իրենց հրազենները ևս ուղղեցին քրիստոնեաբնակ թաղամասի դեմ։

Բեշիր III-ի թիկնապահ գունդը, որ առաջին ժամերին հարձակվողներին դիմադիր հիմնական ուժն էր եղել, երկու սպանված և մի քանի վիրավոր տալուց հետո ամիրի խիստ հրամանով հարկադրվեց նահանջել դեպի պալատ, մանավանդ, որ դավադիրներն աստիճանաբար շրջափակում էին իշխանապետական կենտրոնը՝ անհապաղ հաշիվ մաքրելու համար իրենց գլխավոր հակառակորդ-խոշընդոտի հետ։ Վերջինս, խաղաղեցման իր բազմաթիվ կոչերի անարձագանք մնալուց համոզվելով, որ շեյխերի մտադրությունները լուրջ են, սուրհանդակներ ուղարկեց Բեյրութի թուրքական իշխանությունների, մարոնական պատրիարքի և Բաաբդայի ու մյուս շրջանների Շիհաբ ամիրների օգնությունը հայցելու։ Ի դեպ, այդ պահից սկսած և մինչև արյունալի իրադարձությունների հանգուցալուծումը Դեյր ալ-Կամարում իրարից տարանջատ գործում էին հակադրուղ դիմադրական երկու կենտրոններ՝ քաղաքի քրիստոնեաբնակ հատվածն ու իշխանապետական պալատը։

Իրենց գրոհի հանկարծակիությունից օգտվելով դրուզներն առաջին օրը որոշ առավելության հասան և քաղաքի զգալի մասում դրության տերը մնացին մինչև ուշ գիշեր։ Հոկտեմբերի 13-ի բախումներում մարդկային կորուստները հետևյալներն էին. 40 քրիստոնյա և մի քանի դրուզ, այդ թվում Աբու Նակիտ տոհմից մի շեյխ (37, 105)։ Քրիստոնյաները, սակայն, օգտվելով գիշերային զինադուլից, ամրացրեցին իրենց դիրքերը և հաջորդ երկու օրերին հաջող հակագրոհ կազմակերպեցին դրուզական ճամբարի վրա, նույնիսկ կարողացան ներխուժած դավադիրներին տեղահանել ու զգալի մասամբ դուրս շպրտել քաղաքից։

Բախումների չորրորդ օրվա վերջին միայն, երբ 100 քրիստոնյաներ և 188 դրուզներ զոհվել էին արդեն (196, 569), թուրքական մի զորաջոկատի և Բեյրութի անգլիական հյուպատոս գնդապետ Ռոուզի ուղեկցությամբ Սայդայի կառավարչից լիազորված Այուբ փաշայի ժամանումը կողմերին հարկադրեց դադարեցնել մարտերը (181, հտ. 3, Ա մաս, 94), թեպետ դրուզները, քաղաքը պաշարված պահելով, սկսեցին ասպատակել շրջակա քրիստոնեական գյուղերը։

Անհրաժեշտ է այս կապակցությամբ ընդգծել, որ եթե դրուզ ֆեոդալ-ազնվականությունը, վերջին երկու տասնամյակների ցնցումներում ջումբլաթի-յազբեկի գզվռոցը ժամանակավորապես մոռացած, միասնական էր իր դարավոր իրավունքներին և առանձնաշնորհներին վերադարձնելու նկրտումներում, ապա իր նպատակին հասնելու, առավել ևս գործը միջհամայնքային արյունահեղության հասցնելու հարցում ոչ մի դեպքում միասնական լինել չէր կարող։ Ավելին, այնքան ժամանակ, որ ջումբլաթիներն էին շարունակում դարավոր համայնքի վրա գերակշիռ ազդեցություն պահպանել, իսկ նրանց պարագլուխը հանդուցյալ շեյխ Բեշիրի ավագ որդի Նասանն էր և Արսլաններն էլ, հանձին ամիր Հայդարի, կարողանում էին հակակշռել Աբու Նակիտների ավագ Նասիֆի ծայրահեղական հակումները, մարոնական համայնքի հետ հրացանների որոտով խոսելը աներևակայելի խելագարություն կհամարվեր Դրուզների երկրում։ Պետք չէ մոռանալ, որ լիբանանյան լեռնականները, ինչպես մարոնականները, այնպես էլ դրուզները, ի բնե խաղաղասեր, երբեք հաճույքով զենք չէին վերցնում և միշտ էլ այն համոզմունքով էին գիմում զինված գործողությունների, որ «պատերազմը երկար ժամանակ չի կորի իրենց խաղաղ աշխատանքից»,— ինչպես Սայդա-Բեյրութ ճանապարհին իրենց պատահաբար հանդիպած և ինչ որ զինարշավից վերադարձող լեռնականների հետ իրենց զրույցի տպավորությամբ հաղորդում էին Միշոն և Պուժուլան (140, հտ. 6, 119—120)։ Եվ հետո, թեկուզ խառը

աղգաբնակչությամբ շրջաններում մարոնականների և դրուզների «միախառնումը մեծ մասամբ արդյունք լինելով երկար ժամանակ նրանց միացնող բարեկամության», նրանք «կապված էին հասարակաց շահերով և միասնաբար մարտնչում էին այդ շահերը պաշտպանելու համար» ու նույնիսկ ամեն մի պատահական ու անցողիկ դինաբախում «որևէ տևական հետք, որևէ խորունկ ատելություն չէր թողնում» նրանց փոխհարաբերություններում,— ինչպես պարզորոշ նշում էր եվրոպացի մի այլ ուղեգրող (85, 91)։ Այս առումով էլ պատմական ճշմարտության այլանդակ խեղաթյուրում պիտի համարել թուրքական պատմագրության այն պնդումը, որ իբր դրուզներն ու մարոնականները «դարերև ի վեր չէին կարողանում խաղաղորեն գոյակցել» (194, հտ. 2, 196)։ Ուշադրության արժանի հանգամանք է և այն, որ հավատքի հարցում դրուզների հանդուրժողականությունը,— ինչպես դիտել էր տալիս Վոլնեյը, «խստիվ հակապատկերն էր մահմեդականների և քրիստոնյաների կրոնական մոլեռանդության»։ «Դրուզները և քրիստոնյաները խաղաղ են ապրում,— դիտել էր տալիս նա ու շարունակում.— սակայն քրիստոնյաները հաճախ դրսևորում են ոչ խելամիտ և վրդովեցնող կրոնական մոլեռանդություն, որի հետևանքով խաղաղությունը կարող է խախտվել» (192, հտ. 2, 17)։

Եվ սակայն, որքան էլ զարմանալի, խաղաղությունը խախտվեց դրուզների նախաձեռնությամբ։ Դա տեղի ունեցավ այն բանից հետո միայն, երբ Ջումբլաթ տոհմի ներսում գերակշիռ դիրքի ի խնդիր երկփեղկումից որպես հաղթական դուրս եկավ նոր պարագլուխ, Անգլիայում հատուկ պատրաստականություն անցած շեյխ Սաիդը, որ Նասիֆ Աբու Նակիսի հետ կարողացավ ուքքալների զանգվածը հակել դեպի ամեն մի ծայրահեղության թույլատրելիության գաղափարը։ Դա նշանակում էր, որ այդ պահից սկսած Լիբանան լեռան աստիճանաչափով նախ և առաջ միջֆեոդալական դաշնության, հետևաբար և միջհամայնքային դարավոր համերաշխության սվանդույթները կարող էին ազատորեն ոտնատակ տրվել։

Ինչ խոսք, որ այդ ասպարեզում սոցիալ-տնտեսական թե սոցիալ-հասարակական մեղ ծանոթ գործոններից եթե ոչ ավելի, ապա նույնքան ներգործուն պիտի լիներ օսմանյան իշխանությունների յագոյական դերը։ Ինչպես իրավացիորեն նկատել էր եվրոպացի մի ուղեգրող, օսմանցիները, որոնք անկարող էին եղել Սիրիան ինքնուրույն պաշտպանել Եգիպտոսի փոխարքայի դեմ և ապա այն ինքնուրույն էլ վերադարձել, առավել ևս անկարող էին դուրս գալու երկրամասի վարչակառավարումը

դլուխ բերելու հարցում։ Թուրք ազգը, գրել է ուղեգրողը, «Սիրիայում չի կարողացել որևէ բան կազմակերպել. ո՛չ հարդարման մի բանակ, ո՛չ պարկեշտ մի վարչություն, ո՛չ ֆինանսական կանոնավոր մի սիստեմ, որոնք ամեն մի կառավարության առաջին հիմքերն են։ Անիշխանությունն ու երկրի կործանումը այս թուրության անխուսափելի հետևանքներն էին» (85, 32)։ Եվ ուրեմն իրենց գերիշխանությունը պահպանելու համար նրանք պիտի դիմեին մեքենայությունների, ազգաբնակչության տարբեր հատվածների միջև անընդհատ հրահրվող երկպառակտությունների և խորացվող ատելությունների, տխրահռչակ մի քաղաքականություն, որի դառը պտուղները երբեմնակի մատուցվելու էին 1841-ից սկսած (85, 98—99)։ Բեշիր III-ի պաշտոնանկությունից հետո Դեյր ալ-Կամարի իշխանապետական ապարանքում բաղմած օսմանյան մի աստիճանավոր չէր թաքցնելու, որ «Լիբանանում դեռ կան իշխաններ, որոնք թեպետ աննշան են, սակայն սուլթանը նրանց էլ մեկը մյուսի ետևից Պոլիս տանել պիտի տա»։ Այլ խոսքով Բ. Դուռը, նույնիսկ շրջավարարվելով լիբանանյան ինքնուրույն ամիրայության վերացմամբ, փոշիացնելու է լիբանանյան լեռնականների սեփական ֆեոդալ-ազնվականական ամբողջ նվիրապետությունը, հասկանալիորեն այդ նպատակի համար դիմելով համապատասխան քայլերի, այդ թվում և միջհամայնքային արյունահեղության հրահրման (118, հտ. 3, 311)։

Օսմանցիների մտադրությունների իրականացման ճանապարհին լիբանանյան համայնքների միասնության խորտակումը բնականաբար հաջողության սանդղահարթակներից մեկն էր միայն։ Հաջողության ճանապարհին կարևոր խոչընդոտ էր նաև եվրոպական պետությունների, առաջին հերթին Անգլիայի և Ֆրանսիայի հակառակամտությունը։ Բ. Դուռն ղեկավարների պարզունակ հաշվարկներով, այն հաղթահարելու լավագույն միջոցը Եվրոպային ցույց տալն էր, որ լիբանանյան լեռնականներն ի վիճակի, հետևաբար և արժանի չեն ինքնակառավարման։ Սայդայի փաշան, որ իր նստավայրը Բեյրութ տեղափոխելով ավելի մոտիկից էր հետևում դեմ իր մեքենայությունները հյուսում, հիմնական առաջադրանք էր ստացել հնարավորության դեպքում հրահրել և միայն անհրաժեշտության դեպքում դադարեցնել միջհամայնքային զինաբախումները (127, 113)։

Համենայն դեպս Դեյր ալ-Կամարի իրադարձությունների լուրը ցնցեց ամբողջ Լիբանան լեռն ու հարակից հողատարածքը։ Հասկանալիորեն առավել բուռն հակազդեցությունը մարոնականներինը եղավ։ «Հյուսիսային մանրահատվածների մարոնականները ցնցվեցին»,—

վկայել է ժամանակակից դիտորդը (11, 268)։ Հարավի իրենց դավանակիցներին օգնություն փութացնելու համար ոտքի ելան հյուսիսային և կենտրոնական լեռնահատվածների գյուղացիները։ Հոգևորականները, առավել եռանդով՝ գյուղական քահանաները իրենց հոտին բանադրանքի սպառնալիքով հորդորում էին զենք վերցնել և շտապել Բաարդա, որտեղ պատրիարքի առաջարկությամբ կենտրոնանում էր քրիստոնյա աշխարհազորը։ Եվ սակայն սխալ կլիներ պնդել, ինչպես դա արել է Սմիլյանսկայան, որ «մարոնական գյուղացիությունը զինաբախումների մեջ ներքաշվեց հոգևորականության և ֆեոդալների կողմից» (43, 119)։ Դա նշանակում է անտեսել դավանական թե սոցիալական միասնականության աղդակը, որ տվյալ պահին խիստ ներգործուն էր։ Շուտով կամավորների թիվը զորակենտրոնում հասավ ավելի քան հինգ (11, 268) կամ յոթ հազարի (114, հտ. 4, 133—135)։ Եկեղեցու միջոցներից աշխարհազորին հասցվում էր դրամ, պարեն, անասնակեր, զենք ու զինամթերք (201, 627)։

Բաարդայի ճամբարը փութացած մարոնական ֆեոդալ-ազնվականությունը, որ հոգու խորքում իշխանապետի կործանումն էր ցանկանում, վճռական պահին վարանեց գործուն ղեկավարություն ցույց տալ ժողովրդական աշխարհազորին։ Շիհաբ և Աբու՝լ Լամա ամիրները առաջին իսկ անհաջողությունից հետո հրաժարվեցին Դեյր ալ-Կամարին օգնություն հասցնելու փորձերը շարունակել։ Դաղտնիքն, անշուշտ, դրուզների ռազմական գերակշռության մեջ չէր։ Կար մի այլ, ավելի լուրջ պատճառ։ Ռուսական հյուպատոսը որատեսորեն նկատել է այդ պատճառի սոցիալ-դասակարգային զսպանակները և գրել. «Մարոնական ազնվականությունը... հստակորեն տեսնում էր իր հավատակիցների անիշխանական ուղղությունը և լավ էր հասկանում, որ դրուզ շեյխերի իշխանության տապալումից հետո այդ նույն հեղեղը անխուսափելիորեն շուռ է տալու նաև մարոնական ամբողջ ազնվականությունը» (11, 281)։ Այս տեսակետից բնութագրական է, օրինակ, Ջեզզինի քրիստոնյա գյուղացիների պարագան։ Նրանք, հասկանալիորեն չենթարկվելով իրենց մանրիշխան Սաիդ Ջումբլաթի կարգադրություններին ու մասնակցել Դեյր ալ-Կամարի պաշարման, ի վերջո անխուսափելիորեն զեն ի ձեռին դուրս եկան դրուզական և օսմանյան անկանոն զորաջոկատների դեմ ու ծանր կորուստներ կրեցին (199, 110—117), սակայն, հակառակ իրենց ակնկալիքի, ոչ մի արտաքին՝ քրիստոնեական-մարոնական օժանդակություն չստացան։ Հոկտեմբերի 29-ին Մոլհամ և Սալման ամիրներին հասցեագրված իրենց նամակում նրանք մարոնական վերնախավին մե-

դադրում էին ոչ միայն իրենց ու դեյր ալ-կամարցիներին, այլև Խառռուբի «իրենց եղբայրներին» անօգնական թողնելու և «ժողովրդի առաջնորդներին» անվայել անտարբերություն ցուցաբերելու մեջ (181, հտ. 3, Ա մաս, 98—99)։ Բոլոր դեպքերում ջեզզինցի և արքուրցի, նաև Ռաշմայա, Մոալլակաթ ադ-Դամուր և այլ գյուղերի հասարակ մարդիկ էին, որ Ղանդուր ալ-Խուրիի նման շարքային շեյխերի առաջնորդությամբ փորձ արեցին ճնշել պաշարման օղակը, օգնություն հասցնել Դեյր ալ-Կամարին և հակազդել դրուզական ահագնացող հարձակողականին (201, 625)։

Նշենք, որ արյունալի հակամարտությունում դրուզների հաջողությունը երաշխավորող մի շարք նախադրյալներ կային։ Ճիշտ է, այն բոլոր մանրահատվածներում, որտեղ բախումներ տեղի ունեցան, մարոնականները դրուզներից թվականորեն այս կամ այն չափով գերակշիռ էին, սակայն համախմբվածությամբ, մարտունակությամբ, հմուտ ղեկավարությամբ և զենքով ու զինամթերքով դարաղիականների գերակշռությունն էր ակնբախ։ Ավելին, եթե լիբանանյան մյուս համայնքներից միայն հույն-կաթոլիկներն անվերապահորեն ու շիները մասամբ կանգնեցին մարոնականների կողքին (127, 144), ապա հույն-օրթոդոքսները չեզոքություն պահպանեցին և որոշ դեպքերում օժանդակեցին դրուզներին, որոնք հիշարժան օգնություն ստացան հատկապես Ուադի աթ-Թայմի, Անդրլիբանանի և Հաուրանի իրենց դավանակիցներից։

Բիկաայի օսմանյան անկանոն հեծելազորի հրամանատար, Անդրլիբանանի դարաղիական համայնքի պարագլուխ Շիբլի Արիանն, օրինակ, իր մարդկանց միացնելով «Հաուրանից եկած դրուզների, հրեաների և այլ ցեղերի», անակնկալ հարձակում գործեց Հասբայայի վրա և սկսեց «կոտորել, բռնաբարել, թալանել, հրդեհել, երեխաներին երկու կես անել» (181, հտ. 3, Ա մաս, 98—99)։ Արիանն այնուհետև փորձեց հաշվեհարդար տեսնել նաև Դեյր ալ-Կամարին օգնության հասնելու նախապատրաստվող Զահլեի հույն-կաթոլիկների հետ, «Բիկաայի հովտում իր երթևեկը նշելով քրիստոնյաների գլխատված դիակներով» (11, 269)։ Ռուսաստանի հյուպատոսը, որ այդ օրերին Դամասկոսում էր՝ տեղի «փաշայի հետ քրիստոնյաների պաշտպանության հարցերը քննարկելու», զահլեցիներից միջամտելու խնդրագիր ստանալով դինյալ մի փոքր ջոկատով կտրեց Անդրլիբանանը և անակնկալ հայտնվեց դրուզների ճամբարում, երբ քաղաքն արդեն շրջափակված էր։ Հյուպատոսը Արիանի բոլոր խորհրդատուների և գլխավոր զինակիցների առաջ ելույթ ունենալով հայտարարեց, որ դրուզ շեյխի վախճանը վատ է լի-

նելու։ «Ռուսաստանի անունից սպառնալիքը Շիրլի Արիանին հարկադրեց հաշտություն կնքել և նահանջել»։ Սակայն քանի որ հյուպատոսի մեկնումից հետո շեյխի սպառնալից գործողությունները շարունակվում էին, պահլեցիները Բասրեկից հրավիրված շիի «քաջարի ամիր Խանջար Հարֆուշի մթուալլիական ջոկատի» օգնությամբ նախ Շթորայում, ապա Քաբ Իլիասում վճռական հաղթանակներ տարան (11, 269)։ Պարտված Արիանը բարձրացավ Լիբանան լեռ, իր արյունալի գործն այնտեղ շարունակելու։

Լեռան հարավային ու կենտրոնական արյունոտված հատվածներում, որտեղ հաղթանակն ի վերջո դրուզներին մնաց, սկսվեց քրիստոնյաների խուճապահար փախուստը դեպի Քեսրուան և ծովափնյա քաղաքներ։ Բեյրութի և Սայդայի մերձակայքում տեղաբաշխված օսմանյան ասկյարները, սակայն, ամբողջացնում էին դրուզների կիսատ թողածը, թալանում տեղահանվածների վերջին ունեցվածքը, խոշտանգում տղամարդկանց, բռնաբարում կանանց (181, հտ. 3, Ա մաս, 103)։ Մյուս կողմից Շուեյֆաթի 700 դրուզներ և հույն-օրթոդոքսներ ջախջախեցին ու շարքից դուրս բերեցին մարոնականների վերջին ապավենը՝ Բաաբդայի աշխարհազորը, մինչ Զահլեի առաջ ամիր Հարֆուշի կորովի դիմադրությունը միայն Լեռան կենտրոնական և հյուսիսային հատվածները զերծ էր պահում դրուզական ներխուժումից։ Խուճապահար, մարոնական պատրիարքը իջել էր ծովափ և պատրաստ էր անհրաժեշտության դեպքում ֆրանսիական ռազմանավ նստելու (11, 269)։

Քիչ է ասել, թե օսմանյան իշխանությունները վճռական միջոցներ ձեռք չառան Լիբանան լեռան վրա միջհամայնքային զինախումբը դադարեցնելու համար (43, 120)։ Սայդայի փաշան, իր բարձր աստիճանավորներով շրջապատված, դայլանն ըմբոշխնելով «հեռադիտակով հետևում էր հրդեհներին, որոնցով Լեռան լանջերին պատերազմական գործողություններն էին հայտանշվում» (11, 269—270)։ Նա բավարարվեց Դեյր ալ-Կամար ուղարկելով երկու պաշտոնակատարների՝ Սելիմ բեյին և Մուհամմեդ աղային։ Նոյեմբերի 5-ին Բեյրութի հյուպատոսներին ուղարկված մի նամակում քաղաքի բնակիչները հայտնում էին, որ թուրք աստիճանավորների գլխավոր գործն եղավ «կոչ անել, որպեսզի հանձնենք մեր զենքերը, խոստանալով այդ դեպքում երաշխավորել մեր անձերն ու պատիվը և դրուզների գաղանությունից փրկված մեր ինչքերը»։ «Մենք առանց վարանելու հանձնեցինք մեր զենքերը,— գրում էին դեյր ալ-կամարցիները,—...սակայն դրուզները նույնը չարեցին և շարունակեցին իրենց գրոհները քաղաքի սահմաններից դուրս» (181, հտ. 3, Ա

մաս, 101)։ Բեյրութի ֆրանսիական, անգլիական և ռուսական հյուպատոսները, Մուհամմեդ-Սելիմ փաշային տրված համատեղ մի հուշագրում իրենց հերթին ընդգծում էին. «Մեկ ամիս է, որ քաղաքացիական պատերազմը խոցում է այս երկիրը և կառավարության գործունեությունը սահմանափակվեց Դեյր ալ-Կամար ուղարկելով երկու պաշտոնյաների, որոնց ներկայությունը, շարիքի խորացումը կանխելուց հետո, միայն ու միայն նպաստեց կառավարության պատվի արատավորման, քանի որ անարգված ու խոշտանգված այդ պաշտոնատարները հարկադրվեցին իրենք իսկ նախագահել Դեյր ալ-Կամարի ապօրինի անձնատվության ու գինաթափման, ապա և դրուզներից թալանման (181, հտ. 3, Ա մաս, 102)։ Ավելին, օսմանյան ատիճանավորների ներկայությունից օգտվելով վերջին փամփուշտները կրակելուց հետո իր ապարանքից դուրս եկած և փոքրաթիվ ալբանական թիկնապահների շքախմբով Բեյրութ գնալ փորձող իշխանապետի մարդիկ կողոպտվեցին ու խոշտանգվեցին, իսկ Բեշիր III-ը մինչև իսկ իր շորերից ու զենքերից մերկացվեց (11, 269)։

Թուրքական իշխանությունները, որոնք ձևականորեն «որոշ զինամթերք» հայթայթելով մարոնականներին, հակառակ հյուպատոսների կողմից Նեջիբ փաշային ներկայացված բողոքագրերին Դամասկոսից «առատորեն զենք ու զինամթերք էին ուղարկում դրուզներին» (181, հտ. 3, Ա մաս, 103), իրականում բացահայտորեն վերջիններիս կողքին էին կանգնած։ Ինչպես դիտել է ավել Սալիբին, «օսմանյան զորքերը մարտերի ժամանակ հաճախ օգնում էին դարազիականներին» (37, 106)։ Այդ օգնությունը, որ պետք է գրանցել դրուզների հաջողությանը նպաստող նախադրյալների շարքին և որ օսմանցիներն իրենք փորձում էին հերքել, անցնող յուրաքանչյուր օրվա հետ այնքան բացահայտ էր դառնում, որ Թուրք-դրուզական փոխհարաբերությունների ներքնածալքերին քաջածանոթ Վուդը հոկտեմբերի վերջերին իր պարտքն էր համարում համապատասխան զգուշացում կատարել Մուհամմեդ-Սելիմ փաշային։ «Խիստ հապշտապ և առանց բացառիկ անհրաժեշտության պետք չէ միանալ հակամարտ կողմերից մեկն ու մեկին,— գրում էր նա, թեկուզ առանց անուններ տալու, այլ բոլոր դեպքերում դրուզներին նկատի ունենալով։— Կողմերից մեկին բացեիբաց միանալու դեպքում հավանական է, որ հակառակորդ կողմն իր ամբողջ եռանդն ու պաշտպանության բոլոր միջոցներն օգտագործի։ Եվ եթե թուրքական զորքերը լեռների կենտրոնամասում որևէ ձախողություն կրեն, ապա սիրիացիները, դրանից քաջալերված, վստահորեն իրենց դժգոհությունը կդրսևորեն

համընդհանուր ապստամբությամբ։ Ձեր հարկադրանքի միջոցներն այն ժամանակ անբավարար դուրս կգան, քանի որ փողն ու դինամիտերը ձեզ կատարելապես պակասում են» (181, հտ. 3, Ա մաս, 96—98)։ Ֆրանսիական և ռուսական հյուպատոսների հետ իր հուշագրում Բեյրութի անգլիական հյուպատոս Ռոուզն էլ իր հերթին փաշային նույնպես զգուշացնում էր դրուզների հետ բացահայտորեն զինակցելու և մարոնականներին հուսահատության մղելու հետևանքներից (181, հտ. 3, Ա մաս, 103)։

Հյուպատոսների հավաքական այս նախազգուշացումը, որի ետին դժվար չէ տեսնել օսմանյան իշխանություններին դրուզներին օժանդակելուց ետ կանգնեցնելու և արյունահեղությունն ամեն գնով դադարեցնելու մղելու միտումը, առաջին հերթին պայմանավորված էր այն փաստով, որ դեռ հոկտեմբերի կեսերին, դրուզ-մարոնական արյունահեղության ծավալման ղուզընթաց, եվրոպական մայրաքաղաքների համար պարզ էր դարձել Բ. Դոան մտադրությունը՝ միջհամայնքային զինաբախումներից օգտվելով անհապաղ գործնականացնել իր հին ծրագիրը. վերացնել լիբանանյան ինքնուրույն իշխանությունը, Լիբանան լեռը համահարթել սիրիական երկրամասի շրջանակներում և ենթարկել թուրքական ուղղակի վարչակառավարման։ Վուդն, օրինակ, հոկտեմբերի 28-ին Մուհամմեդ-Սելիմ փաշային գրում էր. «Իմացել եմ, որ Ձերդ գերազանցությունը ամիր Բեշիրին կարգադրել է իր անձի անվտանգության համար Բեյրութ գալ և որ դուք մտադրվել եք նրան փոխարինել Ալի փաշայով... Ձերդ գերազանցությունը պետք է լուրջ ուշադրություն դարձնի այն բանի վրա, որ լեռնականներն ընդհանրապես երբեք թույլ չեն տա, որ մի (թուրք) փաշա կառավարի Լիբանանը, քանի որ այն հակառակ պիտի լինի իրենց հնամենի առանձնաշնորհներին, որոնք Բ. Դուռը բարեհաճեց հենց վերջերս վերահաստատել։ Արդ, նրանք կարող են հակադրվել Ալի փաշայի հաստատման և եթե նրանք հարձակվեն կամ Լեռնից վտարեն նրան, ապա (դրանից) Բ. Դոան պատիվը պիտի աղարտվի և քաղաքացիական այս կռիվն էլ իր բնույթը փոխելով կարող է վերածվել տեղական իշխանությունների ու սիրիացիների միջև պատերազմի» (181, հտ. 3, Ա մաս, 98)։

Այդ բոլոր նախազգուշացումներից հետո և հյուպատոսների հարաճուն ճնշման պայմաններում, երբ մատնանշվում էր «մի երկու գումարտակով լեռներում փաշայի անձամբ հայտնվելու անհրաժեշտությունը» (11, 270), օսմանցիները որոշեցին գահավեժ արագություն տալ իրենց ծրագրերի իրականացման և մայրաքաղաքները դնել կատարված իրո-

ղության առաջ։ Այն բանից հետո, երբ «քրիստոնյաներն արդեն ամենուր պարտված էին և ցաքուցրիվ արված ու զինաթափված, երբ դրուզները հղփացել էին թալանով և իրենց իշխանության ենթարկել հարավային բոլոր մանրահատվածները» (11, 270), Մուհամմեդ-Սելիմ փաշան Դեյր ալ-Կամար և Զահլե օսմանյան զորքեր ուղարկեց՝ իբր տարանջատելու հակամարտող կողմերին։

1841-ի դեկտեմբերի 12-ին խոշոր զորաբանակով Պոլսից Բեյրութ ժամանեց ռազմական մինիստր սերասկյար Մուսթաֆա Նուրի փաշան, որին առաքելություն էր տրված ոչ միայն վերջ տալ արյունալի իրադարձություններին, այլև հյուպատոսներին համոզել տեղական ամիրի ներկայության պայմաններում դրուզ-մարոնական հաշտության ու հետագա համակեցության անհնարինության հարցում, այլազան խոստումներով սիրաշահել ֆեոդալ-ազնվական լեռնականներին և Լիբանան լեռան անպայման վարչակառավարման նոր սիստեմ տալ։

Փաշան, առանց նույնիսկ հյուպատոսների խորհուրդն ու հավանությունն ստանալու, 1842-ի հունվարի 13-ին Բեյրութ հրավիրեց ամիր Բեշիրին, նրան «խորամանկ սիրալիրությամբ և պատիվներով ընդունեց», ապա «խորհուրդ տվեց կամովին հրաժարվել իշխանապետությունից, որ իր համար լիբանանյան անցուդարձերից հետո անկարելի էր դարձել» և փոխարենն առաջարկեց իր տոհմի «ժառանգական տիրությունը Զուբեյլի քրիստոնեական մանրահատվածի» վրա, սակայն Բեշիրը «չհամաձայնվեց և դատ պահանջեց» (11, 270—271)։ Մինչև վերջ խրոխտ ու հերոսական, իշխանապետը ձերբակալվեց ու նավով հապշտապ Պոլիս ուղարկվեց։

Հունվարի 16-ին Բեյրութում խորհրդակցություն հրավիրելով՝ Մուսթաֆա Նուրի փաշան մարոնական ու դրուզ ավագանուն հաղորդեց, որ Բ. Դռան որոշմամբ «արյունալի իրադարձությունների գլխավոր պատասխանատու» Բեշիր Բին Կասեմը պաշտոնազրկված է և որ Շիհաբ տոհմի իշխանապետական իրավունքներին ընդհանրապես վերջ է տրված։ Փաշան հայտնեց, նաև, որ սուլթանական հրովարտակով Լիբանան լեռան առժամյա կառավարիչ է նշանակված Օմար փաշան։

Հյուպատոսների հետ ու նրանցից ավելի, անշուշտ, կատարված իրողության առաջ կանգնեցին լիբանանյան լեռնականները։ Սակայն իրենց բաղմադարյան պատմության մեջ աննախադեպ միջհամայնքային արյունալի երկպառակությամբ բզկտված, նրանք ի վիճակի չէին քիչ թե շատ լուրջ հակազդեցություն ցուցաբերելու։

Ինչ վերաբերում է Բիշիր III-ին, ապա Պոլիս հասնելուց հետո նա միաժամանակ հույսեր ուներ «գործերը կարգավորել» և իշխանության դլուխ վերադառնալ։ Այդ նպատակով նա դիմումներ էր ներկայացնում Անգլիայի դեսպանին և խնդրում համապատասխան միջամտություն կատարել Բ. Դռան մոտ։ Նրա քաղաքական բնույթ կրող խնդրագրերը լրիվ անուշադրության մատնելով, բրիտանական դեսպանությունը բավարարվում էր օսմանյան իշխանություններից պահանջելով, որ պայմաններ ստեղծվեն, որպեսզի ամիրի դոնե ընտանիքն ու հարստությունները Պոլիս ուղարկվեն... (181, հտ. 3, Ա մաս, 105)։

Համենայն դեպս 1841-ի դրուզ-մարոնական զինաբախումները ոչ միայն երկու կողմերից 1500 զոհերի, Դեյր ալ-Կամար և Զահլե քաղաքների ու 70 գյուղերի զգալի ավերածության, 4400 տների հրկիզման, քրիստոնյաների 58 միլիոն 500 հազար (117 հազար քսակ) և դրուզների մեկ միլիոն 300 հազար զուրուշի (2250 քսակ) վնասների պատճառ դարձան (4, գ. 736, թթ. 240—241), այլև պատրվակ ծառայեցին, որպեսզի օսմանցիները վերջնականապես գերեզմանեն բազմաթիվ սերունդների արյունալի ճիգերով գոյատևած լիբանանյան իշխանապետությունը։

Լիբանան լեռը, լիբանանյան ժամանակակից հողատարածքի մնացած հատվածների հետ, ենթարկվեց թուրքական ուղղակի վարչակառավարման։ Երկրի նոր պատմությունը թեակոխեց մի նոր հանգրվան։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԼԻԲԱՆԱՆ ԼԵՌԱՆ ԵՐԿԱՏՈՒՄԸ

Իշխանապետության վերացումից հետո Թուրքական ուղղակի վարչակառավարման սիստեմում Լիբանան լեռան կառավարչի պաշտոնին 1842-ի հունվարին Օմար փաշայի (1806—1871) նշանակումը պատահական ընտրություն համարել չի կարելի։ 36-ամյա փաշան, բուն անունով Միխայիլ Լատտաս, ծագմամբ խորվաթ, ըստ ոմանց՝ լեհ, ավստրիական բանակի սպայի որդի, Բոսնիայում մահմեդականությունն էր ընդունել, դարձել Օմար Լուտտի և անցել օսմանյան ծառայության։ Մուսթաֆա Նուրի մեծազդեցիկ փաշայի սիրելին, նա շատ արագ էր հագուրդ տվել իր փառասիրական նկրտումներին, ձեռք բերել բարձր աստիճաններ ու տիտղոսներ։ Ի դեպ, նա միևնույն ժամանակ առավել ազատական հայացքների տեր օսմանյան գործիչներից մեկն էր համարվում և 1863-ին մասնակցելու էր սուլթան Աբդուլ Ազիզի դեմ դավադրության։

Իր համար նոր՝ լիբանանյան-արաբական միջավայրում, որի հետ առաջին ծանոթությունը կնքել էր՝ մասնակցելով Իբրահիմ փաշայի դեմ զինական գործողություններին, նա անվանվեց Օմար ան-Նամսաուի (Ավստրիացի Օմար)։ Նորանշան կառավարիչը դա ոչ միայն բնական, այլև հաճելի գտավ, վստահ, որ ավստրիական ծագման վերաբերյալ ակնարկը, հուշելով իր Թուրք չլինելը, կարող է լեռնականների շրջանում պատրանքների աղբյուր և ժողովրդականության նպաստող հանգամանք դառնալ։

Ինչ խոսք, որ եվրոպական մայրաքաղաքներում փաշայի անձնավորությունն ու անցյալը ոչ մի տպավորություն գործել չէին կարող և Ֆրանսիայի, Անգլիայի, Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի դեսպանները, Բեշիր III-ի «պաշտոնանկության հրամանն անակնկալ կամայականություն» և Օմարի նշանակումը Լեռան դարավոր ինքնավարության կոպիտ խախտում համարելով փետրվարի 9-ին պաշտոնապես

բողոքեցին։ Նրանք Բ. Դռան «իսկական բարեկամների» անունից նաև հույս էին հայտնում, որ օսմանյան իշխանությունները շուտով «անհրաժեշտ միջոցները ձեռք կառնեն... վերականգնելու Լիբանան լեռան տեղական իշխանությունը, այն էլ մշտական կերպով, համաձայն Լեռան համայնքների նախկին առանձնաշնորհների և նրանց նկատմամբ ստանձնված հանձնառությունների» (181, հտ. 3, Ա մաս, 105—106)։ Արտաքին գործերի մինիստր Սարիմը, «խիստ տհաճությամբ» ընդունելով և «հարկադրաբար լսելով» դեսպաններին, խոստանում էր պատասխան տալ կառավարության նիստից հետո միայն, հասկացնելով, սակայն, որ «այդ պատասխանն անկասկած ժխտական է լինելու» (181, հտ. 3, Ա մաս, 106—107)։

Շիհաբների վերականգնումը խոչընդոտելն ու անհնարին դարձնելը իր գլխավոր խնդրի վերածելով, Օմար փաշան հասկանալիորեն փորձ արեց իր համար ստեղծել համայնքային ու սոցիալական անհրաժեշտ հենարան և հեռատեսորեն այն առաջին հերթին որոնեց դրուզ և մասամբ նաև մարոնական ֆեոդալ-աղնվականության շրջանում։ Շուտով, առանց մայրաքաղաքի պաշտոնական թույլտվությունն ունենալու, նա վերականգնեց իշխանազրկված դրուզ մուկատաաճիների մանրիշխանական իրավունքներն ու առանձնաշնորհները «թալանված և հրկիզված ժողովրդի վրա» (11, 273)։ Շնորհի արժանացան նաև երկու բեշիրների կողմից այս կամ այն պատճառով ետին պլան մղված մարոնական ամիրներն ու շեյխերը։

Այնուհետև, փորձելով իշխանապետի դեր խաղալ, փաշան նաև իր համար քեխիայի պաշտոնակատար որոնեց։ Նրա ընտրությունը նախ կանգ առավ Ֆութուհի Դահդահներից շեյխ Ռուշեյդի վրա, որի ներկայությունը Բեշիր III-ի դիվանում անգլիացիները դեռ անցած տարի թուրքերի օգնությամբ անկարելի էին դարձրել և որի մերժումից հետո նա դիմեց ամիր Հայդար Աբու՝լ Լամային։ Անշուշտ ոչ-առանց բարձրաստիճան հոգևորականների խորհրդին և Շիհաբների բացառման դեպքում իշխանապետական աթոռին հասնելու որոշակի հույսերի ներգործության, վերջինս ևս հրաժարվեց իրեն առաջարկվող պաշտոնից, որից անմիջապես կաուչեց իր հորեղբորորդին՝ միայն վերջերս քրիստոնյա մկրտված Բեշիր-Ահմեդը, մանավանդ, որ փաշան ընծայվող պաշտոնին ղուգակցել էր «կլորիկ մի գումար և մի խոշոր կալվածք» (79, 66—67)։ Իր իսկ կողմից վերամրապնդված շեյխերի անձնվեր աջակցությամբ ապահովվելու նպատակով, փաշան իր լիազոր-խորհրդատուի պաշտոն

շնորհեց ամիրներ Ահմեդ և Ամին Արսլան եղբայրներին, շեյխեր Մանսուր Դահդահին և Խաթթար Իմադին։

Աղնվականության որոշակի մի խավից հետո նաև ժողովրդական հենարան գտնելու և իր կառավարչության ժողովրդականությունն էլ ցուցադրելու ուղղությամբ ևս փաշան քիչ եռանդ չթափեց։ Այդ հողի վրա նրանից պահանջվում էր առավել նուրբ դիվանագիտություն, քանի որ անհրաժեշտ էր սիրալիր քայլեր անել դեպի հակամարտ երկու՝ մարոնական և դրուզական համայնքները, աշխատելով, սակայն, որ քայլերից մեկը չխաչաձևվի մյուսի հետ։

Դարաղիականները համայնքի ատիճանաչափով երևութապես գոհ էին նոր իրավիճակից, մանավանդ որ Լեռը դեռ վերջերս արյունոտած անցուդարձերի թարմ տպավորության ներքո, իրենց միջավայրում ծնունդ առած և մի քանի դար իրենց կողմից գուրգուրանքով պահպանված իշխանապետության ինքնավարության վերացումը նրանք տվյալ պահին անհեթեթորեն գնահատում էին որպես քրիստոնյաների դեմ տարած իրենց հաղթանակի փառապսակումը։ Այդ պատճառով էլ, հենց որ փաշայի քաջալերանքով սկսվեց նոր կառավարչի փառասիրությունը շոյող և դեսպանությունների դեմ դիվանագիտական պայքարում խիստ անհրաժեշտ հանրագրությունների շարժումը հօգուտ վարչակառավարման նոր սիստեմի, դրուզ վերնախավը չթերացավ ստորագրություններով ու կնքադրոշմներով կամավորապես զարդարել Պոլիս ուղարկվող այն խնդրագրերը, որոնցում շեշտվում էր. «Եթե Լիբանանում նորից քրիստոնյա կառավարիչ նշանակվի, ապա իրենք կհարկադրվեն լքել իրենց լեռները և ապաստան որոնել անապատային Հաուրանում» (11, էջ 271)։ Ավելին, թուրքական իշխանությունների հետ իր փոխհարաբերությունների սիրալիրությունը ամրաշաղախելու մտոք, դրուզ աղնվականությունը ոչ միայն վտարեց իր համայնքի միջավայրում հաստատված բողոքական միսիոներներին, հետևաբար ժամանակավորապես թուլացրեց իր կապերը անգլիական գործակալների հետ, այլև շեյխ Սաիդի նախաձեռնությամբ սերասկյարից խնդրեց քարոզիչներ ուղարկել, որպեսզի օգնեն համայնքն ամբողջությամբ ուղղափառ մահմեդական դարձնելու։ Մ. Նուրին դրուզական մանրահատվածներ ուղարկեց մեծաթիվ մոլլաներ, որոնց ղեկավարությամբ Դարաղիի հետևորդները, «թուրք սպաների աչքերի առաջ, սկսեցին նամազի ձևերը սովորել» (11, 271), մի բան, որ համայնքի ատիճանաչափով աննախադեպ երևույթ էր դրուզների անցյալում և աներևակայելի էր մնացել նույնիսկ ամիրայության դեմ օսմանյան արյունոտ բռնամիջոցների պայմաններում։

Քրիստոնյա համայնքներն, իրենք, բազմաթիվ հիմնավոր պատճառներ ունեին չհաշտվելու իշխանապետության վերացման և Թուրք կառավարչի նշանակման փաստի հետ, մանավանդ, որ Թուրք կառավարչից փաղաքշվող դրուզ ավագանու, հատկապես Նասիֆ Աբու Նակիտի բռնամիջոցները նոր վարչակարգի օրոք ամեն չափ կորցրել էին։ Ի միջի այլոց, բնականից խելամիտ և անձնական շահագրգռվածության խթանից էլ ավելի զգաստացած դարձած, Օմարը չէր կարող հաշտ աչքով դիտել դրուզ ֆեոդալ-ազնվականության անչափ խրոխտացումը։ Սակայն Մ. Նուրին, որի գլխավոր հոգսն էր դարձել «մտածմունքով, գործով ու խոսքով» սիրիական մահմեդականների շրջանում «կրոնական մոլեռանդությունը զրգռել», այն աստիճանի բարեհաճ էր դրուզների նկատմամբ, որ վերջիններս ոչ միայն սկսեցին չվախենալ «իրենց եղեռնագործությունների համար», այլև փորձեցին «իրենց օրենքը թելադրել Օմար փաշային, իրենց անկարգություններն ու անհնազանդությունները քողարկելով Բ. Դուան և նրա ներկայացուցիչներին նվիրվածության վերաբերյալ նախադասություններով» (11, 273)։ Նշենք, որ հակառակ իրեն և կառավարչին հասցեագրվող համառ գանգատագրերին, սերասկյարը քար անտարբերություն ցուցաբերեց նույնիսկ դրուզների կողմից բռնագրավված շարժուն թե անշարժ ունեցվածքը քրիստոնյաներին վերադարձնելու հարցում։

Քրիստոնյա համայնքներից գլխավորի՝ մարոնականի դիրքորոշման վրա լուրջ ներգործություն ուներ Բեշիր II-ի կուսակիցների աշխուժացումը։ Պաշտոնական ամիրի համակիրները, որոնց մեծապես աջակցում էին կղերն ու ֆրանսիական գործակալները, ոչ միայն «լեռներն ալեկոծում էին Լիբանանի կաթոլիկ ազգաբնակչության դժբախտությունները... վերագրելով հին իշխանապետի անկման», այլև ջանում էին «խոչընդոտել... ամեն մի իշխանության հաջողությունը, որպեսզի կառավարությանը մղեն ուշ կամ կանուխ վերականգնելու տապալված ամիրին կամ նրա որդիներից մեկին» (11, 271)։

Լիբանանյան համայնքների նկատմամբ նոր կառավարչության դիրքորոշման մեջ մարտի վերջերին հանկարծական դիմաշրջում արձանագրվեց և Թուրքական իշխանությունների ու դրուզների փոխհարաբերություններն էլ մեկ օրից մյուսը անակնկալորեն սրվեցին։ Գործը հասավ այնտեղ, որ ապրիլի 6-ին Օմար փաշան ճաշկերույթի նպատակով Բեյթ ադ-Դինի պալատ հրավիրելով դրուզ գլխավոր առաջնորդներին, նրանց ձերբակալեց և խիստ հսկողության ներքո Սայդայի վրայով Բեյրութ ուղարկեց։ Ձերբակալվածների թվում էին ամիր Ահմեդ Արսլանը,

շեյխեր Նաաման ու Սաիդ Ջումբլաթները, Նասիֆ Աբու Նակիտը, Հուսեյն Թալհուքը և Հաթթար Իմադը։ Ձերբակալությունից խուսափեցին ամիր Ամին Արսլանը և շեյխեր Համուդ Աբու Նակիտան ու Յուսուֆ Աբդալ-Մալիքը։ Նշենք նաև, որ ամեն մի անակնկալ կանխելու նպատակով, Թուրք կառավարիչը նախօրոք Բեյթ ադ-Դինի կայազորի թիվը հասցրել էր մինչև չորս հազարի և իր զինվորների վերահսկողության ներքո վերցրել Սայդա տանող լեռնանցքը։

Իր ժամանակին Բազիլին այն կարծիքն է հայտնել, որ դրուզ ղեկավարության ձերբակալությունը թելադրված էր «եթե ոչ քրիստոնյաների նկատմամբ հոգածությունից, ապա տերությունների նկատմամբ հարգանքից» (11, 273)։ Հարկ է ասել, որ սա այն սակավ դեպքերից է, երբ գիտնական դիվանագետը գիտությամբ թե անգիտությամբ պարզունակություն է հանդես բերել։ Սմիլյանսկայան, ընդունելով Բազիլիի բացատրությունը, մի փոքր ընդարձակել է դրդապատճառների շրջանակը. «Դրուզական կամայականությունների դեմ քրիստոնյա ազգաբնակչության բողոքները, այդ բողոքներին եվրոպական պետությունների կողմից ընձեռված պաշտպանությունը, քրիստոնյաներից խլված ունեցվածքը չվերադարձնելու դրուզ շեյխերի համառությունը և վերջապես շեյխերի հակառակամտությունը թուրքերի կրոնական քաղաքականության՝ վատացրեցին դրուզ-թուրքական հարաբերությունները» (43, 122—123)։

Իրականությունը բոլորովին այլ էր և թուրք-դրուզական փոխհարաբերությունների դիմադարձն էլ դրուզական միջավայրի նախաձեռնությամբ էր առաջացել հետևյալ պայմաններում։

Իշխանապետության վերացման հետ դրուզ ֆեոդալ-ազնվականության դգալի մի խավի հաշվելն ու թուրքական նոր վարչակարգի հետ ներտորեն համագործակցելը համայնքի ղեկավար շրջաններում բնավ էլ համընդհանուր և անվերապահ ծափողջույնների չէին արժանացել։ Ընդհակառակը։ Ուքքալները, որոնց դասին անխտիր ու պարտադրաբար չէին պատկանում բոլոր ազնվականները և որոնց շրջանում գերակշռողը միջակ ու մանր հողատերերն էին, իսկ վերջիններիս կողքին առկա էին նաև շարքային գյուղացիներ, ակներևորեն որոշակի մի շերտով դիմադիր էին հատկապես քրիստոնյաների նկատմամբ բռնամիջոցների շարունակման, ինչ որ խափանում էր Լեռան շրջանակներում երբեմնի դաշնության վերահաստատումն ու համատեղ գործողություններով ինքնավար ամիրայության վերականգնումը։

Ինչ խոսք, որ ուքքալների այդ շերտին վրդովում էր նաև ու նրան էլ ավելի ստվարացրեց ու հզորացրեց թեկուզ ձևականորեն համայնքը

սումնային հարել տալու ֆեոդալ-աղնվականության քաղաքական ներքնածալը ունեցող խորամանկությունը։ Հյուպատոս Բազիլին իր զեկուցագրերից մեկում նշել է, որ «դրուզ ավագանին շուտով վախեցավ իր հավատակիցների մոտ ազդեցությունը կորցնել օրթոդոքս իսլամին հարելու դեպքում և միջոցներ ձեռք առավ թուրքական պրոպագանդային վերջ տալու» (4, գ. 736, թ. 75)։ Ավելի ուշ շարադրված իր աշխատության էջերում նա մոտավորապես նույնն է կրկնել, այս անգամ իրավամբ «ավագանին» փոխարինելով «ուքքալներով». «Ուքքալները... սկսեցին վախենալ, որ համայնքն իրականում էլ կուլ չգնա մահմեդականության» (11, 272)։

Առավել հավանական պիտի համարել այն ենթադրությունը, որ ուքքալների ստվարացած և բավականին հզորացած տվյալ շերտը համայնքի ինքնուրույն դիմքի կորստյան երկյուղից ավելի, ուներ այլ՝ քաղաքական նկատառում։ Այդ ենթադրության օգտին է խոսում այն, որ ուքքալները շուտով Մուխթարայի ամրոցում հավաքվելով «նվիրապետության բարձրագույն աստիճանին», այլ խոսքով կրոնապետ (շեյխ ուլ-ուքլ) ընտրեցին երեց Ջումբլաթին, Նաամանին (11, 271), որ իր ժամանակին չկարողանալով կանխարգելել նախապատրաստվող միջհամայնքային արյունահեղությունը, տոհմի, հետևաբար և Ջումբլաթի քաղաքական խմբավորման պարագլխի պարտականություններից հրաժարել էր հօդուտ իր կրտսեր եղբոր՝ Սաիդի։

«Ուշագրավ է,— գրել է Բազիլին Նաամանի մասին,— որ այդ երիտասարդը մինչ այդ իր համայնքի ամենախորամանկ և նախաձեռնող շեյխն էր։ Կրոնապետ դառնալով նա հրաժարեց հասարակական ամեն մի գործի մասնակցելուց, նվիրվեց բարեպաշտական հայեցողության, բթացավ և այնուհետև միայն խառնակիչների դրդմամբ երբեմն դուրս եկավ իր սովորական անզգայությունից, որպեսզի վեճ բորբոքի եղբոր հետ, որին նախկինում սիրալիր կապված էր» (11, 271)։

Գիտնական դիվանագետի «ուշագրավ» համարած այդ երևույթներից բուն իսկ ուշագրավը վերջիններն են։ Եթե Բազիլին ճշտենք այն հարցում, որ դեռ մինչև կրոնապետ դառնալը, տոհմի և խմբավորման պարագլխությունից հրաժարելիս, Նաամանն ինքնաբերաբար արդեն հրաժարել էր նաև «հայրենական ունեցվածքն ու կալվածքները կառավարելուց» ու միաժամանակ դադարեցրել էր մասնակցությունը հասարակական-քաղաքական կյանքին, ապա հասկանալի կդառնա այն, որ դրուզ ուքքալների գերագույն առաջնորդը դառնալուց հետո միայն նա սկսել է «վեճ բորբոքել» ֆեոդալ-աղնվականության պարագլուխ դար-

ձած կրտսեր եղբոր հետ, կամ որ նույնն է՝ ինքնակամ թե հասարակական ինչ-որ խմբի պնդմամբ կրոնապետ ընտրվելով, սկսել է պաշտոնի բերմամբ հակադրվել իր սիրելի եղբորը։ Դա նշանակում է, որ երկու եղբայրները պարզապես դարձել էին դարազիական համայնքը երկփեղկող խնդիրների թելադրանքով առաջացած երկու հակադիր բևեռների առաջնորդներ։ «Եթե (Նաամանի) այդ փոփոխությունը պետք է վերագրել կրոնի ազդեցության, ապա հաղիվ թե կարողանանք թափանցել այդ կրոնի տարօրինակ օրենքի գաղտնիքներին, այն էլ հակառակ դավանության շուրջ մեր բոլոր հետազոտումներին»,—եզրակացրել է Բազիլին (11, 271), առանց փորձ անելու դարազիական հոգևոր-աստվածաբանական ուսմունքի դիտանկյան փոխարեն օգտագործելու աշխարհիկ քաղաքական-հասարակական հայացքների տեսանկյունը, որ հեշտությամբ բանալի կտար համայնքի ներքին անցուդարձերի գաղտնարաններին մատչելու։

Մեր ենթադրության ի վնաս ոչինչ չունի ապրիլի կեսերին կրոնապետ Նաամանի հետ միասին հակադիր ճակատի՝ ռազմաքաղաքական ֆեոդալ առաջնորդների խմբի ձերբակալության փաստը։ Դա առ առավելն կարող է վկայել այն մասին, որ համայնքի ներսում աշխուժացած և ըստ էության ընդհանրապես հակաօսմանյան բնույթ կրող թե պարզապես նոր վարչակարգի դեմ ուղղված խմորումների և նախապատրաստվող ինչ-որ փոթորկի մասին թեկուզ տարտամորեն տեղեկացած, թուրքական իշխանություններին կանխազգուշական ամենահարմար միջոցն է թվացել դարազիական հնարավորին չափ շատ ամիրների ու շեյխերի, թացերի հետ նաև շորերին կալանքի վերցնել։ Վերջին հաշվով անակնկալելի չէր, որ կրոնապետի և թեկուզ միայն նրա ձերբակալությունը խոր ցնցում առաջ կբերեր համայնքի շրջանակներում, ուր թի կհաներ ուքբալների բազմությունը, նրա ետևից՝ անպայման նաև ջուհալների զանգվածը, իսկ ֆեոդալ-աղնվականական ավագանին կհարկադրվեր ժամանակավորապես դիմադարձ կատարել, ինչ որ բոլոր դեպքերում կնշանավորեր նաամանականների հաղթանակը։ Դրա համար էլ նախընտրելի էր միաժամանակ անգլուխ թողնել համայնքը, կրոնապետի հետ կալանքի վերցնելով ինչքան հնարավոր է մեծ թվով ամիրների ու շեյխերի։ Դեռ կտեսնենք, որ օսմանյան իշխանությունների միջոցառումը եղավ այն ազդակը, որ նպաստեց իրադրության և փոխհարաբերությունների բյուրեղացման։

Լիբանանյան համայնքների նկատմամբ թուրքական նոր կառավարչության դիրքորոշման և հատկապես դրուզ-օսմանյան փոխհարաբերու-

թյունների վրա իր որոշակի կնիքը դրոշմեց նաև Պոլսում դեսպանների և Բ. Դռան միջև մղվող դիվանագիտական պայքարը։

Հաշվի առնելով, որ հինգ տերությունների դեսպանները «բանավոր թե գրավոր, այլ միայն դիտողության կարգով» արծարծում էին Լիբանան լեռան վարչակառավարման հարցը, արտաքին գործերի մինիստր Սարիմը 1842-ի մարտի 17-ին հուշագրով հաղորդում էր նրանց, որ «մշտական ու կորովի միջոցառումների» դիմելուց առաջ անհրաժեշտ է համարել լիազոր կոմիսարի հանդամանքով Բեյրութ ուղարկել հռչակավոր Ալի փաշա Յանինայի Թոռ Սելիմ բեյին, որպեսզի «որդեգրվելիք որոշակի սիստեմի» շուրջ առաջարկություններ բերի և հնարավոր դարձնի «Լիբանան լեռան բավարարություն տվող շնորհների ընձեռումը» (181, հտ. 3, Ա մաս, 109—110)։ Եվ քանի որ Սելիմ բեյի առաքելությունը պարզապես ժամանակ շահելու ու նոր վարչակարգի հետ մտքերը հաշտեցնելու նպատակն էր հետապնդում, ապա անհրաժեշտ էր Լեռան վրա Օմար փաշայի շուրջ հնարավորին չափ շուտ համախմբել ազգաբնակչության լայն զանգվածներին, ուրեմն և ամեն գնով սիրաշահել քրիստոնյաներին, առաջին հերթին մարոնականներին։ Այս իմաստով էլ զարմանալի չէ, որ սերասկյար Նուրիին և կառավարիչ Օմարին հանձնարարվեց ամեն գնով «վստահություն ներշնչել քրիստոնյա համայնքներին՝ նրանց բոլոր տեսակի հնարավորություն ընձեռելով»։ Բնականաբար քրիստոնյաներին վստահություն ներշնչելու տեսակետից ևս ներգործուն գայլ էր դրուզ ավագանու դեմ կիրառված միջոցառումը, որի անմիջական ու գլխավոր արդյունքներն եղան դեյր ալ-կամարցիների գունդ առ գունդ վերադարձը, «փաշայի հովանավորության ներքո» իրենց բռնախլված տներին ու այգիներին վերատիրելը և բացառապես քրիստոնյաներից ժողովրդական ոստիկանության կազմակերպումը (11, 273—274)։

Թուրքական իշխանությունները ժամանակն եկած համարեցին իշխանապետության վերացման հետ եվրոպական պետություններին վերջնականապես հաշտեցնելու համար դիմելու առաջնային զենքի՝ լեռնականների հանրագրությունների օգնության։ Նրանք քաջ գիտեին, որ տերությունների երևութական միասնականության ետին խոր ճեղքվածքներ կային։ Ֆրանսիան եղել էր ու մնում էր Շիհաբների քրիստոնեական ամիրայության վերականգնման մոլեռանդ կողմնակից, այն էլ Բեշիր II-ի կամ նրա Ամին որդու ղեկավարությամբ, մինչ Բեշիր II-ին տապալող դաշնակիցները, չհամաձայնելով ինչպես նրա, այնպես էլ որդու թե վերջին Բեշիրի թեկնածության, տարբեր տեսակետների էին։ Ավստրիան կաթոլիկ որևէ իշխանավորի գլխավորությամբ Լեռան ամ-

բողջության թե զգալի մասի վրա ինքնուրույնության վերահաստատման տենչացող էր։ Անգլիան, ընդհակառակը, կցանկանար երբեմնի ամիրայությունը վերածնված տեսնել, սակայն այն պայմանով, որ ցանկացածդ համայնքին թե տոհմին պատկանող իշխանավորն իր մարդը լիներ և հոգ տաներ բրիտանական քաղաքական, տնտեսական ու մյուս շահերի ապահովման։ Ռուսաստանի համար կենսականը օրթոդոքս համայնքի նկատառումների հաշվառումն էր, երկրամասում իր ազդեցության ամրապնդումը, նաև Օսմանյան կայսրության քրիստոնյաների ճակատագրի հարցում իր անզանցառելի մասնակցության երաշխավորումը։

Այս բոլորին այս կամ այն չափով տեղյակ, Մուսթաֆա Նուրին, որի կյանքի նպատակն էր դարձել իր հովանավորյալ Օմարի դիրքերի ամրապնդումը և որին որպես հլու կամակատար միացել էր լիազոր կոմիսար Սելիմը, ձևականորեն «ժողովրդին առաջարկելով աներկյուղ արտահայտել իրենց զգացմունքները», գործնականում սկսեցին Օմարի գլխավորած նոր վարչակարգի օգտին և Բ. Դռան հասցեագրված հանրագրություններ թխել տալ բարձր վարձատրությամբ հատկապես հավաքագրված գործակալների (79, 67)։

Մարոնական շարքային գյուղացիները, հետևելով պատրիարքի կոչին, ով ինչպես կարող էր, դիմադրում էին ստորագրությունների հանգանակման։ Առանձին ֆեոդալ-աղնվականներ, այդ թվում Ռուշեյդ Դահդահը, ճիշտ է՝ ֆրանսիական հյուպատոսարանի և Շիհաբների վերադարձի անխոնջ կողմնակիցների հառնդագին աջակցությամբ, իրենք ևս աներկյուղ քարոզչության էին ձեռնարկել հանրագրությունների դեմ (37, 111)։

Թուրքասիրական հանրագրություններին կրավորական դիմադրությունը շուտով վերածվեց հակաթուրքական հանրագրությունների շարժման, որի դեմ իշխանություններն սկսեցին կիրառել խիստ միջոցներ. ահաբեկում, բանտարկություն, աքսոր են։

Անգլիական դիվանագիտությունը, մարոնական համայնքի և օսմանյան փաշաների փոխհարաբերությունների սրմամբ շահագրգռված, կարող էր իրավիճակից միայն բավականություն զգալ, եթե շուտով ակներև չդառնար մի կարևոր հանգամանք. հանրագրություն-հակահանրագրություն թոհուբոհից ոչ միայն վերամրապնդվում էին ֆրանսիական դիրքերը Լեռան քրիստոնյա ամբողջ ազգաբնակչության շրջանում, այլև զորանում և աշխուժանում էր բեշիրյան կուսակցությունը։ Շուտով հանրագրությունների շարժման դեմ այս կամ այն նկատառումով և բավականին խիստ դիրքորոշվեցին, բացի անգլիականից, նաև եվրոպական

մյուս գլխավոր պետությունների հյուպատոսները, մանավանդ որ նրանց վերադաս դեսպանները, ֆրանսիական և անգլիական իրենց պաշտոնակիցներին միավորված, թեկուզև յուրաքանչյուրն իր հաշիվներից ելնելով, Պոլսում բուն պայքար էին մղում Լիբանան լեռան վրա իրերի երբեմնի վիճակը գոնե մոտավորապես վերականգնելու համար։

Մայիսի 27-ին արտաքին գործերի մինիստր Սարիմը, ծովակալ Թահիրը, արդարադատական խորհրդի նախագահ Արիֆը և օսմանյան այլ աստիճանավորներ հանդիպում էին տերությունների ներկայացուցիչների հետ և քննարկում լիազոր կոմիսար Սելիմի կողմից ուղարկված հաշվետվությունն ու «մարոնական շեյխերի և Լիբանան լեռան այլ նշանավորների» կողմից ստորագրված չորս խնդրագրերը։

Խնդրագրերից մեկը, որի պատճենը բաժանվում էր դեսպաններին և որ շարադրված էր «Լիբանան լեռան բնակիչների» անունից, քրիստոնյա կամ դրուզ որևէ աղնվականից նախապատիվ էր համարում կայսրության «հավատարիմ հպատակներից որևէ մեկի» կառավարիչ նշանակումը, ընդգծում էր Օմարի օրոք «փոխադարձ ատելության ու լարվածության իսպառ վերացումը», «բնակչության շրջանում վստահության և անդորրության վերահաստատումը» և վերջապես, մատնանշելով «մի քանի Շիհաբ ամիրների..., նրանց մանկլավիկների և օտար պետությունների գործակալների տարածած շշուկներն» այն մասին, որ «իբր Օմար փաշայի կառավարիչ նշանակումը եղել է ազգաբնակչության կամքին հակառակ և որ իբր Լեռան բնակիչների համար ցանկալի է Շիհաբ տոհմի իշխանության գլուխ վերադարձը», սպառնում էր Շիհաբ կամ դրուզ թե մարոնական որևէ այլ իշխանապետի նշանակման դեպքում «ցաքուցրիվ լինել Օսմանյան կայսրության տարբեր մասերում՝ նրա բռնություններից ազատ մնալու համար» (181, հտ. 3, Ա մաս, 119—121)։

Ինչպես ցույց է տալիս հանդիպման արձանագրությունը, առաջինը խոսք առնելով Անգլիայի դեսպանն ընդգծում էր, որ Սիրիայից իր ստացած հաղորդագրություններում Մուսթաֆա Նուրիի ուղարկած աղերսագրերը բնութագրվում են որպես սպառնալիքներով ու խոստումներով կորզված։ Մյուս դեսպանները հաստատում էին, որ իրենք ևս ստացել էին համանման հաղորդագրություններ և որ իրենց տրամադրության ներքո առկա են միևնույն ստորագրությունները կրող և Շիհաբ տոհմի իշխանապետական իրավունքի վերականգնումը պահանջող այլ հանրագրություններ (181, հտ. 3, 113—119)։

Հենց մայիսի 27-ի պոլսական հանդիպման ընթացքում էլ, Շիհաբների վերականգնման վերաբերյալ անգլո-ավստրիական ռազմավա-

բական խոսակցություններից անմիջապես հետո, երբ «Թուրք մինիստրները համառորեն պնդում էին այն բանի վրա, որ Շիհաբների վերերումն իսկ ապստամբության ազդանշան է դառնալու ոչ միայն Լեռան, այլև դրուզաբնակ մյուս երկրամասերի շրջանակներում և որ այդ անկարգությունների ճնշումը անհրաժեշտ է դարձնելու մեծ ծախսեր, ռազմական զգալի ուժերի առաքումը և մարդկայնության ու տերությունների ցանկության կողմից մերժելի խստամիջոցների կիրառումը», ավստրիական դեսպանի նախաձեռնությամբ ասպարեզ էր նետվում Լիբանան լեռան երկատման վերաբերյալ Մետերնիխի մայիսի 17-ի հեռագրում արվագծված ծրագիրը։ «Խստամիջոցներից դուրս մի՞թե չկա վարչական որևէ միջոցառում,— հարց տրվեց (Թուրք մինիստրներին),—... որ կանխարգելի Բ. Դռան մատնանշած վտանգները և բավարարություն տա բոլոր կողմերին։ Եվ երբ Թուրք մինիստրները որոշ բացատրություն խընդրեցին, նրանց (դարձյալ) հարց տրվեց, որ Բ. Դուռը դեմ կլինի՞ արդյոք այն լուծման, որի հիմամբ դրուզներն ու մարոնականները դրվեն իրենց համայնքին պատկանող երկու տարբեր զեկավարների (վարչակառավարման) ներքո» (181, հտ. 3, Ա մաս, 118—119)։ Օսմանյան իշխանությունները որպես «անիրագործելի» անմիջապես մերժեցին իրենց համար անակնկալ այդ ծրագիրը, պատճառաբանելով, որ «դրուզներն ու մարոնականները միախառը ապրում են միևնույն մանրահատվածներում»։ Նրանք նույնիսկ չցանկացան լսել այն մասին, որ «այդ միախառնումը լոկ երկու կամ երեք շրջաններում է և որ դրուզների ու մարոնականների մեծամասնությունն ապրում է տարանջատ մանրահատվածներում» (181, հտ. 3, Ա մաս, 119)։

Չի կարելի կասկածել, որ Լեռը երկատելու ծրագիրը Վիեննայում բնավ էլ միանգամից չէր ծնվել և որ այն Մետերնիխի հետ միասին ուներ և մի այլ՝ անգլիացի հայր, թեկուզ և վերջինս առ այսօր անվանապես հայտնի չէ պատմագրության։ Նույնիսկ հնարավոր է ենթադրել, որ ավստրիական կաթոլիկ արքունիքը պարզապես մի քողածածկույթ էր, իր էությամբ առաջին հերթին Անգլիայի շահերին պատշաճող այդ ծրագրից նախ և առաջ Ֆրանսիան, ապա նաև Ռուսաստանն ու Պրուսիան չխրտնեցնելու համար։

Ի՞նչ հիմքով ենք այստեղ այդ ենթադրությունն անում։ Ոչ միայն այն հիմամբ, որ 1841-ի արյունալի իրադարձություններից անմիջապես հետո որպես պղպջակ օդ նետված այդ ծրագիրը Ֆրանսիայի կողմից գնահատվելու էր որպես «Լիբանան լեռան վրա քաղաքացիական պատերազմի կազմակերպման» լավագույն միջոց, հետևաբար և անընդունելի,

Բեկետ Թուրք ատիճանավորներն էլ չէին հապաղելու համաձայնել Ֆրանսիական այդ գնահատականի հետ (114, հտ. 4, 206)։ Կան և այլ, ավելի լուրջ հիմքեր։

Բողոքականությունը որպես հերետիկոսություն, հետևաբար և անգլիացիներին որպես հերետիկոս պժգալի համարող մարոնական համայնքը Ֆրանսիայից խզելու անհնարինության միջհամայնքային բախումներից հետո ավելի ևս համոզված, նաև դեռ 1841-ի աշնանից իր հաղթաթղթերի հաջողությունը բացառապես դարավոր համայնքի հետ առնչած, Անգլիան 1842-ի սկզբներից իրոք էլ Լեռան երկատմամբ շահագրգռված գլխավոր կողմերից մեկը կարող էր լինել։ Լեռը լրիվ նվաճելու հույսը վերջնականապես կորցրած, Անգլիան չէր կարող դեմ լինել Լիբանան լեռան մի մասի, թեկուզ հիմնականում պատմականորեն դրուզական համարվող մասի վրա բացարձակ ներգործություն ունենալու հեռանկարին։

Մեր կարծիքով Ալբիոնը առաջին հերթին համոզված էր, որ Ֆրանսիան ոչ մի կերպ չի հաշտվելու լիբանանյան նոր վարչակարգի հետ և վերջինիս անկասկածելիորեն դժգոհ իր համակրին՝ մարոնական համայնքին, դիվանագիտական իր պայքարին զուգընթաց, անպայման պայքարի է դուրս բերելու Թուրքական իշխանությունների դեմ։ Դրա հետևանքով անխուսափելիորեն սրվելու են ոչ միայն Փարիզի և Բ. Դռան, այլև օսմանյան իշխանությունների ու մարոնականների հարաբերությունները։ Թուրքական վարչակառավարման նոր սիստեմի դեմ մարոնականների հակազդեցության ուժգնության հետ հավասար համեմատական են լինելու Նուրի և Օմար փաշաների խստամիջոցները, որոնց հետևանքով էլ ոչ միայն մարոնական համայնքն է խեղճանալու, զուցե նաև ղլխատվելու դարաշիականի նման, այլև նրա պաշտպանության ի խնդիր բնականորեն սրվելու են մի կողմից Ֆրանսիայի ու մյուս կողմից Լեռնտի կաթոլիկների հովանավորության նորահայտ հավակնորդ Ավստրիայի առանց այդ էլ անսիրալիր փոխհարաբերությունները, հետևաբար ամրապնդվելու է անգլո-ավստրիական մերձակցությունը։ Միաժամանակ անգլիական դիվանագիտության համար հնարավորություն է ստեղծվելու հանդես գալ որպես միջնորդ ու նույնիսկ դատավոր և իր վճռական խոսքն ունենալ վարչակառավարման ապագա սիստեմի թե այդ սիստեմի ղեկավարի անձնավորության հարցում։

Անգլիան չէր կասկածում, նաև, որ Բեշիր III-ի, ուրեմն և Շիհաբ տոհմի իշխանապետության վախճանը տվյալ պահին մարոնականների հետ երենց դինարախման փառապսակումը համարելով, դրուզներն առ-

Նրվաղն պիտի համակերպվեին նոր վարչակարգին, հետևաբար անխուսափելիորեն պիտի լարվեին ինչպես դրուզ-մարոնական, այնպես էլ հատկապես դրուզ-ֆրանսիական փոխհարաբերությունները։ Առաջին դեպքում եթե նոր ասպարեզ էր բացվելու բրիտանական դիվանագիտության դերի աշխուժացման առաջ, ապա երկրորդ դեպքում խափանվելու էին դարաղիական համայնքի շրջանում Ֆրանսիայի նկատմամբ առկա եթե ոչ սրտակցական, ապա գոնե բարեկամական զգացմունքները, նաև անգլիասեր ջումբլաթականների ի հեճուկս ֆրանսիական գործակալների հետ սերտ կապեր հաստատելու յաղրեկիական ջանքերը (37, 114)։ Այդ ամենի արդյունքը պիտի լիներ դարաղիականների ամբողջ համայնքի բացարձակ անգլիասիրական կողմնորոշման անցնելը, բրիտանական մենիշխան ազդեցության ենթարկվելը։

Բրիտանական այս բոլոր հաշվարկների կենսագործման համար ժամանակ էր անհրաժեշտ։ Անհրաժեշտ էր ամեն գնով ձգձգել Լեռան վրա նախկին վարչակառույցի վերահաստատումը և նույնիսկ, առանց իրադրության վերահսկողությունը կորցնելու, աջակցել Օմար փաշայի վարչակառավարման։ Ի դեպ, 1842-ի սկզբներին այդ աջակցությունը, հակառակ անգլիական գործակալների բողարկման բոլոր ջանքերին, այնքան ակներև էր, որ Օմարի դեմ առավել կորովի պայքարող մարոնական պատրիարքին առևանգելու Մուսթաֆա Նուրիի ծրագրին աջակցելու պատրաստակամության մեջ մեղադրվեց նաև անգլիական հյուպատոս Ռոուզը (114, հտ. 4, 180—181)։

Եվ սակայն Լոնդոնում շուտով գլխի ընկան, որ գերագնահատել են թուրք փաշաներին Պոլսում թե Բեյրութում որպես խամաճիկ ըստ կամս վարելու իրենց հնարավորությունը և ընդհակառակը թերագնահատել ոչ միայն Օմարի իշխանատենչության հաստատունությունը, այլև Լիբանան լեռան վրա իրերի նախկին վիճակին չվերադառնալու Բ. Դոան հաստատակամությունը։ Ավելի կարևորն, ինչ խոսք, վերջինն էր և այն թուլացնելու լավագույն միջոցը դիվանագիտական ճնշումը կարող էր լինել։ Եվ ահա օգոստոսի 28-ին բրիտանական դեսպան Կեննինգը օսմանյան արտաքին գործերի մինիստրին հայտնելով, որ իր կառավարությունը «ցանկանում է սուլթանի օրինական իշխանության պահպանումը, սակայն այնպես, որ Լիբանան լեռը վայելի երաշխավորված մնայուն անդորրություն և բարվոք վարչակառավարում, որոնք հիմնված լինեն իր հնամենի առանձնաշնորհների վրա», վերստին արծարծում էր Լիբանան լեռը երկատելու ծրագիրը։

Այդ ծրագրի էությունը հետևյալն էր.

1. Լիբանան լեռան վրա սուլթանական գերիշխանությունը գործնականացվելու է «ամբողջ երկրամասի վերահսկիչ» մի վեզիրի կողմից, որի նստավայրը պետք է լինի Լեռան մոտիկ մի վայր, սուննիների շրջապատում, այլ խոսքով Սայդայում կամ Բեյրութում։ Այդ իշխանավորը անպայման պետք է լինի «արդար, զուսպ և հաստատակամ»։

2. Լեռան դրուզական և քրիստոնեական հատվածների վարչակառավարման համար սուլթանը որպես ղեկավար նշանակելու է համապատասխանաբար դրուզ և քրիստոնյա երկու ամիրների, որոնց նստավայրը պետք է գտնվի Լեռան վրա, իրենց դավանակիցների միջավայրում։ Այդ ամիրները պետք է լինեն «անցյալի խառնակությունների, տառապանքների և սոիրների հետ» որևէ կերպ չառնչված մարդիկ։

3. Լեռան ապագա անդորրությունը երաշխավորելու համար օսմանյան կառավարությունը պետք է «անհապաղ Սիրիայից հեռացնի ալբանական ավազակախմբերը, որոնք երկար ժամանակ ահ ու սարսափ տարածեցին Լեռան խաղաղ բնակչության շրջանում» (181, հտ. 3, Ա մաս, 121—123)։

Սեպտեմբերի 16-ին Բ. Դուռն ընդունում էր այդ պահանջներից հիմնականները։

1. Օմար փաշան ետ է կանչվելու և Լիբանան լեռան վարչակառավարման գործը հանձնարարվելու է Սայդայի փաշային։

2. Բեյրութի ալբանական կայազորը երկրամասից հեռացվելու է։

3. Մարոնականներին վճարվելու է 20 հազար քսակի վնասուց հատուցում։

Սեպտեմբերի 27-ին դեսպաններին լրացուցիչ հաղորդվում էր, որ դրուզ և մարոնական կառավարիչների անլույծ մնացած հարցի շուրջ սուլթանը տվել է այսպիսի որոշում.

1. Դրուզական և մարոնական հատվածները կառավարելու համար Սայդայի փաշան նշանակելու է երկու «ընդունակ և ուղղամիտ» թուրք կայմակամներ։

2. Երկու համայնքներին իրավունք է շնորհվում իրենց միջից ընտրել և Բեյրութի կառավարչի մոտ որպես մշտական ներկայացուցիչ ուղարկել երկու վեքիլների (181, հտ. 3, Ա մաս, 123—126)։

Օսմանյան կառավարության կողմից առաջարկված լուծումը, սակայն, չէր կարող բավարարել ո՛չ դեսպաններին, ո՛չ լիբանանյան համայնքներին, ոչ էլ Լեռան թուրքական իշխանություններին, առաջին հերթին Օմար փաշային։ Լիբանանյան հարցը պարզապես վերածվել էր,

ինչպես առակում, կարապի, ձկան ու խեցգետնի կողմից տարբեր ուղղություններով քաշքշվող նավակի։

Մարոնական ֆեոդալ աղնվականության շիհաբական հոսանքը, որ օգոստոսի վերջերին Ղազիրում պայթած և Շիհաբ տոհմից չորս շեյխերի մահվան պատճառ դարձած ներքին գզվռտոցից նոր-նոր էր սթափվում, փոխ-ծովակալ Լասյուսի դրոշով ֆրանսիական նավատորմի Բեյրութի բացերում երևալուց լրացուցիչ շունչ ստացավ և ապստամբության դրոշ պարզեց (4, գ. 736, թ. 274։ 11, 274)։ Առանց այդ էլ կենտրոնական և հյուսիսային լեռնագոտիներում խռովահույզ վիճակ էր տիրում։ Մարոնական շինարար բանվորներին Աքա տարապարհակ աշխատանքների ուղարկելու, քրիստոնյաների վառոդի արհեստանոցները փակելու և դրուզ-մարոնական զինաբախումների ժամանակ պետական ածխահանքերին հասցված վնասների դիմաց երկու հազար քսակի տուգանք պահանջելու Օմարի համառության դեմ դեռ գարնանը Մեթնում դյուղացիությունը զենք էր վերցրել և թուրք կառավարչին հարկադրել դիջումների գնալ (4, գ. 736, թ. 75 և 81)։ Ինչ վերաբերում է մարոնականների սեպտեմբերյան հակաթուրքական զինված ելույթին, ապա դրա աղդանշանը տվեց Բեշիր II-ի մոտիկ ազգական ամիր Աբդալլան, որ իր հետևորդներով քաշվեց Իհդինի շրջան, ուրբի հանեց դյուղացիական ջոկատների և ջախջախեց իր ետևից ուղարկված պատժիչ դումարտակը (11, 274)։

Մուսթաֆա Նուրին, որ ավելի անմիջականորեն հետևում էր դրուզական մանրահատվածների խռովահույզ վիճակին, դիմեց մահակի ու կարկանդակի քաղաքականության։ Հյուսիս ուղարկելով Բեյրութի ալբանական կայազորն ու այլ զորագնդեր, հրամանատար Մեհմեդ փաշային կարգադրեց «սահմանափակվել սպառնալիքով և բավարարվել լեռնականների ինքնարդարացմամբ, խնամքով խուսափելով տհաճ գործողություններից»։ Վերադասի կարգադրության համաձայն, փաշան «առանց զենքի» բարձրացավ Իհդինի շրջան և հաշտություն կնքեց լեռնականների հետ։ Ավելին, սերասկյարն ընդունելով, որ թուրք «զինվորների անկարգություններն են համբերությունից հանել կառավարության հավատարիմ ու նվիրյալ լեռնականներին» կարգադրեց ռազմական ատյանի տալ պատժիչ զինարշավի հրամանատարին (11, 275)։

Մուսթաֆա Նուրին, ինչպես և աշնանասկզբին Հալեպից Սայդա փոխադրված Ասադ փաշան, Ադրիանապոլսի ենիչերիների հռչակավոր դահիճը, մարոնականներին դիջելու, Բաղիլիի բառերով՝ «նրանց փաղաքշելու, 1841-ի վնասների հատուցման հարցում հույսեր տալու, հարկ

չպահանջելու և նրանց բոլոր ելույթները անպատիժ թողնելու» լուրջ պատճառներ ունեին։

Բանն այն էր, որ Ջուրդի մանրիշխան Յուսուֆ Աբդ ալ-Մալիքի ղեկավարությամբ ապստամբության նախապատրաստվող դրուզները, որոնց վրա տվյալ պահին գերակշիռ ազդեցություն յազբեկի խմբավորումն էր ձեռք բերել, մարոնական պատրիարքին առաջարկել էին վերջ տալ երկպառակությունների ու վերանորոգել միջհամայնքային դաշինքը, քանի որ «միայն այն կարող է կանխարգելել երկու համայնքների կործանումը»։ Կոչ անելով վերադառնալ «մարոնականների կողմից Այն Անուրի ժողովում բացահայտված զգացմունքներին», դրուզները պատրաստակամություն էին հայտնել ոչ միայն հատուցելու 1841-ին քրիստոնյաների կրած բոլոր վնասները, այլև համաձայնելու Շիհաբների իշխանության գլուխ վերադարձին, պայմանով, որ թուրքերի դեմ առաջինը մարոնականները զենք վերցնեն (11, 275)։

Ֆրանսիական հյուպատոսը խորհուրդ էր տվել ընդունել դրուզների առաջարկությունը և միասնաբար ոտքի ելնել Օմար փաշայի դեմ, սակայն մարոնականները հակաառաջարկներ էին ներկայացրել. դրուզներն իրենց բոլոր շեյխերի ստորագրությամբ ու կնիքով համաձայնագիր պետք է տան Շիհաբների վերադարձին իրենց համամտության որպես երաշխիք և առաջինն իրենք պետք է հարված հասցնեն օսմանցիներին։ «Այդ հողի վրա,— վկայել է Ջերջիլը,— ծագեց վեճ, որը հարթել հնարավոր չեղավ, քանի որ կողմերից յուրաքանչյուրը մյուսի մտադրություններին կասկածամտությամբ էր նայում» (80, 75—76)։

Օսմանցիները, հաղորդել է ռուսական հյուպատոսը, «մարոնականների դժգոհանքը նվազեցնելու և իրենց սպառնացող դաշինքը խորտակելու համար դիմեցին ամեն մի խորամանկության ու խաբեության» (11, 274)։ Անգլիական ռեզիդենտն, իր հերթին, լրացրել է մարոնականներին սիրաշահելու համար օսմանցիների ի գործ դրած միջոցների թվարկումը. «վեզիրի հրամանը մարոնական պատրիարքի անձեռնմխելիության վերաբերյալ, թուրք կառավարչի օգտին հանրագրությունները ստորագրելուց հրաժարվելու հանցանքով բանտարկված առաջնորդների ազատ արձակումը, դրուզների կողմից թալանված իրենց գույքը վերադարձնելու խոստումը, մեկին թուր ու մյուսին խալաթ, ժամացույց և մի քանի հարյուր զուրուշ նվիրելը» (80, 75—76)։

Ուրվագծվող փոթորիկը կանխարգելելու համար Օմար փաշան նույնիսկ դիմեց ստոր միջոցի՝ միջհամայնքային նոր զինաբախում հրահրելու փորձի։ Նա Բեյրութում բանտարկված Խաթթար Իմադին ազատու-

թյուն խոստացավ, պայմանով, որ համաձայներ կազմակերպել ու գլխավորել իբր թե խռովահույզ Քեսրուանում և Ջահլեում նախապատրաստվող քրիստոնեական ապստամբությունը կանխելու գնացող դրուզական աշխարհազորը։ Դրուզ շեյխից մերժում ստանալով, փաշան քրիստոնյաներին ապարդյուն կոչ արեց նախահարձակ լինել դրուզների վրա, որոնք իբր ոչ թե թուրքական իշխանությունների, այլ երկրորդ անգամ մարոնականների վրա նետվելու էին պատրաստվում (114, հտ. 4, 187)։

Բոլոր դեպքերում դրուզները, մարոնականների զինակցությունն ապահովելու ամեն հույս կորցրած, որոշեցին մենակ հանդես գալ։ Հոկտեմբերի վերջերին լիբանանյան դրուզ լեռնականների կոչով Շիբլի Արիանը Անդրլիբանանի և Հաուրանի երեք հազար դավանակիցներով Բիկաայի վրայով բարձրացավ Շուֆ, գրավեց Մուխթարայի ամրոցը, կտրեց Բեյրութ-Դամասկոս խճուղին, շրջափակեց Բեյթ ադ-Դինը և Օմար փաշայից պահանջեց ազատ արձակել դրուզ շեյխերին, լեռնականներից զինվոր չվերցնել ու զինաթափում չանցկացնել, երեք տարվա հարկազերծում խոստանալ և իշխանությունից հրաժարելով վերականգնել լիբանանյան ամիրայությունը։ Մարոնականների ինքնասիրության հասցեագրված վերջին պահանջին զուգահեռ Արիանը ինք ևս փորձեց որպես դաշնակից իր կողքին կանգնեցնել կենտրոնական և հյուսիսային մանրահատվածների ֆեոդալ-աղնվականներին, սակայն նույնպես հաջողություն չունեցավ։

Ասադ փաշան զիջումների դիմեց։ Ձերբակալված շեյխերից երեքին Սաիդ Ջումբլաթի գլխավորությամբ ազատ արձակելով Արիանի մոտ ուղարկեց, խոստանալով անհապաղ պաշտոնազրկել Օմարին և նոր կառավարիչ նշանակել։ Շեյխերը, սակայն, ապստամբներին միացան և ծանրացրեցին Բեյթ ադ-Դինի կայազորի դրությունը։

Էյալեթի կառավարիչը Ռաշիդ փաշայի հրամանատարությամբ Բեյրութից ծովով Սայդա և այնտեղից Շուֆ՝ ապստամբների թիկունքը հասցրեց հրետանիով զինված կանոնավոր մի զորաբանակ։ Իր հերթին Օմար փաշան, համաձայն կանխօրոք մշակված պլանի, ամրոցից դուրս եկավ և ճակատային հարձակման անցավ։ Երկու կրակի միջև ընկած, Արիանը կատաղի դիմադրություն ցույց տվեց, հուսալով, որ Անթիլիասում հավաքված և դրուզների ապստամբության հարելու հարցը քննարկող մարոնական վերնախավը դրական որոշում կընդունի և օգնության կհասնի։ Եվ սակայն Ասադ փաշային հաջողվեց ապահովել քրիստոնյաների ոչ միայն չեզոքությունը, այլև Աբու Սամրայի հրամանատարու-

Բյամբ մարոնական աշխարհազորային մի գնդի եռանդուն մասնակցությունը դրուզներին ճնշելու գործին (199, 120—124)։ Ավելի քան հազար զոհ տալով, Արիանը հարկադրվեց նահանջել Բիկաա և ապա անցնել Դամասկոս, որտեղ Ահմեդ փաշան նրան խաբեությամբ ձերբակալեց և ուղարկեց Պոլիս։ Նրա ընկերակիցներ ամիր Ամին Արսլանը և շեյխեր Սաիդ Ջումբլաթն ու Յուսուֆ Աբդ ալ-Մալիքը ձերբակալությունից խուսափեցին՝ Դամասկոսի անգլիական հյուպատոսի տանը թաքնվելով։ Հաղթական Օմարը հրկիզեց և ավերեց դրուզների միջնաբերդը՝ Մուխթարան (11, 276—277)։

Դրուզական ապստամբությունը արագացրեց Լիբանան լեռան համար որոնվող հանգուցալուծումը։

Նոյեմբերի 23-ին, երբ Արիանը դեռ շարունակում էր Օմար փաշային Բեյթ ադ-Դինում պաշարված պահել, Պոլսի անգլիական դեսպանը սպառնալից երանգի հուշագրով արտաքին գործերի մինիստր Սարիմից պահանջեց դեսպանների հետ հանդիպում ունենալ և «իրենց ամբողջ ծավալով հաղորդվել Լիբանանի հարցում մեծ պետությունների նկատառումների հետ» (144, հտ. 2, 350)։ Օսմանյան կառավարությունը, հասուկ նիստում այդ պահանջը քննարկելով, սուլթանի համամտությամբ դեկտեմբերի 7-ին պատասխան հուշագիր հանձնեց դեսպաններին, հաղորդելով, որ «այդքան փափուկ այլ իր ներքին գործերից մեկն եղող հարցի լուծման հանգելու համար» նախընտրել է համաձայնել տերությունների ցանկության՝ մարոնական և դրուզ կայմակամների նշանակման հետ։ «Եվ սակայն,— ավելացնում էր հուշագիրը,— քանի որ Ֆ. Դեան և մեծ պետությունների տեսակետները երկուսն էլ բացահայտորեն ձգտում են միևնույն նպատակին՝ Լեռան վրա բարվոք կարգերի հաստատման, երկու կողմերից առաջարկված սիստեմներից որն էլ որ ընդունվելու լինի, ապա այն առաջին հերթին պետք է փորձնական համարվի»։ Այլ խոսքով, եթե տերությունների սիստեմի օգնությամբ «Սիրիայում անդորրությունը չվերահաստատվի..., ապա նորին վեհափառության կառավարությունը իրավունք պիտի ունենա» իր սիստեմը կիրառելու։ Հուշագիրը նաև ընդգծում էր, որ Ասադ փաշային հրահանգներ են ուղարկված «ընտրելու և նշանակելու երկու կայմակամներ, ...տեղաբնիկ տարրերից և սակայն ոչ Շիհաբ տոհմից, համաձայն մեծ պետությունների կողմից արդեն իսկ ընդունված կարգադրության» (181, հտ. 3, Ա մաս, 66—68)։

Դեկտեմբերի 7-ին, օսմանյան հուշագրի ուղարկման օրն իսկ, Ասադն իր ստացած հրամանի համաձայն պաշտոնանկում էր Օմարին և

թյուն խոստացավ, պայմանով, որ համաձայներ կազմակերպել ու գլխավորել իբր թե խռովահույզ Քեսրուանում և Զահլեում նախապատրաստվող քրիստոնեական ապստամբությունը կանխելու գնացող դրուզական աշխարհազորը։ Դրուզ շեյխից մերժում ստանալով, փաշան քրիստոնյաներին ապարդյուն կոչ արեց նախահարձակ լինել դրուզների վրա, որոնք իբր ոչ թե թուրքական իշխանությունների, այլ երկրորդ անգամ մարոնականների վրա նետվելու էին պատրաստվում (114, հտ. 4, 187)։

Բոլոր դեպքերում դրուզները, մարոնականների դինակցությունն ապահովելու ամեն հույս կորցրած, որոշեցին մենակ հանդես գալ։ Հոկտեմբերի վերջերին լիբանանյան դրուզ լեռնականների կոչով Շիբլի Արիանը Անդրլիբանանի և Հաուրանի երեք հազար դավանակիցներով Բիկաայի վրայով բարձրացավ Շուֆ, գրավեց Մուխթարայի ամրոցը, կտրեց Բեյրութ-Դամասկոս խճուղին, շրջափակեց Բեյթ ադ-Դինը և Օմար փաշայից պահանջեց ազատ արձակել դրուզ շեյխերին, լեռնականներից վնվոր չվերցնել ու դինաթափում չանցկացնել, երեք տարվա հարկազերծում խոստանալ և իշխանությունից հրաժարելով վերականգնել լիբանանյան ամիրայությունը։ Մարոնականների ինքնասիրության հասցեագրված վերջին պահանջին զուգահեռ Արիանը ինք ևս փորձեց որպես դաշնակից իր կողքին կանգնեցնել կենտրոնական և հյուսիսային մանրահատվածների ֆեոդալ-աղնվականներին, սակայն նույնպես հաջողություն չունեցավ։

Ասադ փաշան դիջումների դիմեց։ Զերբակալված շեյխերից երեքին Սաիդ Ջումբլաթի գլխավորությամբ ազատ արձակելով Արիանի մոտ ուղարկեց, խոստանալով անհապաղ պաշտոնազրկել Օմարին և նոր կառավարիչ նշանակել։ Շեյխերը, սակայն, ապստամբներին միացան և ծանրացրեցին Բեյթ ադ-Դինի կայազորի դրությունը։

Էյալեթի կառավարիչը Ռաշիդ փաշայի հրամանատարությամբ Բեյրութից ծովով Սայդա և այնտեղից Շուֆ՝ ապստամբների թիկունքը հասցրեց հրետանիով զինված կանոնավոր մի զորաբանակ։ Իր հերթին Օմար փաշան, համաձայն կանխօրոք մշակված պլանի, ամրոցից դուրս եկավ և ճակատային հարձակման անցավ։ Երկու կրակի միջև ընկած, Արիանը կատաղի դիմադրություն ցույց տվեց, հուսալով, որ Անթիլիասում հավաքված և դրուզների ապստամբության հարելու հարցը քննարկող մարոնական վերնախավը դրական որոշում կընդունի և օգնության կհասնի։ Եվ սակայն Ասադ փաշային հաջողվեց ապահովել քրիստոնյաների ոչ միայն չեզոքությունը, այլև Աբու Սամրայի հրամանատարու-

Բայամբ մարոնական աշխարհազորային մի գնդի եռանդուն մասնակցությունը դրուզներին ճնշելու գործին (199, 120—124)։ Ավելի քան հազար զոհ տալով, Արիանը հարկադրվեց նահանջել Բիկաա և ապա անցնել Դամասկոս, որտեղ Ահմեդ փաշան նրան խաբեությամբ ձերբակալեց և ուղարկեց Պոլիս։ Նրա ընկերակիցներ ամիր Ամին Արսլանը և շեյխեր Սաիդ Ջումբլաթն ու Յուսուֆ Աբդ ալ-Մալիքը ձերբակալությունից խուսափեցին՝ Դամասկոսի անգլիական հյուպատոսի տանը թաքնվելով։ Հաղթական Օմարը հրկիզեց և ավերեց դրուզների միջնարերդը՝ Մուխթարան (11, 276—277)։

Դրուզական ապստամբությունը արագացրեց Լիբանան լեռան համար որոնվող հանգուցալուծումը։

Նոյեմբերի 23-ին, երբ Արիանը դեռ շարունակում էր Օմար փաշային Բեյթ ադ-Դինում պաշարված պահել, Պոլսի անգլիական դեսպանը սպառնալից երանգի հուշագրով արտաքին գործերի մինիստր Սարիմից պահանջեց դեսպանների հետ հանդիպում ունենալ և «իրենց ամբողջ ծավալով հաղորդվել Լիբանանի հարցում մեծ պետությունների նկատառումների հետ» (144, հտ. 2, 350)։ Օսմանյան կառավարությունը, հասուկ նիստում այդ պահանջը քննարկելով, սուլթանի համամտությամբ դեկտեմբերի 7-ին պատասխան հուշագիր հանձնեց դեսպաններին, հաղորդելով, որ «այդքան փափուկ այլ իր ներքին գործերից մեկն եղող հարցի լուծման հանգելու համար» նախընտրել է համաձայնել տերությունների ցանկության՝ մարոնական և դրուզ կայմակամների նշանակման հետ։ «Եվ սակայն,— ավելացնում էր հուշագիրը,— քանի որ Ռ. Դեան և մեծ պետությունների տեսակետները երկուսն էլ բացահայտորեն ձգտում են միևնույն նպատակին՝ Լեռան վրա բարվոք կարգերի հաստատման, երկու կողմերից առաջարկված սիստեմներից որն էլ որ ընդունվելու լինի, ապա այն առաջին հերթին պետք է փորձնական համարվի»։ Այլ խոսքով, եթե տերությունների սիստեմի օգնությամբ «Սիրիայում անդորրությունը չվերահաստատվի..., ապա նորին վեհափառության կառավարությունը իրավունք պիտի ունենա» իր սիստեմը կիրառելու։ Հուշագիրը նաև ընդգծում էր, որ Ասադ փաշային հրահանգներ են ուղարկված «ընտրելու և նշանակելու երկու կայմակամներ, ...տեղաբնիկ տարրերից և սակայն ոչ Շիհաբ տոհմից, համաձայն մեծ պետությունների կողմից արդեն իսկ ընդունված կարգադրության» (181, հտ. 3, Ա մաս, 66—68)։

Դեկտեմբերի 7-ին, օսմանյան հուշագրի ուղարկման օրն իսկ, Ասադն իր ստացած հրամանի համաձայն պաշտոնանկում էր Օմարին և

Է. Բորեի վկայությամբ այնքան էին ցավում աքսորական ամիրի համար, որ նրա հարցը «ազգային» չափանիշ էր ընդունել (128, հտ. 2, 175)։ Եվ սակայն, ինչպես հետագա արյունալի իրադարձությունների կապակցությամբ «իշխանապետական տոհմը վերականգնելու ձգտումներին» անդրադառնալով նշելու էր ռուսական հյուպատոսը, «ամեն մի անկողմնակալ դիտորդ կարող էր համոզվել այն բանում, որ ժողովրդական զանգվածների համար... Շիհաբների՝ լիբանանյան (ֆեոդալական) օլիգարխիայի այդ զոհերի... անունը ավելի շատ նրա նկրտումների դրոշակն էր, քան թե նպատակը» (11, 286)։

Շիհաբների վերականգնումը հաստատապես նպատակ էր հիմնականում դրուզ ֆեոդալ-ազնվականության Յաղբեկի խմբավորման որոշ ներկայացուցիչների համար, ևս առավել՝ մարոնական վերնախավի շուշափելի մի թևի, որի դիրքերը Լեռան նոր իրադրության պայմաններում զգալապես խախտվել էին։ Բնականաբար շահագրգիռ այդ թևից այժմ դժվար է առանձնացնել, թեպետ անարդարություն կլիներ նաև չհաստատել ներկայությունը հայրենասիրորեն տրամադրված ազնվականական մի խմբի, որ սոցիալական անկասկածելի հենարան էլ ուներ՝ հանձին ամիրայության կործանման համար ցավող և Թուրքական տիրապետության ամրապնդման հեռանկարից սրտագողի մատնված գյուղացիական շրջանների, որոնց որպես խոսնակներ տվյալ պահին հանդես էին գալիս հասարակ ծագմամբ բարձրաստիճան մի շարք հոգևորականներ։

Վերջիններիս պարագլուխը Լաթաքիայի մարոնական առաջնորդ Նիկոլա Մուրադ եպիսկոպոսն էր։ Նա 1843-ի հունվարի 29-ին տերությունների Պոլսի դեսպաններին տրված դիմումագրերում շեշտում էր, որ «Լեռը չի խաղաղվի, եթե նրա վարչակառավարումը չվստահվի Շիհաբ տոհմից մի իշխանի» (181, հտ. 3, Ա մաս, 129)։ Այնուհետև, փետրվարի վերջերին նա ուղևորվում էր Արևմտյան Եվրոպա, մայրաքաղաքների միջոցով օսմանյան կառավարությանը համաձայնեցնելու իշխանապետ նշանակել Ամին Շիհաբին։

Շիհաբների օգտին լիբանանյան լեռներում ծավալվող շարժումն իր սաղմի մեջ խեղդելու և շահագրգռյալ տերություններին զորեղ մի հաղթաթաթի զրկելու միտումով, 1844-ի հուլիսի 1-ին օսմանյան նավատորմը հայտնվեց Բեյրութում և ափ հանեց բավականին պատկառազդու մի զորաբանակ։ Գլխավոր ծովակալ Խալիլի կարգադրությամբ Ասաղ փաշան ստորագրեց երկու բույուրուլդիներ, մեկը՝ «Յաֆայի շրջանից մինչև Մեթնի ծայրամաս», մյուսը՝ «Ջեբել Բշարրիից մինչև Ջունի» ապրող լեռնականներին ուղղված։ Հաղորդելով, որ ծովակալն եկել է իր

հետ «գործադրության դնելու վնասուց հատուցումների, վարչակառավարման և այլ լիբանանյան հարցերի վերաբերյալ տրված որոշումները», փաշան հարավային մանրահատվածների աղգաբնակչության դեմ ուղղակի ահաբեկչության էր դիմում (181, հտ. 3, Ա մաս, 150—151)։

«Լիբանանյան հարցերից» մեկը բարեբախտաբար ոչ թե անլուծելի, այլ նույնիսկ այնքան էլ դժվարալուծելի դուրս չեկավ, ինչքան թվում էր 1842-ի վարչակարգի փոքձարկման առաջին օրերին. դա Ջուբեյլի մանրահատվածի և հարակից յոթ ղուտ քրիստոնեաբնակ գավառակների տարանջատումն էր առանց այն էլ երկատված Լիբանանից։ Տերությունների հյուպատոսները դեռ 1843-ի առաջին իսկ օրերին իրենց վերադասներին հեռագրում էին, որ «օսմանյան իշխանությունները մտադիր չեն նոր կարգը կիրառել» Լիբանանի հյուսիսային շերտի նկատմամբ և վերջինս դրվելու է Տրիպոլիի փաշայի անմիջական վարչակառավարման ներքո (181, հտ. 3, Ա մաս, 129)։ Ի դեպ, մի փոքր ուշ, հաջորդ տարվա մարտի սկզբներին, Սարիմ էֆենդին խոստովանելու էր, որ Բ. Դուրը Ասադ փաշային կարգադրել էր «Ջուբեյլի մանրահատվածները» տարանջատել ամիրայության նախկին տարածքից, սակայն ոչ թե Տրիպոլիի փաշայի, այլ օսմանյան հատուկ մի կոմիսարի ենթակայության ներքո դրվելու համար (181, հտ. 3, Ա մաս, 132)։

Հատուկ կոմիսարի տարբերակն, անշուշտ, ավելի հաճելի չէր, քան որևէ փաշայության մեջ համահարթվելու տարբերակը։ Դա հասկանալի կդառնա, եթե ժամանակաշրջանից պահպանված փաստաթղթերից մեկի՝ Ն. Մուրադ եպիսկոպոսի 1843-ի հունվարի 29-ին տերությունների դեսպաններին հանձնված բողոքագրի հիմամբ պատկերացնենք «հատուկ կոմիսարության» հողատարածքը. «Բացառապես քրիստոնյա երկրամաս... Ջուբեյլն իր հարակից շրջաններով..., մարոնական քրիստոնյաների օրրան սրբազան հովտով և Լիբանան լեռան ամենաբարձր կատարներով..., նրանց պատրիարքի սուրբ նստավայր Քաննուբինով, Իհդին և Բշարրի գյուղերով, որոնց վրա ընկնում է մայրիների ստվերը և որտեղ թուրքերը երբևէ չէին կարողացել ոտք դնել» (181, հտ. 3, Ա մաս, 128—129)։ Հայրենասեր հոգևորականի շարադրանքից բանաստեղծականությունը թափ տալու դեպքում կհամոզվենք, որ խոսքը ոչ թե Շիհաբ իշխանապետական տոհմին համարյա մշտապես որպես մանրահատված թողնված Ջուբեյլի շրջանի մասին է միայն, այլ Քեսրուանից հյուսիս էապես քրիստոնեաբնակ այն լեռնահատվածի, որ նախասկզբնական Լիբանան լեռն էր, Բիլետ Ջուբեյլի հետ նաև Ջիբբետ Բշարրին, Ջիբբետ Մունեյթրան և Բիլետ Բաթրունը։

Դա նշանակում էր, որ Լիբանան լեռ հասկացության մեջ օսմանցիները փորձում էին ներամփոփել միայն հետագային այդ հասկացողությունն համաձուլված Ջեբել Քեսրուանն ու Ջեբել աշ-Շուֆը։ Դա նաև նշանակում էր, որ Լիբանան լեռը նոր վարչակարգով ոչ թե երկատվում, այլ նատվում էր և որ ֆրանսիական ազդեցության նկատմամբ առավել զգայուն ու ընկալունակ լեռնահատվածը կորցնելու էր իր ուրույնությունը հավաստող ամեն մի դրոշմ։

Համենայն դեպս, թո՛ղ քրիստոնյա լեռնականների ցասումնալից բողոքները, ֆրանսիական կառավարությունը ոչ մի դեպքում չէր հաշտվի նման իրավիճակի ստեղծման հետ։ Դը Բուրքենեն փետրվարի 7-ին Գիզոյին հեռագրում էր, որ «հնարավորին չափ բարձր բողոքի ձայն» է բարձրացրել, պահանջել հատուկ դեսպանաժողով և այնտեղ իր պաշտոնակիցներին հարկադրել չզլանալ իրենց աջակցությունը։ Օսմանյան միջոցառումն այնքան ընդվզեցուցիչ էր, որ այդ պահանջին առաջիններից մեկն ստիպվեց միանալ բրիտանականը։ Փետրվարի 4-ին Ս. Կեննինգը իր և «իրենից ոչ պակաս» իր պաշտոնակիցների անունից Սարիմից պահանջեց «պաշտոնական եղանակներով տրված խոստումը անկեղծորեն և կատարելապես գործադրել», «չանդամահատել Լիբանան լեռը», «նրա ամբողջ ազգարնակչությունը դնել մեկ դրուզի և մեկ քրիստոնյայի վարչակառավարման ներքո»։ Մյուս տերությունների ներկայացուցիչների համանման դիմումների վրա Բ. Դուրը Ասադ փաշային մարտի 1-ին կարգադրեց ետ կանչել Ջուբեյլ ուղարկված իր կոմիսարին և խնդրո առարկա լեռնահատվածի հարկագումարը համարել Լեռան 3500 քսակ ընդհանուր հարկագումարի մի մասը։ Մարտի 14-ին դեսպաններին հաղորդվում էր, որ սուլթանական կառավարությունը «հրաժարում է մահմեդական (այն է՝ թուրք, Ե. Ն.) կոմիսարի ուղղակի վարչակառավարումից և Ջուբեյլի գավառակները վերադարձվելու են» համապատասխան կայմակամի տնօրինության (181, հտ. 3, Ա մաս, 129—134)։

Եթե «անլույծ հարցերից» մեկը՝ ըստ կամս լայնատարածված Ջուբեյլինը, հեշտությամբ լուծվեց, ապա մինչև վերջ անլույծ մնաց 1841-ի միջհամայնքային զինաբախումներից տուժածների վնասուց հատուցման հարցը։ Զգձգումներն ու անորոշությունը այս հարցում պահպանվեցին մինչև 1844 հոկտեմբերի 10, երբ Բ. Դուրը տերությունների ներկայացուցիչներին հաղորդելու էր (և այդ հաղորդումը կրկնելու էր դեկտեմբերի 22-ին), որ հատուկ հանձնաժողովը վնասների գնահատման հիմք պահում է մարոնականների 16 հազար և դրուզների 2600 քսակագումար վնասները, ըստ որում դրուզները «հարմար ժամկետներում» հատուցե-

լու են միայն 3 հազար քսակ, իսկ մնացածը վճարվելու է Սայդայի էյալեթի հարկագումարից (181, հտ. 3, Ա մաս, 161)։ Դեկտեմբերի 22-ի հուշագրով Բ. Դուրը, ելնելով այն հանգամանքից, որ «դրուզներն ի վիճակի չեն վճարելու», քրիստոնյաների վնասների հատուցման կարգը այսպես էր սահմանում.

1. «Դրուզները պիտի ներկայացնեն թալանված այն ինչքերը, որոնք ենթադրաբար իրենց ձեռքում են, թաքցված (լինեն դրանք) թե չթաքցված։ Այն ունեցվածքն ու ինչքերը, որոնք բռնախլված օրվանից մաշվել են և իրենց արժեքը կորցրել, իրենց տերերին պիտի վերադարձվեն այնպիսի գներով, որոնք որոշվելու են դրանց այժմյան վիճակի համաձայն»։

2. 16 հազար քսակագումարից պիտի հանվեն վերադարձված գույքի ընդհանուր արժեքն ու «դրուզների վնասների մոտավոր գումար» 2600 քսակը, մնացածը՝ «շուրջ 4—5 հազար քսակ, վճարվելու է հարմար ժամկետներում»։

3. Դամասկոսի փաշային պիտի հանձնարարվի միջոցների դիմել՝ հայտնաբերելու և վերադարձնելու համար Լիբանան լեռնից Ուադի աթ-Թայմ ու Հաուրան փախցված գույքը և բնականաբար դրա արժեքն էլ դուրս պիտի բերվի հատուցումների մնացյալ գումարից (181, հտ. 3, Ա մաս, 163—164)։

Այս պայմաններում վնասուց հատուցման մասին խոսք լինել չէր կարող և տուժածներից ոչ ոք չէր համաձայնվի սահմանված կարգին։ Բուն բողոքների վրա օսմանյան կառավարությունը 1845-ի հունվարի 4-ին ձևականորեն պատրաստակամություն հայտնեց այդ կարգից հրաժարել և 10 հազար քսակով մասնակցել հատուցումներին, սակայն իրականում շարունակեց քաշքշուկը, քանի որ փետրվարի 26-ին դեսպաններին հաղորդվում էր. «Հենց որ տեղական վարչության տեսակետը կատարելապես պարզվի, Բ. Դուրը հոգ պիտի տանի հաղորդելու նախկին որոշումների հիմամբ մարոնականներին անհապաղ (կատարվելիք) հատուցումների վճարման միջոցների մասին» (147, հտ. 2, 364)։

Վնասուց հատուցումների հարցի անլույծ մնալն, ինչ խոսք, որոշակի հետք թողեց դրուզ-մարոնական փոխհարաբերությունների լարվածության պահպանման վրա և անխուսափելիորեն արագացրեց միջհամայնքային երկրորդ և էլ ավելի արյունահեղ ընդհարումները։

Առավել դժվարալույծ, եվրոպական և օսմանյան դիվանագիտության կողմից առավել բռնաբարված հարցը, սակայն, խառը ազգաբնակչու-

թյամբ շրջանների, այդ թվում և Դեյր ալ-Կամար քաղաքի վարչակառավարման կարգի հարցն էր դուրս գալու։

Լիբանան լեռան նոր վարչակարգի վերաբերյալ 1842-ի դեկտեմբերի 7-ի կարգադրությունից կարելի էր եզրակացնել և՛ այն, որ Լեռը աշխարհագրականորեն երկատվում էր մարոնական ու դրուզական կայմակամությունների միջև, ինչ որ իր արմատով գնում էր դեպի բրիտանական սաղմնային ծրագիրը, և՛ այն, որ բոլոր մարոնականները մարոնական և բոլոր դրուզները դրուզ կայմակամի վարչակառավարման ներքո են դրվելու, ինչ որ ավելի էր համապատասխանում բրիտանականից մետերնիխյանի վերածված ծրագրին։

Բոլոր դեպքերում Ասադ փաշան շտապեց մարոնական ֆեոդալական վանականության համաձայնությամբ 1843 հունվարի 11-ին քրիստոնյա կայմակամ նշանակել Աբու՛լ Լամաների տոհմապետ ամիր Հայդարին, մինչ դրուզ ամիրների և շեյխերի համաձայնության արդյունքն եղավ Արսլանների տոհմապետ ամիր Ահմեդի դրուզ կայմակամ նշանակումը։

Կայմակամների նշանակումը, սակայն, լիբանանյան տագնապին ոչ թե վերջակետ դրեց, այլ նրա առաջ նոր տող բացեց։

Բանն այն է, որ մարոնականները սակավադեպ միասնականությամբ և համայնքի աստիճանաչափով հակվեցին դեպի բոլոր քրիստոնյաներին, անկախ նրանց բնակության վայրից, իրենց «քրիստոնյա կայմակամի» վարչակառավարման ենթարկելու սկզբունքը։ Այդ սկզբունքին կայմակամի հետ ջերմեռանդ կողմնակից էին ոչ միայն պատրիարքը, այլև հոգևոր թե աշխարհիկ ամբողջ վերնախավը, քանի որ այն նվիրագործում էր մարոնական գերակշռության պահպանումը թեկուզ և երկատված Լեռան վրա, մանավանդ դրուզական մանրահատվածների մարոնականները, առաջին հերթին գյուղացիական դանդվածը, նաև առևտրաարհեստավորական շրջանները, որոնք, ժամանակագրի վկայությամբ «իրենց վերքերը ցույց տալով անիծում էին (դրուզ) շեյխերին և աղերսում ոչնչացնել (նրանց) ֆեոդալական բոլոր իրավունքները» (11, 279)։

Բնականաբար 1842-ի դեկտեմբերի 7-ի կարգադրության երկիմաստությունը ոչ ոքի համար դաղտնիք չէր և հենց դրանով էլ պիտի բացատրել այն, որ 1843-ի հունվարի 29-ին դեսպաններին տվված խնդրագրերում Ն. Մուրադը մարոնական համայնքի անունից խնդրում էր Բ. Դեան մոտ միջամտել, որպեսզի մարոնական կայմակամի «իրավասության ներքո դրվեն բոլոր քրիստոնյաները, որոնք Լեռան տարբեր ուղղություններով ցրված են» (181, հտ. 3, Ա մաս, 129)։

Ի դեպ, եթե ամիր Հայդարի ընտրությունը, Շիհաբների բացառման պայմաններում, արդարացված էր նախ և առաջ Աբու՝լ Համա տոհմի լիբանանյան նվիրապետական բարձրակարգման մեջ գրված երկրորդ տեղով, մյուս կողմից եթե կայմակամի անձնավորությունն էլ, որպես ղուսպ և կրոնադավանական մոլեռանդության հայրենասիրական տրամադրություններ հակադրող մարդ, անկախ տոհմապետական իր հանգամանքից, ավելի քան բարեհաջող էր, ապա բոլոր մարոնականներին ու նրանց հետ նաև մյուս քրիստոնյաներին իր իշխանության ներքո տեսնելու նրա անխոնջ ճիգերը մարոնական միջավայրում տվյալ պահին առկա երկու հոսանքներից չափավորական-հարմարվողականի քաղաքականությունն էին արտացոլում պարզապես։

Եվ սակայն, ինչքան էլ չափավորական, մարոնական կայմակամի խնդրո առարկա հավակնությունից փշաքաղվում էր դրուզական համայնքը և առաջին հերթին, շատ հասկանալիորեն, նրա ֆեոդալ-ազնվականությունը։ Եվ ոչ առանց պատճառի։

Դրուզ կայմակամի ընտրությունը առանց բարդությունների գլուխ չէր եկել։ Անգլիացիները, որպես իդեալական թեկնածու, առաջ էին մղել Սաիդ Ջումբլաթին։ Վերջինիս ընտրությունը, սակայն, կարող էր յաղբեկիներին դժգոհեցնել ու նրանց մղել քրիստոնյաների հետ մերձեցման, ինչ որ ո՛չ դրուզական համայնքի, ոչ էլ անգլիական դիվանագիտության շահերին էր համապատասխանում։ Դա միաժամանակ դեմ ընթաց էր Թուրքերի նկատառումներին, քանի որ Սաիդի կայմակամությունը պիտի նշանակեր դրուզներին հանձնել անգլիական գործակալների մենիշխան ներգործության։ Մի այլ դժվարություն ևս կար։ Դրուզ առավել աչքի ընկնող ամիրներն ու շեյխերը կա՛մ բանտարկված էին, կամ էլ, որպես ապստամբներ, փախստական։ Ասադ փաշան ավելի նպատակահարմար դատավ թեկնածուին որոնել արգելափակյալների թվում, նրանց հուշելով, սակայն, Սաիդի բացառման ցանկալիությունը։ Այդ պայմաններում նախապատիվ համարվեց դրուզական միակ ամիրական տոհմի ներկայացուցիչ Ահմեդ Արսլանի թեկնածությունը, սակայն մեծ շեյխական հինգ տոհմերի ներկայացուցիչները, ինչպես վկայել է Բաղդիին, համամտություն հայտնելու համար «իրենց ֆեոդալական հավակնությունների ապահովման շուրջ բանտի պատերից ներս դաղտնի մի պայմանագիր պարտադրեցին ապագա կայմակամին. վերջինս պարտավորվեց կառավարության առաջ իր անձնական իշխանությամբ օրինականացնել շեյխերի բոլոր ինքնագլխությունները ու փաստորեն նրանց փոխանցեց ոչ միայն իրեն տրված օրինական իրավունքները, այլև, բացի դրանից, իր

ռոճիկի մի մասը» (11, 279)։ Ապագա կայմակամը, ինչպես իրենց հերթին հաղորդել են ֆրանսիական աղբյուրները, մյուս կողմից հրաժարվեց սեփական ոստիկանական ուժեր ունենալու իրավունքից և հանձն առավ գավառակից շեյխերի աշխարհազորային ուժերի աջակցությամբ հոգ տանել «ռայաների հանգստության», այլ խոսքով խառը ազգաբնակչությամբ շրջանների քրիստոնյաների՝ իրենց բովանդակությամբ սոցիալական, այլ երանգով անխուսափելիորեն համայնքային հուզումների ճնշման (114, հտ. 4, 212—215)։

Որպես ոչ միայն հետաքրքրական, այլև ըստ ինքյան պերճախոս փաստ արժի այստեղ արձանագրել, որ կայմակամ նշանակվելուց հետո առաջիկ միակ ազատ արձակվածը, ամիր Ահմեդը իր խոստումը հարգելով, ամեն երեկո բանտ էր վերադառնում և արգելափակվածների հետ խորհրդակցում ու համաձայնեցնում իր բոլոր քայլերը։ Ի դեպ, նա այնպիսի պնդերեսությամբ պահանջեց դրուզ բոլոր ֆեոդալ-ազնվականների ներումն ու նրանց իրավունքների վերականգնումը, որ պաշտոնավարման երրորդ օրը վրդովեցրեց Ասադ փաշային, պաշտոնանկվելով բանտ ուղարկվեց, սակայն հունվարի 14-ին, այն բանից հետո, երբ ոչ մի դրուզ չհամաձայնվեց նրան փոխարինել, վերականգնվեց...

Ամիր Ահմեդն ու դրուզական ամբողջ ավագանին համաձայն էին Մեթնի մի քանի հազար դրուզներին թողնել քրիստոնյա Արու՝լ Լամաների վարչական-թե ֆեոդալական իշխանության ներքո, պայմանով, որ հարավային մանրահատվածների բազմատասնյակ հազարավոր քրիստոնյաները թողքվեին իրենց (11, 280), քանի որ, ինչպես իր զեկուցագրում հաղորդում էր ռուսական հյուպատոսը, «կրկնակի վարչակառավարումը անհնարին է այնտեղ, որտեղ մեկ և մյուս համայնքներից դյուղացիները նստած են մեկ ու միակ հողակտորի վրա և իրենց դրությամբ կախում ունեն մեկ ու միակ դրուզ սեփականատերերից» (4, գ. 758, թ. 16)։ Իր աշխատության էջերում ևս Բազիլին նույն կերպ է ձևակերպել դրուզ ավագանու առարկությունը. «Միևնույն շրջանում, միևնույն բնակավայրում երկու վարչակառավարում բացարձակապես անհնար էր» (11, 280)։

Առանց փաստերի էլ կարելի է ապացուցված համարել, որ անգլիական դիվանագիտությունը թիկունք պիտի տար դրուզական պահանջին, աշխարհագրականորեն ճշտորոշ կերպով մասնատված Լեռան երկու հատվածներում կայմակամներից յուրաքանչյուրի իշխանության անրաժանելիության։ Բեյրութում հյուպատոս Ռոուզը այնպիսի եռանդով էր պաշտպանում դրուզների տեսակետը, որ 1844-ի ապրիլի 3-ին լորդ

Աբերդինին հասցեագրված դանդատագրում «Լիբանանի քրիստոնյաների ղեկավար պատվիրակները», դատապարտելով «կատաղի բնավորության պոռթկումներ ունեցող և դրուզների առաջ խոնարհվող» դիվանագետին, ընդգծում էին, որ դրուզական մանրահատվածների մարոնականները «երբեք որևէ վանդի առաջ չեն ընդունելու նման պայման և պիտի դիմադրեն մինչև մահ» (181, հտ. 3, Ա մաս, 142)։

1844-ի սկզբներին, երբ արդեն ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ Բ. Դուրը վերջնականապես հակված է դեպի աշխարհագրական մասնատմամբ կայմակամների միջև իշխանության խստիվ տարբաժանման տեսակետը, մարոնական վերնախավի երկու թևերի պառակտման ընթացքը խորացավ։ Մի թևը, որին կարող ենք պայմանականորեն կայմակամականներ անվանել և որի խոսնակը Թոբիա Աուն եպիսկոպոսն էր, ջանում էր մասնատման պայմաններում իրականություն դարձնել մարոնական կայմակամի՝ քրիստոնյա բոլոր լեռնականների վարչակառավարիչը լինելու հավակնությունը։ Մյուս թևը, վերաշխուժացած շիհաբյանը, որ, դարձյալ պայմանականորեն, կարող է իշխանապետական անվանվել և որի խոսնակը Նիկոլա Մուրադ եպիսկոպոսն էր, պայքարում էր մասնատման ծրագրի կենսագործման դեմ և հետամտում էր քրիստոնեական իշխանապետության վերստեղծման։ Պատրիարքը, որ ընդհանուր առմամբ ավելի էր հակված դեպի իշխանապետականները, միայն հարկադրաբար էր վարում Սմիլյանսկայայի ընդունմարած «երկակի խաղը» (43, 130), որ վերջին հաշվով անխուսափելի էր։ Լեռան շրջանակներում, օսմանցիների ներկայության պայմաններում, պատրիարքին ուրիշ բան չէր մնում անել, քան երևութապես պահպանել կայմակամի հովանավորի, այլ խոսքով ամիրայության հողատարածքի մասնատման փաստի հետ հաշտված և Շիհաբների ամիրայությունը վերականգնելու փորձերին անմասնակից մարդու կեցվածք։ Հենց այդ տպավորությունն էլ մայիսի 4-ին եկեղեցապետի հետ հանդիպումից ստանում էր ռուսական հյուպատոսը (4, դ. 780, թ. 61)։ Երկրամասից դուրս, սակայն, պատրիարքի օրհնությունը չէր խնայվում այն բոլոր մարդկանց, որոնք Շիհաբների ամիրայության օգտին մայրաքաղաքների դռներն էին ծեծում։ Ի դեպ, եթե իշխանապետականների համար հույսի հիմնական աղբյուր Փարիզը, փոքր ինչ էլ Վիեննան էին, ապա կայմակամականները դեմ չէին Լոնդոնի հետ նույնքան բարվոք հարաբերություններ պահպանելուն և նրա մասնակցությամբ ու աջակցությամբ հարցերը լուծելուն (181, հտ. 3, Ա մաս, 138)։

Ավելի հետաքրքրական է մի այլ հանգամանք։ Կայմակամական թե իշխանապետական, վերջին հաշվով հայրենասիրությունը զուտ համայնքասիրական ելակետից բխեցնող այդ հոսանքները իրարից տարբերվում էին նաև սոցիալական իրենց դժգոհանքի երանգով և աշխարհագրական աղբյուրով։

Իշխանապետականները, որոնց ծրագրային փաստաթղթերից մեկը կարելի է համարել Ն. Մուրադի կողմից Աբերդինին հանձնված հուշագիրը (181, հտ. 3, Ա մաս, 143—145 և 154—158), իրենց հիմնական նպատակին հասնելու համար կրակն առաջին հերթին ուղղում էին Թուրքական վարչակառավարման խոցերի դեմ.—Լիբանան լեռան վրա կատարյալ անիշխանություն է տիրում և դա փաշայի ու նրա ստորադասների հարստացման աղբյուրն է դարձել։ Նոր վարչակարգի դրույթները հաճախ ոտնակոխվում են փաշայի կողմից, որի սպառնալիքների ներքո կայմակամները խամաճիկների են վերածված։ Թալանը շարունակվում է, ամենուր անապահովություն է տիրում, մարդասպանությունները հաճախականացել են և գյուղացիները հողը մշակելիս արորի հետ հարկադրաբար նաև զենք են բռնում։ Միջհամայնքային թեկուզ մանր գինաբախումները չեն դադարում և ընդհակառակը հրահրվում են Թուրք աստիճանավորների կողմից, ալբանական զորագնդերը բռնություններ են գործում են։ Առանց քիչ թե շատ լուրջ քննադատական որևէ խոսք ասելու Լեռան վրա տիրող սոցիալ-տնտեսական իրավիճակի հասցեին և քար լռություն պահպանելով հատկապես դրուզական մանրահատվածների հարցում, իշխանապետականներն իրենց կրակից բաժին էին հանում նաև մարոնական մանրահատվածների ֆեոդալ-աղնվականներին, այդ թվում և կայմակամին.—Քեսրուանում, խազին տոհմից մի շարք շեյխերի մեղսակցությամբ, կայմակամն անօրինական հարկ է հավաքում և նույն տոհմի այլ շեյխերի ղեկավարությամբ աղգարնակչությունը հարկադրվել է զենքի դիմել, մյուս կողմից էլ չեն դադարում միջֆեոդալական գինաբախումները, հատկապես Հոբեյշ և Դահդահ տոհմերի արյունալի հակամարտությունը են։

Կայմակամականներն ըստ երևույթին ավելի սուր կերպով էին դնում սոցիալ-տնտեսական խոցերի հարցը։ Դժբախտաբար, սակայն, ծրագրային որևէ փաստաթղթի անգոյության պայմաններում և մեզ հասած ժլատ հաղորդումներից կառչելով կարող ենք ասել, միայն, որ նրանց կրակի հիմնական թիրախը մուկատաաճիության ինստիտուտն էր դարձել, այն էլ սոսկ հարավային-դրուզական մանրահատվածների շրջանակներում։ Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ կա՛մ կայմակամա-

կանների համար ևս սոցիալ-տնտեսական հարցերի արծարծումը կրոնահամայնքային, հետևաբար քաղաքական նշակետ ուներ, կամ էլ նրանց շրջանում հանգամանքների բերմամբ ավելի արմատականները հարավային լեռնահատվածի տարրերն էին։ Եվ իրոք, այն բանից հետո, երբ մարտ ամսին արդեն աշխարհագրական հիմքի վրա վարչական-վարչական մասնատման, այլ խոսքով հարավային մանրահատվածների քրիստոնյաներին դրուզ կայմակամի վարչական և նախկին մուկատաաճիների ֆեոդալական իշխանության ենթարկելու որոշումը տրվել էր, մարոնականների կողմից կազմակերպվող բողոքի բազմաթիվ հոծամբոխ հավաքներից մեկում (4, գ. 780, թ. 14) ընդունվեց համարձակ մի գանգատագիր։ Այն ոչ միայն պահանջում էր հարավի քրիստոնյաներին ազատել դրուզների բռնակալական լծից, այլև հերքում էր դրուզ մուկատաաճիների պատմական ամեն մի իրավունք իրենց մանրահատվածների վրա։ Իշխանապետն է «մուկատաաճիներին մանրահատվածներ շնորհել և նա է վերցրել երբ ցանկացել է,— պնդում էին գանգատագրի հեղինակները։ Մինչև Շիհաբ տոհմի իշխանապետական աթոռին բարձրանալը դրուզներից ոչ ոք մուկատաաճիական իրավունքներ չուներ,— պատմությունը մի փոքր խեղաթյուրելով շարունակում էին նրանք և ավելացնում.— Նույն Շիհաբ տոհմից Բեշիր II-ը դրուզ շեյխերին ոչ միայն իշխանազրկեց, այլև կալվածազրկեց։ Արդ, շեյխերը ներկայումս կարո՞ղ են մուկատաաճիական-ֆեոդալական իրավունքների հավակնել, երբ այդ իրավունքները շնորհելու մենաշնորհի տերը՝ մեծ ամիրը, գոյություն չունի,— եզրակացնում էր գանգատագիրը (4, գ. 780, թթ. 48—52)։

Եվ սակայն հակառակ բոլոր բողոքներին, թուրքական իշխանությունները կառչած մնացին կարգադրված սիստեմից ու նույնիսկ փորձեցին այն պարտադրել։ Ասադ փաշան մայիսին Բեյրութ ժողովի հրավիրեց հինգ հյուպատոսներին, երկու կայմակամներին, պատրիարքի լիազոր Թորիային և խառը ազգաբնակչությամբ շրջանների ներկայացուցիչներին, որպեսզի պաշտոնապես կրկնի օսմանյան կարգադրությունը։ Քրիստոնյա պատվիրակները հրաժարվեցին ընդունել այն, հատկապես ճանաչել մուկատաաճիների նրանով վերականգնվող ժառանգական իրավունքներն իրենց երբեմնի տիրույթների վրա։ «Քրիստոնյաները իրենց հավակնությունների արդարացիության օգտին վկայակոչում են հին սովորությունը,— տեղեկագրում էր ռուսական հյուպատոսը,— որի հիմամբ Լիբանանի իշխանապետն իրավունք ուներ մանրահատվածի ղեկավարին (մուկատաաճիին—Ե. Ն.) հեռացնել ու նրան, առանց ծագման կամ հավատքի խտրության, փոխարինել մի ուրիշով, ինչպես հաճախ

արեց ամիր Բեշիրն իր տոհմակիցների և կուսակիցների օգտին» (4, գ. 780, թ. 58)։

Բ. Դուռն մարտյան կարգադրությունը և մայիսյան հրահանգը սվիններով ընդունվեցին ոչ միայն տեղում, այլև Փարիզում, քանի որ «լուծումը այնքան հակառակ էր մարոնականների համար էապես մարոնական վարչություն տալու ընդհանուր սկզբունքին»։ Խառը ազգաբնակչությամբ շրջանների քրիստոնյաները, հյուպատոսների վրա ճնշում բանեցնելու նպատակով, մինչև իսկ հայտարարեցին, որ «կնախընտրեն թուրք կառավարիչը դրուզական վարչությունից»։ Ասադ փաշային տրված մի դիմումագրում նրանք կտրականապես մերժեցին «անարդար ու գործնականորեն անհնարին» կարգադրության ենթարկել։ Այդ բողոքագրերից կառչելով կարգադրությունը մերժելու իր որոշումը Ֆրանսիան հիմնավորեց այն պատճառաբանությամբ, որ «այն սպառնում է զոհերին դնել ճնշողների իրավասության ներքո, առանց հաշվի առնելու Լեռան հարավային մանրահատվածների բնակչության թվական համեմատությունը» (181, հտ. 3, Ա մաս, 156)։ Բեյրութի ֆրանսիական հյուպատոսի պահանջով, որին այս կամ այն չափով դժկամորեն ի վերջո միացան պաշտոնակիցները, այդ թվում և գնդապետ Ռոուզը, Ասադ փաշան որոշեց Բ. Դուռն կարգադրության կիրառումը ժամանակավորապես հետաձգել, ստեղծել քրիստոնյաների և դրուզների առարկություններն ու առաջարկությունները լսելու և քննարկելու կոչված մի հանձնաժողով, վերջինիս եղրակացություններն ուղարկել Պոլիս և սպասել նոր հրահանգների։ Այս կապակցությամբ մայիսի 14-ին դը Բուրքենին ուղարկված հեռագրում Գիզոն խորհուրդ էր տալիս «օգտվել դադարից ու գործել», «քանի որ պետք չէ թողնել, որ Բ. Դուռը մենակը քննարկի ու վերջնական որոշում տա» (181, հտ. 3, Ա մաս, 145—146)։

1844-ի ամռան սուլթանական կառավարության որոշմամբ հարցի քննարկումն ու լուծումը հանձնարարվեց Բեյրութում տերությունների հինգ հյուպատոսների և ծովակալ Խալիլ փաշայի գլխավորած թուրք ատենավորների խառը ժողովին։ Եվ սակայն Անգլիայի, մասամբ նաև Ռուսաստանի քաջալերանքով Բ. Դուռը շարունակում էր իր սիստեմը կիրառման դնելու ուղիներ որոնել ու վերստին ճնշման փորձերի էր ձեռնարկում՝ խառը ազգաբնակչությամբ շրջանների քրիստոնյաների դիմադրությունը կոտրելու համար։ Սեպտեմբերին, երբ ժողովը հեռու չէր ընդհանուր հայտարարի գալուց, քրիստոնյաների ներկայացուցիչները մի անգամ ևս հրավիրվեցին Ասադ փաշայի մոտ, որ հորդորեց հաշտվել դրուզ կայմակամի և մուկատաաճիների իշխանության հետ, հակա-

ռակ դեպքում պահանջից տեղափոխվել ուր որ ցանկանում են։ Քրիստոնյաները, այդ առթիվ բողոքելով հյուպատոսներին, սեպտեմբերի 18-ին ծովակալին հանձնեցին մի աղերսագիր, որում, կրկնելով «կեսօրվա արևի նման պարզ» իրենց գանգատները, շարունակում էին. «Մի՞թե Բ. Դռան կանոններին և ձեր... արդարության համապատասխան է, որ լքենք մեր օջախներն ու ինչքերը, որ ժառանգել ենք անհիշելի ժամանակներե ի վեր։ Եվ ո՞ր պետք է գնանք, եթե ցանկանանք իսկ լքել մեր տները։ Մենք ավելի մեծաթիվ ենք, քան դրուզները և սակայն պիտի հարկադրվենք լքել մեր օջախները և ոչ մի քրիստոնյա չի մնալու նրանց միջավայրում։ Այդ դեպքում որտեղի՞ց ենք ստանալու արժեքը մեր ունեցվածքների, որոնք դրուզների ունեցվածքից ավելի են։ Եթե... գտնեք մի միջոց, որպեսզի կարողանանք մեր օջախները լքել առանց մեր ունեցվածքը կորցնելու... խնդրում ենք հայտնել մեզ» (4, գ. 780, թ. 288։ 181, հտ. 3, Ա մաս, 159—161)։

1844 հոկտեմբերի 7-ին Բ. Դուռը հաղորդում էր, որ Բեյրութի հանձնաժողովի կողմից վիճելի հարցերի շուրջ տրված հետևյալ որոշումներն արդեն իսկ հաստատված են օսմանյան կառավարության կողմից.

1. Լեռան դրուզական և քրիստոնեական հատվածների առանձին կայմակամների ենթարկվելու այժմյան վիճակը պահպանվում է, ըստ որում հարավային մանրահատվածների քրիստոնյաները ենթարկվելու են դրուզ կայմակամի կենտրոնական և դրուզ մուկատաաճիների տեղական-ֆեոդալական իշխանության, իսկ կենտրոնական մանրահատվածների դրուզները՝ մարոնական կայմակամի և մուկատաաճիների իշխանության։

2. Դրուզական կայմակամության քրիստոնյաներն ու մարոնական կայմակամության դրուզները «կայմակամների հավանությամբ պիտի ընտրեն նրանց առաջ իրենց շահերը պաշտպանող վեքիլներ»։ «Եթե (դրուզ) մուկատաաճիները որևէ անարդարություն գործեն ռայաների դեմ, վեքիլը պիտի հաղորդի կայմակամին, իսկ եթե վերջինս հաշվի չառնի, հարցը պիտի ներկայացվի նահանգի կառավարչին, որ բողոքին ընթացք պիտի տա կատարյալ անկողմնակալությամբ» (181, հտ. 3, Ա մաս, 134—135)։

3. Դեյր ալ-Կամարը դուրս է բերվելու Աբու Նակիտ շեյխերի մուկատաաճիական իրավասությունների շրջանակներից և կառավարվելու է երկու՝ քրիստոնյա և դրուզ վեքիլների կողմից։

4. 1841-ի միջհամայնքային զինաբախումներից տուժած քրիստոնյաներն ստանալու են 13500 քսակի վնասուց հատուցում, որից 3500-ը

վճարելու են դրուզները, իսկ մնացածը՝ օսմանյան գանձատունը։

Ի դեպ, Դեյր ալ-Կամարի հարցի կապակցությամբ ավելի քան մի տարի առաջ, 1843-ի սեպտեմբերի երկրորդ տասնօրյակին, Պոլսի դեսպանաժողովը որոշել էր Բ. Դռան հանձնարարել հետևյալ միջոցառումները.

1. Քաղաքի քրիստոնյա ազգաբնակչության որպես պետ քրիստոնյա կայմակամը մի վեքիլ, իսկ դրուզ ազգաբնակչության որպես պետ՝ դրուզ կայմակամը մի վեքիլ են նշանակելու։

2. «Երկու գերիշխան (կայմակամական) իշխանությունների այդ երկու պատվիրակների միջև ամեն մի տարակարծություն պիտի ներկայացվի Դեյր ալ-Կամարի կայազորի հրամանատար բեյին»։

3. Կայազորը, որ տեղադրվելու է «առանձին, քաղաքի մերձակայքում», այնտեղ «մնալու է այնքան ժամանակ, ինչքան որ կպահանջի Լեռան վրա անդորրության պահպանումը»։ Օսմանյան գանձատան հաշվին պահվող կայազորի թվաքանակը «չի անցնելու բացարձակ անհրաժեշտության սահմանները»։

4. Քաղաքը դրուզ կայմակամի նստավայրը լինել չի կարող (181, հտ. 3, Ա. մաս, 134—135)։

Ֆրանսիական դեսպանը, որի պնդումով էր մտցվել վերջին կետը, սեպտեմբերի 17-ին հեռագրում էր Գիզոյին, որ «ժամանակավորապես Լիբանանում տեղաբաշխված զորքերի հրամանատարը, որպես քրիստոնյա և դրուզ իշխանությունների միջև դատավոր, ժամանակավոր բնույթ է տալիս լուծման ու մեղ հնարավորություն է ընձեռում մոտիկ ապագային ավելի լավն անել» (181, հտ. 3, Ա. մաս, 136)։

1844-ի սեպտեմբերին Բեյրութի ժողովում որոշում էր ընդունվել այն մասին, որ Դեյր ալ-Կամարի երկու վեքիլները ենթարկվելու էին իրենց դավանակից կայմակամներին, մինչդեռ Բ. Դռան հոկտեմբերյան կարգադրությամբ նրանք ստորադրվում էին դրուզ կայմակամին։ Դեսպանների առարկությունները հաշվի առնելով, դեկտեմբերի 22-ին թուրքերը տվեցին նոր որոշում. վեքիլները կայմակամներից և ոչ մեկին չեն ենթարկվելու, իսկ տարակարծության դեպքում կայազորի հրամանատարի միջոցով դիմելու են Սայդայի փաշային (181, հտ. 3, Ա. մաս, 163—164)։

Նոյեմբերի 3-ին հարավային մանրահատվածների քրիստոնյաների ներկայացուցիչները հերթական հրավերն ստացան Բեյրութ ներկայանալու։ Նրանց հաղորդվեց Բ. Դռան հոկտեմբերի 7-ի կարգադրությունը, պահանջվեց տասնօրյա ժամկետում ընտրել իրենց վեքիլներին։

ապա և արվեց մի խիստ նախազգուշացում. «Լավ իմացեք, որ հակառակ դեպքում վեհապետի կամքը կատարելու համար անհրաժեշտ ամեն ինչ անմիջապես պիտի գործադրվի ու դուք պիտի զղջաք» (181, հտ. 3, Ա մաս, 162)։ Քրիստոնյա պատվիրակները, առանց ահաբեկվելու, մերժեցին ենթարկվել և պատրաստակամություն հայտնեցին «գնալ ու հաստատվել այլ գյուղերում, իրենց դավանակիցների շրջանում, պայմանով, որ Բ. Դուռը կանխիկ վճարի իրենց անշարժ գույքի արժեքի կեսը, իսկ մյուս կեսն ամբողջությամբ՝ այլուր իրենց հաստատվելուց հետո»։ Օսմանյան կառավարությունն, իր հերթին, գտնելով որ «անկարելի պիտի լինի նրանց այս ձևով գաղթել տալ», դեսպաններին հանձնված հուշագրերով «անհրաժեշտ էր համարում դիմելու հարկադրանքի միջոցների» (4, գ. 780, թ. 288։ 181, հտ. 3, Ա մաս, 164—166)։ Հետաքրքիրն այն է, որ թուրքական իշխանությունները, «մի քանի գյուղերի մարոնականների... անվտանգության նկատառումներով գաղթելու որոշման երբեք էլ չհակառակվելու» իրենց հանձնառության (181, հտ. 3, Ա մաս, 164) հակառակ, ղանդվածային արտագաղթը համարում էին անթույլատրելի։

1845-ի հունվարի 1-ին դեսպաններին տրված մի այլ հուշագրում օսմանյան կառավարությունը կրկնում էր հոկտեմբերի 7-ի կարգադրությունը ամեն գնով գործադրության դնելու վճռականությունը. «Քանի որ հարցի լուծման (քրիստոնյաների) դիմադրությունը անհամատեղելի է հպատակի իրենց պարտականության և հանդամանքի հետ, պիտի հարկադրվենք լուծումը կիրառել։ Սակայն Բ. Դուռը շատ էլ համաձայն չէ արյունահեղության և հետևաբար ցանկանում է գտնել մի այլ դարման, մի այլ միջոց՝ մարոնականներին ընդունել տալու և լուծումը գործադրության դնելու, առանց որ նրանց վնաս հասցվի» (181, հտ. 3, Ա մաս, 164—166)։

Սպառնալից այդ հուշագիրը հունվարի 9-ին դեսպանաժողովում քննարկվեց։ Որոշվեց արտաքին գործերի նոր մինիստր Շեքիբ էֆենդիից «լուսաբանություններ» պահանջել թուրքական «ծրագրերի» շուրջ (181, հտ. 3, Ա մաս, 167)։ Ֆրանսիայի դեսպանը հարկ համարեց նախազգուշացում կատարել. «Անկարելի է, որ Եվրոպան... լուռ հանդիսատես լինի քրիստոնյա մի ժողովրդի վիճակին... որ իր վեհապետից խոնարհաբար խնդրում է օրինական մի բան...՝ չկառավարվել այլ կրոնի, սովորությունների և պատմական անցյալի տեր մի ժողովրդի կողմից, որին արյունալի վերջին դեպքերի վերհուշը դիտել է տալիս որպես թշնամու» (181, հտ. 3, Ա մաս, 166—167)։

Հունվարի 30-ի իր հերթական հուշագրում օսմանյան կառավարությունը, խրոխտալուց հետո, որ «մարոնականներն ու դրուզները սուլթանի հպատակներն են և միայն Բ. Դռնից է կախված ուժ գործադրելու» հարցը, անմիջապես էլ, իբր Բեյրութից ստացված «վերջին տեղեկագրերի» ներգործությամբ միայն, հայտնում էր, որ «հարցի լուծման միակ միջոցն է մուկատաաճիների կողքին... երկու համայնքներից յուրաքանչյուրի համար նշանակել իր միջից ընտրված վեքիլներ, որոնք պաշտոն պիտի ունենան տեղական գործերը վարել և այդ գործերի համար էլ դիմել Սայդայի փաշային, որի ենթակայության ներքո են լինելու»։ Բոլոր դեպքերում ընտրությունից հետո տեղական կայմակամի կողմից հաստատվելիք վեքիլներն իրավունք էին ստանում իրենց դավանակիցների համար նախադատ ատյանի դատավոր լինել և շրջանի մուկատաաճիի անունից հարկերը հավաքել (147, հտ. 2, 360—361։ 181, հտ. 3, Ա մաս, 168—170)։

Հաջորդ օրը կիսապաշտոնական «Ժուռնալ դը Կոստանդինոպլ» թերթը այդ հուշագրի մասին իր ընթերցողներին հաղորդում էր որպես կառավարական վերջնական որոշում։ Փետրվարի 8-ին դեսպանները բողոքում էին այդ հաղորդման դեմ, քանի որ առանց իրենց համաձայնության տրված էր մի որոշում, որը «Սայդայի փաշայի իրավասությունների ընդարձակմամբ» խոչընդոտում էր «Լեռան վարչական անկախությունը» (181, հտ. 3, Ա մաս, 168—170)։

Փետրվարի 24-ի պարդաբանական իր հուշագրում Բ. Դուռը հաղորդում էր, որ սուլթանի նախագահության ներքո հատկապես գումարված ժողովի որոշմամբ «խառը աղգարնակչությամբ մանրահատվածներում նշանակվելիք վեքիլների վրա Սայդայի փաշայի իշխանությունը սահմանափակ պիտի լինի այն իմաստով, որ վեքիլները նրան դիմելու են միայն այն դեպքում, երբ երկու համայնքների միջև ծագած վեճերում անհրաժեշտ պիտի լինի լուծել այն դժվարությունները, որոնք այլ եղանակով չեն հարթվելու և որ բացի այդ պարագաներից փաշան ձեռնպահ պիտի մնա վերոհիշյալ համայնքների ներքին վարչակառավարման միջամտելուց»։ Ի դեպ, հակառակ այն փաստին, որ դեսպաններն իրենց բողոքագրերում ակնարկել էին միայն «տեղական առանձնաշնորհների» խաթարման, Բ. Դուռն իր հուշագրում ընդգծում էր, որ «չի մտածում և չի ձգտում վերացնել մուկատաաճիներին, ոչ էլ տեղական առանձնաշնորհները, որ Լեռան բնակիչները ձեռք են բերել վերջին ժամանակներս» (147, հտ. 2, 362—364։ 181, հտ. 3, Ա մաս, 170—172)։

Ի հեճուկս անգլիական դեսպանի ձեռնպահության, նրա ֆրանսիական պաշտոնակցի պնդմամբ տերությունների ներկայացուցիչները պահանջում էին և Բ. Դուռն էլ մարտի 15-ին հարկադրվում էր զիջել ու վերափոխել հունվարի 30-ին և փետրվարի 24-ին հաղորդված որոշումները։ Երբ ելնելով այն փաստից, որ կայմակամներն առանց այդ էլ ըստ էության ենթակա են Սայդայի փաշային, սուլթանի անձնական կարգադրությունը մուկատաաճիներին և վեքիլներին իրավունք էր տալիս «անհրաժեշտության դեպքում դիմելու ուղղակի իրենց համայնքի կայմակամին» (147, հտ. 2, 364—365։ 181, հտ. 3, Ա. մաս, 173—174)։

Եթե դիտելու լինենք իր հուշագրի գոհունակ շեշտից, ապա Բ. Դուռն թվում էր, թե Լեռը երկատելու որոշումից հետո դիվանագիտական երկարատև քաշքշուկների ենթարկված լիբանանյան հարցին բարեբաստիկ լուծում է գտել, որդեգրել է վարչակառավարման սովյալ պայմաններում լավագույն կարգը, որ բավականություն է պատճառելու բոլորին, հետևաբար Լեռան վրա կյանքն էլ շուտով վերագտնելու է իր խաղաղ հունը։

Իրականում այդպես չէր բնավ։ Որպես քաղաքացիական պատերազմի հարուցիչ գնահատված վարչակառավարման նոր սիստեմին վեքիլների ինստիտուտով պարզապես ավելացվել էր պայթյունը փութացնող, Լեռը անվերապահորեն և արագաքայլ դեպի նոր արյունահեղությունների խորխորատը տանող դժոխային մի սարք։

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1845-Ի ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՁԻՆԱԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՇԵՔԻԲՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Զորակոչ կատարելու օսմանյան մտադրությունների և Արաբիստան օրդուսուի հրամանատար Նամըկ փաշայի գործնական քայլերի դեմ 1844-ի գարնան ծովափնյա քաղաքների և հատկապես Տրիպոլիի սուննիների շրջանում ծավալված հուզումը միաշաղկապվեց տնտեսական իրադրության վատթարացումից թելադրված դժգոհանքին։

Լիբանանյան ժամանակակից հողատարածքի հյուսիսային մերձափնյա քաղաքը իր հանրահայտ բարեկեցությունը հիմնականում պարտական էր մետաքսի և սպունգի արտաքին աշխույժ առևտրին (192, հտ. 2, 64—68)։ Նավահանգստային շրջանի՝ Մինայի հետ միասին քաղաքում ապրող ավելի քան քսան հազար բնակչությունը, որի մեծամասնությունը սուններիներ, վեց-յոթ հազարը հույն օրթոդոքսներ և հազիվ հազարը մարոնականներ էին, տարեկան 2500 քսակի ծանր հարկագումարի էր ենթակա (140, հտ. 6, 326—331), թեպետ երկար ժամանակ, Քուրայի մանրահատվածի և շրջակա մի երկու տասնյակ գյուղական բնակավայրերի մասնակցությամբ, առանց ավելորդ դժվարությունների, հոգում էր կենտրոնական գանձատան նկատմամբ իր պարտքը։

Թուրքական տիրապետության վերահաստատումից հետո դեպի Եգիպտոս, մասամբ նաև դեպի Ֆրանսիա արտահանության նվազումը, հարկերի ծանրացումը, օսմանյան փողի արժեզրկումը, ներքին շուկայում առանձնապես սննդամթերքների առևտրի վրա դրված տուրքերը և այլն, վատթարացրեցին քաղաքի տնտեսական դրությունը, այն էլ այն աստիճանի, որ առանց այդ էլ «օսմանյան իշխանություններին դժվարությամբ ենթարկվող, տրիպոլիցի սուններիները իրենց դժգոհանքը բացահայտեցին ավելի բուռն ու կորովի եղանակներով, քան այլուր ուրիշները (140, հտ. 6, 390։ 4, գ. 780, թթ. 106—109, 154—155)։

Անպատիժ մնացած հուղումները Տրիպոլիից ցայտեցին հարևան մարոնական լեռնագոտի՝ Ջիբբեթ Բշարրի։ Իհդինի շրջանում շիհաբականների վերջին դինված ելույթից դեռ մի փոքր ոգևոր, 1844-ի հունիսին ավելի քան 12 հազար բնակչությամբ Բշարրիի, շուրջ 5 հազարանոց Իհդինի, ապա և Զղորթայի ու մյուս բնակավայրերի մարոնականները, հիմնականում մետաքսի ու ձեթի արդյունահանմամբ զբաղվող գյուղացիներ, հրաժարվեցին իրենցից պահանջվող հարկը վճարելուց, պատճառաբանելով, որ այն անարդար է բաշխված։ Հունիսի 14-ին տերությունների հյուպատոսներին ուղարկված բողոքագրում, պաշտպանություն հայցելով թուրքական զորքերի հավանական միջամտության դեմ, մարոնական լեռնականները գանգատվում էին, որ «կայմակամները պայմանավորվել են մեզ անարդարության ենթարկել՝ իրենց հարազատների ու նրանց ունեցվածքի հաշվին», և որ ամիր Հայդարը անարդարության հետ նաև «բռնակալություն է հանդես բերում»։ Բողոքարկուները հայտնում էին, որ կատարյալ չքավորության են մատնված ու «մահվան դուռ հասցված» և որ իրենց խղճում են գյուղերում «այլևս ուտելու ոչինչ չգտնվող» խաուալաններն անգամ (4, գ. 780, թթ. 155—156)։ Անհավանական չէ, որ բշարրիցիների դրության վրա իր ներգործությունն էր ունեցել այն հանգամանքը, որ անցնող հնգամյակին դժվարանալուց հետո, վարչակառավարման նոր սիստեմի պայմաններում անհնարին էր դարձել նրանց կապը Բաալբեկի հովտում սեփականացված և մինչ այդ էլ հրացանն ուսին մշակվող հողակտորների հետ (140, հտ. 6, 264)։ Պետք է ասել, նաև, որ մարոնական կայմակամության հողատարածքում 1843-ի վերջերին և 1844-ի սկզբներին իշխանությունների կողմից անցկացված հողաչափման արդյունքները, որոնց հիմամբ էր հարկաբաշխումը ճշտորոշված, գյուղացիության կողմից ֆեոդալ-աղնվականության օգտին խարդախված էին հայտարարված և կտրականապես մերժվում էին ոչ միայն Ջիբբեթ Բշարրիում (201, 706—709)։

Ճիշտ է, բշարրիցիները, որոնց վրա ոչ մի ազդեցություն չգործեցին ինչպես պատրիարք Հոբեյշի հնազանդելու աստվածաշնչական հորդորները, այնպես էլ Ասադ փաշայի հետ բանակցությունների մեջ մտնելու և իշխանություններին ենթարկվելու առաջարկները, թուրքական զորքերի առաջ ի վերջո տեղի տվեցին, խնդրելով, սակայն, որ հարկաբաշխումը արդարորեն կատարող մի պաշտոնատար ուղարկվի իրենց շրջան, սակայն Լեռան վրա հուղումները չվերացան, այլ միայն առաջ խաղացին դեպի հարավ՝ Քեսրուան։

Հարկազերծման իրենց խոստումը դրժած և անցած երեք տարիների համար հարկ պահանջող Թուրքական իշխանությունների դեմ նախորդ տարի խռովություն բարձրացնելուց հետո, քեսրուանցիները 1844-ի ամառնավերջին բողոքի ցույցեր կազմակերպեցին մետաքսի նոր մաքսասակի դեմ, որ լեռնականների կողմից մոռացության տրված էր Թվում։

Առավել հուզումնահարը, սակայն, հարավային լեռնահատվածի մթնոլորտն էր, որ վարչակառավարման նոր սիստեմից առանց այդ էլ շիկացած, վեքիլների ինստիտուտի հաստատմամբ բռնկման եզրին էր կանգնած։

Ըստ էության բացասական, նոր վարչակարգի երևութապես միակ դրական տարրը՝ վեքիլների ինստիտուտը, որ որոշ բավարարություն էր տալիս խառը ազգաբնակչությամբ մանրահատվածների քրիստոնյաներին, Նուսեյմի կողմից իր ժամանակին դնահատվել է որպես դրուզ մանրիշխանների կողքին այլազավան գյուղացիության շահերի պաշտպանության կոչված համայնական վարչակառավարման ինստիտուտ (117, 309)։ Դա անառարկելիորեն ճիշտ է։ Եվ սակայն այդ ինստիտուտը միջհամայնքային տարակարծություններն անխուսափելիորեն խորացնող կարևոր մի ազդակ էր այն պատճառով, որ դրուզ ֆեոդալների դեմ իրենց դավանակից կայմակամին դիմելու հարցում քրիստոնյա վեքիլներին շնորհված իրավունքը չէր կարող երկու կայմակամների միջև ձգտվածության ու հակամարտության պատճառ չդառնալ։ Այդ ինստիտուտը, դարաղիական համայնքի դասային առանձնահատուկ փոխհարաբերությունների և բացառիկ համախմբվածության պայմաններում, անպայման պիտի դառնար նաև միջհամայնքային հակամարտություն բռնկեցնող դյուրավառ նյութ, քանի որ, թեկուզ Բ. Դոան համապատասխան կարգադրության մեջ ամեն ինչ մինչև վերջ պարզ չէր, դրուզ ֆեոդալազնվականները կարծես թե կորցնում էին իրենց քրիստոնյա վասալների նկատմամբ նախադատական ամեն մի իրավասություն, զրկվում էին մուկատաաճիական հիմնական՝ հարկահավաքման իրավունքի ու պարտականության զգալի մասից և իրենց դեմ ամեն քայլափոխի ցցված էին տեսնելու ներքնախավի ընդդիմադրությունը պաշտոնականացնող լիազորներ։

Հասկանալի է, որ դարաղիական վերնախավը վեքիլների ինստիտուտից իր վիրավորվածության ու դժգոհանքին և նրա դեմ իր դիմադրության ու պայքարին պիտի տար կրոնահամայնքային երանգ, վերջին տարիներին հողամշակությունից ավելի թիկնապահ զվարդիականու-

թյամբ զբաղվող իր դավանակիցների մոտ բորբոքելով հակաքրիստոնեական, հատկապես հակամարոնական կրքեր։

Հարավային մանրահատվածների մարոնական գյուղացիությունն, իր հերթին, որ դրուզ կայմակամի իշխանության ենթարկվելուց և 1844-ի գարնանն ազատ սրձակված դրուզ մանրիշխանների իրավունքների վերականգնումից դժգոհ էր ու նաև մտավախ, առանց սպասելու վեքիլների ինստիտուտի վերջնական ձևավորման, իսկ հետագային նույնիսկ դրանցից էլ անբավական, որոշեց «դրուզների հետ իր ժողովրդական դատը տեսնել զենքի դատաստանով», բանի ուժով «տապալել դրուզ շեյխերի իշխանությունը» (11, 281)։ Իր աշխատության էջերում այսպես արտահայտվելով, ռուսական հյուպատոսն իր դիվանագիտական տեղեկագրերից մեկում էլ արձանագրում էր. «Համայնքների (գյուղացիության—Ե. Ն.) և ֆեոդալականության միջև պայքարը, որին խառը ազգաբնակչությամբ շրջանների ցեղային և կրոնական տարբերությունները տվեցին քաղաքացիական պատերազմի բնույթ, ընդգրկել է ամբողջ Լիբանանի ազգաբնակչությունը» (4, գ. 799, թ. 234)։ Ի դեպ, նա միակ ժամանակակիցը չէ, որ մատնանշել է միջհամայնքային երկրորդ զինաբախման պատրաստվող մարոնական գյուղացիության սոցիալական նկատառումները։ Բրիտանական ռեզիդենտն, իր հերթին, արձանագրել է, որ «համայնքների միջև ատելության... ու թշնամության վերարծարծման անմիջական աղբյուրն եղավ մարոնականների ցանկությունը ազատագրվելու այն բանից, ինչ նրանք հորջորջում էին դրուզական հորատատիրական իրավունք» (80, 80—81)։

Եվ սակայն լիբանանյան իրականության մեջ հնարավոր չէր, որ սոցիալական դժգոհանքը, ատելությունն ու զայրույթը չստանային կրոնապավանական պատյան, այն էլ այնպիսին, որ փոխակերպիչ ներգործություն չունենար իր միջուկի էության վրա։

Ըստ երևույթին դեռ 1844-ի ամռան Դեյր ալ-Կամարի բրիստոնեական միջավայրում արդեն իսկ ստեղծվել էր «ժողովրդային դավադրության ընկերությունը»։ Ի միջի այլոց, հակառակ իր ընդհատակային մեծահունչ անվան, ընկերության ստեղծումը կա՛մ գաղտնի չէր եղել, կա՛մ էլ շատ կարճ ժամանակ էր գաղտնի մնացել։ Նրա գոյության ու գործունեության վերաբերյալ Պոլսի իր վերադասին ռուսական հյուպատոսը հաղորդում էր սեպտեմբերի 3-ին (4, գ. 780, թ. 255)։ Մյուս կողմից այն փաստը, որ բրիտանական ռեզիդենտը ընկերությունն անվանել է «ինքնաստեղծ (ինքնակոչ) քաղաքապետական մարմին» (80, 85), խոսում է այն մասին, որ դեյր ալ-կամարցիները պարզապես վարչակառավարման

նոր կարգադրություններով իրենց շնորհված իրավունքների ինքնուրույն մեկնաբանմամբ կազմել էին իբր իրենց բնակավայրի հարցերով զբաղվելու կոչված, այլ իրականում ուրիշ միտում ու ընդգրկում ունեցող մի օրգան։

Ընկերության հիմնական առաջադրանքն էր ոտքի հանել հարավային մանրահատվածների հիմնական զանգվածով գյուղացիական մարոնականներին և դեկավարել նրանց դինված «ժողովրդական դատաստանը» դրուզ ֆեոդալ-աղնվականության հետ։

Ըստ էության սոցիալական և անխուսափելիորեն գյուղացիության ձեռքով տեսնվելիք այդ «դատաստանը», սակայն, ավելի շատ էր ոգևորում հարավի մարոնականության առևտրավաշխառուական և արհեստավոր-արդյունագործական շրջաններին, որոնք իրականում ունեին քաղաքական որոշակի նպատակամղվածություն. վերացնել երկու կայմակամների սիստեմը և Լեռը վերամիավորել Շիհաբների միասնական իշխանապետության շրջանակներում։ Պատմագրության կողմից առ այսօր իսպառ անտեսված այդ հանգամանքը չափազանց հստակորեն հուշել է ռուսական հյուպատոսը։ Հաստատելուց հետո, որ ռազմական նախապատրաստությունների կենտրոնը Դեյր ալ-Կամարը դարձավ, նա շարունակել է. «Այդ քաղաքի քրիստոնյաները, որոնք իրենց երբեմնի բարեկեցությունն ու արդյունագործական զարգացումը պարտական էին ամիր Բեշիրին, առավել սրտանց գործի լծվեցին, քանի որ քաղաքական նոր հույսումները նրանց Շիհաբների վերադարձի երաշխիքը թվացին» (11, 281)։

Դեյր ալ-Կամարը, որ 1830-ական թթ. բարձրացել ու դարձել էր իշխանապետության կենտրոնը և մայրաքաղաքի վերածվելու հավակնություններ ուներ, անցած տարիների ցնցումներից անչափ տուժելուց հետո՝ Լեռան երկատմամբ կարող էր իր հույսերի մեջ թուլանալ, բայց ոչ երբեք լքել իր հավակնությունները, որոնց առաջ ճանապարհ կարող էին հարթել միայն Լեռան վերամիավորումն ու իշխանապետության վերականգնումը։ Եվ որպեսզի վերջիններս հնարավոր դառնային, անհրաժեշտ էր, որ առաջին հերթին հարավային մանրահատվածներում թոթափվեր դրուզ ֆեոդալ-աղնվականության գերիշխանությունը, թուլացվեին դարազիական ֆեոդալականության խոր ու ամուր արմատները։ Բնականաբար այնուհետև հերթը անպայման կհասներ նաև կենտրոնական ու հյուսիսային լեռնահատվածների մարոնական ֆեոդալականության հարաբերաբար թույլ արմատներին։

«Ժողովրդական դավադրության ընկերության» դեմ ալ-կամարցի առաջնորդների քաղաքական այդ նկրտումը բնականաբար պիտի միաձուլվեր հակաֆեոդալական զինված պայքարի նախապատրաստվող գյուղացիական զանգվածների սոցիալական նկրտումների հետ, հետևաբար և ընկերության հիմնական գործն էր լինելու ստեղծել ռազմական բազմաճյուղ կազմակերպություն։ 1845-ի ապրիլին Բեյրութից հաղորդվում էր, որ հարավի քրիստոնյաները, իրր դրուզների նախահարձակումից վախենալով, «ահա արդեն մի քանի ամիս է, որ կազմակերպվել են ռազմական տեսակետից։ Ամեն մի մանրահատված ունի ռազմական առաջնորդ, որի հրամանատարության ներքո կան այնքան թվով հարյուրապետներ, որքան որ գյուղեր կան շրջանում։ Հարյուրապետներն իրենց հերթին ղեկավարում են տասնապետներին, որոնք իրենց ջոկատով պետք է ներկայանան առաջին իսկ զորականչին» (4, դ. 799, թ. 26)։

Հետաքրքրական է, որ «ինքն իրեն թողչված ժողովուրդն իր միջավայրից նշանակված հրամանատարներին տվեց շեյխ աշ-շեբեր (երիտասարդների շեյխ, երիտասարդապետ—Ե. Ն.) տիտղոսը» (11, 281)։ Այլ կերպ չէր էլ կարող լինել։ Հարավային մանրահատվածներում, բացի պարզ շեյխական տիտղոս ստացած մի քանի տոհմերից, քրիստոնյա ֆեոդալ-աղնվականություն չկար և հյուսիսի երևելի տոհմերի հեղինակությունն էլ այստեղ հեռավոր, մինչ ազգաբնակչության տեղաշարժի ժամանակները գնացող հուշ էր միայն, հետևաբար անհրաժեշտության դեպքում, ինչպես դա տեղի էր ունեցել 1840-ի անցուդարձերի ժամանակ, ժողովրդին որպես կանոն ոտքի էին հանում և առաջնորդում իր ծոցից դուրս եկած «նոր մարդիկ, պլեբեյներ» (128, հտ. 2, 176)։ Ի դեպ, դա այդպես լինելով հանդերձ, 1845-ի սկզբներին շեյխ աշ-շեբերներից վերև կանգնած մարդկանց թվում կային աշխարհիկ թե հոգևոր աղնվականներ՝ ամիր Հասան Ասադ Շիհաբը, շեյխ Ղանդուր Սաադը, Յուսուֆ եպիսկոպոս Աբու Ռիզկը, օսմանական բեկ տիտղոսը ձեռք բերած Աբու Սամրա Ղանեմը, Յուսուֆ աշ-Շանտիրը, Յուսուֆ ալ-Մուբեյտը և մի քանի ուրիշներ (204, 53)։

Այդ անուններից գոնե առաջին երեք-չորսը կարող են մտածել տալ, որ մարոնական վերնախավի առնվազն շիհաբական հոսանքը գործուն մասնակիցն էր հարավի դավանակիցներին ոգեորող շարժման։ Պատահական չէր, որ Բաաբդայի շրջանում տեղի ունեցող բազմամարդ հավաքներում կենտրոնական դեմքերը Շիհաբ տոհմի ներկայացուցիչներն էին, որոնք պատրաստակամություն էին հայտնում կանգնել զինված պայքարի գլխամասում։ Փաստ է, նաև, որ Եվրոպայի կաթոլիկների

հանգանակության արդյունքների՝ պատրիարքի իսկ համաձայնությամբ ռազմական նպատակներով օգտագործումը, հարավային մանրահատվածների եկեղեցիների զինված համախմբման ու ժողովրդին ոգևորելու կենտրոնների վերածումը և քահանայական դասի բարձրներում սրբազան պատերազմի արծարծումը վկայում են, որ մարոնական հոգևորականության վերնադասին սրտամոտ էին «ժողովրդական դավադրության ընկերության» ծրագիրն ու գործողությունները։

Ընկերության Դեյր ալ-Կամարում հաստատված գաղտնի կենտրոնական կոմիտեն ղեկավարում էր հարավային բոլոր մանրահատվածներում գործող մասնաճյուղերը և հոգ տանում կարգ ու կանոնին (4, գ. 749, թ. 26)։ Առաջին իսկ օրից դրուզների դեմ նրա կողմից անգեն պատերազմի հայտարարություն էր այն, որ բոլոր քրիստոնյաներին, այն էլ մահվան սպառնալիքով, արգելվեց որևէ շփում ու կապ, թեկուզ վասալ-սենյոր փոխհարաբերություն ունենալ դրուզների հետ, ըստ որում կոմիտեն կարող էր մահվանիներ արձակել և վարձու դահիճների ձեռքով ի կատար ածել իր որոշումները, ինչպես դա տեղի ունեցավ Սաիդ Ջումբլաթին այցելած մարոնական 70-ամյա մի քահանայի հետ, որին փողոցում խեղդամահ արեցին (80, 85։ 11, 282)։ Ի դեպ, Սմիլյանսկայան իրավացիորեն է այդ կարգադրության մեջ տեսել գյուղացիներին դրուզ ֆեոդալներին ռենտա վճարելուց հրաժարեցնելու ձգտումը (43, 142)։

Դրուզներն, իրենց հերթին, ձեռնածալ նստած չէին։ Նրանց մոտիկ կանգնած բրիտանական դիտորդի վկայությամբ «ամբողջ երկու ամիս պատվիրակների անընդմեջ գնալ-գալը, ցերեկ թե գիշեր գաղտնի ժողովները... վկայում էին, որ Սաիդ բեյի դիվանը մշտական գործունեության մեջ էր» (80, էջ 89)։ Երկամսյա աշխուժության արդյունքն եղավ 1845-ի փետրվարի 2-ին Մուխթարայի պալատում շեյխերի բազմամարդ ժողովը, որ իրր հորենական ժառանգության հարցում Նաաման և Սաիդ Ջումբլաթ եղբայրների վեճը հարթելու նպատակով էր գումարված։ Դա անգլիական հյուպատոս Ռոուզի օգնությամբ հորինված ծխածածկույթ էր, որից խաբվեցին ինչպես ֆրանսիական և ավստրիական, այնպես էլ ռուսական հյուպատոսները (114, հտ. 4, 269։ 4, գ. 799, թ. 25)։ Վերջինս հետագայում, փաստորեն ընդունելով իր մոլորությունը, արձանագրել է, որ ժողովում «դրուզ շեյխերը, քրիստոնյաների նախապատրաստությունները տեսնելով, ...համաձայնեցին ժամանակավորապես մոռանալ իրենց ընտանեկան թշնամանքն ու քրիստոնյաների առաջին իսկ ապստամբության դեպքում միասնաբար գործել» (11, 281)։ Պետք է

կասկածել, որ ժողովի իսկական նպատակն էր միաբանեցնել նախ Ջումբլաթի և Յապրնկի խմբավորումներին, ապա և հենց իրենց՝ Ջումբլաթի եղբայրներին, սակայն ոչ թե ժառանգության, այլ մոտալուտ գործողությունների նպատակահարմարության հարցում, այլ խոսքով մարոնական մարտահրավերի առաջ սթափեցնել և սարդյան քաղաքական հոսանքին սիրաշահել կրոնապետ Նաամանին ու նրա ուրքալներին։

Մուխթարայի ժողովից հետո կողմերի նախապատրաստական աշխատանքներն աշխուժացան։ Ձևաք էին բերվում վառոդ և արճիճ, տարածվում՝ «փորձության ժամին» պատրաստ լինելու կոչեր, փորվում էին խրամատներ, բաղմանում՝ «ավազակություններն ու սպանությունները», արձանագրվում՝ տեղական բնույթի, այլ երբեմն լուրջ զինաբախումներ (4, գ. 799, թ. 26։ 80, 84 և 89—90։ 11, 282։ 204, 48—50)։ Առավել նառնդով նախապատրաստվողները հասկանալիորեն մարոնականներն էին, որոնք Ավստրիայում 1841-ի զոհերի համար հանգանակված 30 հազար արծաթ ռուբլին իսկ ամբողջովին օգտագործեցին զենք ու զինամթերք գնելու (11, 282)։

Ապրիլի 3-ին ռուսական հյուպատոսը արդեն կարողանում էր հաղորդել. «Քրիստոնյաներն այժմ խառը բոլոր մանրահատվածներում ռազմական տեսակետից իրենց ավելի ուժեղ և կազմակերպված զգալով, պահանջում են վերացնել դրուզ մուկատաաճիների ֆեոդալական բոլոր իրավունքները» (4, գ. 799, թ. 54)։ Ապրիլի 13-ին նա ավելացնում էր, որ «դրուզ օլիգարխիայի բոլոր չարաշահությունների փրկվելու ընդհանուր ձգտումը» մարոնականների շուրջ համախմբել է քրիստոնյա մյուս համայնքներին (4, գ. 799, թ. 60), թեպետ, հանուն արդարության հարկ է դա խոստովանել, օրթոդոքսները մինչև վերջ էլ ձեռնպահ մնացին զինաբախումներին գործուն մասնակցություն բերելուց։

Արժի, այստեղ, պատասխանել այն հարցին, թե ուրվագծվող փոթորկին ի տես ի՞նչ դիրք որդեգրեցին թուրքական իշխանությունները։ Առաջին հերթին պիտի հաստատել, որ Բ. Դուռը դժգոհ էր Լիբանան լեռան իրավիճակից։ Թեկուզ միայն այն փաստը, որ առանց մեկ գրոշի հարկագումար ստանալու, հարկադրաբար հոկայական գումարներ էր ծախսում, օսմանյան կառավարության պիտի դրդեր մտածել հարցը յուրովի լուծելու մասին։ Իսկ թուրքավարի լուծումը, դատելով մոտիկ անցյալի փորձից, չէր կարող միջհամայնքային նոր զինաբախում չենթադրել։ Ոչ թե անհատներ, այլ օսմանյան կառավարությունն է մեղավոր ու պատասխանատու,—վճռականորեն պնդել է ռուսական հյուպատոսը, գրանելով, որ թուրքերին «միջհամայնքային բախումներ ձեռ էին տալիս

իշխանության տեղական բոլոր տարրերն ու ազդեցությունը... վերացնելու և Լեռան վրա, հակառակ քրիստոնյա պետությունների առաջ իր ստանձնած պարտավորություններին, իր փաշային տեղադրելու համար» (11, 284)։ Մայիսի 3-ին Վեջիհի փաշային տրված մի հուշագրում Ավստրիայի, Ֆրանսիայի, Պրուսիայի և Անգլիայի հյուպատոսները (որոնց դեսպանները, ռուսականի հետ, մի քանի օր անց նույնն էին անելու Բ. Դռան մոտ) իրենք ևս ընդգծում էին Թուրքական իշխանությունների եթե ոչ ուղղակի մեղսակցությունը, ապա առնվազն հանցապարտ անգործունեությունը, պահանջելով անհապաղ կասեցնել զինաբախումները (181, հտ. 3, Ա մաս, 174 և 179)։

Եվ իրոք Կապուտան փաշան, որ նավատորմը տարեսկզբին Պոլիս ուղարկելով, որպես լիազոր մնացել էր Բեյրութում, միջհամայնքային զինաբախումների սկսելուն պես բավարարվելու էր Ֆերիք փաշային մի քանի գնդով Դեյր ալ-Կամար ուղարկելով, իսկ ինք մայիսի 2-ին նավ էր նստելու և փութով հեռանալու էր։ Իր հերթին Ասադ փաշան, հյուպատոսների պահանջով փետրվարին ուղևորվելու էր Դեյր ալ-Կամար, որպեսզի «հետաքննի Լիբանանի վրա մտքերի վիճակը և կանխի պայթյունը»։ Սակայն հենց այն ժամանակ, երբ բոլորին թվում էր, թե լեռնականներին որոշակի երկյուղ ներշնչելուց հետո բավականին վստահություն շահած ու մարդկանց և իրերի վիճակին քաջածանոթ «խելամիտ ու արդարամիտ փաշան», ինչպես բնութագրում էր նրան ժամանակագիրը, կարողացել էր կրքերը հանգստացնել և ի վիճակի էր արյունահեղությունն էլ կանխել, Բ. Դուռն իր ներկայացուցչին կարգադրում էր տեղափոխվել Բրուսա և փոխարենը Հալեպից Բեյրութ ուղարկում Վեջիհի փաշային։ Սալիբին համոզված գրել է, որ ինչպես Բ. Դուռը, այնպես էլ գնդապետ Ռոուզը կասկածում էին, որ Ասադ փաշան համակրում է քրիստոնյաներին (37, 127)։ Իսկ Վեջիհիի ժամանումը «կարծես թե պատերազմի սկզբնավորման ազդանշան հանդիսացավ» (11, 283)։

Եթե հավատք ընծայենք դրուզ Աբու Շաքրայի ընդգծված կերպով կողմնակալ հաղորդման, ապա 1845-ին մարոնականները ոչ միայն նախահարձակ եղան, այլև իրենց գրոհի մինչև իսկ օրն ու ժամը նախապես որոշել ու համաձայնեցրել էին (204, 54)։ «Մարոնականներն են, որ սկսել են վերջին պատերազմը»,—իր հերթին պնդել է ֆրանսիացի մի հեղինակ (118, 327), արձագանքելով բավականին տարածված տեսակետի։ Եվ սակայն անուրանալի փաստ է, որ թնկուզ և կողմերը կազմ ու պատրաստ էին, զինաբախումներն սկսեցին որոշ տարբերությամբ, համենայն դեպս ոչ այն կազմակերպվածությամբ, ինչ 1841-ի գրոհը

Դեյր ալ-Կամարի վրա։ Դիվանագիտական մի դեկուցագրում հաղորդվել է, որ միջհամայնքային երկրորդ արյունահեղության ազդանշանը տրվեց ապրիլի վերջին օրերին, երբ շեյխ Յուսուֆ Արդ ալ-Մալիքը փորձեց Բթեթար գյուղի քրիստոնյաներին զինաթափել։ Դիմադրություն ցույց տվող գյուղացիներին օգնության հասան հարևան գյուղերի ու մինչև իսկ Դեյր ալ-Կամարի քրիստոնյաների ջոկատները և հրդեհը բռնկվեց (4, գ. 799, թթ. 64—65)։ Բազիլին հետագային «Բշնամական գործողությունների սկիզբը» թվագրել է մայիսի սկզբներին և տեղադրել Բեյրութ-Սայդա ճանապարհի վրա, Դամուր գետի ափին, որտեղ «դրուզ և մարոնական ջորեպանների միջև սովորական վեճի... փոխհրաձգության արձագանքը ոտքի հանեց հարավային բոլոր մանրահատվածները» (11, 284)։

Բոլոր դեպքերում մայիսի սկզբներին Մեթնի, Շուֆի, Մանասիֆի, Ջուրդի, Արքուբի և Ջեզզինի մանրահատվածները, ապա և Անդրլիբանանը արդեն ներքաշված էին միջհամայնքային ահավոր եղբայրասպանության ոլորտը։

Զինաթափումների հենց սկզբում Ջումբլաթների մանրահատված Ջեզզինում, որի ավելի քան երեք հազար հարկատու այրերը մարոնականներ էին, տեղի աշխարհազորը, Աբու Սամրա Ղանեմի գլխավորությամբ, սպանեց կամ փախուստի մատնեց շրջանի շուրջ մեկ հարյուրյակ դրուզներին և ներխուժեց Շուֆ։ Այստեղ ևս դրուզները, առանց այդ էլ քրիստոնյաներից երիցս սակավաթիվ, շուտով ջախջախվեցին։ Մեկ տասնյակից ավելի գյուղեր հրկիզելով և դրուզներին ցաքուցրիվ անելով, մարոնականները մինչև իսկ մոտեցան Մուխթարայի պալատին։ Ջումբլաթների միջնաբերդը կարող էր և գրավվել, եթե նրա պաշտպանությունն իր վրա վերցնելով անմիջապես մարտի մեջ չմտներ թուրքական մի գորագունդ (80, 91)։ Այդ նույն ժամանակ Մեթնում, որտեղ շուրջ յոթ հազար մարոնականների և այլ քրիստոնյաների դիմաց երկու հազարից մի փոքր ավելի դրուզ այրեր կային, շարժման անցած քրիստոնեական ջոկատները, Զահլեից օգնության փութացածների հետ միասին «անխնա վառեցին ու թալանեցին» դրուզական բնակավայրերը և սպանեցին բնակիչներին (11, 284)։

Արյունահեղության սկզբից մի շաբաթ անց, անակնկալից սթափված, դրուզ շեյխերը հակահարձակման անցան։ Նրանք ոչ միայն օգնություն խնդրեցին Ուադի աթ-Թայմի և Հաուրանի իրենց դավանակիցներից ու թուրքական զորքերից, այլև, որպեսզի դրուզ գյուղացիներին հարկադրեն եռանդագին մարտի նետվել և ոչ իսկ մի բոպե մտածել տրն-

տնական զբաղմունքների մասին, իրենց իսկ ձեռքով հրկիզեցին մետաքսարդի աճեցման և բոժոժների ձեռք բերման ծառայող նրանց բոլոր շինությունները (11, 284)։ Զինաբախումների երկրորդ շաբաթն, ուրեմն, դրուզներինն եղավ։ Ղարբի, Շահհարի և Բաաբդայի շրջանի քրիստոնեական ջոկատները Արեյհի մարտում ջախջախվեցին։ Նրանց ղեկավարող Շիհաբ ամիրները գերի ընկան և միայն Ռոուզի միջամտությամբ է, որ բաց թողնվեցին ու Բեյրութ ուղարկվեցին։ Թուրքական զորքի բացահայտ օժանդակությամբ դրուզները մարոնականներին ջախջախեցին նաև Ռաս ալ-Մեթնում։ Հաղթականներն այնուհետև գրոհեցին քրիստոնեական գյուղերի վրա և իրենց հերթին սկսեցին սպանել, թալանել ու հրկիզել։ «Երկնվում է հին պատմությունը,— գրել է հայազգի ականատես Իսկենդեր Արգարիոսը,— գյուղերը բոցերի մեջ են, ունեցվածքը ոչնչացվում է, թալանված ու խոցոտված քրիստոնյա փախստականները հետապնդվում են դրուզների և թուրքական բաշիբոզուկների գնդերի կողմից» (48, 80)։ Առաջացավ աննախընթաց մի խուճապ։ Սայդան և Բեյրութը լցվեցին փախստականներով։ Հոբևյշ պատրիարքը անակնկալորեն վախճանվեց, ըստ որոշ աղբյուրների՝ կաթվածահար, «իմանալով դրուզական ասպատակների Քեսրուան մոտենալու մասին» (11, 286)։

Թուրք ասկյարների օժանդակությամբ և, ինչ խոսք, նաև քրիստոնեական ջոկատների վատ կազմակերպվածության և ապիկար ղեկավարման հետևանքով հաղթանակ հաղթանակի ետևից տանող դրուզները արյունահեղությունը Լեռնից տարածեցին դեպի Ուադի աթ-Թայմ։ Անցողիկ նշենք, որ կենտրոնական և հյուսիսային մանրահատվածների մարոնական աղնվականությունը, անկախ իր անշնորհքությունից, կայմակամ Աբու՝ լ Լամայի նկատմամբ ատելությունից դրդված, նաև հարավի դավանակից գյուղացիության շարժման հանդեպ երկակի զգացմունքներից կաշկանդված, մատը մատին չխփեց ու նույնիսկ իշդինցի երիտասարդ շեյխ Յուսուֆ Քարամը, որ հյուսիսցի լեռնականներով իջել էր կենտրոնական մանրահատվածներ և որի «գլուխգովանությունը,— Սալիբիի բնութագրմամբ,— այդ ժամանակ դարձել էր մարոնական քաղաքականության բնորոշ գիծը, մարտադաշտում չերևաց իսկ» (37, 127)։

Ուղղափառ և դրուզ խառը ազգաբնակչությամբ Հասբայայի և Ռաշայայի մանրիշխանները Շիհաբ տոհմից սունի ամիրներ Սաադ ադ-Դինն ու Էֆենդին էին։ Եգիպտական տիրապետության ժամանակաշրջանում Իբրահիմ փաշայի կողմից որպես ընդդիմադիր շնորհազրկված, նրանց դիրքերին նկրտել էին դրուզական Շամս և Կայս շեյխական տոհմերը, որոնք մինչ այդ քաղաքական ոչ մի կշիռ չունեին։ 1840-ական թթ-

սկզբին, Լեռան վրա Թուրք-դրուզական բարվոք հարաբերությունների իրավիճակը վերջիններիս ավելի նպաստավոր էր թվացել իրենց հավակնությունների գործնականացման համար և ուրեմն նրանք ջանացել էին, թեպետ ապարդյուն, 1830-ական թթ. Հասբայայում հինգ-վեց հարյուր օրթոդոքսների դավանափոխած բողոքական միսիոներների օգնությամբ Ուադի աթ-Թայմից ստիպել տեղահանել Շիհաբներին։ 1845-ին Շամս և Կայս շեյխերին իրենց ժամը հնչած թվաց։ Նրանք համոզված էին, որ մանրիշխան դառնալու համար բավական է արյան մեջ խեղդել Շիհաբների հենարան օրթոդոքս քրիստոնյաների ընդդիմադրական դիրքորոշումը։

Լեռան վրա միջհամայնքային դինաբախումների սկսելուն պես այդ շեյխերն օգնության կանչեցին բանտից փախչելուց հետո ներման չարժանացած ու Հաուրանի դավանակիցների և քոչվոր բեդուինների շրջանում դեգերող Նասիֆ Աբու Նակիտին, խոստանալով իրենց հարցի լուծումից հետո միասնաբար գնալ դրուզ լեռնականներին օգնության։ Շեյխ Նասիֆը, ինչպես վկայել է ռուսական հյուպատոսը, «Հաուրանի դրուզներից, քրդերից, բեդուիններից և բոլոր տեսակի թափթփուկներից ավելի քան երեք հազարանոց մի ավազակախումբ հավաքագրելով», շարժվեց Հասբայայի վրա։ Քրիստոնյաների նկատմամբ միշտ էլ «հայրական հոգածություն» դրսևորած ամիր Սաադ ադ-Դինը, կանխազգալով վտանգը, օրթոդոքսներին խորհուրդ տվեց ապաստան որոնել Դամասկոսում։ Քրիստոնյաները, սակայն, ճանապարհին անակնկալի բերվեցին և հերոսական ինքնապաշտպանությամբ, թեկուզ և մի քանի հարյուր զոհ տալով, մի կերպ հասան Զահլե։ Բիկաայի հովտում Վեջիհի փաշայից «սիրալիր ընդունված և որպես նվեր քաֆթան ստացած» շեյխ Աբու Նակիտն այնուհետև գնաց կոտորելու Ուադի աթ-Թայմում մնացած քրիստոնյաներին, այդ թվում և բողոքականներին, թալանեց շրջանը և տեղի դրուզների ուղեկցությամբ բարձրացավ Լեռ, նոր շունչ տալով իր դավանակիցների խժդժություններին (11, 286—288)։

Մայիսի 17-ին տերությունների Բեյրութի հյուպատոսները խիստ ոճով մի հուշագիր հանձնեցին էյալեթի փաշային, որին գրում էին. «Ձեր խոսքերն ու խոստումները չեն համընկնում ձեր գործողությունների հետ։ Մինչ մի կողմից խոսում եք խաղաղության մասին, մյուս կողմից կայսերական զորքերին... թույլ եք տալիս Ջեզզինում միանալ դրուզներին՝ ընդդեմ քրիստոնյաների, թույլ եք տալիս դրուզներին թափանցել Մեթն և այն ծայրե ի ծայր ասպատակել ու հրդեհել, քրիստոնեաբնակ գյուղեր հրկիզելով մինչև իսկ... հյուպատոսների աչքերի առաջ»։ Տերություններ-

րի ներկայացուցիչները պահանջում էին Մեթնից դուրս բերել դրուզներին ու վերացնել Քեսրուանին սպառնացող վտանգը, ինչպես նաև անհապաղ Բեյրութ խորհրդակցության հրավիրել կայմակամներին, մուկատաաճիներին և վեքիլներին (181, հտ. 3, Ա մաս, 178)։

Հյուպատոսների բողոքն անհիմն չէր։ Թուրքական գնդերը Շուֆում ճնշել ու զինաթափել էին քրիստոնյաներին, նրանց զենքերը բաժանել դրուզներին ու վերջիններիս նետել այլադավանների վրա (4, գ. 799, թթ. 64—65)։ Ավելին. ինչպես վկայում են որոշ աղբյուրներ, ոչ միայն «Թուրքերն աջակցել են դրուզներին», այլև «իրենք են կոտորել իրենց անձնատուր եղած քրիստոնյաներին, հատկապես Ջեզզինի մերձակա բերդում» (181, հտ. 3, Ա մաս, 183—189)։ Մայիսի 23-ին, հյուպատոսների շղագարող «դառը մեղադրանքների և բուռն դանգատների» վրա Վեզիրի փաշան Բեյրութ խորհրդակցության հրավիրեց քրիստոնյա և դրուզ պարագլուխներին։ Հունիսի 2-ին, երբ զինաբախումներն արդեն դադարել էին, Բահրի փաշայի նախագահության ներքո գումարված ժողովում երկու համայնքների ղեկավարները վերջապես ստորագրեցին ու փոխանակեցին միևնույն բովանդակությամբ պայմանագրեր, որով հանձն էին առնում.

1. Որևէ հարձակում չգործել հակառակորդ կողմի վրա։ Թշնամական արարք թույլ տվողներին ձերբակալել և իշխանություններին հանձնել։

2. Զինական որևէ համախմբում չկազմակերպել և զբաղվել խաղաղ աշխատանքով։

3. Ապաստան շնորհել գաղթականներին։

4. Միջհամայնքային զինաբախում քարոզողներին խստիվ պատժել։

5. Զինական խմբերը մինչև վերջ ցրել։ Ամեն մի սպանություն այսուհետև ոճիր համարել ու խստիվ պատժել։

6. Եթե հակառակորդ կողմը զինական համախմբում կազմակերպի, իշխանություններին իմաց տալ ու վերջիններիս անտարբերության դեպքում միայն սեփական միջոցներով կանխարգելել սպառնալիքը։

7. Հանցագործի փախուստի դեպքում նրա հարազատներին կամ գյուղի երևելիներին բանտարկել։ Ձերբակալման համար ուղարկված զինվորներին գյուղում թողնել այնքան ժամանակ, մինչև որ հանցագործը հայտնաբերվի կամ նրա ունեցվածքից արյան սովորական գնի եռապատիկը գանձվի։

8. Թալանով զբաղվողներին ձերբակալել և իշխանություններին հանձնել։

9. Դամասկոսի, Սայդայի, Դեյր ալ-Կամարի, Տրիպոլիի և մյուս գլխավոր ճանապարհների վրա թուրքական զորք տեղադրել, իսկ մնացած վայրերը պահպանել տեղի ազգաբնակչության ուժերով։

10. Կողմերի միջև բարի դրացիական հարաբերություններ հաստատել։ «Պատահածը մոռացության գետի մեջ պիտի գցվի ու ջնջվի պատահարների գրքից», սակայն դա չի նշանակելու, որ կողմերն «իրենց իրավունքներից ու պահանջներից» հրաժարվում են (4, գ. 799, թթ. 144—146։ 181, հտ. 3, Ա մաս, 180—183)։

Հարավային մանրահատվածներում հարաբերական խաղաղության հաստատումից անմիջապես հետո մի իսկական փոթորիկ պայթեց Լեռան հյուսիսային մանրահատվածներում։ Պատճառը Հոբեյշ պատրիարքի հաջորդի ընտրության հարցն էր։ Առճակատում էին երկու թեկնածուներ. Ֆեոդալ-աղնվականության ու նրա ծոցից դուրս եկած բարձրաստիճան հոգևորականության հովանավորյալ, քեսրուանյան շեյխական տոհմից Յուսուֆ խազին եպիսկոպոսը և նրա տոհմի վասալ գյուղացու որդի, Հռոմում սովորած ու շուրջ մեկ տասնյակ լեզուների տիրապետող Բուլուս Մասադ եպիսկոպոսը (157, 75)։ Գյուղացիական տասը հազարանոց և հասարակ ծագմամբ վանականների ու գյուղական քահանաների երեք հազարանոց զանգվածը, որին ղեկավարում էին սինոդի անդամներից Թոբիա Աուն և Աբդալլա ալ-Բուսթանի եպիսկոպոսները, շուրջ երկու ամիս խոշընդոտում էր ընտրությունը, «պաշարված» պահում պատրիարքարանը։ Պապի ներկայացուցիչների գործուն միջամտությամբ ի վերջո պատրիարք հայտարարվեց խազինը։ Հրացաններով և մահակներով զինված ժողովուրդը, քահանաների և վանականների բազմության հետ, վերստին շարժվեց դեպի պատրիարքարան (4, գ. 799, թ. 235)։ Իշդինի շեյխ Յուսուֆ Քարամն այս առթիվ լիբանանյան նոր պատմության թատերաբեմ իր գործնական մուտքը կատարեց՝ զինված ջոկատով օգնության հասնելով պաշարյալներին, ճնշելով բողոքողներին և փաստորեն սրբագործելով խազինի ընտրությունը (157, 373—374)։

* * *

1845-ի օգոստոսի սկզբներին, լիբանանյան հարցին վերջնական լուծում տալու առաքելությամբ և սուլթանի հատուկ լիազորությամբ Եկրոպի ժամանեց արտաքին գործերի մինիստր, ժամանակակցի վկայությամբ «գործարար, փորձառու և գիտակ մարդ» Մեհմեդ Շեքիբ էֆենդին (11, 292)։ Մինչ այդ Արաբիստան օրդուսուի զլխավոր հրամանատար Նամըկ փաշային կարգադրված էր իր զորաբանակով անցնել Լիբանան լեռ և «ուժի հավանական օգտագործման» սպառնալիքով օգ-

նել նրա առաքելության հաջողության։ Ի միջի այլոց, Բ. Դուան դեկավարը մահակի հետ լեռնականներին տանում էր կարկանդակի մի կտոր՝ 1841-ի վնասուց հատուցումները մասնակիորեն մարելու համար անհրաժեշտ գումար։

Բ. Դուան շտապելու հիմնավոր պատճառ ուներ։ Այն հանգամանքը, որ բացի ալեհեր Բեշիր II-ից, նրա տոհմի մյուս բոլոր անդամները, այդ թվում և ամենից ուշ՝ ամիր Ամինը, աքսորավայրի և իրադրության թելադրանքով երես էին թեքել քրիստոնեությունից և մահմեդականացել*, մայրաքաղաքներում, հատկապես Փարիզում և Վիեննայում, հոգս էր ցնդեցրել Լեռան վրա շիհաբական կաթոլիկ իշխանապետությունը վերականգնված տեսնելու ամեն մի հույս, հետևաբար դեսպանները վերախմբավորվել էին որպես կառավարիչ թուրք փաշա տեղադրելու օսմանյան մտադրությունը խոչընդոտելու հարցում։ Եվ ուրեմն «դեսպանները Պոլսում սկսեցին վճռական շեշտով խոսել և Բ. Դուան զգացնել տվեցին, որ հարցը կարող է լուծվել առանց իր համաձայնության»։ Տերությունների ներկայացուցիչները «համառորեն պահանջում էին անկեղծորեն կիրառել» 1842-ի վարչակարգը (11, 291)։

Հուլիսի 28-ին, ճանապարհ ընկնելուց առաջ, դեսպաններին հասցեագրված նամակում Շեքիբ էֆենդին կտրականապես ընդգծելով, որ Լիբանան լեռան համար ճշտորոշված վարչակարգն անփոփոխելի է, հետևաբար և Բեյրութում հյուպատոսների ամեն մի միջամտություն՝ անիմաստ, հարկ էր համարում նաև խառը ազգաբնակչությամբ շրջանների մուկատասաֆիների և վեքիլների միջև իշխանության բաժանման հարցում տիրող անորոշությունը հստակեցնել.

1. Իրավական (հուրուբին) հողի վրա դավանակիցների միջև ամեն մի վեճ լուծվելու է վեքիլի կողմից, իսկ տարբեր հավատքների պատկանողների միջև վեճերը լուծելու են մուկատասաֆին ու վեքիլը միասնաբար։ Եթե նրանց միջև տարաձայնություն ծագի, ապա հարցը պիտի ներկայացվի շրջանի կայմակամին։

---

* Ամիր Բեշիր II-ը մահացավ Պոլսում, 1850-ի դեկտեմբերի 30-ին։ Նրա աճյունը ամփոփվեց հայ-կաթողիկե սուրբ Փրկիչ եկեղեցու խորանի ներքո, իսկ շիրմաքարի վրա արաբերենի կողքին գրվեց նաև գրաբար. «Յաւերժական կենաց վերելս աստի առնու ամիր Պեշիր, քաջ այր, Շահապ Լիբանանու, յիսներեակ մի և ղվեց ամ եղեալ վայրեանցն իշխեցողս։ Զխուն ծածկէ աւուրց նշխար պանդխտական յայս ի հող»։ 1945-ի հոկտեմբերի 4-ի իր նիստում Լիբանանի կառավարությունը որոշեց Բեշիր II-ի աճյունի հետ Բեյրութ տեղափոխել նաև հայերեն շիրմաքարը, ինչ որ կատարվեց։

2. Վարչաքաղաքական (սիասին) հողի վրա, կենտրոնական կառավարության կամ էյալեթի մուշիրի հրամանների գործադրման, շրջանի հարկերի գանձման և նմանատիպ այլ հարցերում վեքիլներն իրենց դավանակիցների առաջ մուկատաաճինների լիազոր ներկայացուցիչներն են։

3. Գործադիր-ստիկանական (զապտիե) հողի վրա վեքիլները որևէ իրավասություն չունեն և միայն ու միայն մուկատաաճիններին է պատկանում կարգ ու կանոնին հսկելու, հանցապարտներին դատելու ու պատժելու իրավունքը։ Սակայն առանց վեքիլի համաձայնության չի կարելի նրա դավանակցի նկատմամբ որևէ պատիժ կիրառել, իսկ նրա անհամաձայնության դեպքում հարցի վերջնական լուծումը թողնվում է շրջանի կայմակամի հայեցողության (147, հտ. 2, 365—369։ 181, հտ. 3, Ա մաս, 68—73)։

Բեյրութ հասնելուց հետո Շեքիբն իր գործունեությունն սկսեց սեպտեմբերի 14-ին Լևոնից վտարելով բոլոր օտարերկրացիներին։ Դրա հետևանքով ֆրանսիական դեսպանի և Բ. Դոան միջև ծագեցին դիվանագիտական սուր վեճեր և գործը կարող էր մինչև իսկ թուրք-ֆրանսիական խզման հանգել, եթե սուլթանի կարգադրությամբ որոշում չտրվեր թուլացնելու ֆրանսիահպատակների Լևո վերադարձը, հատուցում կատարելու Աբեյհի և Սոլիմայի 1841-ին ավերված կաթոլիկ վանքերին, պատժելու Աբեյհի թուրքական կայազորի սպային, Պոլիս կանչելով Տրիպոլի աքսորելու ֆրանսիական վանականների սպանած Աբու Նակիտին և որոնելու ու դատելու նրա մեղսակիցներին (181, հտ. 3, Ա մաս, 195—200)։

Շեքիբն այնուհետև ձեռնարկեց լեռնականների զինաթափման, իր հաջողության որպես երաշխիք նախօրոք Բեյթ ադ-Դին հրավիրելով ու «որպես հյուր» վայր դնելով երկու կայմակամներին և դրուզ ու մարոնական գլխավոր ամիրներին ու շեյխերին։ Նա իր «պատվավոր արգելափակյալներին» հաղորդեց, որ սուլթանը կարգադրել է «մոռացության տալ արյունահեղությունը և անթերիորեն կիրառել քրիստոնյաների նկատմամբ շեյխերի իրավունքների սահմանափակման ու կառավարական կարգադրությունները», ինչպես նաև միջհամայնքային հետագա ամեն մի գինաբախում կանխարգելելու համար՝ ժողովրդից հավաքել 1840-ին անգլիացիների կողմից բաժանված բոլոր զենքերը (11, 292)։ Զինաթափումն անցկացվեց «խստամիջոցներով և բռնությամբ», «անմեղ բնակիչներ ենթարկվեցին վայրագ բռնությունների և դրանցից աղատվեցին միայն կաշառքով», «չխնայվեցին հոգևորականությունն ու

եկեղեցիներն անգամ» և «ամբողջ գյուղեր ռազմատուգանքների ենթարկվեցին» (181, հտ. 3, Ա մաս, 209)։

Շեքիբին տրված հիմնական առաջադրանքը նոր վարչակարգի հետ «մտքերը հաշտեցնելն էր», այն պայմանով, որ եթե հարկ լինի այդ նպատակով ուժ գործադրել, ապա դա պետք է կատարվի «սահմանափակ ու մասնավոր և ոչ թե ընդհանուր» կարգով (11, 207—209)։ Բայց արտաքին գործերի մինիստրին հարկ չեղավ ուժ գործադրել. 1845 թ. հոկտեմբերի 29-ին նա պարզապես դրուց և մարոնական կայմակամներին հասցեագրված բուլուրուլդիներով, ավելի շուտ «հրահանգներով», որոնց պատճենը հանձնվեց հյուպատոսներին և որոնք պատմագրության կողմից անվանվում են «Շեքիբ էֆենդիի կանոնադրություն» (կամ «սահմանադրություն»), հաղորդեց, որ Լեռան վարչակառավարման ուղղությամբ ձեռք են առնված վերջնական միջոցառումներ (181, հտ. 3, Ա մաս, 200—207)։

Կանոնադրության հիմնական նորությունը կայմակամներին կից ու նրանց նախագահության ներքո գործող խորհուրդների ստեղծումն էր։ Ամեն մի խորհուրդ բաղկացած էր լինելու նախագահի տեղակալից, որին կայմակամն էր նշանակելու, սուննի, դրուզ, մարոնական, հույն-օրթոդոքս և հույն-կաթոլիկ համայնքներից մեկական խորհրդականից ու դատավորից և մթուալլի համայնքից մեկ խորհրդականից, որոնք ընտրվելու էին իրենց դավանության հոգևոր վերնախավի կողմից և հաստատվելու էին նախ կայմակամի, ապա և նահանգապետ փաշայի կողմից։ Նրանք պետք է լինեին տեղաբնիկ ու Լեռան վրա բնակվող, հյուպատոսական ծառայության մեջ չգտնված և օտարահպատակի հետ շահընկեր չեղած երևելիներից։ Դատական հարցերում դատավորի, իսկ վարչահարկային հարցերում խորհրդականի կարծիքն էր առաջնային լինելու։

Կանոնադրության առաջին հոդվածը վերաբերում էր խորհուրդների հիմնական պարտականության՝ հարկերի արդարացի բաշխման ու գանձման, որոնց համար ճշտորոշվում էին երեք սկզբունքներ. «Հարկերի բաշխումը հարկատուների մոտ որևէ հիմնավոր բողոքի կամ գանգատի պետք չէ տեղիք տա», «ժամանակին գանձվելով հանդերձ, հարկերի հավաքը հարկատուներին վիրավորանքներ, վնասներ կամ ավելորդ ծախսեր պատճառելու առիթ պետք չէ դառնա», «հարկերի հավաքմամբ զբաղվող մարդիկ պետք չէ կարողանան օրինական դրույքից ավելին գանձել»։

Վերջին հարցի կապակցությամբ Կանոնադրությունը թեպետ ընդգծում էր, որ հարկահավաքը պետք է կատարվի «նախկինում հաստատված կարգով» և որ «յուրաքանչյուրը պետք է վճարի ըստ իր հնարավո-

ությունների (միջոցների)», այնուամենայնիվ հարկ էր համարում «նշել ու բացատրել». Յուրաքանչյուր տարի խորհուրդները «քննարկումներից հետո պետք է կազմեն յուրաքանչյուր շրջանի հարկերի մասնավոր ցուցակը։ Խորհրդի բոլոր անդամների կողմից ստորագրված և կայմակամի կողմից հաստատված (մասնավոր) ցուցակը պետք է հիմք ծառայի ամեն մի հարկատուի անունով առանձին-առանձին կազմվելիք հաշվեթերթիկների համար։ Խորհրդի անդամների կողմից նույնպես ստորագրված և կայմակամի կողմից նմանապես հաստատված այդ (առանձին) հաշվեթերթիկները պետք է հանձնվեն հարկերի հավաքմամբ զբաղվող գանձիչներին և մուկատաաճիներին։ Հաստատված կարգի համաձայն (հարկահավաքը) կարևոր մի մասն է այն պարտականությունների, որոնք մուկատաաճիները կոչված են կատարելու՝ թույլ չտալու համար, որ հարկահավաքման գործում առաջիկայում որևէ չարաշահություն կամ բռնություն գործադրվի։ Այսուհետև հարկը գանձվելու կամ վճարվելու է միայն ու միայն վերևում հիշատակված (առանձին) հաշվեթերթիկները (հարկատուներին) ներկայացնելու դեպքում»։

Ի դեպ, անկարևոր հանգամանք չէր այն, որ Կանոնադրության համաձայն հարկահավաքի ուղարկվող լիազորներն ու խաուալները, «որքան հնարավոր է», պետք է պատկանեին այն նույն դավանության, ում մոտ գնում էին հարկագանձման։ Մյուս կողմից, «ինչպես հարկային պարտավորությունների շուրջ աղդարարություն կատարելիս, այնպես էլ աղդարնակչությունը կազմող տարբեր համայնքների համար օգտավետ միջոցառումներ իրականացնելիս պետք է ջանալ, որ հնարավորին չափ քիչ վրդովվի նրանց հանգիստը և կարելիության սահմաններում կիրառվեն վերոհիշյալ մեղմությունն ու արդարամտությունը, հատկապես և խստիվ՝ վանքերի նկատմամբ»։

Հարկաբաշխման և հարկագանձման, ինչպես նաև «աղդարնակչության ընդհանուր շահերի հետ առնչվող կարևոր» մյուս հարցերի կարգավորման իրավասությունը պատկանում էր խորհրդի ընդհանուր ժողովին, որտեղ ամեն մի համայնքի դատավորն ու խորհրդականը միասնաբար մի ձայն էին ունենալու։

Կանոնադրության երկրորդ հոդվածը վերաբերում էր «խորհուրդների պարտականությունների մեջ երկրորդ տեղը գրավող» դատավարման հարցերին, ըստ որում ամեն մի «համայնքի խնդիրները պիտի կարգավորվեն ու հարթվեն իր իսկ դավանանքի դատավորի ու խորհրդականի կողմից», սակայն անպայման մյուս համայնքների իրենց պաշտոնակիցների ներկայության։ Դավանակիցների միջև վեճերը պետք է լուծվեն

իրենց համայնքի խորհրդականի ու դատավորի կողմից, տարբեր դավանության մարդկանց վեճերը՝ երկու կողմերի խորհրդականների ու դատավորների կողմից։ Եթե վերջիններիս միջև անհամաձայնություն ծագի, կայմակամը պետք է փորձի «վերացնել տարակարծությունը և կողմերին համաձայնեցնել», հակառակ դեպքում կողմերի համամտությամբ հարցի քննարկմանը պիտի ներգրավվի երրորդ համայնքի մի դատավոր։ Դատավճիռները կարող են դանգատարկվել կայմակամի մոտ, որ հարցի վերաքննությունը պետք է կազմակերպի՝ ներգրավելով լրացուցիչ դատավորների։ Ամեն մի դատավճիռ պետք է ստորագրվի ու կնքվի կայմակամի և դատավորների կողմից ու գործադրության դրվի «կայմակամի անմիջական հրամանների ներքո գտնվող ոստիկանության» կողմից։ Ուշագրավ է, որ տարբեր կայմակամություններում ապրող մարդկանց միջև վեճերը քննարկվելու էին ոչ թե դանգատարկուի, այլ ամբաստանվողի կայմակամին կից գործող խորհրդում։ Դատավճռից դանգատարկուի դժգոհանքի դեպքում հարցը քննարկվելու էր նաև նրա կայմակամության խորհրդում և երկու վճիռների անհամապատասխանության դեպքում լուծումը թողնվելու էր նահանգի փաշային, որ ի հարկին որոշում էր կայացնելու երկու կողմերի դատավորների մասնակցությամբ։

Հետաքրքրական է, որ էյալեթի մուշիրը ևս երկու դեպքերում առնչակցվում էր կայմակամական խորհուրդների գործունեության. մահավճիռ ենթադրող մարդասպանությունները, ինչպես նաև հարկային հարցերում որևէ համայնքի ներկայացուցիչների և խորհրդի անդամների մեծամասնության տարակարծությունները պետք է քննվեին ու վճռվեին փաշայի կողմից։ Բոլոր դեպքերում Կանոնադրության առավել ժամանակ տարրը հենց այն էր, որ անկախաբար թե ի՞նչ աստիճանի, առաջին անգամ լինելով պաշտոնականացնում էր փաշայի գերագասությունը Լեռան ամեն մի իշխանության։

Ավելացնենք նաև, որ խորհրդի անդամները «պիտի հարկադրվեն հրաժարվել իրենց գոյության (այժմյան) միջոցներից», հետևաբար պիտի ստանան համապատասխան աշխատավարձ, ուրեմն և «պետք է ձեռնպահ մնան խնդրարկուների կողմից որպես նվեր կամ որևէ այլ անվան ներքո իրենց ընծայվելիք որևէ (պարգև) վերցնելուց»։

Կանոնադրությունը հրապարակելուց հետո Շերիֆ էֆենդին Բաղդայի շրջանի երկամամբ ճշտորոշեց երկու կայմակամությունների սահմանագիծը, դրուզ կայմակամ, իր «վատ բարքի, ժլատության և կոպիտ վերաբերմունքի համար» դժգոհությունների տեղիք տվող ամիր

Ահմեդին փոխարինեց նրա եղբայր, «սուր մտքի տեր և մեղմ բնավորություն ունեցող» ամիր Ամին Արսլանով (11, էջ 296), մանրիշխանական իրավունքներից զրկեց միջհամայնքային գինաբախումներում առավել դաժանություն հանդես բերած մուկատաաճիներին, թեպետ նրանց փոխարեն նշանակվեցին տոհմակից մարդիկ։ Նա իր հայեցողությամբ նշանակեց նաև երկու խորհուրդների անդամներին, ըստ որում լեռնականների ամիրական ու մեծ շեյխական տոհմերից ոչ որ պաշտոն չստացավ, թեպետ ընտրվածների թվում կային մի շարք հոգևորականներ և հասարակ շեյխական տոհմերի (Աբու Սաար, ալ-Խուրի, ալ-Խաթիբ) ներկայացուցիչներ (181, հտ. 3, Ա մաս, 202)։ Հարավային մանրահատվածներում քրիստոնյա վեքիլներն ընտրվեցին «երկու կողմերի ընդհանուր համաձայնությամբ, հաստատվեցին նրանց իրավունքները և որոշվեցին նրանց փոխհարաբերությունները ժողովրդի, շեյխերի և կայմակամների հետ» (11, 296)։ Հետաքրքրական կլինի նշել, որ ընտրված վեքիլների թվում կային վերջին զինաբախումների հայտնի մասնակիցներ, բազմաթիվ արհեստավորներ և գյուղական վերնախավի ներկայացուցիչներ։ Դեյր ալ-Կամարը, որ երկու վեքիլների անմիջական ղեկավարման ներքո էր գրվում, որպես գերագույն իշխանավոր ունենալու էր Սայդայի փաշայից նշանակված մի թուրք աստիճանավոր։

Շեքիբը պահպանեց Լեռան 3500 քսակի տարեկան հարկագումարը, որից, ինչպես որոշված էր նախկինում, միայն 1200-ն էր ուղարկվելու օսմանյան գանձատուն, իսկ մնացածն օգտագործվելու էր տեղական ծախսերի ու կարիքների համար։ Քրիստոնյաներին վճարվեց երկու հազար քսակի վնասուց մասնակի հատուցում։

Առանց Կանոնագրության նշանակությունը գերագնահատելու և հանուն արդարության անհրաժեշտ է ասել, որ այն Բ. Դռան կողմից Լիբանան լեռան յուրահատուկ դեմքը և առանձնահատուկ գոյավիճակը ճանաչող պաշտոնական առաջին փաստաթուղթն էր, որ միաժամանակ նշանավորում էր Լեռան միջնադարյան-ֆեոդալական վարչակառավարումից ընդհատ դուրս գալու առաջին աստիճանը։ Ինչ խոսք, որ մանրիշխան-մուկատաաճիների վարչադատական, ֆինանսահարկային և այլ մի շարք առանձնաշնորհների վերացումը կամ սահմանափակումը նույնպես դրական երևույթ էին և կանոնադրական ակտով խարխլում էին ֆեոդալական հարաբերությունների հիմքերը լիբանանյան լեռնատարածքում։

Շեքիբի գործունեության դրական գնահատականը նրա շնորհազրկումն իսկ էր, որի մասին հանդամանորեն հաղորդող ու վերլուծող միակ աղ-

բյուրը այս անգամ ևս ռուսական հյուպատոսն է. «Բ. Դուռը չարացած էր իր կոմիսարի դեմ և նրան, հակառակ իր կամքին, դեսպան ուղարկեց Վիեննա, որպեսզի զրկի մեծ տերությունների ներկայացուցիչների համաձայնությամբ ու խորհրդով իր սահմանած կարգի հետագա ընթացքին ամեն մի մասնակցությունից։ Բ. Դռան կարծիքով նա վնասեց օսմանյան կառավարության արժանապատվության և պետական շահերը զոհաբերեց հարցի լուծման մասնակցող տերությունների շահերին։ ...Բ. Դուռն անչափ տրամադրված էր ծրագրում զգալի փոփոխություններ կատարել՝ Լիբանանի ներքին գործերին փաշայի բացահայտ միջամտության իմաստով։ Սակայն Շեքիբի նախագիծը իր ամբողջությամբ հավանություն գտավ Բեյրութի հյուպատոսներից և Պոլսի դեսպաններից, իսկ Բ. Դուռն ակամա հարկադրվեց իր հերթին հավանություն տալ» (11, 297—298)։

Պատահական չէր, ուրեմն, որ Շեքիբի մեկնումից անմիջապես հետո Բեյրութում սուլթանի լիազոր նշանակվեց նրա անձնական հակառակորդ Քյամիլ փաշան, որ Կանոնադրության մեջ թյուրիմացությունների կամ կիրառման դժվարությունների պատրվակով սկսեց փաստորեն վերափոխությունների անհրաժեշտությունը։ Շուտով այդ հողի վրա այն ատելանի սրվեցին նրա և հյուպատոսների փոխհարաբերությունները, որ Բ. Դուռը հարկադրվեց 1847-ին նրան փոխարինել Շկոտրայի ծագումով ալբան Մուսթաֆա փաշայով, որ իր ժամանակին սուլթան Մահմուդի կենտրոնացման քաղաքականության դեմ մինչև վերջ պայքարը շարունակած ապստամբներից մեկն էր եղել։ Համենայն դեպս, Պոլսից իր ստացած հրահանգներից անկախաբար, Մուսթաֆան խստիվ ղեկավարվեց Շեքիբի Կանոնադրությամբ, համոզված, որ տերությունների նոր միջամտություններին առիթ չտալու լավագույն միջոցը Լեռան ներքին գործերին միջամուխ չլինելը և ստանձնած պարտավորությունները բարեխղճորեն հարգելն է (11, 298)։

Եվ սակայն եթե փաշաներից մեկի միջամտությունը դրսից էր խոչընդոտում Կանոնադրության կիրառումը, ապա մյուսի ձեռնպահությունն էլ պատճառ էր դառնում, որ ներսից բաղմացվեին խութերը վարչակառավարման նոր կարգի առաջ։

Ի դեպ, այդ կարգից դժգոհ էին առանց բացառության բոլորը։ Խառը աղգաբնակչությամբ շրջանների այլադավանները նախ, առաջին հերթին հարավային մանրահատվածների քրիստոնյաները, որոնք իրենց վիճակը բարելավված տեսնելու ոչ մի երաշխիքի հավատք չէին ընծայում։ Ժողովրդական զանգվածներն ընդհանրապես, մանավանդ կենտրոնա-

կան և հյուսիսային լեռնագոտիների գյուղացիությունը, որի աչքերի առաջ ֆեոդալ-աղնվականությունը օրը ցերեկով բուրջի էր վերածել Կանոնադրությունը։ Բնականաբար նաև դրուզ թե մարոնական մանրիշխաններն ու կալվածատեր բոլոր շեյխերն անխտիր, քանի որ շեքիբյան հրահանգներն իրենց իրավունքներին և առանձնաշնորհյալ դիրքին դամոկլյան թրի նման սպառնում էին։ Հյուպատոսներն ու նրանց գործակալները վերջապես, այն պարզ պատճառով, որ Կանոնադրության պարկեշտ կիրառումը ոչ միայն կթուլացներ իրենց հենարանների ուժն ու ազդեցությունը, այլև կարող էր ամեն մի դուռ փակել արտաքին միջամտությունների առաջ։

Բնականաբար առավել աղդու խոչընդոտը գալու էր դիվանագիտական որոշակի աղբյուրներից քաջալերվող ֆեոդալ-աղնվականությունից։ Վերջինս ոչ մի միջոցի առաջ կանգ չառավ վիժեցնելու արդարացի հարկաբաշխման համար այնքան կենսական հողաչափումն ու մարդահամարը, որի համար Պոլսից 1847-ին հատկապես ուղարկվել էր Էմին Լֆենդին։ Օսմանյան պաշտոնատարը, ամբողջ երեք տարի ճգնելուց հետո, մայրաքաղաք վերադարձավ փաստորեն համարյա դատարկ թղթապանակով, առանց քիչ թե շատ ճշգրիտ տվյալներ ձեռք բերելու (37, 133)։

Թո՛ղ Լեռան հզորների դիմադրությունը, Կանոնադրության կիրառման համար վերջին հաշվով կենսական անհրաժեշտություն էր անդորրը ինչպես համայնքներից յուրաքանչյուրի ներսում, այնպես էլ նրանց միջև։

Իսկ այդ անդորրը օրավուր ավելի ևս էր վրդովվում։ Վրդովվում էր նախ և առաջ գերակշիռ համայնքի՝ մարոնականի ներսում։ Դրա պատճառն այն էր, որ կարծես խոսքները մեկ արած, նույն՝ 1854 թվին, մայիս և նոյեմբեր ամիսներին, մահացան նախ կայմակամ Հայդարը, որ մի կերպ կարողացել էր իրադրության տերը մնալ ու դժվարին ջանքերով կանխարգելել սոցիալական հասունացող պայթյունը և ապա պատրիարք Խաղինը, որ քիչ մեղք չուներ իր նախորդի օրոք այս կամ այն չափով համախումբ համայնքը երկփեղկելու, գյուղացիության ու ֆեոդալականության փոխհարաբերությունները ավելի ու ավելի սրելու գործում։

Այն, ինչ աշխատավոր ժողովրդին ու նրա ծոցից դուրս եկած հոգևորականներին 1845-ին չէր հաջողվել, 1854-ին իրականություն դարձավ։ Սինոդում իր կուսակիցների մեծամասնություն կազմելու շնորհիվ պատրիարքական աթոռին բազմեց Բուլուս Մասադը։ Վանական, հատ-

կապես աստիճանավոր կղերի մեծամասնությունը, որ Խաղինի օրոք հարկադրաբար ձեռնպահ էր մնացել գյուղացիության դառը ճակատագրի նկատմամբ իր կարեկցանքը գործնականացնելուց և աղնվականության բիրտ կամայականությունների դեմ բացեիբաց դիրքորոշվելուց, ենթադրեց հանձին նոր պատրիարքի գտած լինել անհրաժեշտ հենարանն ու խթանը՝ գեթ որոշ համարձակությամբ հետամտելու հասարակ ժողովրդի շահերի պաշտպանության։ Ճիշտ է, բրիտանական ռեզիդենտի վկայությամբ Մասադն իրոք էլ «հակակրում էր ֆեոդալ-աղնվականությանն ու իր սեփական համայնքի կրոնադավանական դոգմաների նկատմամբ մոլեռանդ հակումներին» (80, 122), այնուամենայնիվ մնում էր եկեղեցապետ, հետևաբար և չէր կարող իր երբեմնի պոռթկունությունը դրսևորել, այս կամ այն աստիճանի հաշվի չնստել իր համայնքի վարչաքաղաքական ավանդական պետերի հետ, հետևաբար և չմեղմել իր կուսակիցների եռանդը։ Համենայն դեպս այդ եռանդի առաջ բոլոր ճանապարհները փակվել չէին կարող և անխուսափելիորեն ոգևորվելիք գյուղացիության ու նրա սենյորների փոխհարաբերություններն էլ ավելի ու ավելի պիտի սրվեին։

Մարոնական համայնքի ներքին անդորրը վրդովելու գործում ավելի մեծ բաժին էր ունենալու Հայդարի հաջորդի ընտրության դժվարին հարցը։ Ճիշտ է, առճակատող թեկնածուների՝ հանդուցյալի փեսա Բեշիր-Ահմեդի և եղբորորդի Բեշիր-Ասաֆի մրցակցությունը մայիսի 11-ին լուծվեց հօգուտ երկրորդի, սակայն ֆրանսիական հյուպատոս Լեսեպսի ջանքերով և այս առթիվ մեծագումար կաշառք ստացած Վամիք փաշայի համաձայնությամբ օգոստոսին աթոռը նրանից խլվեց ու բաշխվեց Բեշիր-Ահմեդին (200, 66)։ Վերջինս, սակայն, ավելի վատահամբավ էր, քան իր թուլակամ նախորդը. համայնակիցները նրան գիտեին որպես «ծախու մարդ, անսկզբունք սադրող և թուրքերի գործակալ» (37, 142)։

Բեշիր-Ահմեդի առաջին գործն եղավ ստեղծել նոր խորհուրդ, որում դատավորներն ու խորհրդականները պատրաստ էին համեստորեն լսելու իրեն ու ենթարկվելու, ըստ որում քրեական թե քաղաքացիական ամեն մի քիչ թե շատ լուրջ հարց նա վերապահում էր իր դատավարման ու վճռման։ Դա չէր կարող դժգոհանքի որոշակի հիմքեր առաջ չբերել։

Այնուհետև, մարոնական կղերի թե հավատացյալների հոտի մոտ իր նկատմամբ առկա կասկածներն ու վերապահությունը ցրելու և իր համար ամուր հենարան ստեղծելու նպատակով, հարկաբաշխման խնդրում նա սկսեց բացահայտ կողմնակալություն դրսևորել հօգուտ մարոնականների և ի վնաս մյուս համայնքների, առաջին հերթին օրթոդոքսների։

Վերջիններս, սեփական կայմակամություն ունենալուց հույսները կըտրած, առանց այդ էլ պահանջում էին կայմակամին իրենց դավանությունից ընտրել։ Այժմ, Բեշիր-Ահմեդի միջոցառումներից և հարուցած միջադեպերից տուժելով, նրանք ոչ միայն թշնամացան նրա հետ, այլև ավելի ու ավելի անբարյացակամ դարձան մարոնական համայնքի նկատմամբ։ Նշենք, որ Բեշիր-Ահմեդին նման ընթացքի մղողը ոչ-այնքան ժողովրդական զանգվածի թե նրանից սերած կղերի համակրանքը սիրաշահելու ձգտումն էր, որքան իր հզոր հակառակորդների՝ խազիններին ընդդիմադրության ու դավերի դեմ վահանավորվելու ցանկությունը։

Խազին շեյխական տոհմը, թեկուզ լիբանանյան լեռների ավատապետական ավանդական բարձրակարգման թե քրիստոնյա ազնվականության աստիճանավորման մեջ Աբու՝լ Լամա ամիրական տոհմին ետադաս, կենտրոնական ու հյուսիսային քրիստոնեական լեռնագոտու վրա նրբեմնի դրուզական մոկադդամական այդ տան անբաժանելի տիրապետության հետ հաշվել չէր կարողացել 1842-ից՝ Լեռան երկատման օրից, նույնիսկ մինչև 1845-ի արյունահեղությունը չէր էլ ցանկացել կայմակամ Հայդարին ենթարկվելու մասին լսել անգամ։ Միջհամայնքային զինաբախումներում մարոնական համայնքասիրական կրքերի բորբոքման պայմաններում մի փոքր մեղմացած, խազինների ընդդիմադրությունը Բեշիր-Ասաֆի ընտրության օրերին վերածվել էր զայրույթի, այն պարզ պատճառով, որ Աբու՝լ Լամաների կայմակամությունը կարծես թե վերածվում էր ներտոհմական ինչ որ իրավունքի ու առանձնաշնորհի, որ կարող էր մի օր էլ իշխանապետական հավակնության հասնել։

Բացի դրանից խազինները, որպես մարոնական և ընդհանրապես քրիստոնեական շեյխական համակարգում առաջնատեղ տոհմ, շեքիբյան Կանոնադրությունից բխող այլ դժգոհանք էլ ունեին. ինչպես և Քեսրուանի թե նախասկզբնական Լիբանան լեռան ազնվականական մյուս տոհմերի դեպքում, դարերով իրենցն եղող և գերհզոր իշխանապետերի օրոք իսկ հաղվագեպորեն խախտված իրենց իշխանության և իրավասությունների առյուծի բաժինը խլվում էր կայմակամի կողմից։

Բեշիր-Ահմեդը խազին և մյուս ֆեոդալական տոհմերի դեմ հենարան էր որոնելու նաև Բեյրութում, ֆրանսիական և ավստրիական կաթոլիկ հյուպատոսների մոտ, մի բան, որ տեղի անգլիական դիվանագիտական շրջաններին պիտի մղեր մարոնական կայմակամին անցկացնել անցանկալիների ցուցակում, բոլոր միջոցներով հովանավորել նրա ախոյան Բեշիր-Ասաֆին ու սրա շուրջ էլ, հակառակ Սալիբիի ենթադրության (37, 144), համախմբել խազին, Հոբեյշ և այլ շեյխերի ընդդիմա-

դրական ճակատը։ Ավելին, Պոլսի բրիտանական դեսպանի նախաձեռնությամբ էր, որ 1857-ի ամռան խաղինների հակակայմակամական գանգատագիրը հասցվելու էր Բ. Դուռ՝ անպայման հետաքննություն կատարելու և Բեշիր-Ահմեդին պաշտոնանկելու պահանջով (4, Գ. 1306, թթ. 369—371 և գ. 1307, թ. 30)։

Հասկանալի է, որ ասատիկանների և ահմեդականների գոտեմարտը առնվազն խոչընդոտելու էր Լեռան համար սահմանված Կանոնադրության կիրառումը։

Վրդով էր նաև դրուզական համայնքի կյանքը, մի կողմից 1845-ի թոհուբոհից հետո Ջումբլաթի և Յազբեկի խմբավորումների տարանջատման ու մյուս կողմից առաջինի ներսում սաիդյան և նաամանական հոսանքների միջև դղվռտոցի վերաշխուժացման հետևանքով։

Եվ իրոք, միջհամայնքային զինաբախումներից, որոնց ընթացքում դարաշիական ավանդական երկու խմբավորումները փաստորեն համաձուլվել էին, ջումբլաթիները Սաիդի գլխավորությամբ դուրս էին եկել կերհդորացած։ Դա յազբեկիներին, հատկապես նրանց անհակաճառելի պարագլուխ Նասիֆ Աբու Նակիտին չէր կարող մտածել չտալ համախմբվելու և հակազդելու մասին։ Այն փաստը, որ Սաիդի շուրջ Մուխթարա կենտրոնով և անգլիացիների օրհնությամբ փաստորեն ստեղծվել էր դրուզական «անկախ մի փոքր հանրապետություն» (80, 110), օսմանյան իշխանություններին և ֆրանսիական դիվանագիտության, յուրաքանչյուրին տարբեր նկատառումներով, որոշ սրտադող պատճառներ։ Եվ ինչպես թուրք աստիճանավորները, այնպես էլ ֆրանսիական գործակալներն սկսեցին յուրովի հակամիջոցների դիմել։ Ինչպես առաջինները, այնպես էլ երկրորդները ջանացին նախ և առաջ ավյուն ու եռանդ ներարկել յազբեկիներին, սակայն սրանք ոչ մի դեպքում հակակշռող ուժ չէին դառնալու։ Ֆրանսիական հյուպատոսարանում ճիգ չխնայեցին նաև վերակենդանացնելու Նաամանի ուքբալական հոսանքը ու նույնիսկ հասան այն բանին, որ երեց Ջումբլաթը 1846-ին հանդես եկավ տոհմապետությունն ու խմբավորման պարագլխությունը իրեն վերադարձնելու պահանջով, սակայն արտաքին աջակցությամբ հանդերձ ոչ մի արդյունքի չհասավ։ Ավելի ներգործուն քայլի դիմեցին թուրքերը, որոնց խորհրդով ու քաջալերությամբ դրուզ կայմակամ ամիր Ամինը, որպես ոչ թե դրուզ պարագլուխներից ընտրված, այլ Շեքիբ էֆենդիից նշանակված մարդ, 1849-ին ոտնատակ արեց իր եղբոր կողմից 1842-ի դեկտեմբերին Բեյրութի բանտում ստանձնված պարտավորությունը, սակայն դա միայն հակառակ արդյունք տվեց. ջումբլաթիները մերժեցին ճանաչել

կայմակամին, որը «դրուզ չէր», քանի որ, իրոք, իր մի շարք հարապատների հետ, օսմանցիների մոտ իր արժեքները բարձրացնելու համար, թաքիայի իրավունքից օգտվում և սունի էր ձևանում (80, 110)։

Չերչիլը այսպես է պատկերել Սաիդ Ջումբլաթի կայմակամ հռչակվելը պահանջող հարավային մանրահատվածների դրուզական «անկախ հանրապետության» իրավիճակը շեքիբյան Կանոնադրության հռչակումից հետո. «Մեծ տոհմերից յուրաքանչյուրն իր մանրահատվածում անբաժան իշխում էր։ Այնտեղ ապրող քրիստոնյաները լրիվ ենթարկվում էին նրանց։ Դրուզ կայմակամը, որ իր տրամադրության ներքո բացահայտորեն անբավարար ուժեր ուներ հարկադրելու, որ իրեն ենթարկվեն, բավարարվում էր շեյխերի հնազանդության զուտ ձևական արտահայտությամբ։ Թուրքական իշխանությունների... կարգադրությունները... երբեմն կիրառվում էին, երբեմն՝ ոչ, նայած տրամադրությանն ու քմայքին այն մարդկանց, ում հասցեագրված էին։ ...Անցնող յուրաքանչյուր տարվա հետ դրուզ շեյխերը համոզվում էին, որ իրենց իշխանությունն էլ ավելի է հզորացել և ոչ-ոքի պատասխան չեն տալու։ Այդ պատճառով էլ նրանք սկսեցին գործողությունների այնպիսի ազատություն վայելել և հասան այնպիսի սանձարձակության, որ մարտահրավեր էր իրենց իշխանությունը սահմանափակելու ամեն մի փորձի։ Լիազորված լինելով հավաքել պետական հարկը, նրանք այն յուրացնում էին, կառուցում տներ, գնում հողամասեր, եկամուտ քամում պետական հողակտորներից...։ (Նրանց) բազմիցս առաջարկեցին հաշվետու լինել..., սակայն նրանք խորամանկորեն... խուսափում էին։ Իսկ երբ կայմակամը... համարձակվեց նրանց մոտ խառնվելներ ուղարկել..., ապա վերջիններիս բացեիբաց վռնդեցին» (80, 109—110)։

Ամիր Ամինին որպես կայմակամ առ ոչինչ համարելով Բեյրութի Թուրքական իշխանությունների հետ 1849-ից անխուսափելիորեն գժտված սաիդական խմբավորումը 1852-ի գարնան բացահայտ հակաօսմանյան ելույթի դիմեց, երբ կարգադրություն ստացավ պետության զորակոչիկներ տալ։ Լիբանան լեռնից Ուադի աթ-Թայմ և Հաուրան քաշված դրուզները մինչև աշուն հաջողապես դիմադիր եղան թուրքական զորքերին և ի վերջո աշնան, անգլիացիների միջամտությամբ, նրանց հարկադրեցին զիջումների ու հաշտության գնալ։ Ի դեպ, 1853-ին դրուզները համաձայնեցին կազմել երեք հազարանոց առանձին մի զորագունդ, որ իբր մասնակցություն էր բերելու Ղրիմի պատերազմին և որ սակայն Լեռան սահմաններից դուրս չեկավ։ Օսմանցիներն, իրենց հերթին, որպես բար-

յացակամության նշան, կայմակամին կարգադրեցին հաշվի նստել Սաիդի խորհուրդների հետ։

1857-ի սեպտեմբերին, Խուրշիդ փաշայի Բեյրութում նշանակում ստանալուց հետո դրուզների և թուրքական իշխանությունների սրտակցությունը կախարդական գավազանի մի հարվածով վերագտավ իր փայլուն օրերի վիճակը։ Օսմանյան նախաձեռնությամբ ամրապնդված այդ սրտակցությունը հեռուն գնացող նպատակներ էր հետապնդում։ Հինգ տարի առաջ, երբ դրուզները ապստամբել էին զորագրման հրամանի դեմ, օսմանցիները ապարդյուն փորձ էին արել Իբրահիմ փաշայի օրինակով, սակայն այլ՝ դրուզ-մարոնական նոր դինաբախում առաջացնելու և դրանից օգտվելով շեքիբյան Կանոնադրությունը վերացնելու նպատակով, քրիստոնյա լեռնականներին դինարշավի մղել հակառակորդ համայնքի դեմ։ Այդ փորձի ձախողման մեջ իր ներդրումն էր ունեցել ֆրանսիական հյուպատոսը, որ մարոնականներին կոչ էր արել խուսափել «միջհամայնքային գժտությունից, որից իրենց միայն վնաս է դալու» (37, 138)։ Այժմ Խուրշիդ փաշան Բեյրութում լոկ մի առաջադրանք ու մի մտորում ուներ, ինչն իր ժամանակին նկատել է արևելագետ Լամենը. «Անհրաժեշտ էր կազմալուծել Լիբանանը, բախեցնել դրուզներին և մարոնականներին, թունավորել նրանց տարակարծությունները, Եվրոպային ցույց տալ լիբանանցիների ինքնակառավարման անընդունակությունը, հարկադրել, որ Եվրոպան ինք պահանջի թուրքական միջամտության առաջ դրված վերջին սահմանափակումների վերացումը»։ Խուրշիդ փաշան, նույն հեղինակի բնութագրմամբ «տխրահռչակ մի անձնավորություն», չէր վարանելու մինչև իսկ «աղետ հրահրելու» (128, հտ. 2, 178)

Դժբախտաբար, սակայն, Լեռան վրա ու նրա շուրջ սոցիալական, քաղաքական թե այլ բոլոր նախադրյալները միաշաղկապված էին՝ աղետը փութացնելու համար։

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1858—1860-Ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ 1860-Ի ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՁԻՆԱԲԱԽՈՒՄՆԵՐԸ

1857-ի աշնան, Սայդայի էյալեթի նոր մուշիր Խուրշիդի Բեյրութ ժամանման նախօրյակին, Լեռան քրիստոնեական մանրահատվածներում մթնոլորտը լարված էր։ Ընդդիմադիր ասպետականները, որոնց դեմ Բեշիր-Ահմեդը չէր վարանել խստամիջոցների դիմել, իսկ 1855—1856-ին՝ նույնիսկ ձերբակալություններ կատարել, խաղին տոհմի առավել ազդեցիկ ընտանիքների ղեկավարությամբ ջանում էին լեռնականների հարաճող սոցիալական դժգոհությունը բևեռացնել կայմակամի դեմ, ուրեմն և նախաձեռնում էին գյուղացիական բազմամբոխ հավաքների գումարումն ու Բեշիր-Ահմեդի «հարկային և այլ չարաշահությունների ու կամայականությունների» դեմ կենտրոնական իշխանություններին ուղղված հանրագրությունների խմբագրումը (4, գ. 1306, թթ. 314—317, 354, 358—364 և գ. 1307, թթ. 190—196 և 214)։ Ռուսական հյուպատոսի այս հաղորդումը լրացրել է իրադարձությունների մասնակից և խաղինների ու նրանց վասալների միջև համերաշխության պահպանման համար մեծ եռանդ ներդրած հոգևորական Մանսուր ալ-Խաթունին, հաղորդելով, որ կայմակամն, իր հերթին, իրեն չենթարկվող ֆեոդալ-աղնվականներին խիստ խրատ տալու հետամուտ, ամեն միջոցի դիմել է՝ գյուղացիությունը նրանց դեմ զինված պայքարի դուրս բերելու (203, 41)։

Բ. Դուռը, որ ուշի-ուշով հետևում էր անցուդարձերին, Խուրշիդ փաշային լրացուցիչ զորքով Լևանտ ճանապարհելիս կարգադրել էր չխոչընդոտել հանրագրությունների շարժումը, որպեսզի, ինչպես ենթադրել է Բեյրութում ռուսական հյուպատոս Մուխինը, առնվազն իր ձեռին անհրաժեշտ փաստաթղթեր ունենա, հարմար դատած պահին Լեռան ինքնակառավարումը վերացնելիս իր միջոցառումը տերությունների առաջ արդարացնելու (4, գ. 1306, թ. 288)։ Մի փոքր ավելի ուշ, 1860-ի հունի-

սի վերջերին, երբ միջհամայնքային նոր արյունահեղությունն սկսել էր արդեն, Բեյրութում ռուսական հաջորդ ներկայացուցիչ Դ. Բեգերը վըստահորեն հաղորդելու էր, որ «Սիրիայում տեղի ունեցող անցուդարձերի գլխավոր պատճառը Թուրքական կառավարության մտադրությունն էր՝ փոխել Լիբանան լեռան վարչակառույցը» (5, գ. 42, թ. 380)։

Առանց այն էլ ծանր իրադրությունը սրելու համար Խուրշիդ փաշային հատուկ ջանքեր անհրաժեշտ չէին։

Բիկաայի գլխավոր կենտրոն Զահլեն, որի ազգաբնակչությունը վաղուց էր խլրտում իր մանրիշխան Աբու՝լ Լամաների դեմ, 1857-ին, անկասկած ոչ-առանց ասաֆականների քաջալերանքի, ըմբոստացավ Բեշիր-Ահմեդի կայմակամական իշխանության դեմ, որպես ղեկավար ընտրեց իր շեյխ աշ-շեբեբին, իսկ քաղաքի վարչակառավարման համար՝ վեց հոգուց բաղկացած ավագների մի խորհուրդ։ Եվրոպական մամուլը չհապաղեց հաղորդելու, որ Զահլեում կազմակերպվել է «աստվածապետական հանրապետություն» (43, 161)։ Կայմակամը հարկադրվեց ամեն գործ թողած անձամբ իջնել Բիկաա և երեք ամիս շարունակ բանակցել քաղաքի բնակչության հետ ու վեճը հարթել, թեպետ դա նրան իսպառ չհաջողվեց (200, 61)։

Զահլեից, ըստ էության հակաֆեոդալական, թեկուզ իր պատմուճանով հակակայմակամական խռովությունը, որի ասաֆականների դրդմամբ սկսած լինելը Սալիբին «հնարավոր» է համարել (37, 144), ցայտեց դեպի Լեռան քրիստոնեաբնակ հատվածները, նախ և առաջ Քեսրուան։ Այստեղ, 2300 բնակչով Ղազիրում, խռովություն բարձրացնելով Հոբեյշ շեյխերի դեմ, զահլեցիների օրինակով իրենց ղեկավարելու համար շեյխ աշ-շեբեբ ընտրեցին և «միաբանության ուխտ» կնքեցին։ Հոբեյշները, իրենց կուսակիցների գլուխն անցած, սկսեցին սպառնալ։ «Տեղի ունեցավ ընդհարում,— հաղորդել է ժամանակագիր Ա. ալ-Ակիկին,— որի հետևանքով բազմաթիվ մարդիկ վիրավորվեցին» (200, 66)։ Կայմակամը գործին միջամտեց և երկու կողմերից էլ ձերբակալություններ կատարելով կրքերը միառժամանակ հանդարտեցրեց։

Այս պայմաններում է, որ փաշան, պահանջելով վերջ տալ ժողովրդական հավաքներին, միառժամանակ թույլատրեց թեր ու դեմ բողոքներով ու հանրագրություններով իրեն ներկայանալ։ 1858-ի մարտին ասաֆական բոլոր ֆեոդալ-ազնվականները, այդ թվում Խազին տոհմի տվյալ թեի ներկայացուցիչները, հավաքվեցին քեսրուանյան Սուք ալ-Խարաբ գյուղում և կայմակամի դեմ գանգատագրով պատվիրակություն ուղարկեցին փաշայի և հյուպատոսների մոտ։ Ակնկալած արդյունքին

հասնելով, նրանք մի երկրորդ հավաք գումարեցին Մեթնի Բհանեիս գյուղում, որտեղից իրենց հետևորդների բազմությամբ շարժվեցին կայմակամի նստավայր Բրումմանայի վրա։ Բեշիր-Ահմեդը, իր կյանքը վտանգված համարելով, Բեյրութ փախավ և իր աթոռին վերադարձավ միայն մի ամիս անց, Խուրշիդից տրամադրված թուրքական վաշտի ուղեկցությամբ։

Սակայն նրա հեղինակությունը վերջնականորեն փուլ էր եկել և նրա կայմակամությունն էլ փաստորեն անվանական էր դարձել։ «Կայմակամը,—գրել է ֆրանսիացի մի դիտորդ,—կամաց-կամաց կորցնում էր իր ամբողջ հեղինակությունը։ 1858-ին Լեռնից վտարված և բոլորից արհամարհված, նա ի վերջո Բեյրութում, որտեղ ապաստանել էր, այսպես ասած սնանկ էր հայտարարվում» (85, 101)։ Դա նշանակում էր, որ քրիստոնեական լեռնահատվածում ըստ էության կատարյալ անիշխանություն էր տիրում, ավելի շուտ ամբողջ իշխանությունն անցել էր մուկատաաճիների և նրանց տոհմակիցների ձեռքը։

1858-ի առաջին եռամսյակի վերջերին կայմակամի աթոռի շուրջ ահմեդական-ասաֆական գզվռտոցի կարուսելն սկսեց ավելի գլխապտույտ արագությամբ պտտվել։ Մարոնական ֆեոդալ-աղնվականության, առաջին հերթին խազին տոհմի ներսում վեճն այնքան հրաբորբոք էր, որ մարտին քեսրուանյան գյուղերում կողմերն սկսեցին հատուկ լիազորների ձեռամբ թեր ու դեմ հանրագրություններ կազմել (203, 263), ըստ որում, ամբողջ Լեռան վրա թե հատկապես խազիների մանրահատվածում աննախընթաց եռեռյթ, խմբավորումներից յուրաքանչյուրը գյուղացիներին իր դատին սիրաշահելու համար դիմեց շողոքորթության, զիջումների ու խոստումների, ճիշտ է՝ անհրաժեշտության դեպքում նաև «հայհոյանքի ու ծեծի», մինչև իսկ՝ մթին թաքստոցներից անցանկալիների թիկունքին կրակոցների։ Ավելին, մրցակցական պայքարում հաջողության հասնելու համար անհրաժեշտ գումարները կողմերն սկսեցին որոնել ոչ միայն ներքին թե արտաքին հովանավորների գանձարկղներում, այլև հակառակորդին համակրող գյուղացիության դեմ գիշերային թալանարարական զինարշավներում։

Գործն ի վերջո հասավ այնտեղ, որ ամեն մի գյուղում շարքային հողամշակները, ինչպես հարկն է հաղորդ չլինելով վերնախավի գզվռտոցի էության և առանց նաև որևէ շահագրգռություն ունենալու, սկսեցին քննարկել ներազնվականական պայքարում «իրենց դրությունը», այլ խոսքով այդ պայքարին իրենց մասնակցության իմաստն ու նպատակահարմարությունը։ Նրանք, ինչպես հաղորդել է ժամանակագիրը, իրա-

վամբ սկսեցին դժգոհել, որ «մուկատաաճինների ձեռքին ստրուկ են դարձել և որևէ խնդրի շուրջ արտահայտվելու կամ խորհուրդ տալու իրավունք չունեն», որ իրենց, դեռ հազիվ կես դար առաջ աշխարհաժողովներում լիաթոք ձայնով խոսելու իրավունք ունեցող լեռնականներին, այժմ հարկադրում են ստորագրել հանրագրություններ, որոնց ո՛չ իմաստին են հասու, ո՛չ նպատակներին բաժնեկից, ոչ էլ արդյունքին հավան (200, 72)։

Գյուղացիների համար առավել զայրացուցիչն այն էր, որ «խազիններն իսպառ դադարել էին հաշվի նստել իրենց... նույնիսկ ամենաերևելիների հետ, ...բազմիցս հայտարարելով, որ գյուղացիներն ու նրանց սեփականությունը իրենց են պատկանում» պարզապես և որ «խազին տոհմի ամենից անկարևոր ներկայացուցիչն իսկ կարող է վիրավորել ամենահարգարժան գյուղացիներին, նույնիսկ բանտարկել ու սպանել» (200, 168)։

Հասկանալի է, որ ամիրայության դարավոր ավանդույթների ներգործությամբ ամեն մի մանրահատվածում իր դավանակից ղեկավարների նկատմամբ ընդհանուր առմամբ խոնարհ ու համեստ լեռնական գյուղացիությունը, վերջին երկու տասնամյակների բարդ Բոհուրոհներին գործուն մասնակցություն բերած և ֆեոդալ-աղնվականության եսասիրական նկրտումներից թելադրվող նոր պայքարի կարևոր օղակներից մեկին վերածված, հանկարծորեն հայտնաբերելու էր իրեն։ Այդ պահից սկսած քար առ քար խորտակվելու էր խազիններին որպես անհակաճառելի և անձեռնմխելի կուռքեր դիտելու մտայնությունը, ժողովրդի պատկերացման մեջ ֆեոդալ-աղնվականական տոհմը աստիճան առ աստիճան իջեցվելու էր իր բնական-մարդկային չափերին։ Գյուղացիության այդ, բաղում տասնամյակների ընթացքում արգասավորված այլ հանկարծորեն պտղաբերման մակարդակ նվաճած տրամադրությունները հրաշալի է պատկերել Պուժուլան, այն էլ հակառակ այն փաստին, որ իր համար տհաճ ապստամբության շղթայաղերծման հարցում որոշիչ նշանակություն է տվել Թուրքական իշխանությունների, կայմակամի և անգլիական գործակալների մեքենայությունների դերին. «Գյուղացիները մեղադրում են շեյխերին այն բանում, որ նրանք միշտ չէ, որ իրենց նկատմամբ արդարության ու քնքշության տիպարներ են եղել։ Շեյխերի կանայք իսկ որոշումներ են ընդունում գյուղացիների նկատմամբ... Սովորություն դարձավ տոնական օրերին նրանց նվերներ տանել։ Անհրաժեշտ դարձավ համբուրել նրանց ու նրանց ամուսինների ձեռքը, ճիշտ այնպես, ինչպես պահանջվում էր ամիրների և հոգևորականների դեպ-

քում։ Գյուղացիները պարտավոր էին շեյխերի դստեր կամ որդու ամուսնության դեպքում մի ծրար սուրճ նվիրել։ Նրանք մեղադրում էին գյուղերի շեյխերին այն բանի համար, որ իրենք իրենց ազատում են գլխահարկից, գյուղացիության վրա սեփական իշխանությամբ արդարացնելով այդ քայլը։ Վերջապես գյուղացիները ավատապետերին մեղադրում էին հարկագումարների մի մասը յուրացնելու հանցանքով» (157, 58—59)։

Ազնվականության կողմից ահմեդական-ասաֆական հակամարտության հունի մեջ տեղադրվել փորձող ժողովրդական ալեկոծ հավաքներն այս պայմաններում անխուսափելիորեն ընկնելու էին այլ՝ սոցիալական դժգոհանքի հունի մեջ, որից պետք է նախընտրեին խուսափել ոչ միայն մանրիշխանական տոհմի մրցակցությունից կուրացած երկու թևվերը, այլև սրատես հյուպատոսներն ու թուրքական իշխանությունները։ Եվ սակայն, հանուն պատմական ճշմարտության դա հարկ է շեշտել, սոցիալական ամեն մի շարժման խեթ նայելու հիմքեր ունեցող օսմանցիները կարող էին հիմքեր ունենալ նաև Քեսրուանը, հնարավորության դեպքում ամբողջ Լեռը, խռովահույզ ու խառնակված տեսնելու՝ որդեգրված Կանոնադրության փոխարեն իրենց անմիջական ու թուրքավարի վարչակառավարման սիստեմը փաթաթելու համար լեռնականների վզին։

Հյուպատոսների պնդմամբ և իբր այն բանի թելադրանքով, որ ժողովրդական հավաքները ավելի ու ավելի սպառնալից բնույթ էին ստանում «Լիբանան լեռան վարչակարգի թե բնակչության անդորրության համար» (4, գ. 1306, թթ. 349—359), Բ. Դուրը Աթա բեյի նախագահությամբ քննիչ հատուկ հանձնաժողով ուղարկեց Բեյրութ։ Իբր կարգ ու կանոնի վերահաստատման ուղիներ որոնելու եկած բեյը, իր ժամանման օրն իսկ, ընկավ անկարգության մեջ. Բեյրութ ապաստանած Բեշիր-Ահմեդի իշևանատեղիի առաջ խռնվել էր բողոքարկուների ավելի քան 1500-անոց մի բազմություն (4, գ. 1306, թ. 288)։ Հանձնաժողովը, կարգադրելով արգելել ամեն մի համախմբում և հանրագրություն, գործի լծվեց։ Եվ սակայն, ինչպես նախորդ նմանատիպ բոլոր հանձնաժողովները, սրա աշխատանքն էլ «կանխամտածված կերպով ձախողությամբ ավարտվեց», արձանագրել է բրիտանական ռեզիդենտը, միաժամանակ բացատրելով անհաջողության պատճառը. «Թուրքերը ձգտում էին ցույց տալ, որ բացի իրենց սեփականից, ոչ մի կառավարում Լիբանան լեռան վրա հաջողություն չի ունենա։ Նրանց կարծիքով Լիբանանն ինչքան շատ խրվեր անկարգության ճահճի մեջ, այնքան ավելի շուտ իրենք իրենց նպատակին կհասնեին» (80, 45)։

Մինչև կոկորդը ասոֆական-ահմեդական գոտեմարտի մեջ խրված, քեսրուանյան ֆեոդալ-ազնվականությունը չէր կանխազգում ուրվագծվող մրրիկը։ Սակայն ավելի հեռատես մարդիկ չէին պակասում։ Պատրիարք Մասադն, օրինակ, որ Լեռան մեծամեծներից ժողովրդական խավերի տրամադրություններին առավել տեղյակն էր և որ մարոնական շեյխերի ասոֆական խմբավորման խորհուրդ տվեց դադարեցնել պայքարը, եթե չի ցանկանում սեփական ձեռներով «իր իսկ գերեզմանը փորել» (203, 263)։ Սուն եպիսկոպոսը, ապա, որի սրտով չէր կարող լինել քրիստոնեական լեռնահատվածի փոքրիկուն երկփեղկումը և որ, նույնպես մտահոգ իրադրության վատթարացմամբ, ապարդյուն փորձ արեց կողմերին հաշտեցնելու (4, գ. 1307, թ. 132)։ Մինչև իսկ Սաիդ Ջումբլաթը, որ կենտրոնական ու հյուսիսային մանրահատվածներում ֆեոդալազնվականության երկպառակտումը գյուղացիական հուզմունքի վերելքի պայմաններում վտանգ համարելով ինչպես քրիստոնյա, այնպես էլ առանց դավանանքի խտրության մյուս բոլոր մուկատաաճիների համար, խազիններին հատուկ նամակ ուղարկեց և կոչ արեց հաշտվել ու միաբանել (4, գ. 1307, թ. 137)

Մրրկի առաջին, երևութապես աննշան ալյակը բարձրացավ հարավային Քեսրուանի Աջալթուն, խազինների կալվածքի մեջ կորած վեց հարյուր բնակչով փոքր գյուղում։ «Ժողովուրդն սկսեց ժողովներ գումարել,— վկայել է ալ-Ակիկին,— որպեսզի ճանապարհ հարթի օրինավոր միջոցներով պաշտպանվելու ճնշումից։ Առաջին ժողովը գումարվեց Աջալթուն գյուղում, մի քանի երիտասարդների հրավերով։ Նրանք իրենց միջև միություն հաստատեցին և համաձայնեցին, որ ոչ մեկը մյուսին չի դավաճանելու և որ եթե որևէ շեյխ բռնություն գործադրի իրենցից մեկն ու մեկի նկատմամբ, ապա բոլորը միասին օգնելու են վերջինիս, ընդհուպ մինչև արյունահեղություն» (200, 77)։ Այստեղ շեյխ աշ-շերեբ կամ վեքիլ ընտրվեց Սալեհ Ջուրջիս Սֆեյրը, Մանսուր ալ-Խաթունիի հաղորդմամբ՝ ոչ միայն ժողովրդի, այլև շեյխերի վստահությունը վայելող մի մարդ (203, 269), որ հավանաբար իր բնակավայրի ունևոր խավին էր պատկանում։

Երկրորդ ալյակը, որ շուտով միահյուսվելու էր առաջինին, «հետապնդելով բռնությունից պաշտպանվելու և ոչ մի այլ նպատակ», բարձրացավ արևելյան Քեսրուանի հարաբերաբար խոշոր՝ 1600 բնակչով Մաղրաաթ Քֆար գյուղի սկզբում 13 հոգիանոց խմբակով, ապա և ամբողջ բնակչության ասոֆեանաշափով, ըստ որում այստեղ վեքիլ ընտրվեց Հաբիբ ալ-Խուրի ալ-Ակիկին, նույնպես իր բնակավայրի ոչ-հասա-

բակ գյուղացին և քեսրուանյան իրադարձությունների ժամանակագիր Անթոնի Հարաղատը։

Գյուղական ազգաբնակչության խոհերին ու տրամադրություններին անհաղորդ, չիմանալով, որ «գործը կավարտվի իրենց սեփական գլուխների» կորստով (200, 79), խաղին շեյխերը միառժամանակ հրբռվում էին ի տես իրենց վասալների աշխուժության, նույնիսկ զինված չոկատների կազմության, հուսալով դրանք օգտագործել կայմակամի դեմ իրենց պայքարում։ Սակայն երբ հավաքներ տեղի ունեցան ու վեքիլներ ընտրվեցին նաև այլ գյուղերում և երբ աջալթունցիների պահանջով տեղի շեյխերը մի քանի բարձրաստիճան հոգևորականների ներկայության հարկադրվեցին ժողովի նստել իրենց մշակների հետ, խաղիններն սկսեցին սթափվել։ Ճիշտ է, ժողովուրդը պարզապես պնդում էր, որ ցանկանում է «շեյխերին տեսնել այնպես, ինչպես ժամանակին էին և որ տերերին վնասելու կամ որևէ մեկին փոխելու միտք չունի», այնուամենայնիվ ազնվականության հիմնական մասը վրդովվեց աննախընթաց «ըմբոստացման» ի տես։ Անհնազանդներին «վտարելու, ոմանց էլ սպանելու» սպառնալիքի առաջ դժգոհության ալիքը միանգամից տարածվեց դեպի Ռեյֆուն, Աշկուտ, ալ-Քլեյաթ, Ղաղիր և այլ բնակավայրեր (222, 47), որոնք սեպտեմբերին միասնական գործողությունների համաձայնություն կնքեցին և իրենց տրամադրությունների ու պահանջների մասին հաղորդեցին պատրիարքին։ Նշենք, որ 1858-ի աշնան ամիսներին շարժման հարեցին նաև Ջունին, Ֆեյթրունը, Մեյրուբան և այլ բնակավայրեր։

Սոսկ բռնություններից ու կամայականություններից «օրինավոր միջոցներով պաշտպանվելու և ոչ մի այլ նպատակ» հետապնդող քեսրուանցիները պատրիարքին հայտնում էին, որ ի հարգանս շեյխերի «երանելի նախնիների փառքի», իրենք երկար համբերել են, սակայն «այժմ, լայնորեն և բազմակողմանիորեն քննարկելով» իրավիճակը, հանգել են մի եզրակացության. հանուն անցյալի չի կարելի «հանդուրժել անտանելիին», որ սպառնում է իրենց ինչպես ներկային, այնպես էլ ապագային։ Այդ պատճառով էլ, իրենց «կյանքը պաշտպանելու» և «պատիվն ու դրությունը փրկելու» նպատակով, հետագա ամեն մի բռնության դեպքում հանրագրություն-բողոքներով դիմելու են օսմանյան իշխանություններին (200, 167—169)։

Շուտով խաղինների դեմ ըմբոստության դրոշ պարզած բնակավայրերի գլխավոր վեքիլ ընտրվեց աջալթունցիների պետ Սֆեյրը։ Շարժման ղեկավար շրջաններում առնվազն նրան հավասարաչափ հեղինակություն սկսեց վայելել Զուբ Միքայելի վեքիլ Նիկոլա Մունեյյարը՝ քես-

ռուանյան մետաքսագործ-արդյունաբերողների և առևտրավաճառների դասի ներկայացուցիչը, որ 1840-ական թթ. վերջերից Բեյրութում գործող «Սիրիական գիտական ընկերության» գործուն անդամներից էր եղել և որ փաստորեն շարժման գաղափարախոսը դարձավ։ Մ. ալ-Խաֆաջիի վկայությամբ նա է, որ առաջ քաշեց խազին տոհմից բոլոր շեյխերին իշխանազրկելու և միայն մի շեյխի որպես մանրիշխան պահելու կարգախոսը, ըստ որում ընտրելի մամուրի կամ վարչական պաշտոնատարի հանգամանք ունեցող այդ միակ խազինը, «միակ իշխանավորն ու տիրակալը... պետք է լինի խելքով ու գիտելիքներով զարդարված, միաբանության և անդորրության գործին նվիրված, ի բնե արդարամտության և արդարադատության հակված, կաշառակերության նկատմամբ անհաշտ...»։ Ինչ վերաբերում է մյուս շեյխերին, ապա «մնացածները պետք է ունենան նույն իրավունքները, ինչ ամբողջ ժողովուրդը» (203, 268)։

1858-ի հոկտեմբերին Աջալթունում գումարված վեքիլների ժողովը հավանություն տվեց Մոնեյյարի ծրագրին, ըստ որում որոշվեց «ապրստամբության դրոշ պարզել շեյխերի հրամանների դեմ» և պահանջել «նրանց իշխանության վերացումը»։ Փաստորեն այդ որոշման գործնականացումն էին Զուք Միքայիլի և Զունիի շուկաներում խրոխտացող և հասարակ մարդկանց վիրավորող Աբբաս և Յուսուֆ-Վարդան խազինների դեմ կիրառված բռնամիջոցները (203, 270։ 200, 79—80)։

Դեկտեմբերի երկրորդ տասնօրյակին Ղուստա գյուղում գումարված շեյխական բազմօրյա ժողովը որոշեց վերջ տալ ազնվականության ներքին երկպառակություններին, ղեկավարվել Հասան և Կաադան խազինների ցուցմունքներով և միասնական ուժերով ճնշել ժողովրդական ըմբոստությունը (200, 159)։ Շեյխերն իրենց որոշումների մասին հայտնեցին պատրիարքին, որ կողմերին կոչ արեց փոխադարձ զիջումներով հաշտություն կնքել (203, 271)։ Սակայն կրքերն օրըստօրե ավելի էին փոթորկվում։ Ղուստայի շեյխական և Զուք Միքայիլի ժողովրդական ճամբարները, մինչև ատամները զինված, փաստորեն պատրաստ էին միմյանց վրա գրոհելու։ Պատրիարքի բանագնացներ Նիկոլա Մուրադ և Յուսուֆ Ռիզկ եպիսկոպոսներին չհաջողվեց կողմերից որևէ զիջում կորզել (203, էջ 273)։ Հատկապես գումարված սինոդը, որոշելով վեճը ամեն գնով հարթել, իր հերթին կողմերին կոչ արեց բռնամիջոցներից խուսափել և պատրիարքարան ներկայացնել իրենց պահանջներն ու նկատառումները։

Դեկտեմբերի երկրորդ կեսին Զուքում գումարվեց Քեսրուանի ազգաբնակչության կողմից ընտրված շուրջ 300 ներկայացուցիչների ժողով-

որ մեծամասնության ձայնով երկու կողմերի համար «անդորրության» որպես երաշխիք, առաջ քաշեց հետևյալ պահանջները, որոնք այնուհետև ներկայացվեցին ինչպես պատրիարքին, այնպես էլ Խուրշիդ փաշային.

1. Քեսրուանը պետք է կառավարվի մեկ ու միակ մաամուրի կողմից, որին հաստատում է պատրիարքը։ Մաամուրն իր գործունեության մեջ պետք է առաջնորդվի արդարամտությամբ և ժողովրդին զերծ պահի ճնշումից և ապօրինություններից։

2. Ամեն մի գյուղ, ըստ բնակչության թվաքանակի, մաամուրին որպես օգնական պետք է ընտրի մեկ կամ երկու վեքիլ։

3. Մաամուրի իշխանությունը պետք է տարածվի առանց բացառության բոլորի վրա։ Պետք է ամեն մի խտրականություն և արհամարհական վերաբերմունք վերանա։ Շեյխերը պետք է հավասարվեն ժողովրդին և հանցագործության դեպքում պատասխանատվության կանչվեն հասարակ մարդկանց նման։

4. Հողահարկն ու գլխահարկը պետք է բաշխվեն շեքիբյան Կանոնադրության համաձայն, ըստ որում շեյխերը պետք է պարտավորվեն վճարել իրենց համար սահմանված հարկերը և ոչ թե դրանք փաթաթեն ժողովրդի վզին։

5. Շեյխերի կողմից գանձվող արտակարգ ու ապօրինի բոլոր հարկերը, այդ թվում տոնանվերները, հարսանյաց հարկը, վաճառված տերունական հողակտորների համար գանձվող տարեհարկն ու մյուսները պետք է վերացվեն (200, 160—163 և 178)։

Ժամանակաշրջանի վավերագրերից, հատկապես Աբբաս խաղինի կողմից պատրիարքին ուղարկված մի նամակից (200, 164) հետևում է եզրակացնել, որ Ջուբի ներկայացուցչական ժողովում բուռն կերպով բախվել էին երկու ճակատներ՝ խելամիտներինը կամ ահեղներինը և խելառներինը կամ ջահելներինը։

Խելամիտների ճակատում դիրքորոշվել էին ներկայացուցիչները հյուսիս-արևմտյան Քեսրուանի այն բոլոր գյուղերի (Ղուստա, Շնանիյր, Արամուն, Դլիպտա, աշ-Ջուդեյդա են), որոնք բառացիորեն Ջուբի ժողովի նախօրյակին և Ջունիի վեքիլ Սիջան ալ-Ուդայմիի գլխավորած պատվիրակության ճնշմամբ էին հարել հակաֆեոդալական շարժման, սակայն բոլոր դեպքերում կողմնակից էին մնացել պահանջների ու գործողությունների մեջ չափավորության։

Այս ճակատում չէին կարող դիրքորոշված չլինել նաև դեռ աշնանից հուզումնահարված գյուղերի այն պատվիրակները, որոնք, բարեկեցիկ արհեստավորներ, արդյունագործողներ, առևտրականներ և վաշխառու-

ներ, իրենց դասակարգային պատկանելիության իսկ հետևանքով շափավորականության սահմանները խախտելու և գյուղացիական առավել ճնշված խավերի ծայրահեղականության ճանապարհով գնալու պատրաստակամ չէին բնավ։

Ի դեպ, խելամիտների վրա անկասկածելի ներգործություն ունեին մարոնական եկեղեցու ավագանին և կայսակամ Բեշիր-Ահմեդը, որոնք, վերջին հաշվով, համարյա ոչ մի այլակրոն բնակիչ չունեցող և ամենաբազմամարդ քրիստոնեական լեռնահատվածում սոցիալական թե քաղաքական անդորրով ծայր աստիճանի շահագրգռված էին և նույնպես չէին կարող քաջալերել ֆեոդալ-աղնվականությանը տնտեսապես թե վարչականորեն իսպառ կործանելու որևէ մտադրություն։ Պատահական չէ, բնավ, որ Մ. ալ-Խաթունին, թեկուզ գործը ծայրահեղության հասցնելով և պնդելով, որ Ն. Մունեյյարը կայսակամի գործակալն էր ու նրա ներշնչանքով էլ Քեսրուանը ապստամբեցրեց խաղինների դեմ, վկայել էր, որ Զուբի վեքիլը ֆեոդալ-աղնվականության, այդ թվում և կայսակամի խոշոր վարկատուն էր (203, 268)։

Եվ վերջապես խելամիտների վրա չէին կարող ազդեցություն գործած չլինել Բեյրութի ինչպես դիվանագիտական որոշ շրջաններ, հատկապես իր երկրի քաղաքական հաշվարկներին թե կապիտալիստական շրջանների շահերին հետամուտ ֆրանսիական հյուպատոսարանը, այնպես էլ Քեսրուանում տնտեսական զգալի գործարքներ ունեցող առևտրավաշխառուական վերնախավը։ Նրանք հասկանալիորեն շահագրգռված էին, որ քրիստոնեաբնակ լեռնահատվածում ֆեոդալական առօրյան ավելի ու ավելի բարեշրջվեր դեպի բուրժուականը, սակայն առանց արյունալի ցնցումների, հատկապես առանց այնպիսի գործողությունների, որոնք պատրվակ դառնային օսմանցիների միջամտության։ Եվ մի՞թե թուրքական իշխանությունների բարյացակամությանն արժանանալու միտում չի կարելի տեսնել այն փաստի մեջ, որ Զուբի պահանջագիրը վկայակոչում էր Գյուլհանեի Հաթթ-ի շերիֆն ու շեքիբյան Կանոնադրությունը և շեշտը դնում այդ փաստաթղթերի դրույթների, առաջին հերթին ազգաբնակչության իրավահավասարության ու հարկերի հավասար բաշխման սկզբունքների անթերի կիրառման վրա։

Հիմնավոր չէ Սմիլյանսկայայի այն պնդումը, որ խելամիտներին ու խելառներին տարորոշողը ոչ թե նպատակները, այլ դրանց հասնելու մեթոդներն էին (43, 174)։ Հեղինակը ինք իսկ, երբ պայմանականորեն առաջիններին բարենորոգչական և երկրորդներին հեղափոխական է անվանում (43, 175), փաստորեն ընդունում է, որ երկու հոսանքների

միջև բաժանման գիծը հենց նպատակներով էր սահմանվում։ Եվ իրոք, շեյխ Աբբասի ծանոթ նամակում պարզորոշ կերպով ընդգծված է, որ ահելների նպատակն էր «սոսկ կառավարման (կարգը) ուղղել ու բարեկարգել և ոչ երբեք ոչնչացնել», այլ խոսքով գործը զինված ապստամբության չհասցնել, մինչ ջահելներինը՝ վերացնել խաղինների «տոհմն ու նրա կառավարումը» (200, 164), այլ խոսքով առկա կարգը, ինչ որ խաղաղ միջոցներով անհնարին էր։

Զուբի ժողովից անմիջապես հետո, հրաժարած Սֆեյրի փոխարեն, գլխավոր վեքիլի պաշտոնին ընտրվեց Թաննուս Շահինը։ Ալ-Խաթունիի հաղորդման վրա հենվելով Սալիբին եզրակացրել է, որ «հնարավոր բռնի գործողություններից վախենալով» է Սֆեյրը հրաժարել (37, 147)։ Այս դեպքում իրավացի է Սմիլյանսկայան, երբ պնդում է, որ հոգևորական ժամանակագիրը ժողովրդական շարժումը վարկաբեկելու մտոք է Սֆեյրի կամովին հրաժարելը վերագրել «գրդռիչների սև մտքերի հետ» նրա անհամաձայնության, քանի որ, իրոք էլ, մնալով իր հայրենի Աջալթունի վեքիլ, ապստամբական շարժման նախկին ղեկավարը, որպես Շահինի մերձավորագույն զինակից, մինչև վերջ չքնց մարտական դիրքերը (43, 178)։

Պարզապես շարժման առաջին հանգրվանում, ընդհուպ մինչև Զուբի Ժողովը, խելամիտների հետ համագործակցած և անկասկած նրանց տեսակետների հետ որոշապես համաձայնած, Սֆեյրը ահելներից խզման նոր պայմաններում արմատական լուծման հետամտող խելառներին, Միակուզ միայն շարժման հեղինակությունից ու շահերից ելնելով, պետք չէ ղեկավարեր։ Ջահելներին նոր իրադրության մեջ որպես առաջնորդ անհրաժեշտ էր նոր անուն։ Այդ անունը երեք հարյուրից մի փոքր ավելի բնակչությամբ Ռեյֆուն գյուղից նախկին ջորեպան ու դարբին (կամ պայտահատ), տվյալ պահին ֆրանսիական լազարիստ միսիոներների վանքի կալվածքների տեսուչ Թաննուս Շահինն էր (222, 22։ 157, 60։ 127, 115։ 85, 102)։

Շահինը, թո՛ղ արար թե արևմտաեվրոպացի ժամանակակիցների հասկանալիորեն կողմնակալ, այլ ընդհանուր առմամբ հակակրալիր բնութագրումները, որոնց մեղմագույնը «արհամարհելի անպիտանությունն» է (37, 147), լիբանանյան նոր պատմության հարցերով զբաղված բուրժուական հեղինակներից և ոչ մեկի մոտ դրական գծերով չի պատկերված, ըստ որում նրա կերպարի գնահատականի հարցում միաբանությունը հարյուր տոկոսով դասակարգային ատելությունից չի կարելի բխեցնել։ Սալիբին, օրինակ, առարկայականության դիրքերից ար-

ձանագրել է, որ «ժամանակակիցների վկայությամբ նա կարող էր հպարտանալ միայն հասակով և ամուր կազմվածքով, ինչպես նաև կատաղի նկարագրով» (37, 147)։ Քերրի կարծիքով «իրեն Ռոբին Հուդ անվանող... գյուղական պրոլետարիատի կիսագրագետ դիկտատորը մնում է կայմակամության շրջանի առավել մթին, այլ անկասկած առավել ուշագրավ դեմքերից մեկը» (222, 22)։

Շահինը Զութի ժողովի մասնակիցներից չէր և ընդհանրապես ոչ մի տվյալ չի հաստատում մինչ այդ նրա առնչակցումը ժողովրդական շարժման հետ։ Խելամիտների հետ խզված և դինված ապստամբության նախապատրաստվող խելառների մի պատվիրակություն, որին գլխավորում էր Սֆեյրը, նրան առաջարկեց նախ Ռեյֆունի, ապա և գլխավոր վեքիլի պաշտոնը (200, 83)։ Շահինը համաձայնեց։ Բնականաբար կաթոլիկ միսիոներները նրան անմիջապես հեռացրեցին աշխատանքից (85, 102)։ Տնտեսական այդ ճնշումը չներգործեց Շահինի վրա, որն այդ պահից սկսած իր ամբոխավարական ամբողջ դինանոցը, որի գոյությունն ըստ երևույթին ոչ ոք չէր ակնկալել, ի գործ դրեց Քեսրուանի գյուղացիական զանգվածներն իր շուրջ համախմբելու և խաղինների դեմ պայքարի հանելու համար։ «Քաղաքական պայքարում նա օգտագործեց իր շրջապատողներին միստիֆիկացնելու հնարներ»,— գրել է Սմիլյանսկայան (43, 177)։ Եվ իրոք, Շահինն իր տան վրա կախեց ֆրանսիական եռագույն դրոշ, սկսեց հայտարարել, որ Թուրքական իշխանություններն ու պատրիարքը թիկունք են տալիս ապստամբական իր շարժման և որ յոթ պետություններ «քրիստոնյաներին անկապտելի ազատություն շնորհող» պաշտոնական բույրուլդիներ են ուղարկել իրեն (89, 129։ 222, 141)։

«Ժողովրդին նա թվաց մի փրկիչ, որ կարդարացնի իր բոլոր նկրտումները և շեյխերից կաղատագրի մարդկանց, ինչին որ նրանք ձգտում էին,— գրել է ալ-Ակիկին։—Նա տեղից տեղ էր շրջում և ամենուր նրան խանդավառ ողջունում էին։ Ամեն մի գյուղում, որտեղ լինում էր նա, գյուղացիները կազմակերպում էին մեծ ընդունելություն, որ տոնախմբության էր վերածվում և ուղեկցվում անընդմեջ հրաձգություններով, կարծես թե կառավարիչն էր եկել իր հպատակների մոտ» (200, 83)։ Ի միջի այլոց, արևմտաևրոպացի ականատեսներ հաղորդել են, որ Շահինը շատ շուտով այնքան էր մեծամտացել, որ իր հետևորդներից սկսել էր պահանջել իրեն շեյխ կամ բեյ տիտղոսով դիմել (37, 148)։

Շահինն իր պաշտոնավարումն սկսեց խաղինների հետ բանակցությունների ձեռնարկելով, ըստ որում առաջին օրերին նա համաձայն էր, որ բուն, խաղինների ավանդական մանրահատված Քեսրուանի տվյալ

պահին տոհմի երեք ճյուղերի միջև բաժանված ուխտաների կամ շրջանների հանար նշանակվեն երեք մասամուրներ։ Շուտով, սակայն, նա իր դիրքորոշումը փոխեց և համառորեն պնդեց մեկ ու միակ մասամուրի պահանջի վրա, միաժամանակ պայման դնելով, որ շեյխերի կողմից ընտրվելիք այդ պաշտոնատարն ունենա ժողովրդից ընտրված մի օգնական։ Խաղինները մերժեցին այդ պահանջը, խզեցին բանակցությունները և զանգատագիր ուղարկեցին Խուրշիդ փաշային (89, 127)։

Բանակցություններին զուգընթաց գլխավոր վեքիլը կարգադրել էր զենք ու զինամթերք ապահովել և պատրաստ լինել ապստամբություն բարձրացնելու։ Բնութագրական է, որ ժողովրդական զանգվածի կրքերը բորբոքելու համար նա չէր դադարել միստիֆիկացման դիմելուց։ Այսպես, դեկտեմբերի 25-ի գիշերը, ծննդյան տոների կապակցությամբ առանց այն էլ եռուզեռի մեջ եղող ժողովրդին նա բառացիորեն տագնապի մատնեց լուր տարածելով, որ իր դեմ մահափորձ է կատարվել (203, 247)։

Այն կապակցությամբ, որ շեյխերի գանգատագրերն ու օգնության խնդրանքները շարունակվում էին, իսկ Շահինն էլ ժողովրդական մի պատվիրակությամբ Բեյրութ գալով աղնվականների «այլանդակությունները թվարկող» բողոքագիր էր ներկայացրել, Խուրշիդ փաշան 1859-ի հունվարի 1-ին երկու հարյուրյակ զինվորների ուղեկցությամբ մի աստիճանավոր ուղարկեց Զուք՝ տեղում իրադրությունը քննելու և իրեն զեկուցագիր ներկայացնելու առաջադրանքով։ Այս անգամ ևս միստիֆիկացման դիմելով, Շահինը ժողովրդի շրջանում դրույց տարածեց, որ շեյխերը, թուրքական իշխանությունների օգնությամբ, ցանկանում են «Քեսրուանը կործանել» (37, 148)։ Գումարվեց բազմամբոխ մի հավաք, որտեղ գլխավոր վեքիլն առաջարկեց շրջանից վտարել խաղիններին, իսկ նրան շրջապատողներից ոմանք պահանջեցին ավելի առաջ գնալ՝ նաև «բռնագրավել նրանց ունեցվածքը» (200, 84)։

Հունվարի 2-ին, շուրջ 800 զինված քեսրուանցիներ, Ջունիի վերիլ ալ-Ուզայմի առաջնորդությամբ ներխուժեցին Ղուստա, Խուրշիդ փաշայի պատվիրակի ներկայության և ղուստացիների անտարբերության պայմաններում «հարձակվեցին շեյխերի տարանքի վրա և կրակեցին, իսկ այնուհետև շեյխերին, կանանց ու երեխաների հետ, արտաքսեցին հարազատ վայրերից» (203, 271)։ Նույն օրը մյուս բնակավայրերից ևս շեյխերը բռնությամբ հալածվեցին։ Խաղինները, մի քանի դոհ տալով, ապաստան որոնեցին Բքերքեի պատրիարքարանում և Զմմառի հայ-կաթողիկե վանքում։ Ապստամբները, պաշարման ենթարկելով հոգևոր

այդ կենտրոնները, սպառնացին բարուբանդ անել, եթե խաղիններն անմիջապես չհեռացվեն։ Մասամբ պատրիարքն ու Գրիգոր-Պետրոս VIII կաթողիկոս-պատրիարքը հարկադրվեցին իրենց հյուրերից խնդրել, որ տեղափոխվեն Բեյրութ (200, 170)։

1859-ի հունվարի 2-ին, շուրջ 11 հազար բնակչությամբ քնարուանյան 30 գյուղերի շրջանակներում խաղին տոհմի մանրիշխանությունը փաստորեն վերացված էր։ Հաստատվել էր ժողովրդական վարչակառավարում։

Ալ-Ակիկիի վկայությամբ (200, 87), Շահինը հանդես էր գալիս ժողովրդական կառավարության անունից (ալ-հուքումա ալ-ջումհուրիա, որ ներկայումս գործ է ածվում որպես հանրապետական կառավարություն), թեպետ, առանց որևէ հարկադրանքի ուղարկելու Բեյրութ, նաև պաշտոնապես հայտարարում էր, որ ճանաչում է օսմանյան իշխանություններին և մարոնական կայմակամին ու հնազանդում նրանց՝ որպես վերադասի, կարգադրություններին (200, 181։ 203, 215)։ Բոլոր դեպքերում, պատմական հիմք չունեն ինչպես Լուցկու պնդումը, որ «Բ. Դուռը հարկադրվեց Թ. Շահինին կայմակամ հաստատել» (28, 118), այնպես էլ ապստամբների դեմ ուղարկված «Թուրք զինվորների՝ առաջին իսկ զինաբախման դեպքում ֆելլահների կողմն անցնելու մտադրության» վերաբերյալ ալ-Ակիկիի հեքիաթին Սմիլյանսկայայի կողմից ընծայված հավատքը (43, 184—185)։

Իշխանության գերագույն օրգանը գյուղական շուրջ 80 վեքիլների ընդհանուր ժողովն էր, որի անդամների մեծամասնության ձայնով ընդունված և նրանց կողմից ստորագրված որոշումները օրենքի ուժ էին ստանում։ Այնքան, որքան գյուղական «Հանրապետության» առօրյայում այդ ժողովները հաճախակի չէին, ընթացիկ բոլոր հարցերն անձամբ լուծում էր մեծ ժողովրդականություն և լայն իրավասություններ վայելող գլխավոր վեքիլը, որ սկզբնաղբյուրներում անվանված է ինչպես «դիկտատոր», այնպես էլ «դեսպոտ» (100, 212։ 222, 141։ 85, 102), թեպետ կարևոր բոլոր խնդիրներում նա պարտավոր էր «որոշում ընդունելուց առաջ ժողովրդի համաձայնությունը ձեռք բերել» ընդհանուր ժողովի միջոցով (200, 198)։

«Հանրապետությունը» վարչակառավարական ապարատ չուներ։ Պարզապես Շահինն իր տրամադրության տակ պահում էր թիկնապահ մի դունդ, սուրհանդակներ և մունետիկներ, որոնք ոռճիկ էին ստանում շեյխերից բռնագրավված բնամթերքի և այլ հարստությունների, իսկ ալ-

խարհազորային գնդերի հետ միասին՝ նաև ունևոր դասի նվիրաբերած գումարների և արտակարգ հարկերի հաշվին։

Արդարադատական միակ մարմինը Զուքում գործող դիվանն էր. թեպետ Շահինը, մանր զանցանքների դեպքում գուցե նաև վեքիլները, իրենց իրավունք էին վերապահում դատավարում կատարել և բանտարկության վճիռներ տալ (200, 181 և 208)։

Տեղերում իշխանությունը գյուղական վեքիլների ձեռքին էր, որոնք հսկում էին հասարակական կարգ ու կանոնին, կենտրոնից տրված կարգադրությունների անթերի կատարման, նաև լուծում՝ տեղական բնույթի մանր վեճեր ու տարբեր հարցեր։ Անհրաժեշտ է ընդգծել, որ վեքիլների մեծամասնությունը բնակչության ունևոր կամ բարեկեցիկ խավերի ներկայացուցիչներն էին՝ արհեստավորներ, արդյունագործողներ, առևտրականներ, վաշխառուներ և հոգևորականներ։ Ի դեպ, առևտրավաշխառուական խավերի ներգործության ուժի մասին է խոսում այն փաստը, որ «Հանրապետությունում» խստիվ հարգվում էր վաշխառուներից վերցված պարտքերի բծախնդիր հարգման և առևտրականների հետ տակա ամեն մի հաշվի անմնացորդ մարման կարգը։ 1860-ի հուլիսի 29-ին, «Հանրապետության» լուծարքի փաստաթուղթն ստորագրելիս անգամ, վեքիլները չէին մոռանալու ընդգծել, որ շեյխերի վերադարձն ու իրենց կալվածքներին վերատիրանալը պայմանավորում են ինչպես ազնվականության, այնպես էլ ժողովրդի միմյանց նկատմամբ ունեցած ամեն մի պարտքից չհրաժարվելու հանձնառությամբ (200, 174, 190, 207 և 215)։ Եվ անկասկած Շահինի ժողովրդական իշխանության այդ հոգատարության որոշ իմաստով փոխհատուցումն էր այն, որ Բեյրութի «մի քանի մարոնական բանկիրներ», ինչպես նաև առևտրականներ ու արհեստավորներ, ֆինանսապես և զենք ու զինամթերքով օգնեցին «Հանրապետության» (132, 7)։

Այդ հանգամանքն, անշուշտ, չի կարող ստվերել այն ճշմարտությունը, որ շեյխերի իշխանազրկումն ու ժամանակավոր ունեզրկումը, նրանց բռնությունների և կամայականությունների վախճանը, գյուղացու անձի և ունեցվածքի անվտանգության երաշխավորումն ու սոցիալական հավասարության հաստատումը՝ քեսրուանյան ամբողջ ազգաբնակչության շահերին էին համապատասխանում և «Հանրապետությունը» Լեռան շրջանակներում վերածում առաջին հերթին հողի շարքաշ բոլոր աշխատավորների համար երազելի մի անկյան։

Եվ սակայն դա չէր նշանակում, բնավ, որ այդ անկյունը գյուղացիության բոլոր երաշանքները մարմնավորող ինչ-որ դրախտ էր, ինչպես փորձում են ներկայացնել որոշ հեղինակներ։

Դժբախտաբար սկզբնաղբյուրների տվյալները ոչ միայն սուղ, այլև հակասական են պարզելու համար, թե 1859-ի հունվարի 2-ից մինչև 1860-ի հուլիսի 29 գոյատևած շահինյան ժողովրդական իշխանությունը ժողովրդի ջախջախիչ մեծամասնությունը կազմող հողազուրկ և սակավահող գյուղացիության համար հիմնական ու կենսական՝ հողի հարցում ի՞նչ լուծում որդեգրեց։

«Թաննուս Շահինը,—գրել է ալ-Ակիկին,—լեռնահատվածում և ծովափում շեյխերի ունեցվածքի որոշ մասը, այդ թվում մետաքսն ու ցորենը, հավաքեց և ամբարեց իր տանը։ Նա այդ բոլորը վերցրեց ժողովրդի անունից և իր տան դռները բացեց այցելուների առաջ։ Նա իր տան մթերապահեստը դրեց գյուղ եկող մարդկանց տրամադրության ներքո, նրանց համար պատրաստեց ննջարաններ, բաժանեց զենք ու զինամթերք և իրեն պահեց այնպես, կարծես մի հսկա տոհմի ղեկավարը լիներ։ Դրա շնորհիվ նրա անունը ամբողջ երկրով մեկ հայտնի դարձավ» (200, 87)։

Դժվար չէ նկատել, որ խոսքն այստեղ շեյխերից բռնագրավված բնամթերքներով որոշ առումով հասարակական ֆոնդ ստեղծելուն և այն իշխանության կարիքների համար շռայլորեն օգտագործելուն է վերաբերում միայն։

«Ապա,— շարունակել է ժամանակագիրը,— ժողովուրդն սկսեց վերցնել շեյխերի ունեցվածքը, հատել անտառները, խուժել կալվածատերերի տները և բռնագրավել այնտեղ գտնվող մետաքսը, ցորենը, յուղը և խաղողը, ամեն ինչ, որ կարելի էր գտնել-վերցնել» (200, 87)։

Այստեղ ևս խոսքը շարժուն ունեցվածքի մասին է, որ կարող է մասամբ դնացած լինել հասարակական ֆոնդ, մասամբ էլ թողնված՝ ժողովրդի օգտագործման (79, 126)։ Ըստ որում, ինքնակամ բռնախլումների չափերը ոչ թե փոքրացնելու, այլ մեծացնելու հարցով շահագրգռվելու պատճառներ ունեցող ալ-Խաթունիի վկայությամբ միայն Աջալ-Թունի, ալ-Քլեյաթի, Մագրաաթ Քֆար Դիբիանի և Բալունայի որոշ գյուղացիներ են զբաղվել շեյխական ապարանքների թալանով, որին վերջ է տրվել Շահինի հրամանով (203, 276)։

Ինչ վերաբերում է կարևորագույն ունեցվածքին՝ հողին, որին գյուղացիները նախկինում առնչվում էին միայն «որպես ծառաներ կամ վարձակալներ» ապա, ճիշտ է, այն հողի միևնույն աշխատավորները

շարունակեցին մշակել, սակայն առանց ֆեոդալական ռենտա վճարելու հարկադրանքի։ Եվ իրոք, ալ-Ակիկին հաղորդել է, որ «եթե գյուղացիները նկատեին, որ շեյխին նվիրված մի մարդ որևէ բան է տանում իր տիրոջ, ապա դարանակալում էին և նրանից ամեն ինչ խլում ու այպանում» (200, 87)։

Սակայն, դա չի նշանակում, բնավ, որ ֆեոդալ-աղնվականության հողերը որպես սեփականություն բաժանված էին գյուղացիներին, ոչ էլ այն, որ տերունական հողերի հետ առնչվող գյուղացիությունը շահինյան ժողովրդական կառավարության կողմից աղատվել էր ռենտայից։

«Ճիշտն ասած, ինչքի բռնագրավում չկար, այլ կար լոկ ունեցվածքի անբաժան օգտագործում հօգուտ գյուղացիության»,—հաստատել է Պուժուլան (157, 61)։ Ռոշմոնդեն, ընդհակառակը, վկայել է, որ 1860-ին, «Հանրապետության» լուծարքից հետո, գյուղացիներին հրամայվել է «իրենց նախկին տերերին վերադարձնել այն ունեցվածքները, որոնք բռնագրավվել էին..., այդ սեփականությունների ապօրինի օգտագործման հատուցումը կարգավորել և այս պահից ամբողջությամբ մուծել վարձակալման գինը, պարտքերը և սեփականատերերին պատճառված վնասները» (165, 169)։ Շեյխերի «ինչքի բռնագրավման» մասին խոսել է նաև ֆրանսիացի մի այլ ժամանակակից (85, 101)։

Երեք հեղինակների տվյալ վկայություններում «ինչքի» կամ «ունեցվածքի» հիմնականում հողին վերաբերելը անկասկածելի է։ Սակայն և նույնքան անկասկածելի է, որ «բռնագրավել» բայի բովանդակությունը, այլ խոսքով շեյխական հողերի իսկապես բռնագրավված լինել-չլինելու հարցը խիստ մշուշապատ է։ Այդ մշուշը փարատող փաստեր, բարեբախտաբար, կան։ Հակաապստամբական իր տրամադրություններին հակառակ, ալ-Խաթունին հաղորդել է, որ շեյխական ապարանքների թալանը կասեցնող Շահինի հրամանով ապստամբները «կալանք դրեցին շեյխերի կալվածքների եկամուտների վրա» (203, 276)։ Իր հերթին ապստամբության համակիր ալ-Ակիկին պարզաբանել է «կալանքը», գրելով. «1859-ին, հունձքի ժամանակ, գյուղացիները ցուցակագրեցին այն, ինչ շեյխերն իրենցից խլել էին, իսկ ապա սկսեցին դա հատուցել վտարվածների կալվածքներից։ Դժվար է ասել, թե այդ հավակնություններն ինչքանով հիմնավոր էին» (222, 53)։

Սկզբնաղբյուրների այս բոլոր տվյալներից հետո չէր կարելի հեռուն գնացող եզրակացություններ կատարել, պնդել, որ շեյխերի վտարումը ուղեկցվում էր նրանց հողերի բռնագրավմամբ, ինչպես դա արել են Լուցկին և Սմելյանսկայան (28, 118։ 43, 182), նույնիսկ գյուղացիների

միջև բաժանմամբ, ինչպես դա արել է Գոլդոբինը (32, էջ 198)։ Նշենք, որ Հ. Աղբաշյանը, որի վերաբերմունքը շահինյան շարժման նկատմամբ նվազ ջերմ չէ, թվարկելով «բռնախլված ստացվածքները» («հունձքը, ձեթը, մետաքսը, ուտեստեղենը են»), իրավամբ զանց է առել հողը (7, 70)։ Ի դեպ, Լամմենդն իր ժամանակին խոսել է միայն «շեյխերին ունեզրկողների ագրարային անկարգությունների» մասին (128, հտ. 2, 177—178)։ Եվ դա, իր հակակրական երանգից մաքրվելու դեպքում, ավելի հարազատորեն կհուշի տեղի ունեցածը. շեյխերի բատրակներն ու հողավարձակալները պարզապես շարունակել են, ինչպես նախկինում, գործել տվյալ պահին եթե փաստորեն շեյխերի անօրինությունից հանված, ապա իրավականորեն նաև իրենց շամրացված հողը և բերք ու բարիքից, բացի նախկինում իրենց ստացած բաժնից, հիմնավոր թե անհիմն վնասուց հատուցումների անվան տակ, սկսել են յուրացնել նաև կալվածատիրոջ բաժնի մի մասը։ Իսկ թե այդ բաժնի մյուս մասն ումն է եղել, ապա դրա հասցեն կոահմամբ կարելի է տեղայնացնել հասարակական ֆոնդում։

Անհերքելի պիտի համարել այն, որ շահինյան ժողովրդական իշխանության ծրագրում չկար և իշխանության ղեկավար կազմի սոցիալ-դասակարգային պատկանելության պայմաններում չէր էլ կարող լինել կալվածատիրական հողերի՝ հօգուտ հողի աշխատավորների բռնագրավման գրույթը։ Վերջին հաշվով պատմական իրողություն է, որ Քեսրուանը Լեռան այն մանրահատվածն էր, որտեղ մշակելի հողերի մեծագույն մասը պատկանում էր վանքերին, ապա և՝ խաղիններից բացի նաև Դահդահ շեյխերին, վերջապես՝ հողի սեփականատեր դարձած գյուղական վերնախավին, որոնց, նույնիսկ ապստամբական շարժման ներսում խելառների գերակշռության պայմաններում, մատի ծայրով իսկ դիպչող չեղավ։

Այս բոլորով հանդերձ, խաղինները բնականաբար չէին հաշտվի պարտության մտքի հետ։ Նրանք օսմանյան իշխանություններից օգնություն խնդրեցին՝ վերականգնելու իրենց դիրքն ու իրավունքները։ Խուրշիդ փաշան ի վերջո ոչ միայն Քեսրուանի իրադրության, այլև կայմակամի հարցը դրեց Բեյրութի իր դիվանի քննարկման։ Պատրիարքն, իր համայնքի համար գուցե թե աննպաստ կարգադրությունները կանխելու մտոք, 1859-ի մարտին վերսկսեց իր միջնորդությունը, հատկապես հրավիրված վեքիլներին առաջարկելով խաղին տոհմից երեք մամուրների իշխանությունը ճանաչելու հիմամբ հարցը կարգավորել։ Ինչպես վեքիլները, այնպես էլ Բքերքե ներկայանալուց հրաժարվող Շահինը մերժեցին առաջարկությունը, պատճառաբանելով, որ Բեյրութի իշխանությունների

որոշմանն են սպասում (200, 177)։ Մայիսին պատրիարքարան ուղարկված մի հանրագրությամբ ապստամբ ժողովուրդն իր հերթին հաղորդեց, որ շեյխերից և ոչ մեկին որպես մամուր չի ընդունելու (203, 280)։ Հենց այդ ժամանակ էլ Խուրշիդը ցանկացավ ռազմական միջամտությամբ քեսրուանյան գորդյան հանդույցը լուծել, նույնիսկ զորագնդեր ուղարկեց Ջունի և Ջուբ, սակայն ֆրանսիական հյուպատոսի, պատրիարքի, մարոնական կայմակամի ու նրան կից խորհրդի ազդու պահանջով ետ կանգնեց իր մտադրությունից (157, 62)։

Հոկտեմբերին բանակցությունների սեղանի շուրջը նստեցին մի կողմից Շահինը, մյուս կողմից պատրիարքի լիազոր Յուհաննա Հարիբը, կայմակամի ներկայացուցիչ Իյդ Հաթիմը և ֆրանսիական հյուպատոսի պատվիրակ, լազարիստ միսիոներների առաջնորդ Ֆ. Լերուան։ Ֆրանսիական խորհրդով Շահինին այս անգամ ևս առաջարկվեց երեք մամուրների սիստեմը, ըստ որում վերջիններից երկուսին ընտրելու իրավունքը վերապահվում էր ժողովրդին, իսկ երրորդին նշանակելու էր պատրիարքը «կողմնակի մարդկանցից» (200, 190)։ Մարոնական եկեղեցու վերնախավն ու ֆրանսիական դիվանագիտությունը տվյալ պահին որպես «կողմնակի մարդ» նկատի ունեին Իհդինի 36-ամյա շեյխ Յուսուֆ Քարամին։ Վերջինս, հյուսիսային լեռնագոտու մարոնական մեծահարուստ տոհմից սերած, Բեշիր III-ի օրոք Ռ. Դահդահի հետ գործակցելուց հետո Օմար փաշայի դեմ ընդդիմադրությունը ղեկավարած Բութրուսի որդին, լազարիստներից մոլեռանդ կաթոլիկական ոգով դաստիարակված լինելով, դեռ այն ժամանակ սիրում էր կրկնել. «Մենք լիբանանյան ֆրանսիացիներ ենք, եթե ոչ արյամբ ու ծագմամբ, ապա զոնե սրտով ու հավատքով» (157, 21)։

Շահինը, անկախ իր ազնվականական խրոխտանքով և ժողովրդական ցանցվածի նկատմամբ իր արհամարհալիր վերաբերմունքով հայտնի Քարամի թեկնածության անընդունելիությունից, մեկ ու միակ մամուրի սիստեմից դուրս այլ կարգի մասին լսել իսկ չուզեց։ Պատրիարքի խորհրդով համաձայնություն տրվեց նրա պահանջած կարգին, սակայն պայման դրվեց, որ իր՝ Շահինի թեկնածությունը բացառվի։ Գլխավոր վեքիլը, «հավակնելով, որ լոկ իր առաքելությունն է կատարում, մերժեց ենթարկվել կրոնապետի ցանկության» (180, 11)։

Բանակցությունների ձախողումից դառնացած, պատրիարքարանը դիմեց գյուղական քահանաների աջակցության։ Ցածրաստիճան կղերի մոտ այս դեպքում սքեմը, այլ ազդակների շաղկապված, լռեցրեց դասակարգային ոգին։ Ապստամբական ղեկավարության շրջանում երկպա-

ռակություն առաջացավ։ Շահինի դեմ սկսվեց հանրագրությունների շարժում։ Հարավային և հյուսիսարևմտյան գյուղերի վեքիլները, վերաշխուժացած խելամիտների ներշնչանքով, հակվեցին դեպի պատրիարքի առաջարկը. ժողովուրդն ընտրելու է իր միակ մաամուրին, սակայն ո՛չ Շահինին, որից հետո խազինները, որպես սովորական կալվածատերեր, վերադառնալու են Քեսրուան։ Խելառները վճռականորեն հայտարարեցին, որ Շահինից դուրս որևէ մեկին որպես մաամուր չեն ճանաչելու։ Մի շարք գյուղեր դիրքորոշվեցին գլխավոր վեքիլի դեմ, նույնիսկ զինված դիմադրություն ցույց տվեցին շահինականներին։

Շահինը ժամանակը հարմար համարեց հարևան մանրահատվածների գյուղացիության շրջանում ևս ապստամբական շարժում հրահրելու և դրանով իսկ իր և քեսրուանյան «Հանրապետության» դիրքերն ամրապնդելու։ Հավատարիմ իր միստիֆիկացման հնարներին, նա մեկը մյուսի ետևից կոչեր հասցեագրեց Լեռան բոլոր քրիստոնյաներին, մոտավորապես այն նույն բովանդակությամբ, ինչ ջուբելլիցիներին ուղղված հետևյալ դիմումը. «Ես բուլուրուլդի եմ ստացել յոթ պետություններից՝ ազատագրելու բոլոր քրիստոնյաներին, որոնք այսուհետև ոչ ոքի ըստրուկը պետք չէ լինեն։ Եթե ցանկանում եք ազատագրվել, ապա ոչ ոք ձեզ չի խանդարում, ո՛չ մուշիրը, ոչ էլ կայմակամը։ Անհապաղ ազատագրեցեք ձեզ և ոչնչից մի վախեցեք։ Եթե զինված ջոկատների կարիքն զգաք, ապա հայտնեցեք ինձ ու ես կուղարկեմ» (222, 141)։

Քեսրուանյան իրադարձությունների և Շահինի կոչերի նկատմամբ հասկանալիորեն առավել զգայունն ու ընկալունակը հարավային մանրահատվածների քրիստոնյաներն էին լինելու։ Ինչպես վկայել է ֆրանսիացի մի ժամանակագիր, նրանք «սկսեցին անհամբերել և անտանելի գտնել իրենց կախվածությունը դրուզ շեյխերից, որոնք անխղճորեն շահագործում էին իրենց» (180, 11)։

Եվ սակայն ինչպես Քեսրուանի ժողովրդական շարժումը, այնպես էլ Լեռան բոլոր մանրահատվածների և առաջին հերթին հարավի գյուղացիության սոցիալական ազատագրության հույսերը խեղդվելու էին 1860-ի դրուզ-մարոնական առավել արյունալի զինաբախումների թոհուբոհում։

* * *

Անբնական ոչինչ չկա այն բանում, որ հիսուսյան միաբանության մարտունակ միսիոներ Լամմենզը Քեսրուանի ժողովրդական շարժումը, իր «ցավալի ծայրահեղություններից» ելնելով, ժակերի (Jacquerie, жакерия) է հորջորջել և համարյա արցունք թափելով պնդել, որ «ավելի ցավալի էին ապրարային անկարգություններով մտքերի մեջ սերմանված

երկպառակության թթխմորները, որոնք մի տարի էլ չանցած տխուր արդյունքներ էին տալու» (128, հտ. 2, 177—178)։ Վերջին հաշվով ժողովրդական-սոցիալական ամեն մի շարժման հակառակորդ Լամմենեը ժակերի բառի մեջ չէր կարող չդնել այն արհամարհական բովանդակությունից, որ XIV դարի կեսերին ֆրանսիական ազնվականության բառապաշարում վերապահվում էր ապստամբ գյուղացիներին՝ Պարզամիտ ժակերին կամ ժակ Մարդուկներին (Jacques Bonhommes)։

Բնականաբար, քեսրուանյան շարժումը նույնպես ժակերի անվանող Սմիլյանսկայայի (43, 152) համար Շահինն ու նրա հետևորդները պարզամիտ մարդուկներ չէին բնավ և անվանումն այս դեպքում ավելի շուտ գնահատականի երանգ ունի։

Եվ սակայն Լեռան կենտրոնական հատվածի սահմանափակ մի գոտում արձանագրված իրադարձությունները, բացի իրենց հակաֆեոդալական նպատակամղվածությունից, ժակերիի հետ այլ ընդհանուր եզր չունեին բնավ։ Եվ իրոք, ո՛չ իրենց անմիջական դրդապատճառներով, ո՛չ ընդհանրապես ֆեոդալականության և անխտիր բոլոր ֆեոդալների դեմ ուղղված չլինելու հանգամանքով, ո՛չ ընթացքով, ո՛չ ծավալով, ո՛չ ուժգնությամբ և ոչ էլ վախճանով դրանք համեմատության ոչ մի դիծ չունեին ֆրանսիական գյուղացիության շարժման հետ։

Համենայն դեպս, ժակերի թե ոչ, քեսրուանցիների հակախազինյան, այլ խոսքով տեղական աշխարհիկ ֆեոդալականության երկու ուժեղ թևվերից մինչն մեկի դեմ ուղղված ապստամբական շարժումը որոշ իմաստով անակնկալ փոթորիկ էր պարզկա երկնքում։ Գյուղացիության օրըստօրե հարաճող սոցիալական դժգոհանքի առկայության պայմաններում իսկ, 1840-ից հետո Լիբանան լեռան պատմական ճակատագրին որոշված հեղաբեկումները և քրիստոնյա, նախ և առաջ մարոնական աղգաբնակչության ապրած ցնցումները կարող էին ենթադրել տալ, որ լեռնականների ոգու վիճակի և գիտակցության մակարդակի իսկ թելադրանքով, հակաֆեոդալական տրամադրությունները ապստամբական որևէ պայթյունի չէին հանգի Քեսրուանում։ Ավելի շատ ակնկալելի էր, որ այդ պայթյունը տեղի ունենար հարավային մանրահատվածներում, որտեղ սոցիալական ճնշման դեմ արդեն իսկ ահագնացած դժգոհանքին միահյուսվում էր դավանական-համայնքային, տվյալ ժամանակաշրջանում որպես համարյա ազգային գիտակցվող ճնշման դեմ դժգոհանքը։

Եվ ահա հենց այստեղ է, որ ակնհայտ համարելով քեսրուանյան իրադարձությունների սոցիալական բնույթը, հիմքում անկասկածելիորեն տեսնելով սոցիալական դժգոհանքը որպես առաջնային գործարկիչ,

պիտի ընդունել նաև առկայությունը ապստամբությունը փութացնող, հատկապես տվյալ պահին շղթայազերծվելու մղող մյուս, տարաստիճանի զորեղ գործոնների, որոնք, հակադիր դիտանկյուններից ու անհավասարաչափ համոզվածությամբ արձանագրվել են ժամանակակիցների և հիմնավորվել հետագա, արաբական թե արևմտյան անխտիր բոլոր հետազոտողների կողմից։ Այդ գործոնները վերջ ի վերջո համախմբվում և բյուրեղանում են թուրքական իշխանությունների, ֆրանսիական և անգլիական գործակալների, մարոնական եկեղեցու, անձամբ կայսակամի և ազնվականության որոշակի մի շերտի շահագրգիռ դերի մեջ։ Հենց այդ գործոններն էլ, ի դեպ, բավարար պետք է լիներին համոզված արձանագրելու, որ Քեսրուանում տեղի ունեցածը Ժակերի չէր բնավ։

Պետք է ասել, որ Ժակերիի հետ ավելի շուտ համեմատելի կլիներ պայթյունը, որ քեսրուանյան դեպքերին զուգընթաց և շահինյան շարժման ու նրանից բխող խոստման հուսադրիչ ներգործությամբ նախապատրաստվում էր հարավային մանրահատվածների գյուղացիության, գուցե թե փոքր ինչ դրուզների, առավելաբար քրիստոնյաների շրջանում։ Եվ սակայն սոցիալական այդ պայթյունը տեղի չունեցավ։ Ավելի ճիշտ՝ միջհամայնքային նախորդ արյունահեղությունների կենսունակ հիշատակի ազդեցությամբ, դրուզ և քրիստոնյա գյուղացիության հուզումները ոչ միայն ընթացան տարանջատ հուներով և ի վերջո հասկանալիորեն խաչաձևվեցին, այլև մարոնականներինը այս անգամ ևս անխուսափելիորեն ծածկվեց կրոնադավանական պատմուճանով ու դրանով իսկ սոցիալական պայթյունը վերածվեց տարբեր համայնքների, առաջին հերթին նրանց գյուղացիական զանգվածների միջև երկպառակտչական զինաբախումների։

Եվ իրոք, 1859-ի գարնան և ամռան ամիսներին հարավի դրուզ գյուղացիության այն խավերը, որոնք հակաֆեոդալական տրամադրություններ էին դրսևորում, ոչ միայն մերժեցին իրենց քրիստոնյա ճակատագրակիցների հետ ամեն մի դաշինք, ինչ որ հեշտացրեց դավանակից ֆեոդալ-ազնվականների ճնշիչ քայլերը, այլև շուտով դադարեցրեցին ամեն մի խլրտում։ Սալիբին հողի դրուզ աշխատավորների դիրքորոշման հարցում իրավամբ է հաստատել հոգուտ կալվածատերերի գործելով քրիստոնյաների կողմից գալիք վտանգից նախազգուշացնող և իրենց ավանդական պարագլուխների շուրջ համախմբվելու կոչ անող ուքքալների դերը (37, 149—150)։ Անհրաժեշտ էր, սակայն, այդ դերի կողքին ընդգծել այն փաստն էլ, որ դրուզ գյուղացիությունը յուրաքանչյուր քայլափոխի զգում էր իր նման ճնշված ու դժգոհ, սակայն սոցիալ-

դասակարգային հաշվեհարդարից բացի որպես համայնք նախորդ պարտությունների փոխ-վրեժին հետամտող մարոնական գյուղացիության չթաքցվող թշնամանքը։

Դրուզ և մարոնական գյուղացիական խավերի փոխհարաբերությունները վերստին սրելու երկնապարգև առիթ ստեղծվեց 1859-ի օգոստոսի վերջին օրերին, երբ Բեյթ Մերի գյուղի մոտ, լեռնային մի կածանի վրա, իրար դեմ դուրս եկան երկու ջորիներ, որոնց տերերը՝ դրուզ մի ծերունի և մարոնական մի պատանի, չզիջելով մեկը մյուսին, կռվի բռնվեցին։ Կողմերին օգնության հասան ընկեր տղերք, մահակներից հետո գործի լծվեցին նաև հրազենները և մի քանի մարդ վիրավորվեց (80, 132)։

Հարավային մանրահատվածներում միջհամայնքային նոր զինաբախումների առաջացման սոցիալական նախադրյալների առկայությունը ժամանակակիցներից ոչ ոքի համար գաղտնիք կամ նվազագույն չափով կասկածելի չի եղել բնավ։ Ալ-Ակիկին, օրինակ, գրել է. «Շուֆի մանրահատվածում տարաձայնություն ծագեց քրիստոնյաների և դրուզների միջև։ Դրա պատճառը շրջանի աղգարնակչության մի մասի ցանկությունն էր՝ ազատագրվել մուկատաաճիների լծից... Շեյխերն իմացան այդ մասին և սկսեցին ճնշել հասարակ ժողովրդին, խարեության և երկու համայնքների միջև զինաբախումներ հրահրելու միջոցով» (222, 55)։ Չերչիլն, իր հերթին, ընդգծել է, որ մուկատաաճիների լուծը «իրենց անմիջական իշխանության ենթարկված քրիստոնյաների նկատմամբ ավելի ու ավելի ճնշիչ դարձավ։ Վեքիլները, որոնք... նշանակվել էին դրուզների և քրիստոնյաների միջև վեճերի դեպքում իրավարարի դեր կատարելու համար, հասցված էին ոչնչության և չարագործությունների ու անարդարությունների լուռ ու անօգնական հանդիսատեսն էին դարձել։ Գործը հասավ այնտեղ, որ շեյխերը զինարշավներ էին կազմակերպում քրիստոնեական գյուղերի վրա, իրենց հեծյալներին տեղավորում քրիստոնյաների տներում, կորզում փողը, քշում-տանում արջառը, խլում ընտանի թռչունները և բռնագրավում մթերքը, իսկ դիմադրության հանդիպելու դեպքում՝ պատժում դաժանորեն»։ Այս բոլորի հետևանքով բնականաբար օրըստօրև աճում էր «դրուզական շրջաններում կյանքի և ինչքի անապահովությունը» (80, 98 և 111)։

Զարմանալի հետաքրքրական է այն փաստը, որ Բեյթ Մերիի միջադեպից հետո, ինչպես նկատել է ալ-Ակիկին,—«վեճեր սկսեցին» ոչ միայն «երկու համայնքների միջև», այլև «նրանցից յուրաքանչյուրի ներսում»։ Դա նշանակում է, որ եթե խլրտացող քրիստոնյա վասալների նկատ-

մամբ ձեռք առնվելիք միջոցների հարցում այս կամ այն աստիճանի երկփեղկում էր վերառաջացել դրուզական վերնախավի շրջանում, որտեղ, ինչպես գիտենք, դեռ մինչև մի տասնամյակ առաջ աշխույժ էին շափավորական նաամանականները, ապա մարոնականների շրջանում ևս, հավանաբար գործը ապստամբական ձեռնարկման հասցնել-չհասցնելու հարցի կապակցությամբ, առաջացել էին ճակատներ։ Ալ-Ակիկին, լռելով դրուզական ներքին երկփեղկման շուրջ, հաղորդել է, որ մարոնական «հոգևորականների մի պատվիրակություն գնաց պատրիարք... Մասադի մոտ։ Վերջինս արգելեց նման ամոթալի միջադեպեր։ Սակայն այդ ժամանակ Բեյրութից Բուրիա Առն եպիսկոպոսը հանդես եկավ քրիստոնյաների պաշտպանությամբ և բողոքագրով դիմեց հյուպատոսներին» (222, 56)։

Մեզ ծանոթ Առն եպիսկոպոսը, հարավային մանրահատվածների քրիստոնյաներին ամեն գնով հյուսիսի վարչակառավարման ենթարկելու կողմնակից կայմակամականների նախկին պարագլուխը, ֆրանսիական որոշ աղբյուրներում ծայրահեղության հասնող գովասանքի է արժանացել (156, 158), ուրիշներում՝ ներկայացվել որպես Ֆրանսիային նվիրյալ ու Փարիզի կարգադրությունների հլու կամակատար (180, 26), մինչ անգլիամետ բողոքական հեղինակներից բնութագրվել է որպես «այն մարդը, որ պատրիարքից հետո ավելի շատ բան արեց, քան որևէ մարոնական, որպեսզի առաջ բերի քաղաքացիական այս պատերազմը» (115, հտ. 1, 158)։ Եվ իրոք, Առնի նախաձեռնությամբ է Բեյրութում հիմնադրվել և նրա կողմից էլ այնտեղից ղեկավարվել միջհամայնքային զինաբախումների նախապատրաստվող «Երիտասարդ մարոնականների կազմակերպությունը» (115, հտ. 1, 165), որն ընդհանուր առմամբ գյուղական քահանաներից վերահսկվող իր մասնաճյուղերն ուներ Լեռան տարբեր շրջաններում, հատկապես հարավում։ Կազմակերպության այդ մասնաճյուղերը հասկանալիորեն կոչվում էին «Քրիստոնեական (կամ քրիստոնյաների, ավելի ճիշտ կլինի ուղղել՝ մարոնականների—Ե. Ն.) տեղական ընկերակցություն», որ սովետական արարագետների շրջանում թյուրիմացությամբ ընկալվել է որպես ամբողջ կազմակերպության անվանումը (43, 93)։

«Երիտասարդ մարոնականների կազմակերպության» ղեկավար կենտրոնին անդամակցում էին, բացի Առնից, Բեյրութի և դեպի ալ-կամարցի մի շարք երևելի առևտրավաշխատողներ՝ Նաում Կիկանոն, Միշել Ֆարաժալլան, Նիկոլա Նակկաշը, Այուբ Տրապուլսին և այլ, ֆրանսիական կապիտալի հետ սերտորեն առնչված մարդիկ, որոնց, ռուսական

դիտորդի վկայությամբ, գործուն աջակցություն էին ցույց տալիս ֆրանսիական հյուպատոսարանի պաշտոնատարները, առաջին հերթին ոգեշնչելով, որ «Ֆրանսիան հանդես է գալիս իրենց օգտին» (5, գ. 37, թ. 124)։

Կազմակերպությունը, որ կարիքավոր և հիվանդ մարոնականներին օժանդակող բարեսիրական ընկերության քողի ներքո էր գործում, անգլիացի դիտորդի հավաստմամբ իրականում Բեյրութի «երևելի և հարուստ մարոնականների հանգանակությունների» արդյունքով «զենք ու դինամիթերք էր գնում և բաժանում Լեռան... դավանակիցներին» (80, 137), որոնց ամեն մի գյուղում կազմակերպում էր կիսառազմական ջոկատների շրջանակներում։ Ջոկատների շարքայինները՝ ջուհալիները, որոնք հատուկ համազգեստ և հրահանգիչներ ունեին, ենթարկվում էին տեղի շեյխ աշ-շերեբին, իսկ վերջինս՝ մանրահատվածի երիտասարդապետերի շեյխին (204, 103)։

Հարավային մանրահատվածների քրիստոնյա գյուղացիության հակաֆեոդալական պայքարը, «Երիտասարդ մարոնականների կազմակերպության» ղեկավարման իսկ պատճառով, 1860-ին ստանալու էր 1840-ական թթ. պայքարներից շատ ավելի ընդգծված կրոնազավանական երանգ։ Դա իր ժամանակին նկատել են համարյա բոլոր դիտորդները։ Բեյրութում գործող միջազգային հանձնաժողովում Անգլիայի ներկայացուցիչ լորդ Դաֆֆերինն, օրինակ, իր զեկուցագրերից մեկում նշելու էր. «Միջհամայնքային դինամախումը, որ իր արտաքին երևույթով թվում էր կրոնական վեճ, հարկ է դիտել որպես ցույց ֆեոդալիզմի դեմ..., որպես սուր պայքար ընդմեջ գրուզ հողատերերի և նրանց քրիստոնյա հողավարձակալների» (81, հտ. 2, 61—68)։ Նույն հանձնաժողովում Ավստրիայի ներկայացուցիչ և իր թուրքասիրությամբ հռչակված Վեկբեկկերն իր հերթին ընդգծելու էր, որ ֆեոդալական կամայականություններից շեշտակի դարձած գյուղացիական դժգոհանքը հյուսիսում առաջ բերեց քաղաքացիական պատերազմ, քանի որ կալվածատերերն ու գյուղացիները դավանակից էին, մինչ հարավում, որտեղ քրիստոնյաները ճնշվում էին գրուզ կալվածատերերի կողմից, սոցիալական պայքարը միջհամայնքային դինամախման բնույթ ստացավ (181, հտ. 6, 230)։

Սոցիալական պայքարին նախկինից ավելի ակնբախ կրոնական երանգ էր տալու նաև հետաքրքրական այն հանգամանքը, որ 1860-ին հույն-կաթոլիկ հոգևորականությունը ավելի գործուն էր, քան 1840-ական թթ., իսկ հույն-օրթոդոքս կղերը, որ նախկինում իր հոտին ավելի շատ դեպի գրուզական ճակատն էր մղում, այս անգամ ուղղակի շահագրգռու-

թյուն էր հանդես բերում միջհամայնքային զինաբախումների և քրիստոնյաների հաղթանակի նկատմամբ, հետևաբար Բքերքեի մի շարք երևելիների նման կոնդակներով պայքարի հրավեր կարդում ուղղափառներին։ Սայդայի և Սուրի օրթոդոքսների առաջնորդ Սաֆրոնիա եպիսկոպոսն, օրինակ, Ռաշայայի դավանակիցներին հասցեագրված այլ դրուզների ձեռքն ընկած իր շրջաբերականում գրում էր. «Լիբանանի լեռներում գումարվեց Ջահլեի, Դեյր ալ-Կամարի, Քեսրուանի, Ջեզզինի և այլ վայրերի առաջնորդների և ժողովրդի հավաք։ Նրանք բոլորը միասնաբար հանդես են գալիս (դրուզ) թույլ և փոքրաթիվ ժողովրդի դեմ, որպեսզի նրան վտարեն ժամանակին ձեր պապերին պատկանած այս հողից» (48, 198)։

Ֆրանսիական մի աղբյուրի (180, 26) հուշարարմամբ հնարավոր է Լեռներում աննախադեպ քրիստոնեական այդ համախմբումը վերագրել հավանական առկայությանը դրուզներին վերջնականապես ջախջախելով Ջերել աշ-Շուֆից Հաուրան արտամղելու և Լիբանան լեռը, Ուադի աթ-Թայմի շրջանով հանդերձ, զուտ քրիստոնեական դարձնելու ինչ-որ ծրագրի։ Իսկ եթե ի մտի ունենանք նաև այն փաստը, որ ամերիկյան ու մասամբ անգլիական միսիոներների ջանքերով վերջին երկու տասնամյակներին ծովափնյա քաղաքների բնակչության միջավայրից բացի նաև լեռնականների շրջանում առաջացած բողոքական համայնքը բացահայտորեն դիրքորոշվելու էր դրուզների կողքին (115, հտ. 1, 174), ապա հնարավոր է միաժամանակ ենթադրել, որ Լևանտի քրիստոնեական հնամենի համայնքներին համախմբվելու մղող մի ուրիշ աղդակ էր առավելաբար դրուզական բարյացակամությամբ ծավալվող բողոքականությունը արմատախիլ անելու վճռականությունը։

Այս ենթադրություններին կապակցելով այն իրողությունը, որ 1860-ի արյունալի իրադարձությունների ընթացքում դրուզներին դաշնակցեցին ոչ միայն օսմանյան ատիճանավորներին բարեպաշտորեն լսող սուններները, այլև մթուալիները, որոնք անցյալում միշտ էլ հանդես էին եկել որպես քրիստոնյաների զինակից, պիտի ասել, որ միջհամայնքային երրորդ և առավել զոհաշատ զինաբախումները նախկինի նման հիմնականում դրուզ-մարոնական չէին բնավ և փաստորեն վեր էին ածվել մահմեդական-քրիստոնյա կռիվների։ Այդ պայմաններում, թեկուզև հարավային մանրահատվածներում կենտրոնացած, զինաբախումներում քրիստոնյաների ամեն մի հաջողություն չէր կարող պայմանավորված չլինել հյուսիսային լեռնահատվածի, հատկապես առավել

բաղմամարդ քեսրուանյան լեռնագոտու քրիստոնյա ազգաբնակչության եռանդաշատ մասնակցությամբ, առնվազն գործուն աջակցությամբ։

Դժբախտաբար սկզբնաղբյուրների տվյալների սղությունը թույլ չի տալիս հստակ պատկերացում կազմել հատկապես կարևոր՝ հարավի քրիստոնյա գյուղացիության պայքարի նկատմամբ Քեսրուանի քրիստոնյա ժողովրդական իշխանության վերաբերմունքի հարցում։ Պատմական փաստ է միայն այն, որ երբ խաոը ազգաբնակչությամբ շրջանների քրիստոնյաները զինական օգնության թախանձանքով դիմեցին Շահինին, ապա վերջինս, հավատարիմ իր միստիֆիկացման հնարին, խոստացավ անհրաժեշտության դեպքում ուղարկել մինչև հիսուն հազար կամավորներ (200, *106*։ 222, *57*)։ Օժանդակության անհիմնավորապես հավակնոտ չափերը հասկանալիորեն չափազանց ոգևորեցին Շուֆի, Ջեզզինի ու մյուս մանրահատվածների քրիստոնյաներին, որոնք, իրենց հաղթանակի հավանականության հաստատ համոզված, այն փութացնելու համար սկսեցին զինարախման առիթներ որոնել ու մարտահրավեր կարդալ իրենց հակառակորդներին։

Դա առանձնապես վտանգավոր էր ոչ միայն շահինյան խոստման անգործնականության պայմաններում, այլև այն պատճառով, որ դարաղիականները ձեռնածալ չէին նստած։ Համազգեստավորված զինված ջուհալների աշխույժ ու ցուցադրական երթևեկին և սպառնալից ելույթներին ի տես, դրուզ վերնախավը փութացել էր անմիջական կապի մեջ մտնել Ուադի աթ-Թայմի ու Հաուրանի դավանակիցների հետ, ուքքալների միջոցով ուժեղացրել քարոզությունն իր համայնքի գյուղացիության շրջանում՝ կոչ անելով այլահավատների նկատմամբ անխնա լինել, կազմել ռազմական ծրագրեր, օսմանցիներից և անգլիացիներից ձեռք բերել զենքի լրացուցիչ պաշարներ ու նույնիսկ Սայդայի շրջանում ծովափը խիստ հսկողության ներքո վերցնել՝ քրիստոնյաներին զենքի հայթայթումները խափանելու նպատակով (48, *115*։ 200, *106*։ 133, *11*)։

Ավելին։ Կուլիսների ետին տեղի ունեցող անցուդարձերին քաջատեղյակ բրիտանական ռեզիդենտը վկայել է. «Դրուզ մի քանի շեյխեր իրենց համար անսովոր բան արեցին։ *1859—1860*-ի ձմեռը նրանք անցկացրեցին Բեյրութում։ Այստեղ նրանք համարյա ամեն օր թուրքական իշխանությունների հետ վարեցին մասնավոր ու երկարատև խորհրդակցություններ... (որոնց) նպատակը ոչ ոքի մոտ կասկած չէր հարուցում։ Եվ թեկուզ վիճաբանությունների մանրամասները անհայտ մնացին, այնուամենայնիվ սպրդեցին լուրեր, որ դրուզներին հանձնարարված է նախապատրաստվել խիստ պատասխանատու ու կարևոր առաջադրան-

բի կատարման և որ նրանք սուլթանին բացարձակ նվիրվածություն երաշխավորելով հանդերձ համարձակվել են առարկել, որ առանց Պոլսի հրամանի և հստակ ու որոշակի կարգադրությունների չեն կարող այդպիսի պատասխանատու առաջադրանք ստանձնել։ 1860-ի գարնանասկզբին դրուզները տուն վերադարձան։ Ապրիլին Խուրշիդ փաշան Պոլսից ստացավ մի հաղորդում, որ ըստ երևույթին վերջ տվեց տհաճ անորոշության։ Նրա ելույթները դարձան ավելի հաստատ ու ինքնավստահ։ Կառավարող շրջաններում զրույց տարածվեց, որ մայրաքաղաքից եկել է մի հրովարտակ, որ շուտով կարգի կհրավիրի անհավատներին» (80, 138)։

Ջերչիլը, դրուզ-թուրքական բանակցությունների վերաբերյալ հաղորդմամբ շեշտը օսմանցիների մեղսակցության վրա դնելով, բնականաբար վարագույրի ետին պիտի պահեր անգլիական գործակալներին, այդ թվում նախ և առաջ հենց իրեն՝ անգլիական զենքերի գլխավոր հայթայթչին ու Ջահլիի վրա հետագա գրոհի ծրագիրը մշակողին (165, 46։ 115, հտ. 1, 174), ապա և հյուպատոս Մուրին, որ կանոնավորաբար նամակագրական և հետախույզ Մեշալուպի միջոցով անմիջական կապ էր պահպանում դրուզ շեյխերի հետ (99, 20 և 50)։ Ի դեպ, հենց Մուրի խորհրդով է, որ դրուզական կայմակամության փաստական ղեկավար և միջհամայնքային դինաբախումներում դարաղիականների գլխավոր հրամանատար Սաիդ Ջումբլաթը մինչև վերջ ետին պլանում էր մնալու, առաջ մղելով հատկապես Իմադ, նաև Աբդ ալ-Մալիք, Թալհուք և մյուս շեյխերին (4, գ. 1308, թ. 47)։

Հենց իր՝ Մուրի հաղորդմամբ էլ 1860-ի մարտի երկրորդ տասնօրյակից փոխհարձակումներն ու սպանությունները արդեն ամենօրյա երևույթ էին դարձել (181, հտ. 6, 68)։ Հ. Ջեսուպը այդ հաղորդումն այսպես էր մանրամասնում. «Բռնությունների և սպանությունների վերաբերյալ բաղում հաղորդումներ են հասնում։ Երկու քրիստոնյաներ սպանվել են Սայդայի շրջանի Աուալիի կամուրջի մոտ, չորս դրուզներ՝ Դամասկոսի ճանապարհի Մդեյրիջի հատվածում, երեք քրիստոնյաներ՝ Ջիսր ալ-Կադրիում, երկու մահմեդականներ՝ Նահր ալ-Քելբից հյուսիս Ջունիում։ Դեյր ալ-Կամար ալյուր փոխադրող ջորեպանները Բեյրութի մոտ վայր են դրվել։ Ճանապարհների վրա երթևեկելը վտանգավոր է դարձել» (115, հտ. 1, 167)։ Ապրիլի 19-ին ռուսական հյուպատոս Բեգերն իր հերթին զգուշացնում էր, որ հունձքի ավարտից անմիջապես հետո դինաբախումներն անխուսափելիորեն սկսելու են (4, գ. 1308, թ. 1)։

Մայիսի 14-ին, երեք քրիստոնյաների սպանության կապակցությամբ ջեզրինցի մարոնականների և շուֆցի դրուզների միջև առաջին լուրջ զինաբախումը տեղի ունեցավ։ Թուրքական իշխանությունները, դրուզ կայմակամն ու Ջեզրինի մանրիշխան Ս. Ջումբլաթը, անկասկած մետաքսաբոժոժի հավաքի անավարտ լինելու տնտեսական նկատառումից ելնելով, փորձեցին վեճը ժամանակավորապես հարթել, սակայն ջեզրինյան ջուհալիների գլխավոր շեյխ Աբու Սամրան մերժեց բանակցել։ Նրա կարգադրությամբ քրիստոնյաները դադարեցրեցին դաշտային աշխատանքները և սկսեցին զինական հավաքներ գումարել (4, գ. 1308, թ. 219)։ Եվ քանի որ Դեյր ալ-Կամարը, որի վերքերը դեռ լրիվ չէին սպիացել, անդգա էր մնում շրջապատի եռուզեռի նկատմամբ, մայիսի 20-ին և հաջորդ օրերին Առնը սպառնալի նամակներով քաղաքաբնակներին կոչ արեց մարտի նախապատրաստվել (89, 136—138)։

Մայիսի 26-ին Բեյրութի դարպասների մոտ Ա. Տրապուլսիի ղեկավարությամբ դրուզ-մարոնական տեղական բնույթի մի կռիվ կրքերն էլ ավելի բորբոքեց և խուճապ առաջ բերեց։ Իմադ շեյխերի մանրահատված Արքուբի շուրջ երեք հազար քրիստոնյաներ լքեցին իրենց բնակավայրերը և ճանապարհին, Մուխթարայի շրջանում, դրուզների հարձակման ենթարկվելով ու զոհեր տալով, ապաստանեցին Զահլե։ Ղաբբում, այդ թվում գերակշռաբար քրիստոնեաբնակ Աբեյհում, միաժամանակ ոչ մի քրիստոնյա չմնաց (115, հտ. 1, 168—170), թեպետ հետագա հավաստիքներից հետո կյանքը վերստացավ իր բնականոն հունը։ Ի դեպ, ավելի ուշ ոչ միայն Թալհուքներին, այլև Աբդ ալ-Մալիքներին հաջողվեց Ղաբբից հետո նաև Ջուրդի քրիստոնյաներին համոզել, որ իրենց բնակավայրերում մնան և միջհամայնքային բախումների հետ չառնչվելով, շարունակեն իրենց խաղաղ առօրյան։

Մայիսի 27-ին շուրջ երեք հազար զահլեցի հեծյալներ աննախընթաց ոգևորությամբ Լեո բարձրացան և Արքուբի հյուսիսային ծայրամասում, Այն Դարայում հարձակում գործեցին դրուզական զորակենտրոնի վրա։ Խաթթար Իմադի հրամանատարությամբ 600 դրուզներ դեմ հանդիման դուրս եկան, բիկաացի հակառակորդներին պարտության մատնեցին, ապա ներխուժեցին Մեթն և հրկիզեցին քրիստոնեական բազմաթիվ գյուղեր (89, 135)։

Նույն օրն իսկ, առանց Այն Դարայի պարտության մասին իմանալու և Առնից՝ խոստացված հիսուն հազարանոց կամավորական բանակի եկուլթը շտապեցնելու կարգադրություն ստացած (4, գ. 1308, թ. 13), Շահինը Ռեյֆունից հինգ հարյուրանոց մի գնդով իջավ ծովափ և առաջ-

խաղալով հասավ Անթիլիաս։ Մայիսի 28-ին, ճամբարելով տեղի այգիներում, Շահինը երեք հարյուր կամավորների մի ջոկատ ուղարկեց Հաղեթ և Բաաբդա, որպեսզի Շիհաբ ամիրները կարողանան դիմագրավել ամեն մի սպառնալիք։ Խուրշիդ փաշան, որ, թո՛ղ հարավային մանրահատվածներում քրիստոնյաներին առանց օժանդակության թողնելու իր ցանկությունը, չէր կարող բարյացակամ լինել քեսրուանյան ապստամբապետի կողմից զինական գործողություններին որևէ մասնակցության նկատմամբ, ընդամենը 250 զինվոր թողնելով Բեյրութում, 500 ասկյարներով և 200 բաշիբոզուկներով շտապեց Հաղմիա և Շիհաբներից պահանջեց ետ ուղարկել շահինականներին, որոնք, իբր, «կտրել են իր հաղորդակցման գծերը» (48, էջ 66)։ Շիհաբները ենթարկվեցին փաշայի կարգադրության, մանավանդ, որ վերջին հաշվով քեսրուանյան աշխարհազորի խայտաբղետ ջոկատը բավական չէր իրենց անվտանգությունն ապահովելու։ Շահինականները վերադարձի ճանապարհին ենթարկվեցին փաշայի հրանոթների կրակոցին և անկազմակերպ նահանջով գլխավոր վերելի հետ անցան Մեթն և այնտեղից, հիմնական մասով, Քեսրուան։

Մայիսի 30-ին, Խուրշիդ փաշայից համապատասխան ազդանշան ստացած, դրուզները Թալհուքների և Աբու Նակիտների գլխավորությամբ ու թուրք բաշիբոզուկների աջակցությամբ գրոհեցին Բաաբդայի, Հաղեթի և շրջանի մյուս բնակավայրերի վրա, շտապեցին քրիստոնեական վեց հարյուրանոց աշխարհազոր, թալանեցին ու հրկիզեցին գյուղերը, սպանեցին բնակիչներին, որոնցից կենդանի մնացածներն ապաստանեցին Բեյրութ (48, 67—68)։ Դրուզները Բաաբդայում մորթոտեցին Շիհաբ տոհմի մի քանի ներկայացուցիչների, այդ թվում ութսունհինգամյա և տեսողությունից զրկված նախկին իշխանապետ Բեշիր III-ին (48, 58)։

Բեյրութում ապաստան գտած ավելի քան քսան հազար անօթևան ու սովահար գաղթականները քաղաքում բառիս բուն իմաստով խուճապ առաջ բերեցին։ Առևտրական գործարքներն ընդհատվեցին և ունևորներն սկսեցին ծովով փախչել դեպի Կիպրոս, Եգիպտոս, Պոլիս և Եվրոպա։ Տակավին մայիսի 20-ին բուրժուազիայի ներկայացուցիչները հյուպատոսներին խնդրագիր էին մատուցել, աղերսելով օգնել քաղաքը պաշտպանելու (148, 48)։ Տերությունների ներկայացուցիչները, որոնք ապրիլ ամսին Խուրշիդ փաշայից առանց այդ էլ պահանջել էին խաղաղեցման միջոցների դիմել, բավարարվել էին այն խոստմամբ, որ «կարգը խանգարողների դեմ» միջոցներ են ձեռք առնվելու (4, գ. 1308, թ. 5)։ Հյուպատոսները հունիսի 1-ին Հաղմիայում հանդիպում ունեցան փաշայի հետ, հավաքական հուշագրով բողոքեցին նրա կրավորականության դեմ

և մի անգամ ևս պահանջեցին անհապաղ վերջ տալ զինաբախումներին։ Իր պատասխանում փաշան, որպես կոիվների դրդապատճառ Բեյրութի ծանոթ կազմակերպությունը մատնանշելով և սպառնալով նրա ղեկավար անդամներին ձերբակալել, իր հերթին հյուպատոսներից խնդրեց կարելին անել և քաղաքի թե կենտրոնական ու հյուսիսային մասերահատվածների մարոնականներին ետ պահել իրենց դավանակիցներին օգնելուց, խոստանալով այդ դեպքում միայն դրուզներին զինադուլ պարտադրել (114, հտ. 4, 332։ 80, 147)։

Փաշայի հետ պայմանավորվածության հիմամբ հյուպատոս Բենտիվոլիոն փորձեց ազդել մարոնականների վրա, սակայն վերջիններիս համար զինադուլի հարց փաստորեն գոյություն չուներ, քանի որ մի կողմից ռազմական գործողությունների նախաձեռնությունն արդեն դրուզական կողմում էր, մյուս կողմից էլ կենտրոնական ու հյուսիսային լեռնահատվածների անտարակելի կրավորականությունը հենց թուրքական իշխանությունների ակնկալածն էր։ Նշենք, որ ռուսական հյուպատոսի հաղորդմամբ տերությունների ներկայացուցիչների միաբան ու համերաշխ դիմումը տվյալ պահին այնքան էլ լուրջ չէր, հետևաբար որևէ լուրջ արդյունքի չէր կարող հանգեցնել, քանի որ Անգլիայի հյուպատոս ու դիվանագիտական կորպուսի ավագ Մուրը «համակրանք էր տածում դրուզների նկատմամբ և նրանց վերցրել էր իր պաշտպանության ներքո» (4, գ. 1308, թթ. 13—18)։ Մուրը, որ իր պաշտոնակից Բեգերի համոզմամբ դրուզների վրա ներգործելու և նրանց բռնամիջոցներից ետ պահելու ընդունակ սակավաթիվ մարդկանցից մեկն էր (4, գ. 42, թ. 153), իր անտարբերությունը հիմնավորում էր «Թուրքիայի ներքին գործերին չմիջամտելու» վերաբերյալ իրեն իր ստացած ինչ-որ կարգադրությամբ (115, հտ. 1, 181)։

Հունիսի 1-ին, դարձյալ, Ջումբլաթ, Իմադ և Աբու Նակիտ շեյխերից ղեկավարվող դրուզները հարձակման անցան նախօրյակից շրջափակման ենթարկված Դեյր ալ-Կամարի վրա, որ հարձակվողներին ղգալի կորուստներ պատճառելուց հետո ամսի 3-ին անձնատուր եղավ, զինաթափվեց ու թեպետ միառժամանակ խնայվեց, սակայն բազում ձևերով ստորացվեց (204, 67)։ Հունիսի 1-ին, վերջապես, սունիի և շիի մահմեդականները Սայդայում կոտորեցին մի քանի հարյուր քրիստոնյաների, որոնց բեկորները փրկվեցին ոչ միայն շրջակա գյուղերի աշխարհազորային զորաջոկատների, այլև ռուսական («Իլյա Մուրոմեց»), ֆրանսիական և անգլիական ռազմանավերի միջամտությամբ (116, 15)։ Հունիսի 2-ին Շուֆից ներխուժած երկու հազար դրուզներ ուխտադրը-

ժորեն կոտորեցին նախորդ օր Ս. Ջումբլաթիից տրված անվտանգության երաշխիքից խաբված ջեզվինցի ավելի քան 1500 մարոնականների, այդ թվում կանանց ու երեխաների։ Շրջանի բոլոր վանքերն անխտիր թալանվեցին ու հրկիզվեցին, իսկ վանականները՝ խողխողվեցին։

Շուտով արյունալի դեպքերը տեղափոխվեցին Ուադի աթ-Թայմ։ Հունիսի 3-ին, Ս. Ջումբլաթի քույր Նաֆիսայի՝ Սաադ ադ-Դին Շիհաբ ամիրից մանրիշխանությունը բռնախլելու հետամտող շեյխ Ամին Շամսի կնոջ և հաուրանցի Իսմայիլ ալ-Աթրաշի մի քանի հազար դրուզներ հարձակվեցին Հասբայայի վրա։ Քրիստոնյաներն ապաստան փնտրեցին կորանոցում։ Կայազորի հրամանատար Օսման բեյից անվտանգության գրավոր երաշխիք ստանալով, նրանք հաջորդ օր հանձնեցին իրենց զենքերը։ Բեյը հունիսի 11-ին ուխտադրժորեն քրիստոնյաներին հանձնեց դրուզների յաթաղանին։ Գլխատվեց նաև ամիր Սաադ ադ-Դինը, որի գլուխը որպես ավար ուղարկվեց Ս. Ջումբլաթին։ Հունիսի 4-ին 1500 դրուզների հարձակման ենթարկված Ռաշայայի քրիստոնյաները թեպետ մի ամբողջ օր պաշտպանվեցին, սակայն զինամթերքի սպառումից հետո հարկադրվեցին նույնպես ապաստանել միջնաբերդ։ Այստեղ ևս թուրքերի ուխտադրժությամբ ու մասնակցությամբ դրուզները հունիսի 11-ին կազմակերպեցին կոտորած, որից ոչ մի քրիստոնյա և ոչ մի Շիհաբ ամիր չփրկվեց (48, 80—83։ 80, 162—164։ 116, 31)։

Ուադի աթ-Թայմը լրիվ մոխրակույտի վերածած, դրուզական զորաջոկատները, որոնք քուրդ և բաղաուի հրոսակների հետ 15 հազարանոց բանակի էին վերածվել, հունիսի 10-ից պաշարեցին Զահլեն, որի տասը հազար քրիստոնյա ազգաբնակչության միացել էին նույնքան թվով գաղթականներ։ Տեսնելով, որ հակառակ պատրիարքի և հյուպատոսների կողմից Խուրշիդ փաշայի մոտ հնչեցված ահազանգերին և շրջանի թուրքական յոթ հազարանոց կայազորի ներկայության քաղաքին վտանգ է սպառնում, զահլեցիները երկու անգամ փորձեցին Բիկաայի հովտում դաս տալ ջարդարարներին, սակայն պարտություն կրեցին։ Հունիսի 18-ին դրուզները, զահլեցիների հերոսական ինքնապաշտպանության հակառակ, ի վերջո կարողացան նենգությամբ թափանցել քաղաք, սակայն բնակչության հիմնական մասին հաջողվեց ճանապարհ հարթել դեպի Մեթն։ Դրուզներն ու նրանց դաշնակիցները թալանեցին և ավերեցին քաղաքը, հատկապես արհեստանոցները, արդյունագործարանները, առևտրական հիմնարկությունները, բնակելի տները։ Որոշ թվով զահլեցիների հետ խողխողվեցին նաև ֆրանսիահպատակներ, մինչ անգլիահպատակների կյանքն ու ինչքը խնայվեցին (132, 66։ 115, հտ. 1, 174)։

Հունիսի 20-ին Բիկաայի հետ հաշիվները մաքրած, ջարդարարները բարձրացան Լիբանան լեռ և տեղի դրուզների ու կայազորի երկու հազար ասկյարների հետ ձեռք-ձեռքի կոտորեցին դեյր ալ-կամարցի ավելի քան երկու հազար քրիստոնյաների, այդ թվում ֆրանսիահպատակների, ավերեցին քաղաքի առևտրաարհեստավորական կենտրոնն ու բնակելի տները (148, 45։ 116, 229)։ Բեյրութի կայազորի հրամանատար Թահիր փաշան, որ Դեյր ալ-Կամար էր շտապել իբր աղետը կանխելու նպատակով, ռուսական հյուպատոսի իսկ վկայությամբ պարզապես հոգ տարավ, որ դրուզներն իրենց ավարը վերցրած անպատիժ հեռանան՝ վերջին րոպեին հրոճարակ դարձնելով կանդուն մնացած հարյուրից ավելի տներ (4, գ. 1308, թ. 56)։

1860-ի միջհամայնքային դինաբախումներից առանձնապես տուժեցին Շուֆի, Շահհարի, Ջեզզինի և Մեթնի մանրահատվածները, Ուադի ատ-Թայմն ու Բիկաան։ Դեյր ալ-Կամար և Զահլե քաղաքներ, Բաաբդա և այլ ավաններ, ինչպես նաև 360 գյուղեր ավերվեցին ու թալանվեցին։ Քարուքանդ արվեցին 560 եկեղեցիներ, 42 վանքեր և 28 ուսումնական հաստատություններ (132, 88 և 114։ 165, 54)։ Խիստ տուժեց հարավային, մասամբ և կենտրոնական մանրահատվածների գյուղացիությունը, որ կորցրեց հունձքը, բնակելի տները, այգիները, անասունները, տնային և տնտեսական բոլոր իրերը։

Քրիստոնյա համայնքներին հասցված շուրջ 200 միլիոն ֆրանկի նյութական վնասից ավելի տպավորիչ էր մարդկային զոհերի թվաքանակը. 6731 սպանված, երեք հազար առևանգված կանայք, յոթանասուն հազար անօթևան գաղթական։ Ի դեպ, դրուզները կորցրել էին ընդամենը հազար երեք հարյուր մարդ (157, 145—146)։

Հունիսի 7-ին տերությունների Պոլսի դեսպանների կողմից օսմանյան իշխանությունների անտարբերության նկատմամբ հայտնված բողոքին մեծ վեզիրը պատասխանեց, որ դեռ անհրաժեշտ հաղորդումներ չի ստացել Բեյրութից (114, հտ. 4, 342), իսկ երբ ճշմարտությունն այլևս անթաքցելի էր դարձել, Բ. Դուռը Լևանտ ուղարկեց մի ռազմանավ և երկու գունդ, սակայն նրանց ճանապարհեց միայն հունիսի 19-ին, որպեսզի տեղ հասնեն այն ժամանակ, երբ ամեն ինչ ավարտված լինի։

Հունիսի 6-ին Բեյրութի հյուպատոսները անհատաբար մի անգամ ևս, իսկ ամսի 19-ին հավաքական հուշագրերով իրենց հերթին խուրշիդ փաշայից պահանջեցին շտապ միջոցառումների դիմել և արյունահեղությունը դադարեցնել (181, հտ. 6, 76)։ Հունիսի 27-ին նրանք նույնիսկ հարկադրվեցին միսիոնների սքեմի ներքո գործող անգլիական հետախույզ

Գրեհեմի միջոցով նամակ ուղարկել Ս. Ջումբլաթին և դրուզ մյուս շեյխերին, խորհուրդ տալով դադարեցնել հակաքրիստոնեական բռնամիջոցները։ Հունիսի 29-ին հյուպատոս Մուրին ներկայացված իր հաշվետվության մեջ Գրեհեմը հաղորդեց, որ շեյխերի հավաքը ներկայումս անհնարին է, իսկ Ջումբլաթների տոհմապետը չի կարողացել խաղաղության խոստում տալ, քանի որ դրուզները թեպետ «Անգլիայի թագուհու ստրուկներն են», սակայն «ժողովրդի վրա ինք իշխանություն չունի» (99, 28)։ Ավելի ուշ Բեյրութ ուղարկված իրենց գրավոր պատասխանում շեյխերը պնդում էին, որ մարոնականներն են սկսել զինաբախումները և անհնարին էին հայտարարում միջհամայնքային թշնամության վերացումն այնքան ժամանակ, քանի դեռ քրիստոնյաները կցանկանան իրենց ունեցվածքներին տիրանալ (181, հտ. 6, 80)։

Եվ սակայն արևմտաեվրոպական, առաջին հերթին ֆրանսիական հասարակական կարծիքը ավելի ու ավելի համառորեն պահանջում էր ամեն գնով, ի հարկին զինված միջամտությամբ դադարեցնել հետագա արյունահեղությունը։ Դա չէր կարող չանհանգստացնել անգլիական դիվանագետներին և հատկապես Բ. Դոան պաշտոնատարներին։ Պոլսի կարգադրությամբ՝ Բեյրութի թուրքական իշխանությունները հարկադրվեցին ազդու միջոցներ ձեռք առնել։ Խուրշիդ փաշայի միջնորդությամբ և ճնշմամբ հուլիսի 6-ին հակամարտ կողմերի միջև վերջապես կնքվեց զինադադար, որով քրիստոնյաները հրաժարվում էին հանցապարտների նկատմամբ պատիժ և իրենց վնասների համար հատուցում պահանջելուց։ Ավելին, նրանք համաձայնում էին դրուզ ֆեոդալ-աղնվականության բոլոր իրավունքների և առանձնաշնորհների պահպանման (181, հտ. 6, 84։ 180, 149)։ Զինաբախումների գլխավոր մեղավոր էր հայտարարվում երկու կայմակամների վարչակառավարման թուլությունը, հետևաբար ամբողջ իշխանությունն էլ փոխանցվում էր Խուրշիդին։ Սալիբին իրավամբ այսպես է գնահատել զինադադարի պայմանագիրը. «Ակնհայտորեն ամրապնդվեց դրուզների հաղթանակը, իսկ թուրքերին հնարավորություն ընձեռվեց երկրամասի վրա ավելի զգալի վերահսկողություն հաստատել» (37, 172)։

Թվում էր, թե լիբանանյան մի անգամ ևս բորբոքած տագնապը, թեկուզ ի վնաս քրիստոնյաների, ընդհանուր առմամբ լուծված է։ Մնում էր միայն Քեսրուանի ժողովրդական իշխանության հարցը, որի հանգուցալուծումը չափազանց հեշտացել էր, քանի որ կենտրոնական լեռնահատվածի «Հանրապետությունը», միջհամայնքային զինաբախումներում իր դիրքորոշմամբ փաստորեն իրեն վարկաբեկել էր։ Մյուս կող-

մից քառասուն հազար գաղթականների հեղեղը ոչ միայն ծանր ու դրժվարլուծելի տնտեսական խնդիրներ էր առաջադրում Շահինին ու նրա գործակիցներին, այլև անկասկած զանգվածներին մղում խորը մտորելու և աղետի պատճառները որոնելու նաև տեղի ղեկավարների կրավորականության մեջ։

Բոլոր դեպքերում հետագա անցուդարձերի վերաբերյալ սկզբնաղբյուրներում տվյալները սակավ են, հետևաբար և հնարավորություն չկա անցուդարձերի ամբողջական ու հավաստի պատկերն ուրվագծելու։ Փաստ է մի բան. ժողովրդային հակաֆեոդալական ապստամբությունը Քեսրուանում ոչ միայն չխորացվեց, այլև նահանջ ապրեց և իր դիրքերը հետզհետե զիջեց։ 1860-ի հուլիսի 29-ին 83 վեքիլներ Շահինի գլխավորությամբ ստորագրեցին «Լիբանանի գյուղերի հայտարարությունը»։ Դա պարզապես կապիտուլացման ակտ էր, որով շահինականները համաձայնում էին խաղին շեյխերի վերադարձին և նրանց ֆեոդալ-կալվածատիրական բոլոր իրավունքների վերականգնման (200, 214—216)։

«Հայտարարությամբ» շրջանի վարչակառավարման հարցը, ճիշտ է, անլույծ էր մնում, Շահինը շարունակում էր գլխավոր վեքիլի պաշտոնը վարել, սակայն, ինչպես կտեսնենք, ժողովրդական իշխանության ղեկավարը շուտով խճճվելու էր բարդ, առավել ևս իր համար բարդ քաղաքական-դիվանագիտական հանգույցների մեջ և պատճառ էր դառնալու, որ Քեսրուանում բարձրացած փոթորիկը անվաղորդայն մնար, մանրահատվածը վերընկներ իր ավատատիրական ավանդական հունի մեջ, աշխատավոր գյուղացիությունն իր տարրական նվաճումներից ոչինչ չպահպաներ և միաժամանակ ձեականորեն ստացածի համար էլ սկսեր չափազանց ծանր հատուցել։

Այստեղ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ 1860-ի միջհամայնքային զինաբախումներում թվականորեն գերակշիռ քրիստոնյա լեռնականների ջախջախիչ պարտության պատճառների հարցին։

Ինչ խոսք, որ պատմագրության էջերում առավել կամ նվազ չափով ընդգծված է մի կարևոր ազդակ. դա դրուզներին ու նրանց զինակցած հրոսակներին օսմանյան իշխանությունների, նաև Մեծն Բրիտանիայի կողմից հասցված ռազմաքաղաքական գործուն ու շոշափելի աջակցությունն էր (122, 55։ 190, 16), որին ի հակակշիռ կաթոլիկ Եվրոպայից, առաջին հերթին Ֆրանսիայից տվյալ պահին մարոնականներին հիմնականում կարեկցանք և ոգևորություն կարող էր հասցվել։

Պատմագրության էջերում չեն մոռացված և բազմիցս միմյանց զուգորդվելով շեշտված են, նաև, այլ ազդակներ. նախ և առաջ՝ մի կող-

մից մահմեդական ճակատի կուռ համախմբվածությունը և դրուզների կարգապահությունը ու մյուս կողմից քրիստոնեական ճամբարի անկազմակերպությունը և նրա բաղադրատարրերի ինքնագլխությունը, ապա նաև՝ մի կողմից դարաղիական ֆեոդալ-աղնվականության համայնքային թե դասային առաջադրանքների որոշակիությունը և գաղտնորեն ծրագրվող ու անակնկալորեն կիրառվող գործողությունների նպատակասլացությունն ու մյուս կողմից մարոնական երկպառակված ու գզվռտող երևելիների հաշվենկատ անվճռականությունը և բացբերանությամբ նախօրոք շնփորվող միջոցառումների ապիկարորեն գործադրումը (33. 97—98։ 37, 157)։

Եվ սակայն պատմագրության կողմից ցարդ աչքաթող է արված հարավային լեռնահատվածում քրիստոնեական ճամբարի պարտության կարևորագույն պատճառներից մեկը՝ կենտրոնական ու հյուսիսային լեռնահատվածների քրիստոնյա, հիմնականում մարոնական ազգաբնակչության կրավորականությունը հարավի դավանակից-բախտակիցներին օգնություն փութացնելու հարցում։

Կենտրոնական, այն է՝ քեսրուանյան լեռնահատվածում, խաղին մեծ շեյխական տոհմի իշխանաղոկման և Հոբեյշ ու Դահդահ տոհմերի հարաբերական մթագնման պայմաններում ազգաբնակչության կրավորականության ակունքը պիտի որոնել տվյալ պահին մենիշխան շահինյան «Հանրապետական» ղեկավարների ոչ միայն հարավի քրիստոնյաներին հասցեագրված ոգևորիչ խոստումների անկրջության, այլև անվճռական ընթացքի մեջ։ Այդ ընթացքն իր ամբողջ մերկությամբ բացահայտվեց հատկապես Զահլեի հերոսական ինքնապաշտպանության օրերին։

Դեռ այն ժամանակ, երբ Ուադի աթ-Թայմի քրիստոնյաների հետ իր հաշիվները մաքրած և քուրդ ու բաղաուի հրոսակներով զորացած դրուզները Բիկաան ամայացնելով շարժվում էին դեպի Զահլե, քաղաքի ղեկավարությունը օգնության խնդրանքով դիմեց Շահինին։ Վերջինս, Բաաբդայի շրջանից համարյա առանց կրակոցի խուճապահար վերադառնալուց հետո, ըստ երևույթին մոռացել էր աջ ու ձախ արձակված իր կոչերը՝ «եթե զինված ջոկատների կարիքն զգաք, ապա հայտնեցեք ինձ ու ես կուղարկեմ», մատը մատին չխփեց և փաստորեն Քեսրուանի ամբողջ զինական ուժն էլ անգործության դատապարտեց։ Ավելին, ինչպես ընդգծել է Սալիբին, «նրա վարանքը շնպաստեց այն բանին, որ... ավելի նվազ կարևոր առաջնորդներ այլ կերպ վարվեն» (37, 167)։ Պատմաբանն այստեղ նկատի ունի Մեթնի գլխավոր շեյխ աշ-Շերեբ աշ-Շանթիրին, որի հրամանատարության ներքո գտնվում էր նաև քեսրուանյան

մի գունդ։ Այս կապակցությամբ ֆրանսիացի մի դիտորդ, հասկանալի է՝ խիստ ընդգծված թշնամանքով, Շահինի հասցեին գրել է. «Երբ վտանգի ժամը հնչեց, երբ հարկ էր ոչ միայն որպես բռնակալ օգտվել հնդափոխական իշխանությունից, երբ (հարավի) մարոնական աշխարհազորայինները կարիքն ունեցան իրենց թշնամու դեմ առաջնորդող մի զեկավարի, ...(նա) իր մեջ ուժ չգտավ դիմագրավելու տվյալ պահի պահանջը և հարկադրվեց (զինվորական) իշխանությունը լքել իրենից ուժեղներին» (85, 102)։

Շահինից «ուժեղների» տիպարը, երևի, Յուսուֆ Քարամն էր, որի անհամեմատ ավելի տխուր, ուղղակի դավաճանական դերը, ֆրանսիամոլ-կաթոլիկ հեղինակների ջանքերով, պատմագրության էջերում աչքաթող է արված։

Զահլեն օգնություն էր խնդրել նաև Քարամից, որ հյուսիսային մանրահատվածներում կազմավորված և քեսրուանյան աշխարհազորով զորացած իր գունդը, իր իսկ բառերով ասած՝ դրել էր «պատրիարք հոր տրամադրության ներքո»։ Ֆրանսիական աղբյուրները միտումնավոր կերպով այդ գունդը փոքրացրել են և սկզբնական շրջանում հասցրել... երեք հարյուր մարդու (85, 107)։ Անգլիական դիվանագիտական տեղեկագրերի համաձայն նա ուներ հազար (148, էջ 11), իսկ ըստ ալ-Ակիկիի՝ մինչև չորս հազար կամավոր (222, 61)։ Ա. Կրիմսկին նրա աշխարհազորայինների թիվը, մեջ անծանոթ աղբյուրների հիմամբ, հաշվել է մինչև վեց հազար (26, 513)։ Բոլոր դեպքերում Քարամը խոստացավ շտապ օգնություն հասնել և շարժվեց մինչև Բիկֆայա, որտեղ աշ-Շանթիրին պատրաստակամություն հայտնեց միանալ իրեն։ Սակայն Քարամը ոչ մի քայլ առաջ չգնաց և միառժամանակ Մեթնում մնալուց հետո, վերադարձավ հյուսիս։

Շահինից և հատկապես Քարամից հասանելիք օժանդակությունն անկասկածելի համարելով հունիսի 14-ին և 15-ին Բիկաայում հակառակորդին բաց մարտ տված և պարտություն կրելուց հետո քաղաքի ներսում ինքնապաշտպանության անցած զահլեցիների տանջալի սպասումը այսպես է նկարագրել հայազգի ժամանակագիր Ի. Աբգարիոսը. «Երբ Զահլեի բնակիչները տեսան, որ թշնամիները գրոհում են իրենց վրա..., նրանք քաղաքի երևելիներից երեք հոգու ուղարկեցին Յուսուֆ Քարամի մոտ, խնդրելով, որ օգնության հասնի, քանի որ ուրիշ ոչ մի տեղից օգնություն ստանալու հույս չունեին։ Եվ նա խոստացավ գալ հաջորդ՝ կիրակի օրը։ Հաջորդ օր մի խումբ մարդիկ (քաղաքից) դուրս եկան նրան ճանապարհին դիմավորելու...։ Քաղաքացիներն իրենց հոտից

անասուն մորթեցին, ճաշեր պատրաստեցին նրա և իր զորքի համար և սկսեցին անհամբեր սպասել։ Իսկ երբ նշանակված ժամն անցավ և նա չերևաց, նրանց անհանգստությունն ու հուզմունքը մեծացան և նրանք նորից մարդ ուղարկեցին, բացատրելու համար, թե ինչպիսի վտանգ է իրենց սպառնում... Նա ուշացման համար ներողություն խնդրեց և խոստացավ օգնական ուժերով ու դաշնակիցներով ժամանել հաջորդ օր։ Դա քրիստոնյաներին ուրախացրեց և նրանց անհանգստությունը մեղմացավ...։ Սակայն հաջորդ օր, երկուշաբթի, հունիսի 18-ին, դրուզները նրանց բոլոր կողմերից շրջապատեցին։ Դրուզների առաջ քարացած սրրտով քրիստոնյաներ էին և մարդիկ իրար վրա խոյացան։ Եվ նրանց միջև կատաղի գոտեմարտ մղվեց...։ Մարտը չորս ժամ տևեց...։ Իսկ Զահլեի բնակիչները դեռ շարունակում էին սպասել Յուսուֆ Քարամի ժամանման։ Դրա համար էլ նրանք պաշտպանությամբ չապահովեցին այն կողմը, որտեղից Քարամը պետք է իր զորքով ժամաներ։ Այդ մասին իմացավ շեյխ Խաթթար Իմադը և իր ամենախիզախ մարդկանցից մի ջոկատ կազմելով կարգադրեց իրենց առաջ քրիստոնեական զրոշներ պարզել...։ Երբ ջոկատն այդ ձևով մոտեցավ շամբապնդված կողմին, Զահլեի բնակիչները մտածեցին, որ Յուսուֆ Քարամն է մարդկանցով և զինամթերքով օգնության գալիս։ Դա նրանց հոգում օգնության հույս ծնեց և նրանք իրենց ուշադրությունը մյուս կողմի վրա կենտրոնացրին...։ Եվ մինչ նրանք այդ պատրանքով էին օրորվում, պատերազմն սկսվեց քաղաքի վերին մասում...։ Իրենց համար (փախչելով) ճանապարհ հարթող մարդկանց ճիչերը միախառնվեցին կրակոցների որոտին» (48, 95—97)։

Զահլեի համար վաստակն դրոյական ձիու դեր խաղացած Քարամին հյուսիսային լեռնահատվածին Տրիպոլիի կողմից սպառնացող որևէ վտանգ կանխելու հո՞գսն էր արդյոք մղում վերադառնալ հարազատ Իհդին։ Ո՛չ, երբեք։ Իհդինին ոչ մի վտանգ էլ չէր սպառնում ու նույնիսկ Յուսուֆի եղբայր Միշելը, որ Զղորթայում նստած իր ներքուժման էր սպասում, անձամբ ինք էր զինված ջոկատով բաղմիցս հայտնվում Տրիպոլիի պարիսպների առաջ և մարտահրավեր կարդալով նահանջում, որպեսզի թուրքերն ու սուննիները իր հետևից զինարշավի ելնեն։ Այդ մասին հաղորդող ֆրանսիացի ականատեսը, որ 1860-ի մայիս-հունիսին շրջում էր Լեռան վրա, ընդհանրապես հյուսիսի մարոնականների լրջության մասին այսպես է վկայել. «Ամեն մի դյուղում տեսնելով հարյուրավոր երիտասարդների, որոնք մեզ ընդառաջ էին վազում՝ հրացաններից օդում կրակելով, չէի կարող մոռանալ, որ այդ նույն պահին դա-

ման մի պատերազմ սպառնում էր իրենց շրջանին և որ բոլորն էլ, դաշտային աշխատանքներից ազատ լինելով, փոխանակ դատարկ ցույցերով զվարճանալու, ավելի լավ կանեին գնալ իրենց եռանդը թափելու և վառոդն օգտագործելու Ջահլեի կամ Դեյր ալ-Կամարի պարիսպների ներքո։ Անհեռատես ու թեթևամիտ, նրանք անգիտանում են իրենց պարտականությունները, որ ամեն մի ժողովրդի ներսում յուրաքանչյուրը պետք է իրեն պարտադրի՝ հանուն բոլորի բարօրության ապահովման» (85, 68)։

Հյուսիսային մանրահատվածների աշխարհազորայինների «անհեռատես ու թեթևամիտ» ընթացքը կարելի է բացատրել միայն ու միայն իրենց զարհրամանատարի ընթացքով։ Իսկ վերջինս, մեր կարծիքով, պարզապես թելադրված էր իր փարիզյան հովանավորներին երկյուղածությամբ ենթարկվելու պատրաստակամությունից։

Լիբանանցի պատմաբաններ Իսմայիլն ու Սալիբին ճշմարտության միայն կեսն են բացահայտել, պնդելով, որ Քարամը, պատրիարքարանի թեկուզությամբ, նկրտում էր մարոնական կայմակամի պաշտոնին, հետևաբար երկնչեց Մեթնից հարավ շարժվելով և քրիստոնեական ճամբարին աջակցելով Խուրշիդ փաշայի աչքում վարկաբեկվելուց (114, հտ. 4, 339։ 37, 167)։ Ճշմարտության մյուս կեսը թաքնված է Քարամի ինքնարդարացման փաստարկների ետին։ Այդ փաստարկներից առաջինն այն է, որ իբր Քեսրուանը դրուզական հավանական ներխուժման դեմ պաշտպանելու հոգսն է կապկպել Քարամի և իր աշխարհազորայինների ոտները։ Այս փաստարկում ճշմարտության հավանական հատիկը ֆեոդալ-աղնվական իր տերերի դեմ ապստամբած քեսրուանյան գյուղացիության և նրա առաջնորդ՝ Քարամի համար անակնկալ ախոյան Թ. Շահինի հետ հաշվեհարդար տեսնելու ցանկությունը կարող է լինել։ Փաստարկներից երկրորդը և մեզ համար պերճախոսը Քարամի այն պընդումն է, որ ինքը Մեթնից դեպի հարավ չշարժվելով հյուսիս է վերադարձել պարզապես անսալով ֆրանսիական հյուպատոս Բենտիվոլիոյի համապատասխան հրահանգին։

Ճիշտ է, ֆրանսիական պաշտոնական աղբյուրները հետագային կտրականապես հերքել են Քարամի պնդումը Բենտիվոլիոյի այդ հրահանգի վերաբերյալ (131, հտ. 1, էջ 393), այնուամենայնիվ փաստը մնում է փաստ, որ իրադրության սրմամբ, հետևաբար և քրիստոնեական ճամբարի պարտությամբ առաջին ու գլխավոր շահագրգռվածը, ինչքան էլ պարադոքսային թվա, Նապոլեոն III-ի կայսերական կառավարությունն էր։

Փարիզում, ինչպես իր ժամանակին սրատեսորեն նկատել է Կ. Մարքսը, հետամտում էին ոչ միայն Լեռան երբեմնի կարգերը վերականգնելու և ռազմական միջամտությամբ Սիրիան պարզապես գաղութացնելու նպատակին։ Ֆրանսիայի արտաքին և ներքին իրադրությունն ու կառավարող շրջանների նկատառումները վերլուծության ենթարկելով Մարքսը հաստատել է, որ կայսրը հարկադրված էր «որոնել մի որևէ նոր զգայացունց խաչակրական արշավ, որպեսզի իր կայսրությունը նորից քնեցնի ռազմաշունչ հալյուցինացիաներով», որ «գաղղիական ապստամբասեր ոգին վերստին վերածնվում է մոխիրներից և ուղուրպատորի տիրապետության շարունակումը նորից կախված է մեծ հանդիսության կազմակերպումից», որ կենսական անհրաժեշտություն է դարձել «ցընցող մի միջադեպ, սիրիական սպանություններով, որը պատրվակ դառնա ֆրանսիական միջամտության»։ Որպես եզրակացություն Մարքսը դիտել է տվել, որ հենց ֆրանսիական գործակալները ձգտեցին կազմակերպել «սիրիական ծովափում... քաղաքական-կրոնական տուրուզրմփոց» (3, հտ. 15, 102)։

Մարքսի դիտողությունների լույսի ներքո առանձնապես նշանակալից են դառնում ֆրանսիական հյուպատոս Էդմոնդ դը Լեսեպսի՝ կոմս Բենտիվոլիոյի իրեն հաջորդելու կապակցությամբ 1859-ի վերջերին արտասանած խոսքերը. «Վեց ամիս հետո Լիբանանը բոցերի և արյան մեջ կլինի։ Բենտիվոլիոն դրան նպաստելու է» (165, 36)։

Լիբանանյան հողատարածքի սրի ու հրի մատնվելուն նպաստող Բենտիվոլիոն, ահա, Յուսուֆ Քարամի իսկ վկայությամբ, հյուսիսային մանրահատվածների քրիստոնեական աշխարհազորը հարավին օգնության հասնելուց ետ-պահելով, փութացնում էր քրիստոնեական ճամբարի պարտությունը՝ դրանով իսկ փութացնելով Նապոլեոն III-ի կառավարության զինական միջամտության գործնականացումը։

Միջհամայնքային զինաբախումները դադարեցին։ Եվ մինչ Լեռը պատրաստվում էր իր վերքերը դարմանել, եվրոպական մայրաքաղաքները աննախընթաց աշխուժությամբ դիվանագիտական պայքարի էին ձեռնարկում՝ Արևելյան հարցի կենտրոնական խաղաքարերից մեկը դարձած լիբանանյան հարցը իրենց հաշակով ու շահերին համապատասխան տեղաշարժելու նպատակով։

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԼԻԲԱՆԱՆ ԼԵՌԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Միջհամայնքային հաշտության պայմանագրի ստորագրումից երեք օր անց, 1860-ի հուլիսի 9-ին, երբ բոլորին թվում էր, թե լիբանանյան տագնապը լուծված էր արդեն, Դամասկոսում հակաքրիստոնեական կոտորածների զոհ գնացին ավելի քան վեց հազար սիրիացիներ, մարոնականների հետ նաև այլ, այդ թվում հույն և հայ համայնքներին պատկանողներ (180, 175)։

Արյունալի այդ իրադարձություններին անդրադառնալն, անշուշտ, մեր նյութի շրջանակներից դուրս է։ Եվ սակայն անհրաժեշտ է ասել, որ սկզբնաղբյուրների տվյալներով տակավին մարտ ամսին, «Դամասկոսի քրիստոնյա համայնքը կործանելու ցանկությամբ տոգորված» (48, 128) մուշիր Ահմեդ փաշայի և Սայդայի մուշիր Խուրշիդ փաշայի լիազոր Ահմեդ էֆենդիի ղեկավարությամբ կոտորածների ծրագրի մշակման մասնակցել էին ոչ միայն քաղաքի մահմեդական արաբների առաջնորդները, այլև Սաիդ Ջումբլաթի մարդիկ։ Որպես նույնքան հավաստի փաստ պետք է արձանագրել նաև, որ կոտորածների առաջին օրվա երեկոյան քաղաք էր մտել և ջարդարարների աշխուժացման գործում իր լուման ներդրել դրուզ լեռնականների հարյուր հիսուն մարդուց բաղկացած մի ջոկատ (157, 392)։

Տասնօրյա խժդժությունների ընթացքում թուրք ասկյարների բացահայտ աջակցությամբ կործանվեցին կամ հրո ճարակ դարձան մի քանի հազար տներ, հարյուրավոր արհեստանոցներ ու վաճառատներ, բացի անգլիականից ու պրուսականից՝ բոլոր հյուպատոսարանները, շուրջ մի տասնյակ եկեղեցիներ, այդ թվում XVI դարում կառուցված հայկական սուրբ Սարգիսը և հարակից վանքը, կրթական հաստատություններ։ Թալանվեց հսկայական հարստություն։ Օսմանահպատակ քրիստոնյաների հետ զոհվեցին նաև հյուպատոսարանների աշխատողներ, արևմտաև-

ռոպացի, առաջին հերթին ֆրանսիացի առևտրականներ ու հոգևորականներ։

Փոթորիկը, որ դեռ հուլիսի սկզբներից բարձրացել էր արևմտաևրոպական, թեկուզ և որոշ արհեստական փուքսերով՝ հատկապես ֆրանսիական հասարակական կարծիքի շրջանում, համընկնելով Փարիզի ղեկն իրենց ձեռքում պահող երկրորդ կայսրության մեծամեծների ֆինանսատնտեսական թե քաղաքական շահերի հետ, անխուսափելի էր դարձնելու ֆրանսիական զինարշավախմբի առաքումը Միջերկրականի արևելյան ծովափ։

Եվ ահա, Լեռան վրա առավել բուռն զինաբախումներին վերջ տվող համաձայնագրի կնքման օրն իսկ, 1860-ի հուլիսի 6-ին, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Տուվենելը շրջաբերական էր ուղարկում Լոնդոնի, Բեռլինի, Վիեննայի և Պետերբուրգի իր դեսպաններին, առաջարկելով հող նախապատրաստել Սիրիայում արյունալի իրադարձությունները հետաքննելու և դրանց կրկնումը բացառող ու 1845-ի կարգին անհրաժեշտ փոփոխություններ բերող վարչակառույց մշակելու կոչված միջազգային մի հանձնաժողովի Բեյրութ ուղարկման (50, հտ. 1, 194)։ Նույն օրն իսկ սուլթանին ուղարկված նամակով Նապոլեոն III-ը, պահանջելով, որ Բ. Դուռը միջոցներ ձեռք առնի իր կայսրությունում կարգը վերահաստատելու համար, մի քանի օր անց իր ծովակալներին նաև կարգադրում էր, որ ֆրանսիական նավատորմն ուղղություն վերցնի դեպի Լևանտ և Բեյրութի հյուպատոսի առաջին իսկ պահանջով ցամաքահանում կատարելով օժանդակի քրիստոնյաների անվտանգության երաշխավորման (50, հտ. 1, 197)։ Ի դեպ, համաեվրոպական իրադրությունից թե մայրաքաղաքների փոխհարաբերություններից ելնելով, Ֆրանսիան հետամտում էր առնվազն Անգլիայի և Ավստրիայի հետ համատեղ միջամտություն կատարել (5, գ. 150, թ. 189)։

Բ. Դուռը, որին անգլիական կառավարությունը, արտաքին միջամտությունից խուսափելու որպես միջոց, հանձնարարել էր «անձամբ հաստատել անդորրությունն ու կարգ-կանոնը», շտապեց միջոցներ ձեռք առնել։ Պոլսում չէին անգիտանում, նաև, որ Անգլիան հարկադրաբար համաձայնել էր ֆրանս-ավստրիական զինարշավախմբի առաքման գաղափարի հետ, այն պայմանավորելով Թուրքիայի հետ տերությունների համապատասխան պայմանագրի կնքմամբ (81, 3 և 10)։ Սուլթանը հուլիսի 16-ին նամակով Նապոլեոն III-ին հավաստում էր, որ խաղաղությունը վերահաստատելու և հանցապարտներին երկաթյա բռունցքով պատժելու համար անհրաժեշտ միջոցներն արդեն իսկ սկսել են գործադրու-

Բյան դրվել։ Սուլթանական հրովարտակով և արյունահեղությունը արգելեն դադարեցնելու, կարգուկանոնը շուտափույթ վերահաստատելու և հանցագործներին ցուցադրաբար պատժելու առաքելությամբ արտակարգ ու լիազոր կոմիսար նշանակված արտաքին գործերի մինիստր Քեչեջի-զադե Բույուք Ֆուադ փաշան, դեպի Բեյրութ ճանապարհ ընկնելուց առաջ, մինչև իսկ անհրաժեշտ էր համարում ֆրանսիական դեսպանին վստահեցնել, որ «իր կյանքի իսկ գնով» գլուխ է բերելու իր առաջադրանքը (181, հտ. 6, 90։ 50, հտ. 1, 201)։

Եվ իրոք, Ֆուադ փաշան, ուղեկցությամբ պատկառելի մի հանձնաժողովի, ինչպես նաև հատուկ մի զորաբանակի, որ ցամաքով էր ճանապարհ ընկել, հուլիսի 17-ին ժամանեց Բեյրութ։ Մեզ համար առանձնապես հետաքրքիր է այն փաստը, որ համարյա բոլոր կարևոր պաշտոնների գծով իր ընտրյալները հայեր էին։ Անձնական քարտուղարը, որին հանձնարարված էր նաև ժողովրդին ուղղված բոլոր կոչերի արաբերենով խմբագրումը, հալեպահայ տարաբախտ գրող և հրապարակախոս Ռդգալլա Հասունն էր։ Ադեստյալ քրիստոնյաներին օգնություն կազմակերպելու և գաղթականների հայրենադարձը կամ վերաբնակությունը գլուխ բերելու գործը վստահված էր նույնպես հալեպահայ Ֆրանքո-Նասրիին, որին օգնական էր կարգված Սահակ Ապրոն և որի դժվարագույն առաքելությունը ֆեոդալ շեյխերի և գյուղացիների միջև համերաշխություն վերահաստատել փորձելն ու որոշակի հաջողություն արձանագրելն էր։ Ֆուադ փաշայի հանձնաժողովի կազմում էին նաև Ստեփան Արղումանյանը, որ փոխարինեց հիվանդացած Ֆրանքո-Նասրիին, Նահապետ Ռուսինյանը, բանակի բժշկապետ դոկտոր Գաբրիել Սելյանը և ուրիշներ (89, էջ 206 և 208։ «Արշալույս Արարատեան», 1860, հ. 627։ «Մասիս», 1860, հ. 461։ «Հանդէս ամսօրեայ», 1902, էջ 250)։

Բեյրութ հասնելուց անմիջապես հետո Ֆուադ փաշան ժողովրդին ուղղված մի կոչով սպառնաց անդորրությունը ամեն մի խախտողի խստությամբ պատժել որպես ապստամբի (181, հտ. 6, 91), պետական գանձարկղից ըստ էության նպաստներ բաժանեց քրիստոնյա գաղթականներին, պաշտոնանկեց և կալանավորեց Սայդայի էյալեթի մուշիր Խուրշիդին և նրա ռազմական ու քաղաքացիական գլխավոր օգնականներին, այնուհետև շտապեց Դամասկոս, կարգադրեց անմիջապես վերադարձնել քրիստոնյաներից բռնախլված հարստությունները, անօթևան մնացածներին տեղավորեց մահմեդականների տներում, ցանկացողներին պետության հաշվին տեղափոխեց Բեյրութ և այլուր (116, 120), պաշտոնանկելով ձերբակալեց նաև Դամասկոսի էյալեթի մուշիր Ահմեդին, Դամասկոսի, Հաս-

բայայի և Ռաշայայի կայազորների հրամանատարներին, 111 թուրք այլ սպաների և զինվորների, որոնց ջարդարարներին մեղսակցությունը հանրահայտ էր։ Ձերբակալվեցին նաև Դամասկոսի մեծաթիվ երևելիներ, այդ թվում մեջլիսի շատ անդամներ և կրոնապետ Աբդալլա ալ-Հալեբին։

Հատկապես ստեղծված և Ֆուադ փաշայի նախագահության ներքո գործող ռազմական ատյանը գնդակահարության դատապարտեց Ահմեդ փաշային, նրա անմիջական մեղսակից բեյերին, ինչպես նաև թուրք հարյուրից ավելի սպաների ու զինվորների։ Ինչ վերաբերում է դամասկոսցի արաբներին, ապա նրանցից 57-ը կախաղանի և շուրջ հինգ հարյուր մարդ էլ աքսորի կամ տաժանակիր աշխատանքների դատապարտվեցին։ Դամասկոսում դատված և դատապարտվածների ընդհանուր թիվը 664 էր (5, գ. 42, թ. 683։ 28, 119։ 181, հտ. 6, 103)։

Սեպտեմբերի 7-ին թուրք թե արաբ մահապարտների հիմնական մասի պատիժը ցուցադրաբար ի կատար ածվեց քաղաքի քրիստոնյա թաղամասերից մեկում, ամբոխի ներկայության։ Ի դեպ, մուշիր Ահմեդի մահապատժի ենթարկված լինելը, թեկուզ և օսմանյան վերնախավի մեղսակցության նրան քաջ հայտնի հետքերը կորցնելու ճիգերի պայմաններում հավանական (157, 497), կասկածի ենթարկվեց ժամանակակիցների կողմից, որոնց շրջանում տարածված զրույցների համաձայն փաշան գաղտնորեն Մեքքա ուղարկվեց (46, հտ. 7, 296)։

Ֆուադ փաշան, եվրոպական զինարշավախմբի առաքելությունը կանխարգելելու մտահոգությամբ, շտապում էր։ Եվ սակայն շտապում էին նաև ռազմական միջամտության կողմնակիցները, որոնց ճնշմամբ էլ Բ. Դուռը հուլիսի 20-ին համաձայնել էր Սիրիա եվրոպական հանձնաժողով ուղարկելու առաջարկին, պայմանով, որ նրա իրավասությունների շրջանակը սահմանափակվեր 1845-ի վարչակառույցի վերաքննությամբ (147, հտ. 3, 124)։

Հուլիսի 26-ին Փարիզում բացվեց զինարշավի պայմանները քննարկող դեսպանաժողովը, որին մասնակցում էին Ֆրանսիայի, Ռուսաստանի, Անգլիայի, Պրուսիայի, Ավստրիայի և Թուրքիայի ներկայացուցիչները։ Ֆրանսիան, որ համարյա ավարտել էր իր զինարշավախմբի կազմությունը, անհամբերում էր։ Ռուսաստանն անվերապահորեն պաշտպանում էր նրա նախաձեռնությունը։ Թուրքական պատվիրակ Ահմեդ Վեֆիքը, անգլիական դեսպան Քաուլիի օգնությամբ, հնարներ էր որոնում վերջնական որոշման ընդունումը ձգձգելու (5, գ. 150, թ. 235 և գ. 153, թթ. 192 և 200)։

1860-ի օգոստոսի 3-ին տերությունների ներկայացուցիչներ Մետերնիխը, Տուվենելը, Քոուլին, Ռյոսսը և Կիսելյովը Փարիզում վերջապես ստորագրեցին մի պրոտոկոլ, որ Թուրքիայի լիազոր Ահմեդ Վեֆիքն «ի գիտություն» ընդունեց։ Տերությունները, ակնկալելով, որ «Բ. Դռան հանդիսավոր խոստումներին համապատասխան ձեռք կառնվեն վարչական լուրջ միջոցներ՝ Օսմանյան կայսրության շրջանակներում բոլոր դավանությունների քրիստոնյա ազգաբնակչության վիճակի բարելավման ուղղությամբ», պարտավորվում էին «ճշտորոշել... Բ. Դռան ընձեռվելիք աջակցության իսկական բնույթը», միաժամանակ հավաստելով, որ «մտադիր չեն հետապնդելու... հողային որևէ առավելություն, բացառիկ որևէ ազդեցություն, ոչ էլ իրենց հպատակների առևտրին վերաբերող որևէ կոնցեսիա» (147, հտ. 3, 125)։

Պրոտոկոլին կից կոնվենցիայի նախագիծը (50, հտ. 1, էջ 212—213), որ վեցի փոխարեն յոթ հոդվածներով սեպտեմբերի 5-ին վերածվեց «Սիրիա եվրոպական զորքեր ուղարկելու պայմանագրի» (147, հտ. 3, 126—127), նախաբանում շեշտում էր. սուլթանը, «ցանկանալով արագ և արդյունավետ միջոցներով դադարեցնել արյունահեղությունը Սիրիայում և ցուցաբերել իր գերիշխանության ներքո գտնվող ազգաբնակչությունների շրջանում կարգն ու խաղաղությունը ապահովելու իր հաստատ վճռականությունը», ընդունում է այդ գործում տերությունների «եռանդուն համագործակցությունը»։ Առաջին հոդվածում նշվում էր, որ Սիրիայում «անդորրության վերահաստատման նպաստելու համար» ուղարկվելու է մի զինարշավախումբ, որի անձնակազմը «կարող է հասցվել մինչև 12 հազար մարդու»։ Երկրորդ հոդվածում Ֆրանսիան «համաձայնում է անմիջապես տրամադրելու այդ զորախմբի կեսը», իսկ «եթե հարկ լինի», ապա «մեծ պետությունները անհապաղ... հասկացությունի պիտի գան Բ. Դռան հետ, որոշելու համար, թե իրենցից որո՞նք են հայթայթելու լրացուցիչ զորաքանակը»։ Երրորդ հոդվածը զինարշավախմբի ղեկավար հրամանատարին պարտավորեցնում էր «հաղորդակցության մեջ մտնել Դռան արտակարգ լիազորի հետ՝ իրագործության պահանջած բոլոր միջոցառումները ճշտորոշելու և գրավելու համար այն դիրքերը, որոնք անհրաժեշտ պիտի լինի զբաղեցնել»։ Չորրորդ հոդվածով տերությունները «խոստանում էին պահպանել բավականաչափ ծովային ուժեր՝ սիրիական հողում անդորրությունը վերահաստատելու հաշվարկման էիդերին օժանդակելու համար»։ Հինգերորդ հոդվածը Սիրիայի գրավման ժամկետ էր որոշում վեց ամիս, «համոզված, որ այդ ժամկետը բավարար պիտի լինի հասնելու համար իրենց խաղաղեցման նպա-

տակին»։ Վեցերորդ հոդվածով Թուրքիան «հանձն էր առնում... հեշտացնելու զինարշավախմբի գոյատևումն ու պարենավորումը»։ Եվ վերջապես յոթերորդ հոդվածը վերաբերում էր «հինգ շաբաթվա ընթացքում» պայմանագրի վավերացման։

Ինչքան էլ որ պայմանագիրը, սահմանափակելով զինարշավախմբի թվաքանակն ու ներկայության ժամկետը, այն չէր, ինչ Փարիզում ակնկալում էին, այնուամենայնիվ ֆրանսիական կառավարությունն անմիջապես գործի լծվեց։ Օգոստոսի 16-ին Բեյրութում ափ իջած ֆրանսիական զորքին, որի շարքերում քիչ չէին արաբներ և Ալժիրում ծառայած արաբագետ ֆրանսիացիներ, գլխավոր հրամանատար նշանակվեց 56-ամյա մարկիզ Բոֆոր դ'Օպուլը, որ իր ժամանակին, որպես Իբրահիմ փաշայի սպայակույտի պետ Սև-Սուլեյմանի տեղակալ, աշխատել էր Սիրիայում (5, գ. 195, թ. 297)։

Զինարշավախմբի հետ Բեյրութի բացերն ուղարկվեցին նաև ֆրանսիական հինգ ռազմանավեր, որոնց ի հակակշիռ շուտով ժամանեցին անգլիական հինգ, ռուսական յոթ, ավստրիական երկու, սարդինական երկու և օսմանյան երկու ռազմանավեր։

Բեյրութի և Լեռան քրիստոնյաները, առաջին հերթին մարոնականները, որոնք Շիհաբ ամիրների և խազին շեյխերի գլխավորությամբ ողջույնի հատուկ պատվիրակություն ուղարկեցին գեներալ դ'Օպուլի մոտ, անօրինակ խանդավառությամբ ընդունեցին ֆրանսիացիներին (136, 31 և 42)։ Ընդհակառակը, Բեյրութի սուննիներն ու Լեռան դրուզները, որոնք խստամիջոցներ էին սպասում, հասկանալիորեն թշնամանքով դիմավորեցին եկվորներին (4, գ. 1303, թթ. 106 և 114)։

Ֆրանսիական հրամանատարությունը շտապում էր իրեն տրված առաջադրանքը կլուծ բերել և թափանցել դրուզական լեռնագոտի, զինաթափել շեյխերի հետևորդներին և ձերբակալել արյունահեղության գլխավոր մասնակիցներին։ Եվ սակայն Ֆուադ փաշան, որ սեպտեմբերի 10-ին Դամասկոսից Բեյրութ եկավ, հետաձգեց անհամբերող գեներալի հետ իր հանդիպումը, պատճառաբանելով, որ դրուզների դատավարման գործով է զբաղված։ Եվ իրոք, նա ոչ միայն ռազմական ատյանի առաջ հանեց Խուրշիդ փաշային ու նրա զինվորական ու քաղաքացիական օգնականներին, հատկապես Բեյրութի կայազորի հրամանատար Թահիրին, որոնք բոլորն էլ ցկյանս բանտարկության դատապարտվեցին, այլև սեպտեմբերի 14-ին Բեյրութ կանչեց շուրջ հիսուն դրուզ պարագլուխների, որպեսզի ցուցմունք տան արյունահեղությունների հետ իրենց առնչման վերաբերյալ, սպառնալով, հակառակ դեպքում, ի բացակայության դատել

և առավել խիստ պատիժների ենթարկել (121, հտ. 6, 104)։ Վերջիններս մեծ մասամբ իրենց դինված ջոկատներով և Իսմայիլ ալ-Աթրաշի ուղեկցությամբ Հաուրան փախան։ Փաշային ներկայացած տասնչորս դրուզ ֆեոդալ-աղնվականներից տասնեմեկը, այդ թվում կայմակամ ամիր Ահմեդ Արսլանը, շեյխեր Սաիդ Ջումբլաթը, Յուսուֆ Աբդ ալ-Մալիքը և Հուսեյն Թալհուքը, մահվան դատապարտվեցին, թեպետ սուլթանը, անգլիական դիվանագիտության միջամտությամբ, այդ վճիռը ցկյանս աքսորով փոխարինեց (180, 277)։ Ի դեպ, մի տարի անց հայտարարվեց, որ ինչպես Թուրք աստիճանավորները, այնպես էլ դրուզ 245 դատապարտյալները հնգամյա ժամկետից հետո կարող են աքսորից վերադառնալ, բացի Ս. Ջումբլաթից, որ 1861-ի մայիսի 11-ին Թոքախտից բանտում մահացել էր (128, հտ. 2, էջ 185)։ Հարկ է ընդգծել, որ Անգլիան դիվանագիտական հարաբերությունների խզման սպառնալիքով էր Բ. Դռնից պահանջել դրուզ շեյխերի և առաջին հերթին Ս. Ջումբլաթի մահապատժի բեկանումը (181, հտ. 6, 285։ Ֆ, գ. 37, թ. 145)։

Դրուզ ղեկավարների դատավարության ղուզընթաց Ֆուադ փաշան փաստորեն վերացրեց անցյալում մնացած դրուզական կայմակամությունը և հարավային լեռնագոտին չորս շրջանների բաժանելով, յուրաքանչյուրի ղեկավարումը հանձնարարեց օսմանյան դինվորականի, խստիվ կարգադրելով իրեն կցված ժամանակավոր վարչության հետ հոգ տանել շրջանում կարգ ու կանոնի պահպանման, քաջալերել տեղահան եղած քրիստոնյաների վերադարձը և հնարավոր բոլոր միջոցներով օժանդակել նրանց բնականոն կյանքի ու աշխատանքի վերսկսման։ Հետաքրքրական կլինի նշել, որ խաոր աղգաբնակչությամբ շրջաններում անդորրության հսկելու գործի մեջ ներգրավվեցին նաև տեղական ոստիկանական ուժերը, որոնց կազմը համայնքների կողմից առաջադրվում էր իրենց թվական համամասնության համաձայն։

Հարավի իրադրությունը կարգավորելով և դարպիական հանցապարտների դատն ու դատաստանը շտապեցնելով, Ֆուադ փաշան փորձում էր բավարարություն տալ երկու գլխավոր հոգսերի. սահմանափակել ոչ միայն ֆրանսիական զորաբանակի նախաձեռնություններն ու հնարավորությունները, այլև Բեյրութում գործել սկսած միջազգային հանձնաժողովի հավակնությունները։

Դեներալ դ'Օսուլը, որի աչքերի առաջ փաշայի 16-ից մինչև 25 հազարի հասնող զորաբանակը (48, 144) ոչ միայն հանգցնում էր միջհամայնքային դինաբախումների վերջին ու թույլ կայծկլտումները, այլև առանձնապես հոգ տանում եվրոպական, առաջին հերթին ֆրանսիական

հիմնարկների ու ձեռնարկությունների ապահովության և, Օսմանյան կայսրությունում հաղվադեպ երևույթ, քրիստոնյաների անձի և ինչքի անվտանգության, հակված էր ավելի շատ քաղաքական հարցերով զբաղվելու։ Նրա հիմնական գործն իրեն ավելի քան հավանական թվացող քրիստոնեական վարչական միավորին, իսկ անմիջականորեն՝ պաշտոնազրկված մարոնական կայմակամի պաշտոնին ձեռնտու դեկավարի որոնումներն էին։

Զինարշավախմբի հրամանատարը, ինչպես և հյուպատոս Բենտիվոլիոն, ցանկանում էին կազմակերպել Սայդա-Բեյրութ-Տրիպոլի նավահանգիստներով մեկ միասնական ձևով՝ որպես «Սիրիայի բոլոր քրիստոնյաների բերդ-ապաստանարան», հնարավորության դեպքում դեկավարությամբ Ալժիրի ժողովրդի ազատագրական պայքարի հերոս Աբդ ալ-Կադերի, որ իր կամովին ընտրված աքսորավայր Դամասկոսում քրիստոնյաների իսպառ բնաջնջումը խափանել էր՝ իր թիկնապահ գնդով զենի ի ձեռին դուրս գալով թուրքերի և ամբոխի դեմ (198, 2)։ Իսկ մինչ այդ, քանի օրակարգի շտապագույն հարցը մարոնական կայմակամությունն էր, գեներալն ու հյուպատոսը առաջ էին մղում Բեշիր II-ի թոռ ամիր Մեջիդ Բին Խալիլին, որ Լիբանան վերադառնալով քրիստոնեությունն էր վերընդունել և որի շուրջ համախմբվելու փորձ էին կատարում կենտրոնական լեռնահատվածի ֆեոդալ-այնվականները (165, 29)։

Ֆրանսիական զինարշավախմբի հետևակազորի հրամանատար գեներալ Դյուկրոն և միջազգային հանձնաժողովի ֆրանսիացի անդամ Բեգլարը, կրոնի հարցում ամիր Մեջիդի հեղհեղուկությունը փաստարկելով, առաջ էին մղում շեյխ 3. Քարամի թեկնածությունը։

Ֆուադ փաշան և անգլիական գործակալները, որոնք, ինչպես Բեյրութում գործող ֆրանսիական բարձրաստիճան անձանց, այնպես էլ մարոնականների երկփեղկմամբ հրճվելու հիմքեր ունեին, փաստորեն Քարամի կողմում էին կանգնած։ Նա իր նշանակմամբ ոչ միայն կարող էր փակել Շիհաբների հանապարհը, այլև խորացնել մարոնականների երկպառակությունը, ի հարկին պատճառ դառնալ հուզումների, մանավանդ, որ իբր կայմակամ հարկադրված էր լինելու բարվոք հարաբերություններ հաստատել օսմանյան իշխանությունների հետ և կատարել նրանց պահանջները, առաջին հերթին գլխավորը՝ հարկահավաքը, որ գոնե քսրուանցիների անկասկածելի դիմադրության պիտի բախեր։ Ֆուադ փաշայի հաշվարկներով այդ բոլորից նախ մարոնականների բարձրացող ատող Քարամի հեղինակությունը պիտի դժգուներ, ապա նաև գույն անակնկալ հիմքեր պիտի ընձեռեր դրուզականից հետո մարոնական

կայմակամությունն էլ վերացնելու և ամբողջ Լեռը վերստին դնելու թուրքական ուղղակի վարչակառավարման ներքո։

Նոյեմբերի 18-ին փաշան կայմակամի աթոռն առաջարկեց Քարամին, որ Բեգլարի խորհրդով անմիջապես ընդունեց։ Այդ պահից սկսած Հոդինի շեյխը, իր իսկ բառերով՝ անխուսափելիորեն երկփեղկվելու էր թուրքական իշխանությունների և «երկրի զավակների» շահերի պաշտպանության միջև և հակառակ իր հայտարարության, որ այդպիսի երկփեղկման դեպքում անպայման հրաժարելու է իր պաշտոնից, մինչև վերջ կառչած մնաց ժամանակավոր կայմակամի աթոռից, ջանալով այն մեկնաբաստ դարձնել՝ ամբողջ Լեռան կառավարչի տիտղոսը նվաճելու, ըստ որում կտրուկ շրջադարձ կատարելու և անգլիական հյուպատոսարանին ու լորդ Դաֆֆերինին տրված երաշխիքներով Լոնդոնի համակրանքը ապահովելու գնով (198, 7)։

Կարճագույն ժամանակ անց պարզելով, որ իր դեմ գործող դ՝Օպուլ-Բենտիվոլիո խմբավորման միացել է նաև Բեգլարը, որ Առն եպիսկոպոսից ղեկավարվել սկսած մարոնական վիրնախավի շահերական ճակատը օրըստօրե խստացնում է պայքարը իր կայմակամության դեմ և որ այդ պայքարի գլխավոր հենարանի է վերածված ոչ միայն մարոնական տոհմիկ ազնվականությունը, այլև Քեսրուանի ազդարարությունը, Քարամը հակաքայլերի ձեռնարկեց։ Անգլիական դիվանագիտությունից հետո ավելի ու ավելի հենվել սկսելով թուրքական իշխանությունների վրա (136, 190), նա պայքարն ի հարկին զինամարտի հասցնելու համար ստեղծեց ոստիկանական ուժեր և իր նստավայր դարձած Ջունիի ամբողջ գանձարկղը մսխեց Բեյրութում ուժեղ աջակիցներ և Լեռան վրա զինավառ օժանդակներ գտնելու նպատակին։ Այդ էր պատճառը, որ երբ Ֆուադ փաշայից հրահանգ ստացավ հարկահավաք կատարել միջհամայնքային զինաբախումներից չտուժած իր կայմակամությունում, Քարամը սիրահոժար գործի լծվեց, առաջին հայացքը սևեռելով Քեսրուանի վրա։

Քեսրուանյան գյուղացիությունը, որ իր վեքիլների ստորագրած «Հայտարարության» հակառակ փորձում էր դիմադրել շեյխական ունեցվածքների վերադարձման ու հատուցում կատարելու թե հարկ վճարելու կարգադրություններին (157, 367—369) և որ Քարամի կայմակամ նշանակվելուց հետո առավել ուժեղ ճնշման էր սկսել ենթարկվել, 1861-ի մարտի 13-ին Ջունիից կարգադրություն ստացավ «կատարյալ անդորրություն վերահաստատել», այլ խոսքով նախկին կարգի հարյուր տոկոսով վերականգնման հետ հաշտվել և անհապաղ հարկերը վճարել։

Գլխավոր վեզիրությունը պահպանող Շահինը սկզբում պատրաստակամություն հայտնեց ենթարկվելու ժամանակավոր կայմակամի կարգադրության, սակայն երբ հանդիպում ունեցավ հատուկ առաքելությամբ ուղարկված ամիր Մեջիդի հետ, որ իր և իր ֆրանսիամետ կուսակցության օժանդակությունը առաջարկեց, մինչ այդ արդեն Շագրենի կաշու նման կծկվել սկսած «Հանրապետության» ղեկավարը փոխեց իր որոշումը և հակաքարամյան-հակաօսմանյան ապստամբության դրոշ պարզելով ժողովրդին կոչ արեց ոչ մի հարկ չվճարել։ Քարամն իր ոստիկանական ուժերով թափանցեց Քեսրուան և քայլեց Ռեյֆունի վրա։ Շահինը, շիհաբականներից խոստացված օժանդակությունը չստանալով, փախավ։ Ժամանակավոր կայմակամը, ոյուղ գյուղի ետևից իրեն հնազանդեցնելով, հավաքեց հարկը (203, 326) և դրանով իսկ քեսրուանյան լեռնագոտուց վերացրեց ապստամբական իշխանության ամեն մի հետք։

Այնուամենայնիվ Քարամը ժամանակավոր կայմակամի պաշտոնից հրաժարվեց 1861-ի հունիսի 9-ին, այն օրը, երբ Պոլսում ստորագրվում էր Լիբանան լեռան օրգանական ստատուսը։ Արաբական պատմագրության մեջ կարծիք է հայտնվել, որ Քարամը հրաժարվել է պարզապես ֆրանսիական դիվանագիտության հրամանատարի, հյուպատոս Բենտիվոլիոյի և ուրիշների «ռազմավարությունների» և իր կայմակամության դեմ ուժեղ պայքարի հետևանքով (198, 14)։ Իրականում, ինչպես ցույց են տալիս փաստերը, ֆրանսիական դիվանագիտությունը երբեք էլ տրվյալ պահին չէր հետամտում Քարամի պաշտոնանկության, քանի որ դրանով Ֆուադ փաշային հնարավորություն պիտի ընձեռվեր իր մարդուն, դուցե թե օսմանյան ինչ-որ ասիճանավորի նշանակել նրա փոխարեն։ Ընդհակառակը, ֆրանսիացիների համար ցանկալի էր Քարամի ներկայությունը, պայմանով, որ նա հյուսիսային լեռնահատվածի որոշակի շրջանների վրա իր ներգործության և իր պաշտոնի ուժով դրոշմանշեր ամիր Մեջիդ Շիհաբին Լեռան ընդհանուր կառավարիչ նշանակել տալու ջանքերը, որոնք հանրագրությունների ձևով ի գործ էին դրվում ամբողջ Լեռան վրա։ Լիբանանի առաջին դեմքը դառնալու քարամյան փառասիրական նկրտումների պայմաններում դա հնարավոր չէր և Իդիթի շեյխն էլ, հակահանրագրություն կազմակերպելու իր փորձի ձախողանքից հետո, երբ իր հայրենի գյուղում անգամ մարդիկ իրենից երես թեքեցին, ոչ միայն ֆրանսիացիներից, այլև օսմանցի թե անգլիացի հովանավորներից դառնացած, հրաժարական տվեց հունիսի 9-ին (136, 401), երբ արդեն տեղյակ էր, որ ամիր Մեջիդին բաժին չհասած պաշտոնը, բա-

ժին չհասնելով նաև իրեն, տրված է հայազգի Կարապետ-Հարությունփաշա Տաուտյանին։

Կրիմսկու վկայությամբ Քարամի հասարակական վարկաբեկումը այնքան խորն էր, որ մարոնական գյուղացիությունը, դարազիականների հետ միասին, սկսեց նրան ևս մյուս շեյխերի թվում ամբաստանել որպես բռնակալ, բռնագանձող-շորթող և այլն, այն աստիճանի, որ Ինդինի շեյխը 1863-ին մինչև իսկ հարկադրվեց Փարիզում իրեն և մյուս շեյխերին փառաբանող մի բրոշյուր հրապարակ նետել (26, 515)։

* * *

Ֆրանսիական զինարշավախմբի սպայական կազմի զգալի մասը, որին գլխավորում էր հետևակազորի հրամանատար և Քարամի ջերմ հովանավոր գեներալ Դյուկրոն, գտնում էր, որ թուրական դ'Օպուլը «Ֆուադ փաշայի ձեռքին խաղալիք» է դարձել և ուրեմն պահանջում էր, որ դրուզների դեմ անհապաղ գործողություններ ձեռնարկվեն ու Լեռը հնարավորին չափ շուտ զուտ քրիստոնեական տեսքի բերվի (131, հտ. 1, 430—436)։

Տեղի տալով իր սպայակույտի ճնշման առաջ, դ'Օպուլը հրաժարվեց զորքով Քեսրուան բարձրանալու և այնտեղ կարգն ու կանոնը վերահաստատելու առաջարկից (157, 154), մանավանդ, որ Առնի խմբավորումը ցանկանում էր քեսրուանյան վեքիլին միառժամանակ պահպանված տեսնել, անհրաժեշտության դեպքում նրան Քարամին հակակշիռ դարձնելու միտումով։ Հետևաբար ֆրանսիական զորահրամանատարը հակվեց դեպի ամեն գնով խառը ազգաբնակչությամբ մանրահատվածներ թափանցելու, դարազիականներին դուրս մղելու և քրիստոնյաների ու դրուզների միջև նոր, բոլոր դեպքերում Լեռան շրջանակներից դուրս սահմանագիծ անցկացնելու ծրագիրը (5, գ. 37, թ. 42)։

Ֆուադ փաշան հարկադրաբար համաձայնեց դ'Օպուլի՝ օսմանյան զորքերի Դամասկոսով ու Սայդայով, իսկ ֆրանսիականների Բեյրութ-Դամասկոս ճանապարհով առաջ խաղալու և նախ Բեյթ ադ-Դինում, ապա Բիկաայում միավորվելու առաջարկին։ Բնականաբար զինարշավի հիմնական նպատակն էր լինելու ճանապարհին հանդիպող դրուզական ամեն մի ջոկատ դինաթափել ու կալանավորել։ Սեպտեմբերի 22-ին զորաշարժն սկսվեց, սակայն թուրքական հրամանատարությունը ամեն ինչ արեց, որպեսզի նախ օսմանցիները՝ Սայդա-Ջեզզին-Մուխթարա և Դամասկոս-Հասբայա-Ռաշայա, ապա և ֆրանսիացիները՝ Բեյրութ-Դեյր ալ-Կամար և Բեյրութ-Քաբ Իլիաս ուղղթերով շարժվելով, ոչ մի դեպ-

քում ու ոչ մի տեղ չհանդիպեն դեպի Ջեբել աշ-Շեյխ և այնտեղից Հաուրան փախչող դրուզական գնդերին (19, 187։ 46, հտ. 7, 294)։

Հասկանալի է, որ այդ պայմաններում գեներալ դ'Օպուլը ձմռան սկզբին, մի քանի գնդեր թողնելով Քաբ Իլիասում և Բեյթ ադ-Դինում, ձեռնունայն պիտի վերադառնար Բեյրութ։

Չէր կարելի հավակնել, անշուշտ, որ լիբանանյան հողատարածքում կրքերը վերջնականապես հանդարտել էին և հետագա արյունահեղություններն էլ լրիվ կանխարգելվել։ Դրան խանգարում էին ոչ միայն ֆրանսիական և թուրքական զորահրամանատարությունների միջև «իշխանության երկակիությունը» (5, գ. 37, թ. 395), այլև մահմեդականների, նախ և առաջ դրուզների զժգոհանքը իրենց համար անակնկալ, այլ բոլոր դեպքերում աննպաստ իրավիճակից։ Այդ էր պատճառը, որ ռուսական հյուպատոսը վստահորեն տեղեկագրում էր. դրությունը շարունակում է վտանգավոր մնալ (4, գ. 1308, թ. 123)։ Եվ իրոք, 1860-ի դեկտեմբերին Բաալբեկում քրիստոնյաների կոտորած նախապատրաստելու մեղադրանքով Ֆուադ փաշան ձերբակալում էր տեղի մուֆթիին և 16 ուրիշների, Հասբայայի շրջանում դրուզները զինված հարձակում էին գործում քրիստոնյա գյուղացիների վրա, Սայդայում սուննիները ահաբեկչությամբ փորձում էին խոչընդոտել գաղթականների վերադարձը և այլն (136, 191 և 299։ 116, 227)։

Այս բոլորը ֆրանսիական կառավարության ձեռքին ղորեղ հաղթաթղթեր էին, որպեսզի հետամտեր զինարշավախմբի ներկայության համար սահմանված ժամկետից՝ 1861-ի մարտի 5-ից հետո իր զորքերը Լիբանանում պահպանելուն։ Օգտվելով Բալկանների քրիստոնյաներին հովանավորելու ցարական հավակնություններին իր աջակցության դիմաց սիրիական իր ծրագրերին Պետերբուրգի 1860-ի նոյեմբերին հանձն առած օժանդակությունից (5, գ. 151, թ. 32 և գ. 153, թ. 273), Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրությունը 1861-ի հունվարի 18-ին առաջարկեց նոր դեսպանաժողով գումարել՝ զինարշավախմբի ժամկետը երկարաձգելու հարցը քննարկելու։ Նշենք, որ Ռուսաստանից բացի, Ավստրիան ու Պրուսիան ևս համաձայն էին, որ Լեռան վարչակառույցի հարցի լուծումից առաջ ֆրանսիական զորքերը դուրս չբերվեն Լեռնից։

Փետրվարի 19-ին բացված փարիզյան դեսպանաժողովում Տուվենելը, շեշտելով, որ ջարդարարներն ու թալանարարները շարունակում են անպատիժ, իսկ զոհերը՝ անհատույց մնալ, պահանջեց զինարշավախմբի ժամկետը երկարաձգել մինչև Լեռան վարչակառավարման նոր սիստեմի մշակումն ու ընդունումը (81, 408)։ Անգլիական դեսպան Քաուլիի

և օսմանյան դեսպան Ահմեդ Վեֆիքի բուռն հակառակամտության, իսկ ռուսական դեսպան Կիսելյովի պաշտպանության պայմաններում, ավստրիական դեսպան Մետերնիխի առաջարկությամբ որոշվեց մինչև մայիսի մեկը բավարարել ֆրանսիական պահանջը (5, գ. 121, թթ. 69 և 85)։ Մի քանի օր անց դեսպանաժողովից դուրս համաձայնություն տրվեց նաև նոր ժամկետի՝ հունիսի 5 (5, գ. 88, թ. 153)։ Նույնիսկ մարտի 19-ին ստորագրվեց համապատասխան կոնվենցիա, որ գալիս էր փոխարինելու 1860-ի սեպտեմբերի 5-ինը (147, հտ. 3, 129—130։ 51[13], հտ. 3, 321։ 30, հտ. 15, 386—388)։

Պայմանագրի առաջին հոդվածը ճշտորոշում էր, որ «Սիրիայի եվրոպական գրավման» վերջին ժամկետը 1861-ի հունիսի 5-ն է և որ այդ թվականին զորքերի դուրս բերումը պետք է ավարտված լինի։ Երրորդ հոդվածի հիմամբ պայմանագիրը վավերացվեց և ուժի մեջ մտավ մայիսի 18-ին։ Փաստորեն զինարշավախումբը դուրս բերելու համար երկու շաբաթից մի փոքր ավելի ժամանակ էր մնում, սակայն Ֆրանսիան դրժողհելու հիմքեր չուներ։ Փարիզում հաստատապես գիտեին, որ հակառակ Ֆուադ փաշայի խոշընդոտող ջանքերին, մինչև պայմանաժամի լրումը Բեյրութում ավարտված կլինի Լիբանան լեռան նոր վարչակառույցի նախագծի մշակման գործը։ Ավելացնենք, այստեղ, որ Ֆրանսիան, ընդգծելով իր վճռականությունը՝ նոր խռովությունների ու արյունահեղությունների դեպքում «որևէ պայման չճանաչելով» առանձին գործելու և «լիբանանյան քրիստոնյաներին իրենց հալածիչների դեմ օգնություն ցույց տալու», այնուամենայնիվ սահմանված ժամկետում իր զորքերը դուրս բերեց Լևանտից։

Մինչ այդ Բեյրութում եռանդով գործում էր միջազգային հանձնաժողովը։

Դեռ 1860-ի հուլիսի 6-ին արտաքին գործերի մինիստր Տուվենելը հրապարակ էր նետել ոչ միայն միջհամայնքային զինաբախումների հարցը հետաքննելու, այլև 1845-ի շնչբության վարչակարգի մեջ անհրաժեշտ փոփոխություններ առաջարկելու կոչված սիրիական հարցերի միջազգային հանձնաժողով ստեղծելու գաղափարը (147, հտ. 3, 124)։ Հուլիսի 20-ին Բ. Դուռը համաձայնել էր Բեյրութում գումարել այդպիսի հանձնաժողովի նիստ, որպեսզի 1845-ի վարչակարգին նորամուծվելիք փոփոխություններն էլ մշակվեն ու ճշտորոշվեն տերությունների հետ համախորհուրդ (181, հտ. 6, 94)։

Բ. Դռան արտակարգ և լիազոր կոմիսար Ֆուադ փաշայի նախագահության ներքո գործող հանձնաժողովի անդամներն էին Ալեքսանդ-

բիայում Ֆրանսիայի հյուպատոս Բեգլարը, Անգլիայի լորդերի պալատի անդամ Դաֆֆերինը, Բեյրութում ավստրիական հյուպատոս Վեկբեկկերը, Պոլսի ռուսական դեսպանատան խորհրդական Նովիկովը և պրուսական դեսպանատան խորհրդական Ռյոսսը։ Հանձնաժողովն իր աշխատանքներն սկսեց հոկտեմբերի 5-ին (մինչև 1861-ի մայիսի 4-ը գումարվեց 29 նիստ), իր օրակարգում ունենալով քրիստոնյաների կոտորածների հանցապարտների բացահայտման ու պատժման, տուժածների վնասուց հատուցման և Լեռան նոր վարչակառույցի նախագծի կազմության հարցերը (181, հտ. 6, 105—267)։

Հարցերից առաջինը, թեկուզ ոչ ամբողջությամբ և ֆրանսիական պատվիրակին չբավարարող շրջանակներում, լուծվել էր արդեն։ Երկրորդը՝ վնասուց հատուցման խնդիրը, որ 1840-ական թվականներից բարշ եկող իր նախընթացն ուներ, ավելի դժվարլուծելի դուրս եկավ։ Շուրջ երկու տարի պահանջվեց, որպեսզի 1862-ի մայիսի վերջերին որոշվեն վնասների չափերը. քրիստոնյաներինը՝ շուրջ 30 միլիոն, դրուզներինը՝ մեկ միլիոն, մթուալլիներինը՝ կես միլիոն և սուննիներինը՝ 70 հազար դրուշ (4, գ. 1310, թ. 138), ըստ որում վերջ ի վերջո օսմանյան գանձատան միջոցներից հատուցվեց միայն երկուսուկես միլիոն դրուշ (114, հտ. 4, 372)։ Փաստորեն ֆրանսիական, անգլիական, ամերիկյան, ռուսական և այլ բարեսիրական ընկերությունների ջանքերով հանգանակված ավելի քան երկու տասնյակ միլիոններն էին, որ քրիստոնյա լեռնականներին փրկելու էին վերջնական կործանումից, մանավանդ որ սովից ու զրկանքներից ավելի շատ մարդ էր մահանում, քան միջհամայնքային զինաբախումներից (181, հտ. 6, 203)։

Միջազգային հանձնաժողովի օրակարգի գլխավոր հարցը, սակայն, Լեռան նոր վարչակառույցի նախագծի կազմությունն էր։

Ֆրանսիական պատվիրակը հասկանալիորեն հետամտելու էր մինչև 1840 թ. գոյություն ունեցած միասնական Լիբանան լեռան վարչակարգը վերականգնելուն։ Հանձնաժողովի ռուսական ներկայացուցիչն իր տեղեկագրերից մեկում հաղորդում էր. «Ֆրանսիական լիազորի կարծիքով Սիրիայի վարչակառույցի խնդրի լավագույն լուծումը մինչև 1842 գոյություն ունեցած կարգերին վերադառնալն է, որոնց հիմամբ ամբողջ Լիբանան լեռը կազմում էր տեղացի մի քրիստոնյայի կողմից կառավարվող միասնական տերիտորիա։ Նա նախապատվությունը տալիս է Շիհաբների տոհմին» (5, գ. 17, թ. 114)։ Ֆրանսիական դիվանագիտությունը հետապնդում էր նաև դրուզներին Լեռան շրջանակներից հեռացնելով զուտ քրիստոնեական (5, գ. 37, թ. 82), հնարավորության դեպ-

բում Օսմանյան կայսրությունից տարանջատ և իր մենիշխան ազդեցության ենթակա վարչապետական միավոր ստեղծելու երազանքը։

Ի միջի այլոց, այդ երազանքը, ինչպես վկայել է ֆրանսիական դիպլոմատիայի գանձապետ Լուն, երբեք էլ խորթ չէր մարոնականներին (136, էջ 402)։ Այդ իրողության օգտին վկայություն կարելի է համարել արաբերենից ֆրանսերենի թարգմանելով 1861-ին Աթենքում լույս տեսած անստորագիր մի գրքույկ՝ «Սիրիական հարցը մի սիրիացու դատողությամբ», որում հեղինակը, քննադատելով Օսմանյան կայսրությունում գոյավիճակի պահպանման հետամուտ տերություններին, խորհուրդ էր տալիս եվրոպական դիպլոմատիայի ներկայությունը երկարաձգել մի երկու տասնամյակ և Լեռան վարչակառավարումը վստահել քրիստոնյաներին (139, 14—15)։

Անգլիական պատվիրակը սկզբում առաջ էր քաշում Սիրիան Ֆուադ փաշայի ղեկավարությամբ փոխարքայություն հռչակելու և նրա շրջանակներում Լիբանան լեռը առանձին էյալեթի վերածելու ծրագիրը (198, հտ. 162, 1873)։ Դա, տարօրինակ փաստ, ոչ միայն Բ. Դուան կտրուկ առարկությանն էր հանդիպելու որպես «անընդունելի» (181, հտ. 6, 343), այլև իրականում չէր էլ համապատասխանում Ֆորեյն Օֆիսի ցուցմունքներին, քանի որ սիրիական փոխարքայության գրությը կարող էր վարակիչ դառնալ այլ երկրամասերի համար ու վտանգել գոյավիճակի պահպանումն իսկ (81, հտ. 2, 10)։ Այդ պատճառով էր, որ Անգլիան իր ներկայացուցչին կարգադրում էր սեղանի վրա դնել Լեռը երեք՝ մարոնական, դրուզական և ուղղափառ կայմակամությունների հիմամբ կառավարելու առաջարկը (81, հտ. 2, 2), որ եթե իր սուր ծայրով նպատակամղված էր մարոնական համայնքի դիրքերը թուլացնելուն, ապա նաև ռուսական դիվանագիտությունը սիրաշահելով ֆրանսիական պատվիրակությունը անօժանդակ թողնելու բացահայտ մի փորձ էր (5, գ. 37, թ. 82)։

Բացառված չէ, որ խորամանկ Ալբիոնն իր առաջարկությունը հրապարակ նետելիս տեղյակ էր Պետերբուրգից Նովիկովին տրված հրահանգին. բոլոր միջոցներով հանդես գալ ուղղափառների շահերի պաշտպանությամբ։ Պատահական չէ, ուրեմն, որ ֆրանսիական պատվիրակին իր ոգորումների մեջ հանկարծորեն մենակ թողնելով, ռուսական լիազորն սկսում էր հանդես գալ բրիտանական նախագծի ջատագովմամբ, իր դիրքորոշմամբ որոշակես ներգործելով նաև մյուս պատվիրակների վրա (5, գ. 42, թ. 658)։

Հակառակ ֆրանսիական դիվանագիտության կատաղի դիմադրության, 1861-ի մարտի 20-ին միջազգային հանձնաժողովը հաստատեց Լիբանան լեռան վարչակառույցի անգլո-ռուսական նախագիծը, որի հիմնական դրույթները հետևյալներն էին.

1. Լեռը բաժանվում է երեք՝ մարոնական, դրուզ և ուղղափառ կայմակամությունների։

2. Տեղաբնիկ կայմակամներն ընտրվում են ազգաբնակչության և հաստատվում Բ. Դռան կողմից։

3. Կայմակամություններում հազար բնակչին հինգ ոստիկանի հաշվով ստեղծվում են ոստիկանական կորպուսներ։

4. Օրենքի առաջ բոլորը հավասար են հայտարարվում և ֆեոդալական բոլոր առանձնաշնորհները վերացվում են (181, հտ. 6, 360)։

Ֆրանսիական պատվիրակը, հանուն միաբանության ստորագրելով նախագիծը, շարադրեց նաև իր վերապահությունները, որոնք բյուրեղանում էին քրիստոնեական միակ իշխանություն հաստատելու դրույթի մեջ (81, հտ. 2, 22)։ Փարիզում ևս ձեռնածալ նստած չէին։ Արտաքին գործերի մինիստր Տուվենելը ապրիլի սկզբներին Լոնդոն, Պետերբուրգ, Վիեննա և Բեռլին ուղարկված հուշագրերով պարզաբանում էր որդեգրված վարչակարգի վտանգավորությունը և պատրաստակամություն հայտնելով հրաժարվել Շիհաբ տոհմի «խիստ համապատասխան թեկնածությունից», հորդորում էր ընդունել քրիստոնյա միակ կառավարչով միասնական իշխանության դրույթը (50, հտ. 2, 49)։ Այդ պայմաններում չորս տերությունները համաձայնեցին վերանայել մարտի 20-ի նախագիծը և ընդունել Փարիզի առաջարկությունը։ Մայիսի 1-ին միջազգային հանձնաժողովն արդեն ավարտել էր Լիբանան լեռան որպես մեկ ու միասնական վարչական ինքնավար միավորի վարչակառույցի նախագծի խմբագրումը, հիմնականում արձանագրելով, որ Լեռան կառավարիչը լինելու է «քրիստոնյա, ոչ-տեղաբնիկ» (5, գ. 88, թ. 331)։

Նախագծի հետագա քննարկումները շարունակվեցին Պոլսում, տերությունների դեսպանների՝ անգլիացի Բուլվերի, ֆրանսիացի Լավալետի, ռուս Լոբանով-Ռոստովսկու, ավստրիացի Պրոկեշ-Օստենի և պրուսացի Գոլցի ժողովում, որին Թուրքիայի կողմից մասնակցում էր մեծ վեզիր Ալի փաշան։ Պայքարը հիմնականում «ոչ-տեղաբնիկ» հարցի շուրջ էր գնում։ Դեսպանաժողովի մայիսի 22-ի նիստում ֆրանսիական պատվիրակը փաստորեն մենամարտում էր բոլորի դեմ, պահանջելով, որ կառավարիչը լինի տեղաբնիկ։ Մայիսի 31-ի նիստում արդեն անգլիական դեսպանն ու Ալի փաշան էին հարկադրվում մարտնչել Լավալետի և

անակնկալորեն նրան դաշնակցելով տեղաբնիկ կառավարիչ պահանջող Լոբանով-Ռոստովսկու, Պրոկեշ-Օստենի և Գոլցի դեմ։ Ավելի քան վեց ժամ տևող վեճն ի վերջո հանգուցալուծվելու էր պրուսական դեսպանի առաջարկով. Ռեգլամենտում չարձանագրել «ոչ-տեղաբնիկ» բառերը, սակայն և կառավարիչ չընտրել տեղաբնիկի (5, գ. 37, թ. 51)։

1861-ի հունիսի 9-ին հինգ տերությունների և Թուրքիայի ներկայացուցիչները վերջապես ստորագրեցին «Լիբանան լեռան վերակազմակերպման ռեգլամենտը», որ պատմագրությանը հայտնի է որպես «Օրգանական ստատուս» (50, հտ. 2, 63—69։ 147, հտ. 3, 144—148։ 198, 372—379։ 82, 284—289)։

Ռեգլամենտը բաղկացած էր 17 հոդվածներից։

Առաջին հոդվածը ձևակերպված էր այսպես. «Լիբանանը կառավարվելու է Բ. Դռան կողմից նշանակված և ուղղակի նրան ենթարկվող քրիստոնյա մի կառավարչի (մութասարիֆի) կողմից։ Եռ կանչելու (կամայականորեն պաշտոնազրկվելու) ենթակա չեղող այդ պաշտոնատարը օժտվելու է գործադիր իշխանության բոլոր լիազորություններով. (Լիբանան) Լեռան ամբողջ տարածքում հսկելու է կարգի ու կանոնի և հասարակական անվտանգության պահպանման, դանձելու է տուրքերը, իր իսկ պատասխանատվության ներքո և նորին կայսերական վեհափառության սուլթանից իր ստացած իշխանության ուժով նշանակելու է վարչական պաշտոնատարներին, հաստատելու է դատավորներին, հրավիրելու ու նախագահելու է վարչական կենտրոնական խորհրդի նիստերին և գործադրության դրվելու համար հաստատելու է դատարանների կողմից օրինավորապես տրված բոլոր վճիռները, բացի իններորդ հոդվածով նախատեսված վերապահումներից։ Լեռան ազգաբնակչությունը կազմող համայնքներից յուրաքանչյուրը կառավարչի մոտ ունենալու է իր ներկայացուցչին, որ նշանակվելու է համապատասխան համայնքի պետերի և երևելիների կողմից»։

Ռեգլամենտի նախագծի քննարկումից հետո, Օրգանական ստատուսի հետ համաձայնեցված և ստորագրված մի Պրոտոկոլ (147, հտ. 3, 149։ 195, հտ. 1, 139։ 82, 288։ 198, 380), շեշտելով, որ Ռեգլամենտը «Նորին կայսերական վեհափառություն սուլթանի հրովարտակի ձևով է հրապարակվելու և հինգ մեծ պետությունների ներկայացուցիչներին պաշտոնապես հաղորդվելու է», հարկ էր համարում կառավարչի վերաբերյալ արձանագրել Թուրքիայի ներկայացուցիչ Ալի փաշայի հետևյալ հայտարարությունները, որոնց տերությունների պատվիրակները հավանություն էին տվել.

1. «Լիբանանի վարչակառավարումն ստանձնող քրիստոնյա կառավարիչն ընտրվելու է Բ. Դռան կողմից, որին ենթարկվելու է ուղղակիորեն»։

2. «Նա կրելու է մուշիր տիտղոսը, այլ խոսքով համաստիճան է լինելու Դամասկոսի և Սայդայի էյալեթների կառավարիչներին», հետևաբար չի ստորադրվելու նրանց։

3. «Նրա սովորական նստավայրը լինելու է Դեյր ալ-Կամարը, որ նրա ուղղակի իշխանության ներքո է գտնվելու»։

4. Կառավարիչը լինելու է «երեք տարվա ժամկետով լիազորված»։ Ի դեպ, 1864-ի սեպտեմբերի 9-ի «բարեփոխված Ռեգլամենտով» պաշտոնավարման ժամկետը դարձվելու էր հինգ, 1868-ի, 1873-ի և 1883-ի պրոտոկոլներով՝ առնվազն տասը, իսկ 1892-ի պրոտոկոլով՝ վերստին հինգ տարի (195, հտ. 1, էջ 139)։

5. «Նա, ճիշտ է, փոփոխելի է լինելու, սակայն նրա հետսկոչումը կարող է տեղի ունենալ միայն դատարանով դատապարտման հետևանքով»։ Անհետաքրքիր չի լինի նշել, որ 1864-ի վերանայված Ռեգլամենտի առաջին հոդվածում «անհետսկոչելի» դարձվածքը վերածվելու էր «փոփոխելիի» (147, հտ. 3, էջ 223—228։ 195, հտ. 1, էջ 140—149։ 82, էջ 289—295։ 198, էջ 381—388)։

6. «Նրա լիազորության ավարտից երեք ամիս առաջ Բ. Դուռը, որոշում չընդունած, մեծ պետությունների ներկայացուցիչների հետ նոր համաձայնություն է կնքելու» հաջորդի թեկնածության շուրջ։ Նշենք, որ եռամսյա ժամկետը միշտ չէ, որ խստիվ հարգվելու էր։ 1883-ին, օրինակ, նոր թեկնածուի նշանակման ձգձգման հետևանքով Բ. Դուռը ժամանակավորապես երկարաձգելու էր Ռուստամ փաշայի վարչակառավարման շրջանը, պատճառ դառնալով, որ ֆրանսիական դեսպանությունը բողոքի՝ պահանջելով, մինչև նոր կառավարչի նշանակումը, իշխանությունը վստահել վարչական մեծ խորհրդին։ 1902-ին, դարձյալ, Նաում փաշայի ժամկետի ժամանակավոր երկարաձգման համար անհրաժեշտ էին դառնալու լրացուցիչ բանակցություններ, որոնք տերություններից դժգոհանքով էին ընդունվելու։

7. «Հասկանալի է, նույնպես, որ Բ. Դռան կողմից այդ պաշտոնատարին իր իսկ պատասխանատվության ներքո վարչական պաշտոնյաներ նշանակելու ասպարեզում տրված իշխանությունը շնորհվում է միանդամ ընդմիշտ, իր իսկ իշխանությունն ստանալու կապակցությամբ և ոչ թե յուրաքանչյուր պաշտոնյայի նշանակման առթիվ»։

8. «Լիբանան լեռան կառավարիչը պիտի կարողանա Լեռան զինաթափման ձեռնարկել՝ հենց որ հանգամանքներն ու ժամանակը նպաստավոր համարվի»։

Ի միջի այլոց, «մարոնականների նկատմամբ հարգանքը»,—ինչպես ենթադրել են Յուսուֆ ալ-Հաքիմն ու Լամմենզը (128, հտ. 2, 189։ 222, 14), հետագայում էլ «սովորությունն ու նպատակահարմարությունը»,—ինչպես գրել է Յանկը (195, հտ. 1, 140), Լիբանան լեռան ինքնավարության ամբողջ ժամանակաշրջանում բացառեցին կաթոլիկ եկեղեցուն չպատկանող կառավարչի նշանակումը։ Եվ իրոք, հայ-կաթողիկե հայմայնքից էին մութասարիֆներից առաջինը՝ Կարապետ-Հարությունն Տաուտյանը (1861-ի հունիսից մինչև 1868-ին հրաժարումը), երկրորդը՝ հալեպահայ, Կուսա տոհմից Ֆրանքո-Նասրին (1868-ի հուլիսից մինչև 1872-ին մահանալը), յոթերորդը՝ Յուսուֆ-Ֆրանքոն, որ նախորդի որդին էր (1907-ից մինչև 1912) և վերջին, արտաքին գործերի մինիստր Գ. Նորաուսկյանից առաջարկված Հովհաննես Գույումջյանը (1912-ի դեկտեմբերից մինչև Համաշխարհային առաջին պատերազմի սկզբում Լեռան ինքնավարության վերացումը)։ Երրորդ կառավարիչ Ռուստամը իտալացի էր (1872-ի մարտից մինչև 1883), չորրորդը՝ Վասան, ալբանացի (1883-ի մայիսից մինչև 1892-ին մահանալը), հինգերորդը՝ Նաումը, Ֆրանքո-Նասրիի փեսան, ներկայացվել է որպես «Ֆրանսիայի փեսա» (1892-ի օգոստոսից մինչև 1902), վեցերորդը՝ Մուզաֆֆարը՝ լեհ (1902-ի սեպտեմբերից մինչև 1907)։

1861-ի Ռեգլամենտի երկրորդ հոդվածում ասված էր. «Ամբողջ Լեռան համար ստեղծվելու է կենտրոնական մի խորհուրդ, բաղկացած 12 անդամներից՝ 2 մարոնական, 2 դրուզ, 2 հույն-կաթոլիկ, 2 հույն-օրթոդոքս, 2 մթուալի և 2 սունի մահմեդական, որոնց պարտականությունն է լինելու բաժանել հարկերը, վերահսկել հասույթների ու ծախսերի տնօրինումը և խորհրդակցական կարծիք հայտնել կառավարչի կողմից առաջադրվելիք բոլոր հարցերի շուրջ»։

1861-ի Ռեգլամենտի չորրորդ հոդվածն ասում էր. «Յուրաքանչյուր շրջանում գործելու է տեղական վարչական մի խորհուրդ, բաղկացած՝ տեղի աղգաբնակչության տարբեր տարրերի (համայնքների) և հողային սեփականատերերի շահերը ներկայացնող 3—6 անդամներից։ Տեղական այդ խորհուրդը, որին նախագահելու է և տարեկան մեկ անգամ նիստի է հրավիրելու շրջանի կայմակամը, առաջին հերթին լուծելու է վարչակառավարման հետ առնչվող բոլոր հարցերը, լսելու է բնակչության պահանջները, հայթայթելու է շրջանի աղգաբնակչության վրա հարկերը

բաժանելու համար անհրաժեշտ վիճակագրական տվյալները և իր խորհրդակցական կարծիքն է հայտնելու տեղական շահերի հետ առնչվող բոլոր հարցերի շուրջ»։ 1864-ի Ռեգլամենտը, վերացնելով այս հոդվածը, հետևաբար և լուծարքի ենթարկելով տեղական մեջլիսները, ընդարձակելու էր կառավարչի և կենտրոնական խորհրդի իրավասությունների շրջանակները։

Ի դեպ, տասնմեկերորդ հոդվածը սահմանում էր, որ «վարչական խորհուրդների (1864-ից հետո միակ՝ կենտրոնական խորհրդի—Ե. Ն.) բոլոր անդամները... ընտրվելու և նշանակվելու են իրենց համայնքի հոգևոր պետի կողմից՝ համայնքի երեսփոխանների հետ խորհրդակցելուց հետո, իսկ կառավարիչը նրանց հաստատելու է իրենց պաշտոններում», ըստ որում 1861-ի Ռեգլամենտով յուրաքանչյուր տարի կաղմի կեսը, իսկ 1864-ի Ռեգլամենտով երկու տարին մեկ կաղմի մեկ երրորդը պետք է վերանորոգվեր, սակայն անդամներին վերապահվում էր վերընտրվելու իրավունք։

Անհրաժեշտ է ասել, որ 1861-ի չորրորդ հոդվածում տեղական մեջլիսների անդամներին վերաբերող «տեղի ազգաբնակչության տարբեր տարրերի և հողային սեփականատերերի շահերը ներկայացնող» դարձվածքը սխալ է հասկացված Պանչենկովայի կողմից, որ «ներկայացնողը» դարձրել է «ապահովող» (33, 202), փոխանակ հասկանալու որպես «հաշտեցնող»։ Մեր կարծիքով խոսքը վերաբերում է պարզապես այն խառը ազգաբնակչությամբ շրջաններին, որտեղ, իրոք էլ, «տեղի ազգաբնակչության տարբեր տարրերի», այլ խոսքով Շուշիում և Ջեզվինում, օրինակ, քրիստոնյա համայնքներին պատկանող գյուղացիության և «հողային սեփականատերերի», այն է՝ դրուզ ֆեոդալների շահերը հակամարտ էին, հետևաբար և կարիք ունեին հաշտեցման։ Նույնը վերաբերում էր նաև Մենթում քրիստոնյա (մարոնական և մասամբ հույն-օրթոդոքս) սեփականատերերի և դրուզ գյուղացիների, Քեսրուանում՝ մարոնական սեփականատերերի և մթուալլի գյուղացիության շահերի հաշտեցման։ Մեր տեսակետի օգտին է խոսում այն փաստը, որ 1864-ին արդեն այդ մեջլիսները վերացվեցին, իսկ դա կատարվեց ոչ թե այն պատճառով, որ հողային սեփականատերերի շահերի «ապահովման» հարց այլևս գոյություն չուներ, այլ պարզապես նաև այն պատճառով, որ հողատերերի և գյուղացիության շահերի հակամարտությունը, ինչպես կտեսնենք, Տաուտյան փաշայի նախաձեռնությունների շնորհիվ կորցրել էր իր սրությունը։ Մեր տեսակետի օգտին է խոսում նաև երրորդ՝ կայմակամներին վերաբերող հոդվածը, որտեղ, ինչպես տեսնելու ենք, ոչ թե խոսքը գնում

է այն մասին, որ «կայմակամը արտացոլում է տվյալ շրջանի հողային սեփականատերերի շահերը», ինչպես դարձյալ թյուրիմացությամբ պնդել է Պանչենկովան (33, 202), այլ այն երկու՝ տարադավան միջավայրերի, կալվածատերերի և գյուղացիության մասին, որոնցից մեկի կամ մյուսի համայնքին կարող էր պատկանել կայմակամը։

Բոլոր դեպքերում 1861-ից սկսած, առավել ևս 1864-ից հետո, երբ Լեռան վրա միակը դարձավ, կենտրոնական խորհուրդը ավելի շատ վեր էր ածվելու ֆինանսական օրգանի, որի միակ իրավասությունն էր հարկաբաշխումը կատարել, իսկ պարտականությունը՝ կառավարչի դիվանի պատրաստած ու ներկայացրած բյուջեն համարյա առանց քննարկման քվեարկել։ Որպես խորհրդակցական օրգան այն պարզապես մի քող էր դառնալու՝ նախօրոք իրեն թելադրված քվեարկությունը կատարելով գործադիր իշխանությունը տհաճ պատասխանատվությունից փրկելու (195, հտ. 1, 142)։

Յանկի այս նկատողության հետ համաձայնելով հանդերձ անհրաժեշտ ենք համարում երկու լրացում կատարել։ Առաջին մութասարիֆ Տաուտյան փաշան համայնքների հոգևոր պետերից և վերնախավից առաջադրված մեջլիսականներին փաստորեն տոնազարդի վերածելով, նրանց առանձին-առանձին փաղաքշելով ու սիրաշահելով, նրանց միմյանց մերձեցնելով ու զոդելով և խորհրդի նիստերը որոշ իմաստով տոնախմբություն դարձնելով, աստիճան առ աստիճան վերազոդում էր համայնքներին և ավելի ու ավելի վերամրապնդում միջհամայնքային խաղաղությունը։ Մյուս կողմից, խորհուրդը հրավիրելու և անձամբ նախագահելու իր իրավունքից կամովին հրաժարելով, իր իսկ նախաձեռնությամբ նախագահի տեղակալի պաշտոն ստեղծելով և այն մշտապես ընծայելով մարոնականներին, նա փաստորեն վերջիններիս փառասիրությունն էր շոյում ու նրանց ինչ որ չափով հեղացնում։ Հետաքրքրական կլինի ասել, որ հայազգի երկրորդ կառավարիչը՝ Ֆրանքո-Նասրին, զոնե այս հարցում, հավատարմորեն հետևելու էր իր նախորդի ավանդույթին (195, հտ. 1, 141)։

Ի միջի այլոց, կենտրոնական խորհրդում ամեն մի համայնքին 1861-ի Ռեգլամենտով վերապահված հավասարաչափ (երկուական) տեղերի դրույթը, որ անկասկած Լեռան վրա մարոնականների գերակշռությունը չեղոքացնելու թուրք-անգլիական նկրտումների արգասիքն էր, արդարացի չէր բնավ, հետևաբար և երկարակյաց լինել չէր կարող։ 1864-ի վերափոխված Ռեգլամենտով այդ դրույթը վերանայվեց։ Կատարված

փոփոխությունը հասկանալի դարձնելու համար անհրաժեշտ է անցնել Լեռան վարչական բաժանումները սահմանող երրորդ հոդվածին։

145 կիլոմետր երկարություն և 45 կիլոմետր միջին լայնություն ունեցող ինքնավար Լիբանան լեռը, շուրջ 6500 քառակուսի կիլոմետր ընդհանուր տարածքով, որ 1861-ին ստորաբաժանվում էր վեց կազաների կամ վարչական շրջանների, ըստ էության ոչ թե վիլայեթ էր՝ վալիի վարչակառավարմամբ, այլ փաստորեն վիլայեթի ենթամաս՝ սանջաք, ճիշտ է՝ ինքնավար, համենայն դեպս կառավարչապետությամբ մութասարիֆի։ Վերջինս, սակայն, ինքնավարության շնորհիվ ստորադրվում էր ոչ թե վալիին, այլ ուղղակի Բ. Դռան և նրան խոստացվում էր վալիին իրավահավասարության տվող մուշիր տիտղոսը։

1861-ին, ահա, վեց կազաները, որոնք 1864-ին վերածվելու էին յոթի, հետևյալներն էին.

1. Քուրա, «ներառյալ ստորին մասն ու մերձակա շրջանի մյուս հատվածները, որոնց ազգաբնակչությունը պատկանում է հույն-օրթոդոքս համայնքին, բացի ծովափին գտնվող և գրեթե բացառապես մահմեդականներով բնակեցված Քալամուն քաղաքից»։

2. «Լիբանանի հյուսիսային մասը, բացի Քուրայից, մինչև Նահր ալ-Քելբ»։ 1864-ին այս մեծ լեռնահատվածը երկատվելու էր.

ա) «Լիբանանի հյուսիսային այն մասը, որ պարփակում է Ջիբրեան Բշարրին, Զաուիան ու Բիլեան Բաթրունը» և որ այնուհետև ծանոթ է մնալու որպես Բաթրունի կազա։

բ) «Լիբանանի հյուսիսային այն մասը, որ պարփակում է Բիլեան Ջուբեյլը, Ջիբրեան Մունեյթրան, Ֆութուհը ու բուն Քեսրուանը մինչև Նահր ալ-Քելբ» և որ այնուհետև ծանոթ է մնալու որպես Քեսրուանի կազա։

3. «Զահլեն և շրջակայքը»։

4. «Մեթնը, ներառյալ քրիստոնեական Սահելը (մերձբեյրության դաշտավայրը—Ե. Ն.) և Քաթայի ու Սոլիմայի շրջանները»։

5. «Դամասկոս-Բեյրութ խճուղուց հարավ ընկնող շրջանը՝ մինչև Ջեզզին», որ այնուհետև ծանոթ է մնալու որպես Շուֆի կազա։

6. «Ջեզզինը և Թուֆֆահը», որոնք միասնաբար այնուհետև ծանոթ էին մնալու որպես Ջեզզինի կազա։

Դժվար չէ նկատել, որ Անգլիայի աջակցությամբ Թուրքիային հաջողվել էր կամայականորեն հնարավորին չափ, համարյա կիսով մեղմել Լեռան տարածքը, դուրս թողնել պատմականորեն լիբանանյան հարավային և արևելյան շրջանները, հատկապես Ուադի աթ-Թայմը, Բի-

կայի հովիտն ու Բաալբեկի շրջանը, նույնիսկ Զահլեին մերձակա Մոալլակա գյուղը, համարյա ամբողջ ծովափը՝ Տրիպոլի, Բեյրութ, Սայդա և Սուր քաղաքներով, բացի Ջունի-Ջուբեյլի շրջանում ծովի վրա մի փոքր ելքից (128, հտ. 2, 183)։ Ի դեպ, փաստորեն դեսպանաժողովի հունիսի 9-ի եզրափակիչ նիստում է, որ անգլիական պատվիրակության անդամ լորդ Դաֆֆերինի ամենաեռանդուն աջակցությամբ Ալի փաշային հաջողվեց պարտադրել լիբանանյան այսպիսի խեղանդամ սահմանագծումը։

1864-ի Ռեգլամենտով, վարչական կենտրոնական խորհրդի կազմում անդամներին ըստ համայնքների հավասարաչափ (երկուական) բաշխելու դրության վերացմամբ, ահա, մարոնականներին տրվելու էր չորս տեղ (հյուսիսի զույգ ենթահատվածներից, Մեթնից և Ջեզզինից մեկական), դրուզներին՝ երեք (Ջեզզինից, Շուֆից և Մեթնից), հույն-օրթոդոքսներին՝ երկու (Քուրայից և Մեթնից), հույն-կաթոլիկներին՝ մեկ (Զահլեից), սուններին՝ մեկ (Ջեզզինից) և մթուալլիներին՝ մեկ (Մեթնից)։

Օրգանական ստատուսի երրորդ հոդվածով (որն այս հարցում անփոփոխ էր մնալու 1864-ին) «շրջաններից յուրաքանչյուրում գործելու է վարչական մի պաշտոնատար, որ կառավարչի կողմից նշանակվելու է իր անդամների թվով և կամ իր մուլքերի տարածությամբ գերակշիռ համայնքի միջից»։ Այդ մասամուրները ունենալու էին կայմակամի աստիճան և 1864-ի Ռեգլամենտից հետո ըստ դավանության բաժանվելու էին այսպես. Շուֆում՝ դրուզ, Քուրայում՝ հույն-օրթոդոքս, Զահլեում՝ հույն-կաթոլիկ, Ջեզզինում, Մեթնում և հյուսիսի երկու շրջաններում՝ մարոնական։

Հինգերորդ հոդվածը 1861-ին ձևակերպված էր այսպես. «Վարչական շրջանները բաժանվելու են ենթաշրջանների (նահիաների), որոնց տերիտորիան ճշտորոշվելու է մոտավորապես նախկին իկլիմների հիմամբ և հնարավորության սահմաններում պարփակելու է ազգաբնակչության միատարր խմբեր (դավանակիցներ)։ Այդ ենթաշրջանները պետք է ստորաբաժանվեն ավանների (գյուղերի կամ գյուղական համայնքների), որոնք առնվազն 500 բնակչից բաղկացած պետք է լինեն։ Յուրաքանչյուր ենթաշրջանի գլխին կանգնելու է շրջանի կայմակամի առաջարկով կառավարչի կողմից նշանակված մի մուդիր, իսկ ենթաշրջանի մեջ մտնող յուրաքանչյուր համայնք ունենալու է իր առանձին շեյխին, որի իշխանությունը տարածվելու է միայն իր դավանակիցների վրա»։ 1864-ի Ռեգլամենտում, հասկանալիորեն չորրորդ հոդված դառնալով,

այս հոդվածը ենթարկվելու էր երկու փոփոխության։ Նախ հանվելու էր ենթաշրջանների միատարրության ցանկալիության դրույթը, որ խառը ազգաբնակչությամբ իկլիմների դեպքում անկիրառելի էր։ Ապա ճշտորոշվելու էր գյուղական շեյխերի հարցում «միայն իր դավանակիցներին» վրա իշխելու դրույթը, որ խառը ազգաբնակչությամբ գյուղերի դեպքում անմտություն կլիներ՝ այլադավաններին անշեյխության դատապարտելով։ Դրա համար էլ հարցը լուծվելու էր շեյխերին գյուղական բնակչության մեծամասնության ձայնով ընտրելու և կառավարչից հաստատում ստանալու դրույթի օգնությամբ։

Նշենք, որ յոթ կազաներում նահիաների ու մուդիրների հարցը կարգավորվելու էր հետևյալ կերպ.

1. Քուրա, 50 բնակավայրով և 23990 բնակչով (5997 հարկատու այր), որից 17892-ը հույն-օրթոդոքս, 3640-ը մարոնական, 2360-ը սուննի։ Այստեղ ուղղափառ կայմակամին ստորադրվում էին երեք (հետագային չորս) մուդիրներ, երկուսը հույն-օրթոդոքս, մեկը սուննի (լրացուցիչը մարոնական)։ Կազան չուներ առանձին շրջկենտրոն։ Չորս նահիաները՝ Մերքեզ-կազա Քուրա, Հյուսիսային Քուրա, Կենտրոնական Քուրա և Քուեյթի, ունեին իրենց համապատասխան կենտրոնները՝ Քֆար Հազիր (500 բնակիչ), Քֆար Խայլ, Բիշմազդին և Քֆար Հայա։ Զորբան ընդգրկվելու էր Քուրայի մեջ։

2. Բաթրուն, 151 բնակավայրով և 63568 բնակչով (16720 հարկատու այր), որից շուրջ 53000-ը մարոնական, 4500-ը հույն-օրթոդոքս, 4500-ը շիի, 872-ը հույն-կաթոլիկ և 750-ը սուննի։ Այստեղ մարոնական կայմակամին ստորադրվում էին ութ մուդիրներ, յոթը մարոնական և մեկը շիի։ Շրջկենտրոնը՝ Բաթրուն։ Նահիաները՝ Բաթրուն, Հասբուն, Կանաաթ, Իհդին, Բշարրի, Զաուխա, Թաննուրին և Հերմել։

3. Քեսրուան, 226 բնակավայրով և 79455 բնակչով (19840 հարկատու այր, ըստ որում երեքը հայ), որից շուրջ 68000-ը մարոնական, 7000-ը շիի, 2000-ը հույն-օրթոդոքս, 1100-ը հույն-կաթոլիկ, 30-ը հայ-կաթողիկե։ Այստեղ մարոնական կայմակամին ստորադրվում էին տասը մուդիրներ, ութը մարոնական և երկուսը մթուալլի։ Շրջկենտրոն՝ Ղազիր, որ 1891-ին իր տեղը զիջելու էր Ջունիին՝ վերածված լինելով առանձին կասաբայի։ Նահիաները՝ Ջուբեյլ իսկելեսի (Նավահանգիստ), Մունեյթրա, Վերին Ջուբեյլ, Ջուրդ Ջուբեյլ, Ղուստա, Ջուբ, Ջուրդ Քեսրուան, Ֆութուհ, Ջունի և Շամսթար։

4. Զահլե, որ համանուն քաղաքի հետ Այն ադ-Դաուկ և Այն ալ-Մազրաա գյուղակները միավորելով, կազայից ավելի կասաբա պետք է

լիներ։ Բնակչությունը՝ 16674 (4146 հարկատու այր), որից 11436-ը հույն-կաթոլիկ, 2676-ը մարոնական, 2268-ը հույն-օրթոդոքս, 144-ը սուննի, 60-ը շիի, 45-ը լատին, 45-ը բողոքական։ Հույն-կաթոլիկ կայմակամը, նահիա չունենալով, չուներ նաև ստորադիր մուդիր։

5. Մեթն, 178 բնակավայրով և 92792 բնակչով (22360 հարկատու այր), որից շուրջ 56000-ը մարոնական, 18000-ը հույն-օրթոդոքս, 10000-ը դրուզ, 7000-ը հույն-կաթոլիկ, 1600-ը շիի, 150-ը սուննի։ Այստեղ մարոնական կայմակամին ստորադասվում էին հինգ (հետագայում վեց) մուդիրներ, չորսը մարոնական, մեկը հույն-օրթոդոքս (լրացուցիչը դրուզ)։ Շրջկենտրոնները՝ Ջդեյդե (ձմեռը), Բրումաննա կամ Բեյթ Մերի (ամառը)։ Նահիաները՝ Հյուսիսային Մեթն, Վերին Մեթն, Բասկինտա, Քաթաա, Շուեյր, Սահել։ Շրջկենտրոններից բացի հայտնի բնակավայրերից էին Քֆար Շիման, Հադեթը, Կասիմիյյան, Անթիլիասը, Դիբրայան, Բեյթ Շեբեբը, Համմանան և Մեյրուբան։

6. Շուֆ, 210 բնակավայրով և 95936 բնակչով (23903 հարկատու այր), որից շուրջ 40000-ը դրուզ, 30000-ը մարոնական, 9000-ը հույն-օրթոդոքս, 9000-ը սուննի, 7500-ը հույն կաթոլիկ, 1000-ը շիի և 600-ը բողոքական։ Այստեղ դրուզ կայմակամին ստորադրվում էին տասներկու մուդիրներ, յոթ դրուզ, չորս մարոնական և մեկ սուննի։ Շրջկենտրոնը՝ Բաակլին (5000 բնակիչ), որ դառնալու էր առանձին կասաբա կամ մերքեզ՝ Մանասիֆի նահիայում, որպես դրուզ ուքքալների գլխավոր շեյխի նստավայր։ Նահիաները՝ Շուֆին, Ստորին Ղարբ, Հյուսիսային Վերին Ղարբ, Հարավային Վերին Ղարբ, Խառուբ, Վերին Արքուբ, Հարավային Արքուբ, Հյուսիսային Արքուբ, Հարավային Ջուրդ, Հյուսիսային Ջուրդ, Մանասիֆ, Շահհար։ Կաղզայի ներսում ինքնուրույն միավորներ էին Դեյր ալ-Կամարի մուդիրությունը և մութասարիֆի նստավայրեր Բեյթ ադ-Դինն (ամառային) ու Բաաբդան (ձմեռային)։ Հայտնի բնակավայրերից էին Ալեյը, Սուք ալ-Ղարբը, Շուեյֆաթը, Բթեթարը, Բհամդունը, Ռաշմայան, Մոալլակաթ ադ-Դամուրը։

7. Ջեզզին, 107 բնակավայրով և 21743 բնակչով (5342 հարկատու այր), որից շուրջ 12000-ը մարոնական, 6000-ը հույն-կաթոլիկ, 3000-ը շիի, 450-ը դրուզ, 350-ը սուննի, 350-ը հույն-օրթոդոքս։ Շրջկենտրոնը՝ Ջեզզին։ Այստեղ մարոնական կայմակամին ստորադրվում էին երեք մուդիրներ, մեկական՝ մարոնական, հույն-կաթոլիկ և մթուալլի համայնքներից։

Դեյր ալ-Կամարը, որ կիպ-կպած յոթ գյուղերի հետ հայտարարվում էր ինքնուրույն Ռահիա, առաջին շրջանում հայ-կաթողիկե մուղիրով, ուներ 5372 բնակիչ (1356 հարկատու այր), որից 4664-ը մարոնական, 704-ը հույն-կաթոլիկ, 4-ը լատին (82, 204—205 և 217—221)։

Ինքնավար Լիբանան լեռան համար առաջադրված բնակչության 399530-ի հասնող թվաքանակից քրիստոնյա էին 319296-ը, մահմեդական՝ 80234-ը։ Առաջիններից հիմնականները ըստ համայնքների ներկայացնում էին հետևյալ թվաքանակները. մարոնական՝ 229680, հույն-օրթոդոքս՝ 54208, հույն-կաթոլիկ՝ 34472։ Երկրորդների համամասնությունը այսպիսին էր. դրուզ՝ 49812, շիի (հիմնականում մթուալլի)՝ 16846, սուննի՝ 13576։ Այլ խոսքով ինքնավար Լեռան վրա համայնքներն ըստ թվաքանակի պետք է դասավորվեին այս կերպ. առաջին՝ մարոնականները, երկրորդ՝ հույն-օրթոդոքսները, երրորդ՝ դրուզները, չորրորդ՝ հույն-կաթոլիկները, հինգերորդ՝ շիիները, վեցերորդ՝ սուննիները։

Եվ սակայն, անհրաժեշտ է, թո՛ղ պատմական ճշմարտության որոնումը, թեկուզ միայն պատմականորեն լիբանանյան ամբողջ հողատարածքը հաշվի առնելու սիրույն, նկատի ունենալ նաև ինքնավար Լիբանան լեռան շրջանակներից կամայականորեն դուրս թողնված հողատարածքը ևս, որ վերջին հաշվով ընդգրկվեց Բեյրութի և Սիրիայի վիլայեթների կազմում։

Բեյրութի վիլայեթի հինգ սանջաքներից (Բեյրութ, Տրիպոլի, Աքա, Լաթաքիա և Բալկա) առաջին երկուսը առնչվում էին լիբանանյան պատմական հողատարածքի հետ։

Բեյրութի վիլայեթի համանուն սանջաքի չորս կազաները, որոնք զգալի մասամբ լիբանանյան էին, հետևյալներն էին.

1. Բեյրութ մերկեզ-կազա, որ Բեյրութ շրջկենտրոնով կղզյակ էր ինքնավար Լեռան հողատարածքում և ուներ գերակշռաբար սուննի և հույն-օրթոդոքս, ապա մարոնական, երկրորդաբար նաև հույն-կաթոլիկ աղգաբնակչություն։

2. Սայդայի կազա, երեք նահիաներով (Շեքիֆ, Ջաբաա և Շումար), 137 բնակավայրով, 24619 բնակչով (9400-ը սուննի, 9300-ը մարոնական, 3500-ը հույն կաթոլիկ և 2600-ը շիի), Սայդա շրջկենտրոնով (11330 բնակիչ, որից 7400-ը սուննի և 1500-ը հույն-կաթոլիկ), Ջաբաա (3000 մթուալլի բնակչով), Նաբաթիա և Մազար բնակավայրերով։

3. Սուրի կազա, երեք նահիայով (Թաբնին, Քանաա և Մաարքահ), 133 բնակավայրով, 16443 բնակչով (շուրջ 3900-ը սուննի, 3500-ը հույն-կաթոլիկ, 1900-ը շիի, 1700-ը մարոնական, 1600-ը հույն օրթոդոքս),

Սուր շրջկենտրոնով (6000 բնակիչ, որից շուրջ 2000-ը մթուալլի, 1500-ը հույն-կաթոլիկ, 900-ը սուննի)։

4. Մերջ Այունի կազա, երեք նահիայով (Մերջ Այուն, Հունին, Հուլե), 53 բնակավայրով, 10599 բնակչով (շուրջ 8500-ը սուննի, 1000-ը շիի, 800-ը մարոնական), Իդայդիա շրջկենտրոնով (3000 խառը բնակչությամբ)։

Նույն Բեյրութի վիլայեթի Տրիպոլիի սանջաքի չորս կազաներից երկուսը՝ մերկեզ-կազա Թարաբլուսը, հատկապես շրջկենտրոն Տրիպոլիի նահիան (30110 բնակչով, ըստ որում Տրիպոլիի 23110 բնակչից 19900-ը սուննի, 2300-ը հույն-օրթոդոքս և 900-ը մարոնական, իսկ Մինայի 7000 բնակչից շուրջ 5000-ը սուննի, 1200-ը հույն-օրթոդոքս և 700-ը մարոնական), ինչպես նաև Աքքարի կազան (20378 բնակչով, որից 16400-ը սուննի, 1760-ը նուսկյրի, 1120-ը հույն-կաթոլիկ և 582-ը մարոնական, ըստ որում շրջկենտրոն Աքքարում 3500 բնակիչ) հիմնականում պետք է առնչվեն Լիբանան լեռան հետ։

Սիրիայի վիլայեթի կազաներից չորսը հիմնականում լիբանանյան էին.

1. Բաալբեկի կազայի 30000 բնակչով (9800-ը սուննի, 6600-ը շիի, 6200-ը հույն-կաթոլիկ, 4500-ը հույն-օրթոդոքս, 2200-ը մարոնական) 76 բնակավայրերից շրջկենտրոն Բաալբեկը (5000 բնակչից 2000-ը սուննի, 2000-ը շիի և 1000-ը մարոնական ու հույն-կաթոլիկ) և մի շարք գյուղեր էապես լիբանանյան էին։

2. Բիկաա ալ-Ղարբի կազայում, որն ուներ մեկ նահիա (Ջեբել Ջանին), 67 բնակավայրերից փաստորեն Ջահլեի արվարձան Մոալլական՝ Բիկաայի, Բաալբեկի ու Լիբանան լեռան սահմանագծերի հատման վայրում, Շթորան և մի շարք գյուղեր նույնպես լիբանանյան էին։

3. Հասբայայի կազայի 19 գյուղերի 14088 (3500-ը սուննի, 3400-ը դրուզ, 3200-ը հույն-օրթոդոքս, 2000-ը մարոնական, 1600-ը հույն-կաթոլիկ), այդ թվում Ջեբել աշ-Շեյխի լանջասկզբին Հասբայա շրջկենտրոնի 4100 (1400-ը դրուզ, 1200-ը հույն-օրթոդոքս, 1000-ը սուննի) բնակիչները պետք է առնչվեն Լեռան հետ։

4. Ռաշայայի կազայի 16 գյուղերի 14100 (6000-ը դրուզ, 5500-ը հույն-օրթոդոքս, 1000-ը մարոնական), այդ թվում Լիբանան լեռան և Ջեբել աշ-Շեյխի միջև ընկած բարձրավանդակում Ռաշայա շրջկենտրոնի 5100 (2500-ը հույն-օրթոդոքս, 2000-ը դրուզ) բնակիչները ևս պետք է առնչվեն Լեռան հետ (82, 240—245)։

Այս բոլորը նշանակում է, որ 1860-ական թթ. սկզբի Լիբանան լեռան 399530 բնակիչների թվաքանակին պիտի համադրել նաև Բեյրութի և Սիրիայի վիլայեթների համապատասխան շրջանների բնակչության թվահամարը, ստանալու համար 702304 թիվը։

Եվ սակայն ժամանակն է, որ վերադառնանք 1861-ի Ռեգլամենտին, որի վեցերորդ հոդվածը (1864-ի հինգերորդի հետ նույնական) ձևակերպված էր այսպես. «Օրենքի առաջ բոլորը հավասար են լինելու։ Վերացվելու են ավատապետական բոլոր, հատկապես մուկատաաճիների առանձնաշնորհները»։ Թեկուզ ֆեոդալական անպայմանական հողատիրությունը, այլ խոսքով ֆեոդալական հարաբերություններն ընդհանրապես չէին ոչնչացվում, բոլոր դեպքերում մանր-իշխանական վարչական թե դատական իրավունքների և առանձնաշնորհների վերացումը Ռեգլամենտի բերած առաջադիմական խոշորագույն պահերից մեկն էր։ Ճիշտ է, մուկատաաճիների դիմադրությունը կոտրելու համար կառավարիչները հարկադրվելու էին հաճախ նրանց առաջարկել-զիջել կայմակամական թե մուդիրական պաշտոնները, համենայն դեպս մուկատաաճիական ինստիտուտի վերացմամբ իսկ գյուղացիության դրությունը կարգավորման ու բարելավման եթե ոչ մայրուղու, ապա դռնե կածանի վրա էր ընկնելու։

1861-ի Ռեգլամենտի յոթերորդից մինչև տասնչորսերորդ հոդվածը ներառյալ (1864-ի Ռեգլամենտում վեցերորդից մինչև տասներեքերորդը ներառյալ) վերաբերում էին դատարաններին և դատավարման։ Ինչպես մեկ, այնպես էլ մյուս Ռեգլամենտում դատավարումը երեք աստիճանի էր. հաշտարար դատավոր, նախադատ և գերագույն ատյաններ։

1861-ի Ռեգլամենտով ամեն մի ենթաշրջանում համայնքներից յուրաքանչյուրի համար գործելու էր մեկ հաշտարար դատավոր, որի իրավասությունը տարածվելու էր սովորական «խախտումների» և մինչև 500 ղուրուշի վեճերի վրա։ Եթե բողոքարկվողը գտներ, որ դատավորը գանգատարկուի դավանակիցը լինելով, կարող է կողմնակալություն հանդես բերել, ապա իրավունք ուներ դիմելու նախադատ ատյանին։ 1864-ի Ռեգլամենտը հաշտարար դատավորի դերում պարզապես հաստատում էր գյուղական շեյխերին, նրանց իրավասությունը սահմանափակելով մինչև 200 ղուրուշի վեճերի վրա։

1861-ի Ռեգլամենտով, դարձյալ, ամեն մի շրջանում, տարբեր համայնքները ներկայացնող 3—6 մարդու մասնակցությամբ ստեղծվում էին նախադատ հաշտարար ատյաններ, որոնց իրավասությունը տարածվում էր տարբեր թեթև «հանցագործությունների» և դավանակիցների միջև 500 ղուրուշից բարձր վեճերի, իսկ տարադավանների միջև՝ ամեն մի

վեճի վրա, ըստ որում դատավարմանը բոլոր անդամների մասնակցությունն ու վճիռ կայացնելու համար ընդհանուր համաձայնությունը պարտադիր էին։ Ինչպես հաշտարար դատավորները, այնպես էլ շրջանների նախագահ ատյանների անդամները, «ընտրվելու և նշանակվելու են իրենց համայնքի պետի կողմից՝ ...երեցիների հետ խորհրդակցելուց հետո, իսկ կառավարիչը հաստատելու է նրանց իրենց պաշտոններում»։ 1864-ի Ռեգլամենտով ոչ միայն անխտիր բոլոր դատավորներին նշանակելու իրավունքը տրվում էր կառավարչին, այլև ամբողջ Լեռան համար նախատեսվում էին միայն երեք նախագահ ատյաններ։ Դրանցից յուրաքանչյուրի համար կառավարչից նշանակված մեկ դատավորի և մեկ ընթերակայի կողքին գլխավոր համայնքները նշանակում էին պաշտոնական վեց դատապաշտպաններ։ Կառավարիչն էր որոշելու նախագահ ատյանների նստավայրը և կարող էր դրանց թիվը, անհրաժեշտության դեպքում, կրկնապատկել։

1861-ի Ռեգլամենտով կառավարչի նստավայրում գործելու էր գերագույն դատարան, որին անդամակցելու էին վեց գլխավոր համայնքներից երկուական ներկայացուցիչներ, նաև մովսիսական կամ բողոքական համայնքներից մեկական ներկայացուցիչներ, եթե իրենց դավանակիցը դատվեր։ Գերագույն դատարանը, որին եռամսյա ժամկետով հերթականությամբ նախագահելու էին բոլոր անդամները, դատելու էր քրեական ոճիրները, որոնց վերաբերյալ «վճիռները ի կատար են ածվելու կայսրության մյուս մասերում ի զորու եղող ձևականությունների կատարումից հետո միայն»։ 1864-ի Ռեգլամենտով գերագույն դատարանի վերաբերյալ նույնպես փոփոխություն էր կատարվում. կառավարիչը նշանակում էր վեց դավանություններից մեկական դատավոր, որոնց համայնքները կցում էին մեկական պաշտոնական դատապաշտպաններ։ Նախագահ էր նշանակվում կառավարչի ներկայացուցիչը։

Մնացած բոլոր հարցերում 1864-ի Ռեգլամենտը պարզապես կրկնում էր 1861-ի Ռեգլամենտի դրույթները։ Առևտրական բոլոր դատերը, ինչպես նաև օտարահպատակների կամ տերությունների պաշտպանյալների ու լեռնականների միջև ամեն մի վեճ, ուղարկվելու էր Բեյրութի առևտրական դատարանի քննարկման։ Լեռան վրա հանցանք կամ ոճիր գործած ամեն մի օսմանահպատակ դատվելու էր տեղում։ Դատական բոլոր խորհուրդների նիստերը հրապարակային էին լինելու և համապատասխան քարտուղարի կողմից արձանագրություն էր պահվելու։ Կալվածական ամեն մի առք ու վաճառք օրինական ուժ էր ստանալու արձանագրման ենթարկվելուց հետո միայն։ Բոլոր դատավորներին աշխա-

տավարձ էր նշանակվելու և «եթե քննությամբ հաստատվի, որ նրանցից մեկն ու մեկը կաշառք է վերցրել կամ այլ որևէ արարքով իր պաշտոնին անարժան եղել, ապա պաշտոնազրկվելու է և միաժամանակ իր գործած հանցանքին համապատասխան պատիժ է կրելու»։

Լեռան ինքնավարության և կառավարչի իշխանության ծավալի տեսակետից հետաքրքրական էր տասնեհինգերորդ (1864-ի Ռեգլամենտի տասնչորսերորդ) հոդվածը, որ ասում էր.

«Սովորական ժամանակ կարգ ու կանոնի պահպանումը և օրենքների կիրառումը ապահովվելու են բացառապես կառավարչի կողմից, խառը ոստիկանական կորպուսի միջոցով, որ հաղար բնակչին յոթ ոստիկանի հաշվով կազմվելու է կամավոր զորագրման հիմունքով։ Քանի որ կամայական պատժամիջոցները փոխարինվելու են հարկադրանքի այլ միջոցներով, ինչպիսիք են ձերբակալությունն ու բանտարկությունը, ամենախիստ պատիժների սպառնալիքով ոստիկաններին արգելվելու է բնակչությունից պահանջել որևէ տուգանք, լինի դա հնչուն փողով թե բնամթերքով։ Ոստիկանները կրելու են համազգեստ կամ իրենց պաշտոնին համապատասխան այլ տարբերանշան։ Իշխանության որևէ հրամանի գործադրության դեպքում հնարավորության սահմաններում օգտագործվելու են պատժամիջոցի ենթարկվող անհատի աղգության կամ դավանության պատկանող ոստիկաններ։

«Մինչև որ տեղական ոստիկանությունը կառավարչի կողմից ընդունակ ճանաչվի սովորական պայմաններում իրեն առաջադրվող բոլոր պարտականությունները ի գլուխ հանելու, Բեյրութ-Դամասկոս և Սայդա-Տրիպոլի ճանապարհները վերահսկվելու են կայսերական զորքերի կողմից։ Այդ զորքերը գտնվելու են Լեռան կառավարչի հրամանների ներքո։

«Արտակարգ պարագաներում և անհրաժեշտության դեպքում, վարչական կենտրոնական խորհրդի կարծիքն առնելուց հետո, կառավարիչը կարող է Սիրիայի զինվորական իշխանություններից խնդրել կանոնավոր զորքերի աջակցությունը։ Այդ զորքերի հրամանատար սպան ձեռք առնելիք միջոցների հարցում պետք է կանխորոշ ապահովի Լեռան կառավարչի համաձայնությունը և էապես զինվորական բոլոր հարցերի համար որոշում կայացնելու և նախաձեռնություն հանդես բերելու իր իրավունքը պահելով հանդերձ, Լիբանանում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանում ենթարկվելու է Լեռան կառավարչին և միայն վերջինիս պատասխանատվության ներքո է գործելու։ Զորքերը Լիբանանից հեռանալու են՝ հենց որ կառավարիչն իրենց հրամանատարին պաշտոնապես հայտարարի, որ

այն առաքելությունը, որի համար հրավիրվել էին, գլուխ հանված է արդեն»։

Անհրաժեշտ է նշել, որ Պոլսի դեսպանաժողովի հունիսի 6-ի նիստի օրակարգի գլխավոր հարցը Ալի փաշայի պահանջն էր եղել՝ օսմանյան կառավարությանն իրավունք վերապահել ցանկացած ժամանակ իր զորքերը մտցնելու Լիբանան լեռ, այնպես, ինչպես կայսրության մյուս նահանգները։ Անգլիական դեսպանն այս դեպքում ևս, իբր թե անդորրության պահպանման անհրաժեշտության նկատառումով, եռանդաշատ պաշտպանել էր Թուրքական պահանջը, որ սակայն մերժվել էր մյուս պատվիրակների կողմի դիրքորոշման շնորհիվ։

1861-ի Ռեգլամենտին առնչվող պրոտոկոլում լրացուցիչ ընդգծվում էր, որ «Բեյրութ-Դամասկոս մեծ ճանապարհի անվտանգությունն ու աղատությունը մշտապես ապահովելու համար Բ. Դուռը այդ ճանապարհի հարմար թվացող մի կետում հաստատելու է հսկիչ զորակայան»։

Ուշագրավ էր նաև 1861-ի Ռեգլամենտի տասնվեցերորդ հոդվածը, որ վերաբերում էր հարկերին և որ համարյա նույնությամբ պահպանվեց 1864-ին. «Օսմանյան Բ. Դուռն իրեն իրավունք է վերապահում Լիբանան լեռան կառավարչի միջոցով գանձելու Լեռան հարկային այժմյան դրույքը՝ 3500 քսակ, դրույք, որ կարող է բարձրացվել մինչև 7000 քսակի՝ հենց որ հանգամանքները թույլատրեն։ Հասկանալի է, որ այդ հարկերի հասույթը նախ և առաջ ծառայելու է Լեռան վարչության պահպանման և նրա հանրօգուտ ծախսումների համար։ Միայն ավելացած գումարը, եթե այդպիսին մնա, մտնելու է (Օսմանյան) պետության գանձարկղը։ Եթե վարչության կանոնավոր աշխատանքի համար խիստ անհրաժեշտ ընդհանուր ծախսերը հավաքված հարկերի գումարից ավելի լինեն, ապա Բ. Դուռը հոգալու է լրացուցիչ այդ ծախսերը։ Հասկանալի է, սակայն, որ հանրօգուտ շինությունների կամ արտակարգ այլ ծախսերի համար Բ. Դուռը պատասխանատու կարող է լինել այն դեպքում միայն, եթե նախօրոք հաստատած լինի դրանք»։ Ի դեպ, հենց նույն՝ 1861-ի Ռեգլամենտի լրացուցիչ մի հոդվածով ընդգծվում էր, որ «7000 քսակը բացարձակ սահման չէ բնավ և որ եթե մի կողմից Լեռան հարկը մինչև այդ դրույքը բարձրացնելու համար անհրաժեշտ է սպասել, որ վերջին իրադարձությունների առաջ բերած տագնապը վերանա, մյուս կողմից կարող է պատահել, որ նոր վարչակառույցի կազմակերպման ծախսերը անհրաժեշտ դարձնեն գանձումը նոր հարկերի, որոնց գումարը նախկին հարկի հետ միասին նույնիսկ գերազանցի 7000 քսակի դրույքը։ Նույնպես հասկանալի է, որ հարկը 7000 քսակի դրույքից ավելի կարող է

բարձրացվել միայն Բ. Դռան թույլտվությամբ և վարչական կենտրոնական խորհրդի մեծամասնության համաձայնությամբ։ Մյուս կողմից կառավարիչը այդ իրավունքից պետք է օգտվի արտակարգ վերապահությամբ և տեսպես ու ամեն բանից առաջ ձգտի Լեռան սովորական հասույթների ու ծախսերի բարեհաջող հավասարակշռման»։

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ 1861-ի Ռեգլամենտին հանգամանորեն անդրադարձած սովետական միակ հեղինակը՝ Պանչենկովան, հարկային տարեկան վճարագումարի 7000 քսակի հասցվելու հավանականության հետ կապված «հենց որ հանգամանքները թույլատրեն» դարձվածքն ընկալելով որպես «եթե իրադրությունը պահանջի» (33, 203), այսպիսի եզրակացության է հանգել. «Հետևաբար հարկերը սուլթանական գանձարան պիտի հասնեին նախկին չափերով։ Ավելին, թուրքական կառավարությունը իրավունք էր վերապահում այդ գումարը կրկնապատկել»։ Կարծում ենք, որ 1861-ի Ռեգլամենտի տասնվեցերորդ (1864-ի Ռեգլամենտի տասնհինգերորդի հետ նույնական) հոդվածը, որ մեջ բերվեց այստեղ, այդպիսի եզրակացության հիմք պետք չէ տար։ Ընդհակառակը։ Բոլոր դեպքերում փաստ է, որ Օսմանյան գանձատունը, հարգելով իր հանձնառությունը, 1862-ին հարկադրվելու էր հոգալ 20 հազար թուրքական լիրայի բացը և շարունակելու էր նույնն անել ընդհուպ մինչև 1880, երբ Լեռան բյուջեն վերջապես հավասարակշռվելու էր (195, հտ. 1, 148)։

Եվ վերջապես 1861-ի վերջին՝ տասնյոթերորդ հոդվածը (որի հետ նույնական է 1864-ի տասնվեցերորդ հոդվածը) գտնում էր, որ «հնարավորության չափ շուտ ձեռնարկվելու է ըստ գյուղերի և դավանությունների ազգաբնակչության մարդահամարին, ինչպես նաև մշակելի բոլոր հողակտորների չափագրման»։

Ի լրումն 1861-ի Ռեգլամենտի, 1864-ինը ուներ նաև լրացուցիչ (տասնյոթերորդ և տասնութերորդ) հոդվածներ, որոնք վերաբերում էին նախ հոգևորականների դատավարման, որ հայտարարվում էր հոգևոր դատարանների ձեռնահասության ենթակա, ապա և հոգևոր հաստատությունների կողմից դատավարման ենթակա մարդկանց ապաստանի իրավունքից զրկման։

Օրգանական ստատուսը, որ Լիբանան լեռան ինքնավարությունը պաշտոնապես վավերագրում էր, լիբանանյան նոր պատմության անկյունադարձային կարևորագույն պահն էր նշում։ Շիհաբների միասնական ամիրայության վերացումից երկու տասնամյակ անց, երբ անգամ արյան ճապաղիքի մեջ թաթախված, իր դարավոր պատմության ընթաց-

քում առաջին անգամ լինելով օսմանցիների ոտքի ուղղակի կոխան դարձած, բազում սերունդների ոգորումներով համախմբվելուց հետո ներքնապես բղկտված և վարչականորեն երկատված, Լեռը, թեկուզ տարածքով որոշապես խեղանդամված, վերստին միավորվում էր ու միասնականանում։

Օրդանական ստատուսն իր հետ բերում էր նաև մի այլ առավելություն։ Թեկուզ ոչ-տեղաբնիկ, քրիստոնյա կառավարիչները Բ. Դռան դրածոները չէին երբեք, ինչպես պնդվել է մեր պատմագրության մեջ (33, 204)։ Նրանք, ճիշտ է, առաջադրվելու էին Բ. Դռան կողմից, սակայն անպայման պետք է ստանային տերությունների միաձայն համամտությունը և պաշտոնավարելու էին որոշակի մի ժամանակաշրջանում։ Այլ խոսքով, նրանք ավելին էին լինելու, քան էյալեթների մուշիրները, որոնք նշանակման վաղորդայնին իսկ ըստ կամս կարող էին ետ կանչվել, նույնիսկ ոչնչացվել։ Որոշ իմաստով նրանք նույնիսկ ավելին էին լինելու, քան իշխանապետ մեծ ամիրները, որոնք թեկուզ պաշտոնավարման ժամկետ չունեին, սակայն յուրաքանչյուր բոպե կարող էին ականատես լինել ասկյարների օրդուի ներխուժման և իրենց համար սրված դահճի կացնի գործարկման։ Նշանակում է, որ մի անգամ լիազորություն ստացած մութասարիֆները կարող էին հարգալիր հեռավորություն պահել Բ. Դռնից, իրենց համար սահմանված իշխանության շրջանակներում ազատորեն գործել հօգուտ Լեռան անդորրության ու բարգավաճման և իրավականորեն խոչընդոտել ու խափանել օսմանցիների ամեն մի, հատկապես ռազմական, միջամտություն իրենց կառավարման հանձնված հողատարածքի ներքին գործերին։

Օրդանական ստատուսը շուտով ապացույցն էր տալու մի կարևոր իրողության, այն բանի, որ լիբանանյան համայնքների անդորրն ու առաջադիմությունը հնարավոր էին միայն ու միայն թուրքական անմիջական վարչակառավարումից ազատվելու, թուրքական լծի թեկուզ անվանական պահպանման այլ գործնականում վերացման պայմաններում, հանգամանք, որ չէր կարող հուշարար նախադեպ չլինել Օսմանյան կայսրության դժոխքում տվայտել շարունակող ժողովուրդներին հուսադրելու, նրանց հոգում եթե ոչ ազգային անկախության ցանկալի եղեմին, գոնե ինքնավարության քավարանին հասնելու երազանք բորբոքելով։ Իսկ դա, թեկուզ և չափազանցված պատրանքներ առաջացնելով Ռեգլամենտը պարտադրած տերությունների միջամտության կենսականության նկատմամբ, վերջին հաշվով չէր կարող չխթանել կայսրության կազմում

շղթայված առաջին հերթին քրիստոնյա ժողովուրդների աղատարաղձ ոգորումները։

* * *

1861-ի հունիսին, ավարտելով Ռեգլամենտի մշակման և ընդունման հետ կապված գործերը, միջազգային հանձնաժողովի անդամները վերադարձան Բեյրութ, որպեսզի ոչ միայն լուծեն վնասուց հատուցումների գորդյան հանգույցը, այլև և ավելի շուտ անմիջականորեն հետևեն նոր վարչակառույցի կիրառման և նոր վարչակարգի անդրանիկ քայլերին։

Հանձնաժողովի հետ հունիսի 22-ին Բեյրութ ժամանեց նաև Բ. Դոնից տերությունների համաձայնությամբ, հիմնականում Ռուսաստանի և Պրուսիայի պնդմամբ, երեք տարով ինքնավար Լիբանան լեռան առաջին կառավարիչ (մութասարիֆ) նշանակված և վեզիրի աստիճան ու մուշիրի տիտղոս ստացած Կարապետ-Հարությունը (Արթին) փաշա Տաուտյանը (1816—1873), որ պատմագրության ավելի է հայտնի օսմանյան միջավայրում իրեն տրված Տաուտ փաշա անվամբ։

Օսմանյան կայսրության առավել ընդունակ և լուսավորյալ աստիճանավորներից (37, 177), ծննդյամբ պոլսահայ, մասնագիտությամբ իրավաբան և իրավագիտական աշխատությունների հեղինակ, Բեռլինի գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ ու Վիեննայի համալսարանից իրավաբանական գիտությունների դոկտոր, նախկինում, ի շարս այլ պաշտոնների, Բեռլինում դեսպանատան լիազոր կցորդի, Վիեննայում հյուպատոսի, կայսերական թղթատարության տնօրենի և ուրիշ պատասխանատու աթոռներ զբաղեցրած, Տաուտյան փաշան կորովով և նվիրվածությամբ ձեռնարկեց իր նոր պաշտոնին։

Լիբանանյան նոր պատմության հարցերով զբաղված հեղինակները արտակարգ միաբանությամբ ընդգծել են հայազգի գործչի մարդկային թե վարչապետական արժանիքները, Լիբանան լեռան համար նրա ուղղակի նախախնամական դերը։ «Հազիվ թե կարելի լիներ ավելի հաջող ընտրություն» կատարել,—գրել է Սալիբին (37, 177)։ «Արտակարգ ընդունակ մարդ»,— արձանագրել է Հիթթին (109, 696)։ «Երևելի վարչակառավարիչ»,—հարկ է համարել շեշտել Լամմենը, ավելացնելով, որ Լեռան «հարությունը եթե մասամբ լեռնականների կորովի և նախաձեռնող ոգու արդյունքն էր, ապա դրանում կարևոր բաժին ունեցան նաև մութասարիֆները և հատկապես առաջինը՝ հայազգի Տաուտ փաշան» (128, հտ. 2, 189—190)։ Թարբինը զարմանքով ու հիացմունքով է շարադրել դրժ-

վարագույն պայմաններում նրա նվաճումները (198, 7)։ «Լիբանանում իր վարչական գործունեության մեջ... հանդես բերեց իրեն վստահված երկրի նկատմամբ ամենակատարյալ, ամենագործուն հոգածությունը»,— վկայել է Կրիմսկին (26, 571—572)։ Ն. Դահդահը, լիբանանյան մերօրյա անկախ պետությունն իր բնական սահմաններում իրականություն դարձնող ազգակների շարքում առաջնային տեղ է տվել նրա գործունեության (83, 28)։ Հայազգի փաշայի օրոք Լեռը «կատարյալ անկախություն» էր վայելում,— հաստատել է վերջին մութասարիֆ Գուլումջյան փաշայի անձնական քարտուղար ալ-Հաքիմը (222, 21)։

Կարիք չկա, սակայն, երկարել տարբեր և հայազգի կառավարչին իրականում ոչ-միշտ համակիր հեղինակների վկայությունների շարքը, քանի որ այն վերջին հաշվով կարող է Տաուտյան փաշայի գործունեության հարթընթացի վերաբերյալ թյուրիմացություն առաջ բերել։

Իրականում Լիբանանյան նոր պատմության նախընթաց ցանկացած դրվագում հանդես եկած գործիչներից և ոչ մեկին այնքան խառնաշփոթ իրադրություն, այնքան ծանր պատասխանատվություն, այնքան դժվարին դեր բաժին չէր ընկել, որքան՝ Տաուտյանին։ Ոչ որի, ներառյալ և Բեշիր II-ին, նոր ժամանակներում Լեռը չէր առաջադրել այնքան բարդ ու դժվարլուծելի խնդիրներ, որքան՝ հայազգի դիվանագետին, որ բառացիորեն իրեն Բեյրութ բերող նավի վրա էր, այն էլ իրեն տրամադրված Ռեգլամենտի պատճենի օգնությամբ, ծանոթացել իր վարչակառավարումից հավանարար ինչ-ոչ ասես չակնկալող երկրամասի, իր համար ըստ էության անծանոթ, խայտաբղետ և զարմանալիորեն հակամարտ համայնքներով բնակված Լեռան իրադրության, նաև իր իրավասություններին, ավելի շուտ իր պարտականության, իր պարտավորության՝ այդ իրադրությունն ամեն գնով հեղաշրջելու, այն էլ՝ ներքին ու արտաքին դժոխային հանգույցներ լուծելու գնով։

Պետք է խոստովանել, որ արդարության իր զգացողության և բնածին իր իմաստության (37, 147—148) շնորհիվ Տաուտյանը կարողացավ ամեն բանից առաջ հասնել մեծագույն նվաճման՝ խաղաղության և կարգ ու կանոնի վերահաստատման, մանավանդ տարբեր համայնքների միջև արագ հաշտության, մի բան, որ ամենալավատեսներին իսկ անհնարին էր թվում։

Եվ պատահական չէ, բնավ, որ 1864-ի սեպտեմբերին, երբ 1861-ի Ռեգլամենտը վերանայվել էր արդեն, Կարապետ-Հարություն Տաուտյանը հնգամյա ժամկետով վերստին կառավարիչ նշանակվեց։

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Լիբանանը որպես պետություն իր աշխարհագրական այժմյան սահմաններով աշխարհի քարտեզի վրա հայտնվեց 1920 թ. սեպտեմբերի 1-ին։

Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Օսմանյան կայսրության արաբական երկրամասերի շուրջ անգլիական և ֆրանսիական իմպերիալիստների պայքարը 1920 թ. ապրիլին Ազգերի Լիգայի Խորհրդի Սան Ռեմոյի կոնֆերանսում ավարտվեց կոմպրոմիսով։ Ֆրանսիային որպես ենթամանդատային տերիտորիա բաժին հասավ պատմաաշխարհագրական Սիրիայի զգալի մասը։

Մանդատային սիստեմը ոչ այլ ինչ էր, եթե ոչ գաղութային տիրապետության քողարկյալ ձև։ Ինչպես իր ժամանակին գրել է Վ. Ի. Լենինը (ԵԼԺ, հտ. 39, 401), «երբ խոսում են գաղութների մանդատներ բաժանելու մասին, մենք հիանալի գիտենք, որ դա մանդատների բաժանումն է հափշտակման, կողոպուտի համար, որ դա երկրագնդի բնակչության մի չնչին մասին հատկացվող իրավունքների բաժանումն է երկրագնդի բնակչության մեծամասնությունը շահագործելու համար»։

Ինչքան էլ քողարկյալ, ֆրանսիական մանդատի էությունը անհասկանալի չէր երկրամասի ժողովրդական զանգվածներին, որոնք հակաօսմանյան ազատագրական պայքարի մեծ դպրոց էին անցել։ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության ներգործությամբ նոր խթան ստացած, նրանց պայքարը ուղղվելու էր ազատության և անկախության իրենց երազանքների վրա գերեղմանաքար դնել փորձող ֆրանսիական իմպերիալիզմի դեմ։ Վերջինս «հափշտակման ու կողոպուտի» իր մանդատն ամրապնդելու համար հասկանալիորեն պիտի հետևեր բոլոր ժամանակների նվաճողների «բաժանիր, որ տիրես» փորձված սկզբունքին։ Այս սկզբունքի կիրառման հետևանքով պատմաաշխարհագրական Սիրիայի այն հատվածում, որ ժամանակակից Սիրիական-արաբական հանրապետության հողատարածքն է կազմում, 1920-ական թթ. սկզբից պիտի հայտնվեին մի շարք արհեստական ու դաճաճ «պետու-

թյուններ»։ Հիմնականում կրոնադավանական հիմքի վրա հորինված այդ «պետությունները», սակայն, անխուսափելիորեն ասուպային գոյություն էին ունենալու և անհետանալու էին սիրիական ժողովրդի համախումբ և նպատակասլաց հերոսամարտի պայմաններում։

Պատմաաշխարհագրական Սիրիայի հողատարածքում ֆրանսիական իմպերիալիզմի լիազորված ներկայացուցչի՝ գլխավոր կոմիսարի դեկրետով հռչակված պետությունների թվում էր նաև «Մեծն Լիբանանը», որ 1920 թ. սեպտեմբերին կազմավորվեց Լիբանան լեռան, Բիկայի դաշտավայրի և Տրիպոլի, Բեյրութ, Սայդա և Սուր քաղաքները համախմբող ծովափնյա շերտի հիմքի վրա։ Եվ սակայն լիբանանյան նորաստեղծ պետությունը սիրիական մյուս «պետություններից» հիմնովին տարբերվում էր իր պատմաաշխարհագրական ու վարչաքաղաքական բաղմազարյան հիմքով և տվյալ դեպքում պարզապես օգտագործվում էր որպես մի բնօրինակ, որի վրա գաղութարարները արվեստագետի վարպետությամբ փորձում էին կաղապարել ու կենսավորել իրենց ձեռակերտ-արհեստական «պետություններին»։ Այդ պատճառով էլ պատահական չէր, բնավ, որ լիբանանյան պետությունը, Սիրիայի հետ սերտագույն հարաբերությունների ու համագործակցության պայմաններում, պարտադրեց իր կենսունակությունը և իր զավակների հերոսական պայքարով 1943 թ. նոյեմբերի 22-ին գաղութարարներից նվաճեց իր քաղաքական անկախությունը։

Պատմական այդ նվաճումը ձեռք բերվեց շնորհիվ այն օբյեկտիվ հանգամանքի, որ նախընթաց հարյուրամյակներում կոփվել և ավելի ու ավելի էր կերպավորվել լիբանանյան մի ընդհանրություն, որի հետ հարկադրաբար էին հաշվի նստել պատմաաշխարհագրական Սիրիան ընդհանուր առմամբ ըստ կամս և իրենց նկատառումներին համապատասխան մասնատող իմպերիալիստները։ Լիբանանյան այդ ընդհանրության կորիզը օսմանյան տիրապետության առաջին իսկ օրից սուլթաններին իր հրաշակի ինքնուրույնությունը պարտադրած դրուզական ամիրայությունն էր, որ XVIII դարավերջին արդեն վեր էր ածվել ամբողջ Լիբանան լեռան կիսանկախ իշխանապետության՝ շնորհիվ այն բանի, որ գործնականում համախմբել և միաշաղկապել էր լիբանանյան ժողովրդի գլխավոր բաղադրատարրերին՝ մարոնականներին, դրուզներին, շիիներին, օրթոդոքս թե կաթոլիկ մալքիներին և սուննիներին։ Օսմանյան բռնակալության և անգլիական ու ֆրանսիական գաղութարարության հաշվարկներին, անշուշտ, դեմընթաց էր նման համախմբումը, որի պայմաններում նոր թափ ու տարողություն էր ստանում լիբանանյան

աշխատավոր ժողովրդի պայքարը՝ ի խնդիր ազգային թե սոցիալական ազատագրության և առաջընթացի։ Պատահական չէ, ուրեմն, որ արտաքին ուժերի մեքենայությունների ու աշխարհիկ թե հոգևոր ներքին հետադեմ ազնվականության մեղսակցության հետևանքով այդ պայքարը XIX դարի կեսերին բաղմիցս շեղվեց իր հունից և թաթախվեց միջհամայնքային արյունահեղությունների մեջ։

Անհրաժեշտ է ընդգծել, սակայն, որ լիբանանյան աշխատավոր ժողովուրդը վերջ ի վերջո իր մեջ ուժ գտավ հաղթահարելու կրոնադավանական երկփեղկումները և 1861-ին ձևոք բերեց ինքնավարության պաշտոնական ստատուս։ Այդ ստատուսը, ճիշտ է, վերաբերում էր Լիբանան լեռան թեկուզ միայն մի, հետևաբար ժամանակակից Լիբանանի հոգատարածքի որոշակի մի հատվածին, սակայն ինքնավար մութասարիֆությունը, շնորհիվ առաջին կառավարիչ Կարապետ-Արթին փաշա Տաուտյանի ու նրա շուրջ հետզհետե համախմբված լիբանանցի հայրենասեր գործիչների ջանքերի, հանդիսացավ այն օջախը, որում աստիճանաբար վերստին միասնականացավ ու ամրապնդվեց ամիրայության շրջանում կերպավորված լիբանանյան ազգային թե տերիտորիալ ընդհանրությունը։

Ինչ խոսք, որ այդ ընդհանրության համար վճռորոշ նշանակություն ունեցավ մանավանդ դավանական տարբեր խմբավորումների հաշտ ու խաղաղ գոյակցումն ու համագործակցումը։ Պատմաքաղաքական նոր իրադրության հետ նաև սոցիալ-տնտեսական տեղաշարժերից խթանված և զգալիորեն ամրապնդված միջհամայնքային դաշնության խափանումը, ինչպես նախկինում, 1860-ական թթ. հետո էլ մնաց և առ այսօր մնում է Լիբանանի քաղաքական անկախության, տերիտորիալ ամբողջականության և սոցիալ-տնտեսական առաջընթացին սպառնացող արտաքին ուժերի գլխավոր գործիքը, մանավանդ որ, ոչ-առանց ֆրանսիական «հոգատարների» մեղսակցության, 1943-ի նոյեմբերին անկախ Լիբանանի պետական վարչակառույցի հիմքում դրվելու էր համայնքայնության (կոնֆեսիոնալիզմի) սկզբունքը։

Եզրափակելու համար շեշտենք, որ 1860-ական թթ. երկրորդ կեսին Լիբանանի նոր պատմությունը թևակոխեց իր երկրորդ, արտաքնապես հարաբերաբար խաղաղ, այլ ներքին տեղաշարժերով անչափ հուզումնահար ժամանակաշրջանը։ Կապիտալիստական արտադրահարաբերությունների ինքնահաստատման փորձերի աշխուժացումը, մշակութային-լուսավորական ու դրանից նպաստավորված ազգային զարթոնքը, սիրիական ազգայնական գաղափարախոսության սաղմնավորումը՝ մարդ-

նական-քրիստոնեական տարրի գերակշռությամբ, օսմանյան լծի ծանրացման ընթացքը Աբդուլ Համիդի գուլումի, ապա և երիտթուրքերի իշխանության տարիներին և ազգային-ազատագրական միտումների հասունացումը. ահա ոչ-ամբողջական շարահարումը այն ուշագրավ երևույթների, որոնցով բնորոշվում է լիբանանյան նոր պատմության երկրորդ հատվածը։ Տաուտյան փաշայի կենտրոնական իշխանության դեմ մարոնական Քարամի ապստամբական-անջատողական շարժմամբ ու դրա հետևանքով Լեռան հուզումնահարմամբ սկսող, կարմիր սուլթանի և երիտթուրքական եռապետության ցեղասպանական ժամանակաշրջաններն ընդգրկող ու Լեռան և հարակից պատմականորեն լիբանանյան հողատարածքի միավորմամբ ստեղծված «Մեծն Լիբանանի պետության» վրա ֆրանսիական մանդատի հաստատման հանգող այդ ժամանակահատվածի պատմությունը սույն աշխատության առաջիկայի հրատարակվելիք երկրորդ գիրքն է լինելու։ Բոլոր դեպքերում ժամանակաշրջանը, որ սովետական արաբագիտության նվաճումներից խիստ նպաստավորված սույն գրքի առարկան դարձավ, այն անկյունաքարն էր, առանց որի հասկանալի չէին լինի ինչպես նոր պատմության երկրորդ հատվածի, այնպես էլ հատկապես նորագույն ժամանակների լիբանանյան պատմաքաղաքական և սոցիալ-տնտեսական իրադարձությունները։

ՀԱՅԿ ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԼԻՐԱՆԱՆՅԱՆ ԱՄԻՐԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆ ՊԱՏՄԱԿԱՆՈՐԵՆ ԱՂԵՐՍՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՄԱՆՐԱՀԱՏՎԱԾՆԵՐԸ XVIII ԴԱՐԱՎԵՐՋԻՆ


Սաֆիտա
ՀՈՄՍ
ԱՔՔԱՐ
ՏՐԻՊՈԼԻ
ՉԱՆՆԻՅԱՆ
ՀԵՐՄԵԼ
ՔՈՒԵՅԹ
ԲՈՒԵՏ ԲԱԹՐՈՒՆ
ԲՈՒԵՏ ՋՈՒԲԵՅԼ
ՋԻԲԵՏ ՄՈՒՆԵՅԹՐԱ
ԲԱԼԱԲԵԿ
ԱՆԴՐԻԲԱՆԼԻ
ՔԵՍՐՈՒԱՆ
ՔԱԹԱ
ԲԻԿԱԼ
ՇՈՒՇ ԱԼ-ԲԱՅԱԴԻ
ՄԵԹԼ
ՇԱՀՀԱՐ
ՄԱՆԱՍԻՏ
ԱՐՔՈՒԹ
ՇՈՒՇ
ՄԱՍՈՒՄ
ՄԱՍՈՒՄ
ՄԵՍՊՈՏԱՄԻԱ
ՄԵՍՊՈՏԱՄԻԱ
ՄԵՍՊՈՏԱՄԻԱ

ԻՆՔՆԱՎԱՐ ԼԻԲԱՆԱՆ ԼԵՌԸ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՊԱՏՄԱԿԱՆՈՐԵՆ ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ



ՅԱՆԿ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, *Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, Երևան, 1962։*
2. Կ. Մարքս, *Կապիտալ, հ. I—III, Երևան, 1949—1954։*
3. *Маркс К., Энгельс Ф.*, Соч., изд. 2, т. 9, 15 и 28.
4. АВПР, Ф. «Посольство в Константинополе», д. 701, 718, 736, 758, 780, 799, 817, 1303—1310.
5. АВПР, ф. «Канцелярия», д. 17, 37, 42, 44, 88, 105—107, 121, 149—153, 160—161.
6. Աբգարիոս Ի., *Սարսափներու գիրքը։ Սարսռազդեցիկ նկարագրություն մը Լիբանանի վանական թվականներու ներքին արյունալի խռովությանց, թարգմանեց՝ Ս. Վարժապետյան, Բեյրութ, 1933։*
7. Ազգաշյան Հ., *Արաբական ազգային ազատագրական գաղափարը, Բեյրութ, 1959։*
8. Պողոսյան Ե., *Կարապետ Արփին փաշա Տատյան կուսակալ և ընդհանուր կառավարիչ Լիբանանի (1816—1873), «Հանդես ամսօրյա», 1949, հ. 1—3։*
9. Վարժապետյան Ս., *Հայերը Լիբանանի մեջ (Պատմություն լիբանանահայ գաղութի՝ հնագույն դարերեն մինչև առաջին ընդհանուր պատերազմին վերջավորությունը), Բեյրութ, 1951։*
10. Նաջարյան Ե. Հ., *Լիբանանի 1840 թ. մայիս-հուլիսյան ապստամբության մի քանի հարցեր,—«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», 9, «Արաբական երկրներ», Երևան, 1978։*
11. *Базили К. М.*, Сирия и Палестина под турецким правительством в историческом и политическом отношениях. Переиздание подготовлено И. М. Смилянской, Э. Г. Аствацатурян и Е. К. Голубовской, под ред. Е. А. Беляева, М., 1962 (I изд.: ч. I—II, Одесса, 1861—1862).
12. *(Базили К. М.)*, Записки о внешней торговле Сирии,—«Московские ведомости», 1841, № 93—96.
13. *Беляев Е. А.*, Арабы, ислам и арабский халифат в раннее средневековье, 2 изд., М., 1966.
14. *Берг Н.*, Очерки последних сирийских событий,—«Библиотека для чтения», 1863, октябрь.
15. *Березин И.*, Христиане в Сирии,—«Москвитянин», учено-литературный журнал, издаваемый М. Погодиным, т. I, М., 1855, № 2, январь; № 3, февраль.
16. *Вайнштейн О. Л.*, Французские торговые колонии на Леванте при старом порядке и в эпоху революции,—«Новый Восток», 1929, кн. 25, 26—27.
17. Всемирная история, т. V—VII, М., 1958—1960.

18. *(Вяземский)*. Путешествие на Восток князя П. А. Вяземского, 1849—1850 гг., СПб. 1883. (полн. собр. соч. кн. П. А. Вяземского, т. IX, СПб., 1884).
19. *Губер А. А., Ким Г. Ф., Хейфец А. Н.*, Новая история стран Азии и Африки, М., 1975.
20. *Дебидур А.*, Восточный вопрос 1817—1847,—«История XIX века», т. IV.
21. *Джабарти Абд ар-Рахман*. Аджаиб ал-асар фи-т-тараджим ва-л-ахбар (Удивительная история прошлого в жизнеописаниях и хронике событий), т. III, ч. I. Египет в период экспедиции Бонапарта (1798—1801), пер., предисл. и прим. И. М. Филиштинского, М., 1962; т. IV, Египет под властью Мухаммеда Али (1806—1821), пер., предисл., и прим. Х. И. Кильберг, М., 1963.
22. Записки гидрографического департамента Морского министерства, т. VII, СПб., 1849.
23. *Зеленой А.*, Общее географическое описание территории Сирии (по иностранным источникам),—«Сборник географических, топографических и статистических материалов по Азии», вып., IV, СПб., 1883.
24. История о возмущении Али-бея против Оттоманской Порты с различными новыми известиями о Египте, Палестине, Сирии и Турецком государстве, также о путешествии из Алеппо в Балзору, пер. с нем., М,. 1789.
25. *Крачковский И. Ю.*, Избр. соч., т. IV, М.—Л., 1952.
26. *Крымский А. Е.*, История новой арабской литературы, XIX-начало XX вв., М., 1971.
27. *Крымский А. Е.*, Из бейрутской церковной летописи XVI—XVIII вв. (Рукопись Мохтасар тарих эль-асакыфе из собрания А. Е. Крымского),—«Древности Восточные». Труды восточной комиссии импер. Моск. арх. общества, т. III, вып. I. 1907, с. 25—89.
28. *Луцкий В. Б.*, Новая история арабских стран, М., 1966 (его же: Новая история арабских стран. Стенограммы лекций, читанных на историческом факультете ЛГУ, Л., 1938)
29. *Мартенс Ф. Ф.*, Сборник трактатов и конвенций, заключенных Россиею с иностранными державами, т. XIII—XVI, СПб., 1903—1909.
30. Народы Передней Азии, М., 1957.
31. Новая история стран зарубежной Азии и Африки, Л., 1971.
32. *Панченкова М. Т.*, Политика Франции на Ближнем Востоке и сирийская экспедиция 1860—1861 гг., М., 1966.
33. *Петкович К. Д.*, Ливан и ливанцы. Очерки нынешнего состояния автономного Ливанского генерал-губернаторства в географическом, этнографическом, экономическом, политическом и религиозном отношениях — «Сборник географических, топографических и статистических материалов по Азии», вып. XIX, СПб., 1885.
34. *Петкович К. Д.*, Сирия, Хауран и Джебел Друз,—«СИППО», 1893, т. IV.
35. *Плещев С.*, Дневные записи путешествия из архипелагского, России принадлежащего острова Пароса в Сирию, СПб., 1773.
36. *Рафалович А. А.*, Записки русского врача, отправленного на Восток,—«Журнал Министерства внутренних дел», 1847, № 6—7, 9—12, 1848, № 6, 9—11.

23—1028

37. *Салиби К. С.*, Очерки по истории Ливана, пер. с англ., вступит. статья и ред. Н. С. Луцкой М., 1969.
38. *Смилянская И. М.*, Из истории народно-освободительного движения в Сирии в середине XIX века,—«Очерки по истории арабских стран», М., 1959.
39. *Смилянская И. М.*, К вопросу о разложении феодальных отношений в Сирии, Ливане и Палестине в середине XIX в.,—«О генезисе капитализма в странах Востока» (XV—XVI вв.), М., 1962.
40. *Смилянская И. М.*, Разложение феодальных отношений в Сирии, Ливане и Палестине в середине XIX в.,—«Переднеазиатский этнографический сборник», т. I, М., 1958.
41. *Смилянская И. М.*, Крестьянское восстание в Кесруане (Ливан, 1859—1860 гг.),—Краткие сообщ. Ин-та востоковедения АН СССР, М., 1965.
42. *Смилянская И. М.*, К. М. Базили—российский дипломат и историк Сирии,—«Очерки по истории русского востоковедения», сб. IV, М., 1959.
43. *Смилянская И. М.*, Крестьянское движение в Ливане в первой половине XIX в., М., 1965.
44. *Смилянская И. М.*, Социально-экономическая структура стран Ближнего Востока на рубеже нового времени (на материалах Сирии, Ливана и Палестины), М., 1979.
45. Современный Ливан (справочник), М., 1963.
46. *(Успенский)*, Книга бытия моего. Дневники и автобиографические записки епископа Порфирия Успенского, т. I—VIII, СПб., 1894—1902.
47. *(Успенский)*, Материалы для биографии епископа П. Успенского, изд. имп. АН, исполненное под ред. П. В. Безобразова, т. I, Официальные документы, т. II, Переписка, СПб., 1910.
48. *(Abkarius), J. F. Scheltema*, The Lebanon in Turmoil. Syria and the Powers in 1860. Book of the marvels of the time concerning the massacres in the Arab country, by *Iskander ibn Yakub Abkarius*, New Haven, 1920.
49. *Adleberg*, En Orient: Impressions et Reminescences, t. I-II, St. Peterbourg, 1867.
50. „Affaires Etrangères. Documents diplomatiques", t. I-II, Paris, 1860-1861.
50a. *Aouad I.*, Le droit privé des maronites au temps des émirs Chihab (1697-1841) d'après les documents inédits, Paris, 1933.
51. *(Aucher-Eloy)*, Relation de voyages en Orient de 1830 à 1838, par *Aucher-Eloy*, revues et annotées par m. le comte Jaubert, v. I-II, Paris, 1843.
51a. „Archives diplomatiques. Recueil de diplomatie et d'histoire", t. I-II, Paris, 1860-1861.
52. *Ayni Mehmed Ali*, Milliyetcilik, Istanbul, 1943.
53. *Baudicourt L.*, La France en Syrie, Paris, 1860 (éd. post.: 1879).
54. *Belgiojoso, La Princesse de*, Asie Mineure et Syrie. Souvenirs de Voyage, Paris, 1858.
55. *Berchet G.*, Relazioni dei consuli Veneti nella Siria, Torino, 1866.
56. *Bird I.*, Bible work in the Bible lands or Events in the history of the Syrian Mission, Philadelphie, 1872.

57. *Blondel E.*, Deux ans en Syrie et en Palestine (1838-1839), Paris, 1840.
58. *Bordeau H.*, Lady Stanhope, Paris, 1924.
59. *Bordeau H.*, Dans la Montagne Druze, Paris, 1926.
60. *Bouron N.*, Les Druzes. Histoire du Liban et de la Montagne Haouranaise, Paris, 1930.
61. *Boussière, Le Baron Th. Renouard de*, Lettres sur l'Orient écrites pendant les anneés 1827 et 1828, t. I-II, Paris, 1829.
62. *Bowring J.*, Report on the commercial statistics of Syria, presented to both Houses of Parliament—1838, London, 1840.
63. British and Foreign State Papers, 1846-1847. v. XXXV-XXXVI, London, 1860-1861.
64. *Burckhardt J. L.*, Travels in Syria and the Holy Land, London, 1822.
65. *Burton R. F., Drake Ch. F. T.*, Inexplored Syria. Visits to the Libanus, the Tulul el Safa, the Antilibanus, the Northern Libanus and the Alab, v. I-II London, 1872.
66. *Cadalvène E. de, Barrault E.*, Deux années de l'histoire d'Orient 1839-1840, faisant suite à l'histoire de la guerre de Méhémed-Ali en Syrie et en Asie Mineure (1832-1833). Paris, 1840.
67. *Cadalvène E. de, Barrault E.*, Histoire de la guerre de Méhémed-Ali contre la Porte Ottomane en Syrie et en Asie Mineure (1831-1833).— Paris, 1837.
68. *Catafago J.*, Histoire des émirs Maan qui ont gouverné le Liban depuis l'anneé 1119 de J.—C. jusqu'à 1699. — „Journal Asiatique", 1864, № 2.
69. *Catafago A.*, Rapports et correspondences. Documents inedits, traduits et annotés par P. Carali, Beyrouth, 1937.
70. *Charles Roux F.*, Les Echelles de Syrie et de Palestine au XVIIIe siècle, Paris, 1928.
71. *(Charrière)*, Négociations de la France dans le Levant ou Correspondences, mémoires et actes diplomatiques des ambassadeurs de France à Constantinople et des ambassadeurs envoyés ou résidents à divers titres à Venise, Raguse, Rome, Malte et Jérusalem, en Turquie, Perse, Géorgie, Crimée, Syrie, Egypte, etc. et dans les états de Tunis, d'Alger et de Maroc, publiés pour la première fois par *E. Charrière*, t. I-IV, Paris, 1848-1860.
72. *Chasseaud G.*, The druzes of the Lebanon, London, 1955.
73. *Chateaubriand F. A. de*, Itinéraire de Paris à Jérusalem et de Jérusalem à Paris allant par Grèce et revenant par l'Egypte, la Barbarie et l'Espagne. t. 1-3, Paris, 1811.
74. *Chebli M.*, Fakhreddine II Maan-Prince du Liban, Beyrouth, 1946.
75. *Chebli M.*, Une Histoire du Liban à l'époque des émirs (1635-1841), Beyrouth, 1957.
76. *Chevalier D.*, Aux origines des troubles agraires: Que possédait un cheikh maronite en 1859? Un document inedit de la famille el-Hazin,—„Arabica", t. VII, 1960, Janvier.

77. *Chevalier D.*, La Societé du Mont Liban à l'époque de la révolution industrielle en Europe, Paris, 1971.
78. *Chevalier D.*, Aspects sociaux de la Question d'Orient: Aux origines des troubles agraires Libanais en 1858, Paris, 1959.
79. *Churchill Ch. H.*, The Druzes and the Maronites under the turkish rule from 1840 to 1860, London, 1862.
80. *Churchill Ch. H.*, Mount Lebanon. A ten years residence from 1842 to 1852, describing the manners, customs and religion of its inhabitants, with a full and correct account of the Druze religion and containing historical records of the Mountain tribes, t. I-III, London, 1853.
81. Correspondence relating to the affairs of Syria, 1860-1861, part I-II, London, 1861.
82. *Cuinet V.*, Syrie, Liban et Palestine. Géographie administrative, statistique, descriptive et raisonné, Paris, 1896.
83. *Dahdah N.*, Evolution de la Nation Libanaise,—„Les Cahiers de l'Est", Beyrouth, 1946 mars, № 5.
84. *Dahdah N.*, Evolution historique du Liban, Beyrouth, 1964.
85. Damas et le Liban. Extraits du Journal d'un voyage en Syrie au printemps de 1860, London, 1861.
86. *Damoiseau L.*, Voyage en Syrie et dans le Desert, t. I-II, Bruxelles, 1839.
87. *Denis A.*, Etudes politiques et diplomatiques sur le Liban, Paris, 1844.
88. *(Djabarti)* Merveilles biographiques ou Chroniques du cheikh *Abd el-Rahman el-Djabarti*, traduits de l'arabe par Mansour bey, Gabriel Nicolas Khalil bey et Iskandar Ammoun effendi, t. I-IV, Le Caire, 1888-1894.
89. *Edwards R.*, La Syrie 1840-1862: Histoire, politique, administration, population, religions et moeurs, évènements de 1860 d'après des actes officiels et des documents authentiques, Paris, 1862.
90. *Emerit M.*, La Crise syrienne et l'expension économique francaise en 1860, —„La Revue Historique", t. CCVII, 1952.
91. *Estourmel, Le Comte J. d;* Journal d'un Voyage en Orient. t. I-II, 2e, éd., Paris, 1848.
92. *Eyriès J.—B.*, Voyage pittoresque en Asie et en Afrique, Paris, 1839.
93. *Farley L.*, Two years in Syria, London, 1858.
94. *Farley L.*, The resources of Turkey, London, 1862.
95. *Favel, Le Comte de Rocquigny du*, Trois mois en Orient (Basse Egypte, Syrie, Jérusalem, Constantinople). Journal de voyage pouvant servir de guide aux voyageurs en Orient, Paris, 1870.
96. *Fleischer H. L.*, Zur Geographie und Statistik des nördischen Libanon,—„Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesselschaft", Leipzig, Bd. 6, 1852.
97. *Fleischer H. L.*, Über das syrische Fürstenhaus der Banû-Schihab,—„ZDMG", Leipzig, Bd. 5. 1851.
98. *Forbin, Le Comte de*, Voyage dans le Levant en 1817-1818, 2e ed., Paris, 1819.

99. Further Papers relating to the disturbance in Syria (in continuation of Papers presented to Parliament), London, 1860.
100. *(Gabarti)*, Journal *d'Abdurrahman Gabarti* pendant l'occupation française d'Egypte, traduit de l'arabe par A. Cardin, Paris, 1838.
101. *Gökbilgin T.*, 1840-den 1851-e kadar Cebelilübnan ve dürziler, Istanbul, 1946
102. *Cays H.*, Esquisse ee l'état politique et commercial de la Syrie, Paris, 1862.
103. *Guys H.*, La nation druze: son histoire, sa religion, ses moeurs et son état politique, Marseille, 1864.
104. *Guys H.*, Relation d'un séjour de plusiers années à Beyrouth et dans le Liban, précédé d' une lettre de M. Poujoulat, t. I-II, Paris, 1847 (éd. de 1850 titré: Beyrouth et le Liban. Relation d'un séjour de plusieurs années dans ce pays).
105. *Guys H.*, Théogonie des Druzes ou abrégé de leur système religieux, traduit de l'arabe, avec des notes explicatives et observations critiques, Paris, 1863.
106 *Guys H.*, Voyage en Syrie: Peinture des moeurs musulmanes, chrétiennes, et israelites, Paris, 1855.
107. *Hichi S. H.*, Shaikh Beshir Djoumblatt et son temps (1775-1825), Beyrouth, 1972.
108. *Hichi S. H.*, La communauté Druze (son origine et son histoire), Beyrouth, 1973.
109. *Hitti Ph. K.*, History of Syria, including Lebanon and Palestine, New York, 1951.
110. *Hitti Ph. K.*, Lebanon in history from the earliest times to the present, London, 1957.
111. *Hitti Ph. K.*, The origines of the Druze people and religion with extracts from their sacred writings, New York, 1958.
112. *Hunter W. P.*, Narrative of the expedition to Syria under the command of admiral the Hon. sir Robert Stopford, comprising an account of the capture of Gebail, Tripoli and Tyre, storming of Sidon, battle of Calat-Meiden, bombardment and capture of St. Jean d'Acre, etc., vol. I-II, London, 1842.
113. *Ismail A.*, Le Liban: Histoire d' un peuple, Beyrouth, 1965.
114. *Ismail A.*, Histoire du Liban du XVIIe siécle à nos jours, t. I, le Liban au temps de Fahred-din II (1590-1633), Paris, 1955; t. IV, Redressement et déclin du féodalisme Libanais (1840-1861) Beyrouth, 1958.
115. *Jessup H. H.*, Fifty three years in Syria, t. I-II, New-York, 1910.
116. *Jobin*, La Syrie en 1860 et 1861. Lettres et documents, Lille, 1862.
117. *Jouplain M.*, La Question du Liban. Etude d'histoire diplomatique et de droit international, Paris, 1908 (2e éd.: Junieh, 1961).
118. Journal d'un voyage au Levant, par l'Auteur du Mariage au point de vue chrétien, t. I-III, Paris, 1850.
119. *Karal E. Z.*, Osmanli Tarihi, V cilt., 2 bacim, Nizam-i cedit ve Tanzimat devirler (1789-1856), Ankara, 1967.

120. *Karam Y.*, Aux gouvernements et nations de l'Europe, Paris, 1903.
121. *(Kayat)*, A voice from Lebanon, with the life and travels of Assaad Y. Kayat, London, 1847.
122. *(Kerr M.)*, Lebanon in the last years of feudalism, 184[illegible]-1868. A contemporary account by Antun Dahir al-Aqiqi and other documents, translated by *M. H. Kerr*, Beirut, 1959.
123. *Khairallah K. T.*, La Syrie, Paris, 1912.
124. *Khoury W.*, La Justice féodale au Liban, Beyrouth, 1932.
125. *Lamartine A. de*, Souvenirs, impressions, pensées et paysages, pendant un voyage en Orient (1832-1833) ou Notes d'un voyageur, t. I-III, Leipzig-Stuttgart, 1835.
126. *Lammens H.*, Frère Gryphon et le Liban au XVe siècle, „Revue de l'Orient Chrétien", Paris, 4e année, 1899.
127. *(Lammens H., Taoutel F., Mouterde K)*, Petite Histoire de Syrie et du Liban, Beyrouth, 1924.
128. *Lammens H.*, La Syrie (Précis historique). vol. I-II, Beyrouth, 1921.
129. *Laorty-Hadji R. P.*, La Syrie, la Palestine et la Judeé. Pèlerinage à Jerusalem et aux Lieux Saints, éd. 9e, Paris, 1854.
130. *Laurent A.*, Relation historique des affaires de Syrie depuis 1840 jusqu'en 1842: statistique générale du Mont Liban et procédure complète dirigée en 1840 contre les juifs de Damas. t. I-II, Paris, 1846.
131. La vie militaire du général Ducrot d'après sa correspondence (1839-1871), publiée par ses enfants, t. I-II, Paris, 1895.
132. *Lenormant F.*, Histoire des massacres de Syrie en 1860, Paris, 1861.
133. *Lenormant F.*, Les derniers évènements de Syrie, Paris, 1860 (éd. post.: Les Evènements de Syrie, Paris, 1862).
134. *Le Saint L.*, Expédition de Syrie, Limoges, s. d.
135. *Lockroy E.*, Ahmed le Boucher. La Syrie et l'Egypte au XVIIIe siècle, Paris, 1888,
136. *Louet E.*, Expédition de Syrie: Beyrouth, le Liban, Jérusalem, 1860-1861. Notes et souvenirs, Paris, 1862.
137. *Lusignan S.*, History of the Revolt of Ali Bey, t. I-III, London, 1783.
138. *Marcellus le comte de*, Souvenirs de l'Orient, 3e, éd., Paris, 1861.
139. *Meo L. M. T.*, Lebanon—improbable nation (a study of political development), Bloomington, 1965.
140. *Michaud M., Poujoulat M.*, Correspondences d'Orient, (1830-1831), t. I-VI, Paris, 1833-1835.
141. *Mouterde R.*, Précis d'histoire de la Syrie et du Liban, Beyrouth, 1932. (2e éd.: 1934, 3e. éd.: 1939).
142. *Nantet J.*, Histoire du Liban, Besançon, 1963.
143. *Napier Ch.*, The war in Syria, v. I-II, London, 1842.
144. *Nassar S.*, Connaissance du Liban, Beyrouth, 1969.
145. *Neale F. A.*, Eight years in Syria, Palestine and Asia minor from 1842 to 1850, v. I-II, London, 1851.

146. *Nimeh W.*, History of Lebanon, Mexico, 1949.
147. *(Noradounghian)*. Recueil d'actes internationaux de l'empire Ottoman (Traités, conventions, arrangements, déclarations, protocoles, procès-verbaux, bèrats, lettres patentes et autres documents relatifs au droit public exterieur de la Turquie), recueillis et publiés par *Gabriel Noradounghian*, t. I-IV, Paris-Leipzig-Neuchatel, 1897-1903.
148. Papers relating to the disturbance in Syria, presented to both Houses of Parliament by command of Her Majesty, London, 1860.
149. *Pardieu le comte Ch. de*, Excursion en Orient(l'Egypte, le Mont Sinai, la Palestine, la Syrie et le Liban), Paris, 1851.
150. *Pellé Ch.*, *Galibert L.*, Voyage en Syrie et dans l'Asie Mineure, Paris, 1840.
151. *Perrier F.*, La Syrie sous le gouvernement de Méhémet-Ali Jusqu'en 1840, Paris, 1842.
152. Pièces communiquées à la Chambre des députès sur les affaires du Liban pendant les annees 1843, 1844 et 1845, Paris, 1846.
153. *Poliak A. N.*, Feudalism in Egypt, Syrie, Palestine and Lebanon, 1250—1900, London, 1939.
154. *Polk W. R.*, The opening of South Lebanon, 1788—1840. A study of the impact of the West on the Middle East. Cambridge, 1963.
155. *Porter E. L.*, Five years in Damascus, t. II, London, 1855,
156. *Poujade E.*, Le Liban et la Syrie 1845—1860, Paris, 1860, (éd. ult.: 1867).
157. *Poujoulat B.*, La Vérité sur la Syrie et l'expédition française, Paris, 1861.
158. *Puget de Saint Pierre*, Histoire des Druzes, Paris, 1763.
159. La Question de Syrie traiteé par un Syrien, Traduction de l'arabe, Athènes, 1861.
160. *Rabbath A.*, Tournebize F., Documents inédits pour servir à l'histoire du christianisme en Orient (XVI-XIX siècles), vol. 1—6, Beyrouth-Paris, 1905-1921.
161. *Raphael P.*, The role of the Moronites in the return of the Oriental churches, Ohio, 1946.
162. *Ristehueber R.*, Les Maronites, „Revue des deux mondes", 1915, I, Janvier
163. *Ristehueber R.*, Les traditions françaises au Liban, Paris, 1925.
164. *Robinson G.*, Voyage en Palestine et en Syrie, vol. I-II, Paris, 1838.
165. *Rochmonteix C.*, Le Liban et l'expédition française en Syrie, 1860-1861. Documents inédits du général A. Ducrot, Paris, 1921.
166. *Ruffie* et *Talib*, Etude hémotypologique des éthnies libanaises, Paris, 1965.
167. *Rustam A. J.*, Calendar of state papers from the royal archives of Egypt relating to the affairs of Syria, t. II, Beyrouth, 1943.
168. *Rustam A. J.*, The History of Syria under Méhèmet Ali Pacha. t. I-5, Beyrouth, 1930-1939.
169. *Rustam A. J.*, The royal archives of Egypt and the origines of the Egyptien expedition to Syria, Beyrouth, 1936.
170. *Rustam A. J.*, The royal archives of Egypt and the disturbances in Palestine in 1834, Beyrouth, 1938.

171. *Sabry M.*, L' Empire Egyptien sous Mohammed Ali et la Question d'Orient (1811-1849). Paris, 1930.
172. *Sacy S. de*, Exposé de la religion des druzes, tiré des livres religieux de cette secte, et précédé d'une introduction et de la vie du khalife Hakim-Biamr-Allah, t.I-II, Paris, 1838.
173. *Salibi K.S.*, The maronites of Lebanon under frankish and mamluk rule. "Arabica", 1957, t. IV, fasc. 3.
174. *Salibi K. S.*, The maronite church in the middle ages and its union with Rome. "Oriens Christianus", XIII, 1958.
175. *Salibi K. S.*, Maronite historians of mediaeval Lebanon, Beirut, 1959.
176. *Salibi K. S.*, Islam and Syria in the writings of H. Lammens,-B. Lewis, P- Holt, Historians of the Middle East, London, (1962).
177. *Salibi K. S.*, The modern history of Lebanon, London, 1965.
178. *Selle E. de*, Pérégrinations en Orient ou Voyage pittoresque, historique et politique en Egypte, Nubie, Syrie, Turquie, Grèce, pendant les anneés 1837-1838-1839, vol. I-II. Paris, 1840.
179. *Sanjian A. K.*, The armenian communities in Syria under Ottoman domination, Harvard Middle Eastern Studies, 10, (1965).
180. Souvenirs de Syrie. Expédition française de 1860, par un Témoin Oculaire, Paris, 1903.
181. *Testa le baron I. de*, Recueil des traités de la Porte Ottomane avec les puissances étrangéres (depuis le premier traité conclu, en 1536, entre Suléyman I et François I jusqu'à nos jours). t. I-VIII, Paris, 1864-1894.
182. *Thiers*, Bonaparte en Egypte et en Syrie, Munster, s. d.
183. *Turk N.*. Chronique d'Egypte 1798-1804, éd. et trd. G. Wiet, Cairo. 1950.
184. *(Turk)*, Histoire de l'éxpédition des français en Egypte par *Nakoula el-Turk*, publ. et trad. par mr. Desgranges-aîné, Paris, 1839.
185. *Ubicini M. A.*, Lettres sur la Turquie ou Tableau statistique, religieux, politique, administratif, militaire, commercial, etc., de l'empire Ottoman, depuis le Khatti-cherif de Gulkhané (1839), p. I-II, Paris, 1853-1854.
186. *Urquhart D.*, The Lebanon (Mount Syria). A history and a diary, vol. I-II, London, 1860.
187. *Vaumas E.*, Le Liban, Paris, 1954.
188. *Verney N.*, *Dambmann G.*, Les puissances étrangéres dans le Levant, en Syrie et en Palestine, Paris-Lyon, 1900.
189. *Vingtrinier A.*, Soliman-pacha colonel-Sève, généralissime des armeés égyptiennes ou Histoire des guerres d'Egypte de 1820 à 1860, Paris, 1886.
190. *Vogüe Ch.*, Les événements de Syrie, Paris, 1860.
191. *Vogüe Ch.*, Syrie, Palestine, Mont Athos. Voyage aux pays du passé, 1878.
192. *(Volney)*, Voyage en Egypte et en Syrie pendant les années 1783, 1784 et 1785, suivi de considérations sur la guerre des russes et des turks, publieé en 1788 et 1789, par *C.-F. Volney*, comte et pair de France, membre de l'Institut, etc. 5e éd., t. I-II, Paris, 1822.
193. *Wood A .C.*, A history of the Levant company, Oxford, 1935.

194. *Yılmas Östuna T.*, Baslangicindan zamanimiza kadar Türkiye tarihi, II çild. 1967.
195. *Young G.*, Corps de droit ottoman (Recueil des codes, lois, règlaments, ordonnances et actes les plus importants de droit interieur et d'études sur le droit coutumier de l'empire ottoman). vol. I-VII, Oxford, 1905-1906.

196 يوسف مزهر، تاريخ لبنان، بيروت، ١٩٥٨
197 احمد طربين، ازمة الحكم في لبنان ما بين ١٨٤٠ـ١٨٦١، دمشق، ١٩٦٦
198 احمد طربين، لبنان منذ عهد المتصرفية الى بداية الانتداب ١٨٦١ـ١٩٢، القاهرة ١٩٦٨
199 خليل هما م فائز، ابو سمراء قائم او البطل اللبناني، القاهرة، ١٩٥٥
200 ثورة وفتة في لبنان ـ صفحة مجهولة من تاريخ الجبل من ١٨٤١ الى ١٨٧٣، بيروت ١٩٣٩
201 طنوس الشدياق، كتاب اخبار الاعيان في جبل لبنان، ١٨٥٩
202 ميخائيل مشاقة، مشاهير الاعيان في اخبار جبل لبنان، القاهرة، ب ت.
203 منصور الحتوني، نبذة تاريخية في المقاطعة الكسروانية، بيروت، ١٩٥٦
204 حسين ابو شقرا، الحركات في لبنان الى عهد المتصرفية، بيروت، ١٩٥٢
205 اسطفانوس الدويهي، تاريخ الطائفة المارونية، بيروت، ١٩٨٠
206 عنري لامنس بحث جغرافي في سيرة القديس مارون الناسك ـ "المشرق"، السنة ٦
207 بطرس داود، تاريخ الموارنة، ج ١، بيروت، ١٩٧٠
208 احمد رضا، العرفان، ج ١ـ٢، بيروت، ب ت.
209 صالح بن يحيى بحتر، تاريخ بيروت واخبار الامراء البحتريين من بني المغرب، بيروت ١٨٩٨
210 مذكرات رستم باز، بيروت، ١٩٥٥
211 يوسف خطار الحلو، العاميات الشعبية في لبنان ١٨٢٠، ١٨٦١ بيروت ب ت.
212 صفحات مطوية من التاريخ اللبناني، بيروت، ١٩٥٥
213 داود بركات، ذكرى البطل القائد ابراهيم باشا، القاهرة، ١٩٣١
214 ميخائيل البشقي، تاريخ حوادث الشام ولبنان من سنة ١١٩٨ الى سنة ١٢٥٧هـ (١٧٨٢ـ١٨٢١م)، ـ "المشرق"، ١٩١٢
215 احمد الخالدي، لبنان في عهد الامير فخر الدين الثاني، بيروت، ١٩٣٦
216 ا. رستم، الاصول العربية لتاريخ سوريا في عهد محمد باشا، بيروت، ١٩٣٠ـ١٩٣٤

217 سليمان عزالدين ،ابراهيم في سوريا ،بيروت، ١٩٢٩

218 حيدر الشهابي ،لبنان في عهد الامراء الشهابيين ،بيروت، ١٩٣٣ـ١٩٣٦

219 مجموعة المحررات السياسية والمفاوضات الدولية عن سوريا ولبنان من سنة ١٨٤٠ الى سنة ١٩١٠، دمشق، ١٩٦٠

220 يوسف الدبس، تاريخ سوريا ،المجلد ٨ بيروت، ١٩٠٥

221 تاريخ الشيخ ظاهر العمر الزيداني لمخائيل الصباغ ،(حريصة، ١٩٢٧ـ١٩٢٨)

222 يوسف الحكيم ،بيروت ولبنان في عهد آل عثمان ،بيروت، ١٨٦٤

223 فيليب حتي ،لبنان في التاريخ ،بيروت، ١٩٥٩

224 عبد الله قراطي ،كتاب مختصر الشريعة ،بيروت، ١٩٥٩

225 انيس فريحة ،حضارة في طريق الزوال ـ القرية اللبنانية ،بيروت، ١٩٥٧

226 فؤاد شاهين ،الاسس التاريخية لنظام لبنان الطائفي ،بيروت ب ت.

227 عبد الرحمن الجبرتي الحنفي ،التاريخ المسمى عجائب الاثار في التراجم والاخبار مصر، ١٢٩٧

228 فؤاد قازان ،نظرة جديدة الى "الثورة اللبنانية" ١٨٤٠ ضد الوجود المصري وتحالفه مع البشير الكبير ـ "الطريق"، العدد ٦، ١٩٧٢

229 فؤاد قازان ،لبنان منذ عهد الامارة حتى ايامنا ،ج ١ بيروت، ١٩٧٢

230 عبد العزيز سليمان دوارة ،وثائق اساسية من تاريخ لبنان الحديث ١٥١٧ ـ ١٩٢٠، ١٩٧٤

231 عيسى اسكندر معلوف ،تاريخ الامير بشير الشهابي بيروت، ب ت.

232 محمد امين ترحيني ،الاسس التاريخية لنظام لبنان الطائفي ،بيروت، ب ت.

233 جميل صليبا ،محاضرات في الاتجاهات الفكرية في بلاد الشام واثرها في الادب الحديث ،القاهرة، ١٩٥٨

234 نجيب دحدح ،الامير بشير الشهابي ،بيروت، ١٩٥٢

235 اسد رستم وفؤاد البستاني ،لبنان في عهد الامراء الشهابيين ،بيروت، ب ت.

236 لطفي ،تاريخ حوادث جبل لبنان ،بيروت، ب ت.

237 سعيد عاقل ،بدو معروف الدروز ،بيروت،

238 ابراهيم عورة ،تاريخ ولاية سليمان باشا بيروت،

239 سليم حسن هشي ،المراسلات الاجتماعية والاقتصادية لزحلة ،جبل لبنان خلال ثلاثة (١٦٠٠ـ١٩٠٠)، ج ١ـ٣، بيروت، ١٩٨٠

240 سليم حسن هشي ،سجل محررات العامية النصرانية في جبل لبنان ،ج ٣ـ٤، بيروت، ١٩٧٧ ـ ١٩٧٩

241 سليم هشي ،يوميات لبناني ايام المتصرفية ،بيروت، ١٩٧٣

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբբաս 163
Աբբասյաններ 28—29, 31—32, 38
Աբգարիոս Ի. 9, 13, 254, 307
Աբդալլա 122—128, 130, 134—135
Աբդ ալ-Կադեր 318
Աբդ ալ-Մալիք (տոհմ) 52, 55, 113, 130, 298—299
Աբդ ալ-Մալիք Յուսուֆ 212, 223, 225, 253, 317
Աբդուլ Ազիզ 208
Աբդուլ Համիդ I 67
Աբդուլ Համիդ II 349
Աբդուլ Մալիք 27
Աբդուլ Մեջիդ 155
Աբերդին 235—236
Աբու Ալուան 59
Աբու Զահաբ Մ. 47, 70
Աբու՛լ Լամա (տոհմ) 51, 98, 115, 130, 142, 159, 162, 167, 201, 232—234, 267, 272
Աբու՛լ Լամա Բեշիր-Ահմեդ 209, 266—268, 271—273, 275, 280
Աբու՛լ Լամա Բեշիր-Ասաֆ 266
Աբու՛լ Լամա Հայդար 182, 184, 209, 232—233, 245, 254, 265—267
Աբու Հաթիմ 60
Աբու Համազա 59
Աբու Հարմուշ 59
Աբու Նակիտ (տոհմ) 52, 54—55, 61, 91, 113, 134, 167, 177—178, 195—196, 198, 239, 300—301
Աբու Նակիտ Համուդ 212
Աբու Նակիտ Նասիֆ 197, 199, 211—212, 255, 259, 268
Աբու Շաբրա (տոհմ) 130
Աբու Շաբրա Հուսեյն 13, 106, 252
Աբու Շաբրա Յուսիֆ 130
Աբու Ռիզկ Յ. 249
Աբու Սաար 58, 263
Աբու Սամրա Ղանեմ 131, 156—157, 171, 195, 224, 249, 253, 299
Աղար 58
ալ-Ազմ 46
Աթա 275
Աթալլա 52, 59, 109
ալ-Աթրաշ Ի. 302, 317
Ալի (խալիֆ) 30
Ալի (տոհմ) 59
Ալի (փաշա) 205, 326—327, 333, 341
Ալի (բեյ) ալ-Քեբիր 44—45, 47, 64—68
ալ-Ակիկի Անթուն Դահիր 8, 12, 272, 276—277, 282, 284, 286—287, 293—294, 307
ալ-Ակիկի ալ-Խուրի Հաբիբ 276
Ահմեդ (լգենդի) 311
Ահմեդ (փաշա) 225, 311, 313—314
Աղբաշյան Հ. 288
Ամին ադ-Դին 59
Այնի Ահմեդ Ալի 9
Այուբ 198
Անթեշ 153
Ապրո Սահակ 313
Ասադ 222, 224—225, 228—230, 232—234, 237—238, 245, 252
Ասֆուր 144
Արզումանյան Ս. 313
ալ-Արիան (տոհմ) 57
ալ-Արիան Շիբլի 153—154, 179, 195, 202—203, 224—225
Արիֆ 217

Արսլան (տոհմ) 29, 51, 55, 61, 130—131, 232
Արսլան Ահմեդ 210—211, 232—234, 263, 317
Արսլան Ամին 177, 210—212, 225, 263, 268—269
Արսլան Հայդար 185
Աուն Թորիա 188, 235, 237, 257, 276, 294, 299, 319, 321

Բազ (տոհմ) 59
Բազ Դոմինիկ (Աբդ ալ-Ահադ) 112
Բազ Ջուրջոս 110—112
Բաղիլի Կ. Մ. 13—14, 20—21, 67, 69, 90—91, 99—100, 104—106, 117, 147, 166, 169, 171, 177, 188, 196, 212—214, 222, 233—234, 253
Բահրի (փաշա) 256
Բահրի (տոհմ) 148
Բահրի Հաննա 138, 146, 148, 153
Բայթար 59
Բանդիերի 169
Բանու Աբի՛լ Ջայշ 28
Բանու Ալի ալ-Սաղիր 51
Բանու Ամիլ 29
Բանու ալ-Ամին 59
Բանու Ամմար 34
Բանու Անհուրի 51, 58
Բանու Ասաֆ 57
Բանու Բոհտոր 28—29, 34—35
Բանու Զեյդան տե՛ս Զայադինա (տոհմ)
Բանու Թաղլիբ 29
Բանու Լահմ 29
Բանու խաթուն 59
Բանու Համադան տե՛ս Համադան (տոհմ)
Բանու՛լ Համրա 28
Բանու Հարֆուշ տե՛ս Հարֆուշ (տոհմ)
Բանու ալ-Մասթարա 57, 59
Բանու Մերհեբ 59
Բանու Մուզհիր (Մեզհեր) 51
Բանու ալ-Շայեբ 51, 58
Բանու Ջոշհամ 29
Բանու Ռաադ 59, 110
Բանու Սաուսֆ 51
Բանու Տաննուխ 28
Բարրո 128, 132
Բաումգարտեն 67—69
Բաուրինգ Ջ. 14
Բեգեր Գ. 272, 298, 301
Բեգլար 318—319, 324
Բելյաև Ե. 6, 34
Բեյհում 144
Բենտիվոլիո 301, 309—310, 318—320
Բերբեր Մուսթաֆա 110, 113
Բերշե Ժ. 12
Բիեդդին Աբու Ալի 121
Բլեյբել 59
Բլոնտել Է. 145
Բոդիկուր Լ. 14
Բոլդուին IV 34
Բոնապարտ 103—107, 135
Բորե Է. 228
Բուժուլա Բ. 14
Բուլվեր 326
ալ-Բուսթանի Աբդալլա 257
ալ-Բուսթանի Բութրոս 144
Բուստրոս 144
Բուրխարտ Ջ. Լ. 80, 101—102, 118
Բուրբե Պ. 8, 166, 177
դը Բուրքենե 227, 230, 238

դը Գաղալվեն 128, 132
Գարզուզի 144
Գեմպել 149
Գենիջ Յուսուֆ 112
Գիզո 164, 170, 174, 227, 230, 238, 240
Գոլդորին 288
Գոլց 326—327
Գրենեմ 304
Գրիգոր-Պետրոս VIII 284
Գուի Հ. 14, 102
Գուլումջյան Հ. 329, 345

Դահդահ (տոհմ) 52, 56—58, 61, 130, 209, 236, 288, 306
Դահդահ Մանսուր 210
Դահդահ Նեջիբ 345
Դահդահ Ռուշեյդ 183, 209, 216, 289

Դաղեր Ահմեդ 157
Դաֆֆերին 295, 319, 324, 333
աղ-Դարազի Մոհամմեդ Բին Իսմայիլ 30—32, 210
Դեհրանժ-ավագ 105
Դենգիզլի 64, 68—69, 71—72
Դենի Ա. 14
Դերվիշ (Բին Օսման-Սատիկ) 64, 87
Դիբս Կիբիլ 117
աղ-Դիբս Ջիրիոս 153
աղ-Դիմաշկի Միխայիլ 128
Դյուկրո 14, 318, 321
Դրյոքս 52
Դուեյհի (տոհմ) 59
Դուեյհի (պատրիարք) 27
Դուսի 68

Եկատերինա II 65

աղ-Զահիր 58
Զայադինա (տոհմ) 45
Զայադինա Ալի (Բին Զահիր) 47, 64, 68
Զայադինա Զահիր ալ-Օմար 44—48, 63—72, 87, 104
Զայադինա Սալեհ (Բին Զահիր) 104, 107
Զեյդան Ջ. 105

Էդդե Է. 112
Էդհեմ 191
Էմին 265
Էյուբյաններ 35
Էնգելս Ֆ. 143
դ'Էստրումել 117—118

Թաբետ 144
Թալհուք (տոհմ) 52, 55, 61, 113, 130, 298—300
Թալհուք Հուսեյն 177, 212, 317
Թահիր 217, 303, 316
Թայյար 191
Թարբին Ա. 8, 12, 344
Թաքի աղ-Դին 59
Թիեր 170, 173—174
Թինգիզ 37
Թիրբեյ 59
Թողրուլ 32
Թրատ 144
Թուեյնի 144
աթ-Թուրք Յուսուֆ 112
աթ-Թուրք Նիկոլա 104—105, 114, 148
Իբրահիմ (Բին Մ. Ալի) 128, 134—138, 144, 146, 151—154, 158—160, 163, 165, 168, 170—174, 176, 187—188, 208, 254, 270, 316
Իղղեթ Մեհմեդ 170
Իմադ (տոհմ) 52, 55, 60—61, 109, 130, 167, 177, 298—299, 301
Իմադ Բին Ահմեդ ալ-Աֆիֆ 60
Իմադ Հաթթար 210, 212, 223, 299, 308
Իմադ Նասիր աղ-Դին 153
Իմադ ԶահրաՀ 111
Իյդ (տոհմ) 52, 55
Իյդ Հաթիմ 289
Իսհակ Ա. 9
Իսմայիլ (մամլուք) 47
Իսմայիլ Ադել 7, 12, 161, 166, 183, 309
Իստիֆան (տոհմ) 59
Իստիֆան Յուսուֆ 123

Լամարթին Ա. դը 115
Լամմենզ Հ. 6, 37, 44, 95, 105, 288, 290—291, 329, 344
Լասյուս 222
Լավալետ 326
Լատտաս Միխայիլ տե՛ս Օմար ան-Նամասաուի
Լենին Վ. Ի. 149, 346
դը Լեսեպս Է. 289
Լերուա Ֆ. 289
Լընորման Ֆ. 14
Լոբանով-Ռոստովսկի 326—327
Լորան Ա. 14, 147, 149
Լուե Է. 14, 325
Լուի-Ֆիլիպ 174
Լուսինյան Ս. (Հայ) 65
Լուտֆի Օմար տե՛ս Օմար ան-Նամասաուի
Լուցկայա Ն. Ս. 7

Ֆուցկի Վ. Բ. 10, 20, 115, 132, 284, 287

Խազին (տոհմ) 41—42, 52, 54, 56, 60—61, 100, 123, 130, 167, 181, 195, 236, 267—268, 271, 273—274, 276—278, 280—284, 288, 290, 305—306, 316
Խազին Աբբաս 278—279, 281
Խազին Աբու Նադեր 63
Խազին Աբու Նոֆալ 100
Խազին Կաադան 278
Խազին Հասան 278
Խազին Յուսուֆ 257, 265—266
Խազին Յուսուֆ Վարդան 278
Խազին Ֆաղլ ալ-Բաղաուի 123
Խազին Ֆրանսիս 157
ալ-Խաթիբ (տոհմ) 263
Խաթիֆ (տոհմ) 59
ալ-Խաթունի Մանսուր 13, 271, 276, 278, 280—281, 286
Խալիլ Կապուտան-փաշա 228, 238
Խայրալլա Ք. 29
Խըզբը 162
Խուսրև Մեհմեդ 137
ալ-Խուրի (տոհմ) 60, 167, 263
ալ-Խուրի Բեշիր 179
ալ-Խուրի Ղանդուր 87, 202
ալ-Խուրի Սաադ 63, 78, 85, 87
Խուրի-Սալեհ 55, 59
Խուրշիդ 270—272, 279, 283, 289, 298, 300, 302—304, 309, 311, 313, 316

ալ-Կադի Կաբլան 54
ալ-Կադի Շարաֆ ադ-Դին 106
ալ-Կադի (շեյխ) 185
ալ-Կահվաջի Ղանթուս 126
Կայս 254—255
Կատաֆագո 126
Կարալ Է. Զ. 9
Կարտեն Ա. 105
Կենենինգ Ս. 220, 230
Կիկանո Ն. 294

Կիսելյով 315, 323
Կիրակոս (կաթողիկոս) 137
Կյոգբիլգին Ռ. 9
Կոժուխով 6
Կրաչկովսկի Ի. Յու. 13
Կրիմսկի Ա. Ե. 3, 20, 34, 307, 321, 345
Կուսա (տոհմ) 329
(Կուսա) Յուսուֆ-Ֆրանբո 329
(Կուսա) Ֆրանբո-Նասրի 313, 329, 331

Հաբիբ Յ. 289
Հաիմ էֆենդի 12
ալ-Հալերի Ա. 314
Հակոբ Բարատեուս 23
Հակոբ Հայ 65
Հակոբ Մարաշցի 41
Համադե (տոհմ) 41, 57—58, 62, 87, 130—131
Համդան Յայա 153
Համդա Բին Ահմեդ 30—31
Համդի 45
Հայիմ (տոհմ) 126—127
Հայիմ Եզեկիել Ֆարիհի 129
Հայիմ Շեհադե Ֆարիհի 77, 111, 122, 126
Հայիմ Ռաֆայել Ֆարիհի 126
Հայիմ Սուլեյման Ֆարիհի 126
Հանթեր Ռ. Պ. 14
Հաշիմ (տոհմ) 59
Հաջի Յուսուֆ Դիա 108—109
Հասան Կապուտան-փաշա 70, 72, 77
Հասուն Ռ. 9, 313
Հարֆուշ (տոհմ) 51, 87, 203
Հարֆուշ Խանջար 161, 203
Հաքիմ 30
ալ-Հաքիմ Յուսուֆ 329, 345
Հաքիմ-Օղլի Ալի 66
Հաֆեզ (փաշա) 60
Հերակլես (կայսր) 24
Հիթթի Ֆ. 6, 34, 344
Հիշի Ս. Հ. 8, 52—53
Հոբեյշ (տոհմ) 41, 56, 61, 130, 181, 236, 262, 267, 306

Հորեյշ (պատրիարք) 182, 187, 236, 245, 254, 257
Հոլասյան Հ. 114, 148

Ղազան Ֆ. 5
Ղափանցի Պետրոս 41
Ղուկաս (տոհմ) 144
Ղուկաս Հաննա որդի Ջիբրայիլի 144
Ղուկաս Նաում որդի Բուքրուսի 144—145

Մաան (տոհմ) 16, 19, 39, 41, 48, 52, 53, 76, 93, 108, 113
Մաան Ահմեդ 100
Մաան Կորկմազ I 39
Մաան Կորկմազ II 39
Մաան Ֆախրուդ Դին I 39
Մաան Ֆախրուդ Դին II 39—40, 46, 53, 60, 71, 81, 129
Մաղի Հ. 89
ալ-Մահդի 28
Մահմուդ (բեյ) 157
Մահմուդ II (սուլթան) 126, 129, 132, 137, 155, 264
Մանուկ-տեր տե՛ս Մարոն (ավանդական)
Մասուդ Բուլոս 257, 265—266, 276, 284, 294
Մարիտի 52
Մարկիանոս 25
Մարմոն 143
Մարոն (ավանդական) 23—25
Մարոն (պատմական) 25, 27
Մարոնական Յուհաննա տե՛ս Մարոն (պատմական)
Մարքս Կ. 133, 143, 149—150, 310
Մաքսիմոս 26
Մդաուար 144
Մեհմեդ 222
Մեշալուպ 298
Մեշակա Մ. 13
Մեռ Լ. 7
Մեսերնիխ 218, 315, 323
Միշո 79, 82, 143, 198
Միսկա 183
Մոհամմեդ (մարգարե) 23
Մոհամմեդ-Ալի 127—128, 130—137, 139—141, 144, 151—152, 154—155, 162—164, 167, 169—170, 172—173, 187
Մուավիա I 3
Մուբեյդ (տոհմ) 13
ալ-Մուբեյդ Յուսուֆ 249
Մուզաֆֆար 329
Մուզֆիր 98
Մուքրան 144
Մուխին 271
Մուհամմեդ (աղա) 203
Մուհամմեդ (փաշա) 226
Մուհամմեդ-Դերվիշ 124—125, 127
Մուհամմեդ-Սելիմ 176, 185, 191, 193, 204—206
Մունեյյար Ն. 277—278, 280
Մունքիր 57, 59
Մուսթաֆա III 67
Մուսթաֆա Նուրի 206, 208, 210—211, 215—217, 219—220
Մուսթաֆա (փաշա) 264
Մուսթաֆա (բուրդ) 77
Մուտերդ Ռ. 6
Մուր 298, 301, 304
Մուրադ Ն. 228—229, 232, 235—236, 278

Յազբեկ Յ. 12—13
Յազբեկի (խմբավորում) 48, 61, 90—91, 198, 220, 223, 228, 251, 268
Յազբեկի (տոհմ) տե՛ս Իմադ (տոհմ)
Յազիջի 59
Յակով Արմիանին տե՛ս Հակոբ Հայ
Յաղուբ (Աղուբ) տոհմ 65
Յաղուբ ալ-Արմանի տե՛ս Հակոբ Հայ
Յանինա Ալի 215
Յանկ Ջ. 12, 329, 331
Յուսուֆ Բին Նասիֆ Աղա 112
Յուսուֆ (փաշա) 113

Նակկաշ Ն. 294
Նամբկ 244, 257
Նապոլեոն տե՛ս Բոնապարտ

Նապոլեոն III 309, 310, 312
Նասսար (տոհմ) 57
Նասսար Նասիֆ 64—65, 87
Նասր ադ-Դին 59
Նաուարա 12
Նաում 328—329
Նաուֆալ 144
Նաֆաա 59
Նեպիր Շ. 14, 163, 165, 167—168, 172—174
Նեշիր 204
Նիկոլայ 137
Նովիկով 324—325
Նորատունկյան Դ. 12, 329

աշ-Շալֆունի Ա. 112
Շահին Թաննուս 281—291, 297, 299—300, 305—307, 309, 320
Շամս (իշխանուհի) 89
Շամս (տոհմ) 59, 254—255
Շամս Ամին 302
աշ-Շանթիրի 306—307
աշ-Շանիֆ 59
աշ-Շանտիր Յ. 249
Շարրիեր Է. 12
Շելգեմա Ջ. 13
Շելխո Լ. 105
Շերիֆ (փաշա) 138, 146
Շեքիբ Մեհմեդ 241, 257—260, 262—264, 268
Շրվալիե Դ. 12, 81, 102
Շիհաբ (իշխանապետական տոհմ) 13, 16, 19, 39, 45, 48—50, 52, 57, 61—63, 73, 76—77, 80, 86, 105, 113, 115, 123, 135, 155, 157, 162, 167, 183, 197, 201, 206, 209, 215—219, 222—223, 225—229, 233, 235, 237, 248—249, 254, 300, 316, 318, 324, 326, 342
Շիհաբ (տոհմ Ուադի աթ-Թայմի) 56, 75—76, 86, 115, 130, 137, 254—255, 302
Շիհաբ Աբբաս 111, 127—129
Շիհաբ Աղդալլա 222
Շիհաբ Ալի 123
Շիհաբ Ահմեդ 123
Շիհաբ Ամին Բին Բեշիր 89, 136, 151, 162, 215, 228, 258
Շիհաբ Բեշիր II 7, 10, 12, 16, 87—91, 103—115, 121—132, 134—136, 139—142, 145—149, 151—156, 158—159, 162, 164—165, 168—173, 176—178, 181—182, 184, 188, 211, 215, 222, 237—238, 248, 258, 318, 345
Շիհաբ Բեշիր III Բին Կասեմ 169, 171, 173, 175—177, 179—184, 186, 190, 192—197, 200, 204—209, 215, 219, 289, 300
Շիհաբ Էֆենդի 86, 254
Շիհաբ Իսմայիլ 86
Շիհաբ Խալիլ Բին Բեշիր 89, 112, 124, 125
Շիհաբ Հայդար I 50, 52—55, 93—94
Շիհաբ Հայդար 90
Շիհաբ Հասան 89, 112
Շիհաբ Հասան-Ասաղ 249
Շիհաբ Հասան Բին Յուսուֆ 123—124
Շիհաբ Հուսեյն Բին Յուսուֆ 109—111
Շիհաբ Մահմուդ 197
Շիհաբ Մանսուր 62, 66, 85
Շիհաբ Մասուդ 170
Շիհաբ Մեջիդ Բին Խալիլ 318, 320
Շիհաբ Մոլհամ I 73
Շիհաբ Մոլհամ 201
Շիհաբ Յուսուֆ 16, 18, 48, 62—70, 72, 75, 77—78, 85—87, 89—91, 104, 106, 109, 112, 123, 147, 183
Շիհաբ Սաադ ադ-Դին 254—255, 302
Շիհաբ Սաադ ադ-Դին Բին Յուսուֆ 86, 109—111
Շիհաբ Սաիդ 123
Շիհաբ Սալման Բին Յուսուֆ 90, 109, 123—124, 183, 201
Շիհաբ Սուլեյման 111, 129
Շիհաբ Ֆարես 123
Շիհաբի Հայդար 12, 105, 106
Շհադն 144

Չերչիլ Ջ. 13, 185, 223, 269, 293, 298

Պալմերստոն 164, 185
Պանչենկովա Մ. Տ. 11, 20, 116, 330—331, 342
դը Պարտյո 142
Պեղճյան Հ. 137
Պետրոս Մեծ 43
Պերիե Ֆ. 148
Պլեշչև 46, 67
Պոկոկ 45
Պողոս (բեյ) 164, 174
Պրոկեշ-Օստեն 326—327
Պուժատ է. 14
Պուժուլա 79, 143, 198, 274, 287

Ռաֆ-Ջաբարթի 105, 134, 139
Ջազզար Ահմեդ 66—67, 69, 72, 76—77, 85—90, 104—112, 122, 126, 129
Ջաղջաղ 60
Ջեսուայ Հ. 14, 298
Ջերմանոս 24
Ջմայել 59
Ջումբլաթ (տոհմ) 52—54, 61, 80, 87, 89, 91, 101, 107, 113, 127—131, 177, 188, 195, 199, 253, 301
Ջումբլաթ Ալի 62—64
Ջումբլաթ Ալի I (փաշա) 53, 60, 129
Ջումբլաթ Ալի II Քաուբ 53
Ջումբլաթ Բեշիր 8, 81, 89, 106, 109, 112—114, 124, 127—129, 131, 190,
Ջումբլաթ Կասեմ 89
Ջումբլաթ Հասան 153
Ջումբլաթ Նաֆիֆա 302
Ջումբլաթ Նասման 134, 177, 185, 212—214, 250—251, 268
Ջումբլաթ Ջումբլաթ 60
Ջումբլաթ Սաիդ 81, 177, 185, 199, 201, 210, 212—213, 224—225, 233, 250—251, 268—270, 276, 298—299, 302, 304, 311, 317
Ջումբլաթի (խմբավորում) 48, 61, 90—91, 131, 198, 220, 251, 268

Դարբաս Ա. 12
Դաժիվիլ 52
Դահմե 60
Դաշիդ 224
Դբեյզ 144
Դիգա Ա. 30
Դիզկ Յ. 278
Դիզո 65—66
Դյոսս 315, 324
Դոբինսոն է. 14
Դոժբեյանի Ժ. 53
Դոխրիխտ 37
Դոշմոնգե 287
Դոուզ 185, 198, 205, 220, 234, 238, 250, 252, 254
Դուսինյան Ն. 313
Դուստամ Ա. 12
Դուստամ (փաշա) 328—329

Սաաբ (տոհմ) 57
Սաադ (տոհմ) 59
Սաադ Ղանդուր 249
Սաբբաղ Ի. 70—72
Սալիբի Ք. Ս. 6—7, 19, 36, 44, 91, 104—105, 134, 154, 159, 166, 184—185, 196, 204, 252, 254, 267, 272, 281, 292, 304, 306, 309, 344
Սայֆի Ե. 26
Սանջյան Ա. 9
Սարիմ (էֆենդի) 172, 209, 215, 217, 225, 227, 229—230
Սաֆրաստյան Ա. 96
Սաֆրոնիա 296
դը Սեբաստիանի 104
Սելիմ (բեյ) 203, 215—217
Սելիմ (փաշա) 169, 172
Սելիմ Յավուզ 38, 92
Սև-Սուլեյման 162—164, 168, 316
Սեյան Գ. 313
Սիբ ալ-Մուլք 31—32
Սմիթ Սիդնեյ 104, 106—108, 110
Սմիթ Էլի 14
Սմիլյանսկայա Ի. Մ. 20—21, 80, 93—94, 97—98, 100, 116, 156, 165—167, 186, 201, 212, 235, 250, 280, 282, 284, 287, 291

24—1028

Սպիրիդով 67
Ստապֆորտ 169, 171—172
Ստենհոպ է. 107, 130
Ստեփան տե՛ս Բաումգարտեն
Սուադ 59
Սուլեյման (փաշա Աքայի) 113, 122, 126, 156, 158
Սուլթ 174
Սուրսոք (տոհմ) 144
Սֆեյր Սալեհ Ջուրջիս 276—277, 281—282

Վահհաբականներ 41, 113
Վամիք (փաշա) 266
Վասա (մութասարիֆ) 329
Վարժապետյան Ս. 9
Վեկբեկկեր 295, 324
Վեջիհի 252, 255—256
Վեֆիք Ահմեդ 314—315, 323
Վիետ Դ. 105
դը Վիտրի ժակ 34
Վոլնեյ Ս.—Ֆ. 15, 17—18, 25, 40, 44, 78, 82, 91, 101—103, 116—117, 119, 145, 149, 199
Վոկեր 169
Վոյնովիչ 68
Վրայա 107
Վուդ 179, 185, 195—196, 204—205

Տաուտ (փաշա) տե՛ս Տաուտյան
Տաուտել Ֆ. 6
Տաուտյան Կարապետ Հարությունն (Արթին) 7, 321, 329—331, 344—345, 348—349
դը Տեստա Ի. 12
դը Տիր Վ. 33—34
Տրապուլսի Ա. 294, 299
Տուռնբրիդ Ֆ. 12
Տուվենել 312, 315, 322—323, 326

Քարամ (տոհմ) 59
Քարամ Բութրուս 283
Քարամ Միշել 308
Քարամ Յուսուֆ 254, 257, 289, 307—310, 318—321, 343
Քարամն Բութրոս 148—149, 162
Քաուլի 314—315, 322
Քեյրուզ (տոհմ) 60
Քեչեչի-զադե Բույուք ֆուադ 313—314, 316—323, 325
Քերր Մ. Հ. 8, 12, 282
Քյամիլ (փաշա) 264
Քյաթիբ Չելեբի 96

Ուարդ Հ. 89, 107
ալ-Ուդեյմի Սիջան 279, 283
Ուսպենսկի Պ. 14, 118
Ուրկուհարտ Դ. 14, 81, 120
Ուքեյլի (տոհմ) 59, 91

Օզտունա Յ. 9
Օմայաններ 27—29
Օմար (փաշա) ան-Նամսաուի 206, 208—209, 211, 215—217, 219—226, 289
դ'Օպուլ Բ. 316—317, 319, 321—322
Օսման (բեյ) 302
Օսման (փաշա) 65, 164
Օսման-Սատիկ (փաշա) 46—47, 64—65
Օրլով Ս. Դ. 65, 67

Ֆաիզ խալիլ Հումամ 12, 157, 159
Ֆարաժալլա Մ. 294
Ֆերիդուն (բեյ) 96
Ֆերիք 252
Ֆրեյժ (տոհմ) 144

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբաղիյա 130
Աբեյշ 52, 55, 59, 106, 254, 259, 299
Աղանա 149
Աղանայի էյալեթ 127, 137, 158
Ադրիանապոլիս 133, 222
Ադուր 54
Աթենք 325
ալ-Ալա 129
Ալեյ 52, 59
Ալեքսանդրետ 144
Ալեքսանդրիա 158, 162, 174, 323
Ալժիր 316, 318
Այմա 58
Ահմաշ 58—59
Ամաթուր 53
Ամանոս 27
Ամիուն 28, 58, 62
ԱՄՆ 6
Ամշիդ 57
Ալթիթ 55
Այնար 51
Այն Անուր 107—108, 188—189, 223
Այն Բեթրուկ 16, 62—63
Այն Դարա 50—52, 59—60, 93, 109, 299
Այն Դաուկ 334
Այն Զհալթա 55
Այն Թուբա 170
Այն Մաղուր 50
Այն ալ-Մաղրաա 334
Այն Սաադն 50
Այն աս-Սուր 197
Այն Քինա 53
Այն Քուսուր 55
Անատոլու 137
Անգլիա 6, 43, 107—108, 137, 144, 154—155, 162, 167, 170, 173—174, 179, 185, 187, 199—200, 207—208, 216—219, 238, 252, 295, 301, 304, 312, 314, 317, 324—325, 332
Անդրլիբանան 18, 21, 57—58, 153—154, 174, 195, 202, 224, 253
Անդրկովկաս 96
Անթիլիաս 50, 123—124, 159—161, 166, 224, 300, 335
Անտիլիվան տե՛ս Անդրլիբանան
Անտիոք 25—27, 33, 129
Անուա 90
Անֆա 58
Աշկուտ 277
Աջալթուն 276, 278, 281, 286
Աջլուն 47
ալ-Ասի տե՛ս Որոնտես
Ասիա 5, 10
ալ-Ասիա 56 (տե՛ս նաև՝ Քեսրուան)
Ասորիք 23—24, 28
Ասֆուր տե՛ս Նահր Ասֆուր
Ավստրիա 126, 155, 167, 188, 208, 215, 219, 251—252, 295, 312, 314, 322
Արաբական թերակղզի 113
Արաբիա 71, 137
Արամուն 51, 279
Արատ 22
Արեմթա 54
Արևելահռոմեական կայսրություն 25 (տե՛ս նաև՝ Բյուզանդիա)
Արևելյան լեռ տե՛ս Անդրլիբանան
Արևելյան Լիբանան տե՛ս Անդրլիբանան
Արևելք (Մերձավոր) 6, 15, 22, 40, 117
ալ-Արիշ 110

Արջաս 58
Արքուբ 55, 253, 299
Արքուբ Հարավային 335
Արքուբ Հյուսիսային 335
Արքուբ Ներքին 55
Արքուբ Վերին 55, 335
Աքա 35, 45—47, 49, 67, 70, 72, 77, 87, 90—91, 103—104, 107—109, 112, 124, 127—128, 131, 134—136, 174, 193—194, 222
Աքայի էյալեթ 77, 86, 113, 116, 120, 122, 125, 129, 131, 134, 137
Աքայի սանջաք 336
Աքքար 35—36, 59, 74, 76, 130, 151, 337
ալ-Առուալի 54, 298
Աֆրիկա 5, 10, 45

Բաաբդա 166, 175, 183, 197, 201, 203, 249, 254, 262, 300, 303, 306, 335
Բաալբեկ 16, 21, 36, 41, 56—57, 68, 75—77, 87, 102, 108, 140, 158, 161—162, 166, 168, 170, 173—174, 203, 245, 322, 333, 337
Բաակլին 52, 59, 130—131, 194, 335
Բադհարա 53
Բաթրուն ավան 58—59, 76, 140, 171, 334
Բաթրուն գավառակ 17, 25, 37, 41, 51, 58, 125, 229, 332, 334
Բալթիկ 44
Բալկա 336
Բալկաններ 322
Բալունա 52, 286
Բակատա 131
Բասկինտա 335
ալ-Բարուկ 17, 55, 59 (տե՛ս նաև՝ Շուֆ լեռ)
Բաուշրիա 164
Բեդղան 55
Բեյթ ադ-Դին 53—54, 89, 121—122, 131, 145, 211—212, 224 —226, 258—259, 321—322, 335
Բեյթ Մերի 50, 293, 335
Բեյթ Շեբեբ 50, 171, 335
Բեյրութ 6, 8, 13—14, 19, 28—29, 34—37, 44, 57, 66—69, 72, 74, 76—77, 90, 97, 104, 109, 112, 114, 122, 135—136, 141, 143—144, 148, 152, 157—158, 161—163, 166—171, 173, 185—186, 188, 191—195, 197—198, 200, 203—206, 211, 215, 220—224, 226, 228, 234, 237—240, 242, 249, 252—259, 264, 267—268, 270—273, 275, 280, 283—285, 294—295, 297—304, 312—313, 316—324, 332—333, 336, 338, 340—341, 344—345, 347
Բեյրութ գետ 50, 57 (տե՛ս նաև՝ Նահր Բեյրութ)
Բեարիշ տե՛ս Բաուշրիա
Բեոլին 312, 326, 344
Բզոմմար 40—41, 118, 170—171, 283
Բթաբրուտին 58
Բթեթար 52, 55, 253, 335
Բիբլոս 22 (տե՛ս նաև՝ Ջուբեյլ ավան)
Բիլետ Բաթրուն տե՛ս Բաթրուն գավառակ
Բիլետ Բշարրի 16, 30, 45, 56, 108, 151 (տե՛ս նաև՝ Մթուալիների երկիր, Ջեբել Ամիլ)
Բիլետ ադ-Դրուզ տե՛ս Դրուզների երկիր
Բիլետ Ջուբեյլ տե՛ս Ջուբեյլ գավառակ
Բիկաա 16, 21, 28—30, 36, 50—51, 68, 72—73, 75—77, 83, 92, 108, 118—119, 124, 131, 134, 140, 142, 145, 163, 173—174, 195, 202, 224, 255, 272, 302—303, 306—307, 321, 332, 337, 347
Բիկաա ալ-Ազիզ տե՛ս Բիկաա
Բիկֆայա 50, 59, 173, 176, 307
ալ-Բինեյ 55
Բիշմազզին 58, 334
Բիվիրթա 55
Բհամդուն 335
Բհաննես 273
Բհուրսուֆ 59
Բյուլանդիա 22, 27
Բշալա 57

Բշամուն 51
Բշարրի ավան 58, 60, 117, 229, 245
Բշարրի գավառակ տե՛ս Ջիբբեթ Բշարրի
Բոսնիա 208
Բրամիլյա 54
Բրիհ 51
Բրումմանա 50, 273, 335
Բրուսա 252
Բրաղին 54
Բքերքե 283, 288, 296
ալ-Բուխայրա 66
ալ-Բուրջ 51

Դամասկոս 8, 26, 37, 45—47, 65, 84, 91, 113, 126, 133, 137—138, 143, 149, 153, 157, 174, 202, 204, 224—226, 255, 257, 298, 311, 313—314, 316, 318, 321, 332, 340—341
Դամասկոսի էյալեթ 65, 67—68, 72—73, 75—77, 87, 110—113, 116, 120, 124—127, 131, 137, 140, 313, 328
Դամուր 54, 253
Դարդանել 44
Դեյր Բարա 54
Դեյր ալ-Կամար 41, 48, 50—51, 54, 64, 72, 77, 85—86, 89, 91, 98, 103, 109, 111—112, 118, 121, 128, 130, 134, 136, 141, 145—146, 156, 164, 166, 178, 185, 195—197, 200—204, 206—207, 232, 239—240, 247—248, 250, 252—253, 257, 263, 296, 298—299, 301—303, 309, 321, 328, 335—336
Դեյր Քուշա 54
Դիրբայա 335
Դլիպտա 56, 279
Դրուզների երկիր 16—19, 31, 48—50, 54, 56, 59—60, 62, 64—65, 73—74, 77, 81, 87, 90—91, 93—94, 96, 98—99, 101, 108, 118, 121, 124, 131, 153
Դրուզների լեռ 16, 19—21, 29, 49, 63, 107

Եգիպտոս 15, 22—23, 30, 44—45, 66, 68, 70, 83, 103—104, 109—110, 127, 133, 135, 137, 141, 151, 154, 162, 167—168, 173—175, 199, 244, 300
Եդեսիա 33
Էմեսա 23 (տե՛ս նաև՝ Հոմս)
Եվրոպա 25, 121, 144—145, 200, 241, 249, 270, 300, 305
Երուսաղեմ 34, 67, 133, 136, 191
Երուսաղեմի թագավորություն 33
Երուսաղեմի սանջաք 136
Եփեսոս 23

Զահլե 21, 50, 102, 130, 137, 141—143, 148, 158, 166, 202—203, 206—207, 224, 253, 255, 272, 296, 298—299, 302—303, 306—309, 332—334, 337
Զանիյա տե՛ս Մայր աղ-Զանիյա
աղ-Զաուիա 58, 332, 334
Զղորթա 41, 58—59, 118, 245, 308, 334
Զմմառ տե՛ս Բզոմմառ
Զուբ 170, 279—283, 285, 289, 334
Զուբ Միքայել 41, 56, 277—278

Էլեյտերուզ 17 (տե՛ս նաև՝ Նահր ալ-Քեբիր)

Թարարջա 56
Թարլուն 50
Թարնին 336
Թամրա 54
Թաննուրին 58—59, 334
Թափոր 104
Թուլուն 158, 166
Թուրքիա 43, 65, 68, 134, 167, 301, 312, 316, 326—327, 332 (տե՛ս նաև՝ Օսմանյան կայսրություն)
Թուֆֆահ 54, 76, 131, 332

Իբրահիմ գետ տես՝ Նահր Իբրահիմ
Իհդին ավան 58, 117, 229, 245, 257
Իհդին գավառակ 59, 118, 222, 245, 289, 308, 319—321, 334, 337
Իղմիտ 55

Լաթաքիա 228, 336

Լեջա 153
Լեո՝ տե՛ս Լիբանան լեռ
Լեռնալիբանան տե՛ս Լիբանան լեռ
Լիբանանյան լեռնաշղթա 17—18
Լիբանանյան լեռներ տե՛ս Լիբանան լեռ
Լիբանան 5—10, 12—17, 19, 21—22, 28, 30, 35—36, 40, 42, 44, 70, 76, 79, 82, 92, 94, 116, 165, 258, 346, 348
Մեծն Լիբանանի պետություն 7, 16—17, 19, 347, 349
Լիբանան լեռ 8, 11, 13—14, 17—21, 23—28, 30, 37, 41—42, 46, 51, 61—63, 68, 76—79, 83—86, 90—92, 94, 99, 104, 108—109, 114—115, 119, 121—125, 127—128, 130, 132, 135—136, 140—147, 149—153, 155—159, 161—165, 167—173, 175, 178—179, 181—183, 186—187, 189, 191—195, 199—200, 203, 205—212, 215—221, 225—226, 228—232, 234—237, 239—240, 242—243, 245, 247—248, 251—252, 254—255, 257—260, 262—265, 267—273, 275—276, 278, 285, 288, 290—291, 294—296, 299, 303, 305, 308, 310—312, 316, 318—329, 331—332, 336—349
ալ-Լիթանի 17, 34
Լիհֆաղ 124—125
Լիոն 84
Լոնդոն 43, 107, 154, 163, 167, 170, 174, 182, 235, 312, 319, 326
Լուբնան աշ-Շարքիյյա տե՛ս Անդրլիբանան
Լևանտ 6, 8, 14, 40, 46—48, 52, 62—65, 67—68, 71, 76, 103, 105, 108, 112, 134, 174, 219, 271, 296, 303, 312, 322—323

Խան ալ-Հասին 85
Խառուբ 36, 54, 131, 202, 335

Կազա 47, 109—110, 137, 191
Կահիրե 37, 45, 47, 66, 84, 127—128, 134, 152, 155
Կանաթ 334
Կառնատ աս-Սաուդա 17
ալ-Կասիմիյյա 17, 63 (տե՛ս նաև՝ ալ-Լիթանի)
Կասիմիյյա 335
Կատիշա 58, 82
Կարանտինա 157
Կարմել 41, 129
ալ-Կարուն 21
Կիլիկիա 41, 137, 144, 154
Կիպրոս 35, 46, 106, 110, 171, 300
Կոստանդնուպոլիս 24—26, 41, 66, 72, 74, 108, 126, 135, 137, 163, 185, 190, 200, 206—207, 210, 215, 217, 220, 225, 228, 237, 240, 247, 258—259, 264—265, 268, 298, 300, 303—304, 312, 320, 324, 326, 341
Կրետե 137

Հադեթ 57, 66, 172, 300, 335
Հադեթ աշ Ջիբրետ—58
Հազմիա 300
Հալաթ 58
Հալեպ 14, 28, 30, 38, 53, 69, 84, 106, 114, 118, 129, 143, 149, 158, 222, 252
Հալեպի էյալեթ 72, 113, 127, 137
Համա 23—24, 53
ալ-Համամ 111
Համմանա 50—51, 60, 98, 335
Հայաստան 23, 96
Հասբայա 21, 86, 202, 254—255, 302, 313, 321—322, 337
Հասրուն 41, 59, 334
Հատշիթ 58
Հարվարդ 9
Հաուրան 70, 90, 106, 130—131, 153, 195—196, 202, 210, 224, 231, 253, 255, 269, 296—297, 317, 322
Հելիոպոլիս 8
Հեպրոն 151
Հերմել 56, 59, 334
Հերմոն 21, 129
Հիջազ 45

Հոմս 14, 23, 137
Հոսն 110, 151
Հորդանան 47
Հռոմ 25—26, 33—34, 105, 257
Հռոմեական կայսրություն 22
Հուլե 64, 337
Հումալ 55
Հունին 337

Ղարուն 55
ալ-Ղազիր 57
Ղազիր 41, 52, 56, 222, 272, 277, 334
Ղարբ 29, 31, 34, 36, 254, 299
Ղարբ Ներբին-Հյուսիսային 51, 166, 335
Ղարբ Վերին-Հարավային 55, 166, 335
Ղարբ Վերին-Հյուսիսային 335
Ղրիմ 11, 269
Ղուստա 56, 278—279, 283, 334

Մաարբահ 336
ալ-Մադֆուն 57—58
Մաղար 336
Մաղրաաթ աշ-Շուֆ 53
Մաղրաաթ Քֆար Դիբիան 276, 286
Մալթա 46, 105, 163, 173, 182
Մաղրիբ 30
Մայրիների երկիր 10, 17 (տե՛ս Լիբանան)
Մանասիֆ 50, 54—55, 156, 166, 178, 253
Մաշղարա 29
Մարաշ 129
Մարջ Դաբիկ 38
ալ-Մաքթու տե՛ս ալ-Քուելբի
Մզեյրիջ 298
Մեղզև 126
Մեքն 18—19, 34, 36, 42, 50—51, 63, 74, 77, 90, 98, 114—115, 123—124, 134, 157, 164, 166, 172, 222, 228, 234, 253, 255—256, 273, 299—300, 303, 306—307, 309, 330, 332—333, 335
Մեծն Բրիտանիա 305
Մեյրոբա 277, 335
Մեջդ ալ-Այնջար 21
Մերձավոր Արևելք 11, 22, 45, 149 (տե՛ս նաև՝ Արևելք)
Մերջ Այուն 56, 86, 87, 337
Մեքքա 45, 47, 73—75, 314
Մթուալլիների երկիր 16, 83 (տե՛ս նաև՝ Բիլետ Բշարրի)
Միզյարա 58
Մինա 244
Միջերկրական 22, 25, 33, 35, 40, 44, 63, 65, 133, 312
Մլիհ 54
Մոալլակա 333, 337
Մոալլակաթ ադ-Դամուր 156, 166, 202, 335
Մրիստան 53
Մութաավվալա երկիր 45 (տե՛ս Բիլետ Բշարրի)
Մուխթարա 48, 52—53, 129, 131, 213, 224—225, 250—251, 253, 268, 299, 321
Մունեյթրա գավառակ 29, 37, 58, 62, 229, 332, 334
Մունեյթրա լեռ 17, 57—58

Յաֆա 70, 144, 175, 228

Նաբաթթիա 64, 336
Նաբլուս 47, 86, 110, 133, 136—137, 164
Նահր Ասֆուր 58
Նահր Իբրահիմ 37, 56, 58, 158
Նահր աշ-Զաուզ 58
Նահր ալ-Քեբիր 17
Նահր ալ-Քելբ 18, 35—36, 50, 56, 73, 158, 170, 298, 332
Նահր ալ-ֆիղար 57—58
Նավարին 133
Նեղոս 36
Նիզիբ 155
Նիհա 50

Շաարա 154
աշ-Շահհար 55, 156, 166, 254, 303, 335

Շամ աշ-Շերիֆ 125 (տե՛ս նաև՝ Դամասկոս)
Շամսթար 334
Շաքրա 59
Շրանխա 51
Շեյխ լեռ 16, 21, 154, 322, 337
Շերիֆ 34, 56, 336
Շերիֆ Առնուն 60
Շիհիմ 54
Շթորա 203, 337
Շկոտա 264
Շնանիյր 279
Շուեյր 119, 335
Շուեյֆաթ 51, 85, 203, 335
Շումար 336
Շուֆ գավառակ 30, 36, 39, 41—42, 53—55, 62, 77, 81, 90, 111, 114, 166, 224, 253, 256, 293, 297, 301, 303, 330, 332—333, 335
Շուֆ լեռ 16—21, 63, 152, 155, 230, 296 (տե՛ս նաև՝ Դրուզների լեռ)
աշ-Շուֆ ալ-Բայադի 50
աշ-Շուֆ ալ-Հիթի 53, 131
աշ-Շուֆ ալ-Սվեյջանի 53, 131
Շուֆին 335

Որոնտես 23 (տե՛ս նաև՝ ալ-Ասի)

Չինաստան 84

Պաղեստին 6, 13, 16, 23, 67, 134, 174
Պետերբուրգ 312, 322, 325—326, 349
Պոլիս տե՛ս Կոստանդնուպոլիս
Պրուսիա 137, 155, 167, 208, 218, 252, 314, 322

Ջաբաս 336
Ջոեյդե 131, 335
Ջեբել Ամիլ 30, 45, 59 (տե՛ս նաև՝ Բիլեռ Բշարրի)
Ջեբել Աքքար տե՛ս Աքքար
Ջեբել Բշարրի տե՛ս Ջիբբեռ Բշարրի
Ջեբել ադ-Դրուզ տե՛ս Դրուզների լեռ
Ջեբել Լուբնան տե՛ս Լիբանան լեռ
Ջեբել Հարամուն տե՛ս Շեյխ լեռ
Ջեբել աշ-Շարքի տե՛ս Անդրլիբանան
Ջեբել աշ-Շեյխ տե՛ս Շեյխ լեռ
Ջեբել աշ-Շուֆ տե՛ս Շուֆ լեռ
Ջեբել Ջանին 337
Ջեբել առ-Ռեյհան տե՛ս Ռեյհան լեռ
Ջեբել Քեսրուան տե՛ս Քեսրուան լեռ
Ջեզզին ավան 166, 335
Ջեզզին գավառակ 36, 51, 54, 101, 131, 166, 201, 253, 255—256, 296—297, 299, 303, 321, 330, 332—333, 335
Ջեսմե 65
Ջիբբեռ Բշարրի 17, 37, 41, 51—52, 58, 74, 115, 118, 228—229, 245, 332, 334
Ջիբբեռ Մունեյթրա տե՛ս Մունեյթրա գավառակ
Ջիսր ալ-Կադրի 298
Ջիսր ալ-Ուլյա 156
Ջուայա 59
Ջուբեյլ ավան 25—26, 57, 76, 109, 118, 171, 230, 333—334
Ջուբեյլ գավառակ 16—17, 36—37, 41, 51, 57, 62, 108, 111—112, 124, 140, 206, 229, 332
աշ-Ջուդեյդա 279
Ջունի 37, 56, 76, 118, 140, 170—171, 173, 191, 228, 277—278, 283, 289, 298, 319, 333—334
Ջուրդ 31, 50, 55, 63, 166, 223, 253
Ջուրդ Հարավային 335
Ջուրդ Հյուսիսային 335
Ջուրդ-Ջուբեյլ 334
Ջուրդ Քեսրուան 299, 334

Ռամալլա 47
Ռաշայա 130, 195, 254, 302, 314, 321, 337
Ռաշին 58
Ռաշմայա 55, 63, 202, 335
Ռաս ալ-Այն 67
Ռաս ալ-Մեթն 254
Ռեյհան ավան 54
առ-Ռեյհան լեռ 54, 131

Ռեյֆուն 277, 281—282, 299, 320
Ռում 54
Ռումի 50
Ռուսաստան 12, 43—45, 47—48, 67—68, 70, 126, 133, 144, 155, 167, 202—203, 208, 216, 218, 238, 314, 322, 344

Սալիհիյյա 54
Սահել Բեյրութ 35—36, 57, 68, 111, 163, 166, 332, 335 (տե՛ս նաև՝ Բեյրութի դաշտավայր)
Սամար Ջուբեյլ 27
Սամարիա 47
Սայդա 18, 22, 26, 30, 34—35, 45—46, 48—49, 54, 57, 64, 66, 68—70, 74, 76—77, 86—87, 90, 122, 126, 136, 156, 158, 162, 164, 166, 169, 172—173, 185—186, 188—189, 194, 198, 200, 203, 211—212, 221—222, 224, 240, 242—243, 253—254, 257, 263, 296—298, 318, 321—322, 333, 336, 340, 347
Սայդայի էյալեթ 64, 67, 72—73, 75—77, 108, 122, 125—127, 136, 186, 231, 271, 311, 313, 328
Սայդայի կաղա 336
Սայդայի սանջաք 72
Սայդուն 54
Սայր ադ-Զանիյյա 35, 59, 74, 110, 162
Սաննին 17, 41 (տե՛ս նաև՝ Քեսրուան լեռ)
Սան Ռեմո 346
Սաննուր 110
Սաֆատի լեռներ 45, 71, 129, 151
Սեն Ժան Դաքր 45 (տե՛ս նաև՝ Աքա)
Սև ծով 44
Սիդոն—տե՛ս Սայդա
Սին ալ-ֆիլ 162
Սիս 41, 137
Սիրիա (ժամանակակից) 346—347
Սիրիա (պատմաաշխարհագրական) 6, 9, 13—17, 20, 25, 27, 29—33, 38, 44—48, 64, 70—72, 83, 86, 91—92, 101, 108, 113—114, 117, 122, 127—128, 133—134, 136—137, 139, 141, 144—150, 154—155, 159, 165, 167—168, 170, 173—175, 185—187, 191, 199—200, 217, 221, 225, 272, 310, 312, 314—316, 318, 323—325, 336—338, 340, 346—347
Սիրիա լեռ 14 (տե՛ս Լիբանան լեռ)
Սոլիմա 259, 332
Սոմկանիյյա 48—49, 59, 85, 124, 130—131
Սուդան 137
Սուր 26, 30, 35, 64, 67, 70, 73—74, 76, 117, 120, 136, 172, 296, 333, 337, 347
Սուրի կաղա 336
Սուք ալ-Խարար 272
Սուք ալ-Ղարբ 55, 335

Վադի Մաամբլթեյն 56
Վադի Շահրուր 57
Վադի ալ-Սիթթ 55
Վաջա՛ ալ Հաջար 58
Վիեննա 218, 235, 258, 264, 312, 326, 344

Տավրոս 27
Տյուրոս 22 (տե՛ս Սուր)
Տոսկանա 53
Տրիպոլի 18—19, 26, 30, 34—35, 41, 46, 58—59, 62, 69, 76, 110, 113, 118, 131, 136, 166, 171, 173, 188, 229, 244—245, 257, 259, 308, 318, 333, 336—337, 340, 347
Տրիպոլիի էյալեթ 72—76, 110, 137, 140, 186
Տրիպոլիի կոմսություն 33—34
Տրիպոլիի մամլաքա 37
Տրիպոլիի սանջաք 72

Փարիզ 43, 167, 170, 173—174, 183, 185, 219, 227, 235, 238, 258, 294, 310, 312, 314, 316, 321, 323, 326

Փոքր Ասիա 27, 103

Քաբ Իլիաս 21, 68, 82, 203, 321—322
ալ-Քաթա 50, 332, 335
Քալամուն 332
Քահալն 55
Քահլունիա 53
Քաղկեդոն 23, 25
Քանաա 336
Քանուբին 27, 38, 41, 229
Քարթաբա 58
Քենիսա 56
Քեսրուան դավառակ 10—13, 17, 30, 35—37, 41, 50, 55, 57, 77, 81, 86, 100, 115—116, 118, 123—125, 166, 170—172, 203, 224, 229—230, 236, 254, 256, 267, 272, 275—276, 278—280, 282—283, 288, 290—292, 296—297, 300, 304—306, 309, 319—321, 330, 332, 334
Քեսրուան լեռ 17—18, 20, 42, 55
Քեսրուան Հարավային 34, 63 (տե՛ս նաև՝ Մեթն)
Քեսրուան Հյուսիսային 37, 42 (տե՛ս նաև՝ Ֆութուհ)
Քեսրուան Ներքին 4
Քիլիս 53
ալ-Քլեյաթ 277, 286
Քյոթահիա 137, 154
Քյուշուր Կայնարջի 70
Քրեյմ 118
ալ-Քուեյթի 58, 334
Քուրա 26, 28, 41, 58, 118, 244, 332—334
Քուրա Հարավային 334
Քուրա Հյուսիսային 334
Քֆար Խայլ 334
Քֆար Հազիր 334
Քֆար Հայա 27, 54, 334
Քֆար Հունա 54
Քֆար Մաթթա 55
Քֆար Նաբրահ 52, 55, 89, 109
Քֆար Նիս 55
Քֆար Շիմա 59, 335
Քֆար Սիաբ 59

Ուադի աթ-Թայմ 16, 21, 29—30, 36, 49, 56—57, 61, 68, 73, 75—76, 86, 92, 108—110, 115, 130, 137, 140, 153—154, 195—196, 202, 231, 253—255, 269, 296—297, 302—303, 306, 332
Ուպարիա 22
Ուրբուր տե՛ս Աբբուր

Օսմանյան կայսրություն 8, 16—17, 19, 43, 48, 91—92, 99, 134, 155, 187, 216—217, 315, 318, 325, 344, 346

Ֆալուջա 50
Ֆեթրի 58
Ֆեյթրուն 277
Ֆլորենցիա 60
Ֆրանսիա 8, 11, 14, 43, 81, 84, 108, 126, 133, 137, 141, 144, 152, 154—155, 162, 168, 173, 188, 200, 208, 215, 218—220, 227, 241, 244, 252, 295, 305, 310, 312, 314—315, 322—324, 329, 346
Ֆրեյտիս 55
Ֆութուհ 37, 42, 56, 209, 332, 334

ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Դրուզական (Դարազիական) համայնք (դրուզներ) 6, 8—10, 13, 16, 18—19, 28, 30—32, 34, 36—40, 42, 48—57, 59—62, 65, 77, 81, 89—90, 92, 104, 106—107, 114, 121, 129, 131, 145, 151—152, 160, 172, 178—180, 185, 188, 190—191, 193—194, 196—199, 202—205, 210—214, 223, 226, 246, 251, 254—255, 260, 268, 294—297, 301—302, 305—306, 311, 316—317, 321—322. 325—326, 329, 333, 336

Հույն-կաթոլիկ (մալթի) համայնք 25—27, 51, 54—55, 57, 114, 119, 142—143, 145—146, 160, 193, 202, 260, 295, 329, 333, 336

Հույն-օրթոդոքս համայնք 22, 26—27, 51, 55—59, 118, 142—143, 145, 160, 188, 193, 202—203, 244, 251, 254—255, 260, 266—267, 295—296, 325—326, 329, 333, 336

Մալթի (բազկեդոնական) միասնական համայնք 25, 28, 36, 39, 42, 75, 151

Մարոնական համայնք (մարոնականներ) 6, 10, 13, 17, 23—29, 31, 33—42, 49—51, 54—59, 62—63, 75, 77, 81, 89, 92, 105, 115—ֆֆ., 120—121, 142, 144—146, 151—152, 160, 172, 178, 180—181, 185, 187—188, 193—194, 196—197, 199—203, 205, 211, 223, 226, 244—245, 251, 260, 265—266, 294—295, 301—302, 305—309, 316, 325—326, 329, 331, 333, 336

Նուսեյրիներ 19, 35—37, 75, 90, 151, 162

Շիի համայնք (շիիներ, հիմնականում մթուալլիներ) 19, 28—30, 34, 36—37, 41, 45, 47, 51, 54, 57—59, 62, 64, 70, 76, 86—87, 104, 107, 151, 160, 162, 171, 193, 202—203, 260, 296, 301, 329, 333, 336

Սուննի համայնք (սուննիներ) 19, 28—31, 35—36, 47, 51, 54—59, 160, 244, 260, 296, 301, 316, 329, 333, 336

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5
Առաջին գլուխ—«Ամբողջ լեռան ամիրայության» կազմավորումը և նրա ներքաշումը Արևելյան հարցի ոլորտը 43
Երկրորդ գլուխ—Լիբանանյան իշխանապետության կազմավորման ավարտը . 88
Երրորդ գլուխ—Սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական տեղաշարժերն ամիրայությունում Եգիպտական տիրապետության ժամանակաշրջանում . . 133
Չորրորդ գլուխ—Միջհամայնքային արյունալի հակամարտության սկիզբը և Լիբանանյան ամիրայության վերացումը 175
Հինգերորդ գլուխ—Լիբանան լեռան երկատումը 208
Վեցերորդ գլուխ—1845-ի միջհամայնքային զինաբախումները և Շեքիբյան կանոնադրությունը 244
Յոթերորդ գլուխ—1858—1860-ի ժողովրդական շարժումները և 1860-ի միջհամայնքային զինաբախումները 271
Ութերորդ գլուխ—Լիբանան լեռան ինքնավարության հռչակումը 311
Եզրափակում 346
Տանկ աղբյուրների և գրականության 350
Անձնանուններ 363
Տեղանուններ 371
Լիբանանյան գլխավոր համայնքներ 379

ՍՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՂԻԱ ՀՈՎՍԵՓԻ ՆԱՋԱՐՅԱՆ

ԼԻԲԱՆԱՆԸ XVIII Դ. ՎԵՐՋԻՆ ԵՎ XIX Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Հրատ. խմբագիր՝ Փ. Հ. Մաղանյան
Նկարիչ՝ Յու. Հ. Առաքելյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ն. Գործակալյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Կ. Հարությունյան
Սրբագրիչ՝ Ա. Լ. Սահակյան

ИБ № 916

Հանձնված է շարվածքի 21. 11. 1984 թ.։ Ստորագրված է տպագրության 20. 05. 85 թ.։ ՎՖ 05212։ Չափը 60×84 1/16 թուղթ № 1։ Տառատեսակ «գրքի սովորական» բարձր տպագրություն։ Պայմ. 22,0 մամ., տպագր. 23,75 մամուլ։ Ներկ. մամուլ 22,0 Հրատ.-հաշվարկ. 20,5 մամուլ։ Տպաքանակ 1000։ Հրատ. № 6276։ Պատվեր № 1028։ Գինը 3 ռ. 45 կոպ.։

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.։
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24։
Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван
пр. Маршала Баграмяна, 24.

A II 72307